



ԱՊՐԵԼ
ՔՐԻՍՏՈՍԻ
ԾՆՄԱՐԻՏ ԱՇԱԿԵՐՏԻ
ԿՅԱՆՔՈՎ

ԴՈԿՏՈՐ ՆԱԺԱՐԵԹ ԲՈՍՆՈՅԱՆ



**ԱՊՐԵԼ
ՔՐԻՍՏՈՍԻ
ԾՆՄԱՐԻՏ ԱՇԱԿԵՐՏԻ
ԿՅԱՆՔՈՎ**

ԴՈԿՏՈՐ ՆԱԺԱՐԵԹ ԲՈՍՆՈՅԱՆ

Living The Life of a True Disciple of Christ,

Dr. Nazareth Bosnoyan, Armenian

© 2024 Dr. Nazareth Bosnoyan

Ապրել Քրիստոսի ճշմարիտ աշակերտի կյանքով,

Դր Նազարեթ Բոսնոյան, հայերեն

© 2024 Դր Նազարեթ Բոսնոյան

Թարգմանված է անգլերենից

Հեղինակի մասին

Դր Նազարեթ Բոսնոյանը թոշակի անցած դասախոս է և ծառայող: Նա կրթություն է ստացել ինչպես կենսաքիմիայի, այնպես էլ աստվածաբանության ոլորտում: Մի քանի տարի դասավանդել է «Bethany Bible College»-ում և ունի ծառայողական լիազորություններ «Assemblies of God» եկեղեցուց: Ծառայության մեջ նա եղել է ավելի քան քսանհինգ տարի: Հրատարակել է երկու գիրք՝ «Հավատացյալի նոր կյանքը» (2001 թ.) և «Հավատացյալը և նրա մեղքը, հավատացյալը և նրա խաչը» (2018 թ.): Այս գիրքը՝ «Ապրել Քրիստոսի ճշմարիտ աշակերտի կյանքով», գրվել է հայ համայնքի ավելի երիտասարդ սերնդին հասանելի ուսմունքներում եղած բացը լրացնելու համար: Ներկայում հեղինակը ծառայում է Կալիֆոռնիայի «His House Ministries»-ի հովվական անձնակազմում: Նա նաև դասավանդում է Հայաստանում «Երիտասարդությունը առաքելությամբ» (YWAM) Աշակերտների վերապատրաստման դպրոցում:

Ներածություն

Այս գիրքը աշակերտության կամ Քրիստոսի աշակերտի ծառայության մասին չէ: Այն Քրիստոսի ճշմարիտ աշակերտի կամ հետևորդի առօրյա կյանքով ապրելու մասին է:

Սույն ուսումնասիրությունը պարունակում է հրահանգներ, մտորումներ և դիտարկումներ և գրված է հայ համայնքի ավելի երիտասարդ սերնդի, ինչպես նաև նրանց համար, ովքեր ցանկանում են վերանայել և քննել իրենց հոգևոր փորձառությունը և դրա ողջամիտ պահպանումը: Թող մեր համայնքի անտեղյակության և տկարության զգացումը մղի մեզ ապավինելու Հոգուն, որ աղոթում է մեր մեջ, և զգալու Հոգու մեջ սուրբ կյանքով ապրելու կարիքը:

Քրիստոսի աշակերտ լինել նշանակում է ապրել ջերմեռանդ հոգևոր կյանքով, այնպիսի կյանքով, որը մշտապես պահանջում է սովորել Հոգուց, հաղորդ լինել, սիրել ուրիշներին և մշտապես անձնատուր լինել Սուրբ Հոգու զորեղ սիրուն ու զորությանը: Տիրոջ ձայնը դեռևս հնչում է Իր հետևորդների ականջներին. «Մնացե՛ք Ինձանում... Բոլոր ազգերը աշակերտեցե՛ք»: Ո՞ւմ համար է զանգը հնչում:

2016 թվականին Կալիֆոռնիայի «His House Ministries»-ի եկեղեցուն միանալուց ի վեր խորապես տպավորված եմ նրանով, թե որքան շատ ունենք Աստծո կարիքը մեր համայնքում: Շատերը տասնամյակներ շարունակ կրում են այս զգացողության բեռը: Փաստ է, որ մենք ավելի շատ հոգևոր ուսուցման կարիք ունենք Աստծո ներկայության առավել խոր, իրական զգացողություն զարգացնելու, Նրա հետ ավելի անմիջական կապ փնտրելու և Նրանից լիակատար կախվածության մեջ մնալու համար: Այս ուսումնասիրությունը նախատեսված է մտորումների, ուսուցումների, հարցերի և հրահանգների միջոցով ընթերցողին ուղղորդելու ազնիվ, խելամիտ ինքնաքննության և ներքին որոնման Աստծո Հոգու առաջնորդությամբ և ներկայությամբ: Որպեսզի այն օգտակար լինի, անհրաժեշտ է ունենալ Տիրոջ հետ առանձին մտորելու ժամանակ: Իմ նպատակն է օգնել հավատացյալին Սուրբ Հոգու առաջնորդությամբ հասնելու իր Տիրոջ հետ ավելի մոտ և ավելի մտերիմ միության, իր սրտում լսելու Նրա ձայնը, Նրա ներկայության մեջ հանձնվելու Հոգու քննող և մաքրող աշխատանքին և մնալու իր Տեր Հիսուս Քրիստոսի մնայուն ուրախության մեջ: Այս ամենը պահանջում է սրտի ներգրավվածություն Աստծո առջև լուռ մնալիս, Աստծուն սպասելիս, մինչ Նա կհայտնի Իրեն, խելա-

միտ որոշումներ կայացնելիս, ինքնակարգապահություն ցուցաբերելիս և Տիրոջ առջև լուրջ պատասխանատվություն ստանձնելիս: Այն դուռը, որով պետք է անցնենք, մեր սրտի պատրաստակամությունն է և մեր կամավոր համաձայնությունը՝ ամեն օր ուրանալու մեր ներսի չար մարմինը և ապրելու Քրիստոսի կյանքով:

Գիրքը կենտրոնանում է այն հոգևոր կյանքի վրա, որ Աստված ակնկալում է Իր հետևորդներից, և ընդգծում է Հիսուս Քրիստոսի աշակերտի՝ իրական կյանքով ապրելու կարևորությունը: Այն բաղկացած է 6 մասից՝ հավատացյալի մեղքերը, լինել Քրիստոսի մեջ, ապրել խաչյալ կյանքով, սրբությունը կյանք է, առանձին ժամանակ Աստծո հետ, Աստծուն սպասելը՝ որպես կենսակերպ, և աղոթքի ու բարեխոսության կյանք: Ես գլուխները գրել եմ առանձին, որպեսզի դրանք ինքնուրույն լինեն, և դա է պատճառը, որ որոշ գլուխներում ուսմունքները կրկնվում են:

Սիրելի՛ Քրիստոսի աշակերտ, ես չեմ ցանկանում, որ դուք պարզապես ընդունեք այն, ինչ ուզում եմ ասել այս ուսումնասիրության մեջ: Իմ ցանկությունն է, որ ինձ հետ խորամուխ լինեք Աստծո Խոսքի մեջ և հասկանաք, թե ինչ է Աստված ասում Իր փրկությունը, Իր առաքելությունը և Իր կյանքը մեր մեջ պահպանելու մասին, որպեսզի մեր մտքերն այս հարցում լիովին համաձայնեն Աստծո մտքերին: Եթե խոնարհաբար աղոթելով հանձնվեք Աստծուց ուսուցանմանը և պարզությամբ, առանց կասկածի ընդունեք այն, ինչ ասում է Աստված, իսկապես կսովորեք հասկանալ, թե ինչ է նշանակում ապրել Քրիստոսի համար և ապրել Քրիստոսի մեջ:

Թո՛ղ Տեր Հիսուսը ողորմածությամբ գործածի այս գիրքը՝ ձեզ և ձեր միջոցով ուրիշներին օրհնելու համար:

Ձեր ընկեր և ծառա Տիրոջ մեջ՝
Նազարեթ Բոսնոյան

**ԱՊՐԵԼ ՔՐԻՍՏՈՍԻ ՃՇՄԱՐԻՏ
ԱՇԱԿԵՐՏԻ ԿՅԱՆՔՈՎ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մաս 1. Հավատացյալի մեղքերը.....11

1. Ինչ պետք է անենք մեր մեղքերի հետ
2. Սուրբ Հոգու աշխատանքը՝ կապված հավատացյալի մեղքերի հետ
3. Հաղթել մեղքին

Մաս 2. Լինել Քրիստոսի մեջ.....59

4. Ինչ է նշանակում լինել Քրիստոսի մեջ
5. Եսապաշտ կյանքը և ներքնակ Սուրբ Հոգին
6. Ողբերգություն. ապրել նոր կյանքը սեփական ջանքերով
7. Մնալ Քրիստոսի մեջ
8. Հասկանալ Քրիստոսի մեջ մնալու նշանակությունը և անհրաժեշտությունը

Մաս 3. Ապրել խաչյալ կյանքով.....122

9. Ապրել խաչյալ Քրիստոսի մեջ
10. Անհնար՝ մարդու համար, հնարավոր՝ Աստծո համար
11. Հանձնվել և նվիրաբերվել
12. Ինձնից ոչինչ
13. Հոգին և խաչը
14. Մահանալ «ես»- ին. խոնարհություն

Մաս 4. Սրբությունը կյանք է.....179

- 15. Սուրբ լինելու Աստծո կոչը
- 16. Սրբությունը և Քրիստոսի ներբնակությունը
- 17. Բաժանում և հնազանդություն
- 18. Խոնարհություն և սրբություն. աշակերտի փառքը

Մաս 5. Առանձին ժամանակ Աստծո հետ. Աստծուն սպասելը՝ որպես կենսակերպ.....213

- 19. Առանձին ժամանակ Աստծո հետ. Աստծուն սպասելը՝ որպես կենսակերպ
- 20. Սպասել Աստծուն և ամենօրյա փրկություն
- 21. Ապրել Աստծուն սպասելով
- 22. Մտորումներ և դիտարկումներ Աստծուն սպասելու վերաբերյալ
- 23. Սպասել Աստծուն. ես համաձայնում եմ, իսկ Աստված անում է աշխատանքը

Մաս 6. Աղոթքի կյանք.....264

- 24. Աղոթքն անտեսելու կյանք
- 25. Աղոթքը՝ որպես կյանք
- 26. Քահանայական բարեխոսություն

ՀԱՐՅԵՐ, ՈՐՈՆՔ ՔՆՆԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԳԼՈՒԽՆԵՐՈՒՄ

Գլուխներ 1–3. Հավատացյալի մեղքերը

Այս գլուխներն անդրադառնում են այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝ ինչո՞ւ է անհրաժեշտ, որ հավատացյալը ճանաչի իր ամենօրյա մեղքերը, արդյո՞ք դրանք բոլորը՝ անցյալ, ներկա և ապագա, ներված են, ո՞րն է Աստծո վերաբերմունքը և դիրքորոշումը մեր կուտակած չապաշխարած մեղքերի նկատմամբ, ինչո՞ւ ես չեմ տեսնում իմ մեղքերը, ի՞նչ է մեղքը, ո՞րն է մեղքի հոգևոր նշանակությունը, խոստովանության ո՞ր ձևերն են անպտուղ, լինելով հավատացյալ՝ արդյո՞ք դեռևս կարիք ունեմ խնդրելու ողորմություն, երբ մեղանչում եմ, ինչի՞ն է հետամուտ Աստված, որո՞նք են Հոգու հայտնությունը և հանդիմանությունը՝ կապված մեղքի չափազանց մեղավորության հետ, ի՞նչ է նշանակում մնալ անմեղ Քրիստոսի մեջ, ինչպե՞ս կարող եմ գործնականում Քրիստոսի հետ մտնել մահվան մեջ, ինչպե՞ս եմ մտնում և մնում Քրիստոսի հարության կյանքի մեջ: Խոսքն ասում է՝ «Մնացե՛ք Քրիստոսի մեջ, որ չմեղանչե՛ք», բայց ինչպե՞ս: Այն նաև ասում է. «Ձեր անձերը մեղքին մեռած համարեք և Աստծուն՝ կենդանի՝ Քրիստոսով», բայց ինչպե՞ս:

Գլուխներ 4–8. Լինել Քրիստոսի մեջ

Այս գլուխներն անդրադառնում են այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝ ինչո՞ւ ես չեմ զգում Աստծո ներկայությունը իմ մեջ կամ ինձ հետ, ի՞նչ է իրականում նշանակում լինել Քրիստոսի մեջ, ինչպե՞ս ենք ձեռք բերում հոգևոր մտածելակերպ կամ խառնվածք, ինչպե՞ս է առօրյայում դրսևորվում և պահպանվում Քրիստոսի մեջ այս կյանքը, ի՞նչ կատարվեց ինձ հետ Հիսուս Քրիստոսի խաչելության ժամանակ, ինչպե՞ս է Աստված ազատում ինձ ինձնից, ի՞նչ է անձնուրացությունը, ինչո՞ւ է սեփական ջանքերով նոր կյանքն ապրելը հոգևոր ողբերգություն, ի՞նչ է նշանակում հանել հին մարդուն և հագնել նոր մարդուն, իրականում ո՞րն է հին մարդու խնդիրը, ո՞րն է նոր մարդու կյանքով ապրելու Աստծո ճանապարհը, ի՞նչ է նշանակում մնալ Քրիստոսի մեջ, և ի՞նչ է դա ենթադրում, ի՞նչ է նշանակում ունենալ սրտի հաղորդություն Աստծո հետ, ինչպե՞ս է Քրիստոսի հետ մնայուն հաղորդությունն առաջնորդում երկրպագելու Հորը հոգով և ճշմարտությամբ, որո՞նք են Քրիստոսի մեջ մնալու պայմանները, ինչի՞ն հստակ պետք է հավատամ, որպեսզի մնամ Քրիստոսի մեջ:

Գլուխներ 9–14. Ապրել խաչյալ կյանքով

Մենք կքննարկենք այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ինչպե՞ս է ձևավորվում Խաչյալ Քրիստոսի հետ հաղորդությունը, Երբ և որտե՞ղ է այն տեղի ունենում, ինչպե՞ս ենք ստանում Քրիստոսի հանգստությունն ու զորությունը, ինչպե՞ս են կիրառում Նրա խաչը իմ կյանքում, իմ էության մեջ, իմ ինքնավստահության և ջանքերի մեջ, Երբ է դա անհնար ինձ համար, Երբ է դա հնարավոր ինձ համար, *ի՞նչ է նշանակում լիովին հանձնվել Աստծուն, և ի՞նչ է դա ենթադրում, արդյո՞ք լիովին հանձնվելը մնայուն է, ի՞նչ է ամբողջական նվիրաբերումն Աստծուն, ինչպե՞ս է այն գործում*, ո՞րն է «ինձնից ոչինչ» պնդման հոգևոր նշանակությունը, և ինչո՞ւ «ինձնից ոչինչ», ի՞նչ ճանապարհներով է Սուրբ Հոգին առաջնորդում մեզ դեպի խաչը, ո՞րն է խոնարհությունն ըստ Քրիստոսի, ո՞րն է ճշմարիտ խոնարհությամբ ապրելու Աստծո ճանապարհը, ինչի՞ց է սկսվում խոնարհությունը:

Գլուխներ 15–18. Սրբությունը կյանք է

Մենք կքննարկենք այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ի՞նչը մեզ սուրբ կդարձնեն մեր առօրյա կյանքում, ո՞րն է մեղքի խոստովանության և սրբության կապը, ինչպե՞ս է անձնուրացությունը կապված սրբության հետ, ո՞րն է սրբության էությունը և զորությունը, ո՞րն է մարդու դերը սրբության մեջ և Աստծո դերը սրբության մեջ, ի՞նչ իմաստով է սրբությունն իմ ընտրությունը և իմ պատասխանատվությունը, ո՞րն է սրբության և ուրիշներին ազապե սիրով սիրելու կապը, ինչպե՞ս է սրտի խոնարհությունը կապված սրբության հետ, որպես սրբության ճանապարհ՝ ի՞նչ է ենթադրում բաժանումը, ո՞րն է բաժանման և ուրիշներին ազապե սիրով սիրելու կապը, ինչո՞վ է տարբերվում կամ փառավորվում աշակերտի կյանքը, ո՞րն է Աստծո շնորհքի և խոնարհության կապը, ի՞նչ է ենթադրում Քրիստոսին կերպարանակից լինելը:

Գլուխներ 19–23. Առանձին ժամանակ Աստծո հետ. Աստծուն սպասելը՝ որպես կենսակերպ

Այս մասն անդրադառնում է այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝ որո՞նք են առավոտյան աղոթքի և Աստծո հետ հաղորդակցվելու համար անհրաժեշտ քայլերը, ի՞նչ է Աստծուն նվիրված կյանքը,

ինչպէս եմ լռում Աստծո առջև, ո՞րն է Աստծուն սպասելու նպատակը, ո՞րն է Աստծուն սպասելիս լռության կարևորությունը և նպատակը, ինչո՞ւ է Աստծուն սպասելը պարտադիր, ո՞րն է Աստծուն սպասելու և եսապաշտ կյանքն ուրանալու կապը, ո՞րն է մտքի հավատքի և սրտի հավատքի տարբերությունը, ինչո՞ւ պետք է սիրտը սպասի Աստծո ներկայությանը, ժամանակ հատկացնո՞ւմ եք Աստծո սիրտը լսելու համար, ի՞նչ է Աստված ցանկանում, որ կատարվի իմ մեջ, մինչ սպասում եմ Իրեն:

Գլուխներ 24–26. Աղոթքի կյանք

Այս վերջին մասն անդրադառնում է այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝ ո՞րն է աղոթքը անտեսելու մեղքի պատճառն ու արմատը, ինչպէս կարող ենք զորություն հագնել վերևից, ինչպէս կարելի է զարգացնել աղոթքի կյանքը ձեր առօրյայում, ինչպէս է աղոթքի կյանքը կառավարում ձեր կյանքը, ինչպէս է հոգևոր լիառատ կյանքը կապված խաչի հաղորդության հետ, ինչպէս է Քրիստոսի մեջ մնալը կապված աղոթքի կյանք ձևավորելու հետ, ի՞նչ է համառ կամ հաստատակամ աղոթքը, և ի՞նչ է ենթադրում, որո՞նք են Աստծո պայմանները, որ որոշում են մարդու աղոթքի կյանքի արդյունավետությունը, ի՞նչ է քահանայական բարեխոսությունը, ինչպէս է քահանայությունը կապված բարեխոսության հետ անհատի կյանքում, քահանայության ի՞նչ աշխատանք և ընթացք պետք է ներառի բարեխոսությունը:

Մաս I. Հավատացյալի մեղքերը

Ներածություն

Տարիներ առաջ ուսանողներիս ներկայացրի հետևյալ դիտարկումը. Տերունական աղոթքում «ներիր մեզ մեր հանցանքները» արտահայտության մեջ Մատթեոսի ավետարանում գործածվում է «հանցանք» կամ «պարտք» (հունարեն «opheilemata») բառը, իսկ Ղուկասի ավետարանում (11.1- 4)՝ «մեղքեր» (հունարեն «hamartias») բառը: Ավելի ուշ ուսանողներից մեկն ասաց, որ վիրավորվում է, երբ շեշտում եմ «մեղք» բառը, որովհետև այն բացասական է և վնասակար: Վնասակար չէ, երբ ասում ենք, որ յուրաքանչյուրս մեղանչում ենք, դա վկայում է այն ճշմարտության մասին, թե ով ենք մենք, և ինչի համար է Ավետարանը: Մեկ այլ ուսանող ասաց, որ եկեղեցական ծառայություններին գրեթե երբեք չի լսել որևէ քարոզ մեղքի դեմ: Մեղքը դադարում է մտահոգության առարկա լինելուց մեր եկեղեցիներում և մեր կյանքում: Մենք չենք լսում այն «ահագանգը», որ Հոգին հնչեցնում է:

Շատ քրիստոնյաներ Աստծո շնորհքի մասին խոսելիս ենթադրում են, որ մեղքն իրական է, որ իրենք մեղավորներ են, և Աստված ներել է իրենց: Բայց այսօրվա ձևակերպմամբ՝ մեղքը միայն ենթադրյալ իրողությունն է, այն հանդուրժելի ենթադրյալ իրողություն է: Կարծես մենք ասում ենք՝ «Այո, իհարկե, մենք մեղանչում ենք», իսկ հետո ոչինչ չենք անում այդ կապակցությամբ: Կարծես դա կարևոր չէ: Մենք կորցրել ենք մեր կարողությունը՝ ընդունելու, որ մեղքերի և ընդհանրապես մեր կյանքի համար աստվածային հայտնության և հանդիմանության կարիք ունենք, և ստեղծել ենք վակուում: Մեր մեղքերը չճանաչելու այս վակուումը լցրել ենք մեր բարի գործերով, բարոյական կյանքով ապրելու մեր ջանքերով և մեր կոչումներով ու ծառայություններով, որոնցով այնքան հպարտանում ենք:

Մեղքի նկատմամբ համատարած անտարբերությունը դրսևորվում է սրբության նկատմամբ հետաքրքրության բացակայությամբ, սրբությունը փոխարինվում է բարոյականությամբ: Մեր պապերի և տատերի սերունդը չափից շատ ջանք թափեց. կինոթատրոն գնալը, պարելը և ավրոհոլ օգտագործելը դարձան անսրբության նշաններ: Նման բաներ անողներին պախարակելը դարձավ օրինապաշտ, դատող իրավիճակ եկեղեցական կյան-

քի համար: Ուստի մեր ծնողների սերունդը, մասամբ ներշնչվելով 1970-ականներով, ճանապարհ ընկավ և քայլեց դեպի քրիստոնեական կյանքի ազատությունը, ինչը հաճախ նշանակում էր. «Ես կարող եմ անել այն, ինչ գիտեմ արդար ապրելակերպի մասին, որովհետև Աստված Իր շնորհքով կտեսնի ինձ սուրբ և արդար»: Առօրյա կյանքում ճշմարիտ սրբության համար այդ սերնդի նախանձախնդրության բացակայությունը փոխարինվեց եկեղեցու կողմից պարտադրված սրբության կանոններին հնազանդությամբ, և դա առաջացրեց ընդհանուր ուղղություն՝ մեղքի հանդուրժում, անտեղյակություն դրա ազդեցությանը և թուլացած անձնական հոգևոր հարաբերություններ Աստծո, ինչպես նաև մարդկանց և աշխարհի հետ: Տասնամյակներ շարունակ ոչ ոք եկեղեցում չբարոզեց մեղքի դեմ, այն համարվեց մարդկային ևս մեկ տկարություն: Ավելի երիտասարդ սերնդից շատերը մտասվեցին Աստծո, ծնողների և եկեղեցական առաջնորդների հետ իրենց հարաբերություններում այն օրինապաշտության պատճառով, որին առերեսվեցին: Ամեն բան պտտվում էր այս դատողության շուրջը. «Մենք բարի և արդար պետք է երևանք, և Աստված ու մարդիկ երջանիկ կլինեն»: Աստծո անվերապահ, անձնազուտ սերը բացակայում էր սրբության և արդարության համար նրանց նախանձախնդրության մեջ. բացակայում էր կարևորը:

Այսօր մենք վտանգավոր տեղում ենք: Մեր մեղքերի, անձնական մեղքերից սրբվելու և վերականգնվելու, հոգևոր կյանքի և ընտրությունների համար պատասխանատվությունն արագորեն հօդս է ցնդում: Անձնական մեղքերի համար պատասխանատվությունը թե՛ Աստծո և թե՛ մարդկանց առջև գրեթե վերացել է: Այն փոխարինվել է համոզմամբ, որ Իր շնորհքով Աստված կտեսնի ինձ սուրբ և արդար: Սա կես ճշմարտություն է: Աստվածաշնչյան կես ճշմարտությունները ճշմարտություններ չեն: Մենք կրկին պետք է առերեսվենք մեղքի մասին Աստվածաշնչի ուղերձին: Մի օր «Երիտասարդությունը առաքելությամբ» կազմակերպության հավաքույթներից մեկում Աստվածաշնչի սերտողությունից հետո մի երիտասարդ մոտեցավ ինձ և պատմեց, որ իր սենյակակիցն այդ կիսամյակ քնել է մի քանի աղջիկների հետ, որ շաբաթ երեկոները մեծ մասամբ նա հարբում է, որ ակտիվորեն մասնակցում է Աստվածաշնչի սերտողությանը և նաև փառաբանության խմբում է: Ես հարցրի. «Քո սենյակակիցը համարում է իրեն հավատացյալ»: Նա պատասխանեց. «Այո, իհարկե: Աստված ներում է, գիտեք»: Ես մտածում եմ, որ ավելի շատ մտահոգվեցի նրա արձագանքով, քան նրա սենյակակցի արարքներով:

Նրա ծայնի տոնը «Աստված ներում է, գիտեք» նախադասության մեջ ոչ թե երախտագիտության արտահայտում էր Աստծո շնորհքի համար, այլ Աստծո շնորհքի կանխավարկած, որը ենթադրում էր արժանի լինելու, դրա իրավունքը ունենալու զգացողություն: Դրանում թաքնված ամբարտավանություն կար: Առանց մեղքի հանդիմանության, շնորհքի և ողորմության Աստվածաշունչը դադարում է Աստծո բարի լուրը լինելուց:

Ինձ անհանգստացնում է այն, ինչ տեսնում եմ որպես ընդհանուր միտում մեր մշակույթի մեջ. մեղքը վերանում է, մեր մեղքի համար պատասխանատվությունը կորչում է, մեղանչելուց փրկվելը վերանում է, փրկությունը դադարում է մեզ մտահոգելուց: Քրիստոսի ճշմարիտ ավետարանը կարող է անհետանալ հենց մեր աչքի առջև: Երբ չտեսնենք մեղքի ծանրությունը, չենք ապավինի Աստծուն սրբացման և կերպարանափոխման շնորհքի համար, և սրբությունը չի լինի մեր կյանքի նպատակը: Մենք կրկին պետք է բացահայտենք, թե ինչ է մեղքը, որն է նրա հոգևոր նշանակությունը, ուր է այն ցանկանում տանել մեզ, և ինչ է այն անում մեզ հետ: Աստված գլխավորապես երկրային օրինությունների աղբյուր չէ, որոնք վայելում ենք երկրի վրա: «Նա հայտնվեց, որ մեր մեղքերը վեր առնի» (Ա Հովհ. 3.5): Ճշմարիտ Ավետարանը շատ առումներով փոխվում է ամենուրեք: Կես ճշմարտությունները գերիշխում են մեր եկեղեցիներում, մեր շուրջը տիրում են տգիտությունն ու անտարբերությունը:

Այս դիտարկումներն ու մտահոգություններն են պատճառը, որ «Հավատացյալի մեղքերը» ներկայացվում է որպես այս գրքի առաջին մաս:

Առաջին մասը բաղկացած է երեք գլխից, որոնք անդրադառնում են հավատացյալի մեղքերին, ինչն այսօր բավականին անտեսված թեմա է բազմաթիվ եկեղեցիներում: Առաջին գլուխը նվիրված է մեր մեղքերը ճանաչելուն և ընդունելուն, երկրորդ գլուխը վերաբերում է մարդու սրտում Սուրբ Հոգու աշխատանքին և ողորմության համար աղաղակելու հավատացյալի կարիքին, երբ նա մեղանչում է, իսկ երրորդ գլուխն անդրադառնում է առօրյա մեղքերը հաղթահարելու թեմային:

Այս գլուխներում քննարկվում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ինչո՞ւ է անհրաժեշտ, որ հավատացյալը ճանաչի իր առօրյա մեղքերը, արդյո՞ք դրանք բոլորը՝ անցյալ, ներկա և ապագա, ներված են, ի՞նչ է Աստծո վերաբերմունքը և դիրքորոշումը մեր կուտակած չապաշխարած մեղքերի նկատմամբ, ինչո՞ւ ես չեմ տեսնում իմ մեղքերը, ի՞նչ է մեղքը, ի՞նչ է մեղքի հոգևոր նշանակությունը,

խոստովանության իմ ձեռքն են անպտուղ, լինելով հավատացյալ՝ արդյո՞ք դեռևս կարիք ունեմ խնդրելու ողորմություն, երբ մեղանշում եմ, ինչի՞ն է հետամուտ Աստված, որո՞նք են Հոգու հայտնությունը և հանդիմանությունը՝ կապված մեղքի չափազանց մեղավոր լինելու հետ, ի՞նչ է նշանակում մնալ անմեղ Քրիստոսի մեջ, ինչպե՞ս կարող եմ գործնականում Քրիստոսի հետ մտնել մահվան մեջ, ինչպե՞ս եմ մտնում և մնում Քրիստոսի հարության կյանքի մեջ: Խոսքն ասում է՝ «Մնացե՛ք Քրիստոսի մեջ, որ չմեղանշեք», բայց ինչպե՞ս: Այն նաև ասում է՝ «Ձեր անձերը մեղքին մեռած համարեք և Աստծուն՝ կենդանի՝ Քրիստոսով», բայց ինչպե՞ս:

Գլուխ 1. Որպես քրիստոնյաներ՝ ի՞նչ պետք է անենք մեր մեղքերի հետ

Աստված Սուրբ է, և մեղքը չի կարող հաղորդակցություն ունենալ Նրա հետ: Մեր մեղքերը շատ են, և մենք չենք կարող ջնջել դրանք: Նույնիսկ մեր առերևույթ բարի գործերը ընդամենը մեռած գործեր են, որովհետև դրանք եսասիրության, եսակենտրոնության և հպարտության, մեր ապականված էության կամ մարմնի դրսևորումներ են: Սիրելի՛ Քրիստոսի աշակերտ, աղոթում եմ, որ հասկանաք, որ ոչինչ այն ամենից, ինչ կարող եք անել, փոխել կամ բարեփոխել, չի կարող վերականգնել Աստծուն մոտենալու ձեր հնարավորությունը, երբ դուք մեղքի մեջ եք: Մեկ բան է անհրաժեշտ: Դուք պետք է սրբվեք ձեր առօրյա մեղքերից, իսկ դա հնարավոր է միայն Աստծո միջոցով, եթե խոստովանեք ձեր մեղքերը (Ա Հովհ. 1.4, 8-10, Ա Հովհ. 2.1):

Սկզբում ուզում եմ ներկայացնել ձեզ այս ճշմարտությունը:

Աստված ընդունում է ինձ, և դա ամբողջ կյանքի համար է: Բայց Նա երբեք չի ընդունում իմ մեղանշելը կամ իմ մեղքերը: Աստված չի մերժում ինձ՝ որպես Իր զավակի (չկա դատապարտություն), երբ ես մեղանշում եմ. ես դեռևս փրկված եմ, բայց իմ մեղքերն ընդունելի չեն: Նա չի կարող արդարացնել ինձ, երբ ես մեղանշում եմ: Ես պետք է խոստովանեմ և ապաշխարեմ, որպեսզի վերականգնեմ իմ հաղորդակցությունը և իմ կյանքը Աստծո հետ: Աստված միակն է, որ կարող է փրկել և սրբել ինձ, բայց միայն այն ժամանակ, երբ խոստովանեմ և իսկապես ապաշխարեմ, ինչպես որ Նա է պատվիրում: Իմ հանգամանքներն ազդեցություն չունեն այս հարցի վրա:

Երբ մեղանշում եմ, ես չեմ կարող շարունակել իմ ընթացքն այնպես, ասես ոչինչ տեղի չի ունեցել. դա բացասաբար կանդրադառնա իմ փրկության վրա: Աստված չի մոռանա իմ չխոստովանած և չընդունած մեղքերը, որովհետև Նա ավելի շատ աշխատանք ունի իմ մեջ անելու, քան ես գիտեմ: Հոգու սրբացնող աշխատանքը կախված է իմ՝ մեղքերի ընդունումից և ապաշխարելու պատրաստակամությունից:

Ճանաչել սեփական մեղքերը

Համաձայն Աստծո Խոսքի՝ մեր թշվառության պատճառը մեղքն է: Մեղքն է, որ զայրացրեց Աստծուն և Նրա անեծքը բերեց մարդու վրա: Նա կատարյալ ատելություն է տաժում մեղքի նկատմամբ (Երեմ. 44.4) և կանի ամեն բան՝ այն արմատախիլ անելու համար: Մեղքը հեռացնելու նպատակով էր, որ Աստված տվեց Իր Որդուն, որ Հիսուսը տվեց Իր անձը. «Նա հայտնվեց, որ մեր մեղքերը վեր առնի» (Ա Հովհ. 3.5): Մեր հոգևոր կյանքում կան կարևոր տարրեր, որ պետք է իմանանք, եթե ապրելու ենք և մահանալու ենք որպես հավատացյալներ: Մենք պետք է իմանանք, թե որքան մեծ են մեր մեղքերն Աստծո աչքում: Առաջին դասը, որ, որպես հավատացյալ, պետք է սովորենք, այն է, թե որքան չար, սուկալի և թշվառ են մեր մեղքերը: Մեր առօրյա մեղքերը Աստծո սրբման կարիքն ունեն: *Աստված պահանջում է խոստովանություն և ապաշխարություն, որպեսզի սրբվենք մեր մեղքերից:* Որքան ավելի լավ ըմբռնենք սա, այնքան ավելի օրինված կլինի մեր կյանքը, և այնքան ավելի խոր հաղորդակցություն կունենանք Տիրոջ հետ:

ՄՏՈՐՈՒՄ Աստծո հետ: Սիրելի Քրիստոսի աշակերտ, ցանկանում եմ տալ մի քանի հարց այս չափազանց կարևոր խնդրի վերաբերյալ: *Արդյո՞ք հիմնովին հասկանում եք, թե ինչ է մեղքերի թողությունը:* Մի պատկերացրեք, թե սա անհարկի հարց է հավատացյալի համար: Ես գիտեմ բազում անկեղծ քրիստոնյաների, որոնք լիովին չեն հասկանում այս խնդրի էությունը: Կրկին հարցնում եմ. *իսկապէս փնտրում եք ներում և մաքրում ձեր ամենօրյա անօրինությունների կամ մեղքերի համար:* Ես չեմ հարցնում, թե արդյո՞ք գիտեք, որ փրկվելու կարիք ունեք, կամ արդյո՞ք ձեր մեղքերը երբեմն անհանգստացնում են ձեզ, կամ արդյո՞ք երբեմն աղոթում եք ձեր մեղքերի համար կամ գուցե ամեն օր աղոթում եք՝ «Ներիր մեզ մեր մեղքերը»: Ո՛չ, ես դրանք չեմ հարցնում: Ես հարցնում եմ առավել կարևոր բան. Արդյո՞ք Աստծո ներկայութ-

յամբ, որը քննում է մեր սրտերը, կարող եք ասել, որ դուք հայտնի եք Նրան որպես մեկը, ով իսկապես փնտրում է ողորմություն, ներում և մաքրում առօրյա կյանքում:

Արդյո՞ք իմ բոլոր մեղքերը՝ անցյալ, ներկա և ապագա, ներված են: Եկե՞ք քննենք այս պնդումը: Մեղքը՝ անելը, ասելը, մտածելը կամ պատկերացնելն է այն, ինչը կատարյալ համաձայնության մեջ չէ Աստծո բնավորության և օրենքի հետ: Աստծո հայտնված կամքից և բնավորությունից ամենաթույլ արտաքին կամ ներքին շեղումն առաջ է բերում մեղք: Սա անմիջապես մեզ մեղավոր է դարձնում Աստծո աչքում: Մեղքի գիտությունն անհրաժեշտ է հավատացյալի համար, որովհետև առանց մեղքի գիտության չկան ո՛չ մեղքի ճանաչում կամ խոստովանություն, ո՛չ աղաղակ ողորմության համար, ո՛չ ապաշխարություն, ո՛չ ներում և ո՛չ էլ սրբում: Ավելի ուշ կրկին կնայենք մեղքի հոգևոր նշանակությունը:

Ինչո՞ւ է անհրաժեշտ, որ հավատացյալը ճանաչի իր առօրյա մեղքերը: Շատերը կարճագանքեն՝ ասելով. «Մի՞թե դրանք չեն ներվում հավատացյալին, երբ նա դարձի է գալիս: Ինչո՞ւ անհանգստանալ դրանց համար»: Նրանք մտածում են այսպես. «Ես լավ քրիստոնյա եմ, վերստին ծնված և Հոգով լցված հավատացյալ: Աստված ողորմության Աստված է, և Նա հեռացրել է իմ մեղքերը: Այլևս պատճառ չկա, որ ճանաչեմ իմ մեղքերը»: Եկե՞ք տեսնենք՝ դատողության այս ուղին սուրբգրային տեսանկյունից ճիշտ է, թե ոչ: Այժմ ես ցույց կտամ, թե ինչու է այս մտածելակերպն արատավոր և չի ներկայացնում Ավետարանի ամբողջ ճշմարտությունը:

Երբ հավատացյալը դարձավ դեպի Քրիստոսը և ընդունեց Նրան՝ որպես իր Փրկչի, նրա անցյալ մեղքերը ներվեցին, և նա ընդունվեց Աստծո ընտանիքի մեջ: Մենք տեսնում ենք սա հետևյալ խոսքերում. «Եվ ձեզ, որ մի ժամանակ (նախքան դարձի գալը) մեռած էիք մեղքերում... Իր հետ կենդանացրեց՝ **բոլոր** մեղքերը ձեզ շնորհելով» (Կող. 2.13): Ես մեռած էի, ես կենդանացա: Սա վերաբերում է դարձի գալուն կամ ապաշխարությանը, երբ ընդունեցի Հիսուսին՝ որպես իմ Փրկչի: Այստեղ «բոլոր» մեղքերի թողությունը կապված է մեռած վիճակից կենդանանալու հետ: Սա վերաբերում է իմ բոլոր անցյալ մեղքերին այն ժամանակ, երբ ապաշխարեցի: Անցյալն ամբողջությամբ ներված է: Նայենք մեկ այլ խոսք, որը չի սահմանափակում Աստծո ներումը: «Որով ունենք փրկությունը Նրա արյունով՝ մեղքերի թողությունը Իր շնորհքի մեծության չափով» (Եփես. 1.7): Ուշադրություն դարձ-

րեք, որ Նրա արյունով փրկագնումը բերում է մեղքերի թողութ-
յուն: Փրկագնումն այն վճարումն է, որի նպատակն է ձեռք բերել
ինչ- որ բանի տիրապետման իրավունք: Այժմ ես Աստծո սեփա-
կանությունն եմ, որովհետև Նա վճարեց Իր թանկ արյունով: Սա
ընդամենը մեկ անգամ է տեղի ունենում մարդու հետ՝ դարձի գա-
լու ժամանակ: Մեղքերի թողությունը տեղի է ունենում արյունով
վճարման շնորհիվ: Այս խոսքը չի ասում, որ միայն անցյալի մեղ-
քերն են ներվում: Մեղքի թողությունը բոլոր ժամանակների հա-
մար է: Փառք Տիրոջը: Ինչևէ, սա մեր մեղքերի թողության վերա-
բերյալ Աստծո ուսուցումների վերջը չէ: Եկեք միասին բացահայ-
տենք այս ուսուցումները:

Թեև բոլոր մեղքերը ներվում են արյան շնորհիվ, Աստ-
ծո խոսքը նաև ցույց է տալիս, որ մեր մեղքերն ինքնաբե-
րաբար չեն ներվում: Աստված Ինքը պայմաններ է դնում Իր
ներման համար: Պայմանները ցույց են տալիս Աստծո առջև
մեր պատասխանատվությունը այն մեղքերի համար, որ
գործում ենք ամեն օր: Այժմ մենք կտեսնենք, որ ապաշխա-
րելուց հետո մեր մեղքերը ներվում են, ԵԹԵ խոստովանում
ենք դրանք Աստծո առջև:

Ներկա և ապագա մեղքերը ներվում են, ԵԹԵ խոստովա- նում ենք դրանք:

Մենք կնայենք մի քանի սուրբգրային հատվածներ, որոնք
հստակ ցույց են տալիս այս ճշմարտությունը:

**«Եվ սա գրում ենք ձեզ, որ ձեր ուրախությունը կատարյալ
լինի... Թե մեր մեղքերը խոստովանենք, Նա հավատարիմ է և
արդար, որ մեր մեղքերը թողնի մեզ և սրբի մեզ ամեն անիրա-
վությունից» (Ա Հովհ. 1.4,8- 10, 2.1):** Երբ նայում ենք այս խոսքը,
անմիջապես տեսնում ենք «թողնել» և «սրբել» բառերը և բավա-
րարված ենք զգում: Բայց հնարավոր է, որ մենք չենք նկատում,
որ կա պայման. **«ԵԹԵ խոստովանենք»:** Աստված մշտապես նե-
րում է և սրբում մեր մեղքերը, **եթե** խոստովանում ենք: Որպես-
զի «ձեր ուրախությունը կատարյալ լինի»: Այս հատվածում հստակ
տեսնում ենք, որ ուրախությունը կապված է մեր առօրյա մեղքե-
րի թողության հետ, որը տեղի է ունենում խոստովանության մի-
ջոցով: Ներումը հնարավոր չէ առանց խոստովանության: Սա
Աստծո ճանապարհն է: Աստծո պայմանը Նրա լույսն է սփռում
մեր թմրած պատասխանատվության վրա: **ԵԹԵ** խոստովանում
ենք, մեղքը հեռացվում է այնքան, որքան արևելքը հեռու է արև-

մուտքից (Սաղմ. 103.11, 12): Եթե չենք խոստովանում, մեղքը չի մաքրվում կամ չի հեռացվում: Սիրելի հավատացյալ և աշակերտ, արդյո՞ք այս ճշմարտությունը դիպչում է ձեր սրտին: Այս հարցն ամենից կարևոր է ձեր հոգևոր առողջության և աճի համար: Մտորե՞ք Ա Հովհաննեսի 1- ին խոսքի շուրջ, մտորե՞ք Աստծո հետ:

Նայենք սուրբգրային մի քանի այլ հատված այս հարցի վերաբերյալ:

«Փորձիր ինձ, ո՛վ Աստված, և ճանաչիր իմ սիրտը. քննիր ինձ և ճանաչիր իմ մտածմունքները: Եվ տես, թե որ չար ճանապարհում լինեմ, առաջնորդիր ինձ դեպի հավիտենական ճանապարհը» (Սաղմ. 139.23,24): Եթե իմ ներկա և ապագա բոլոր մեղքերը ներվում են առանց խոստովանության, ինչո՞ւ է ասվում. «Քննիր ինձ, փորձիր ինձ և առաջնորդիր դեպի հավիտենական ճանապարհը»: Արդյո՞ք ես խորհրդածում և հաղորդություն եմ ունենում Աստծո հետ՝ իմ սիրտը ճանաչելու համար:

«Որովհետև եթե դուք մարդկանց իրենց հանցանքները թողնեք, ձեր երկնավոր Հայրն էլ ձեզ կթողնի: Իսկ եթե դուք մարդկանց չեք թողնի նրանց հանցանքները, ձեր Հայրն էլ չի թողնի ձեր հանցանքները» (Մատթ. 6.14,15): Յավոք, ուրիշներին չներելը շատ տարածված վիճակ է բոլոր քրիստոնյաների համար: Եթե մեր ներկա և ապագա բոլոր մեղքերը ներվում են դարձի գալիս, ինչո՞ւ «ձեր Հայրն էլ չի թողնի ձեր հանցանքները, եթե դուք չթողնեք ուրիշների հանցանքները»: Նման իրավիճակ տեսնում ենք Տերունական աղոթքում. «...**թո՛ղ մեզ մեր մեղքերը, որովհետև մենք էլ թողնում ենք ամենին, որ պարտական է մեզ...**» (Ղուկ. 11.4): Եթե մեր ներկա և ապագա բոլոր մեղքերը ներված են, ինչո՞ւ է գրված. «Թո՛ղ մեզ մեր մեղքերը»: Եթե ես չներեմ, Աստված էլ ինձ չի ների: Արդյո՞ք այս ճշմարտությունը մտել է իմ սիրտ: Իմ մեղքերն ամեն օր պահանջում են իմ ուշադրությունը, համաձայն չե՞ք:

«Եվ հայտնի են մարմնի գործերը, որ են՝ շնություն ... պղծություն, գիճուկություն, կռապաշտություն, կախարդություն, թշնամություններ, կռիվներ, նախանձներ, բարկություններ ... բաժանմունքներ, չար նայվածքներ ... արբեցություններ, անառակություններ և ինչ որ սրանց նման են. որ առաջուց ասում եմ ձեզ, ինչպես էլ առաջուց ասում էի, թե **այսպիսի բաներ գործողներն Աստծո արքայությունը չեն ժառանգի**» (Գաղ. 5.19- 21): Պողոսը խոսում է գաղատացիների եկեղեցու հետ, նա խոսքը չի ուղղում անհավատներին: Եթե մարմնի այս բոլոր մեղքերը հավատացյալների

համար մշտապես ներվեն առանց խոստովանության, ինչո՞ւ «այսպիսի բաներ գործողներն Աստծո արքայությունը չեն ժառանգի»:

Հովհաննեսի 13.5- 10- ում տեսնում ենք, թե ինչպես է Հիսուսը վանում Իր աշակերտների ոտքերը: Այստեղ վանալն ակնարկում է ամենօրյա աղոթը, ամենօրյա մեղքերը սրբելը: Երբ գալիս է Պետրոսի հերթը, նա Հիսուսին ասում է. «Դու իմ ոտքերը չես վանա հավիտյան»: Դրա նշանակությունը սա է. իմ ամենօրյա մեղքերը սրբվելու կարիք չունեն, ինքս կարող եմ այդ հարցը լուծել: Հիսուսը պատասխանում է. «Եթե քեզ չվանամ, Ինձ հետ բաժին չունես»: Սա նշանակում է, որ եթե ես ամեն օր չսրբեմ քեզ մեղքից, Ինձ հետ հաղորդություն չես ունենա: Պետրոսի արձագանքը. «Տէր, ոչ թե իմ ոտքերը միայն, այլ իմ ձեռքերը և գլուխն էլ»: Հիսուսի խոսքերը. «Լվացածին բան պետք չէ, բացի ոտքերը վանալուց, այլ բոլորովին մաքուր է»: Այսինքն. «Դուք կարիք չունեք նորից փրկվելու, բայց դուք կարիք ունեք Իմ միջոցով ամեն օր սրբվելու մեղքից»: Ուղերձը հստակ է, ամենօրյա խոստովանություն է անհրաժեշտ Աստծո հետ հաղորդակցություն ունենալու համար. «Ինձ հետ բաժին չունես»: Եթե ընդունենք այս ուղերձը և հետևենք դրան, այն մեզ կպատրաստի՝ սովորելու նույն հատվածում տեղ գտած խոնարհության մասին ուսմունքը:

Սիրելի՛ հավատացյալ, եթե ցանկանում եք ապրել Հիսուսի ճշմարիտ աշակերտի կյանքով, մեծ ուշադրություն պետք է դարձնեք Աստծո ներման պայմանին, ուշադիր լինեք, թե ինչ է Աստված պահանջում ձեզնից ձեր առօրյա մեղքերի վերաբերյալ: Սա ձեր կյանքն է և ձեր պատասխանատվությունը ձեր դարձի գալուց հետո, դուք պետք է հոգ տանեք ձեր մեղքերի համար՝ դրանք բերելով Հիսուսի մոտ ներման, հետևաբար և սրբման համար: Դուք չեք կարող ապրել որպես ճշմարիտ աշակերտ առանց խոստովանության և ապաշխարության, որովհետև Աստծո հետ ձեր հաղորդակցությունը սահմանափակում է հենց Աստված. «Եթե **ես** քեզ չվանամ, Ինձ հետ բաժին չունես»: Կյանքը Հիսուսին հանձնել նախևառաջ նշանակում է խոստովանության միջոցով սրբվելու համար Նրան հանձնել ամենօրյա մեղքերը և մշտապես Նրա խաչին հանձնել սեփական կյանքը:

Ո՞րն է փրկության զորության իրական ապացույցը: Դա մեղք գործելուց փրկվելն է: «Նա հայտնվեց, որ մեր մեղքերը վեր առնի» (Ա Հովհ. 3.5): Փրկությունը փրկություն է մեղանչումից: Եթե դուք ընդունում եք Աստվածաշնչի այս ճշմարտությունները, և շատերի պես դրանք չեն մտնում ձեր սիրտ, առանձնացե՛ք Աստծո հետ և խնդրե՛ք, որ Հոգին օգնի ձեզ: Դուք կարիք ունեք ժամա-

նակ անցկացնելու Տիրոջ հետ և մտորելու վերոնշյալ հաստատվածների շուրջ, մինչև որ Սուրբ Հոգին լույս սփռի ձեր սրտում. դուք պետք է անեք սա մշտապես: Սպասեք Աստծուն ձեր սրտում այս ներքին փոփոխության համար: Սա այնպիսի բան է, որ պետք է տեղի ունենա ոչ թե ձեզ հետ, այլ ձեր մեջ: Առաջին հերթին հավատացեք և ձեր սրտում կհամոզվեք և աստվածային հանդիմանություն կընդունեք ճշմարտության վերաբերյալ:

ՄՏՈՐՈՒՄ Աստծո հետ: Սիրելի՛ Քրիստոսի աշակերտ, կարո՞ղ է Աստված ձեր մասին ասել, որ դուք քաղցած և ծարավ եք ձեր ամենօրյա որոշակի և հատուկ մեղքերի թողության և սրբման, ինչպես նաև սրբության: Կարո՞ղ եք ասել, որ օրեցօր փնտրում եք այս շնորհքը և ձգտում եք դրան՝ որպես անփոխարինելի բանի: Այս ներումը ստանալու և սուրբ կյանքով ապրելու համար արդյո՞ք հոժարությամբ թողնում եք մեղքը և հոժարությամբ հրաժարվում աշխարհից: Արդյո՞ք հիմա անկեղծ աղոթքով նետվում եք Աստծո առջև: Արդյո՞ք խնդրում եք Նրանից ներում և սրբում՝ որպես անհրաժեշտ և անփոխարինելի օրհնություն, որը Նա պետք է տա ձեզ ամեն օր (հարցն Աստծո մասին չէ): Արդյո՞ք իսկապես փնտրում եք դա աղոթքի տանը, Աստծո Խոսքի մեջ և ձեր աղոթքներում որպես կյանքում ամենակարևորը: Պատրաստ եք ամեն բան վնաս համարելու՝ դա ձեռք բերելու համար: Այն արժանի է, որ այս կերպ փնտրեք: Աստված փափագում և ցանկանում է, որ այսպես փնտրեք, և այդ դեպքում կվերապրեք այն. միայն նա ձեռք կբերի դա, ով այսպես կփնտրի: Իսկապես այսպես եք փնտրում: Մենք ավելի ուշ կվերադառնանք այս թեմային: Մի՛ հանձնվեք, այլ համբերությամբ սպասեք Աստծուն, որպեսզի Նա Իր գործն անի ձեր սրտում՝ կապված ձեր մեղքերի հետ: Դա ձեր աշխատանքը չէ, բայց որոշումը և պատրաստակամությունը ձերն են, հետևաբար ձերն է նաև պատասխանատվությունը, որը տրվել է Աստծուց:

Կուտակած չապաշխարած մեղքեր

Ահա թե ինչ է Աստված ասում չխոստովանած և չապաշխարած մեղքերի մասին. «Եվ Իմ ժողովուրդը, որի վրա կոչված է Իմ անունը, խոնարհվի և աղոթք անի և Իմ երեսը խնդրի և իր չար ճանապարհներից ետ դառնա, այն ժամանակ ես կլսեմ երկնքից և կներեմ նրա մեղքը և կբժշկեմ նրա երկիրը» (Բ Մնաց. 7.14): «... Այլ ձեր անօրինություններն են բաժանում ձեր և ձեր Աստծո մեջտեղը, և ձեր մեղքերը ծածկեցին Նրա երեսը ձեզնից, որ չլի»

(Ես. 59.1,2): Նման արձագանք տեսանք Հիսուսից, երբ Պետրոսն առարկեց, երբ Նա եկավ լվանալու իր ոտքերը. «*Ինձ հետք բաժին չունես*» (Հովհ. 13.5- 10): Աստծո արձագանքը Եսայիի 59- ում սա է. «...ձեր մեղքերը ծածկեցին Նրա երեսը ձեզնից»: Գոյություն ունի կապ Տիրոջ երկյուղի և մեղք գործելու միջև: Այժմ ծագում է մի հրատապ հարց՝ ինչ են մեզ անում չապաշխարած մեղքերը: Դրանք վտանգավոր կերպով թուլացնում են մեր հաղորդակցությունն Աստծո հետ. «*Ինձ հետք բաժին չունես*»: Հատկապես փոխհարաբերություններին վերաբերող չապաշխարած մեղքերը (օրինակ՝ ուրիշներին չներելը կամ չընդունելը) բերում են դիվային ազդեցություն մեզ և մեր ընտանիքների վրա: Վերանում է Հոգու լեցունությունը: Հոգով «լցվում» ենք ոչ թե մեր ամենօրյա մեղքերը չանտեսելով, այլ աստվածային տրտմությամբ դրանք խոստովանելով և ապաշխարելով: Անտեսել խոստովանությունը նշանակում է անտեսել մեղքից սրբվելը, իսկ դա ստեղծում է մեր մեջ անտարբեր սիրտ, ինչը նշան է մարմնին գերի լինելու և հաճախ խոչընդոտում է, որ Աստծո հայտնություններն ու հանդիմանությունները հասնեն մեր սրտին:

Ահա մի վիճակ, որը տանջում է շատերիս, մի վիճակ, որը հազվադեպ է ընդունվում շատ եկեղեցիներում: Մենք մեր մեղքերը մեղք չենք համարում, մենք չենք քարոզում մեղքերի դեմ, մենք այլևս չենք ընդունում դրանք, մենք նայում ենք դրանց իբրև տկարության, խոսքը հատկապես փոխհարաբերության մեղքերի մասին է, ինչպիսիք են բամբասելը կամ չսիրելը: Համաձայն Աստծո՝ սիրել նշանակում է «զգալ և գործել սրտացավությամբ, բարությանբ, խոնարհությամբ, հեզությամբ և համբերատարությամբ, հանդուրժել միմյանց, ներել միմյանց, ընդունել միմյանց»: Հովհաննես առաքյալը պնդում է, որ սիրենք գործերով, ոչ թե պարզապես խոսքերով (Ա Հովհ. 3.18): **Չսիրելը կամ հոգ չտանելը մեղք է՝ ըստ Աստծո:** Արդյո՞ք ընդունում եմ սա: Արդյո՞ք սա մտնում է իմ սիրտ: Արդյո՞ք ես արժանի էի Քրիստոսի սիրո զոհին, երբ առաջին անգամ եկա Նրա խաչի մոտ: **Երբ չենք անում այն, ինչ Աստծո խոսքը սովորեցնում է մեզ անել, մեղք է:** Արդյո՞ք ապաշխարում ենք, երբ մարդկանց նկատմամբ չենք ցուցաբերում սեր և ընդունելություն: Եթե չմտնեք Աստծո ներկայության մեջ Նրա հետ հաղորդություն ունենալու համար, երբեք չեք փոխվի, ձեր սրտում կշարունակի տիրել անտարբերությունը: Արդյո՞ք ձեր մեղքերն ու անօրինությունները, հատկապես անձնվեր սիրով չսիրելու մեղքը, ջնջվում են ամեն օր: Եթե դեռևս այդպես չէ, ուրեմն դուք դեռևս այնտեղ չեք, որտեղ պետք է լինեք Աստ-

ծո հետ: Դուք չեք հանձնվել Նրա խաչին: Ուստի ես հորդորում եմ ձեզ. «Շտապեք Աստծո մոտ»: Այլևս մի մնացեք հեռվում կանգնած: Աստված սպասում է, որ ձեր մեջ շարունակի Իր փրկության գործը, որն ընդհատել եք ձեր անհավատությամբ և անհոգությամբ:

Մեր կարիքը

Մենք պետք է գնանք Աստծո մոտ՝ սրտից սիրտ հաղորդություն ունենալու և խնդրելու, որ Նա բացահայտի մեզ մեր մեղքերը: Սա այն կարիքն է, որ հաճախ չենք գիտակցում և չենք դիտարկում: Մեր մեղքերը բացահայտելու այս քայլը բնական չէ հավատացյալի համար, քանի որ եսապաշտ կյանքը կամ մարմինը կհակառակվի դրան ամբողջ զորությամբ: Մի սպասեք, մինչև զգաք, որ ուզում եք անել դա. զգացմունքներն ամենից անհուսալին են: Մի սպասեք, մինչև հոգևորապես բավականաչափ ուժեղ զգաք, հիմա՛ հաղորդակցվեք Աստծո հետ այս բացահայտման համար և եղեք որքան հնարավոր է որոշակի և անկեղծ Նրա հետ ձեր հաղորդակցության ընթացքում:

Քրիստոսի հավատացյալ և աշակերտ, մինչև չճանաչեք ձեր մեղքերը, չեք կարող իրապես հասնել խոստովանության կամ ընդունել ողորմություն, ոչ էլ կարող եք արդյունավետորեն պայքարել դրանց դեմ: Մեղքի ահարկու զորությունը կարող է հեշտությամբ կուրացնել ցանկացած մարդու: Մենք պետք է իմանանք, թե որքան մեծ է մեր յուրաքանչյուր մեղքը Աստծո աչքում: Մենք տեղյակ չենք լինի մեր մեղքերից, դրանց անիրավությունից և չարությունից, մինչև Սուրբ Հոգին չսովորեցնի մեզ ճանաչել այդ ամենը. սա պետք է փնտրել: Մենք չենք ճանաչի մեղքի իրական էությունը, նողկալիությունը և չարությունը, մինչև Աստված չհայտնի մեզ. սա նույնպես պետք է փնտրել: Սա հայտնության Լույս է, որի կարիքն ունենք երկնքից: Սրանք հայտնություններ են, որ պետք է փնտրենք և պետք է սպասենք Տիրոջը դրանց համար: Մենք դարձել ենք հոգևոր նյութապաշտներ, մենք փնտրում ենք գիտություն և հայտնություն գլխավորապես մեր երկրային կյանքի և երկրային օրհնությունների համար: Սիրտն իրականում ինքն իրեն չի ճանաչում. մենք կարիք ունենք աստվածային բացահայտման: *Մեր հոգևոր կարիքն ավելի մեծ է, քան գիտենք կամ մտածում ենք:*

Միակ բանը, որի համար Հիսուսը ստիպված եղավ տալ Իր

արյունը, մեղքն էր: Երբ ապաշխարեցիք և դարձաք դեպի Հիսուսը, ինչ- որ չափով ընկալեցիք սա: Բայց այժմ պետք է սովորեք ավելի խորությամբ և սրտով հասկանալ այս դասը: Մեղքի վերաբերյալ ամենամեծ խորհուրդն այն է, որ ամեն օր բերենք Հիսուսի մոտ, որը Միակն է, որ կարող է վեր առնել այն, և անենք դա անվիջապես: Սա անտեսել նշանակում է անձնատուր լինել մարմնին և սատանային: Դուք պետք է սովորեք, որ Աստծո զավակի հրաշալի արտոնություններից մեկը մեղքի ամենօրյա խոստովանությունն է: «...Նրա Որդի Հիսուս Քրիստոսի արյունը սրբում է մեզ ամեն մեղքից» (Ա Հովհ. 1.7): Այս խոսքը միայն չի վերաբերում ապաշխարությանը: Ուշադրություն դարձրեք. «Եթե ասենք, թե մեղք չունենք, մեր անձերը խաբում ենք, և ճշմարտությունը չկա մեզանում: Ապա թե մեր մեղքերը խոստովանենք, Նա հավատարիմ է և արդար, որ մեր մեղքերը թողնի մեզ և սրբի մեզ ամեն անհրավությունից: Եթե ասենք, թե մեղք չգործեցինք, ստախոս ենք անում Նրան, և Նրա խոսքը մեզանում չէ: ...և եթե մեկը մեղանչի, բարեխոս ունենք Հոր մոտ՝ Հիսուս Քրիստոս Արդարին» (Ա Հովհ. 1.8- 10, 2.1): Մեղքի ամենօրյա խոստովանությունը և ամեն օր սրբվելը կյանք է, որով պետք է ապրել, ոչ թե ինչ- որ բան, որ պետք է անել, որովհետև Աստված է պահանջում:

Բացե՛ք ձեր սիրտը Աստծո ձայնը լսելու համար և պատրաստ եղե՛ք ընդունելու ձեզ ուղղված Աստծո ուղերձը և հավատալու դրան: Առանց մեղքերը խոստովանելու չենք կարող սրբվել: Մեղքի համար ներում ստանալը բավական չէ: Շատ քրիստոնյաներ մտածում են, որ քանի որ ստացել են ներում իրենց մեղքերի համար, ունեն բավարար գիտելիք դրա հետևանքների մասին: Սա դիվային խաբեություն է: Բոլորս սխալ ենք, եթե չենք ճանաչում մեր մեղքերը և չունենք հաղթանակ մեղքի նկատմամբ մեր ամենօրյա կյանքում: Մնացե՛ք Քրիստոսի մեջ, որ չմեղանչեք (Ա Հովհ. 3.6): Աստծո հանդեպ մեր սերը ստիպում է մեզ ձգտել ապաշխարության և սրբվելու: Մենք ապացուցում ենք Աստծո հանդեպ մեր սերը՝ Նրա պատվիրաններին հնազանդվելով (տե՛ս Հովհ. 15):

Երկու տեսակի մեղք

Կա երկու տեսակի մեղք, երկուսն էլ հավասարապես վտանգավոր և չար են Աստծո աչքում: Երկուսն էլ պահանջում են խոստովանություն և ապաշխարություն: Չխոստովանած և չապաշխարած մեղքերը մեր հոգևոր կյանքի չարիքն են, դրանք նաև ազդում են մեր ֆիզիկական մարմնի և առողջության վրա, և միայն մեզ պետք է մեղադրենք դրանց համար:

(1) Մեղքեր գործողությամբ: Այս մեղքերը մեղավոր արարքներ են, օրինակ. «Մի սպանիր: Մի շնացիր: Մի գողացիր: Քո դրացու դեմ սուտ վկայություն մի՛ տուր» (Ելից 20.12- 17): Հետևաբար գողանալը և ստելը մեղքեր են անկախ պատճառներից: Աստված Իր քաղցրությամբ լսում է մեղք գործելու մեր արդարացումները, բայց երբեք չի ընդունում դրանք: Մենք հաճախ մի փոքր դժվարանում ենք ընդունել սրանք որպես մեղքեր: Ինչևէ, դրանք ընդունելը և արձագանքելու համար բավականաչափ կարևոր համարելը երկու տարբեր բաներ են: Շատ քրիստոնյաներ մեղանչում են առանց որևէ բան զգալու. ամենուրեք կուրություն է և անզգայունություն:

(2) Անգործության մեղքեր: Այս մեղքը չկատարելն է այն, ինչ Աստծո Խոսքը սովորեցնում է, որ պետք է անենք: Մեր մեղքերը որպես մեղք և չարիք ընդունելու մեր դժվարությունը մեծ մասամբ այս ոլորտում է, որովհետև մենք ճիշտ չենք նայում դրանց և համարում ենք դրանք բնավորության թուլություն: Օրինակ. «... հագե՛ք... ողորմասիրտ գթածություն, քաղցրություն, խոնարհություն, հեզություն, երկայնմտություն. իրար համբերելով և իրար ներելով, եթե մեկը մյուսի դեմ տրտունջ ունենա, ինչպես Քրիստոսն էլ ձեզ ներեց, այնպես էլ դուք» (Կող. 3.12,13): «Սերը երկայնամիտ է՝ քաղցր է. սերը չի նախանձում, չի գռռոզանում, չի հպարտանում: Չի լրբանում, իրենը չի որոնում, չի գրգռվում, չարը չի մտածում» (Ա Կորնթ. 13.4,5): Հետևաբար բարությունն անտեսելը և ինչ- որ մեկի հետ կոպիտ վարվելը մեղք է, ոչ թե տկարություն, անհամբեր վարվելը մեղք է, առանց խոնարհության վարվելը մեղք է, չներելը մեղք է՝ անկախ պատճառից: Սրանք անգործության մեղքի օրինակներ են. մենք չենք անում այն բարիքը, որ պետք է անենք: Դժբախտաբար և ցավոք, շատ քրիստոնյաներ այս ամենը մեղք չեն համարում, որովհետև սա բնական է յուրաքանչյուրի համար: Բայց անգործության մեղքերի ընդհանրական լինելը չի նվազեցնում այն փաստը, որ դրանք մեղք են և պետք է դիտվեն ու վերաբերվեն որպես այդպիսին: Այո՛, բարությունը հեշտ չի տրվում, բայց նույնը չի կարելի ասել հպարտության կամ եսասիրության մասին: Սակայն Աստված մեզ ճանապարհ է ցույց տվել, որպեսզի ճշմարիտ և լիարժեք հնազանդությամբ ապրենք մեր հոգևոր կյանքը, որը Նա հնարավոր դարձրեց Իր զավակների և Իր աշակերտների համար: Հանգամանքները, որոնց միջով անցնում ենք, ունեն սերտ կապ մեր մեղքերի հետ և մատնացույց են անում, թե ինչպես ենք հավատում աստվածային ճշմարտություններին և ընդունում դրանք:

Ինչ է մեղքը: Ո՞րն է մեղքի հոգևոր նշանակությունը:

Հարցը շատ ավելի խորն է, քան իմանալը, թե ինչն է ճիշտ կամ սխալ: Մենք՝ հավատացյալներս, չենք ճանաչի մեղքի իրական էությունը, մեծ չարիք լինելը և նողկալիությունը, մինչև Աստված չհայտնի մեր սրտին: Սակայն այս հայտնությունը տրվում է որոնող սրտին, որը հանձնվել և անձնատուր է եղել Աստծուն: Մեր գիտելիքը մեղքի մասին շատ քիչ է և աղոտ: Այս գիտելիքը ինքնաբերաբար չի տրվում մարդուն: Հոգին հայտնում է այն որոնող սրտին: Այս որոնումը հաճախ ներառում է Աստծուն սպասելը: Աստված աստվածային «Գուգլ» ծառայություն չէ: Ինչ նշանակություն ունի մեղքը իմ կյանքում: Մենք պետք է կենտրոնանանք այս կարևոր հարցի վրա:

Ահա մեղքի հոգևոր նշանակության հակիրճ բացատրությունը: Սիրելի՛ Քրիստոսի աշակերտ, ձեր մեղքով և անհնազանդությամբ դուք ձեզ բարձրացրել եք Ամենակարող Արարչից վեր և Աստծո կամքից վեր ընտրել եք ձեր կամքը, որ անարդար է և արատավոր՝ ըստ Աստծո, որը միակ սուրբն է: Դուք ասել եք, որ ձեր մարմնի կամ «ես»- ի և սատանայի խորհուրդը և կամքն ավելի գրավիչ են ձեզ համար և ավելի մեծ ազդեցություն ունեն ձեզ վրա, քան Աստծո կամքը: Դուք մերժել և ուրացել եք ձեր հանդեպ Նրա սերը: Դուք ուրացել և անարգել եք սիրո մեծ Աստծուն, որը ցույց է տվել Իր բարությունը ձեր կյանքում բազում օրհնություններով: Դուք՝ մի խեղճ մարդ փոշուց, հակադրվել և վիրավորել եք Սուրբին, Օրենսդիրին և տիեզերքի Արարչին: Այս Սուրբ Աստծո դեմ եք մեղանչել: Ինչ եք մտածում: Ինչ եք արել: Սիրելի՛ քրիստոնյա, մեղքի նշանակությունը շատ խորն է, և դրա մասին շարունակական հայտնություն է ստանում որոնող սիրտը: Ես աղոթում եմ, որ փնտրեք այն Աստծուց:

Յուրաքանչյուր մեղք չափազանց մեղավոր է Աստծո առջև (Հռոմ. 7.13), այդ թվում՝ «կուպիտ վարքագծի», «ստելու» կամ «բամբասելու», «նախանձելու և խանդելու» մեղքերը, որոնք սովորաբար համարում ենք փոքր և անկարևոր: Երկու տեսակի մեղքերն էլ (մեղքեր գործողությամբ և անգործությամբ) չափազանց մեղսալի և չար են Աստծո առջև, որովհետև լցված են հպարտությամբ, եսասիրությամբ և եսակենտրոնությամբ: Սա պետք է հասկանա և ՏԵՄՆԻ իմ սիրտը, ոչ թե միայն իմ միտքը:

Ես պետք է խնդրեմ և շարունակ ձգտեմ, որ Հոգու հանդիմանությունը և հայտնությունը իմ մեղքերի չարության մասին դիպչեն իմ սրտին: Ես պետք է ՏԵՄՆԵՄ իմ սրտում եղած չարությունը. դա կոտորում է սիրտը: Մեր մեղքը կամ անհնազանդությունը չպետք է լինի անորոշ գործողություն կամ անհասկանալի վերաբերմունք: Մեր խոստովանությունը չպետք է լինի անորոշ և ընդհանուր, ինչպես օրինակ. «Աստված, ներիր այն մեղքերը, որ գործել եմ այսօր»: Սա անպտուղ խոստովանություն է և ցույց է տալիս մեղքի և սրբության նկատմամբ սրտի անտարբերությունը: *Փաստացի* անհնազանդությունը պետք է բացահայտվի և անպայման հայտնաբերվի Սուրբ Հոգու միջոցով: Այս բացահայտումը պահանջում է նվիրված, հստակ, սրտից սիրտ հաղորդություն Աստծո հետ և իրական հնազանդություն Սուրբ Հոգուն:

Մեղքի խոստովանության ճանապարհին հավատացյալի մեծ խոչընդոտը մեղքին անտեղյակ լինելն է: Ինչո՞ւ եմ այսքան շատ մոռանում իմ մեղքերի մասին: Ինչո՞ւ չեմ տեսնում իմ մեղքերը: Օրվա վերջում ոչինչ չեմ հիշում իմ մեղքերի մասին: Ինչ կարող եմ անել այս կապակցությամբ:

Ինչո՞ւ չեմ ճանաչում իմ մեղքերը

Ահա հինգ ընդհանուր պատճառներ, որոնք լայնորեն տարածված են մեր մեջ: 1) Որպես քրիստոնյա՝ ես հավատում եմ, որ իմ ներկա և ապագա մեղքերն ինքնաբերաբար ներվում են դարձի գալու ժամանակ, և ես խոստովանության ու ապաշխարության կարիք չունեմ, որովհետև չկա դատապարտություն հավատացյալի համար: «Չկա դատապարտություն» արտահայտության համատեքստը միայն մասամբ է հասկանալի, և սխալ է հասկացվում այս ճշմարտությունը: Հետևաբար ես այլևս չեմ մտածում մեղքերի մասին: Այս հարցը քննարկվել է վերևում: 2) Ես ապրում եմ՝ մի ոտքս Խոսքի մեջ, մյուսը՝ աշխարհում: «Ուստի մենք էլ, որ վկաների այսքան բազմություն ունենք մեզ շրջապատած, դեն գցենք ամեն ծանրություն և մեզ դյուրավ պաշարող մեղքը և համբերությամբ վազենք մեր առաջ դրած ասպարեզի ընթացքը» (Եբր. 12.1): Ուշադրություն դարձրեք ձեր պատասխանատվությանը՝ «դեն գցենք ամեն ծանրություն»: Սա Աստծո հրամանն է ինձ, սա իմ պատասխանատվությունն է, իմ հնազանդությունը: Ես չեմ ընդունում, որ աշխարհիկությունը չարիք է և իմ մահացու թշնամին, և սա թույլ չի տա, որ տեսնեմ իմ մեղքերը և իմ մեղավորությունը: Արդյո՞ք տեսնում եմ չարիք աշխարհիկության մեջ: 3) Եթե ես այն-

պիսի մարդ եմ, որը սովորաբար չի խոստովանում իր մեղքերը, ես չեմ տեսնի կամ չեմ հիշի իմ մեղքերը: 4) Ես չեմ լսում Հոգու ձայնը իմ մեղքերի վերաբերյալ. (ա) ես իմ մեղքերը կարևոր չեմ համարում, ես ասում եմ. «Ես արդեն փրկված եմ և ապահով, ինչո՞ւ անհանգստանալ», (բ) ես լուրջ չեմ համարում դրանք և ասում եմ. «Ես կարող եմ ապրել իմ կյանքը, պարզապես որոշ բարելավումների կարիք ունեմ», (գ) ես չար չեմ համարում դրանք և ասում եմ. «Ես դեռևս կարող եմ բարիք գործել և հավատում եմ, որ իմ էության մեջ ինչ- որ բարի բան կա, հետևաբար ես հավատում եմ, որ կարող եմ բարելավել իմ կյանքը հոգևորապես»: 5) Ես կանոնավոր չեմ կարդում Աստծո Խոսքը: Ես չեմ կարդում այն՝ իմ մեղքերը ճանաչելու համար, փոխարենը հիմնականում հետաքրքրված եմ երկրի վրա կյանքի համար օրինություններ ստանալով: Մենք պետք է կարդանք Խոսքը և մշտապես մտորենք՝ ունենալով ցանկություն և պատրաստակամություն՝ ճանաչելու և հաղթահարելու մեր մեղքերը: «Իմ սրտում թաքցրի Քո խոսքերը, որ չմեղանչեմ Քո դեմ» (- Սաղմ. 119.11): «Եվ այս Իմ խոսքերը ձեր սրտի և հոգու մեջ դրեք... նրանցից խոսես տանդ նստած ժամանակդ և ճանապարհ գնացած ժամանակդ և պառկելու և վեր կենալու ժամանակդ» (Բ Օրին. 11.18,19): Մարդկանց մեծամասնությունը բաց չէ Հոգու համար, որպեսզի բացահայտի և նկատի սեփական մեղքերը, եկեղեցին այլևս չի սովորեցնում դրա մասին: Մենք օտարացել ենք մեղքին ուղղված Սուրբ Հոգու հանդիմանության համար:

Եթե փնտրում ենք, ընդունում և հաշվի առնում Հոգու հանդիմանությունները, դրանք տալիս են մեր գործած մեղքերն իրականում տեսնելու կարողություն, և դա հանգեցնում է կոտրվածության: Եթե անտեսում ենք այս հանդիմանությունները, եթե անտեսում ենք դրանց վերաբերյալ աստվածային հայտնությունները, դադարում ենք դրանք ստանալուց: Սուրբ Հոգին իմ սրտի մեջ բերում է երկու հանդիմանություն մեղքի վերաբերյալ: Առաջինը բացահայտում է իմ մեղքերը, տալիս է մեղքերն իրականում տեսնելու կարողություն, որն ինձ պակասում է (Հովհ. 16.8): Սովորաբար մենք տեղի ենք տալիս այն բաներին, որոնք իրական են մեզ համար: Հոգու երկրորդ հանդիմանությունը վերաբերում է իմ մեղքի չարությանը և չափազանց մեղավորությանը. «մեղքն ավելի ևս (անգլերենում՝ չափազանց) մեղավոր լինի (անգլերենում՝ դառնա) պատվիրանի ձեռքով» (Հռոմ. 7.13): Մեղավորության նախնական ճանաչողությունը, որով սկսեցինք մեր ճանապարհորդությունը մեր Փրկչի հետ, երբ ապաշխարեցինք, պետք է աճի, զարգա-

նա, և մեղքը պետք է դառնա չափազանց մեղսալի մեզ համար: Դա տեղի է ունենում Սուրբ Հոգու ներքին աշխատանքին շարունակաբար, ավելի ու ավելի հանձնվելու և անձնատուր լինելու միջոցով:

Մենք պետք է առանձնանանք Աստծո հետ: Պետք է գնանք և մտնենք Աստծո ներկայության մեջ և հաղորդություն ունենանք Նրա հետ ու խնդրենք, որ Նա բացահայտի մեր մեղքերը մեզ համար, խնդրենք, որ օգնի մեզ ճիշտ կերպով խոստովանելու և ապաշխարելու: Անտարբերությունն ու տգիտությունը գերակշռում են, և դա բարենպաստ պայման չէ: Շատերը չեն տեսնում այս կարիքը. նրանք չեն տեսնում Խաչի կարիքն իրենց ամենօրյա կյանքում: Սուրբ Հոգու հանդիմանություններն ինքնաբերաբար չեն գալիս. դրանք պետք է փնտրել: Սպասե՛ք Աստծո ներկայությանը: Եղե՛ք համբերատար, Նա հանգիստ աշխատում է, որպեսզի պատրաստի ձեզ այդ հանդիմանությունների համար: Աստված արձագանքում է հնազանդ սրտին: Ես պետք է տեսնեմ կարիքը և ունենամ հոժար սիրտ՝ իմ մեղավոր վարքը փոխելու համար: Ես պետք է լինեմ Աստծո ներկայության մեջ, որպեսզի կարողանամ տեսնել և պատշաճ արձագանքել: Եթե ես պատրաստ չեմ արձագանքելու, հայտնությունները շուտով կնոռացվեն, և հանդիմանություններն արագ կանհետանան: Քրիստոսի մեջ մնալը զարգացնում է սրտի այս պատրաստակամությունը (սա կուսումնասիրենք հետագա գլուխներից մեկում):

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ Աստծո հետ: Անհանգստանում եք ձեր մեղքերի համար: Ընդունում եք դրանց ազդեցությունը ձեր կյանքում թե՛ ֆիզիկական, թե՛ հոգևոր առումով: Գիտե՛ք, թե ինչ մտադրություն ունի Աստված ձեր կյանքի վերաբերյալ: Ինչի՞ն եք հետամուտ ձեր կյանքում:

Գլուխ 2. Սուրբ Հոգու աշխատանքը սրտում և ողորմություն

Որպես հավատացյալներ՝ մենք ուժգնորեն պետք է հավատանք, որ Սուրբ Հոգին մեր մեջ է՝ ամեն օր իրագործելով Իր փրկագնման աշխատանքը մեր սրտում: Հոգին իսկապես բնակվում է մեր մեջ, Նա է կյանքի աղբյուրը, և Նա կատարյալ կդարձնի փրկագնող արյան թաքնված, հզոր ազդեցությունը: **Հոգին**

ամեն օր կմաքրի, կարբացնի մեզ և կմիավորի Աստծո հետ: Մենք պետք է թույլ տանք, որ Նա աշխատի մեր մեջ, և լիովին հանձնվենք Նրան՝ ամեն բանում մեզ առաջնորդելու համար: *Մենք պետք է սպասենք Հոգուն մեր աղոթքի սենյակում՝ Հոր հետ սրտից սիրտ հաղորդության մեջ, մինչև որ Նա տա առավել խոր և լիարժեք հանդիմանություն և հայտնություն մեր գործած մեղքերի, ինչպես նաև մեր մեղքի չափազանց կործանարար մեղավորության և մեր մարդկային էության չարության վերաբերյալ:*

Մեղքերը պետք է բացահայտվեն, խոստովանվեն, հանձնվեն և դրվեն Աստծո ձեռքերի մեջ:

Սրա համար ես պետք է մենակ լինեմ Աստծո հետ: Ես պետք է մտնեմ Աստծո հետ սրտի հաղորդության մեջ: Սա պետք է լինի ամեն օր, ոչ թե ամիսը մեկ անգամ: Աստծո հետ սրտի այս անձնական հաղորդության մեջ է, որ ես բացահայտում և ճանաչում եմ իմ մեղքերը: Սա այն է, ինչ ես չեմ փնտրում և ինչից հաճախ փախչում եմ: Ես չեմ հնազանդվում հետևյալ ճշմարտություններին. «Եվ սա գրում ենք ձեզ, որ ձեր ուրախությունը կատարյալ լինի... Թե մեր մեղքերը խոստովանենք, Նա հավատարիմ է և արդար, որ մեր մեղքերը թողնի մեզ և սրբի մեզ ամեն անիրավությունից» (Ա Հովհ. 1.4, 9), «...Հիսուսը պատասխանեց Նրան. «Եթե քեզ չլվանամ, Ինձ հետ բաժին չունես»...» (Հովհ. 13.5- 10), «Փորձիր ինձ, որվ Աստված, և ճանաչիր իմ սիրտը. քննիր ինձ և ճանաչիր իմ մտածմունքները: Եվ տես, թե որ չար ճանապարհում լինեմ, և առաջնորդիր ինձ դեպի հավիտենական ճանապարհը» (Սաղմ. 139.23,24): Մենք պետք է դադարենք մեղքի և խոստովանության մասին ուրիշներին, մարմնին, մեր մեղավոր էությանը լսելուց և փոխարենը պետք է լսենք միայն այն, ինչ ասում են մեզ Խոսքը և սրբության Հոգին: **Հրաժարվեք մարմնից, որպեսզի կարողանաք լսել, թե ինչ է Հոգին ասում:** Գիտե՞ք, թե ինչպես հրաժարվեք ձեր մարմնից (սրա մասին կխոսենք հետագա գլուխներից մեկում):

Ամեն անգամ, երբ մեղք եք գործում (մեղքեր գործողությամբ կամ անգործությամբ), անմիջապես խոստովանեք այն և խնդրեք Աստծո ողորմությունը, ներումը և սրբումը: Նրա ողորմությունը սպասում է, որ անմիջապես գաք Նրա մոտ ամեն անգամ, երբ մեղանչում եք: Սա կամընտրական չէ (Ա Հովհ. 1.4, 9, Հովհ. 13.5-10): Դուք պետք է խաչեք ձեր անտարբերությունը Հոգու զորությամբ: Աղոթե՛ք և խնդրե՛ք, որ Աստված ձևավորի ձեր մեջ աստվա-

ծային տրտմություն ձեր մեղքերի համար: Ապասք Տիրոջը, որ Նրա ներկայությունը գա ձեզ վրա և առաջնորդի ձեզ Իր հետ հաղորդության մեջ: Աստված «Գուգլ» ծառայություն չէ: Մեղքի հաղթահարման այս ներքին գործընթացն ավարտված չէ:

Սուրբ Հոգու աշխատանքն է անձին ճանաչեցնել մեղքը, սակայն ես պետք է հնազանդվեմ և համաձայնեմ դրան: Շատերը ցանկանում են հետևել եկեղեցում Հոգու պարզևների ծառայությանը, սակայն այնքան անտարբեր են մեղքից ազատ և սրբության մեջ ապրելու անձնվեր կյանքի նկատմամբ: Ճշմարիտ ապաշխարությունը սրբության Հոգու աշխատանքն է: Ապաշխարությունը պետք է լինի իսկական, այլապես այն արդյունավետ չէ, չի հասնի Աստծուն: Դավթի խոսքերը. «Իմացրո՛ւ իմ հանցանքն ու մեղքը: Որովհետև ես ճանաչում եմ իմ անօրինությունները, և իմ մեղքն ամեն ժամանակ իմ առաջ է: Միմիայն Քեզ դեմ մեղանչեցի և չարը Քո աչքի առաջ գործեցի» (Սաղմ. 51.3,4): Մեղքի գիտությունը *ճշմարտություն կամ դաս չէ*, որ սովորում ենք, այնուհետև մոռանում և շարժվում առաջ: Ապաշխարությունը սկսվում է մտքի փոփոխությունից, բայց այն ինչ- որ բան չէ, որ պետք է ավելացնել կամ անել կյանքում: Ապաշխարությունը կյանք է իր էությամբ: Մեր ողորմած Սուրբ Աստված ներում է և մոռանում, բայց Նա նույնը չի խնդրում մեզնից մեր մեղքերի վերաբերյալ: Մեզ սպասում է աստվածային գործընթաց: Այս գործընթացն ունի երկու փուլ. առաջինը սրտի ապաշխարությունն է աստվածային տրտմությամբ, և երկրորդը՝ մեր սրտում մեր մեղքերի չափազանց մեղավորությունը տեսնելը: Երկուսն էլ Սուրբ Հոգու աշխատանքն են: Այս գործընթացը պահանջում է Հոր հետ սրտի հաղորդություն: Թեև չկա դատապարտություն հավատացյալի համար, նրա մեղքերը թույլատրելի չեն Աստծո առջև: Երբեք, երբեք մի՛ հավատացեք կամ մի՛ համարեք, որ ձեր պատճառաբանությունները՝ որպես հավատացյալի և Աստծո զավակի, ձեր մեղքերն ընդունելի են դարձնում Աստծուն: Աստծո սերը և ողորմությունը մեր մեղքը թույլատրելի կամ ընդունելի չեն դարձնում Աստծո առջև: Մեր մեղքերը մահ են ներկայացնում ամեն անգամ:

Մենք պետք է հասկանանք և ունենանք այսպիսի զգացողություն Աստծո հետ մեր հաղորդության մեջ՝ «Ուստի նվաստանում եմ և զղջում հողի ու մոխրի վրա» (Հոբի 42.6), և «պիտի զզվեք ձեր անձերից ձեր արած բոլոր չարությունների համար» (Եզեկ. 20.43): Հասկանալը կարևոր է, բայց ոչ բավական: Մեր սրտերը կարիք ունեն տեսնելու գիտակցաբար գործած մեր մեղքերի ամո-

թը և անիրավությունը: Մեր մեղքը պետք է դառնա չափազանց մեղավոր մեզ համար: Ոչ մի մարդկային արարած չի կարող սովորեցնել կամ ցույց տալ սա: Դա կարող է անել միայն Սուրբ Հոգին, եթե մենք հոժարենք, հանձնվենք Նրան և Հոր հետ սրտի հաղորդության մեջ լինենք: Աստված սպասում է մեզ, որպեսզի Սուրբ Հոգին առաջացնի մեր մեջ անհրաժեշտ աստվածային տրտմությունը: Իսաչին անմնացորդ հանձնվելը, ինչը մեր մեջ ցանկանում է ձևավորել Քրիստոսն Իր ներկայությամբ, երբ մնում ենք Նրա մեջ, դուռ է բացում այս շարունակական ներքին աշխատանքի համար: Երբ աղոթքով սպասում ենք Հոգու հանդիմանությանը մեղքի համար, Աստծո հետ սրտի հաղորդության ժամանակ մեր սրտում առաջանում են սաստիկ դառնություն և տրտմություն:

Իմ սիրտը պետք է ճանաչի այն մեծ չարիքը, որ պատճառում է իմ գործած յուրաքանչյուր մեղքը: Ես կրկնում եմ այս ճշմարտությունը, որովհետև սա հենց այն է, ինչը պակասում է մեր մեջ, և ինչին գիտակցաբար հակառակվում ենք: Շատերիս հոգևոր կյանքը չափազանց զբաղված է այս ճշմարտությունն ընդունելու համար, և մենք անտեսում ենք դրա համար մեր պատասխանատվությունը: Սա մեծ կարիք է, սա Հոգու աշխատանքն է անձնվեր սրտի մեջ, բայց այս կարիքը մեծապես անտեսվում է: Եկեղեցին մոռացել է քարոզել ավետարանի այս մասը: Իմ սիրտը պետք է իմանա և տեսնի իմ մեղքերի և իմ մարդկային էության չափազանց մեղավորությունը և չարությունը: Իմ արձագանքը պետք է լինի այսպիսին. «Միմիայն Քեզ դեմ մեղանչեցի և չարը Քո աչքի առաջ գործեցի» (Սաղմ. 51): Ես պետք է սպասեմ Սուրբ Հոգուն իմ աղոթքի սենյակում, մինչև որ Հոգին իմ սրտին տա առավել խոր և ամբողջական հայտնություն իմ մեղքի անիրավության մասին: Սա ժամանակ է պահանջում. մեր անձնատուր լինելը և հանձնվելը անմիջապես տեղի չեն ունենում և հաճախ օրինաչափ չեն: Իմ մեղքի մասին ճշմարտությունն իմանալը և դա իմ մեջ տեսնելը երկու տարբեր բաներ են: Ճշմարտությունն իմանալը չի հանգեցնում այդ ճշմարտությունը սրտում տեսնելուն: Տեսնելու գործընթացն իրականանում է հանձնված սրտում՝ Աստծո հետ սրտից սիրտ հաղորդության ժամանակ: Մենք «ես»-ը պետք է համարենք մեր մահացու թշնամին, սովորենք հրաժարվել «ես»-ից, սովորենք մահանալ «ես»-ի համար: Շատ քրիստոնյաներ ապրում են՝ հավատալով, որ մարմինը կամ եսապաշտ կյանքը ընդունելի կամ անփնաս կամ անմեղ է հավատացյալի համար: Նրանք երբեք մեղքը կամ մեղքի էությունը մահ չեն համարում: «Մենք գիտենք,

որ մահից դեպի կյանք փոխվեցին...» (Ա Հովհ. 3.14): Իմ մարմինը կամ եսապաշտ կյանքը մահվան կյանք է: Եթե չեմ հավատում սրան, մարմինն ազատ է և ակտիվ, և ես ընդհատում եմ իմ փրկության կենդանի գործընթացը:

Սովորելու մեր և Աստծո պատկերացումը նույնը չեն: Սովորելը պետք է ներառի հանձնվելը և անձնատուր լինելը: Սովորելը պետք է դիտվի որպես Կյանք, ոչ թե մի բան, որ անում եմ կյանքում կամ կյանքի համար: Սովորե՛ք ուրանալ ձեր անձը. սա պետք է անեք ամեն օր, ամեն վայրկյան և ամեն բանում: Մեր մարմինը խավարի ամբողջ զորությամբ կընդդիմանա սրան: Քրիստոսի մեջ մենք ունենք անհրաժեշտ զորություն՝ այս չար դիմադրությունը հաղթահարելու համար:

Մեղքի՝ ներառյալ նրա չափազանց մեղավորության այս հայտնությունը և հանդիմանությունը վեր են մարդկային էությունից և կարողությունից. մարդը չի կարող հասու լինել դրանց: Որովհետև մեր էությունը թշնամի է Աստծուն, Հոգու ամենակարող զորությունը մեր մեջ ձևավորում է այս կարևոր և աստիճանաբար աճող ներքին աշխատանքը: Դանդաղ, բայց հաստատ՝ այս հսկայական աշխատանքը լուռ և անտեսանելիորեն շարունակվում է: Հոգին մշտապես սպասում է մեր նպատակաուղղված համաձայնությանը, որպեսզի իրականացնի այն, ինչ Հիսուսի ներկայությունը ներսից ցանկանում է ձևավորել պատրաստ սրտում: Առանց հանդիմանության մեր սրտում կիշխի նենգ և հզոր ինքնարդարացումը:

Նրա ներկայության մեջ Սուրբ Հոգին կքննի ձեր սիրտը, և դուք կառաջնորդվեք Նրանով դեպի Աստծո հետ նոր, առավել խոր փորձառություն: Աստծո հետ մտորե՛ք հետևյալ հարցերի շուրջ: Երբ Աստծո հետ սրտի հաղորդության մեջ եք, սովորե՛ք հարցնել ինքներդ ձեզ.

- Արդյո՞ք իմ կոպտությունը կամ բիրտ խոսքերը չափազանց մեղավոր են թվում ինձ:

- Արդյո՞ք իմ քննադատելը և դատապարտելը չափազանց մեղավոր են թվում ինձ:

- Արդյո՞ք իմ՝ մարդկանց չընդունելը չափազանց մեղավոր է թվում ինձ:

- Արդյո՞ք իմ նախանձելը չափազանց մեղավոր է թվում ինձ:

- Արդյո՞ք իմ սովորական ինքնազբաղվածությունը չափազանց

մեղավոր է թվում ինձ:

- Արդյո՞ք մարդկանց առջև իմ պարծենալը չափազանց մեղավոր է թվում ինձ:

- Արդյո՞ք իմ հեզության պակասը չափազանց մեղավոր է թվում ինձ:

- Արդյո՞ք իմ մեղմության և համբերատարության պակասը չափազանց մեղավոր է թվում ինձ:

- Արդյո՞ք իմ՝ ուրիշներին չներելը չափազանց մեղավոր է թվում ինձ:

- Արդյո՞ք իմ՝ կես ճշմարտություն (սուտ) ասելը չափազանց մեղավոր է թվում ինձ:

- Արդյո՞ք իմ՝ ինչ-որ մեկի համար հոգ չտանելը և նրան չընդունելը չափազանց մեղավոր են թվում ինձ:

- Արդյո՞ք իմ իրավունքները և արտոնությունները մշտապես պնդելը չափազանց մեղավոր է թվում ինձ:

Երբ ունենաք սրտի հաղորդություն, Հայրն իր բարի և սիրառատ ձեռքերով կգրկի ձեզ, և դուք խորապես կզգաք դա ձեր սրտում: Ձեր սրտի չափազանց մեղավորությունը և Հոր սրտի չափազանց բարությունն ու ողորմությունը կբացահայտվեն և կերևան ձեր սրտում: Սրտերի այս յուրահատուկ միությունը, որ կվերապրեք, հավիտյան կփոխի ձեր երկրպագությունն Աստծուն: ՏԵՄՆԵԼԸ սրտի հաղորդության ժամանակ հնարավորություն է տալիս առավել խոր թափանցելու այն միության մեջ, որ գոյություն ունի ձեր Հոր սրտի և ձեր սրտի միջև: Այս հաղորդությունը ներառում է Աստծուն սպասելը՝ առավել խոր հոգևոր կյանքի մոռացված գաղտնիքը:

Դավթի աղոթքը. «Ահա Դու սիրում ես ճշմարտությունը երկկամունքներում և ծածուկ *դեղը* իմաստություն կսովորեցնես ինձ: Սրբի՛ր ինձ զոպայով, և ես մաքուր կլինեմ, լվա՛մ ինձ, և ձյունից սպիտակ կլինեմ» (Սաղմ. 51. 6,7): Աստված սա է առաջ բերում մեր սրտում՝ «որ մեղքն ավելի ևս (չափազանց) մեղավոր լինի պատվիրանի ձեռքով», և Նա ընդունում է մեզ Իր սրտի մեջ:

Ես չեմ կարող ունենալ հաղթանակ մեղքի նկատմամբ, եթե չտեսնեմ իմ մեղք(եր)ը որպես մեղք, եթե լրջորեն չընդունեմ դրանք, եթե չատեմ դրանք, եթե չտեսնեմ դրանք որպես չափազանց մեղավոր: Փոխարենը ես նման մի բան կասեմ՝ «Ես չեմ ընդդիմանում Աստծուն, թող Նա իրագործի ապաշխարության այս աշխատանքը իմ ներսում: Նրա շնորհքը բավարար է ինձ համար: Սա

Նրա աշխատանքն է, ես ոչինչ չեմ կարող անել», և կհեռանամ:

Ես պետք է տեսնեմ, որ Աստծուն սիրելը և մեղքը ատելը անբաժանելի են: «Սիրի՛ր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ զորությամբ և քո ամբողջ անձով» պատվիրանը ստիպում է մեզ հնազանդվել մեր սիրառատ Հորը՝ ատելով ամեն մեղք, այդ թվում՝ մեր անձնական մեղքերը: Ես պետք է զարգացնեմ Աստծո հանդեպ սերը իմ ամբողջ սրտով, դա իմ պատասխանատվությունն է: Ես չեմ կարող սիրել Աստծուն այսպես, եթե նաև սիրում եմ աշխարհը: Սիրել Աստծուն նշանակում է ատել չարը, իսկ մեղքը չարիք է, չարիք է նաև աշխարհիկությունը: Սիրել Աստծուն նշանակում է արհամարհել այն ամենը, ինչը հակառակ է Նրան: Այս ճշմարտությունն ընդունելը կամ հավանելը բավական չէ, սիրտը պետք է հավատա դրան: Արդյո՞ք տեսնում եմ այս ճշմարտությունը: Պատրմատ եք ձեր կյանքում հետամուտ լինելու այս ճշմարտությանը: Աստծո հանդեպ սերը մշտապես ուղեկցվում է մեղքի նկատմամբ ատելությամբ:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ Աստծո հետ: Արդյո՞ք հավատում եմ, որ իմ մեղքերը լուրջ են և մահացու: Արդյո՞ք երբևէ հանդիմանվել եմ իմ մեղքերի համար: Արդյո՞ք սովորաբար խոստովանում եմ Աստծուն: Մեղքի խոստովանությունից հետո ի՞նչ եմ փնտրում:

Հոգուն հանձնվելը իմ աշխատանքն է և իմ որոշումը: Օրինակ, եթե ես չընդունեմ, որ չսիրելը և հոգ չտանելը մեղք են և չափազանց մեղավոր ու չար, ես չեմ հիշի դա և որևէ քայլ չեմ ձեռնարկի դրանց հարցերը լուծելու համար: Հետևաբար ես չեմ մտածի խոստովանության և ապաշխարության մասին: Ես փակ կլինեմ Սուրբ Հոգու հանդիմանությունների համար և կխանգարեմ, որ Աստծո հայտնությունները գործեն իմ կյանքում ներքին բժշկության համար: Թույլ տվեք կրկնել. այս հայտնություններն ու վերապրումներն ի հայտ են գալիս այն ժամանակ, երբ անձնատուր եմ լինում Հիսուսի խաչին և սրտի հաղորդության մեջ եմ Տիրոջ հետ: Խնդրե՛ք Աստծուն, որ սովորեցնի ձեզ հանձնվել Իր խաչին և ներգրավի ձեզ Իր հետ սրտի հաղորդության մեջ:

Ի՞նչ եմ իրականում անում, երբ չեմ ապաշխարում իմ մեղքերից:

Ես քայլում եմ Աստծո հանդեպ անհնազանդության մեջ: Ես թաքնվում եմ Աստծուց և իմ իսկական «ես»-ից և չեմ ցանկանում առերեսվել նրանց: Ես չեմ ցանկանում տեսնել ինքս ինձ: Ես չեմ ցանկանում պատասխանատու զգալ իմ մեջ փոփոխություններ կատարելու հարցում Աստծո հետ համաձայնության գալու համար:

Հետևաբար ես անում կամ ասում եմ բաներ մարմնավոր մտքի համաձայն՝ իմ պատասխանատվությունը քողարկելու համար, և լավ եմ զգում, որ չեմ արձագանքել Աստծուն: Ինձ դեկավարում են իմ եսապաշտ կյանքը, իմ մարմինը և ոչ թե Աստծո Խոսքը:

Եթե ես շարունակում եմ ապրել չապաշխարած ապրելակերպով, ես չեմ ապրում Քրիստոսի մեջ, ես մարմնի մեջ եմ, ոչ թե Քրիստոսի: Ես դրել եմ ինձ մեղքի և մահվան օրենքի ներքո, որովհետև չեմ ապրում Քրիստոսի մեջ: «Ուրեմն հիմա դատապարտություն չկա Հիսուս Քրիստոսում լինողների համար... Որովհետև կյանքի հոգու օրենքը Հիսուս Քրիստոսում ազատեց ինձ մեղքի և մահվան օրենքից» (Հռոմ. 8.1, 2): Իմ խոսքերը կարող են վկայել Քրիստոսին, բայց ո՛չ իմ կյանքը, և ես կունենամ միայն մարդկային համարձակություն, եթե վկայեմ: Ես կհետևեմ իմ ժառանգած բնությանը և իմ մարդկային կարգապահությանը:

Մեր վարքային և փոխհարաբերություններին առնչվող մեղքերն ազդում են եկեղեցու միաբանության հոգևոր վիճակի վրա: Մասնավորապես, եթե ես չապաշխարեմ ազապե սիրով չսիրելու, մարդկանց չընդունելու, բամբասելու կամ անձնվեր սրտով հոգ չտանելու մեղքերի համար, ի զորու չեմ լինի ծառայելու ուրիշներին Աստծո հետ Իր զորությամբ: Իմ աղոթքները չեն դիպչի Աստծուն և չեն իջեցնի Նրա զորությունը եկեղեցու միաբանության մեջ, իսկ իմ բարեխոսությունը չի բերի երկնային օրհնություններ եկեղեցու կյանքում. փոխարենը իմ եսապաշտ կյանքը կբերի զուտ մարդկային արդյունքներ: Ես չեմ ապրի և չեմ շարժվի Հոգով:

Անպտուղ և պտղաբեր խոստովանություններ

Ահա անպտուղ խոստովանության մի քանի օրինակ. «Աստված, ես խոստովանում եմ, որ այսօր անհամբեր եմ եղել որոշ մարդկանց հանդեպ: Ներիր ինձ դրա համար», «Տեր, ներիր մարդկանց հանդեպ իմ անզգայունության համար, բայց ես այսպիսին եմ էությանմբ, ես չեմ կարող փոխել ինքս ինձ», «Աստված, ես չեմ կարող ներել կոպտությունը: Ես չեմ կարող ներել ուրիշների կոպիտ վարքագիծը, ներիր ինձ», «Աստված, ներիր իմ մեղքը, որ չեմ սիրում այնպես, ինչպես Դու ես սիրում»: Սրանք բոլորը ճշմարիտ աղոթքներ են, Աստված ընդունում է դրանք: Բայց Նա ինձնից սպասում է առավել փոխազդող և անձնական հաղորդակցություն: Ինչն է իրականում պակասում այս անպտուղ խոստովանություններում: Աստված ցանկանում է լուծել մարդկանց հանդեպ իմ հատուկ վե-

րաբերմունքի և զգացմունքների հարցը: Աստված ցանկանում է, որ տեսնեմ իմ իսկական «ես»-ը այս մարդկանց հանդեպ իմ անընդունելի վարքագծում: Նա ցանկանում է սրբացնել և բարելավել իմ փոխհարաբերությունը այս մարդկանց հետ: Բայց նախքան իմ փոխհարաբերությունները կբարելավվեն, Աստված պետք է բացահայտի ինձ համար իմ ներսի մարդը, իմ վերաբերմունքը և ընկալումները՝ թաքնված ճշմարտությունները: Ես պետք է ընդունեմ իմ մասին այս ճշմարտությունները և թույլ տամ, որ Աստված դիպչի դրանց և բժշկի: Մեղքի խոստովանությունը չի կարող լինել անորոշ և ընդհանուր, սա չի հանգեցնում բժշկության և սրբացման:

Աստված ցանկանում է, որ իմ խոստովանություններում Իր հետ լինեմ որոշակի և անկեղծ, ոչ թե անորոշ: Եթե ես անձնական հարաբերություն չունենամ Աստծո հետ, Նա չի կարող դիպչել ինձ ավելի խոր բնագավառներում, որտեղ անհրաժեշտ է: Եթե ես անկեղծ չեմ Աստծո հետ, թույլ չեմ տա, որ Նա մտերիմ լինի ինձ հետ: Աստծո հետ մտերիմ լինել նշանակում է իմ անձը ներկայացնել և հայտնել Նրան, այդ թվում՝ իմ իսկական զգացմունքները և վերաբերմունքը մարդկանց հանդեպ որոշակի իրավիճակներում: Սա դժվար է, որովհետև ես չեմ ցանկանում տեսնել ճշմարտությունն իմ մասին, ճշմարտությունն իմ ինքնագնահատականի մասին: Մարմինն է իմ մեջ առաջացնում այս դիրքորոշումը, որպեսզի թույլ չտա, որ Աստված ճշմարտապես տեսնի ինձ: Հենց այստեղ է, որ Աստված ցանկանում է մտնել, որպեսզի կարողանա առավել խոր դիպչել ինձ իմ սրտում: Աստված միշտ սպասում է, որ ես անձնական հարաբերություն ունենամ Իր հետ, բայց ես չեմ հասկանում կամ չեմ ընդունում դա: Աստծո այս ներքին հպման շնորհիվ ես ընդունում եմ իմ մասին այն ճշմարտությունները, որոնք վաղուց չտեսնելու եմ սվել, և սա կարող է հանգեցնել վերականգնման, բժշկության և Աստծո սրտի հետ առավել խոր միության: Հոգու առաջնորդությամբ այս բացահայտումը խիստ անհրաժեշտություն է ինձ համար, որը պետք է տեսնեմ և ընդունեմ: Ես պետք է բացահայտեմ սա որպես իրական կարիք իմ ներսում և նորովի վստահեմ Աստծուն: Իմ ներսի անձը վերահսկում է իմ վարքագիծը և իմ վարվելակերպը մարդկանց հետ, այստեղ է, որ ճշմարտության Հոգին ցանկանում է մտնել և դիպչել: Հոգին կանի սա, բայց կանի իմ միջոցով, ոչ թե առանց ինձ, ոչ թե այն ժամանակ, երբ ես քնած եմ: Նա չի պարտադրի սա ինձ, իմ պատասխանատվությունն է թույլ տալ Նրան, Նա սպասում է իմ համաձայնությանը և պատրաստակա-

մությանը՝ դեմառդեմ կանգնելու ինքս ինձ, դեմառդեմ կանգնելու այն բանին, թե ինչպես եմ տեսնում ինձ իրականում: Հաճախ մենք թաքնվում ենք մեզ համար մեր ընտրած հոգևոր կերպարների հետևում և հուսահատորեն պաշտպանում ենք այդ ընտրված կերպարները: Աստծուն չեն ճանաչում ընդհանուր առմամբ, ընդհանուր ճանաչողությունը երբեք անձնական չի կարող լինել:

Ներսի մարդու վերաբերյալ անձնական խոստովանության օրինակ

Աստծո հետ անձնական հարաբերություն ունենալը ներառում է «երես առ երես»՝ սրտի հաղորդություն Աստծո հետ: Այսպիսի հաղորդությունը ոչ թե տրվում, այլ ձևավորվում է մեր մեջ: Անձնական հարաբերությունը պահանջում է նվիրում՝ Աստծո հետ ընդհանուր հաղորդակցությունից դեպի առանձնահատուկ հաղորդակցություն: Դրա համար անհրաժեշտ է, որ ես վստահեմ Աստծուն իմ ներսի անձով, հայտնեմ Նրան որոշակի մարդկանց նկատմամբ իմ ներքին գաղտնի վերաբերմունքը, մտքերն ու զգացմունքները, որոնք ազդում են նրանց հետ իմ փոխհարաբերության և հաղորդակցության վրա: «Ահա Դու սիրում ես ճշմարտությունը երիկամունքներում և ծածուկ տեղը (ներսի մարդու մեջ) իմաստություն կտվորեցնես ինձ» (Սաղմ. 51.6): Սա հեշտ չի տրվում մեզ, և մեր ներսում կա նշան, որ ասում է. «Զմտնել: Մասնավոր սեփականություն է: Հեռու մնալ»: Մենք տեղադրում ենք այս նշանը ուրիշների, ինչպես նաև Աստծո համար, և հետաքրքիրն այն է, որ ինքներս էլ ենթարկվում ենք այս նշանին, և ինքներս էլ ենք հեռու մնում:

Նայենք որոշ մարդկանց սրտանց «չընդունելու» մի օրինակ: Սա տարածված և ընդունված է շատ եկեղեցիներում: Սովորաբար մենք չենք ընդունում ուրիշներին, որովհետև նրանք վարվում են այնպես կամ ասում և անում են այնպիսի բաներ, որ մեզ դուր չեն գալիս, կամ մենք չենք հավանում: Սովորաբար մեզ դուր չեն գալիս այն մարդիկ, որոնց չենք ընդունում: Մենք սպասում ենք, որ նրանք փոխվեն, նախքան կընդունենք նրանց: Միթե սա պայմանական սեր չէ: Մենք բամբասում ենք նրանց անընդունելի կամ «սխալ» արարքներից կամ վերաբերմունքից: Մեր զգացմունքները և հակազդումները համարում ենք ընդունելի և արդարացված: Հնարավոր է, որ նույնիսկ խաղաղություն ենք զգում բամբասելուց հետո, բայց մենք չենք կարողանում զգալ մեր մեղավոր մարմնի կամ եսապաշտ կյանքի առկայությունը այս ինքնարդարացման

մեջ: Մենք շատ-շատ հեռու ենք Աստծուց և չենք տեսնում մեր ներքին կարիքը, մեր չընդունող վարքագծի չար մեղավորությունը: Երբ աղոթքի մեջ եք և գիտեք, որ չեք ընդունում որոշ անձանց, մոտեցե՛ք Աստծուն և ազնվորեն հայտնե՛ք ձեր մտքերը, թե ինչու չեք ընդունում նրանց. հայտնե՛ք Նրան ձեր պատճառները: Գործակցե՛ք Աստծո հետ, հաղորդ դարձրե՛ք Նրան ձեր սրտի ուժգին զգացմունքներին՝ կապված մարդկանց չընդունելու հետ: Եթե ձեր զգացմունքները մշուշոտ են, Հոգին կհատակեցնի դրանք ձեզ համար, բայց սպասե՛ք Նրան: Սա Աստծո առջև ոչ թե հոգևոր, այլ ազնիվ լինելու ժամանակ է, դադարե՛ք Աստծո հետ հոգևոր լինելուց, Նրան չի հետաքրքրում ձեր հոգևոր ինքնազնահատականը, թեև դա սուրբ է ձեզ համար: Եթե դուք ազնիվ չեք Աստծո ներկայության մեջ, չեք կարող հոգևորապես ճիշտ լինել: Ձեր հոգևոր ճիշտ վարքագիծը մարդկանց առջև, երբ ձեր ներսում դեռևս մարդկանց ընդունելու խնդիր կա, նողկալի է Աստծո համար: Աստծո համար կարևոր չէ մեր հոգևոր կերպարը, որը փորձում ենք պահպանել ուժգնորեն, մեծ ջերմեռանդությամբ, ստեղծագործական մոտեցմամբ և եռանդով: Կան բաներ, որ Աստված ուզում է ցույց տալ ձեր մասին, որոնք դուք չգիտեք, բաներ, որոնք կապված են նրա հետ, թե ինչպես եք տեսնում ինքներդ ձեզ և ձեր էությունը: Աստված ցանկանում է, որ տեսնեք այն, ինչ Նա է տեսնում ձեր մեջ, և ճշմարիտ խոստովանությունը դուռ է բացում Նրա ներկայության համար: Սա խոր հոգևոր և անձնական փորձառություն է: Սա ճշմարտության Հոգու սրբացնող հպումն է: Ես կարիք ունեմ և պետք է տամ Աստծուն ժամանակ Նրա հետ սրտի այս հանդիպման համար:

Ճշմարտության Հոգին ցանկանում է հայտնել և բացահայտել ինձ իմ ծածուկ ոլորտները՝ կապված ուրիշներին չընդունելու հետ: Նա փափագում է «ճշմարտությունը երիկամունքներում»: Նա «ծածուկ տեղը (ներսի մարդու մեջ) իմաստություն» է սովորեցնում ինձ (Սաղմ. 51.6): Երես առ երես, անկեղծ, սրտի հաղորդություն է անհրաժեշտ Հոր հետ: Բայց այս հաղորդությունը կարող է ձևավորվել միայն անձնվեր սրտում, այն չի տրվում որպես նվեր զուտ այն պատճառով, որ ցանկալի է: Շատերն անմեղորեն, բայց առանց հասկանալու ասում են. «Ես պետք է աղոթեմ դրա համար»: Եթե ես միայն ասում եմ, որ պետք է աղոթեմ դրա համար, և չեմ մտնում Աստծո ներկայության մեջ՝ Նրա հետ ազնվորեն հաղորդակցվելու, ես փախչում եմ Աստծուն և ինքս ինձ առերեսվելուց: Ես հաստատապես թույլ չեմ տալիս, որ Սուրբ Հոգին աշխատի իմ ներսի մարդու մեջ: Ես կարիք ունեմ մտորելու Աստծո հետ

և սպասելու Նրան, որպեսզի ստանամ Նրա հայտնությունները իմ կարիքի և իմ վիճակի մասին և Նրանից իմանամ, թե ինչու եմ ես այսպիսին և ինչի հետևից եմ գնում: Ճշմարտության Հոգին նախառաջ պատրաստում է ինձ սրա համար, այնուհետև հայտնում իմ մասին ճշմարտությունները: Հայտնությունը և հանդիմանությունը իրականում պետք է մղեն ինձ արձագանքելու Աստծուն իմ ներսի մարդու մեջ: Սա «Հոգով վարվելու» մի մասնիկ է և կապված է սրբացման հետ:

Ինչ մտադրություն ունի Աստված, երբ հայտնում է «մարդկանց ջրնդունելու» այս վիճակը: Իմ սիրտը պետք է ճանաչի մարդկանց ջրնդունելու մեղքի չափազանց մեղսալի լինելը: *Մեղքի չափազանց մեղավորությունը և մեղքի համար տրտմությունը հայտնվում են միայն նոր սրտում: Հին մարդը չի կարող ընդունել և կմերժի այս հայտնությունները: Եսապաշտ կյանքը, հին մարդը պետք է մահանան և մնան խաչված, և դա պետք է տեղի ունենա ամեն օր: Ճշմարտության Հոգին փորձում է օգնել ինձ ճանաչելու և տեսնելու մարդուն ջրնդունելու մեծ չարությունը, որ իմ սիրտը դրսևորել է որոշակի իրավիճակում որոշակի անձնավորության հանդեպ: Հոգևոր ինքնաբացահայտումը ժամանակ է պահանջում: Հոգին ցանկանում է առաջնորդել ինձ ապաշխարության այս հստակ մեղքը տեսնելու և ճանաչելու միջոցով և խնդրելու ներողություն նրանից, ում մերժել եմ: Դուք կարող եք վստահ լինել, որ այդ անձնավորությունը զգացել է, որ դուք չեք ընդունել իրեն: Եթե ես բժշկվեմ, չեմ ունենա կերպար՝ պաշտպանելու համար: Եթե իմ արձագանքն Աստծուն բխի կոտրվածությունից և խոնարհությունից և իրական է ու անկեղծ, ես բաց և պատրաստ կլինեմ գնալու այն անձնավորության մոտ, որին մերժել եմ, և ճշմարիտ խոնարհությամբ ներողություն խնդրելու նրանից: Եթե ես մնամ Քրիստոսի մեջ՝ Նրա խաչին, Հիսուսի ներկայությունն իմ սրտում կառաջացնի ցանկություն և Հոգու միջոցով կտա պատրաստակամ լինելու զորություն: «Շնորհքն ու ճշմարտությունը քեզ չեն ձգի. նրանց պնդացրո՛ւ քո պարանոցի վրա, նրանց գրի՛ր քո սրտի տախտակի վրա» (Առակ. 3.3):*

Հավատացյալներն աղաղակում են ողորմության համար, երբ մեղք են գործում

Դավիթ թագավորը սկսեց իր խոստովանությունը՝ ասելով. «Ողորմի՛ր ինձ, Աստված» (Սաղմ. 51.1): Երբ մեղանչում ենք գի-

տակցաբար, հակադրվում ենք Սուրբ Աստծուն, մեր Հզոր Արարչին և անարգում մեր սիրող Փրկչին: Մենք պետք է իմանանք մեղանչելու հոգևոր նշանակությունը, բայց չենք փնտրում այս ներքին գիտելիքը: Մեր Աստված հայտնի է որպես Սուրբ Աստված, և Նա մեղքի դեմ դուրս է գալիս իբրև փչացնող կրակ: «Որովհետև մեր Աստվածը փչացնող կրակ է» (Եբր. 12.29): Մեղքը Աստծո, Նրա օրենքի և Նրա սիրո ամոթալի մերժումն է: Մարդը, այդ թվում հավատացյալը, *արժանի է* մերժվելու Աստծուց իր մեղքերի, հանցանքների և անհնազանդության համար: Բայց շնորհքը գերազանցում է: Աստծո սիրառատ բարությունը և մեծ ողորմությունը գերազանցում են մերժմանը: Աստված սպասում է ողորմության համար Իրեն ուղղված մեր աղաղակին, սակայն ոչ թե ընդհանուր ողորմության, այլ որոշակի և հատուկ:

Նայենք Սաղմոս 51- ը, որտեղ Դավիթն Աստծուց ողորմություն և ներում է աղերսում Բերսաբեի հետ գործած իր մեղքի համար: Նա զգում է, որ միանգամայն արժանի է Աստծո դատաստանին: Սուրբ Հոգու հանդիմանությամբ նա զգում է, որ իր մեղքը շատ ամոթալի է Սուրբ Աստծո աչքում: Իր մեղքը ցույց է տվել նրան, թե որքան է հեռացել Աստծուց: *Ճշմարիտ աղերսողն է զգում, որ ինքը ողորմության կարիք ունի: Ճշմարիտ աղերսողն է զգում, որ միայն Աստծո ձրի շնորհքը կարող է լինել իր հույսը:* «Ողորմի՛ր ինձ, Աստված, Քո ողորմության պես» (Սաղմ. 51.1): *Միայն այն անձը, որ Սուրբ Հոգու միջոցով գիտակցել է մեղքը և նրա չափազանց մեղսալի լինելը, ի վիճակի է աղոթելու իր ամբողջ սրտով այնպես, ինչպես Դավիթն աղոթեց Սաղմոս 51- ում:* *Միայն այն հավատացյալը, որ սրտանց աղոթում է ողորմության համար, կարող է իսկապես հասկանալ, թե ինչ է ողորմությունը:* Մեղքի համար ամոթի և տրտմության զգացումն առաջանում է *ճշմարիտ աղերսողի* սրտում: Եկեղեցին մոռացել է քարոզել մեղքի մասին այս ճշմարտությունները, փոխարենը քարոզում է զուտ բարոյականություն և բարգավաճման ավետարան: Այն դարձել է օրհնությունների հանրախանութ:

Հետևաբար եկեք շարունակ նայենք Աստծուն Իր լույսի և ուսուցման համար: «Առաջնորդի՛ր ինձ Քո ճշմարտությունում և սովորեցրո՛ւ ինձ, թե Դու ես իմ փրկության Աստվածը. *Քեզ եմ հույս դրել ամեն օր*» (Սաղմ. 25.5): Դավիթը գիտի, որ Աստծո մոտ ողորմություն կա, սակայն շարունակում է աղաղակել որոշակի և հատուկ ողորմության համար: Մենք նույնպես պետք է զգանք, որ ողորմության կարիք ունենք, երբ մեղանչում ենք: Երբ Հոգուց աստվածային հանդիմանություն եմ փնտրում մեղքի համար և սպասում եմ դրան, և երբ այն գալիս է և հայտնի դառնում, ներսումս աղաղակ

է բարձրանում ողորմության համար: Դավիթը սովորել էր ծնկներին վրա կոտրած սրտով, դառը տրտմությամբ այս աղոթքն անել իր որոշակի մեղքի համար: Հատկապես երբեք չպետք է մոռանանք սա՝ *աստվածային տրտմությունը, այն պետք է փնտրենք Աստծուց՝ ծնկների վրա, և սպասենք Նրան լռությամբ, մինչև որ մեր մեջ ձևավորի այդպիսի սիրտ*: Դավիթը զգում է, որ իր մեղքն այնքան ամոթալի է և իրեն այնքան մեղավոր է դարձնում իր Սուրբ Աստծո աջքում, որ արդարացի կլիներ, եթե Աստված դատապարտեր իրեն (Սաղմ. 51.4): Թեև Աստծո ողորմությունը չի դատապարտում մեղավորին, որը եկել է Նրա մոտ, Աստված, միևնույնն է, դատապարտում է նրա մեղքերը: Ես պետք է զգամ նույնը և ճանաչեմ Աստծո սուրբ արդարադատությունը, որին արժանի ենք ես և իմ արարքները: «Որովհետև ես ճանաչում եմ իմ անօրինությունները, և իմ մեղքն ամեն ժամանակ իմ առաջ է: Միմիայն Քեզ դեմ մեղանչեցի և չարը Քո աչքի առաջ գործեցի, որ Դու արդար լինես Քո խոսքերում և մաքուր լինես Քո դատաստանում» (Սաղմ. 51.3, 4): Մենք պետք է գիտակցենք այս ճշմարտությունը, մենք պետք է մտնենք այս փուլի մեջ Աստծո հետ մեր սրտի հաղորդության ժամանակ: Որովհետև այն ուժ է տալիս Աստծո հանդեպ մեր սիրուն և ներքին սրբության մեր ձգտմանը:

Շատ քրիստոնյաներ մխիթարվում են այն մտքով, որ Աստված ողորմած է, և շատ քիչ են հոգ տանում իրենց առօրյա մեղքերի համար: Սակայն նրանք գաղափար չունեն, որ սա ինքնին չի օգնի իրենց: Ողորմությունը, թեև լիովին ձրի է, պետք է տրվի իրենց: Աստծո ողորմությունն անորոշ, անհստակ զգացողություն չէ: **Այս ողորմությունը պետք է տրվի մարդուն Աստծուց, և մարդն իր հոգում պետք է վերապրի այն գործած որոշակի մեղքերի համար**: Մարդիկ մոռանում են, որ կա աշխատանք, որը ողորմությունն ամեն օր պետք է անի հոգու համար, և նա, ով չի մասնակցում դրան, չի կարող վայելել **լիարժեք** փրկություն:

Ողորմության համար ընդհանուր աղոթքը բավական չէ: Տերը ցանկանում է, որ մենք իմանանք և ասենք, թե ինչ ենք ուզում, որ ողորմությունն անի մեզ համար: *Տերը կստուգի ողորմության համար մեր ցանկության անկեղծությունը և իրական լինելը*: Շատ քրիստոնյաներ այստեղ լուրջ սխալ են կատարում: Նրանք ունեն շատ անորոշ կամ բոլորովին սխալ մտքեր այն մասին, թե ինչ կարող է անել ողորմությունը: Ոմանք մտածում են, որ ողորմության առաջին գործը սիրտը մխիթարելն է և լուսավորելը: Այդպես չէ, դա տեղի է ունենում ավելի ուշ: Մյուսները պատկերացնում են, որ ողորմության գործը սիրտը և կյանքը բարեփոխելն է: Սա նույն-

պես օրհնության առաջին մասնիկը չէ: Այն, ինչ Դավիթը ցանկանում էր ունենալ առաջինը, սա էր. «Քո մեծ ողորմության պես ջնջիր իմ անօրինությունները»: Ողորմությունը սրբելու, մաքրելու համար է: Սիրելի՛ Քրիստոսի աշակերտ, տեսնում եք սա:

Քանի որ ողորմությունը ձրի է տրվում, շատ քրիստոնյաներ հազվադեպ են աղոթում դրա համար: Նրանք հավատում են, որ դրա իրավունքն ունեն: Նրանք միսիթարում են իրենց՝ ասելով. «Աստված ողորմած է»: Նրանք ասում են. «Աստված ողորմած Աստված է և ներող Աստված է, Նա ներում է, երբ ես մեղք եմ գործում: Հարկ չկա, որ ես ողորմություն խնդրեմ»: Բայց Աստված ասում է. «**Ապա թե մեր մեղքերը խոստովանենք**, Նա հավատարիմ է և արդար, որ մեր մեղքերը թողնի մեզ և սրբի մեզ ամեն անիրավությունից» (Ա Հովհ. 1.4,9), «Եթե քեզ չվանամ, Ինձ հետ բաժին չունես» (Հովհ. 13):

ԵԹԵ չենք խոստովանում և չենք աղաղակում ողորմության համար, մեղքը չի ջնջվում: Որպես հավատացյալ՝ ես Քրիստոսի մեջ եմ, իմ արժեքը Քրիստոսի մեջ է: Սակայն ես դեռևս արժանի չեմ Աստծո ողորմությանը կամ շնորհքին: Ես դեռևս ողորմության կարիք ունեմ: Ես կարիք ունեմ զգալու և վերապրելու իմ մեղքի մեղսալի լինելը: Երբ մեղանչում եմ և չեմ հաճեցնում Աստծուն, իմ միակ հույսը միմիայն Աստծո ձրի շնորհքն է: Սիրելի՛ Քրիստոսի աշակերտ, հավատում եք սրան, ապրում եք սրանով:

Սիրելի՛ Քրիստոսի աշակերտ, Աստված ցանկանում է, որ փնտրենք ողորմություն և աղոթենք դրա համար: Ահա թե ինչ է Աստված ասում հավատացյալին. «Որովհետև ոչ թե այնպիսի քահանայապետ ունենք, որ չկարողանա մեր տկարություններին կարեկից լինել, այլ մի այնպիսին, որ ամեն բանով փորձված մեր նմանությամբ, բայց առանց մեղքի: Ուրեմն **համարձակությունով մոտենանք** շնորհքի աթոռին, **որ ողորմություն ընդունենք և շնորհք գտնենք պատշաճ ժամանակին օգնելու**» (Եբր. 4.15, 16): **Տեսնում եք, որ Աստված ցանկանում է, որ աղոթենք ողորմության և շնորհքի համար կարիքի ժամանակ (այսինքն՝ երբ մեղանչում ենք)**: Ողորմության համար աղոթելը միայն անհավատի գործը չէ: Երբ մեղանչում ենք, հիշում ենք և աղոթում ենք ողորմության և շնորհքի համար՝ կապված մեր գործած որոշակի մեղքի հետ: Կմիանանք Դավթին այս աղոթքի մեջ. «**Միմիայն Քեզ** դեմ մեղանչեցի և **չարը** Քո աչքի առաջ **գործեցի**»: Արդյո՞ք Աստծուն հաճեցնելը մեր մեծագույն ցանկությունն է: «Որ դուք գնաք ինչպես արժանի է Տիրոջը՝ ամեն բանի մեջ *հաճո լինելով* Նրան»

(Կող. 1.10): **Աստծուն հաճեցնելը պետք է ներառի մեղք չգործելը, խոստովանելը և սրբվելը:** «Փորձեք, թե ինչ է *հաճո* Տիրոջը» (Եփես. 5.10): Եթե ցանկանում ենք հաճեցնել Տիրոջը *ամեն բանում, Աստծո առջև լրջորեն պեպք է վերաբերվենք մեր առօրյա մեղքերին և մտածենք դրանց մասին.* «Որովհետև ես ճանաչում եմ իմ անօրինությունները, և իմ մեղքն ամեն ժամանակ իմ առջև է» (Սաղմ. 51.3): Աստծուն մոտենալով և խնդրելով Նրա ողորմությունը՝ ես ստանում եմ այն, որովհետև շնորհք եմ գտած լինում: Եթե ես մոտենամ Աստծուն և չխնդրեմ Նրա ողորմությունը, չեմ գտնի Նրա շնորհքը: Հասկանում եք այս ճշմարտությունը (Եբր. 4.15,16):

Մեր մեջ ձևավորվում են մեղքի վերաբերյալ սխալ պատկերացումներ, որովհետև մենք անձանոթ ենք մնում Աստծո սրբությանը և մեղքի զարհուրելի չար բնույթին: Մենք փնտրում ենք Սուրբ Հոգու հանդիմանությունը շատ ոլորտներում, բայց ոչ մեղքի համար: Սիրելի Քրիստոսի աշակերտ, խնդրում եք, որ Աստված հայտնի ձեզ ձեր մեղքերը և սովորեցնի ատել դրանք ու ցույց տա դրանց չափազանց մեղավորությունը և չարությունը: Այս ուսուցումը, եթե ընդունվի, կբերի Աստծո հայտնությունը ձեր սրտին Սուրբ Հոգու միջոցով: Եթե այս հայտնությունը մտնի ձեր սիրտ, կառաջնորդի ձեզ Հոր անձնական սիրո հետ առավել խոր հաղորդակցության մեջ: Խնդրեք Հոգուն, որ պատրաստի ձեզ այս հայտնության համար, եղևք համբերատար և սպասեք դրան: Սիրելի եղբայր, դուք կարիք ունեք վերապրելու Աստծո ողորմությունը ձեր հոգում՝ ձեր գործած մեղքերի համար, դրանք ձերն են, դա ձեր անհրավությունն է, և Նրա ողորմությունը սպասում է ձեզ: Ձեր յուրաքանչյուր մեղք չափազանց մեղավոր է ըստ Աստծո: Եթե չտեսնեք սա, չեք փնտրի Աստծո ողորմությունը, չեք գտնի շնորհք: Դուք չեք աղաղակի Աստծուն՝ ասելով. «Իսպառ լվա՛ ինձ իմ անօրինությունից և սրբի՛ր ինձ իմ մեղքից» (Սաղմ. 51.2): Դուք չեք փնտրի սրբություն: Այս «Ողորմի՛ր ինձ, Աստվա՛ճ ... լվա՛ և սրբի՛ր ինձ» աղաղակն անտեսանելի դուռ է դեպի ձեր հանդեպ Աստծո անձնական սիրո առավել խոր հայտնություն, և այն համբերությամբ սպասում է ձեզ:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ Աստծո հետ

Տվե՛ք ինքներդ ձեզ այս հարցերը և մտորե՛ք Աստծո հետ ձեր պատասխանների շուրջ: Աստված չի ակնկալում, որ արդարացնեք ձեր պատասխաններն Իր առջև, Նա ակնկալում է միայն

ծեր ազնվությունը: Աստված ցանկանում է լսել ձեր սիրտը և ցանկանում է, որ դուք էլ լսեք Իր սիրտը: Նրա սիրտը լսելով՝ դուք կկարողանաք լսել ձեր սիրտը:

1. Համարում եք, որ ձեր մեղքերի խոստովանությունն անհրաժեշտ է ձեր հոգևոր կյանքի համար: Ինչո՞ւ և ինչպե՞ս:
2. Որքան հաճախ եք գնում Աստծո մոտ, հասկապես որոշակի մեղքերի խոստովանության և ապաշխարության համար:
3. Հավատում եք, որ գործած մեղքերի ամենօրյա խոստովանությունն անհրաժեշտ է:
4. Եթե կարծում եք, որ անհրաժեշտ է, խնդրում եք Աստծուն օգնել ձեզ բացահայտելու ձեր մեղքերը: Զգում եք, որ խոստովանելիս նաև կարիք ունեք բացատրություն տալու Աստծուն:
5. Երբ Աստծո առջև ազնվորեն և անկեղծորեն խոստովանում եք որոշակի մեղք, ի՞նչ եք զգում կամ գիտակցում պլելի ուշ:

Գլուխ 3. Հաղթել մեղքին ամեն օր՝ միայն Քրիստոսի մեջ մնալով

«Մնացե՛ք Քրիստոսում, որ չմեղանչեք» (Ա Հովհ. 3.5, 6):

Հաղթել մեղքին՝ միայն Քրիստոսի մեջ մնալով

«Արդ աղաչում եմ ձեզ ես՝ Տիրոջ համար կապվածս, որ այնպես գնաք, ինչպես որ կվայելի այն կոչումին, որի մեջ կանչվեցիք» (Եփես. 4.1), «Որ դուք գնաք ինչպես արժանի է Տիրոջը, ամեն բանի մեջ հաճո լինելով Նրան...» (Կող. 1.10): Աստծուն հաճո լինելու այս հորդորը պետք է ներառի մեղք չգործելը, մեղքը խոստովանելը և մեղքից սրբվելը, երբ ձախողվում ենք, որովհետև Աստված խիստ ատում է մեղքը: Մեղքը միշտ չափազանց մեղավոր է և չար, և մեր էությունը մեծ մասամբ թույլ չի տալիս տեսնել դա:

«Փորձիր ինձ, Տեր, և քննիր ինձ. փորձիր իմ երիկամունքները և իմ սիրտը» (Սաղմ. 26.2), «Դողացե՛ք և մի՛ մեղանչեք, խոսե՛ք ձեր սրտերի հետ ձեր անկողիններում և լր՛ու կացե՛ք» (Սաղմ. 4.4): **Աստծո նպատակը մեզ սրբության մեջ հաստատելն է,**

«...մեր անձերը սրբենք հոգու և մարմնի ամեն պղծությունից, սրբությունը կատարենք Աստծո ահով» (Բ Կորնթ. 7.1), «Որ ձեր սրտերը հաստատվեն անարատ սրբությունով Աստծո և մեր Հոր առջև...» (Ա Թես. 3.13): Աստված ակնկալում է, որ մենք ապրենք սուրբ կյանքով: Սա Աստծո չափանիշն է և ակնկալիքը յուրաքանչյուր մարդուց, որ պատկանում է Իրեն:

«...և Նրանում մեղք չկա: Ամեն, ով որ Նրանում մնում է, չի մեղանշում...» (Ա Հովհ. 3.5, 6): «Նա հայտնվեց, որ մեր մեղքերը վեր առնի» (Ա Հովհ. 3.5): Վեր առնելը խոսում է մեղքը հատուցելու, դրա մեղավորությունից ազատելու մասին: Այն նաև նշանակում է ազատագրում մեղքի զորությունից, ինչհի: Որպեսզի հավատացյալն այլևս չմեղանչի: Արդյո՞ք այս ճշմարտությունը երբևէ մտել է ձեր սիրտ: «Կացե՛ք Ինձանում, և Ես՝ ձեզանում. ինչպես որ ճյուղն իր անձից չի կարող պտուղ բերել, եթե որթում չմնա, այսպես էլ դուք, եթե Ինձանում չմնաք» (Հովհ. 15.4): Քրիստոսի և միմիայն Քրիստոսի մեջ մնալն է հանգեցնում չմեղանչելուն և սուրբ կյանքով ապրելուն (սրա մասին կուսումնասիրենք ավելի ուշ): Հիսուսն ասաց. «Ես եմ հարությունը և կյանքը» (Հովհ. 11.24, 25): Հարության կյանքը նախևառաջ չմեղանչելու կյանքն է:

Համաձայն Հովհաննեսի 14- րդ և 15- րդ գլուխների՝ Քրիստոսի մեջ մնալը սիրո և ընկերության հաղորդակցություն է իմ և Նրա միջև: Այն իմ սիրո արձագանքն է Նրա սիրուն, երբ ամբողջ կյանքս տալիս եմ Նրան միմիայն Նրա համար, որպեսզի Նրա սերը կառավարի և վերահսկի իմ կյանքը: «Եթե Ինձ սիրում եք, Իմ պատվիրանները պահե՛ք» (Հովհ. 14.15): «Եթե Իմ պատվիրանները պահեք, Իմ սիրո մեջ կկենաք: Սա է Իմ պատվիրանը, որ իրար սիրեք, ինչպես որ Ես ձեզ սիրեցի» (Հովհ. 15.1- 17): Չկա իսկական բնակություն Նրա մեջ առանց «իրար սիրեք, ինչպես որ Ես ձեզ սիրեցի» պատվիրանին հնազանդության: Բնակությունը բերում է Հիսուսի հետ անխափան հաղորդակցության ուրախություն, երբ մեր ամբողջ կյանքը և ամեն վայրկյանն անցկացնում ենք Հիսուսի մեջ՝ մշտապես հավատալով Նրան: «Հիսուսը պատասխանեց և նրան ասաց. «Եթե մեկն Ինձ սիրում է, Իմ խոսքը կպահի, և Իմ Հայրը կսիրի նրան, և նրա մոտ կգանք և բնակություն կանենք նրա մոտ» (Հովհ. 14.23):

Իմ ամենօրյա աշխատանքն է **ԼԻՆԵԼ** այնպիսին, ինչպիսին Հիսուսն էր, և **ՎԱՐՎԵԼ** այնպես, ինչպես Հիսուսը վարվեց: **ԼԻՆԵԼ** Նրա նման նշանակում է **ԼԻՆԵԼ Նրա սերը** վարքագծով, վարվելակերպով և վերաբերմունքով՝ ապրելով և ծառայելով ուրիշներ:

րին ազապե սիրով, և **ՎԱՐՎԵԼ** Նրա նման նշանակում է **ԱՆԵԼ** այն, ինչ Աստծո կամքն է ամեն բանում: Ես պետք է լինեմ Հիսուսի նման գործողությունների, ծառայության և սպասավորության մեջ՝ անելով միայն այն, ինչ Նա է կամենում, և երբեք այն, ինչ ես եմ կամենում՝ Հոր փառքի համար: Այս երկու մասերը՝ **ԼԻՆԵԼԸ և ԱՆԵԼԸ**, պետք է հավասարապես գնահատենք և ընդունենք, մեկը չպետք է գերիշխի մյուսին: Մեկի գերազանցությունը մյուսի նկատմամբ կկործանի Ավետարանի վավերականությունը և կյանք փոխող զորությունը, որին մենք ասում ենք, որ հավատում ենք:

Քրիստոսի մեջ մնալու պտուղներից մեկը չմեղանչելն է: Հիսուսը ներգրավում է մեզ Իր հետ կյանքի միաբանության մեջ, որպեսզի մեր կյանքը նմանվի Իր կյանքին: Կա աստվածային իրողություն հետևյալ խոսքերում, որ բառերով չենք կարող բացատրել. «Մնալ Քրիստոսի մեջ: Մենք Քրիստոսի մեջ ենք: Քրիստոսը բնակվում է մեր մեջ»: Եկեք պարզապես հավատանք սրան: Ես պետք է «հենվեմ Աստծո վրա և կախված լինեմ Նրանից», որպեսզի Նա իսկապես բնակվի իմ մեջ: Մեզնից չի պահանջվում, որ համաձայնենք «հենվելուն և կախված լինելուն» և ընդունենք դա, այլ որ պարզապես հավատանք դրան: Երբ հավատում եմ դրան, իմ ներսում հաստատվում է դրա ճշմարտությունը: Քրիստոսի մեջ մնալը իմ գործը չէ, **իմ գործը հավատայն է**: Նա ապրում է հարատև կյանքով իմ մեջ, իմ նոր էության մեջ: Շատերը փորձում են ինչ-որ բան անել իրենց հին էությանը, բայց դա հնարավոր չէ:

Սիրելի՛ հավատացյալ և Քրիստոսի աշակերտ, Քրիստոսի մեջ մնալը սիրո աստվածային խորհուրդ է: Առանձնացնք Աստծո հետ և մտնք Նրա ներկայության մեջ, նայեք ձեր Տիրոջը և զգացեք Նրա անձնագրի սերը, որը պահում է ձեզ, որը գործում է ձեր մեջ: Հավատացեք այս հարատև միությանը, որ Նա ձևավորում է ձեր մեջ: **Հավատքով վստահեք Նրան, մնացեք և հանգստացեք Նրա մեջ**: Ձեր սիրտը մշտապես ուղղեք միայն Նրան, հուսացեք միայն Նրան: Դառնալն էլ, հուսալն էլ պետք է ուղղված լինեն ՄԻՄԻԱՅՆ ՆՐԱՆ: Այլապես պտուղ չի լինի: Ձեր սրտում կամ անհավատություն: Վստահեք, որ Նա կիրագործի ձեր մեջ «Դուք՝ Ինձանում, և Ես՝ ձեզանում» խորհուրդը: Մնալը ձեր համաձայնությունը և ձեր սրտի հոժարությունը պահանջող գործողություն է:

«...Նրանում մեղք չկա: Ամեն, ով որ Նրանում մնում է, չի մեղանչում...» (Ա Հովհ. 3.5, 6): Սա գրված է իմ հավատքի համար: Եթե ես կարող եմ վստահել Քրիստոսին՝ ինձ մեղանչելուց հետո պահելու համար, կարող եմ նաև հավատալ Նրան՝ հնազանդվելու ուժ տալու համար: Այդ հավատքով և վստահությամբ ես ունեմ քա-

ջություն՝ հրաժարվելու մեղքից, կտրվելու այն ամենից, ինչը նախկինում խանգարել է ինձ: Ես պետք է վերցնեմ այն, ինչ տրվել է ինձ: Ամեն անգամ հավատքով հրաժարվե՞ք ձեր մեղքերից, և եթե հրաժարվեք, դրանք խաչին կմնան: Ձեր անհավատությունը կամ անզգուշությունը թույլ չի տա, որ դրանք մնան խաչին:

Քրիստոսի մեջ մնալը մշտական պարզև չէ Աստծուց: Սա բազմաթիվ քրիստոնյաների սխալն է: Ես պետք է հասկանամ սա, յուրացնեմ՝ հավատալով ամեն վայրկյան և ամեն օր: Սա է մնալու գաղտնիքը: Երբ մնալն անխախտ է, մենք ապրում ենք վայրկյան առ վայրկյան Տիրոջ հետ կատարյալ միաբանության մեջ: Քրիստոսն իմ մեջ ճնշում է իմ հին էության զորությունը, որպեսզի այն նորից իշխանություն ձեռք չբերի իմ անձի նկատմամբ:

Սիրելի՛ Քրիստոսի աշակերտ, քանի դեռ մնում եք Նրանում, չեք մեղանչի: «Իմ սրտում թաքցրի Քո խոսքերը, որ չմեղանչեմ Քո դեմ» (Սաղմ. 119.11): Չմեղանչելը նպաստում է սրբության կատարելությանը: «Արդ այսպիսի խոստումներ ունենալով, սիրելիներ, մեր անձերը սրբենք հոգու և մարմնի ամեն պղծությունից, սրբությունը կատարենք Աստծո ահով» (Բ Կորնթ. 7.1): Քանի որ իմ ներսում կա մեղքի էություն՝ իր սարսափելի զորությամբ, ինչպես է հնարավոր, որ ես չմեղանչեմ: Պատասխանը սա է. երբ Քրիստոսի մեջ մնալը վայրկյան առ վայրկյան դառնում է անդադար և անխախտ: «Նրանում մեղք չկա: Ամեն, ով որ Նրանում մնում է, չի մեղանչում»: *Քրիստոսի մեջ մշտապես մնալը դառնում է իմ փրկությունը ամենօրյա մեղանչումից:* Իմ բնակությունը պետք է լինի Խաչյալ Քրիստոսի մեջ, Նրա խաչը սպասում է ինձ ամեն օր, որպեսզի մնամ այնտեղ Քրիստոսի հետ: Շատ քրիստոնյաների կյանքում Քրիստոսի մեջ մնալն այնքան թույլ է և հազվադեպ, որ մեղքը մշտապես գլուխ է բարձրացնում: Ես «ես»-ի կարիք չունեմ, փոխարենը ունեմ Քրիստոսի կարիքը որպես իմ կյանքի:

«Թող մեղքը չթագավորի ձեր մահկանացու մարմնում» պատվիրանը մշտապես նախորդում է Աստծո խոստումին. «Որովհետև մեղքը չի տիրի ձեզ վրա...» (Հռոմ. 6.14): Նրա խոստումը Նրա շնորհքն է, այն ինձ ուժ է տալիս՝ հնազանդվելու պատվիրանին: Շատ քրիստոնյաներ իրականում չեն հավատում այս խոստումին, նրանք հավատում են, որ մեղանչելն անխուսափելի է: Խոստումին անտեղյակ լինելը, անհավատությունը և անզգուշությունը դուռ են բացում, որ մեղքը տիրի մեզ վրա: **Միայն շնորհքը, ոչ թե ինքնապավինումն է բերում հնազանդվելու զորություն:** Մենք պետք է սովորենք ուրանալ «ես»-ը և հանձնվել Աստծո շնորհ-

քին: Սիրելի հավատացյալ, պահանջե՛ք խոստումը լիակատար հավատքով, և դուք կընդունե՛ք զորություն՝ հնազանդվելու պատվիրանին, և մեղքը թույլտվություն չի ստանա հաստատելու իր գերիշխանությունը ձեր կյանքում:

«Ինչ անեմ հիմա»

Չար էությունը, մարմինը, եսապաշտ կյանքը բոլոր հավատացյալների մեջ են, դրանք երբեք չեն մահանում և մնում են Աստծուն թշնամի: Հիսուսը չի հեռացնում մեր մեղավոր բնությունը, և դրա չարությունն ինքնիրեն չի վերանում: Դրա էությունը երբեք չի փոխվում: «Որովհետև մարմնի խորհուրդը Աստծո դեմ թշնամություն է. որովհետև Աստծո օրենքին չի հնազանդվում և չի էլ կարող» (Հռոմ. 8.7): «Որովհետև գիտեմ, որ ինձանում (այսինքն՝ իմ մարմնում) մի բարի բան չի բնակվում. քանզի կամենալը կա իմ մոտ, բայց բարին անելը չեմ գտնում» (Հռոմ. 7.18): «Որովհետև մարմինը ցանկանում է հոգուն հակառակ, և հոգին՝ մարմնին հակառակ, և սրանք իրար հակառակ են...» (Գաղ. 5.17): Ինչևէ, մեր ներսում ունենք ավելի մեծ և աստվածային զորություն դրա դեմ: Մեր սրտում Հիսուսի մնայուն ներկայությունը ճնշում է այն:

Ինչ անեմ հիմա: Հավատալով վստահե՛ք ձեր անձը ձեր ներսում բնակվող Քրիստոսի պահպանությանը: *Հավատացե՛ք, որ Նա մնում է ձեր մեջ, և դուք մնում եք Նրա մեջ, և հուսացե՛ք Հիսուսին, որ Նա կբնակեցնի ձեզ Իր մեջ:* Հավատալը համաձայնելը, ընդունելը կամ հավանելը չէ: Միտքը չի փոխում սիրտը, այն միայն պատրաստում է սիրտը: Միայն **ճշմարտությանը հավատալը կարող է հանգեցնել այդ ճշմարտությանը ապրելուն**. հավատալը փոխում է սիրտը: Այս մնայուն միությունը և հաղորդակցությունը սրբության գաղտնիքն են ձեր կյանքում. «Նրանում մեղք չկա: Ամեն, ով որ Նրանում մնում է, չի մեղանչում», «Որ ձեր սրտերը հաստատվեն անարատ սրբությունով Աստծո և մեր Հոր առաջ...» (Ա Թես. 3.13):

Արդյո՞ք նման բնակություն հնարավոր է: Երբ Քրիստոսը պատվիրեց, որ մնանք Իր մեջ, հնարավոր է, որ Նա նկատի ուներ այլ բան, քան ճյուղի առողջ, կենսունակ և լիարժեք միությունը Որթի հետ (Հովհ. 15): Երբ Նա խոստացավ, որ եթե մնանք Իր մեջ, Ինքն էլ կմնա մեր մեջ, հնարավոր է, որ Նա նկատի ուներ մեկ այլ բան, քան այն, որ մեր մեջ Իր մնալը կլիներ աստվածային զորության և սիրո դրսևորում մեր կյանքում: Եկե՛ք հավատանք, որ երբ Հիսուսն ասաց՝ «Կացե՛ք Ինձանում, և Ես՝ ձեզանում», հենց դա նկատի ուներ: Մենք երբեք ազատ չենք աշխարհից և նրա նե-

ղություններից, մեղավոր էությունից և նրա գայթակղություններից, բայց Աստծո շնորհքը լիովին երաշխավորում է մնալու օրինությունը, քանի դեռ պահպանում ենք մեր հոժարակամությունը: **Շնորհքը** տրված է, որպեսզի **կարողանանք** լիովին մնալ միայն մեր Տեր Հիսուսի մեջ: Իմ մնալը Հիսուսի մեջ կախված չէ իմ ուժերից, այն Աստծո աշխատանքն է խաչին հանձնված սրտում:

Բաներ, որ մոռանում ենք Քրիստոսի և մեր մասին

Մենք մոռանում ենք, որ (1) Քրիստոսը գործում է մեր մեջ գորավոր կերպով. «...Նրա զորության գերազանց մեծությունը մեզանում, որ հավատացիներ...» (Եփես. 1.19), (2) մենք հակված ենք մոռանալու մեր տկարությունը և աննշանությունը և փոխարենը պատկերացնելու, որ մեր առօրյա կյանքում կարող ենք ապրել առանց մեղքի:

Մենք պատկերացնում ենք, որ մեր առօրյա պարտականություններում և փորձություններում կարող ենք վարվել մեր ուժերով, փորձառությամբ և իմաստությամբ: Մենք չենք տեսնում մարմնի չարությունը, մենք հակառակվում ենք մեր էության մասին Աստծո հայտնություններին: Այդ իսկ պատճառով *շարունակում ենք հավատալ մեր մարդկային ուժերի բավարար լինելուն, և սա գրեթե անհնար է դարձնում Աստծո ամենակարող զորությանը հավատալը*: Այս ամենը մարմնից է (ինչը նաև ներառում է ապավինություն սեփական ուժերին, ինքնավստահություն, ինքնաբավություն, ինքնագովեստ և շահասիրություն): Իմ մարմինը կամ եսապաշտ կյանքը մահվան կյանք է: Եթե ես չեմ հավատում սրան, մարմինն ազատ է և ակտիվ իմ փրկությունն ընդհատելու համար: Հետևաբար մենք հակված ենք չընդունելու Քրիստոսի ամենակարողությունը, որն արդեն մերն է: Վերցրե՛ք այն, ինչ տրված է Քրիստոսով: Հիշե՛ք, Հիսուս Քրիստոսին է տրվել ամբողջ զորությունը երկնքում և երկրի վրա: Այնպես որ եկե՛ք ապրենք՝ մշտապես կիրառելով Նրա ամենակարող զորության նկատմամբ հավատքը: **Այս հավատքով ապրելու համար ես մշտապես պետք է մերժեմ մարմնի զորությունը**: Սա այն ճշմարտությունն է, որ շատ հաճախ բաց ենք թողնում. հավատքը և մարմինը մերժելը անբաժանելի են: Եթե դրանք առանձնացվեն իրարից, հետևանքը կլինի ձախողումը: Աստված, տո՛ր մեզ հասկացողություն:

Աղոթք

«Օրհնյալ Տեր, Դու հրավիրում ես, որ մնամ Քո մեջ: Տո՛ւյց տուր Քեզ, ես սպասում եմ, որ ընդունես, ողջունես և պահես ինձ: Աղո-

թում եմ, որ ցույց տաս, թե ինչպես ես Դու աշխատում, որ այս ամենն իրագործես իմ մեջ: Օգնիր ինձ որ զմայլված լինեմ Քեզ-նով, մշտապես մնամ Քո մեջ: Ահա ես, Տէր, մի ճյուղ՝ մաքրված և մնայուն, որ հանգստանում է Քո մեջ և սպասում է Քո կյանքի և շնորհքի հոսքին: Շնորհաշատ Տեր, սովորեցրո՛ւ այս դասը իմ սրտին. **միայն Քո կամքը ճանաչելով կարող եմ ճանաչել Քո սիրտը, միայն Քո կամքը կատարելով կարող եմ մնալ Քո սիրո մեջ:** Տէր, սովորեցրո՛ւ, որ անարժեք և անօգուտ է Քո կամքը իմ ուժերով կատարելը: Սովորեցրո՛ւ, որ խիստ կարևոր և բացարձակապես պարտադիր է այն կատարելը՝ հավատալով Քո ուժերին և Քո զորությանը, որպեսզի մնամ Քո սիրո մեջ: Տէր Հիսուս, օգնիր ինձ ուրանալու իմ մարմինը ամեն օր և ամեն բանում, ամեն»:

«Նույնպես էլ դուք ձեր անձերը մեղքին մեռած համարեք և Աստծուն՝ կենդանի՝ մեր Տեր Քրիստոս Հիսուսի ձեռքով» (Հռոմ. 6. 11):

«Ես մեռած եմ մեղքին» (Հռոմ. 6.2): «Ձեր անձերը մեղքին մեռած համարեք և Աստծուն՝ կենդանի՝ մեր Տեր Քրիստոս Հիսուսի ձեռքով» (Հռոմ. 6. 11): «Դուք մեռած եք Քրիստոսի հետ» (Հռոմ. 6.8): Աստված հայտարարություն է անում բոլոր դարերի համար: Սա այն բարի լուրն է, որ Աստված նախատեսել է՝ ունենանք, որով պետք է ապրենք և որը պետք է հայտնենք աշխարհին:

Ինչ կատարվեց ինձ հետ, երբ ընդունեցի Քրիստոսին՝ որպես իմ Փրկչի: Ինչ կատարվեց ինձ հետ Քրիստոսի մեջ: Ինչ կատարվեց առաջին Ադամի մեջ: Առաջին Ադամը մահացավ Աստծո համար և մահացավ մեղքի մեջ, և ես ժառանգել եմ նրա կյանքը: Ուստի հիմա *ես մեռած եմ մեղքի մեջ* (ինչպես նա էր) և *մեռած եմ Աստծո համար՝ անկարող ճիշտ կերպով արձագանքելու Նրան:* Ինչ կատարվեց ինձ հետ, երբ ընդունեցի Քրիստոսին՝ որպես իմ Փրկչի: Երբ ընդունեցի և հավատացի Հիսուսին՝ երկրորդ Ադամին, ես միացա Քրիստոսին: Այս միությունը տեղի ունեցավ Նրա խաչի վրա: Երբ Քրիստոսը գամվեց խաչին, որպես հավատացյալ՝ ես, հատկապես իմ մեղքի էությունը, Նրա հետ էի այնտեղ՝ հոգու մեջ: Նայեք ներքոհիշյալ սուրբգրային խոսքերին, Աստծո Խոսքը հռչակում է դա որպես փաստ: Եթե Քրիստոսը թաղվեց, ես նույնպես թաղվեցի (Հռոմ. 6.4, 5): Եթե Քրիստոսը հարություն առավ կյանքի նորոգության մեջ, ես նույնպես հարություն առա: **Քրիստոսը հարություն է առել, և ես նույնպես հարություն եմ առել Նրանում:**

Այժմ ես դարձել եմ Քրիստոսի կյանքի մասնակից: Ինչ կյանք: Այն կյանքի, որ Գողգոթայում մահացավ մեղքին և հարություն

առավ: Դա է պատճառը, որ Աստված մեզ ասում է. «Ձեր անձե-
րը մեղքին մեռած համարեք և Աստծուն՝ կենդանի՝ մեր Տեր Քրիս-
տոս Հիսուսի ձեռքով»: Դուք պետք է համարեք սա ճշմարտութ-
յուն, որովհետև Աստված է ասում: Ձեր նոր էությունը ներկայաց-
նում է կենսական միություն Քրիստոսի հետ, որն իրապես և
լիովին մեռած է մեղքին: «Մենք, որ մեռանք մեղքին ...Մեր հին
մարդը Նրա հետ խաչվեց ... Քրիստոսի հետ մեռանք» (Հռոմ. 6.2,
6, 8): «Ես Քրիստոսի հետ խաչված եմ» (Գաղ. 2. 19): Հունարեն
բնագրում «մեռնել» և «խաչվել» բայերը գրված են անցյալ ժա-
մանակով և նշանակում են անցյալում ավարտված, ոչ թե շա-
րունակվող գործողություն: Այս սուրբգրային խոսքերը մեզ կոչ չեն
անում մահանալու մեղքին կամ խաչելու մեր անձերը, ո՛չ: Դրանք
հռչակում են, որ հավատացյալը հաղորդ է եղել Քրիստոսի մահ-
վանը: Սա ցանկություն կամ երազանք չէ: Դուք պետք է ապ-
րեք սրանով՝ ամեն օր հավատալով սրան՝ որպես աստվածային
ճշմարտության, որպես փաստի: Ամենօրյա հավատքը բերում է
ամենօրյա փորձառություն:

«Ես Քրիստոսի հետ խաչված եմ» (Գաղ. 2.19), և «Մենք Քրիս-
տոսի հետ մեռանք» (Հռոմ. 6.8) ոչ թե այն պատճառով, թե ինչ
ենք արել կամ ինչ պետք է անենք հիմա, այլ թե ով ենք մենք ար-
դեն որպես հավատացյալներ: Մեր գործն է հավատալ սրան:
Հավատալը բերում է փորձառություն: Աստծո ճշմարտություննե-
րը բարդ չեն: Օրինապաշտները (եկեղեցու) առաջարկում են ձեզ
խաչվել, մահանալ այս կամ այն բանի համար: Մեր խնդիրն է հա-
վատալ, որ դա տեղի է ունեցել շատ դարեր առաջ, և ամեն օր հա-
վատքով ապրել դրանով: Ես հավատում և հռչակում եմ այն փաս-
տը, որ իմ էությունը խաչվել է, և ես մեռած եմ դրան, մեռած եմ
այս բանին և մեռած եմ այն բանին:

«Ես խաչվել եմ Քրիստոսի հետ»: Ուշադրություն դարձրեք,
որ ձեր «փորձառությունը» սա փաստ չի դարձնում, սա արդեն
փաստ է: Փաստն այն է, որ ես մահացա Քրիստոսի հետ: Փոր-
ձառությունը գալիս է փաստին հավատալով: Սրա նկատմամբ
հավատքը կտա ձեզ աստվածային զորություն՝ հակառակվելու
մեղքին և հեռացնելու այն. մեղքի զորությունը քանդված է: Իմա-
ցեք սա, սատանան ուժգնորեն հարձակվում է հավատքի այս
սկզբնական քայլի վրա, երբ դուք հավատում եք, որ մեռած եք
Քրիստոսի մեջ, մեռած եք մեղքին. այս կերպով նա խոչընդոտում
է ձեր մուտքը դեպի հարության կյանք: Զատիկը տոնելը Քրիս-
տոսի մեջ հարության կյանքը տոնելն է: Եթե չկա հավատ, չկա
հաղթանակ մեղքի նկատմամբ: **Եթե ես չհավատամ, որ մեռած**

եմ մեղքին, անկասկած ի վիճակի չեմ լինի իմ կյանքում հաղթելու մեղքին: Եթե ես չհավատամ, որ մեռած եմ մեղքին, չեմ հավատա, որ կենդանի եմ Աստծուն (Հռոմ. 6.11): Այս դեպքում ինչպե՞ս կարող եմ նշել Ջատիկը: Իրականում չեմ կարող: Ջատիկը դառնում է պատրանք: Եթե ես հավատում եմ և վստահում Հիսուսին, Նա չի կարող ձախողվել: Հետևաբար, եթե ես ձախողվել եմ, իմ հավատը ճշմարիտ կամ իրական չի եղել, որովհետև Քրիստոսը չէր կարող ձախողվել: Հավատքի ուղին մշտապես հակառակ է երևույթներին: Հավատքը տեսնում է անտեսանելին: Փաստերը իրողություններ են: Դրանք Աստծո հայտնություններն են մեզ համար: **Հավատքի հնազանդությունը ձեզ տանում է մեղքի զորությունից ազատագրման և հաստատում Քրիստոսի հարության զորության՝ Ջատիկի մեջ:** Սա Աստծո բարի լուրն է՝ ուղղված ձեր ամենօրյա կյանքին: *Երբ տեսնում եք, որ մեղքը մոտենում է, հիշե՛ք այս փաստը. դուք մեռած եք ձեզ վրա ունեցած դրա իշխանությանը: Ուստի հավաքալով մերժե՛ք և ուրացե՛ք այն Հիսուսի անունով:* Այն կփախչի ձեզնից, եթե համառեք ձեր հավատքում. դուք կենդանի եք Աստծուն Քրիստոսով:

Ինչպե՞ս կարող եմ գործնականում մուտք գործել Քրիստոսի հետ այս մահվան մեջ: Ինչպե՞ս եմ մտնում հարության կյանքի մեջ: Դուք պետք է սովորեք հավատքով ասել. «Ես մեռած եմ Քրիստոսի հետ», «Ես մեռած եմ մեղքին և մարմնին»: «Այս Իմ խոսքերը ձեր սրտի և հոգու մեջ դրե՛ք ...նրանցից խոսես...» (Բ Օրին. 11.18, 19): Ահա թե ինչպես ենք կերտում հավատքի կյանք: Եկե՛ք նայենք մի քանի մեղքերի, որոնց պետք է հաղթենք ամեն օր՝ բամբասանք, նախանձ, խանդ, կոպտություն, բարկություն, չներում, անհամբերություն, դառնություն, իրար չհամբերել, հոգ չտանել, չընդունել և այլն: Օրինակ, երբ տեսնում եք, որ ձեր ներսում բարձրանում է կոպտություն, կամ ուզում եք կոպիտ խոսքեր արտաբերել, անմիջապես այսպես ասե՛ք ձեզ մտեցող մեղքին. «Կոպտություն, ես հավատում եմ Աստծուն, հետևաբար ես մեռած եմ քեզ համար: Ես հռչակում եմ այն ճշմարտությունը, որ դու և իմ մարմինը խաչվել եք Հիսուսի հետ: Դու չունես իշխանություն ինձ վրա: Իմ մարմինը չունի իշխանություն ինձ վրա, իմ «կոպտությունը» չունի իշխանություն ինձ վրա: Ես անձնատուր չեմ լինի քեզ, դու պարտված ես: Հիսուս Քրիստոսի անունով և Նրա իշխանությամբ ես իշխանություն եմ վերցնում քեզ վրա: Հիսուսի անունով և իշխանությամբ հրամայում եմ, որ «կոպտությունը» հեռանա ինձնից: Ես քեզ դուրս եմ շարտում ինձնից: Հիմա ես հանձնվում և անձնատուր եմ լինում Հիսուս Քրիստոսի

Տիրակալությանը և Նրա սիրուն: Աստծո ազապե սերն իշխում է այս կոպտության վրա և ապրում է իմ մեջ հիմա»: Սովորե՛ք անել սա ձեր կյանքի յուրաքանչյուր մեղքի հետ, երբ տեսնում եք, որ այն մոտենում է ձեզ: Այս աղոթքն անելով՝ մենք կատարում ենք այն, ինչ գրված է Հռոմեացիների 6.8, 11- ում և Բ Կորնթացիների 10.5- ում. «Մենք քանդում ենք ամեն հպարտություն, որ հետ է պահում մարդկանց Աստծուն ճանաչելուց: Մենք գերի ենք բռնում նրանց ապստամբ մտքերը և սովորեցնում ենք նրանց հնազանդվել Քրիստոսին»: Մենք պետք է անենք սա յուրաքանչյուր մեղքի հետ, որ մոտենում է մեզ: Սա Աստծուց տրված մեր պատասխանատվությունն է: Եղե՛ք իմաստուն և ուսումնասիրե՛ք Խոսքը և աղոթե՛ք, որ իմանաք և ճանաչեք ձեր մեղքերը: Աստծո ճշմարտությունների հռչակումն ունի Աստծո զորությունը, որը փոխանցվում է մեր սրտերին և ուղղվում խավարի թագավորության դեմ: Հավատքը մեր հաղթանակն է: **Սուրբ Հոգին ձեր հավատքն ու հռչակումը դարձնում է հզոր և արդյունավետ:** Սովորե՛ք բառացիորեն արտահայտել և հռչակել Աստծո ճշմարտություններն ինքներդ ձեզ համար և սատանայի դեմ. «...Քանզի սրտով հավատում ենք արդարանալու համար և բերանով դավանում ենք փրկվելու համար» (Հռոմ. 10.9, 10): Սրտով հավատում ենք Աստծո ճշմարտություններին և արդարանում: Բերանով դավանում կամ հռչակում ենք Աստծո ճշմարտությունները և շարունակում «փրկվել»: Աստծո ճանապարհները բարդ չեն:

Սիրելի՛ հավատացյալ և Քրիստոսի աշակերտ, հավատացե՛ք, որ դուք մեռած եք մեղքին: Ասե՛ք Աստծո ճշմարտությունը, բարձրաձայնե՛ք այն, և դա կբերի պտուղ, և դա հաղթանակ է: Աստծո Խոսքն ունի Աստծո զորությունը: Նույնիսկ եթե լավ չեք հասկանում սա, դուք պետք է սկսեք ասել. «Քրիստոսում ես մեռած եմ մեղքին և կենդանի եմ Աստծուն: Մեռած եմ ինձ վրա եղած մեղքի իշխանությանը»: Հավատացե՛ք նոր էության զորությանը ձեր ներսում, դուք կենդանի եք Աստծուն Քրիստոսով: Քրիստոսը ձեր նոր էության՝ նոր արարածի մեջ է: Մեղքը և մարմինը մեռած չեն, բայց դուք մեռած եք դրանց իշխանությանը: Հավատացե՛ք սրան, բարձրաձայնե՛ք և հռչակե՛ք սա կրկին ու կրկին, երբ անհրաժեշտություն առաջանա: Մեղքը և մեղքի էությունը չունեն իշխանություն ձեզ վրա, մինչև որ ձեր անհավատությամբ թույլ չտաք դա: Լսե՛ք սա. հոգևոր անհոգությունը, անտեղյակությունը, աղոթքի անտեսումը և անզգուշությունը կործանում են ձեր առօրյա հավատքի կյանքը: Արդյո՞ք ամեն օր անտեսում եք այն հավատքը, որ

դուք մեռած եք մեղքին և կենդանի եք Աստծուն: Եթե այո, դուք կանտեսեք Սուրբ Հոգուն և կիրավիրեք ձեր մարմնին՝ ապրելու իր մահվան կյանքը ձեր մեջ:

Լսում եք այս ճշմարտությունը: Հավատացե՛ք, որ դուք ստացել եք ձեր նոր մարդը (ձեր նոր էությունը) Հիսուսից, մեռելներից, և այն իսկապես մեռած է մեղքին և կենդանի է Աստծուն: Հիսուսն ասաց. «...Ես եմ հարությունը և կյանքը... Ամեն, ով որ կենդանի է և ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի. հավատում ես սրան» (Հովհ. 11.25, 26): Հիսուսը դեռ հարցնում է մեզ. «Հավատում ես, որ ես քո կյանքն եմ»:

Շատ քրիստոնյաներ հավատում են այս խոսքի առաջին մասին, որ իրենք Հիսուսից ստացել են նոր էություն, նոր մարդ, բայց չեն հավատում երկրորդ մասին, որ իսկապես մեռած են մեղքին, մեռած են մարմնին: Համոզված եղեք, որ չկրկնեք այս վարակիչ սխալները: Թո՛ւյլ տվեք, որ նոր մարդը փոխարինի հին մարդուն՝ միմիայն հավատալով: Նոր մարդը տրված է հին մարդուն կամ հին անձին փոխարինելու համար: Հին մարդը չի կարող կատարելագործվել կամ վերափոխվել, դա անհնար է: Այն պետք է փոխարինվի նոր մարդով: Ահա թե ինչու Աստված փրկել է ձեզ մեղքից և ինքներդ ձեզնից:

Սիրելի Հիսուսի աշակերտ, պարզ հավատքով ընդունե՛ք ձեր դիրքը Քրիստոսի մեջ: Նրանում դուք ունեք կյանք, որ մեռած է «ես»- ին (մարմնին) և ազատ է «ես»- ի իշխանությունից: Այնպես որ ուրացե՛ք ձեր անձը, դուք ունեք աստվածային զորություն, յուրացրե՛ք դա և հաջողության հասեք: Շնորհքը տալիս է անձն ուրանալու այս զորությունը. ձեր ջանքերը և ինքնակարգապահությունն անօգուտ են: «Ես»- ը խաչվել է Քրիստոսի հետ, այլևս դուք չեք ապրում, այլ Քրիստոսն է ապրում ձեր մեջ (Գաղ. 2.20): Հավատացե՛ք այս փաստին: Քրիստոսը ձեր մեջ է, և շատերը հավատում են այս խոսքի առաջին մասին, բայց սովորաբար չեն հավատում երկրորդ մասին, որ **Նրա անմեղ կյանքը մեր մեջ է: Բարձրաձայնե՛ք և հոչակե՛ք, որ Քրիստոսի անմեղ կյանքը ձեր մեջ է:** Կրկնե՛ք այս ճշմարտությունը՝ հոչակելով այն ինքներդ ձեզ և սատանայի դեմ: Արե՛ք սա այնքան հաճախ, որքան կարող եք: Սա հասարակ բան է, սակայն շատ զորավոր, որովհետև Հոգին գործում է ձեր մեջ: Ահա թե ինչպես եք սնուցում ձեր հավատքը, և սա ձեր մասն է հավատալու մեջ և ձեր պատասխանատվությունն է ձեր և Աստծո առջև: Հավատացե՛ք և կանգնե՛ք այս հիմքի վրա ամեն անգամ, երբ մեղքը մոտենում է: Ամեն օր նորոգե՛ք ձեր նվիրումը: Ամեն օր ընդունե՛ք ձեր դիրքը. դուք հաղթող եք դարձել Հիսուսում: Քրիստոսն ապրում է ձեր

մեջ և մնում է ձեր մեջ: Դուք ունեք նոր էություն ձեր մեջ, հոչակեք դա և թույլ մի՛ տվեք, որ ձեր տրամաբանական բացատրությունը խանգարի ձեր հավատքին, թույլ տվեք, որ ձեր նոր էությունը փոխարինի հին էությանը (մարմինն)՝ մշտապես հավատքով ուրանալով հին էությունը: Թողեք «ես»-ը, և դուք կմնաք միայն Քրիստոսի մեջ: Մտորեք սրա շուրջ, մինչև որ ճշմարտությունը տեղ գտնի ձեր սրտում. «Բայց նրանք, որ Քրիստոսին են, իրենց մարմինը խաչ հանեցին... Եթե Հոգով ենք ապրում, Հոգով վարվենք» (Գաղ. 5.24, 25):

Քրիստոսի զորությանը և իշխանությանը (որ ունեք Նրանում), համարձակությանը և հաստատուն կերպով ձեր ուղքերը դրեք ձեր թշնամու՝ «ես»-ի, մարմնի, հին էության, սափանայի պարանոցին: Քաջացեք, միայն հավատացեք... արեք սա ամեն մեղքի հեղ, որի դեմ պայքարում եք, կամ որը տեսնում եք, որ մոտենում է: Լսեցի՞ք. արեք սա ամեն մեղքի հեղ, որը տեսնում եք, որ մոտենում է ձեզ: Հավատացեք և վստահեք, որ Քրիստոսը պահում է «ես»-ը խաչին և դրա տեղը լցնում է իր հարության կյանքով և զորությամբ (Հովհ. 11.25,26): Հավատացեք և հոչակեք սա բառացի ամեն անգամ, երբ ձեր ուշադրությունը զբաղված չէ այլ բաներով: Սակայն այս զորությունը մշտական պարզ և չէ, այն պետք է յուրացնել ամեն անգամ, երբ անհրաժեշտ է (շատ հավատացյալներ մոռանում են կամ չեն անում սա): Մենք պետք է սովորենք ճանաչել մեր մեղքերը, աղոթեք, որ այս ցանկությունը զարգանա ձեր մեջ: Սա տեղի չի ունենում ինքնաբերաբար կամ արագորեն: Չկա հոգևոր «Գուգլ» ծառայություն: Ամեն օր յուրացրեք հարության զորությունը, դուք պետք է ստանաք այն ամեն օր, երբեք սովորական մի՛ համարեք այն: Լսեք ձեր հոգով (նոր մարդու միջոցով) և ոչ թե հին մարդու միջոցով, որը կրոնական է որոշումների ընդունման հարցում՝ ձեզ խաբելու համար: Հավատքով ամեն օր յուրացրեք Քրիստոսի հարության զորությունը ամեն ինչում: Ամեն պահ պետք է յուրացնել և ապրել այս զորությունը, այն մշտական կամ շարունակական պարզ և չէ:

Եթե դուք նորահավատ եք, թույլ տվեք տալ ձեզ մի գործնական բացահայտում: Նորահավատը շուտով պայքարի և ցավոտ փորձառության մեջ է հայտնվում, նրա հավատքը դեռևս շատ թույլ է, ու նա սկսում է հարցնել. «Եթե ես մեռած եմ մեղքին, ինչո՞ւ եմ այսքան շատ մեղք գործում»: Ահա իմ պատասխանը. դուք թույլ չեք տալիս, որ Սուրբ Հոգին իրագործի մահվան զորությունը ձեր կյանքում: Դուք «տեսնում եք», որ ձեր մարմինը չար է: Այն միշտ չար է, ամեն անգամ և ամեն ինչում: Բայց դա «տեսնելու» կարողությունը

անձնական ներքին հայտնությամբ տրվում է անձնատուր եղած, հանձնված սրտին, որը խորապես մտահոգված է իր մեղքերի համար: Դուք տեսնում եք ձեր մեղքի էությունը որպես ձեր մահկանացու թշնամի: «Վարվեք Հոգով», «առաջնորդվեք Հոգով», «ապրեք Հոգով», և Սուրբ Հոգին կշարունակի իրական դարձնել ձեզ համար մահվան ձեր պատկերացումը: Ապրեք՝ նայելով Հոգուն, վստահելով Նրան ամեն վայրկյան: Երբ ամեն վայրկյան շնչեք Հոգով, սրտի խորքում Նա կառաջնորդի ձեզ, որ հավատաք, և կհեռացնի ձեզ եսապաշտ կյանքից, աշխարհից և սատանայից: Նա կանի հանդարտորեն, աննկատ, բայց շատ ճշգրտորեն:

Քրիստոսի մահվան զորությունը կարող է երևալ Հոգու աշխատանքում՝ մարմնի մեղավոր ցանկություններն անդադար սպանելու մեջ: Սա Հոգու թաքնված աշխատանքն է: Այնպես որ *հավատքով ուրացեք ձեր անձը իր կրքերով, ցանկություններով և իրավունքներով: Անձը կամ «ես»-ը ուրանալը պարզապես աշխատանք չէ, որ անում եք որոշակի կարիքի ժամանակ, այլ վերաբերմունք, դիրքորոշում: Աստուծո շնորհքն ապահովում է հարության անհրաժեշտ զորությունը այս ուրացման համար: Ես չեմ կարող հանձնվել Սուրբ Հոգուն, եթե ամեն պահի չեմ ուրանում անձս:*

Խոսքը հոչակում է, որ մենք մասնակից ենք Քրիստոսին (Եբր. 3.14): «Եվ Նրա լիությունից մենք ամենքս առանք շնորհք շնորհքի տեղ» (Հովհ. 1.16): Օրինակ՝ վատ բնավորության դեմ պայքարելու փոխարեն ընդունեք Քրիստոսին՝ որպես ձեր համբերության: Երբ տեսնում եք, որ ձեր ներսում բարկություն է բարձրանում, ասեք. «Հիսուս, Դու ես իմ համբերությունը հիմա: Արա՛մ Քո աշխատանքը, ես հանձնվում եմ Քեզ և Քո խաչին: Ես ընդունում եմ Քեզ՝ որպես իմ համբերության»: Քրիստոսն Ինքը, ոչ թե Նրա մի մասը, ձեր համբերությունն է, ձեր խոնարհությունը, ձեր ժուժկությունը: Դուք չեք կարող պայքարել ձեր էության դեմ և հաղթել: Քրիստոսն արեց դա մեզ համար: Մեր հին էությունը պետք է մնա խաչին: Ինչ- որ մեկին ներել սովորելու փոխարեն ընդունեք Հիսուսին. ոչ թե դուք, այլ Քրիստոսն է ձեր մեջ այդ մարդուն Ներողը: Ընդունեք Նրան Իր լիությամբ ամեն վայրկյան: Դուք չեք ընդունում որևէ փորձառություն, որևէ զգացողություն կամ որևէ առանձնահատկություն Հիսուսից, այլ ընդունում եք հենց Հիսուսին: Մնացեք Քրիստոսի և Նրա լիության մեջ: Դուք չեք մնում Քրիստոսի մեջ տարբեր նպատակներով, այլ որպեսզի Նրա ամբողջ կյանքը լինի ձեր կյանքը, ձեր ամբողջ կյանքը: Ապրեք Հիսուսի ներկայության մեջ, և աշխարհը չի գրավի ձեզ: «Նրա լիութե

յունից մենք ամենքս ստացանք»: Ստացանք... ՎԵՐՅՐԵՔ ԱՅՆ: Վերցրեք այն, ինչ տրված է, դա տեղի չի ունենում անգիտակցաբար կամ անհայտ կերպով. վերցնելը իմ պատասխանատվությունն է, իմ պատրաստակամությունը:

Սիրելի Քրիստոսի աշակերտ, պատրաստ կլինեք խնդրելու Աստծուն ցույց տալ ձեր մեղքերի և ձեր էության չարությունը կամ չափազանց մեղավորությունը: Երբ Հիսուսը լցնի ձեզ, երբ Հիսուսը լինի ամենը ձեզ համար, երբ լիովին հանձնվեք Նրան, մեղքն իշխանություն չի ունենա ձեզ վրա: Բացարձակապես անձնատուր լինելը Աստծո շնորհքի աշխատանքն է, դա ձեր աշխատանքը չէ: Մեր աշխատանքն ու ջանքերը միշտ ձախողվում են: «Նա, որ մնում է Նրա մեջ, չի մեղանչում»: Այո, մեղքը դուրս է շարտվում և հեռու է պահվում միայն սրտում Հիսուսի անձնական Ներկայության միջոցով: Քրիստոսն է իմ կյանքը, ոչ թե ես:

Թճիյլ տվեք ավարտել՝ տալով այն հարցը, որ տվեցի սկզբում: Ի՞նչ պետք է անեմ իմ մեղքերի հետ որպես հավատացյալ: Ես անկեղծորեն հույս ունեմ, որ հիմա՝ այս գլխի վերջում, կարող եք տալ ավելի լավ պատասխան: **Այն մեղքը, որի մասին գաղափար չունեմ, չեմ կարող բերել Հիսուսի մոտ: Այն մեղքը, որը չեմ բերում Նրա մոտ, ինձնից չի հեռացվում: Աստված դեռ ասում և պատվիրում է. «Սուրբ եղեք, որովհետև ես սուրբ եմ»:**

Մտորումներ և դիտարկումներ Աստծո հետ

Նստեք և հայտնեք ձեր մտքերը Աստծուն, թո՛ւյլ տվեք, որ Նա լսի ձեզ, իսկ դուք՝ Նրան:

1. Արդյո՞ք հավատում եմ, որ Քրիստոսի փրկությունը գլխավորապես փրկություն է մեղանչումից:
2. Արդյո՞ք հնարավոր է հաճելի լինել Աստծուն, երբ չեմ ձգտում չմեղանչելու:
3. Եթե ես չեմ ձգտում հաճելի լինելու Աստծուն, ի՞նչ եմ զգում, երբ մեղանչում եմ:
4. Արդյո՞ք տեսնում եմ իմ բոլոր մեղքերը որպես լուրջ, չար և անհրավ մեղքեր:
5. Արդյո՞ք մեղքերից ազատագրվելու իմ ցանկությունը պատա-

հական է և ոչ օրինաչափ:

6. Արդյո՞ք մոռանում եմ իմ չապաշխարած մեղքերը: Արդյո՞ք անտարբեր եմ դրանց նկատմամբ: Օրվա վերջում ի՞նչ եմ զգում դրանց վերաբերյալ:
7. Արդյո՞ք լսում եմ Աստծո մեղմ ձայնը իմ սրտում: Ե՞րբ: Ո՞ր բնագավառներում:

Մաս 2. Լինել Քրիստոսի մեջ

Ներածություն

Երկրորդ մասը բաղկացած է 5 գլխից: Չորրորդ գլուխն անդրադառնում է Քրիստոսի մեջ լինելու նշանակությանը: Հինգերորդ գլուխը եսապաշտ կյանքի և ներքնակ Սուրբ Հոգու մասին է: Վեցերորդ գլխում ներկայացվում է սեփական ջանքերով նոր կյանքն ապրելու հոգևոր ողբերգությունը: Յոթերորդ գլուխը նվիրված է Քրիստոսի մեջ մնալուն և ապրելուն, իսկ ութերորդ գլուխը միմիայն Քրիստոսի մեջ մնալու նշանակությունը և անհրաժեշտությունը հասկանալու մասին է:

Այս գլուխներն անդրադառնում են այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝ ինչո՞ւ չեմ զգում Աստծո ներկայությունը իմ մեջ կամ ինձ հետ, ի՞նչ է իրականում նշանակում լինել Քրիստոսի մեջ, ինչպե՞ս ենք ձեռք բերում հոգևոր մտածելակերպ կամ խառնվածք, ինչպե՞ս առօրյայում պետք է ապրել և պահպանել այս կյանքը Քրիստոսի մեջ, ի՞նչ կատարվեց ինձ հետ Հիսուս Քրիստոսի խաչելության ժամանակ, ինչպե՞ս է Աստված ազատում ինձ ինձնից, ի՞նչ է անձնուրացությունը, ինչո՞ւ է սեփական ջանքերով նոր կյանքն ապրելը հոգևոր ողբերգություն, ի՞նչ է նշանակում հանել հին մարդուն և հագնել նոր մարդուն, ո՞րն է իրականում հին մարդու խնդիրը, ո՞րն է նոր մարդուն հագնելու Աստծո ճանապարհը, ի՞նչ է Քրիստոսի մեջ մնալը, և ի՞նչ է այն ենթադրում, ի՞նչ է նշանակում ունենալ սրտի հաղորդություն Աստծո հետ, ինչպե՞ս է Քրիստոսի հետ մնալուն հաղորդությունը հանգեցնում հոգով և ճշմարտությամբ Հորը երկրպագելուն, որո՞նք են Քրիստոսի մեջ մնալու պայմանները, ինչի՞ն ճշգրտորեն պետք է հավատամ, որպեսզի մնամ Քրիստոսի մեջ:

Գլուխ 4. Ի՞նչ է նշանակում լինել Քրիստոսի մեջ

Այս գլխում մենք կքննարկենք այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ինչո՞ւ չեմ զգում Աստծո ներկայությունը իմ մեջ կամ ինձ հետ, արդյո՞ք դա նշանակում է, որ ինչ- որ բան այն չէ ինձ հետ, ինչո՞ւ Նրա աշխատանքը հաճախ աննկատելի է ինձ համար, ի՞նչ է իրականում նշանակում լինել Քրիստոսի մեջ, ի՞նչն է ստիպում ինձ լինել Նրա հետ միության մեջ, ինչպե՞ս է Քրիստոսի մեջ մնալը բնա-

կան դառնում, ինչպես ենք ձեռք բերում հոգևոր մտածելակերպ կամ խառնվածք, ինչպես ամեն օր ապրել և պահպանել այս կյանքը Քրիստոսի մեջ:

Ներքնակ Քրիստոսը

«Քրիստոս՝ մեր կյանքը» (Կող. 3.4), «Քրիստոսը ձեր մեջ՝ այն փառքի հույսը» (Կող. 1.27):

Հիսուսն ասաց. «...Ես եմ հարությունը և կյանքը. Ինձ հավատացողը, թեև մեռնի էլ, կապրի: Եվ ամեն, ով որ կենդանի է և Ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի. հավատո՞ւմ ես սրան» (Հովհ. 11.25, 26):

Որտե՞ղ է Քրիստոսը բնակվում: Նա բնակվում է այն մարդու մեջ, որը սիրում, վստահում և հնազանդվում է Իրեն: Հիսուսն ասաց. «Ահա ես դրան առաջ կանգնած եմ և թակում եմ. եթե մեկը լսի Իմ ձայնը և դուռը բացի, կմտնեմ նրա մոտ»: Քրիստոսը նաև ասաց. «Կգանք (Ինքը և Հայրը) և բնակություն կանենք նրա մոտ», եթե այն մարդը մնա Քրիստոսի մեջ (Հովհ. 14.23, 15.10): Ուշադրություն դարձրեք, որ Աստված մեզ՝ հավատացյալներին, որոնք մնում են Քրիստոսի մեջ, ասում է, որ մեր սրտերը Իր տունն են, Իր բնակության վայրը: Մի՞թե մխիթարական չէ այն, որ սա չի որոշվում նրանով, թե որքան սուրբ ենք մենք: Քրիստոսը փափագում և ցանկանում է մնալ մեր մեջ, և Նա անում է դա: Դա Աստծո շնորհքն է: Դուք չեք պահում Նրան ձեր սրտում ձեր բարի գործերով կամ ձեր աղոթքներով կամ ձեր հավաքություններով ու ծառայություններով: Ձեր սիրտը Նրա տունն է, սա փաստ է: Նա այնտեղ է՝ հանգիստ կատարելով Իր աշխատանքը և սպասելով մեզ, որ ներս մտնենք: Մեր զգացմունքները չեն փաստում Նրա ներկայությունը, դրանք անհուսալի են: Հավատացե՛ք և պահպանե՛ք ձեր հավատը՝ ինքներդ ձեզ բռնացիորեն հռչակելով, որ Նա այնտեղ է, նույնիսկ երբ դուք տխուր եք, և ձեր շուրջը խավար է: Քրիստոսը խոստացել է լինել յուրաքանչյուր հավատացյալի մեջ որպես տան անդամ, որպես բուսահյույժ ճյուղի մեջ, որպես կենարար արյուն և կենարար ուժ մարմնի յուրաքանչյուր անդամի մեջ, որքան էլ տկար լինի այդ մարմինը: Քրիստոսը ձեր մեջ է. սա փաստ է: Հավատացե՛ք և նորից հավատացե՛ք դրան, վստահե՛ք և նորից վստահե՛ք դրան: Ձեր կյանքը կախված է այս հաստատական հավատքից, դուք պետք է ապրեք դրանով՝ հավատալով դրան և հռչակելով դա ամեն օր: Ամենօրյա հավատքը այս փաստը հաստատում և պահպանում է առօրյա գործունեության և փորձառության մեջ:

Քրիստոսը բնակվում է սրտում հավատքով: Քրիստոսը մնում է ձեր մեջ և կատարում է Իր աշխատանքը հանդարտությամբ և խաղաղությամբ (Հովհ. 15.4- 6): Նա ո՛չ կռվում է, ո՛չ աղաղակում, ո՛չ էլ բարձրացնում Իր ձայնը: Նրա շնչառությունը մեղմ է, և Նրա քայլքն այնքան թեթև է, որ չի փշրում ջախջախված եղեգը (Ես. 42.2,3): Նա հավիտյան կտրած և խոնարհ հոգի ունեցողի հետ է, որը պարզապես վստահում է Իրեն (Ես. 57.15): Հաճախ մենք չենք ճանաչում Նրա ներկայությունը, բայց դա չի ժխտում այն: Մենք չենք կարողանում ճանաչել շատ բաներ մեր մեջ և մեզ շրջապատող բնության մեջ, որոնք, այնուամենայնիվ, կան: - *Նա այնքան խորն է բնակվում* մարմնի կյանքից, մեր մտքերի ու զգացմունքների, դատողության և երևակայության, հույսի և սիրո կյանքից, լույսի և սովերի փոխազդեցությունից և փոխանակումից, մտադրություններից, նպատակներից ու կամքից, հիշողությունից ու հույսից, ինքնագիտակցության և անհանգստության դրսևորումներից ավելի խոր: Կյանքի այս հորձանուտում է բնակվում Քրիստոսը: Քրիստոսի կյանքը տրված է, որպեսզի դառնա այս բոլոր ոլորտների կյանքը: Ահա թե որտեղ պետք է թափանցի Սուրբ գրքի մեր հասկացողությունը, ես կարիք ունեմ, որ ներքնակ Քրիստոսի կյանքը դառնա իմ կյանքը՝ իմ մտքերի, զգացմունքների, դատողությունների, պատկերացումների, հույսերի, փոխազդեցությունների, փոխհարաբերությունների, մտադրությունների, կամքի, հիշողության, գիտակցության կյանքը: **Քրիստոսը մեր մեջ է, բայց պետք է թույլ տանք, որ Նրա կյանքը հարատևի,** ես պետք է համաձայնեմ և հոժար լինեմ, որ Նրա կյանքը հարատևի իմ կյանքի փոխարեն այն նույն ոլորտներում, որտեղ ես ձգտում եմ ապրելու: Սուրբ Հոգին մշտապես սպասում է մեր կամքին և համաձայնությանը. սա մեր պատասխանատվությունն է: Շատ հաճախ մենք դեմառդեմ չենք կանգնում մեր պատասխանատվությանը, Հոգին չի կատարի մեր պարտականությունը, եթե մենք չենք կատարում այն: Սովորաբար մենք չենք թափանցում մեր էության առավել խորքերը: Քրիստոսը բնակվում է ձեր մեջ, Նա մնում է ձեր մեջ (Հովհ. 15), Նա ներկա է ձեր մեջ, որպեսզի կարողանա ապրել ձեր մեջ: Դուք չեք կարող ինչ- որ բան անել Նրա համար, որպեսզի Նրան բերեք ձեզ մոտ: Դա ավետարանը չէ: Եթե դուք իսկապես նվիրված հավատացյալ եք, Նա ձեր մեջ է, որպեսզի ապրի Իր կյանքը ձեր մեջ, եթե համաձայն լինեք: Բայց մենք հաճախ գոհ և բավարարված ենք մեր հոգևոր կյանքով: Ամեն բան կարող է ավելի լավ լինել, բայց մենք բավարարվում ենք եղածով: Մենք չենք փափագում, որ մեր կյան-

քը փոխարինվի Նրա կյանքով, մենք ուզում ենք, որ երկու կյանքը՝ իմը և Նրանը, գոյություն ունենան կողք կողքի: Սա չէ ավետարանը, Քրիստոսը չմահացավ, որ այսպես լինի: Նա եկավ, որ փոխարինի իմ կյանքին, ոչ թե միանա դրան:

Մենք սովորաբար փնտրում ենք Նրան երևացող բաներում, որոնք կարող ենք տեսնել իրականում: Շատերը Նրան փնտրելիս կենտրոնանում են երկրային բարիքներ ձեռք բերելու և բարգավաճման վրա, և մեր սպասումները սահմանափակում են Աստծուն: Մենք բավարարվում ենք զգայարանների մակերեսային կյանքով ապրելով: Մենք ուտում ենք, խմում, աշխատում, քնում: Մենք տրվում ենք մարմնի ցանկությանը, աչքերի ցանկությանը և կյանքի ամբարտավանությանը: Մենք կատարում ենք մարմնի և մտքի ցանկությունները: Կամ էլ տրվում ենք գիտելիքի և մշակույթի, գիտության, տեխնոլոգիայի և արվեստի որոնումներին: Մենք կատարում ենք կարճ ուղևորություններ դեպի բարոյականության կյանք՝ դեպի ճիշտ ու սխալի զգացողությունը, որն ընդհանուր է բոլոր մարդկանց համար: Բայց մենք շատ քիչ ենք ծանոթ մեր հոգու առավել խոր, խորհրդավոր բնակարանին:

Մենք գնում ենք եկեղեցի և երկրպագում Աստծուն մեր երգերով, մասնակցում ենք աստվածաշնչյան սերտողությունների և աղոթքի հավաքույթների, ծառայում ենք մեր եկեղեցում: Մենք բավարարված ենք մեր հոգևոր վիճակով: Սակայն մեզ համար խորթ են Աստծո հետ մենակ մնալը և Նրա հետ մտորելը, Աստծուն սպասելը, մեր առօրյա մեղքերի վերաբերյալ հայտնություններն ու հանդիմանությունները, Աստծո ներկայությունը փնտրելը, խաչի հաղորդությունը: Ես պետք է մտնեմ իմ հոգու բնակարանը, Քրիստոսը սպասում է ինձ այնտեղ՝ ինձ հետ սրտի հաղորդություն ունենալու համար: Կարծում եմ, որ սա է պատճառը, որ հավատացյալների մեծամասնությունն այդքան անտարբեր է ներքնակ Քրիստոսի ներկայության նկատմամբ: Աստված փրկված և վերածնված հոգին դարձնում է Իր բնական վայրը: Մենք չենք կարող անել «բաներ» Աստծո համար, որպեսզի զգանք Նրա ներկայությունը մեր մեջ. սա նշանակում է կաշառել Աստծուն: **Ես պետք է լռեմ, հանգստացնեմ հոգիս և մտնեմ ու հաղորդություն ունենամ Նրա սրտի հետ:** Արդյո՞ք ես գիտեմ, թե ինչ է նշանակում ապրել Քրիստոսի մեջ: Արդյո՞ք գիտեմ և հավատում եմ, որ «Ես Քրիստոսի հետ խաչված եմ... ոչ թե այլևս ես, այլ Քրիստոսն է կենդանի ինձանում» (Գաղ. 2.19, 20): «Քրիստոսն է կենդանի ինձանում». սա կախված է «ոչ թե այլևս ես» խոսքից: Լռությանմբ մտորե՞ք Գաղատացիների 2.20- ի

շուրջ: Մենք Սուրբ Հոգուց պետք է սովորենք ժամանակ հատկացնել և մտորել Աստծո հետ ու սպասել Նրան՝ Նրա ներկայությամբ: Մենք հուսահատորեն կարիք ունենք Նրա ներկայության գիտակցմանը, այլ ոչ թե դրա մասին ուսուցմանը:

Մեր մշտական սխալն այն է, որ փորձում ենք մեր զգայարաններով զգալ Աստծո ներկայությունը մեր ներսի տարբեր ոլորտներում: Մենք ուզում ենք տեսնել և զգալ տեսանելի և գերբնական փոփոխություն այս ոլորտներում: Եթե տեսնենք և զգանք, կհավատանք դրանց, հակառակ դեպքում հաշվի չենք առնի դրանք: Մենք փոխում ենք Աստծո հաջորդականությունը: Մենք ասում ենք՝ զգացողություն, հավատք և փաստ: Աստված ասում է՝ փաստ, հավատք և զգացողություն: Քրիստոսը մեր մեջ է ամեն ժամանակ. սա փաստ է: Տեսնելը հավատալ չէ, դա հավատք չէ: Զգալը հավատալ չէ, դա հավատք չէ: Միայն մեր հավատքը կարող է իմանալ, որ Քրիստոսն իմ մեջ է ամեն ժամանակ: Նրա անձը և Նրա կյանքն իմ մեջ են, սա սրտի համոզմունք է, որ բերում է Սուրբ Հոգին: Աստծո համար զգացողությունը քիչ նշանակություն ունի. Նա միայն խնդրում է, որ հոժարակամ ընդունենք Իր Խոսքը որպես փաստ: Նա ցանկանում է, որ կառչենք Խոսքից, որովհետև Նա խոսել է այն՝ ամենևին հաշվի չառնելով, թե ինչ կարող ենք զգալ, և սա այն ոլորտն է, որտեղ հաճախ ձախողվում ենք: Եթե բավարարվում ենք միայն Աստծո Խոսքից Նրա մասին ճշմարտություններ (փաստեր) իմանալով և ընդունելով՝ առանց անհատապես հավատալու դրանց, ձեռք ենք բերում անպտուղ ճշմարտությունների հավաքածու: Մենք կզգանք այն դատարկությունը, որ ինքներս ենք ստեղծել: Միայն Աստծո ճշմարտություններին հավատալը առօրյայում կարող է բերել փորձառություն և կյանք, և սա կլցնի մեր դատարկությունն ու ունայնությունը: Սրտի հավատքը միացնում է ինձ Աստծո սրտին: Երկուսը գոյություն չունեն առանձին, դրանք միմյանց համար են, եթե հավատքը ճշմարիտ է: Ճշմարտություններն ընդունելը և ճշմարտություններին հավատալը կյանքի երկու տարբեր ոլորտներ են: Աստված չի կարող ձախողվել:

Կյանքի փորձությունների և փոթորիկների մեջ, որոնք դիպչում են մեր էությանը, շատերս հաճախ չենք կարողանում նկատել Աստծո ներկայությունը: Չնկատելը խնդիր չէ, դա ոչինչ չի ապացուցում: Սիրելի՛ հավատացյալ և Քրիստոսի աշակերտ, համարձակվեք հավատալ այս փաստին. Նա ներկա է ոչ թե ձեզնից դուրս, այլ ձեր մեջ՝ մշտապես ապրելով այնտեղ: Ասեք Նրան կրկին ու կրկին. «Հիսուս, Դու այստեղ ես՝ իմ մեջ: Ես արժանի

չեմ, որ Դու բնակվես իմ տանիքի ներքո, բայց Դու եկել ես: Տիրի՛ր ինձ, իշխի՛ր զորությամբ և իշխանությամբ: Դու՛րս եկ իմ ներսի Քո ծածուկ բնակարանից և ամբողջությամբ տիրի՛ր ինձ, որ օրհնված լինի Քո սուրբ անունը»: Աստված ձեր սրտում է, նույնիսկ երբ լցված եք գարշելի մտքերով, բայց երբեք, երբեք մի՛ հակառակվեք Նրա Սուրբ Հոգու քննող լույսին: Ինքնաքննումը և ինքնաբացահայտումն անհրաժեշտ են և լուրջ հոգևոր աշխատանք են, Հոգին սպասում է մեր համաձայնությանը՝ մեր ներսը քննելու համար: Հոգին հայտնում և բացահայտում է մեզ մեր եսապաշտ կյանքը, որպեսզի առաջնորդի մեզ դեպի խաչը, որտեղ էլ պետք է լինի եսապաշտ կյանքը:

Քրիստոսի կյանքը մեր մեջ է

Աստծո փառքը հայտնվում է այն ժամանակ, երբ համարձակվում ենք հավատալ, որ Քրիստոսի կյանքը մեր մեջ է: Աստծո փառքը հայտնվում է, երբ ուրանում ենք եսապաշտ կյանքը և հրաժարվում դրանից դրա մեղավոր և չար էության պատճառով:

Եթե Քրիստոսի կյանքը մեր մեջ է, ուրեմն մենք Քրիստոսի մեջ ենք: Օր օրի մենք համարում ենք, որ Քրիստոսն ապրում է մեր մեջ, և ձգտում ենք ուրանալու եսապաշտ կյանքի՝ մարմնի ուժն ու մղումները: Եսապաշտ կյանքը չափազանց մեղավոր և միշտ չար է (Հռոմ. 7.13, 18, Հռոմ. 8.7): Երբ ուրանում ենք եսապաշտ կյանքը, տեղ ենք բացում Քրիստոսի կյանքի համար, և սա է Քրիստոսի մեջ լինելու բուն նշանակությունը: Լինել Քրիստոսի մեջ չի նշանակում պարզապես լինել հավատացյալ, սա վերաբերում է շատ ավելի խոր իրողության՝ մեղք գործելուց հրաժարվելուն և եսապաշտ կյանքն ուրանալուն, որոնք հարության կյանքի նշաններն են: Միայն այսպիսի կյանքն է հայտնում Աստծո փառքը:

Հետևյալ խոսքերը վերաբերում են եսապաշտ կյանքն ուրանալուն. «...ես Քրիստոսի հետ խաչված եմ: Եվ կենդանի եմ ոչ թե այլևս ես, այլ Քրիստոսն է կենդանի ինձանում, և ինչ որ հիմա կենդանի եմ մարմնով, Աստծո Որդու հավատքով եմ կենդանի» (Գաղ. 2.19, 20): **«Որ Իր փառքի հարստության պես տա ձեզ, որ զորությամբ հաստատվեք Իր Հոգու ձեռքով ներսի մարդում: Որ Քրիստոսը հավատքով բնակվի ձեր սրտերում, և դուք սիրով արմատ գցած և հաստատված լինեք»** (Եփես. 3.16,17): **Քրիստոսի կյանքը, երբ թույլ ենք տալիս, որ հարատևի մեր մեջ, Աստծո փառքն է, որ հայտնվում է աշխարհին:** Դադարեք աղոթելուց, որ Աստծո փառքն իջնի ձեզ վրա, եթե թույլ չեք տալիս, որ Քրիս-

տոսի կյանքն ազատորեն ապրի ձեր մեջ: **Եսապաշտ կյանքը պետք է ուրանալ:**

Ո՛րն է Աստծո փառքի հարստությունը, որ կզորացնի ձեր ներսի մարդուն և կհաստատի ձեզ սիրո մեջ (Եփես. 3.16, 17): Քրիստոսի լիությունը՝ հայտնված մեր մեջ, Աստծո փառքն է: Աստծո փառքի հարստությունը *ներառում է Նրա անվերապահ սիրո հարստությունը՝ ուրախություն, խաղաղություն, համբերություն, բարություն, քաղցրություն, հավատարմություն, հեզություն և ժուժկալություն*: Որպես օրինակ՝ եկեք դիտարկենք համբերությունը:

Բոլորս էլ դժվարանում ենք լինել համբերատար. համբերատարությունն ի հայտ չի գալիս ինքնաբերաբար: Ոչ մի ճյուղ չի խուսափում Մշակի էտող դանակից (Հովհ. 15.1, 2), ոչ մի երեխա՝ Հոր գավազանից: Կյանքը հեշտ չէ. հանգամանքները հյուծում են մեզ, մեր նյարդային համակարգը գերծանրաբեռնված է մեր ժամանակների վազքի և մրցակցության հետևանքով: Իսկապես, մենք համբերության կարիք ունենք: Հոգևոր առումով կյանքը նույնպես հեշտ չէ. երբեք չթուլացնել ինքնահսկողությունը, երբեք չսրվել ուրիշների ոչ սիրալիկ կամ ազատ քննադատությանը, երբեք չասել չմտածված խոսքեր կամ կտրուկ չհակազդել, Աստծուց բացի՝ երբեք ո՛չ ոքի մոտ չդժգոհել, երբեք թույլ չտալ, որ ծանր և անվստահելի մտքերը մուտք գործեն և մնան սրտի մեջ, մշտապես ավելի շատ մտածել ուրիշների, քան քո անձի մասին: Այո, համբերություն է անհրաժեշտ, որպեսզի արթուն լինենք և արդարացում գտնենք նրանց համար, ովքեր հանդուգն են և կոպիտ, որպեսզի տանենք կյանքի ցավերն ու չարչարանքները, նեղություններն ու փորձությունները և անենք դա քաղցրությամբ, հնազանդությամբ, վստահությամբ, որպեսզի խմենք դառը բաժակից՝ աչքներս հառած Հոր երեսին, առանց տրտունջի կամ դժգոհության: Այս ամենի համար համբերություն է պետք՝ աստվածային համբերություն, ոչ թե մարդկային: Աստված ասում է. «Եվ ձեր համբերությամբ կշահեք ձեր հոգիները» (Ղուկ. 21.19): **Մենք չենք կարող ապրել այսպիսի կյանքով, մինչև չսովորենք ընդունել Քրիստոսին ամբողջությամբ՝ լիովին ուրանալով Եսապաշտ կյանքը**: Մենք միշտ ծախողվում ենք, երբ չենք կարողանում ուրանալ մեր անձը: Աստծո փառքի հարստությունը հենց Քրիստոսն է: Միայն Քրիստոսն է ներկայացնում Աստծո լիությունը: Մենք պետք է ընդունենք Քրիստոսի Անձին, ոչ թե Նրա մի մասնիկը: Մենք համբերատար Քրիստոսի կարիքն ունենք, որպեսզի Նա դառնա մեր աստվածային համբերությունը: Համբերություն ասելով՝ նկատի չունենմ բնավորության գիծ, Նրանից

մի մասնիկ, ո՛չ, մենք պետք է ընդունենք հենց Քրիստոսի Ան-
ծին, որպեսզի համբերությունն ապրի մեր մեջ անհատապես: Ինձ
պետք չէ իմ մարդկային համբերությունը, որը պետք է լինի Հի-
սուսի խաչին: Ես պետք է ապրեմ իմ կյանքը՝ ամեն օր ուրանա-
լով եսապաշտ կյանքը, այդ թվում՝ մարդկային համբերությունը,
որովհետև այն լի է եսասիրությամբ, եսակենտրոնությամբ և
հպարտությամբ: Ես ամեն օր համբերատար Քրիստոսի կարիքն
ունեմ, որպեսզի ամեն օր, ամեն վայրկյան Նա անձամբ ապրի իմ
մեջ: Ես պետք է ընդունեմ Քրիստոսին ամեն կարիքի համար: Այս
ճշմարտությունը շատերը դեռ չեն բացահայտել Սուրբ Հոգուց՝
սրբացման Հոգուց: Նրանց եսապաշտ կյանքը կամ էությունը
դեռևս ընդունելի է իրենց: Մարդկային էության վերաբերյալ տրա-
մաբանական բացատրություններն ավելանում են, Հոգու հանդի-
մանությունները բացակայում են, որովհետև մենք չենք փնտրում
Նրան: Մենք դեռ համարում ենք, որ մարդկային կյանքն ընդունե-
լի է մեզ և Աստծո համար, որովհետև չենք ճանաչում մեր մեղքե-
րը և դրանց չար մեղավորությունը: Անհամբերություն դրսևորելը
մեղք է: Մենք փրկված ենք և մտածում ենք, որ Նրա խաչի կա-
րիքն այլևս չունենք: Մարմնի մոլորությունն ավելանում է:

Ընդունել Քրիստոսին ամբողջությամբ՝ ամբողջությամբ ուրանալով եսապաշտ կյանքը:

Ինչպե՞ս է Աստված տեսնում մեր մարդկային էությունը: Ըստ
Աստծո՝ այն չափազանց մեղավոր է և չար: Սա այն ճշմարտութ-
յունն է, որին շատերը չեն հավատում: Առաջին հերթին ես պետք
է հավատամ դրան. «Որովհետև մարմնի խորհուրդը Աստծո դեմ
թշնամություն է, որովհետև Աստծո օրենքին չի հնազանդվում և
չի էլ կարող» (Հռոմ. 8.7), «Որովհետև գիտեմ, որ **ինձանում (այ-
սինքն՝ իմ մարմնում) մի բարի բան չի բնակվում**. քանզի կա-
մենալը կա ինձ մոտ, բայց բարին անելը չեմ գտնում» (Հռոմ. 7.18),
«Որովհետև **մարմինը ցանկանում է հոգուն հակառակ**, և հոգին՝
մարմնին հակառակ, և սրանք իրար հակառակ են...» (Գաղ. 5.17):
Պատվիրանները կամ Օրենքը հայտնում են մեզ երկու կարևոր
բան մեր մասին. (1) մեր մեղքերը (Հռոմ. 3.20, 7.7) և (2) մեր գոր-
ծած մեղքերի չափազանց մեղավորությունը: «...Որ մեղքն ավելի ևս
մեղավոր լինի պատվիրանի ձեռքով» (Հռոմ. 7.13):

Արդյո՞ք հավատում եմ, որ Աստծո կամքը չանելը մեղք է: Շատ
քրիստոնյաներ կպատասխանեն՝ այո՛: Արդյո՞ք ընդունում եմ այն
բաները, որոնց, ասում եմ, որ հավատում եմ: Ինչո՞ւ չեմ տեսնում,
որ սրտացավության, բարության, խոնարհության, հեզության և
համբերության, միմյանց հանդեպ հանդուրժողականության, միմ-
յանց ներելու կամ միմյանց ընդունելու բացակայությունը մեղք է,

որի համար պետք է ապաշխարել: Աստված պահանջում է մեզ-նից դրսևորել այս հատկանիշները: Ինչհի չեմ գնում Աստծո մոտ, որպեսզի խոստովանեմ այս ամենը չանելու կամ այսպես չապրե-լու համար: Ինչհի է ինձ համար այսքան դժվար օրվա վերջում իմ մեղքերը հիշելը: Ինչպե՞ս կարող եմ զգայուն լինել Աստծո հանդեպ, երբ զգայուն չեմ այն մեղքերի նկատմամբ, որոնք գործում եմ: Չեմ կարող: Իմ մեղքերի նկատմամբ զգայունակության պակասը նշա-նակում է, որ ես չունեմ սրտի հաղորդություն Աստծո հետ: Այն ամենը, ինչ կթվարկեմ, մեղքեր են՝ անտարբերություն, անզգա-յունակություն, կոպտություն, դաժանություն, ստորություն, անբար-յացակամ վերաբերմունք, հպարտություն, ամբարտավանություն, անհամբերություն, նախանձ, խանդ, բարկացկոտություն, մարդ-կանց ընդունելու անկարողություն և հոգատարության բացակա-յություն, անհանդուրժողականություն, անհաշտություն, չներում, շահասիրություն, հիշաչարություն, սեփական սխալներն ընդունելու անկարողություն, մշտապես քննադատող և դատապարտող վերա-բերմունք, ուրիշներին իշխելու հակվածություն, եսասիրություն և եսակենտրոնություն մեր արձագանքներում: **Ամեն անգամ, երբ իմ վարքագծում, իմ փոխհարաբերություններում չեմ ցուցաբերում ազապե սեր, ես մեղք եմ գործում Աստծո և մարդկանց դեմ:** Ես պետք է հավատամ սրան, սա առաջին քայլն է:

Ես պետք է հավատամ և տեսնեմ իմ մեղքերը և իմ էության չափազանց մեղավորությունը: Աստված ներում է, երբ խոստո-վանում ենք Նրան: Փառք Աստծուն Իր ողորմության և սիրո հա-մար: Բայց ապաշխարության երկրորդ մասը ժամանակ է պա-հանջում, և Սուրբ Հոգին դեռևս աշխատանք ունի մեր մեջ անե-լու: Ես պետք է տեսնեմ երկուսի՝ իմ մեղքերի և իմ մեղավոր էության անիրավությունը և չարությունը: **Ես պետք է փնտրեմ Աստծո հայտնությունը և հանդիմանությունը** սրա վերաբերյալ: Նա-խորդ գլուխներից մեկում տվեցի հետևյալ հարցերը և զգում եմ, որ պետք է քննարկենք դրանք կրկին.

- Արդյո՞ք իմ կոպտությունը կամ բիրտ խոսքերը չափազանց մեղավոր են թվում ինձ:

- Արդյո՞ք իմ քննադատելը և դատապարտելը չափազանց մե-ղավոր են թվում ինձ:

- Արդյո՞ք իմ նախանձելը չափազանց մեղավոր է թվում ինձ:

- Արդյո՞ք իմ սովորական ինքնազբաղվածությունը չափազանց մեղավոր է թվում ինձ:

- Արդյո՞ք մարդկանց առջև իմ պարծենալը չափազանց մեղա-վոր է թվում ինձ:

- Արդյո՞ք իմ համեստության պակասը չափազանց մեղավոր է թվում ինձ:

- Արդյո՞ք իմ հեզության և համբերության պակասը չափազանց մեղավոր է թվում ինձ:

- Արդյո՞ք իմ՝ ուրիշներին չներելը չափազանց մեղավոր է թվում ինձ:

- Արդյո՞ք իմ՝ կես ճշմարտություն (սուտ) ասելը չափազանց մեղավոր է թվում ինձ:

- Արդյո՞ք իմ ասելությունը, վիճաբանությունը կամ հիմար խոսակցությունը չափազանց մեղավոր են թվում ինձ:

Հավատքով խոսե՞ք և հոչակե՞ք Աստծո ճշմարտությունը ինքներդ ձեզ: Ասե՞ք. «Անբարյացակամությունը և հոգատարության բացակայությունը չափազանց մեղավոր և չար են: Ես կխոստովանեմ և կապաշխարեմ, երբ անբարյացակամ լինեմ»: Արե՞ք սա ամեն օր և ամեն անգամ, երբ ձեր ուշադրությունը զբաղված չէ: Դուք բաց կլինեք ընդունելու հանդիմանություն ձեր անբարյացակամ վարքագծի չար մեղավորության համար: Սովորե՞ք խոսել և հոչակել Աստծո ճշմարտություններն ինքներդ ձեզ: Ճշմարտությունը բերում է զորություն: «Այս Իմ խոսքերը ձեր սրտի և հոգու մեջ դրե՞ք... նրանցից խոսես...» (Բ Օրին. 11.18, 19): Այն բերում է ձեզ Հոգու հանդիմանությունը: «Տե՛ր, Քո լույսով բացահայտիր ինձ իմ անձի մեղավորությունը»:

«Ով որ ուզի իր անձն ապրեցնել, կկրցնի նրան, և ով որ կորցնի նրան, կապրեցնի նրան» (Դուկ. 17.33): Աստծո այս պահանջը օրինական և շատ լուրջ է: ***Երբ չկա սաստիկ փափագ ամբողջովին հեռու մնալու մեղանչելուց, չկա ուժգին ցանկություն Քրիստոսի հետ հնարավոր մտերիմ միության համար, եսապաշար կյանքն ուրանալու կամ Քրիստոսի հետ խաչվելու մտքը չի կարող մտնել սիրո:***

Հաճախ մենք թաքնվում ենք Աստծո սերն արտահայտող խոսքերի հետևում, որպեսզի լավ զգանք և շարունակենք թաքնվել ապաշխարելու մեր պատասխանատվությունից: Ահա այդ խոսքերից մի քանիսը. «...եթե Աստված մեր կողմն է, ո՞վ է մեզ հակառակ» (Հռոմ. 8.31), «Եվ ո՞չ բարձրություն, ո՞չ խորություն, և ո՞չ մեկ ուրիշ ստեղծված բան չի կարող մեզ բաժանել Աստծո սիրուց, որ մեր Տե՛ր Հիսուս Քրիստոսում է» (Հռոմ. 8.39), «Ուրեմն հիմա դատապարտություն չկա Հիսուս Քրիստոսում լինողների համար...

Որովհետև կյանքի հոգու օրենքը Հիսուս Քրիստոսում ազատեց ինձ մեղքի և մահի օրենքից» (Հռոմ. 8.1,2): Հոգևորապես վտանգավոր է թաքնվել Աստծուց և Նրա սիրո նկատմամբ ձեր պատասխանատվությունից: Խոստովանությունը և ապաշխարությունն էական են և անհրաժեշտ Քրիստոսին հավատացողի համար:

Քրիստոսը տրվել է ոչ թե պարզապես մեր մեջ բնակվելու, այլ մեր մեջ լիովին ապրելու համար: Շատերը կարծագանքեն սրան՝ ասելով. «Իհարկե, ես բաց եմ դրա համար: Ես ուզում եմ, որ դա տեղի ունենա իմ մեջ»: Քրիստոսն իսկապես կարող է ապրել, դժվարությունը Նրա կողմից չէ, Նա կարող է ապրել Իր կյանքը, **եթե** մենք համաձայնենք և ամեն օր պատրաստ լինենք խաչված պահելու եսապաշտ կյանքը կամ մարդկային էությունը՝ հավատալով դրան ոչ թե օրը մեկ անգամ, այլ ամեն վայրկյան: Եկեք հավատանք և հոչակենք ամեն օր, որ Քրիստոսի լիությունն ապրում է մեր մեջ՝ որպես Իր զավակների: Եկեք համարձակվենք հավատալ և հուսալ, որ մեր փառավոր Տերը և Փրկիչը բնակվում է մեր ներսում: Նա ամեն շնորհքներն ավելացնում է մեզնում, որպեսզի ունենանք բավականություն անհրաժեշտության դեպքում և կարողանանք ավելանալ ամեն բարի գործի մեջ (Բ Կորնթ. 9.8): Եկեք հավատանք, որ Քրիստոսը մեր մեջ Աստծո շնորհքի հարստությունն է: **Նրա մշտապես ներկա զորությամբ մենք ի վիճակի ենք ուրանալու մեր անձը:** Մաքրության և ժուժկալության, ջերմեռանդ աղոթքի և Սուրբ գրք հասկացողության, մարդկանց հանդեպ սիրո և Աստծո հանդեպ ջերմեռանդության, խոնարհության և հեզության, մեղմության և բարության շնորհքը Քրիստոսի մեջ է, այդ ամենը մերն է Նրա Անձում: **Նա է մեր կյանքը, ընդունեք այս ճշմարտությունը հավատալով:** «Եվ ամեն, ով որ կենդանի է և Ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի. հավատում ես սրան» (Հովհ. 11.26): Քրիստոսը նույն հարցը տալիս է մեզ: Նա ասաց. «Ես եմ հարությունը և կյանքը»: Միայն թե համարձակվեինք մշտապես հավատալ այս ճշմարտությանը, ըստ արժանվույն գնահատել այն, հավատքով հիմնվել դրա վրա և **թույլ տալ, որ այն ապրի՝ Հոգու զորությամբ ամեն վայրկյան ուրանալով մեր մարմինը:** Մենք գերբնական զորության կարիք ունենք մարմինն ուրանալու համար, ինքներս չենք կարող դա անել:

«Նոր մարդը» կարող է ապրել միայն այն դեպքում, եթե մահվան մատնվի եսապաշտ կյանքը: Ես մնում եմ Քրիստոսի մեջ, և Քրիստոսը մնում է իմ մեջ: Ես միացած եմ Նրան: Սակայն հնարավոր չէ մնալ Քրիստոսի մեջ և միաժամանակ մնալ եսապաշտ

կյանքի մեջ: Ոչ ոք երկու տիրոջ չի կարող ծառայել: Սա մեր մեծագույն կարիքն է, որը շատերին չի հետաքրքրում, որովհետև գերակշռում է ինքնաբավությունը, իսկ ինքնապավինումն ու ինքնավստահությունը չեն դիտվում որպես չարիք: Էսաչին անձնատուր լինելը բացակայում է, շատերը չեն ձգտում դրան: Մենք հուսահատորեն կարիք ունենք մեր սրտում տեսնելու մեր եսապաշտ կյանքի՝ մեր էության չափազանց մեղավորությունը և չարիքը: Մենք պետք է որոշում կայացնենք և փնտրենք աստվածային հայտնություն մեր «ես»- ի մասին: Մենք աստվածային հասկացողության, հանդիմանության և Սուրբ Հոգու զորության կարիքն ունենք եսապաշտ կյանքն ուրանալու, հետևաբար այն մահվան մատնելու համար: Եթե ձեր հանդիմանությունն Աստծուց է, Հոգին անձնապես կկիրառի այն ձեր սրտում, և ձեր անձնուրացումը ոչ թե տեղի կունենա շաբաթը կամ ամիսը մեկ անգամ, այլ կդառնա ձեր առօրյա կյանքի մասը: Ինդրեք երկուսը՝ Սուրբ Հոգու լույսը և զորությունը, հատկապես այս շարունակական ներքին աշխատանքի համար և համբերատար սպասեք Տիրոջը, որպեսզի ձևավորի այն ձեր սրտում: Փնտրեք այն, երբ մենակ եք Աստծո հետ: Մենք պետք է ազատագրվենք եսապաշտ կյանքից, Քրիստոսը խաչի վրա ցույց է տալիս մեզ ճանապարհը: Եսապաշտ կյանքն առանձնահատուկ հիվանդություն չէ, որից պետք է բժշկվել, այն մահվան կյանք է: Ես նոր կյանքի, նոր արարչության կարիք ունեմ՝ դա փոխարինելու համար: Մեր գործն է համաձայնել, թույլ տալ և հավատալ դրան:

Մի ասեք՝ «Ես երբեք չեմ կարողանա անցնել սրա միջով», այլ ասեք՝ «Ես չեմ կարող, բայց Քրիստոսն իմ մեջ է, և Նա կարող է»: Բոլոր փորձությունները նախատեսված են հայտնելու և բացահայտելու ներքնակ Քրիստոսին՝ որպես լիարժեք Անձի, մինչև որ Քրիստոսը բառացիորեն ձևավորվի մեր մեջ, և Նրա կյանքը լիովին դրսևորվի մեր մահկանացու մարմնում (Բ Կորնթ. 4.10), և «ես»- ը մնա Հիսուսի խաչին ամբողջ օրը:

Սիրելի Քրիստոսի աշակերտ, սովորեք ամեն օր մենակ լինել Աստծո հետ, ամեն օր որոշ ժամանակ հանգիստ և լուռ մնացեք Աստծո առջև, նստեք Աստծո առջև՝ լուռ երկրպագելով և մտորելով, և խնդրեք, որ Սուրբ Հոգին հայտնի ձեզ Քրիստոսի բնակության ճշմարտությունը: Դուք ձեր սրտում այս անձնական հայտնության կարիքն ունեք: Քրիստոսի կյանքը նրա համար է, որ փոխարինի ձեր եսապաշտ կյանքին, ձեր էությանը, որպեսզի Նա կարողանա լինել ձեր կյանքը («Ես եմ կյանքը»): Միայն հավատացեք: Հնարավորինս հաճախ հոչակեք ինքներդ ձեզ այն, ինչին հավատում եք: Ինդրեք, որ Աստծուն հաճելի լինի հայտնել ձեզ, թե ինչ է այս

խորհրդի փառավոր ճոխությունը (Կող. 1.27): «Զգիտե՛ք, որ դուք Աստծո տաճար եք ...Աստծո տաճարը սուրբ է, որ դուք եք»: Համարե՛ք ձեզ Աստծո տաճար. դուք Քրիստոսի մեջ եք, Նրա կյանքը պետք է դրսևորվի ձեր մեջ: Հավատացե՛ք սրան և ապրե՛ք սրանով: Ապրե՛ք սրանով՝ «ես»-ը պահելով խաչին Հոգու զորությամբ. Նա սպասում է, որ անեք սա ամեն օր, ամեն վայրկյան:

Հին մարդը ներքնակ Քրիստոսին վայելելու ամենամեծ արգելքն է: Հին մարդը մեր ամենօրյա մեղքերի անձնական խոստովանության և ապաշխարության մահացու թշնամին է: Արթուն եղեք և մի՛ պղծեք Աստծո տաճարը: Երբ մեղք եք գործում, շտապե՛ք Հիսուսի մոտ խոստովանելու և ապաշխարելու և, այդպիսով, սրբվելու: Սովորե՛ք ատել ձեր մեղքերը՝ Սուրբ Հոգուն հնազանդվելով, ատե՛ք ձեր մեղքի էությունը, ձեր հին մարդուն: Այս ատելությունը ինքնաբերաբար ի հայտ չի գալիս, այն ձևավորվում է հանձնված սրտում, որը կամենում է դա: «Եթե մեկը չատի իր անձը,- ասաց մեր Տերը,- չի կարող Իմ աշակերտը լինել (Ղուկ. 14.26): Անձը եսապաշտ կյանքի նստավայրն ու կենտրոնն է: Այն անհանգիստ ջանքերի և գործողությունների, ընտրությունների և որոշումների, Աստծո առաջնորդության փոխարեն անկախ և գլխավոր լինելու մշտական պայքարի կենտրոնն է: Սա հին մարդն է և ներքնակ Քրիստոսին վայելելու մեծագույն արգելքը: Հին մարդը պետք է ուրանալ, և դա պետք է անել ամեն օր, ամեն վայրկյան, որպեսզի Քրիստոսի կյանքը՝ հարության կյանքը, ապրի և իշխի իմ մեջ: Աղոթե՛ք Տիրոջը, որ Իր Հոգով հայտնի ձեզ եսապաշտ կյանքի դրսևորումները ձեր մեջ: Մեզ անհրաժեշտ է հենց Աստծուց իմանալ, թե հատկապես ինչը պետք է ուրանանք: Ամեն օր մարմինն ուրանալով՝ պետք է ձևավորենք եսապաշտ կյանքի ցանկություններին «ոչ» ասելու սովորություն: Եթե հավատքով մեր էությունը մատնենք մահվան ամեն անգամ, երբ մեղքը մոտենա, եթե վերցնենք մեր խաչը և ուրանանք եսապաշտ կյանքը ու հետևենք Տիրոջը, ավելի ու ավելի կգիտակցենք, որ մեզ տիրում է ներքնակ Քրիստոսը: Քրիստոսի բնակության գիտակցումը չի գալիս այն պատճառով, որ ես ցանկանում եմ դա: Ես պետք է սպասեմ Աստծուն և պատրաստակամ լինեմ ապրելու Քրիստոսի խաչի կյանքով: Մտե՛ք սրտի անձնական հաղորդության մեջ ձեր Տիրոջ հետ, որպեսզի սովորեք Սուրբ Հոգուց՝ ձեր Ուսուցչից, ապրել Քրիստոսի խաչի կյանքով: Մեզ հարկավոր չէ աստվածաշնչյան ճշմարտությունների կուտակված հավաքածու, մենք բավականաչափ զբաղվել ենք այդ անպտուղ աշխատան-

քով: Մենք խաչյալ Կյանքի կարիքն ունենք, որը կարող է ապրել Աստծո այս սուրբգրային ճշմարտություններով:

Միություն Քրիստոսի հետ. հոգևոր մտածելակերպ

Մենք ձեռք ենք բերում հոգևոր մտածելակերպ կամ սուրբ հատկանիշներ և կարողություններ Քրիստոսի լիությունից Նրա հետ հաղորդակցության և սրտի հաղորդության միջոցով: Այս հաղորդակցության համար պետք է լինենք Քրիստոսի մեջ և ունենանք Քրիստոսին մեր մեջ, ունենանք Նրա հետ միության կյանք: Մեր նոր էությունը և սրբությունը սկզբնավորվում են Քրիստոսի մեջ և Նրանից փոխանցվում են մեզ Նրա ներքնակության միջոցով, և սա հնարավորություն է տալիս, որ Քրիստոսի հետ ապրենք այս միությունը:

Սիրելի՛ Քրիստոսի աշակերտ, ահա «Քրիստոսի մեջ լինելու» ճշմարտությամբ ապրելու մեր մեծագույն խոչընդոտը. մենք չենք կարող առաջացնել այս սուրբ մտածելակերպը կամ վերաբերմունքը մեր մեջ: Մենք չենք կյանքը, Քրիստոսն է կյանքը: Սա մեր աշխատանքը չէ: Մենք նույնիսկ չենք աշխատում Քրիստոսի հետ՝ սա իրականացնելու համար: Սա արդեն պատրաստ է և արդեն մեր մեջ է՝ ընդունելու համար: Մեր թյուրմբռնումն այն է, որ մենք մտածում ենք, թե պետք է ձևավորենք այս հատկանիշները մեր սրտում, այնուհետև դրսևորենք դրանք: Ուստի մենք վերցնում ենք ցանկացած միտք, որ մեր կարծիքով մղում է մեզ աստվածապաշտության, և հրում ենք այն մեր սրտի մեջ ու պահում այնտեղ: Այնուհետև ջանասիրաբար աշխատում ենք մեր սրտից դուրս բերել ճիշտ որակները: Այսպես երբեք չի գործի: Մեղքը սպանելու և մեզ դեպի սրբություն տանելու միակ ուղին մեր մեջ բնակվող Քրիստոսի լիությունից նոր էություն ստանալն է և դրանով ամեն օր ապրելը, ինչպես նաև մեր հին էությունը խաչին մահացած պահելը՝ ամեն օր հավատքով ուրանալով այն: Մենք չենք գործում ամենօրյա կտրվածքով, ուստի և ապրում ենք պարտության մեջ: **Միայն նոր էությունը կարող է ապրել Հիսուսի կյանքը, որը մեր մեջ է:** Օրինակ՝ մենք չենք կարող ինքներս սովորել ճշմարիտ խոնարհություն և թե ինչպես լինենք Հիսուսի պես խոնարհ: Մեր լավագույնն անելու այս ճանապարհը բերում է միայն մարդկային արդյունքներ, որոնք պարունակում են թաքնված եսասիրություն և գաղտնի հպարտություն. մենք տեսնում ենք, թե ինչպես է այս մոտեցումը կիրառվում աշխարհում: Մենք անում ենք լավագույնը՝ խոնարհվելու համար, նաև խնդրում, որ

Աստված օգնի մեզ դրանում: Բայց այսպես չի լինում: Խոնարհությունը, որ սովորում եմ այս ճանապարհով, պատկանում է խաչին, այն ներկայացնում է կրոնական մարմնի աշխատանքը և նպատակ ունի հետ պահելու ինձ Քրիստոսի կյանքն ապրելուց: Խոնարհությունը Հիսուսի իրական կյանքն է, ոչ թե անհատական հատկանիշ, որ վերցնում ենք Նրանից և ավելացնում մեզ: Քրիստոսն իմ մեջ է Իր լիությամբ, Նրա ամբողջ կյանքն իմ մեջ է, որպեսզի դառնա իմ կյանքը ամեն ինչում: Նրա խոնարհությունն իմ մեջ է, որովհետև Նա իմ մեջ է: Արդյո՞ք ձեր սիրտը փնտրում է խոնարհություն, ձգտում է սիրելու և ծառայելու ուրիշներին անձնագրի սիրով և խոնարհությամբ: Հավատքով ընդունե՞ք Խոնարհ Քրիստոսին, որն ապրում է ձեր նոր էության մեջ, և **հավատալով ապրե՞ք նոր կյանքը՝** նոր արարչությունը: Դուք պետք է անեք սա ամեն օր և ամբողջ օրը: «Ով որ հավատա Ինձ, կապրի»։ Բայց կա մեկ պայման, միայն մեկ ճանապարհ՝ սա ճշմարտությամբ ապրելու համար. **ապրե՞ք** ամեն օր հավատքով՝ **ուրանալով** և խաչին մահացած պահելով **«ես»-ը՝** հին էությունը: Մենք չենք կարող մեր մեջ առաջացնել Աստծո սուրբ առաքինությունները և սրբությունը: Մենք պետք է ապրենք այն ԿՅԱՆՔԸ, որը տրված է մեզ ապրելու՝ ընդունելով Քրիստոսին Իր լիությամբ: «Ես Քրիստոսի հետ խաչված եմ... ոչ թե այլևս ես, այլ Քրիստոսն է կենդանի ինձանում» (Գաղ. 2.19, 20): **Քրիստոսի կենդանի լինելը ինձանում կախված է իմ էության խաչված լինելուց. այլևս ես չեմ ապրում:** Հին էությունը պետք է գամվի խաչին և մնա այնտեղ՝ մշտապես և ամեն վայրկյան մերժվելով Հոգու ներքնակ զորությամբ: Ինչո՞ւ: Որպեսզի մշտապես ընդունեմ Քրիստոսին և ԱՊՐԵՄ ՆՐԱՆՈՎ ամեն վայրկյան: Ես պետք է ապրեմ այսպես ամեն օր և ամբողջ օրը, և Քրիստոսն ավելի քան պատրաստակամ է ապրելու իմ մեջ: Եթե ես բավարարված եմ իմ կյանքով, երբեք չեմ գնա Քրիստոսի մոտ՝ Նրա կյանքով ապրելու համար: Ես երբեք խաչի կարիքը չեմ ունենա:

Եթե չկա միություն խաչի վրա, չի կարող լինել միություն Քրիստոսի հետ, բնակություն Քրիստոսի մեջ: Իմ միությունը Քրիստոսի հետ Նրա խաչի վրա մեկանգամյա իրադարձություն էր, որ տեղի ունեցավ ապաշխարության ժամանակ, բայց սա երկու հազար տարվա իրողություն է, որը պետք է ապրել ամեն օր: Ապրել՝ ամեն վայրկյան հավատալով, ապրել իմ նոր էության մեջ բնակվող Քրիստոսի զորությամբ: Հավատում եք, որ աստվածային զորությունն ապրում է ձեր մեջ Քրիստոսով:

Քրիստոսի և հավատացյալի միությունը ցույց է տրված հետև-

յալ խոսքերում. «Այն օրը դուք կճանաչեք, որ Ես Իմ Հոր մեջ եմ, և դուք՝ Ինձանում, և Ես՝ ձեզանում» (Հովհ. 14.20), «Որ ամենքը եկ լինեն, ինչպես Դու, Հայր, Ինձանում, և Ես՝ Քեզանում, որ նրանք էլ Մեզանում մեկ լինեն. որ աշխարհը հավատա, թե Դու ուղարկեցիր Ինձ: Եվ այն փառքը, որ Ինձ տվեցիր, նրանց տվեցի, որ մեկ լինեն, ինչպես Մենք էլ մեկ ենք: Ես՝ նրանցում, և Դու՝ Ինձանում, որ կատարյալ լինեն միությունում, որպեսզի աշխարհը գիտենա, թե Դու ուղարկեցիր Ինձ և սիրեցիր նրանց, ինչպես Ինձ սիրեցիր» (Հովհ. 17.21- 23), «Կացե՛ք Ինձանում, և Ես՝ ձեզանում. ինչպես որ ճյուղն իր անձից չի կարող պտուղ բերել, եթե որթում չմնա, այսպես էլ դուք, եթե Ինձանում չմնաք: Ես որթն եմ, դուք՝ ճյուղերը. նա, որ Ինձանում մնում է, և Ես՝ նրանում, շատ պտուղ է բերում. որովհետև առանց Ինձ չեք կարող ոչինչ անել» (Հովհ. 15.4,5), «Եվ ամեն բան հնազանդեցրեց Նրա ոտքերի տակ և Նրան գլուխ դրեց եկեղեցուն՝ բոլոր բաների վրա, որ է Նրա մարմինը, այն լրումը, որ ամենն ամենի մեջ լրացնում է» (Եփես. 1.22, 23), «Եվ նա, որ Տիրոջն է հարում, մեկ հոգի է *Նրա հետք*» (Ա Կորնթ. 6.17):

Քրիստոսի հետ այս միությունը ծածկված է խորհրդով. «Եվ հայտնապես մեծ է աստվածապաշտության խորհուրդը...» (Ա Տիմ. 3.16): Այս միությունը հավատացյալին կատարյալ չի դարձնում սրբության կամ աստվածապաշտության մեջ: **Աստված հավատացյալին դարձնում է սուրբ միայն այնքան ժամանակ, քանի դեռ Քրիստոսն ազատորեն բնակվում է նրա մեջ:** Այս միությունը հասկանալը դրա յուրացման բանալին է: «Եվ Նա է մարմնի, այսինքն՝ եկեղեցու գլուխը, որ Նա է սկիզբը, մեռելների անդրանիկը, որպեսզի ամեն բանի մեջ Նա լինի առաջինը: Որովհետև Աստված հաճեց, որ Նրանում *Աստվածության* բոլոր լիությունը բնակվի» (Կող. 1.18,19), «Եվ Նրա լիությունից մենք ամենքս առանք շնորհք շնորհքի տեղ» (Հովհ. 1.16), «Որով դուք թլփատվեցիք անձեռագործ թլփատությունով, մարմնական մեղքերի մարմինը մերկանալով Քրիստոսի թլփատությունով. թաղվելով Նրա հետ մկրտությունում, որով հարություն էլ առաք Նրա հետ Աստծո ազդեցության հավատքով, որ հարություն տվեց Նրան մեռելներից: Եվ ձեզ, որ մի ժամանակ մեռած էիք մեղքերում և ձեր մարմնի անթլփատությունում, Իր հետ կենդանացրեց՝ բոլոր մեղքերը ձեզ շնորհելով» (Կող. 2.11- 13), «Օրհնյալ է Աստված և մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը, որ մեզ օրհնեց ամեն հոգևոր օրհնությունով երկնավոր բաներում Քրիստոսով» (Եփես. 1.3): Այս բոլոր օրհնությունները, որ տալիս է Աստծո

շնորհքը, տրվում են մեզ ի դեմս Քրիստոսի՝ Նրա հետ միության մեջ, մինչ մենք երկրի վրա ենք: Այսպիսով՝ այն ամենը, ինչը մեզ աստվածապաշտ և սուրբ է դարձնում, պետք է ընդունվի անմիջապես Քրիստոսից, հակառակ դեպքում ընդհանրապես չպետք է ընդունվի: Մենք չպետք է ապրենք երկնքում, այլ երկնային կյանքը պետք է ապրենք երկրի վրա մարդկանց հետ ազապե սիրով և խոնարհությամբ:

«Եթե ասենք, թե հաղորդություն ունենք Նրա հետ, և խավարի մեջ ման գանք, սուտ ենք ասում և ճշմարտությունը չենք անում: Բայց եթե լույսի մեջ ման գանք, ինչպես Նա է լույսի մեջ, հաղորդություն ունենք իրար հետ, և Նրա Որդի Հիսուս Քրիստոսի արյունը մեզ սրբում է ամեն մեղքից» (Ա Հովհ. 1.6,7), «Եվ հագեք նոր մարդը, որ նորոգված է գիտությունով իր ստեղծողի պատկերի պես» (Կող. 3.10), «...Աստված հավիտենական կյանք տվեց մեզ, և այս կյանքը Նրա Որդու մեջ է: Ով որ Որդուն ունի, նա կյանքն ունի, և ով որ Աստծո Որդուն չունի, կյանքը չունի» (Ա Հովհ. 5.11, 12), «Եվ կենդանի եմ, ոչ թե այլևս ես, այլ Քրիստոսն է կենդանի ինձանում, և ինչ որ հիմա կենդանի եմ մարմնով, Աստծո Որդու հավատքով եմ կենդանի, որ ինձ սիրեց և Իր անձը ինձ համար մատնեց» (Գաղ. 2.20):

Հետևաբար «Նոր մարդուն հագնեք, որ Աստծո պատկերի պես ստեղծված է՝ ճշմարտության արդարությունով և սրբությունով» (Եփես. 4.24): Նոր մարդու ամբողջ լիությունը Քրիստոսիմեջ է: Այն հոգևոր էությունը և կյանքը, որոնցով սրբությամբ ապրում ենք Աստծո համար, Քրիստոսի մեջ են: Մենք չենք կարող ունենալ դրանք, մինչև չմիանանք, չհարենք Նրան, և Նա չքնակվի մեր մեջ: Հին մարդը խաչվեց Քրիստոսի հետ, որպեսզի մեր հին էությունը կործանվի: Այն կործանվում է, երբ ամեն օր մասնակից ենք լինում խաչի վրա նրա մահվանը, Քրիստոսի մահվանը (Հռոմ. 6.1- 11, Հռոմ. 8.3,4): Խաչի վրա Քրիստոսի հետ միությամբ մենք կարող ենք մասնակից լինել Նրա հարության կյանքին և այսպիսով ապրել մարդկանց հետ ճշմարիտ սիրով, խոնարհությամբ և սրբությամբ: Այս ճշմարտությունները, սիրելի Հիսուսի աշակերտ, կարող են դառնալ անձնական ճշմարտություններ, եթե սրտանց հավատաք դրանց և ամեն օր հավատքով ապրեք խաչի մոտ:

Հավատքը գիտի, թե ինչ է ավետարանը խոստանում, ինչ է ավետարանը տալիս: Հավատքը կառչում է Քրիստոսից և Նրա խաչից, լիովին ընդունում է Նրան Իր ամբողջ լիությամբ: Մեր պատրաստակամությունը և համաձայնությունը դուռ են բացում հավատքի համար: Հավատքն ընդունում է այս ամենը Քրիստոսի

հետ միության և հաղորդության միջոցով: Ճշմարիտ հավատքը կարող է ապրել այնքան ժամանակ, քանի դեռ մարմինը մնում է խաչված՝ խաչված Քրիստոսի հետ ամեն օր:

ՄՏՈՐՈՒՄ Աստծո հետ

1. Ինչ է նշանակում լինել Քրիստոսի մեջ:
2. Ինչպե՞ս է Քրիստոսի մեջ լինելը կապված ձեր կյանքի համար Աստծո հիմնական ակնկալիքների հետ:
3. Ինչո՞ւ է անհրաժեշտ քննել մեր սրտերը: Դուք անո՞ւմ եք դա:
4. Մասնավորապես ի՞նչ եք անում ձեր Տեր Աստծուն հաճեցնելու համար:
5. Ո՞րն է ձեր ամենօրյա հոգևոր աշխատանքը: Բացատրե՛ք:
6. Արդյո՞ք հարության կյանքն ապրում են երկրի վրա: Ի՞նչ է դա: Ինչպե՞ս են ապրում:

Գլուխ 5. Խաչը, եսապաշտ կյանքը և ներբնակ Սուրբ Հոգին

Այս գլուխն անդրադառնում է հետևյալ հարցերին. Ի՞նչ կատարվեց ինձ հետ Հիսուս Քրիստոսի խաչելության ժամանակ, ինչպե՞ս է Աստված ազատում ինձ ինձնից, որքան՞ իրական է «ես»-ից ազատումը, ինչպե՞ս կարող եմ իմանալ՝ արդյո՞ք դա իրական է, ի՞նչ է անձնուրացությունը կյանքում, ո՞րն է խաչի և Հոգու դերը այս անձնուրացման մեջ, ինչպե՞ս ենք ընդունում Քրիստոսի լիությունից, ինչպե՞ս ավելի խորությամբ մասնակից լինել Քրիստոսի մահվանը:

Ո՞րն է խաչի նշանակությունը

Ի՞նչ կատարվեց ինձ հետ Հիսուս Քրիստոսի խաչելության ժամանակ: Որպես հավատացյալներ՝ մենք գիտենք, որ Հիսուս Քրիստոսը խաչի վրա զոհեց Իր անձը մեր և աշխարհի մեղքերի համար: Սակայն խաչն ունի մեկ այլ կարևոր նշանակություն: Հռոմեացիների 8.3, 4- ում ասվում է. «Աստված, Իր Որդուն ուղարկելով *մեղքի մարմնի նմանությունով* և *մեղքի համար*, մեղքին դատապարտեց մարմնում»: «Մեղքի համար»- ը վկայակոչում է մեր մեղքերի համար Հիսուսի փոխարինող մահը: «Մեղքի մարմնի նմանությունով»- ը վերաբերում է խաչին՝ որպես

մեր սրբացման: Աստված՝ ի դեմս Քրիստոսի, խաչին գամեց մեր մեղավոր մարմնի նմանությունը: Մեր մարմինը՝ մեր մեղքի էությունը, խաչվեց Հիսուսի հետ Նրա խաչին: Ես պետք է հավատամ սրան իմ մարմնի վերաբերյալ, այլապես չեմ կարողանա ճիշտ ձևով ապրել իմ փրկությունը: Ո՞րն էր մարմնի խնդիրը: Ահա Աստծո պատասխանը. «Որովհետև մարմնի խորհուրդը Աստծո դեմ թշնամություն է, որովհետև Աստծո օրենքին չի հնազանդվում և չի էլ կարող» (Հռոմ. 8.7): «Որովհետև գիտեմ, որ ինձանում (այսինքն՝ իմ մարմնում) մի բարի բան չի բնակվում. քանզի կամենալը կա իմ մոտ, բայց բարին անելը չեմ գտնում» (Հռոմ. 7.18): «Որովհետև մարմինը ցանկանում է հոգուն հակառակ, և հոգին՝ մարմնին հակառակ, և սրանք իրար հակառակ են, որ միգուցե այն, որ դուք կամենում եք, այն անեք» (Գաղ. 5.17):

Պողոս առաքյալի հայտարարությունը՝ «Քրիստոսի հետ խաչված եմ» (Գաղ. 2.19), վկայակոչում է մեր եսապաշտ կյանքը՝ մարմինը: Իսաչը իմ և Քրիստոսի միության վայրն է: Քրիստոսի մեջ ես գամված եմ խաչին: Քրիստոսի մեջ ես հասա իմ անձի վախճանին: Դարձի գալիս, խաչի մոտ ծնկելով՝ ես ընդունեցի Հիսուսի հետ միության դիրքը Նրա մահվան մեջ և իմ եսապաշտ կյանքը մահվան մատնեցի խաչին: Ինչ-որ առումով ես վերցրի իմ եսապաշտ կյանքը՝ իր մեղավոր ցանկություններով և կրքոտ ընտրություններով, իմ ինքնավստահությունը, ինքնապավիհությունը և ինքնահրճվանքը, իմաստության և սեփական ջանքերի միջոցով կատարելության ձգտումը, ուրիշներին դատելու և դատապարտելու սովորությունը, բամբասանքը և նախանձը, անփույթ և սիրուց զուրկ խոսքերն ու վերաբերմունքը, ես վերցրի այդ ամենը և իմ եսապաշտ կյանքին ասացի. «Դու պետք է մահանաս, իմ Աստված գամել է քեզ այդ խաչին: Ես դնում եմ քեզ այնտեղ իմ ընտրությամբ, իմ կամքով, իմ հավատքով: Գամվիր այնտեղ և մահացիր»: Դուք տեղյակ եք աստվածային այս վիրահատությունից: Շատերը տեղյակ չեն: Շատերն ապրում են՝ հավատալով, որ Աստված սրբացրել է իրենց մարմինը դարձի գալու ժամանակ:

Դարձի գալու այդ վճռական պահից հավատացյալն ուղղորդվում է շարունակելու ապրել՝ ամեն օր համարելով, որ իր եսապաշտ կյանքը՝ մարմինը, Հիսուսի խաչի վրա է: Շատ հավատացյալներ ապրում են՝ չհավատալով սրան և չանելով սա, նրանք անգիտակցաբար լսում են իրենց հին էությանը: Նրանք մտածում են, որ սա տեղի է ունենալու ինքնաբերաբար՝ առանց իրենց մասնակցության: Խոսքը պնդում է, որ մինչև մեր կյանքի վերջին օրը գիտակցաբար շարունակենք համարել և հավատալ,

որ մենք խաչված ենք Քրիստոսի հետ: Քրիստոսի մահն ընկած է իմ և իմ եսապաշտ կյանքի միջև: Եթե երբեք չեք հավատացել այս ճշմարտությանը կամ երբեք չեք վարվել այսպես, հիմա՛ սկսեք, նույնիսկ եթե լավ չեք հասկանում դա: Հասկացողությունը շուտով կգա: Ծնկի՛ իջեք Հիսուսի խաչի առջև և գիտակցե՛ք, թե ինչու է ձեր հոգևոր կյանքը ձախողվել: Դուք երբեք չեք հանձնվել և ձեր եսապաշտ կյանքը՝ ձեր հին էությունը, չեք հանձնել խաչին՝ այնտեղ, որտեղ Աստված ցանկանում է: Ձեր կամքով և համաձայնությամբ, սրտանց հավատալով միացե՛ք Քրիստոսի մահվանը: Հավատացե՛ք, որ սա ճշմարիտ է և իսկապես տեղի է ունեցել: Բայցևայնպես, այս ճշմարտությունն ամեն օր գիտակցաբար և շարունակ պետք է վերապրեք, հետևաբար ամեն օր մնացե՛ք Քրիստոսի մեջ Սուրբ Հոգու զորությամբ: Մենք կանդորադառնանք Քրիստոսի մեջ մնալու թեմային հաջորդ մի քանի գլուխներում:

Այս ճշմարտությունը շատերին սխալ է ներկայացվել: Փրկությունը կախված է ոչ միայն մեր մեղքերը հեռացնելու համար Քրիստոսին վստահելուց, այլև **մեր «ես»- ից**, մեր մարմնից՝ մեր կյանքի կենտրոնից ու անեծքից, մեզ ազատագրելու համար **Քրիստոսին վստահելուց**: Դուք հազար անգամ կլսեք, թե ինչպես են ձեզ ասում՝ խնայի՛ր քեզ, ինչպես Պետրոսն ասաց Հիսուսին: Բայց Հիսուսը պատասխանեց Պետրոսին. «Ընտան գնա, սատանա՛: Եթե մեկը կամենում է Իմ հետևից գալ, թող իր անձն ուրանա և իր խաչն առնի և Իմ հետևից գա»: Ամեն անգամ, երբ եսապաշտ կյանքը բարձրացնում է իր գլուխը, ձեր անձը մեռած համարեք դրան: Հավատացե՛ք սրան: Համարե՛ք, որ խաչը կանգնած է ձեր և եսապաշտ կյանքի միջև: Եսապաշտ կյանքի զորությունն ամբողջովին ոչնչացվել է խաչի վրա, բայց այն կարող է կյանքի կոչվել ձեր անհավատությամբ, անտարբերությամբ կամ անզգուշությամբ:

Մտորումներ Աստծո հետ

1. Ի՞նչ խաչվեց Հիսուսի հետ:
2. Ո՞րն է Հիսուսի խաչի նշանակությունը:

Սուրբ Հոգու դերը և խաչը

«Եթե Հոգով մարմնի գործերը սպանեք, կապրեք»: Նկատեցի՞ք ուղերձը: «Կապրեք», եթե ի՞նչ անեք: Ուրանաք մարմնի գործերը

Հոգու զորությամբ: Հավիտենական Հոգին, որ ապրում է ձեր մեջ, ընդդիմանում է ձեր և իմ անիծված եսապաշտ կյանքին: Ամեն օր համաձայնեք, հավատացեք և աղոթեք՝ ասելով. «Աստծո՛ւ Հոգի, լցրո՛ւ ինձ, լցրո՛ւ ինձ նորից, մաքրի՛ր ինձ եսապաշտ կյանքից, ընդդիմացի՛ր դրան, գործի՛ր դրա դեմ, պահի՛ր այն Քրիստոսի իշխանության ներքո՝ գամված Նրա խաչին, պահի՛ր այն այնտեղ ամեն ժամանակ»: Դուք պարզապես չեք ասում խոսքեր, որոնց կցանկանայիք հավատալ, այս խոսքերով ինքներդ ձեզ և սատանային հոչակում եք այն, ինչին հավատում եք: **Աստծո ճշմարտության այս հոչակումը միանշանակ անհրաժեշտ է**, այն լցնում է ձեր հավատքը, պահպանում է ձեր հոգևոր դիրքը և գործում է սատանայի դեմ. այն հաճախ պետք է բարձրաձայնել: Հոգին գործում է ամեն օր, ամեն վայրկյան, երբ ամենաքիչն են մտածում դրա մասին: Սուրբ Հոգին կանի դա: Սակայն Հոգին կարիք ունի, որ դուք մնաք Քրիստոսի մեջ ամեն օր և ուրանաք եսապաշտ կյանքը, երբ այն գլուխ է բարձրացնում: Հոգին մշտապես կտա զորություն ձեր անձնուրացման համար: Սակայն Նա սպասում է ձեր համաձայնությանը և պատրաստակամությանը, որպեսզի աշխատի ձեր մեջ ընդդեմ մարմնի՝ հին մարդու:

«Նույնպես էլ դուք ձեր անձերը մեղքին մեռած համարեք և Աստծուն՝ կենդանի մեր Տեր Քրիստոս Հիսուսի ձեռքով» (Հռոմ. 6.11): «... Ես Քրիստոսի հետ խաչված եմ... ոչ թե այլևս ես, այլ Քրիստոսն է կենդանի ինձանում...» (Գաղ. 2.19, 20): Սա մեր երկրնտրանքն է. մենք ուզում ենք վարվել Հոգով և հաճեցնել Աստծուն՝ միաժամանակ կենդանի պահելով մեր էությունը՝ եսապաշտ կյանքը: Մենք ծածկում և թաքցնում ենք մեր «ես»-ը: Սա մակերեսային աստվածապաշտություն է, ինքնարդարացում, որն Աստված ատում է: Սուրբ Հոգին սրբացման և սրբության Հոգի է: Ես պետք է փնտրեմ սրբացման Հոգուն, որպեսզի Նա հայտնի և բացահայտի ինձ եսապաշտ կյանքը, և պետք է սպանեմ այդ կյանքը: Հոգին ցույց կտա իմ սրտին, թե ինչպես են կամակորոթությունը և ինքնահաճեցումը խեղդել Քրիստոսի նպատակը, այն է՝ ներգրավել ինձ Իր հետ լիարժեք միության մեջ: Եթե փնտրում եմ, Սուրբ Հոգին հայտնում է իմ սրտին եսապաշտ կյանքի սոսկալի հետևանքները. այդ կյանքի թշնամությունը Քրիստոսի հանդեպ և Հոգու կյանքը խեղդելու գործությունը: Երբ խնդրում եմ և թույլ տալիս, որ Սուրբ Հոգին հայտնի եսապաշտ կյանքը, Նա ցույց է տալիս, թե որքան ամոթալի է իմ մակերեսային աստվածապաշտությունը: Նա ցույց է տալիս, որ իմ մակերեսային նվիրվածությունը Քրիստոսին իրականում ծաղրի է ենթարկում Նրան: Սուրբ Հոգին մեզ բերում է Աստծո ազապե սերը՝

Նրա անձնագրի սերը, և Նրա հեզությունը, որպեսզի մեր մեջ առաջացնի պատրաստակամություն՝ մահանալու «ես»- ին: Հոր Հոգին Քրիստոսի խաչի միջոցով մշտապես ներգործում, գրավում, սիրահետում և հետապնդում է մեզ Իր սրտացավ սիրով, որպեսզի մեր մեջ առաջացնի համաձայնություն՝ մահանալու մեր էության համար: Միայն սրտի հաղորդությունը Քրիստոսի ազապե սիրո հետ և իմ մեջ այս ազապե սիրո ուժգնացող խորությունը կարող են ստիպել ինձ Հոգու զորությամբ պատրաստ լինելու ամեն օր մահանալու:

Ճշմարտության Հոգին ցանկանում է իմ մեջ առաջ բերել խաչի հոգին: Խաչի հոգին անձնուրացության, Հիսուսի խոնարհության հոգին է: Եսապաշտ կյանքը մեղավորության և չարիքի անհատակ անդունդ է՝ լի հպարտության, եսասիրության և եսակենտրոնության թաքնված և գաղտնի արտահայտումներով: Սուրբ Հոգին նախապատրաստում է մեզ ստանալու ավելի խոր հայտնություններ եսապաշտ կյանքի գաղտնի գործերի մասին: Նախապատրաստումը ներառում է. (1) փնտրել, ճանաչել և տեսնել մեր մեղքերի չափազանց մեղավորությունը, (2) խորացնել ազապե սիրո փորձառությունը մեզ համար անձնապես և անհատապես և (3) հավատալ, որ մեր միակ ելքը Քրիստոսի մահվանը մասնակից լինելն է: Այս նախապատրաստական հայտնություններն օգնում են մեզ անձնատուր լինելու նոր արարչության կյանքին, որը տրվեց մեզ դարձի գալիս: Այս հայտնություններն աստիճանաբար ավելանում և տրվում են փնտրող և հոժար սրտին:

Հոգին, ձեր մեջ ընդդիմանալով եսապաշտ կյանքին, լուսավոր իրողություն է դարձնում Հիսուս Քրիստոսին: Նա ձեր մտքերը կենտրոնացնում է Հիսուսի վրա: Դուք չեք մտածում Հոգու մասին, դուք հազիվ թե մտածեք «ես»- ի մասին, բայց դուք շատ եք մտածում ձեր սիրելի Տիրոջ մասին: Այն ընթացքում, երբ մտածում եք Նրա մասին, ձեր սրտում տեղի է ունենում «ես»- ի կազմալուծման և մահվան գործընթաց: Երբ Սուրբ Հոգին ակտիվորեն գործում է, դուք չեք մտածում Նրա մասին, այլ ավելի շատ մտածում եք ձեր թանկ Փրկչի և ձեր հանդեպ Նրա անվերապահ զոհաբերող սիրո մասին:

Խաչը կանգնած է իմ և իմ անցյալի միջև, իմ և աշխարհի միջև, իմ և իմ «ես»- ի միջև: **Աստված պահանջում է, որ ամեն քրիստոնյա հարի խաչին և հավատքով սպանի եսապաշտ կյանքը:** Քրիստոսն ուրացավ Իր աստվածային Անձը և խոնարհեցրեց Իրեն մինչև խաչի մահ, և Հոգու զորությամբ մենք պետք է ուրանանք մեր մեղանչած անձը՝ հին մարդը: Մի սպասեք, մինչև որ զորություն զգաք ձեր ներսում, որպեսզի ուրանաք «ես»- ը.

սա ձեր գայթակղությունն է: Ձորությունը ձեր մեջ է Քրիստոսով: Պարզապես հավատացե՛ք և գործե՛ք ճշմարտության հիման վրա: **Քրիստոսի գայթակղությունն էր գործածել իր աստվածային հատկանիշները. մեր գայթակղությունն է, որ գործածենք մեր մարդկային՝ հին մարդու հատկանիշները:** Մենք պետք է գամենք հին մարդուն խաչին և հավատանք, որ այդ պահից այն խաչված կլինի մեզ համար, իսկ մենք՝ նրա համար (Գաղ. 6.14):

Աստված հոչակում է, որ «նրանք, որ Քրիստոսին են, իրենց մարմինը խաչը հանեցին» (Գաղ. 5.24): Այստեղ գործածվում է անցյալ ժամանակաձևի բայ, որը նշանակում է անցյալում կատարված գործողություն: Ես խաչված եմ աշխարհին Հիսուսի խաչով, Հիսուսի խաչով աշխարհը խաչված է ինձ համար (Գաղ. 6.14): Խաչը իմ Հորդանան գետն է, որով անցնում եմ մահվան միջով դեպի խոստմունքի երկիր՝ նոր կյանք, ուր առաջնորդում է Հետուն:

Մտորումներ Աստծո հետ

1. Ո՞րն է Հոգու դերը անձնուրացման մեջ:
2. Ի՞նչ է Հոգին հայտնում իմ սրտին «ես»- ի մասին:
3. «Քրիստոսի գայթակղությունն էր գործածել իր աստվածային հատկանիշները. մեր գայթակղությունն է, որ գործածենք մեր մարդկային՝ հին մարդու հատկանիշները»: Ի՞նչ է սա նշանակում: Հարցրե՛ք Աստծուն սրա նշանակության մասին:

Միայն Սուրբ Հոգին կարող է իրական դարձնել ձեր անձը մեղքին մեռած համարելը: Դուք ընտրում եք խաչը, բայց Հոգին է, որ սպանում է, մեռցնում և իրական դարձնում դա: Սակայն առաջին հերթին դուք մեռած պետք է համարեք ձեր անձը հավատքով: Դուք համարում եք, Հոգին ձեր համարելը դարձնում է իրական: «Հոգով գնացեք, Հոգուց առաջնորդվեք, Հոգով ապրեք» (Գաղ. 5.16,18,25): Մինչ դուք Հոգով եք վարվում, Հոգուց եք առաջնորդվում և Հոգով եք ապրում, Սուրբ Հոգին շարունակում է ձեզ համար իրական դարձնել անձը մեղքին մեռած համարելը: Հավատքը և Հոգին չեն կարող բաժանվել միմյանցից: Ապրե՛ք՝ նայելով Սուրբ Հոգուն՝ որպես ձեզ սրբացնողի. մենք պետք է սովորենք սա: Երբ ամեն վայրկյան վստահեք Նրան, երբ ամեն պահ շնչեք Սուրբ Հոգով, ձեր սրտի խորքում Նա կհեռացնի ձեզ մարմնից, «ես»- ից, աշխարհից և սատանայից: Հոգին գլխավորապես գոր-

ծում է աննկատ, բայց ճշգրիտ: Հոգին կմտցնի ձեզ նոր կյանքի՝ նոր արարչության մեջ: Որքան շարունակեք ապրել հին կյանքով, այնքան կշարունակեք ապրել մահվան կյանքով: Որովհետև մինչ տարված եք Սուրբ Հոգով, Նա ձեր էության խորքում ավելի, ավելի ու ավելի խորն է իրագործում մահվան դատավճիռը:

Երբ իմ սիրտը հավատքով մասնակցում է խաչի մահվանը և Քրիստոսի մահվան մեջ յուրացնում իր իսկ մահը մեղքին, Սուրբ Հոգին իմ սրտին հայտնում է Հիսուսին՝ որպես նոր մարդու, եսապաշտ կյանքի, մարմնի փոխարինողի: Աստված կհայտնի ձեզ Իր Որդուն՝ Իր Կյանքին, ձեր մեջ որպես ձեր կյանքի կենտրոնի: Ձեր ներսի նոր մարդը ամեն օր հավատքով պետք է ընդունվի որպես ձեր նոր կյանք: Շատ քրիստոնյաներ չգիտեն, թե ինչ ասել է «ընդունել», և չեն էլ մտահոգվում դրա համար: Երբ կենտրոնում Քրիստոսն է, ոչ թե «ես»-ը, Քրիստոսն է «հաջողում» իմ մեջ (Գաղ. 2.8), հակառակ դեպքում Նա չէ կենտրոնում: Շատերը հրաժարվում են այս ճշմարտությունն ընդունելուց: Որտեղ «ես»-ն է կենտրոնում, այնտեղ չի կարող լինել Քրիստոսը, որն իմ մեջ հաջողում է: **Քրիստոսն ապրում է իմ մեջ, եթե ես խաչված եմ Նրա հետ** (Գաղ. 2.19): Սիրելի՛ Քրիստոսի աշակերտ, Քրիստոսի մահվամբ հավատքով յուրացրե՛ք ձեր մահը խաչին՝ ամեն օր հավատալով և հռչակելով: Ընդունե՛ք Քրիստոսին: Շատ քրիստոնյաներ իսրայելցիների նման կանգնել են Քանանի սահմանին: Ինչո՞ւ են կանգնել: Որովհետև չեն հավատում Աստծուն: Նրանք հավատացել են, որ Աստված կարող է հանել իրենց Եգիպտոսից, բայց չեն կարողանում հավատալ, որ Աստված կարող է բերել իրենց Քանան՝ նոր էությանը ապրելու համար: Նրանք հավատացել են անցյալի Աստծուն, բայց չեն կարողանում հավատալ ամեն օրվա, ամեն վայրկյանի Աստծուն: Նրանք ապրում են՝ հաճեցնելով Աստծուն իրենց բարի գործերով, բայց խաչին անձնատուր լինելը բացակայում է նրանց կյանքում: Նոր կյանքը քնած է մնում նրանց մեջ, նրանց լիարժեք փրկության փորձառությունն ընդհատվել է:

Աստված, որ դարձի բերեց ձեզ Իր կարող զորությամբ և շնորհքով, պատրաստ է ժամ առ ժամ բերելու ձեզ խոստմունքի երկիր՝ մեղանչումից հանգստանալու երկիր, և պահելու ձեզ այդտեղ: Սա կատարվում է ժամ առ ժամ, վայրկյան առ վայրկյան, բայց սա է, որ մենք չենք ընկալում: Մենք պահպանում ենք ինքնավստահությունը, որովհետև չենք տեսնում դրա չափազանց մեղավորությունը: Անապատի կյանքը լի է գործունեությամբ, լի է անհանգստությամբ. դուք փորձում եք այս եկեղեցին, այն եկեղեցին, աղոթքի այս հավաքույթը, այն հավաքույթը, այս հով-

վին, այն հովվին, մարգարեական այս քարոզչին, այն քարոզչին, հոգևոր այս համաժողովը, այն համաժողովը, միևնույն ժամանակ զգում եք, որ չունեք Աստծո հանգիստը: **Դուք չեք կարող ունենալ Քրիստոսի հանգիստը առանց Նրա խաչը ձեր կյանքում, ձեր էության, ձեր ինքնավստահության և սեփական ջանքերի մեջ կիրառելու:** Դուք լիովին չեք ընդունել Քրիստոսին ձեր մեջ, դուք մենակ պետք է լինեք Աստծո հետ, լուռությամբ մտորեք Աստծո առջև և Նրա հետ ավելի խոր հայացք նետեք Քրիստոսի հետ ձեր միությանը և դրա նպատակին: Դուք Նրա ներկայության կարիքն ունեք ձեր ծածուկ աղոթքի սենյակում:

Ինչպես իսրայելցիները, դուք կանգնած եք Հորդանան գետի դիմաց: Հորդանանը խորհրդանշում է Եսապաշտ կյանքի խաչելությունը: Եսապաշտ կյանքը երբեք չի մահանում, այն հնարավոր չէ արմատախիլ անել: Մենք գալիս ենք Հորդանան՝ դեպի խաչը, և խաչը, որը Քրիստոսի մահն է, դնում ենք մեր և մեր անցյալ կյանքի միջև: Մենք հավատալով (որն այս իրականությունը վերապրելու բանալին է) միացնում ենք մեզ Քրիստոսի մահվանը և տնկվում (հավատքով) Նրա հետ Նրա մահվան նմանությամբ: Դրանից հետո կանգնում ենք Քանանի երկրում՝ ապավինելով Սուրբ Հոգուն, որպեսզի Նա իրական դարձնի մեր անձը մեղքին մեռած համարելը և առաջնորդի մեզ դեպի նոր կյանք՝ ապրելու նոր էությամբ:

Դուք անցել եք Հորդանանը և հիմա Քանանի երկրում եք: Քանանը Քրիստոսն է ձեր մեջ: Նա խոստմունքի երկիրն է, այս երկիրը ձեր երկիրն է: Ձեր մեջ Քրիստոսն է, իսկ դուք՝ Քրիստոսի մեջ (Գաղ. 2.20): «Մենք մասնակից եղանք Քրիստոսին» (Եբր. 3.14): Բայց մենք դեռևս պետք է գնանք և տիրենք խոստացված երկիրը, հավատքով ապրենք նոր էությունը և ուրանանք հին էությունը: Ճանաչեք այդ երկիրը, մշակեք այն ձեր հնազանդությամբ և ձեր գաղտնի աղոթքի կյանքով: Օր օրի հավատքով ավելի հեռու վանեք խոչընդոտներն ու հակառակությունները և ավելի շատ ընդունեք Քրիստոսից և այսպես շարունակեք ամեն օր, ամեն շաբաթ և տարեցտարի:

Մտորում Աստծո հետ

1. «Քրիստոսն ապրում է իմ մեջ, եթե ես խաչված եմ Նրա հետ»: Ինչ է սա նշանակում: Ինչպես կարող եմ սա կիրառել իմ կյանքում: Աղոթեք և մտորեք այս ճշմարտության շուրջ:
2. Ինչպես եք Հիսուսի խաչը կիրառում ձեր կյանքում որպես հավատացյալ:

Ինչպէս ընդունեմ Հիսուսին ամբողջությամբ

Ինչպէս ենք ընդունում Քրիստոսի լիութունից: Մենք դիտարկել ենք սա նախորդ գլուխներից մեկում: «Նրա լիութունից մենք բոլորս *ստացանք*»: Ովքեր կստանան նոր կյանքը՝ առատության կյանքը, և կապրեն դրանով, կթագավորեն Քրիստոսով: Ընդունելու բանալին ստանալն է: Մենք ընդունում ենք՝ *ստանալով*, որովհետև մենք միացած ենք Քրիստոսին: Նախևառաջ պետք է լինի Քրիստոսի հետ միություն: Միության վայրը խաչն է: Մենք ընդունում ենք՝ ստանալով: Արդյո՞ք սա նշանակում է, որ ես ավելի շատ պետք է աղոթեմ: Ո՛չ, դուք բավականին երկար աղոթել եք: **Սկսեք ընդունել և շարունակեք ընդունել Քրիստոսին:** Կա մեծ տարբերություն աղոթելու և Քրիստոսին ընդունելու միջև: Ձեռք բերեք Քրիստոսին խաչի վրա Նրա հետ ձեր միության միջոցով, և աշխարհն այլևս չի հրապուրի ձեզ: Օրինակ՝ վատ բնավորության դեմ պայքարելու փոխարեն ընդունեք Քրիստոսին՝ որպես ձեր համբերության, ձեր խոնարհության կամ ձեր զսպվածության: Դուք չեք կարող պայքարել ձեր էության դեմ և հաղթել: Ինչի կարիք էլ ունենաք, ասեք. «Քրիստո՛ս, եղի՛ր դա իմ մեջ»: Մի ընդունեք հեզությունը, այլ ընդունեք Հիսուսին՝ Հեզին, ընդունեք նոր կյանքը: Դուք ընդունում եք ոչ թե ներումը, այլ Հիսուսին՝ Ներողին: Ընդունելը տեղի է ունենում վայրկյան առ վայրկյան: Դուք չեք ընդունում որևէ հատկանիշ, առանձնահատուկ որակ, զգացմունք կամ հույզ, դուք չեք ընդունում Հիսուսի կյանքից առանձին հատկանիշներ, դուք ընդունում եք հենց Հիսուսին՝ որպես ամբողջական Անձի՝ ձեր նոր կյանքի: Շատերը բաց են թողնում այս ճշմարտությունը: **Մենք չենք կարող ընդունել Քրիստոսին՝ առանց ընդունելու Նրա խաչը մեր ամենօրյա կյանքի համար:** Շատերն անում են այս սխալը: Մենք չենք սովորել ապրել այս ճշմարտությամբ: Շատերը չեն ընդունում ամբողջական Քրիստոսին. նրանք իրավասու են զգում Նրա օրհնությունների համար և փնտրում են դրանք՝ առանց հնազանդվելու Նրա խաչին: Այլ խոսքերով՝ նրանք չեն զգում ամբողջական Հիսուսի կարիքը: Նրանք դեռ պահպանում են մարմինը և այս կերպ չեն ընդունում Քրիստոսին, որ լինի իրենց ամբողջ կյանքը: Նրանք չեն տալիս իրենց ամբողջ կյանքը Հիսուսին և խաչին, նրանց անձնատուր լինելն ամբողջական և բացարձակ չէ, **նրանք դեռևս չեն տեսնում մարմնի չափազանց մեղավորությունը, որ իրենց մեջ է:** Նրանք ապրում են չհանձնված կյանքով: Աղոթեք, որ այս հայտնությունը և հանդիմանությունը հասնեն ձեր սրտին: **Նրանք չեն տեսնում, որ երբ եսապաշտ կյանքը գոյություն ունի ինչ- որ չափով, նոր**

կյանք չի կարող գոյություն ունենալ: Փոխարենը նրանք ջերմեռանդորեն հաճախում են հոգևոր հավաքությունների և միջոցառումների, որպեսզի հաճեցնեն Աստծուն և արժանանան Աստծո հետ ավելի շատ հաղորդակցության, ավելի շատ օրհնությունների և օգուտների: Նրանք ձգտում են հարության կյանքին՝ առանց մասնակցելու խաչյալ կյանքին: Սա Հիսուսի առաջարկած ճշմարիտ փրկությունը չէ: Սա գործերով փրկություն է: Աստված չի ճանաչում այս տեսակի հավատքը կամ չի արձագանքում դրան, միայն մարմինն է արձագանքում դրան և ապահովում իր երկրային արդյունքները՝ մարդկանց այս հավաքությունում և միջոցառումներում ակտիվ պահելու համար: Մարմինը կարող է միայն մարմնավոր պտուղ տալ: Մենք անձնատուր ենք լինում ոչ թե «ես»- ին կամ հոգևոր գործողություններին և հավաքություններին, այլ միայն Քրիստոսին և Նրա խաչին, **և սա միայն կարող է տեղի ունենալ այն ժամանակ, երբ իմ եսապաշտ կյանքը հանձնված է մահվան և Հոգու զորությամբ շարունակ պահվում է խաչին: Հիսուսին հանձնվել նշանակում է հանձնվել Նրա խաչին:** Հանձնվել նշանակում է մահանալ խաչին և մահվան միջոցով ստանալ նոր կյանք, որպեսզի այդ նոր կյանքը դրսևորվի ամեն վայրկյան: Մենք պետք է լինենք նոր կյանքը, որպեսզի անենք նոր կյանքի գործերը: Մենք հուսահատորեն կարիք ունենք փնտրելու հասկացողություն մեր մեղքերի և մեր մարդկային էության՝ մեր հին մարդու չափազանց մեղավորության և չարության մասին: Մենք պետք է փնտրենք Տիրոջ երեսը այս էական կարիքի համար: Գիտելիքը հանգեցնում է միայն ավելի շատ գիտելիքի: Հասկացողությունը հանգեցնում է միայն ավելի շատ հասկացողության: **Միայն սրտի հավատքն է հանգեցնում կյանքի:** Գուցե մենք գիտենք, թե ինչպես ջերմեռանդորեն աղոթենք, բայց չգիտենք, թե ինչպես անձամբ առերեսվենք Աստծուն. արդյո՞ք գիտենք ինչպես առերեսվել ինքներս մեզ Աստծո ներկայության մեջ:

Առավել խոր մասնակցություն Քրիստոսի մահվանը: Եսապաշտ կյանքից դուրս գալու մեր միակ ելքը Քրիստոսի մահվանը առավել խոր մասնակցությունն է: Մեր կամքով պետք է հանձնվենք նրան, ինչն արդեն ենթադրաբար մեր կարգավիճակն է Աստծո առջև: Ես պետք է ուրանամ և մերժեմ եսապաշտ կյանքը՝ հին կյանքը: Շարունակաբար, վայրկյան առ վայրկյան, ըստ անհրաժեշտության, **ես անջատվում եմ իմ էությունից՝ կանգնելով Քրիստոսի մահվան մեջ:** Իմ հավատքով ես կառչում եմ [պետք է կառչեմ] Քրիստոսի մահվանից՝ որպես իմ մահվանից: Ես պետք է սովորեմ ամեն անգամ հրաժարվել իմ էությունից՝

հիմնվելով իմ համախառնության վրա (իմ էությունը խաչվել է Հիսուսի հետ): Ամեն անգամ, երբ եսապաշտ կյանքը (իմ հին էությունը) իրենն է պնդում, ես ասում եմ. «**Քրիստոսի մեջ ես մահացա: Նրա անունով և զորությամբ ես հրաժարվում եմ «ես»-ից**»: Ես խոսում եմ հավատք և հոչակում Աստծո ճշմարտությունը ինձ և սատանային, և Հոգին զորությամբ գալիս և այդ պահին սպանում է «ես»-ին: Սա պետք է արվի ամեն անգամ, երբ անհրաժեշտ է: «Ես»-ի ուրացումը մշտական պարզև չէ, այն պետք է տեղի ունենա ամեն օր, **դրա աստվածային զորությունը պետք է յուրացվի ամեն օր, ինչպես մանանան անապատում**: Այսօրվա զորությունը կամ մանանան օգտակար չէ վաղվա համար, այն ամեն օր թարմ պետք է լինի: Եթե սա արվի, Սուրբ Հոգին Իր կարող զորությամբ օր օրի, վայրկյան առ վայրկյան ինձ ազատ կարձակի և զերծ կպահի եսապաշտ կյանքից: Շատ մարդիկ չեն անում սա ճիշտ ձևով և հավատքով: Նրանք ուրանում են իրենց «ես»-ը իրենց կամակորության, ցանկության և վճռականության ուժով և չեն հասկանում, թե ինչու են ձախողվում:

Աստծո ճշմարտություններին հավատալը և դրանք հոչակելը հաջողության բանաձև չեն հոգևոր կյանքում: Շատերը փորձում են սովորել, թե ինչ ասեն, երբ ցանկանում են հավատալ, և բարձրաձայն հոչակել այդ ճշմարտությունները: Կիզակետը միշտ պետք է լինի սիրտը. սիրտն է խնդիրը: Արդյո՞ք ձգտում եմ ամբողջ սրտով տեսնելու իմ մեղքերի և մարդկային էության չափազանց մեղավորությունը և չարությունը: Արդյո՞ք իմ սիրտը հանձնվում և անձնատուր է լինում խաչին: Արդյո՞ք ուրանում և մերժում եմ եսապաշտ կյանքը ամեն բանում և ամեն օր: Գլխավոր խնդիրը սիրտն է, ոչ թե սովորելը, թե ինչ ասենք կամ անենք:

Սիրելի Քրիստոսի աշակերտ, հետևողականորեն և մշտապես ուրացե՛ք ձեր անձը. սա է ձեր կյանքը, սա առաջնորդում է ձեզ ընդունելու Քրիստոսին ամբողջությամբ: Դուք պետք է հրաժարվե՛ք հին կյանքից ոչ միայն այն ժամանակ, երբ անձնատուր եք լինում Աստծուն Հոգու ներկայությունը զգալիս, այլև մշտապես և հետևողականորեն: **Ձեր էությունը կամ հին կյանքը կփորձի վերականգնել իր դիրքը կամ վերահաստատել իրեն՝ առաջարկելով կատարել հոգևոր գործողություններ**: Արթուն եղեք: Որքան էլ խոր գնամ, Հոգին ինձ համար առավել խոր բաներ ունի՝ Քրիստոսի հետ խաչվելու և իմ հանդեպ Նրա ազապե սերն առավել խոր վերապրելու համար: Սա հավատքի և հարատևության դիրք է: Մահանալու ընտրությունը շարունակական է՝ ամեն օր,

ամեն վայրկյան և ամեն բանում: Այստեղ է, որ ամենից շատ ծախողվում ենք, եթե մեր հարատևությունը Քրիստոսի մեջ չէ, այլ սեփական ջանքերում, որի հետևանքը կլինի ինքնարդարացումը:

Ապրել Հոգու դարաշրջանում... նշանակում է ապրել Քրիստոսի մեջ, հետևաբար մնալ միայն Քրիստոսի մեջ:

Սիրելի Քրիստոսի աշակերտ, ապրե՛ք Հիսուսի ներկայության մեջ, Նա ձեր մեջ է: Նրա խաչը մուտքն է դեպի Նրա ներկայություն: Ձեր սիրտը Նրա տունն է, Նա բնակվում է այնտեղ և սպասում է ձեզ այնտեղ: Ձեր անձն ամբողջությամբ տվե՛ք Հիսուսին և Նրա խաչին, և Նա ձեզ կտա Իրեն ամբողջությամբ: Նա ձեր մեջ է և գնում է ամենուր, ուր դուք եք գնում: Նա տալիս է հանգիստ ձեր հավատքին, և Նա ձեր հանգստի երկիրն է:

Մտորում Աստծո հետ

1. Ինչպե՞ս եք մասնակցում Քրիստոսի մահվանը:
2. Ո՞րն է հավատքի և հոգևոր հանգստի կապը:
3. Արդյո՞ք կապ կա հոգևոր հանգստի և չմեղանշելու միջև: Ինչպիսի՞նք:

Գլուխ 6. Սեփական ջանքերով նոր կյանքն ապրելու ողբերգությունը

Այս գլխում կանդրադառնանք այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝ ի՞նչ է նշանակում հանել հին մարդուն և հագնել նոր մարդուն, իրականում ի՞նչ է հին մարդու խնդիրը, ի՞նչ է նոր մարդուն ապրելու Աստծո ճանապարհը, ի՞նչը կհամոզի ինձ:

«Հանել հին մարդուն» և «հագնել նոր մարդուն»

Աստծո Խոսքում մեզ ասվում է, որ «հանենք հին մարդը» և «հագնենք նոր մարդուն»: Պողոս առաքյալը գրում է. «Որ ձեզնից դուրս հանեք առաջի գնացքի պես եղող հին մարդը, որ խաբեբայության ցանկությունով ապականված է: Եվ ձեր մտքի հոգով նորոգվեք և նոր մարդուն հագնեք, որ *Աստծո պատկերի պես* ստեղծված է՝ ճշմարտության արդարությունով և սրբությունով» (Եփես. 4.22- 24), «Բայց հիմա դուք էլ դեն դրեք այն ամենը, բար-

կությունը, սրտմտությունը, չարությունը, հայիոյությունը, ամոթալի խոսքերը ձեր բերանից: Սուտ մի՛ խոսեք իրար հետ. հանէք հին մարդն իր գործերով: Եվ հագնէք նոր մարդը, որ նորոգված է գիտությունով Իր ստեղծողի պատկերի պես» (Կող. 3.8-10): Մենք պետք է առաջնորդվենք Հոգով, որովհետև մենք ապրում ենք Հոգով և խաչել ենք մարմինը: Մենք ունենք նոր էութուն, որովհետև Քրիստոսը բնակվում է մեր մեջ: **Մեր ողբերգութունն այն է, որ փորձում ենք ապրել նոր կյանքը սեփական ջանքերով, հին մարդու ուժերով և իմաստությամբ: Մենք ապրում ենք հին էության կրոնական արտահայտումներով՝ նոր էութամբ, նոր արարչությամբ հավատքով ապրելու փոխարեն:** Մենք ուզում ենք օգնել Աստծուն, որ նոր կյանքը դրսևորվի մեր մեջ, բայց սա այն չէ, ինչ սովորեցնում է ավետարանը: Այն այդպես չի գործում: **Նոր կյանքը՝ Քրիստոսի կյանքն իմ մեջ, իմ օգնության կարիքը չունի, որովհետև այդ օգնությունն իմ մարդկային էութունից է:**

Քանի դեռ ապրում ենք այս աշխարհում, միայն հավատքով ենք կառչում Քրիստոսից և մեր մեջ Նրա կյանքից ու Նրա լիութունից: Թեև Քրիստոսը, որին ընդունում ենք հավատքով, լիարժեք և կատարյալ է, սակայն կատարյալ չափով չենք ապրում Նրան: Մենք չենք մնում Նրա մեջ ճիշտ ձևով և մշտապես, երբեմն մնում ենք հին մարդու, երբեմն՝ նոր մարդու մեջ: Մենք թույլ ենք տալիս և նույնիսկ հրավիրում ենք, որ երբեմն մարմինը կամ հին մարդն ապրի մեր մեջ: Շատերն անտարբեր են այս հարցում, և ցավիք, տգիտությունն ավելանում է: Մենք աճելու տեղ ունենք, մենք պետք է շարունակվենք աճել, և սա պահանջում է հայտնության գիտություն Աստծուց: Հայտնության գիտության մեջ անհրաժեշտ աճը շարունակական է և պահանջում է ժամանակ և ծով համբերություն: Մենք պետք է պատրաստ լինենք սրան. մենք պետք է ճանաչենք մեր մեղքերը և առենք դրանք, մենք մեր ներսում պետք է տեսնենք մեր էության չափազանց մեղավորությունը, պետք է ճանաչենք, թե ինչ է սրբությունը, ինչ է Հոգով ապրելը: Այս հայտնության գիտությունը ձևավորվում է Հոգու միջոցով փափագող և անձնվեր սրտում: Մենք Հոգու լույսի կարիքն ունենք նման բաները ճանաչելու համար: Այս ճանաչողությունը ներքին հայտնություն է՝ տրված փափագող և անձնվեր սրտին: Անձնվեր սիրտը միայն նոր մարդու մեջ է, այն գոյություն չունի հին մարդու մեջ: Այս աճը նույնպես պահանջում է սրտի լիակատար նվիրում և նույնպես աճում է: Հայտնության գիտությունը չի ավելանում, եթե հետամուտ չենք լիակատար անձնատուր լինելուն. այն պահանջում է, որ ամբողջ կյանքում հոժարությամբ հանձնվենք Հիսուսի խաչին: Կրկին, միայն նոր մարդը կարող է անել սա, հին մարդը կիրա-

ժարվի: Ինչպես Պողոսը, մենք շարունակ պետք է ձգտենք «ճանաչելու Քրիստոսին և Նրա հարության գործությունը և մասնակից լինելու Նրա չարչարանքին՝ Նրա մահվանը կերպարանակից լինելով» (Փիլիպ. 3.8- 14): Հիսուսին կերպարանակից լինելն անհնար է հին մարդու համար, այն միայն նոր մարդու համար է:

Քրիստոսին ընդունելը և վայելելը՝ Նրանում մեր նոր էության բուլոր օրհնություններով, լիարժեք չեն այս երկրային կյանքում, որովհետև հին էությունը երբեք չի մահանում, և մենք շարունակում ենք թույլ տալ, որ այն ապրի: Մեր հին էությունը, հին մարդը՝ իր բոլոր թաքնված գաղտնի չար հատկություններով, ինչ- որ չափով մնում է մեր մեջ: Այն դեռևս լիովին կործանված չէ: Հավատացյալները մասնակից են երկու հակասական վիճակների կամ էությունների, քանի դեռ այս աշխարհում են: Դրանցից մեկը պետք է իշխի. իշխում է նա, որին ես կերակրում եմ: **Հավատացյալներն իսկապես հանել են հին մարդուն և գամել խաչին՝ Քրիստոսի մահվանը միանալով, և հագել են նոր մարդուն, որ տրվել է իրենց Քրիստոսի մեջ:** Բայց «հագնելը» պետք է լինի ամենօրյա գործընթաց և տեղի ունենա ամեն վայրկյան, երբ անհրաժեշտ է: «Ամեն օր և ամեն վայրկյան» հագնելը դժվար է մեր սրտի համար, մենք համոզված չենք, որ «ես»- ը կամ հին մարդը լիովին մեղավոր է և չար: Մենք ծնվել ենք եսապաշտ կյանքի նկատմամբ հակվածությամբ և սիրով: Մենք բաց ենք այն ձևափոխելու, բայց ոչ փոխարինելու համար, որն էլ Աստված պահանջում է մեզնից: Մենք դեռևս բարիք ենք տեսնում հին մարդու մեջ, չենք ասում այն: Մենք հրաժարվում ենք հին մարդու մասին ճշմարտությանը հավատալուց, ուստի և չենք կարողանում գնալ դեպի խաչը: Մենք չենք կարողանում առերեսվել Աստծուն: Մենք պետք է անենք այն, ինչ հարկավոր է. մենք այստեղ ձախողվում ենք: Քրիստոսը պետք է լինի ամենը և ամենի մեջ (Կող. 3.10, 11): Մենք պետք է շարունակենք վարվել այսպես ավելի ու ավելի: Հին էությունը դեռևս մնում է որոշ չափով, որովհետև ես կերակրում եմ այն իմ մեղքերով և Աստծուն անհնազանդությամբ և հրաժարվում եմ հավատալուց, որ իմ մեղքերը և իմ աշխարհիկությունը չափազանց մեղավոր և չար են: Ես գնում եմ Աստծո մոտ օրհնությունների համար, բայց ոչ տեսնելու իմ մեղքերը և իմ ներսի էությունը: Ես չեմ ցանկանում տեսնել իմ ներսի մեղավոր էությունը: **Աստված սպասում է իմ հոժարակամությանը և համաձայնությանը այս հայտնությունները և հանդիմանությունները իմ մեջ ներգործելու համար:** Այդ ամենն ինձնից է կախված:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ Աստծո հետ

1. Ինչ չափով է հին էությունը մնում ձեր մեջ: Ինչ եք մտածում: Ինչպե՞ս եք իմանալու:
2. Ինչ չափով է նոր մարդն ազատորեն ապրում ձեր մեջ: Ինչպե՞ս եք իմանալու:
3. Ո՞ր էությանն եմ կերակրում իմ մեջ՝ հի՛ն, թե՛ նոր: Պատրմատ եք բացահայտելու ձեզ ճշմարտապես:

Մենք ունենք պառակտված սրտեր: Հավատացյալները պետք է լինեն «ոչ թե մարմնով, այլ Հոգով»: Սա բնորոշ է նրանց շատ հաճախ: Բայց բնորոշ է նաև այն, որ մարմինը դեռևս նրանց մեջ է իրենց ընտրությամբ, և նրանք ինքնակամ և իրենց համաձայնությամբ դեռևս պետք է սպանեն նրա գործերը (Հռոմ. 8.9, 13): Սովորաբար մենք չենք ճանաչում մեր մեղքերը, դրանք պահպանվում են երկար տարիներ: Եթե տեսնում եմ, որ մեղքը մոտենում է ինձ, այդ պահին ունեմ ընտրություն՝ լիովին կործանելու այն Աստծո զորությամբ (որն արդեն դրվել է իմ մեջ), այլապես այն չի կործանվի: Ես ունեմ այս ընտրությունն ամեն անգամ, երբ առերեսվում եմ մեղքին: Երբեմն ես ընտրում եմ չկործանել այն, երբեմն էլ ընտրում եմ կործանելը: Ընտրելն իմ պարտականությունն է: Թեև Սուրբ Հոգին իմ մեջ է, որպես հավատացյալ՝ իմ պարտականությունը չի վերանում: Եթե մենք ճշտորեն չհասկանանք մեր պատասխանատվությունը հոգևոր կյանքում, մեր կյանքը կտուժի: Իմ պարտականությունն է թույլ տալ, որ Հոգին հանի հին էությունը և հազցնի նորը: Դա ներառում է Հոգու զորությամբ մարմնի գործերը սպանելը՝ շարունակ աղոթելով, որ Աստված ճիշտ հոգի նորոգի մեր ներսում և լիովին սրբացնի մեզ և մղի հասունության: **Ո՞ր էությանն եմ կերակրում՝ հի՛ն, թե՛ նոր:**

Սիրելի Քրիստոսի աշակերտ, ձեր մեղքերի նկատմամբ ատելությունը ձևավորվում է ձեր մեջ հենց Հոգու միջոցով, և Նա ձեր հոժարության և զիջելու կարիքն ունի: Սեփական մեղքերն ատելը բացարձակ անհրաժեշտություն է ձեր հոգևոր կյանքի համար: Դուք չեք կարող ձեր ջանքերով ատել ձեր մեղքերը: Ձեր ուժերով չեք կարող ազատվել մարմնի ցանկություններից և հակումներից: Դուք չեք կարող ապրել սուրբ կյանքով ձեր վճռականության ուժով: Հանձնվե՛ք Աստծուն հատկապես դրա համար, վստահե՛ք Աստծուն, որ անի դա ձեզ համար: Ուշադրություն դարձրե՛ք, որ **Աստծուն վստահել նշանակում է չվստահել ինքդ քեզ**: Ինքդ քեզ չվստահել

նշանակում է կրել խաչը մահանալու նպատակով: Սա է այն կյանքը, որով պետք է ապրի Քրիստոսի աշակերտը, մինչև որ մահանա: Բավական չէ վճռել կամ պնդել անել այն ամենը, ինչ կարող եք՝ միաժամանակ վստահելով Աստծուն, որ օգնի ձեզ ցուցաբերելու ձեր վճռականությունը: Փոխարենը վճռեք վստահել Աստծուն և հաստատական եղեք այն վստահության մեջ, որ Նա «**ներգործում է ձեզանում կամենալն էլ, անելն էլ (Իր զորությամբ) Իր հաճության պես**» (Փիլիպ. 2.13): **Ես չեմ կարող օգնել Աստծուն, իմ մարդկային էությունը չի կարող սրբվել, ես պետք է մնամ խաչին. ես պետք է մնամ խաչալ Քրիստոսի մեջ** (հաջորդ մի քանի գլուխներում մանրամասն կանդրադառնամ այս ոլորտին):

ՄՏՈՐՈՒՄ Աստծո հետ:

1. Որպես Քրիստոսի աշակերտ՝ ինչո՞ւ չեք կարող օգնել Աստծուն:
2. Արդյո՞ք Աստծուն օգնելու վերաբերյալ պատասխանը պարզ է ձեզ:
3. Արդյո՞ք տեսնում եք, որ այս ճշմարտությունն ապրում է ձեր սրտում:

Շատ հավատացյալներ, երբ հանդիմանվում են իրենց մեղքի և թշվառության համար, վճռում են փոխվել: Նրանք նպատակադրվում են զսպել կամ կարգապահության վարժեցնել իրենց եսապաշտ կյանքը, նվաճել այն և արմատախիլ անել նրա ցանկությունները: Նրանք վճռում են պայքարել իրենց ապականված էության դեմ՝ ձգտելով բարեփոխելու այն: Նրանք հույս ունեն իրականացնելու այս բարեփոխումը զուտ վճռականությամբ: Նրանք մտածում են, որ եթե իսկապես սրտանց ցանկանան և գործեն ամբողջ ուժով, կհաղթեն մարմնի՝ հին էության ցանկություններին: Այնուհետև կյանքում կկարողանան հասնել մեծ և սուրբ նպատակների: Սա հին էությունը հանել և Քրիստոսի մեջ նոր էությամբ վարվել չէ: Սա իրականում հին էությունը՝ հին մարդուն, բարեփոխելու ճիգ է: Սրբությանը չեն հասնում սեփական վճռականությամբ և ջանքերով. մեր կյանքն ապացուցում է դա: **Մարդը ծայրահեղ չար է, նրան հնարավոր չէ բուժել (Հռոմ. 8.7), նա չի կարող բարեփոխվել: Նրան պետք է ուրանալ և մերժել և Քրիստոսի հետ պահել խաչին:** Քրիստոսը չմահացավ, որ մարմինը սուրբ կամ ընդունելի դառնա, այլ որ խաչվի և խափանվի (Հռոմ. 6.6), որպեսզի մենք ապրենք Աստծո, ոչ թե ինքներս մեզ համար:

Մեր եսապաշտ կյանքն ամենևին չի կարող սրբվել

Մեր եսապաշտ կյանքն ամենևին չի կարող սրբվել, նույնիսկ Քրիստոսի միջոցով: Ահա թե ինչու այն պետք է մատնվի խաչի մահվան, սա Աստծո լուծումն է և միջոցը: Մեր մեղավոր ցանկությունները մահվան մատնելու միջոցը դրանք մեր էությունից մաքրելը կամ սրբելը չէ, այլ մեր էությունը հանելով՝ Քրիստոսի մեջ մնալն է: Մենք անում ենք սա հավատքով՝ ուրանալով մարմինը և քայլելով նոր էության մեջ, որը մերն է Քրիստոսի մեջ: Խոստումները կամ հոգևոր որոշումները, որ ընդունում ենք հատկապես Նոր տարվա տոնին, անօգուտ են, թույլ և դատարկ՝ մարմնի նկատմամբ հաղթանակ տանելու համար: Դրանք ոչնչի չեն հանգեցնում: Աստված չի օգնի ձեզ ձեր հոգևոր որոշումները կայացնելիս, նույնիսկ եթե Նրանից օգնություն խնդրեք, որովհետև դրանք ձեր ուժով և իմաստությամբ կատարվող գործեր են, որոնք Նա ցանկանում է, որ մնան խաչին: Սա կեղծավորություն է: Երբ ապավինում եք Ա՛ ինքներդ ձեզ, Ա՛ Քրիստոսին, դուք չեք կարող ապավինել Աստծուն:

Ոչ միայն բավական չէ, այլև նույնիսկ աստվածաշնչյան չէ, որ վստահենք Քրիստոսին մեզ օգնելու համար, եթե ապավինում ենք մեր ուժերին: Մենք վստահում ենք Նրան ավելիի համար: Նա այն Տերն է, որով ապրում ենք, շարժվում ենք և կանք (Գործք 17.28): Նույնիսկ փարիսեցիները վստահեցին Աստծուն, որ օգնի իրենց կատարելու իրենց պարտականությունը, այնուհետև շնորհակալություն հայտնեցին Նրան օգնության համար (Ղուկ. 18.11): Նրանց վստահությունն Աստծուն և նրանց շնորհակալությունը ոչինչ էին Նրա համար, Նրա արձագանքը միշտ կմնա նույնը. «Վայ՛ ձեզ, դպիրներ և փարիսեցիներ՝ կեղծավորներ, որ նման եք ծեփած գերեզմանների, որ դրսևանց գեղեցիկ են երևում, բայց ներսևանց լիքն են մեռելների ոսկորներով և ամեն պղծությունով» (Մատթ. 23.27): Շատերիս գործադրած հավատքն ուղղված է սուրբ կյանքով ապրելու մեր ջանքերին: Մենք պետք է վստահենք Աստծուն շատ ավելիի համար: **Մենք պետք է հավատանք, որ Նա** մեր բնական ուժերից վեր **կարողություն կտա** մեզ Իր Հոգով, որ բնակվում է մեր մեջ և գործում է մեր նոր էության միջոցով: **Մենք պետք է հնազանդեցնենք մեր հին էությունը խաչին ամեն օր, ամեն վայրկյան, երբ անհրաժեշտ է: Մենք պետք է հագնենք նոր մարդուն:** Բայց շատերը նոր մարդուն հագնում են սեփական վճռակա՞նության ուժով: Մենք լավ չենք հասկանում այս ճշմարտությունը և շատ մակերեսային ենք ընդունում դա: Դրա հետևանքով նոր էությունը անկյուն է մղվում:

Մի փորձեք օգտագործել բարոյական օրենքի (օրինակ՝ Տասը պատվիրանների) գործերը որպես սուրբ կյանք և երջանկություն ձեռք բերելու միջոց: Փոխարենը գործեք այն համոզվածությամբ, որ այս ամենն արդեն ձերն է Քրիստոսում ձեր նոր էության մեջ: Հավատքով, ամեն օր հավատալով դուք ավելի ու ավելի շատ կրնա-դունեք այս բաները ձեր կյանքում: Բայց ինչ է նշանակում ամեն օր հավատալ: Կարող եք բացատրել, թե ինչպես եք դա անում: Սուրբ կյանքն արդեն պատրաստված է ձեզ համար, այն պատրաստ է, որ ազատորեն տրվի ձեզ Քրիստոսի մեջ: **Սա նշանակում է վարվել նրանց նման, ովքեր արդեն հավատքով ունեն հոգևոր օրհնությ-յունների լիությունը Քրիստոսի մեջ և կարիք չունեն փնտրելու այլ ճանապարհ՝ դրանք ձեռք բերելու համար: Սակայն դրանք ունենալը, դրանք վերցնելը և դրանցով ապրելը տարբեր բա-նեք են:** Օրինակ՝ շատերը փորձում են գտնել միջոցներ ուրիշնե-րի հետ համբերատար լինելու համար: Համբերությունը կյանք է, ոչ թե հատկանիշ կամ հմտություն, որ կարելի է սովորել և զարգաց-նել: Այն կյանք է՝ տրված Քրիստոսի մեջ, Նրա լիության մեջ, որն արդեն հասանելի է ձեզ Քրիստոսում ձեր նոր էության մեջ: Հա-վատքով միացեք Նրան Նրա մահվան նմանությամբ և պահպա-նեք այդ միությունը ամենօրյա հավատքով: Հավատքով ուրացեք ձեր հին էությունը (հավատացեք, որ ձեր անհամբերությունը խաչի վրա է Քրիստոսի հետ), հավատացեք այն փաստին, որ այն բոլո-րովին իշխանություն չունի ձեզ վրա: **Այժմ հավատացեք** նաև, որ ձեզ տրված նոր էությունը բովանդակում է Իրեն՝ Քրիստոսին, Իր լիությամբ, որը կապրի Իր համբերության կյանքը անհրաժեշտ պահին կամ իրավիճակում: Այս հավատքը պետք է կիրառել ամեն անգամ, երբ համբերության կարիք եք ունենում: **Քրիստոսի հաղ-թանակը հարատև է, բայց իմ հին էության նկատմամբ հաղթա-նակը պետք է ես յուրացնեմ ամեն անգամ, երբ անհրաժեշտ է, նոր էությունը նույնպես պետք է ես յուրացնեմ ամեն վայրկյան:** Դուք պետք է գործեք ոչ թե կյանքի համար, այլ Կյանքից՝ Քրիս-տոսից: **Աստվածային զորությունը պետք է յուրացվի վայրկյան առ վայրկյան, ամեն օր,** այն տրված չէ պահպանելու վաղվա կամ ապագայի համար:

Մենք չենք սովորում մահանալ մարմնին, մենք չենք սովորում մահանալ խաչին: Մենք չենք անում այս գործողությունները, ուս-տի մի՛ փնտրեք նման գործողություններ: Մի՛ հավատացեք գոր-ծողություններին, օրինակ՝ աղոթքին, որպեսզի ձեր անհամբե-րությունը վերանա, կամ ձեր «ես»-ը մահանա: Մենք արդեն մահացած ենք Քրիստոսի մեջ: Մենք հավատում ենք և ապ-

րում, ոչ թե հավատում ենք և գործում: Աստված խոստանում է, որ **կկատարի այս աշխատանքը, կիրագործի այն** մեր մեջ, երբ մենք մնանք Քրիստոսի մեջ: Հետևաբար հավատալով ապրենք Նրանով, ով ձեր մեջ է:

Նախևառաջ համոզվե՛ք

Քրիստոսն է մեր կյանքը, ոչ թե մարմինը: Քանի դեռ մարդը հավատքով չի ընդունել Քրիստոսին՝ որպես իր միակ կյանքի, կշարունակի ապրել մարմնավորապես: Մարդը կարող է ճնշել իր հին մարդուն սրբության գաղափարներով և փոխել նրա վարքագիծը իր կամքի ուժով և դառնալ ընդունելի: Սա մարդկային դատողությամբ որոշ չափով հնարավոր է իրագործել հին մարդու մեջ: Բայց մարդը ոչնչի չի հասնի, մինչև խաչի վրա Քրիստոսին միանալու միջոցով հավատքով չընդունի նոր էությունը՝ նոր մարդուն: Սիրելի Քրիստոսի աշակերտ, արդյո՞ք սա տեղ է գտնում ձեր սրտում: Արդյո՞ք այսպես եք դուք ապրում: Արդյո՞ք Քրիստոսը ձեր կյանքն է: Արդյո՞ք ձեր փոխարեն Նա է ապրում ձեր մեջ: Շատերն իրենք իրենց հորդորում են կատարել իրենց բարոյական պարտականությունը՝ առանց նախ ընդունելու անհրաժեշտ կյանքը և խաչյալ կյանքի՝ եսապաշտ կյանքն (մարմինը) ուրանալու գործությունը: Եսապաշտ կյանքը ուրանալ նշանակում է ունենալ կոտրված և խոնարհ կյանք, որտեղ դու ոչինչ ես և դատարկ: Միայն խոնարհված մեղավորը լավ գիտի ազապես սիրով ապրելու իր պարտականությունները, նա հուսահատվում է, որ չի կարողանա կատարել դրանք, մինչև Քրիստոսի հանդեպ հավատքով չստանա այս նոր էությունը, նոր կյանքը և ուժը: Մենք պետք է համոզվենք, **մենք կարիք ունենք ճշմարտության և սրբության Հոգու հանդիմանության, որ եսապաշտ կյանքը միայն մահ է առաջացնում:** Բարոյական գործերը կարող են լինել մեռած գործեր:

Նախևառաջ համոզվե՛ք՝ առանց նախ փորձելու բարոյական գործերը: Որպես հավատացյալ՝ դուք իսկապես մասնակից եք Քրիստոսին և Նրա խաչելությանը և ընդունում եք Աստծո ազապես սերը ձեր մեջ բնակվող Քրիստոսով: **Համոզվե՛ք, այնուհետև կատարե՛ք Քրիստոսի օրենքի բարոյական գործերը:** Քանի դեռ ապավինում եք ձեր կամքի ուժին և վճռականությանը, դուք վարվում եք ձեր հին էության համաձայն: **Դուք պետք է ստանաք հայտնություն, որ ձեր հին էությունը (եսապաշտ կյանքը), որ ձեր մեջ է, չափազանց մեղավոր է և չար Աստծո աչքում: Հավատացե՛ք այս ճշմարտությանը: Հավատալը հանգեցնում է սրտում տեսնելուն:** Դուք պետք է իմանաք ձեր էության չափա-

զանց մեղավորությունը: Այն տեսնելն աստիճանաբար աճում է և հետագայում մտնում է ձեր սիրտ, որից հետո պետք է սպասեք Աստծուն: Հայտնությունը տրվում է նրանց, ովքեր փնտրում են և պատրաստ են ընդունելու այն՝ ապրելով Հիսուսի խաչին անձնատուր եղած կյանքով:

Սրբության ճանապարհին ձեր առաջին քայլը սուրբ կյանքով ապրելու վերաբերյալ կասկածելի մտքերը վանելն է: Աներկբայորեն վստահե՛ք ձեր մեջ ապրող Քրիստոսին, վստահե՛ք, որ Նա է ձեր կյանքը: Համոզվե՛ք, որ Նրա Հոգին և Նրա արդարությունը և Նրա բոլոր օրհնությունները ձերն են Նրա շնորհքով, որ Նա քնակվում է ձեր մեջ, իսկ դուք՝ Նրա մեջ: Ապրե՛ք խաչյալ կյանքով ամեն վայրկյան և մնացե՛ք Քրիստոսի մեջ: Սա կբերի ձեզ վստահություն, իսկ վստահությունը բերում է ուժ: Միայն Քրիստոսի մեջ մնալով, այսինքն՝ «ես»- ը ուրանալով կամրապնդե՛ք ձեր վստահությունը Նրա հանդեպ: Մնալով Նրա մեջ՝ դուք առաջընթաց կունենաք և կկատարե՛ք Աստծո կամքը: Դուք ուժեղ կլինե՛ք սատանայի և մեղքի դեմ: Դուք կկարողանաք անել ամեն բան Քրիստոսով, որ զորացնում է ձեզ (Փիլիպ. 4.13):

Այս վստահությունն ու ապավինությունն անհրաժեշտություն են: Դրանք ձեր մտքին ճիշտ ուղղություն են տալիս: Պատրաստում են ձեր սիրտը՝ քայլելու Քրիստոսի հետ միության մեջ (որն արդեն ձերն է), ապրելու և մնալու Խաչյալ Քրիստոսի մեջ և հետևապես ապրելու համաձայն ձեր նոր էության, որ Քրիստոսի մեջ է: Ահա թե որն է հավատքի կյանքը: **Հավատքը ձեռք է, որով և ընդունում ենք Քրիստոսին, և գործում միայն Նրանով:** Քրիստոսը տվել է ձեզ Իր ազապե սերը, որով պետք է ապրե՛ք, մարդկային եսասիրական սիրո փոխարեն: Նա տվել է Իրեն ձեզ համար, Նա դրել է Իրեն ձեր սրտում, որպեսզի դառնա ձեր նոր կյանքը եսպաշտ կյանքի փոխարեն: Այս կերպով Նրա ներկայությունը տալիս է ձեզ զորություն՝ ապրելու Աստծո համար սրբությամբ Քրիստոսի միջոցով, որ քնակվում է ձեր մեջ հավատքով, և ոչ թե ապրելու ձեր կյանքով, ձեր ուժերով: **Ձեր սիրտը կարիք ունի գիտակցելու Աստծո ներկայությունը,** Նրա ներկայությունը Նրա կյանքն է՝ հենց Ինքը, Հոգուց սովորե՛ք սպասել Աստծուն: Մի՛ սպասե՛ք պարզապես օրհնությունների, այլ սպասե՛ք Նրան:

Մենք պետք է իմանանք իրականությունը և ապրենք դրանով: Ապրել իրականությամբ նշանակում է հավատալ, որ մեր հին մարդը խաչվեց Քրիստոսի հետ և պետք է շարունակի խաչվել Նրանում: Սիրելի՛ Քրիստոսի աշակերտ, արդյո՞ք այս ճշմարտության գիտությունն իրականություն է ձեր կյանքում: Սա հավատքի

ամենօրյա կյանք է, որ ներգրավում է ամեն բան. այն շատ վեր է զուտ բարոյական պարտականություններին հետևելուց: Ամեն իրավիճակում, ամեն փոխազդեցության մեջ ես պետք է համարեմ ինձ «մեռած՝ մեղքին և կենդանի՝ Աստծուն՝ Քրիստոսով» (Հռոմ. 6.6, 11) և պետք է համարեմ, որ «Ես Քրիստոսի հետ խաչված եմ... ոչ թե այլևս ես, այլ Քրիստոսն է կենդանի ինձանում» (Գաղ. 2.19, 20): Ահա թե ինչպես կարող ենք «լցվել Հոգով» և «Նրա զորության կարողությամբ»: Աստված չէր պահանջի այս կյանքը մեզնից, եթե չտար մեզ միջոց այն ապրելու համար (Հռոմ. 6 և 7, Եփես. 6.10- 18): **Մենք պետք է ապրենք մեր նոր էության համաձայն, սա հնարավոր է այն ժամանակ, երբ մեր հին էությանը մահվան մատնենք՝ մշտապես ուրանալով այն ներքնակ Քրիստոսի տված զորությամբ: Զորությունը տրվում է հոժար և համաձայնող սրտին:** Սրա համար անհրաժեշտ է հանձնվել խաչին ոչ թե մեկ անգամ, այլ ամեն վայրկյան: Եթե մենք հոժարենք, կարող ք ձեռք բերել այս կյանքը հավատքով և Սուրբ Հոգու լուսավորությամբ: Վստահե՛ք ձեր նոր էությանը, ինչպես որ վստահում եք Քրիստոսին, և դուք կապրեք մեղքի, աշխարհիկության և եսապաշտ կյանքի նկատմամբ հաղթանակով: Ինքնավստահությունը և ինքնապավինությունը ձեր մահացու թշնամիներն են:

Աստծուն սիրելը և մեղքը ատելն անբաժանելի են: Յուրաքանչյուր մեղք միշտ էլ չար է՝ ըստ Աստծո: Մենք պետք է լսենք Աստծո Խոսքը, որպեսզի ճանաչենք մեր մեղքերը և իմանանք, թե ինչ է մեղքը, և ոչ թե լսենք աշխարհի կարծիքը: Աստծուն մեր ամբողջ սրտով, զորությունով և մտքով սիրելու պատվիրանին հնազանդվելը ստիպում է մեզ հնազանդվել Նրան՝ ատելով բոլոր մեղքերը, հատկապես՝ անձնական: Սիրել Աստծուն նշանակում է արհամարհել այն ամենը, ինչ հակառակ է Նրան: Արդյո՞ք իմ սիրտը հավատում է այս ճշմարտությանը: Աստծո հանդեպ սերը միշտ կուղեկցվի մեղքի նկատմամբ ատելությամբ: Մեղքի նկատմամբ ատելությունը ինքնաբերաբար չի առաջանում մարդու մեջ, դրա համար պետք է աղոթել, և դա պետք է ընդունել սրտում: Միայն նոր մարդը՝ նոր արարչությունը, կարող է ատել մեղքը: Սրբության կյանքն առաջանում է այս երկու բանից. (1) սիրել Աստծուն և ուրիշներին ազապես սիրով, և (2) ատել մեր մեղքերը և մեր մեղավորությունը: Ընդունում եք ձեր մեղքերը որպես մեղք: Տեսնում եք ձեր մեղքերը որպես չար: Տեսնում եք ձեր էության մեղավորությունը: Աղոթում եք, որ ձեր մեջ հանդիմանություն գա: Պատրաստում եք ձեր անձը: Մենք ունենք ընտրողական վերաբերմունք, երբ հերթը հասնում է ուրիշներին սեր, հոգատարություն և ըն-

դունելություն ցուցաբերելուն: **Ազապե սեր՝ անվերապահ, անշահախնդիր և հոգատար սեր, չցուցաբերելը մեղք է:** Խորհե՛ք այս հարցերի շուրջ: Ինչպե՞ս եք հաճեցնում Աստծուն: Արդյո՞ք ամենօրյա մեղքերի խոստովանությամբ և ապաշխարությամբ: Համարո՞ւմ եք ձեր եսապաշտ կյանքը ձեզ մահացու թշնամի: Եղե՛ք մենակ Աստծո հետ, շատ բաներ կան Տիրոջ ներկայության մեջ մտորելու համար:

Մտորե՛ք Աստծո հետ: Մեր մտորումներն Աստծո հետ կարող են առաջնորդել, որ բացահայտենք մեզ ճշմարտապես: Հոգին սպասում է, որ գնանք Աստծո մոտ «ես»- ի այս անմիջական բացահայտման համար, որն աստվածային խոր հոգևոր փորձառություն է: Ճշմարտապես ինքնաբացահայտումը բացահայտում է Աստծուց: Այն հոգու հավիտենական որոնում է Աստծո հետ անձամբ լինելու համար:

Սիրելի՛ քրիստոնյա և աշակերտ, հավատացե՛ք, որ դուք հաշտվել եք Աստծո հետ, որ ձեր բոլոր անցյալ մեղքերը ջնջվել են: Կրկին գնացե՛ք Աստծո մոտ և գնացե՛ք ամեն օր, որպեսզի խոստովանեք ձեր ներկա մեղքերը՝ ներում ստանալու և սրբվելու համար: Նրա շնորհքը և ողորմությունը միշտ հասանելի են ձեզ Հիսուսի արյունով: Հավատացե՛ք սրան առանց որևէ կասկածի: **Հավատացե՛ք, որ Աստված ձեր սիրող Հայրն է, ձեր սերը, ձեր ամենաբավ և հավիտենական բաժինն ու երջանկությունը Հիսուս Քրիստոսով:** Տեսե՛ք Աստծուն այսպես, և Աստված կշահի ձեր սերը, և հավիտենությունը մուտք կգործի ձեր հոգու մեջ այստեղ՝ երկրի վրա:

Գլուխ 7. Մնալ Քրիստոսի մեջ

Այս գլուխն անդրադառնում է հետևյալ հիմնական թեմաներին. ինչ է իրականում Քրիստոսի մեջ մնալը, Քրիստոսի և հավատացյալի սիրո միությունը, այն կյանքը, որ ապրում եմ Քրիստոսի մեջ մարդկանց հետ, և այն կյանքը, որն ապրում եմ Քրիստոսի մեջ Աստծո հետ, և սրտի հարատև հաղորդություն Հոր հետ: Մենք կքննարկենք այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ինչ է նշանակում մնալ Քրիստոսի մեջ, և ինչ է դա ենթադրում, ինչ է սրտի հաղորդությունը Աստծո հետ, ի՞նչ է հաղորդության և հաղորդակցության տարբերությունը, ինչի՞ հետ է կապված Քրիստոսի հետ հարատև միությունը, ինչո՞ւ են հայտնությունները, հատկապես իմ մեղքերի չափազանց մեղավորության և անձամբ իմ հանդեպ Աստծո

ողորմության և բարության չափազանց մեծության մասին, կապված Քրիստոսի հետ իմ հարատև հաղորդության հետ, ինչպես է Քրիստոսի հետ հարատև հաղորդությունը տանում Հորը հոգով և ճշմարտությամբ երկրպագության:

Հիսուսն ասաց. «Կացե՛ք Ինձանում, և Ես՝ ձեզանում. ինչպես որ ճյուղն իր անձից չի կարող պտուղ բերել, եթե որթում չմնա, այսպես էլ դուք, եթե Ինձանում չմնաք: Ես որթն եմ, դուք՝ ճյուղերը. նա, որ Ինձանում մնում է, և Ես՝ նրանում, շատ պտուղ է բերում, որովհետև առանց Ինձ չեք կարող ոչինչ անել: Եթե մեկն Ինձանում չի մնում, նա դուրս կգցվի ինչպես ճյուղը, և կչորանա, և ժողովում են նրանց և կրակի մեջ գցում, և այրվում է» (Հովհ. 15.4- 6):

Հիսուսն ասաց. «...**Ես եմ հարությունը և կյանքը**. Ինձ հավատացողը թեև մեռնի էլ, կապրի: Եվ ամեն, ով որ կենդանի է և Ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի. հավատում ես սրան» (Հովհ. 11.25, 26):

Ինչ է նշանակում «կենալ»: Ինչ է նշանակում «կենալ» Քրիստոսի մեջ:

Համաձայն Նոր կտակարանի բառերի բացատրական բառարանի՝ «կենալ» նշանակում է մնալ ինչ- որ տեղ, մնալ և ապրել ինչ- որ վայրում և հետևել ու համապատասխանել այդ վայրին: Նայելով «կենալ» բայի քերականական իմաստին՝ մենք ստանում ենք լրացուցիչ հասկացողություն դրա նշանակության վերաբերյալ: Բայը հունարենում ակտիվ հրամայական է: Դա հարկադրական հրաման է, որ նշանակում է. «Հնազանդվիր սրան, արմ սա կամ ավելի լավ է՝ անես սա»: Հետևաբար «կացե՛ք Ինձանում»- ը հրաման է, որ նշանակում է «մնացե՛ք և ապրե՛ք Ինձանում», հնազանդվե՛ք դրան: Աստծո այս հրամանն ունի հետևանքներ. եթե ես չմնամ Քրիստոսի մեջ և չբերեմ պտուղ, ճյուղերը կհավաքեն, կգցեն կրակի մեջ և կայրեն (Հովհ. 15.4- 6):

«Ես Որթն եմ, դուք՝ ճյուղերը. նա, որ Ինձանում մնում է, և Ես՝ նրանում, նա շատ պտուղ է բերում, որովհետև առանց Ինձ չեք կարող ոչինչ անել»: Իմ իսկական էությունը ճյուղ լինելն է: «Կենալը» իմ իսկական էությամբ ապրելն է՝ որպես ճյուղ որթին կապած ապրելը: Երբ որթը և ճյուղերը պտուղ են բերում, իրագործում են իրենց նպատակը, նրանք այն են, ինչ պետք է լինեն: Աստծո մեծագույն պատվիրանը Իրեն և միմյանց սիրելն է, ինչպես Ինքը սիրեց մեզ: Սա է Քրիստոսի մեջ մնալու կյանքի պտուղը. ազապե սեր՝ ուրիշների հանդեպ անշահախնդիր, անձնագոհ, անվերապահ սեր, և

սրանից էլ բխում են աստվածային մյուս օրհնությունները: Նայենք Հովհաննես առաքյալի՝ այս ճշմարտության բացատրությունը:

Քրիստոսի մեջ մնալու հոգևոր նշանակությունը. «Ինչպես Իմ Հայրն Ինձ սիրեց, Ես էլ ձեզ սիրեցի. կացե՛ք Իմ սիրո մեջ: Եթե Իմ պատվիրանները պահեք, Իմ սիրո մեջ կկենաք. ինչպես Ես Իմ Հոր պատվիրանները պահեցի և կենում եմ Նրա սիրո մեջ: Այս բաները խոսեցի ձեզ հետ, որ Իմ ուրախությունը ձեզանում մնա, և ձեր ուրախությունը լցված լինի: Սա է իմ պատվիրանը, որ իրար սիրեք, ինչպես որ Ես ձեզ սիրեցի: Ոչ ոք նրանից ավելի մեծ սեր չունի, որ մեկն իր անձը դնի իր բարեկամների համար» (Հովհ. 15.9- 13): Այս հաստատված առանձնացնում է Քրիստոսի մեջ մնալու միայն մեկ տեսակի պտուղ՝ ազապե սերը: Մյուս օրհնությունները բխում են այս ազապե սիրուց, որովհետև Աստված սեր է, և ես մնում եմ Նրանում: «Եթե մեկն Ինձանում չի մնում... Նա կտրում է (կրակն է զցում) ամեն ճյուղ, որ Ինձանում պտուղ չի բերում»: «Արդ ապաշխարության արժանի պտուղ արեք» (Մատթ. 3.8): **Ամեն բան, որ անում ենք, պետք է լինի ազապե սիրով, այլապես դա Որթի պտուղ չէ և կայրվի:** Դա չի ներկայացնում հարության կյանքը: «Առանց Ինձ ոչինչ չեք կարող անել». սա վկայակոչում է այն կախվածությունը, որը կարող է պտղաբեր լինել, այն է՝ Աստծուց բացարձակ կախվածությունը: **Առանց ազապե սիրո մենք ուրիշների համար չենք կարող անել որևէ բան, որն ընդունելի կլինի Որթին, մենք կքայլենք եսապաշտ կյանքի խավարի մեջ:** «...Իսկ հիմա լույս եք Տիրոջ մեջ. լույսի որդիների պես գնացե՛ք: Որովհետև Հոգու պտուղը ամեն բարությունով է և արդարությունով և ճշմարտությունով» (Եփես. 5.8,9): Հետևաբար Քրիստոսի մեջ մնալը կապված է ուրիշներին ազապե սիրով սիրելու հետ: Մնալ Քրիստոսի մեջ նշանակում է իսկական էությանմբ՝ սիրով, ապրել Քրիստոսի մեջ: Եթե ես պահպանեմ իմ իսկական էությունը (անշահախնդիր, անձնագոհ ազապե սերը), իմ գործողությունները և գործերը ընդունելի կլինեն Աստծուն, որովհետև դա կներկայացնի հարության կյանքը: «Քրիստոսն իմ մեջ» սիրո կյանքն է, որ գոյություն ունի իմ մեջ: Հիսուսը հռչակեց. «Ես եմ հարությունը և կյանքը»:

Ահա մի քանի օրհնակներ, որ մարդիկ բերում են այն կյանքի մասին, որը հարատևում է Քրիստոսի մեջ: «Ես շարժվում եմ հավատքով և հավատում եմ, ես հնազանդվում եմ Աստծուն՝ անելով Նրա կամքը ամեն ինչում, ես վստահում և ապավինում եմ Աստծուն, ես հետևում եմ Հոգուն, սպասում եմ Նրա խորհրդին, ես

կարդումեն Խոսքը և կանոնավոր աղոթում են ու սպասում Նրա խորհրդին, ես վկայում են և բաժնեկցում իմ հավատքը, ես վարվում են սիրով և հոգատարությամբ, ես պայքարում են իմ կյանքում մեղքի և անհավատարմության դեմ, ես մերժում և ուրանում են իմ մարմինը և մեղքերը, ես գործադրում են իմ կյանքում մեղքի զորության նկատմամբ Հիսուսի հաղթանակը, ես հավատքով գործադրում են Հիսուսի հաղթանակը սատանայի և չար ոգիների դեմ»: Ահա օրինակներ, որ մարդիկ բերում են Քրիստոսի մեջ չմնալու, իսկական էությանը չապրելու մասին. համբերության և բարության պակաս, նախանձ, հպարտություն, ամբարտավանություն և կոպտություն, հոգատարության և ընդունելության բացակայություն, վրդովմունք, դառնություն և բամբասանք, հիշաչարություն, պնդել իրենը, հաճախակի քննադատել և դատապարտել, ամեն բան չհանդուրժել, չներել, ամեն բանի չդիմանալ և բամբասել: Մենք մնում ենք Քրիստոսի մեջ, ով սեր է: Քրիստոսի մեջ մնալու պտուղը ազապե սերն է (Հովհ. 15.9- 13): Այն ծառայությունը, որը չի բխում ազապե սիրո անձնվեր կյանքից, չի կարող իրականանալ ազապե սիրով և չի դրսևորվում կոտրվածության և խոնարհության մեջ: Այս ծառայությունը բխում է եսապաշտ կյանքից՝ մարմնից:

Մինչև հիմա մենք նայեցինք «մնալ» (կենալ) բառին, տեսանք, թե ինչ է այն ներառում, ինչպես են մարդիկ նայում դրան, և մենք ինչ պետք է անենք: Բայց ո՞րն է հենց Քրիստոսի մեջ մնալը:

Ո՞րն է հենց Քրիստոսի մեջ մնալը: «Կացե՛ք Ինձանում, և Ես՝ ձեզանում...» (Հովհ. 15.4): Այս խոսքում կենալը կամ մնալը փոխադարձ, անձնական և սերտ փոխգործողություն է: «Եթե կենաք Ինձանում, և Իմ խոսքերը ձեզանում կենան, ինչ որ էլ կամենաք, կխնդրեք, և կլինի ձեզ»: Համաձայն այս խոսքի՝ Քրիստոսի մեջ մնալը բերում է առատության կյանք՝ լի օրհնություններով (կամեցեք, և կլինի): Ինչպե՞ս: **Հովհաննեսի 15.9- 13- ում Խոսքն առանձնացնում է Քրիստոսի մեջ մնալու միայն մեկ պտուղ՝ ազապե սերը:** Այսպիսով՝ «ինչ էլ կամենաք, կլինի ձեզ» պնդումը կապված է հարատև կյանքի հետ, որն ապրում է ազապե սերը: «Եթե մեկն Ինձ սիրում է, Իմ խոսքը կպահի, և իմ Հայրը կսիրի նրան, և նրա մոտ կգանք և բնակություն կանենք նրա մոտ» (Հովհ. 14.23): Այս խոսքում տեսնում ենք, որ մնալը նաև սիրո հաղորդություն է՝ «բնակություն կանենք նրա մոտ», ինչը խոսում է միմյանց հետ մշտապես ներդաշնակ ապրելու մասին: «Եթե Իմ պատվիրանները պահեք, Իմ սիրո մեջ կկենաք ... որ ձեր ուրախությունը լցված լինի: Դուք Իմ բարեկամներն եք, եթե անեք, ինչ որ ես պատվիրում են

ծեզ» (Հովհ. 15.10, 11, 14): Սա հատկանշում է ընկերության և սիրո փոխհարաբերություն, որը լի է ուրախությամբ և հիմնված է սիրա-
ռատ հնազանդության կյանքի վրա: Սակայն նկատենք, որ հնազան-
դությունը պետք է ներառի մեղք չգործելը. այն ճյուղը, որ ապրում է մեղքի մեջ, «դուրս կգցվի և կչորանա: Եվ ժողովում են նրանց և կրակի մեջ գցում» (Հովհ. 15.6): Որպես ամփոփում՝ մնալը (1) իմ և Աստծո և (2) իմ և ուրիշների սիրո միություն է: Աստծո հետ հա-
րատև հաղորդությունը պահպանում է այս կենդանի միությունը:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ Աստծո հետ

1. Ո՞րն է Քրիստոսի մեջ մնալու հոգևոր նշանակությունը:
2. Կամ փոխհարաբերություն Քրիստոսի մեջ մնալու պտղի՝ ազապետ սիրո և խոնարհության միջև: Բացատրե՛ք:

Մնալը Աստծո հետ հաղորդության կյանք է: Աստվածաշնչում կա տարբերություն հաղորդակցության և հաղորդության միջև: Մեր սահմանումները որոշում են մեր սպասումները: Հաղոր-
դակցությունը բարեկամական ընկերակցություն է, որը կենտրո-
նանում է գործընկերության և հաճախ շահերն ու նպատակնե-
րը բաժնեկցելու վրա: Այն կարող է լինել կամ չլինել անձնական փոխազդեցություն: Հաղորդությունը մշտապես պարունակում է «անձնական» միություն կամ բաժնեկցում, այն «անձնական» հա-
ղորդակցություն է, որը սովորաբար կենտրոնանում է ոչ միայն մտքերը, այլև սիրտն ու զգացմունքները միմյանց հաղորդ դարձ-
նելու վրա: Աստվածաշնչյան հաղորդությունը բխում է հայտնութ-
յունից և կենտրոնանում է Աստծո հետ անձնական բացահայտ-
ման և սրտերը հաղորդ դարձնելու վրա: Որպես հավատացյալ՝
իմ միությունը Քրիստոսի հետ պարզապես աստվածաբանական դիրքորոշում չէ, զուտ հասկացություն չէ, այլ կենդանի անձնա-
կան միություն Քրիստոսի հետ, որովհետև հիմնված է սրտերի միության վրա, որը ձևավորվել է ճշմարտությամբ և ազնվութ-
յամբ, երկրի վրա Աստծո հետ ամենօրյա մշտական կյանքով: Քրիստոսի մեջ մնալը սկսվում է որպես հաղորդակցություն, այ-
նուհետև դառնում է կենդանի, սրտի հաղորդություն Հոր հետ:

Քրիստոսի մեջ մնալն ունի երկու կողմ: Այն կյանք է Քրիստոսի մեջ, որ ապրում եմ մարդկանց հետ, և կյանք է Քրիստոսի մեջ, որ ապրում եմ Հայր Աստծո հետ:

Մնալ Քրիստոսի մեջ. կյանք Քրիստոսի մեջ, որ ապրում եմ մարդկանց հետ

Քրիստոսի մեջ մնալը Քրիստոսի անվերապահ սիրո կյանքն է, որ ապրում եմ մարդկանց հետ: Ավելի վաղ տեսանք, որ Քրիստոսի մեջ մնալու պտուղը ազապե սիրով ապրելն է մեր կյանքում՝ մեր վարքագծի մեջ, հատկապես այն մարդկանց հետ, որոնց հետ փոխազդեցության մեջ ենք կամ ունենք փոխհարաբերություններ: Քանի որ մենք ապրում ենք մարդկանց հետ սիրո առանձնահատուկ կյանքով, պետք է պատասխանենք այս հարցին՝ արդյո՞ք ազապե սերը տարբերվում է եղբայրական սիրուց: Արդյո՞ք մենք գործ ունենք ավելի շատ սիրո (քանակ) կամ այլ տեսակի սիրո (որակ) հետ: Ազապե սերն Աստծո անվերապահ, անշահախնդիր, անձնվեր և անձնազոհ սերն է, որը խաչը ցուցադրում է աշխարհին: Եղբայրական սերը սա չէ. այն չի կարող այսպիսին լինել: Այն կփորձի նմանվել, բայց միայն կբերի երկրային, մարդկային արդյունքներ: Աստծո ազապե սիրով ապրելը Աստծո կոչն է ինձ, եկեղեցուն:

Այս անվերապահ սիրո հարատև կյանքը, որ ես պետք է ապրեմ մարդկանց հետ, վերաբերում է իմ վարքագծին և վարվելակերպին՝ հատկապես իմ փոխհարաբերության շրջանակում: Այն նաև վերաբերում է իմ համայնքում ծառայելուն, օգնելուն և մարդկանց կարիքների համար զոհաբերելուն: Ինչպե՞ս ապրեմ այս աստվածապաշտ կյանքը, որն Աստված ակնկալում է ինձնից: Որտե՞ղ փնտրեմ այս անվերապահ, անձնվեր սիրո բացատրությունը կամ նկարագրությունը: Ահա Աստծո պատասխանը:

«Սերը (ազապե) երկայնամիտ է՝ քաղցր է. սերը չի նախանձում, չի գոռոզանում, չի հպարտանում: *Չի լրբանում (անզլերենում՝ իր ճանապարհը չի պնդում)*, իրենը չի որոնում, չի գրգռվում, չարը չի մտածում: Անիրավության վրա չի ուրախանում, բայց ուրախանում է ճշմարտության հետ. *ամեն բանի դիմանում է. ամեն բանի հավատում է, ամեն բանի համար հույս ունի, ամեն բանի համբերում է: Սերը երբեք չի վերջանա...*»: (Ա Կորնթ. 13.4- 8): «Եվ ով որ ուզի քեզ հետ դատ վարել և քո շապիկն առնել, քո բաճկոնն էլ թող նրա մոտ: Եվ ով որ քեզ պահակ բռնած մեկ մղոն քշի, նրա հետ երկուսը գնա: Քեզնից բան ուզողին տո՛ր... Բայց ես ասում եմ ձեզ. սիրե՛ք ձեր թշնամիներին, օրհնե՛ք ձեզ անիծողներին... և աղո՛թք արեք ... ձեզ հալածողների համար» (Մատթ. 5.40- 44): «Օրհնե՛ք ձեզ անիծողներին, աղո՛թք արեք ձեզ նեղացնողների համար» (Լուկ. 6.28): Սա է հարության կյանքը:

Նրա անձնագրի սիրո շնորհիվ, որը ես զգում եմ, ուզում եմ պատկանել Աստծուն և լինել միայն Նրանը: Ես գնված եմ մեծ գնով, «որ Իր արյունով ստացավ» (Գործք 20.28): Ես Աստծո «ստացվածքն» եմ (Եփես. 1.14): Հետևաբար ես լիովին պատկանում եմ Աստծուն, և սա ենթադրում է Աստծո կողմից լիարժեք և ամբողջական տիրապետում: Սերը ենթադրում է պատկանելություն այն մարդուն, որն իսկապես սիրում է ձեզ, և կարող է ներառել անձնագրիություն: Պատկանել Քրիստոսին նշանակում է պատկանել Նրան և զոհել անձը: Միայն Աստծուն պատկանելին է հանգեցնում Նրա ընտանիքին պատկանելուն: Ես չեմ պատկանում ինքս ինձ իմ փոխհարաբերություններում, ես պատկանում եմ իմ եղբորը կամ քրոջը, ես իրավունք չունեմ գործածելու իմ կյանքն այնպես, ինչպես ցանկանում եմ, ինչպես առաջ էի գործածում, ես այլևս չունեմ արտոնություն պնդելու կամ պաշտպանելու (Մատթ. 5.40- 44, Ղուկ. 6.28): Քրիստոսի մեջ մնալը ազապե սիրո կյանք է, որն ապրում եմ մարդկանց հետ, և հնարավոր է միայն Քրիստոսի մեջ, երբ ապրում եմ Նրա անձնագրիության կյանքով: Աստծուն և մարդկանց պատկանելության այս կյանքը պահանջում է խաչի վրա եսապաշտ կյանքի զոհաբերում, որը Հիսուսը հնարավոր է դարձնում ինձ համար, եթե փնտրում եմ դա Նրա ճանապարհներով: Մենք անդրադարձանք այս թեմային նախորդ երկու գլուխներում:

Մարդկային սերը մեծապես տարբերվում է ազապե սիրուց: «Եղբայրասիրությունում (ֆիլեո, ընկերական սեր, ոչ թե ազապե) իրար վրա գթած եղեք. պատիվ տալու մեջ իրար առանց անցեք» (Հռոմ. 12.10): Այստեղ քաջալերվում է եղբայրական սերը կամ քաղցրությունը, Աստված ցանկանում է, որ նվիրվենք եղբայրական սիրուն: Մենք պատրաստ ենք ընդունելու սա և պատրաստ ենք ապրելու սրանով: Սակայն ուշադրություն դարձրեք, թե ինչ է Աստված ավելացնում հաջորդ խոսքում. «...ամեն ջանք անելով ձեր հավատքով ներկայացրեք առաքինությունը և առաքինությունով՝ գիտությունը, գիտությունով՝ ժուժկալությունը, և ժուժկալությունով՝ համբերությունը և համբերությունով՝ աստվածապաշտությունը և աստվածապաշտությունով՝ եղբայրասիրությունը (ֆիլադելֆիա, ֆիլեո) և եղբայրասիրությունով՝ սերը (ազապե)» (Բ Պետր. 1.5- 7): Նկատեք, եղբայրասիրությունը բավական չէ, ամեն ջանք արեք, որ եղբայրասիրությանն ավելացնեք ազապե սերը: Բայց ուշադրություն դարձրեք, թե էլ ինչ է Աստված ավելացնում. «...Սիրեք (ազապե) իրար, ինչպես Ես ձեզ սիրեցի, որ դուք էլ (պետք է) իրար սիրեք (ազապե)» (Հովհ. 13.34): Ահա

Աստծո ուղերձը նրանց, ովքեր ցանկանում են մնալ Քրիստոսի մեջ. մարդկային սերը պետք է փոխարինվի ազապե սիրով: Տեսնում ենք այս ճշմարտությունը և իսկապես հավատում ենք սրան: Մենք այնքան գոհ ենք մարդկային սիրով ապրելուց, այնքան երջանիկ ենք մեր բարելավումներով: Մենք Հոգուց աստվածային հանդիմանության կարիք ունենք. հանդիմանություն **«պարտադիր»** ազապե սիրո համար մեր փոխհարաբերություններում և մեր վարքագծում: Մարդկային սերը պատկանում է մարդկային էությանը, ազապե սերը պատկանում է աստվածային էությանը: Աստված եկեղեցուն ասում է. **«Դուք պետք է սիրեք ազապե սիրով, ինչպես ես»:** Ինչպիսի պատվեր: Աստված ցանկանում է, որ երկնքի կյանքը դրսևորվի այստեղ՝ երկրի վրա, եկեղեցու միջոցով: Սա Նրա կամքն է ինձ համար:

Մարդու ցուցաբերած ամեն բարություն կամ համբերատարություն չէ, որ գործում է Աստծո արդարությունը այլ անձի մեջ: Մենք պետք է ապրենք աստվածային ազապե սիրով, աստվածային բարությամբ և աստվածային համբերությամբ, որոնք բխում են անձնվեր սրտից: Սուրբ Հոգին բերում է Աստծո էությունը մեր մեջ, մեր նոր էության մեջ, մենք «նոր արարած» ենք (Բ Կորնթ. 5.17): Ես պետք է ձգտեմ, որ նոր էությունն իշխի իմ կյանքում, իսկ դրա համար պետք է մնամ Քրիստոսի մեջ, ապրեմ՝ ամեն վայրկյան մերժելով և ուրանալով հին էությունը:

Քրիստոսի մեջ մնալը հաղորդության կյանք է, բաժնեկցելու և ազապե սիրով ծառայելու կյանք: Քանի դեռ ես բավարարված եմ մարդկային սիրով որպես ազապե սիրո փոխարինող և չեմ լսում միմյանց ազապե սիրով «պարտադիր» սիրելու կոչը, Հոգու հանդիմանությունը չի մտնի իմ սիրտ: Մենք ինչ-որ բաներ ենք անում մարդկանց համար, որպեսզի ծածկենք մեր փոխհարաբերություններում անձնվեր ազապե սիրո բացակայությունը: Ես պետք է հանդիմանվեմ իմ մարդկային սիրո անբավարար լինելու համար: Փնտրել Հոգու օծությունը՝ չձգտելով ապրելու ազապե սիրով, նշանակում է մնալ եսապաշտ կյանքի մեջ: Ազապե սերը հոսում է ճշմարիտ Որթից դեպի ճյուղերը (Հովհ. 15): **Ես պետք է գնամ դեպի խաչը ամեն օր, որպեսզի ստանամ ազապե սեր ուրիշների համար: Այն չի կարող պահվել հաջորդ օրվա համար: Ես պետք է ստանամ այն ամեն օր, ամեն վայրկյան:**

«Իսկ ձեզ աճեցնի և ավելացնի Տերը սիրով դեպի իրար և դեպի ամենը, ինչպես որ մենք էլ դեպի ձեզ: Որ ձեր սրտերը հաստատվեն անարատ սրբությունով Աստծո և մեր Հոր առաջ...»

(Ա Թես. 3.12,13): Ինչն է ինձ հաստատում սրբության մեջ: Դա ազապե սերն է, իրար հետ ազապե սիրով ապրելը, ինչը նշանակում է ապրել այդ սիրով իմ փոխհարաբերություններում, վարքագծում և վարվելակերպում:

Միայն ազապե սերը կարող է բերել ճշմարիտ սրբություն: Կրկին հաստատում եմ. Քրիստոսի մեջ մնալը՝ ուրիշների հետ ազապե սիրով հաղորդության կյանքը, իմ իսկական էությունն է, նոր արարածը, որ իմ մեջ է: Իսկ ի՞նչ է Աստծո իսկական էությունը: Դա Նրա սերն է, հետևաբար և սրբությունը, որ մղում են Նրան՝ կյանքը տալու մարդկանց համար: Իսկ ի՞նչ է իմ իսկական էությունը: Պատասխանը պետք է լինի նույնը՝ ազապե սերը և սրբությունը, որ մղում են ինձ՝ տալու իմ կյանքը՝ Նրա խոնարհությամբ մարդկանց ծառայելու համար: Իմ իսկական էությամբ ապրել նշանակում է տալ իմ կյանքը, ինչպես Քրիստոսն արեց, որովհետև ես այլևս չեմ պատկանում ինքս ինձ: Ահա նման կյանքի մի քանի օրինակ: Պողոսը գրում է հռոմեացիներին. «Պատիվ տալու մեջ իրար առանց անցեք», կորնթացիներին. «Սիրեք», և չկա սեր առանց խոնարհության՝ որպես նրա արմատի, «սերը չի լրբանում, իրենը չի որոնում, չի գրգռվում», գաղատացիներին. «Սիրով ծառայեք իրար: Սնապարծ չլինենք՝ իրար գրգռելով և իրար նախանձելով», եփեսացիներին. «Ամեն խոնարհությունով և հեզությունով և երկայնմտությունով, սիրով *իրար* համբերելով», «ամեն ժամանակ ամեն բանի համար գոհացեք, *իրար* հնազանդ եղեք Աստծո վախով», փիլիպեցիներին. «Ոչ մի բան չլինի գրգռումով և ոչ էլ սնապարծությունով, այլ խոնարհությունով թող մեկը *մյուսին* իր անձից ավելի լավ համարի: Ձեր ամեն մեկը թող այն մտածի, որ Քրիստոս Հիսուսում էր, որ Իր անձն ունայնացրեց և, ծառայի կերպարանք առնելով, Իրեն խոնարհեցրեց», կոդոսացիներին. «Հագեք ողորմասիրտ գթածություն, քաղցրություն, խոնարհություն, հեզություն, երկայնամտություն՝ *իրար* համբերելով և *իրար* ներելով, ինչպես Քրիստոսն էլ ձեզ ներեց»:

ՄՏՈՐՈՒՄ Աստծո հետ

1. «Քրիստոսի մեջ մնալը առանձնահատուկ կյանք է, որ ապրում եմ Քրիստոսի մեջ մարդկանց հետ»: Ինչպե՞ս է Աստծուն և մարդկանց պատկանելը կապված այս պնդման հետ:
2. Ինչպե՞ս են Քրիստոսի մեջ մնալը և մարդկանց հետ այս մնայուն կյանքով ապրելը կապված խաչի մոտ գնալու հետ:

Մնալ Քրիստոսի մեջ. կյանք Քրիստոսի մեջ, որն ապրում եմ Աստծո հետ

Մնայուն միության մյուս նպատակը իմ սրտի և Հոր սրտի միջև անձնական, սրտից սիրտ միասնություն կամ միություն կառուցելն է: Հոգու միջոցով Հայրը ցանկանում է առավել խոր մակարդակներում հայտնել ինձ Իր սիրտը, ինչպես նաև ինքս ինձ: Հարատև միության այս տեսակետը տարածված չէ: Սիրո այս հարատև միությունը բովանդակում է հենց կյանքի հիմքը: Աստված կառուցում է այս հիմքը մեր մեջ Իր հետ սրտի հաղորդության ընթացքում: Ինչի՞ն է Աստված հետամուտ: Որ իմ սիրտը, հետևաբար իմ սերը առավել խոր և առավել անկեղծորեն արձագանքեն Իրեն, որ առավել խոր հաղորդություն ունենամ Իր հետ: Հոր հետ հաղորդության այս կյանքն առնչություն ունի երկու ոլորտների հետ՝ (1) Աստծո քաղցրության և ողորմության, (2) իմ սաստիկ մեղավորության, իմ մեղքերի չափազանց մեղավորության: Եվ իմանալը, և տեսնելը Սուրբ Հոգով էական են այս հայտնություններն ընդունելու համար: Խաչի հաղորդությունը այս հայտնությունները վերապրելու բանալին է:

Արդի հարավը հաղորդություն. հայտնություններ Աստծո քաղցրության մասին

Այս հաղորդության մեջ Հոգին փուլ առ փուլ հայտնում է իմ սրտին Աստծո քաղցրությունը, քանի որ Նա տեղ է ազատում դրա համար. «Որ նոր եկող դարերում հավիտյան ցույց տա Իր շնորհքի գերազանց մեծությունը, Քրիստոս Հիսուսի մեզ վրա ցույց տված քաղցրությունով» (Եփես. 2.7), «Բայց էլ ավելի շատ եղավ մեր Տիրոջ շնորհքը հավատքով և սիրով, որ Քրիստոս Հիսուսում է» (Ա Տիմ. 1.14), «...Եհովա՛, Եհովա՛ Աստված՝ ողորմած և գթած, երկայնամիտ և առատ ողորմությունով և ճշմարտությունով» (Ելից 34.6), «Որ ճանաչեք Քրիստոսի սերը, որ ամեն գիտությունից գերազանց է, և որ Աստծո ամեն լիությունով լցվեք» (Եփես. 3.19), և «Եվ ի՞նչ է Նրա զորության գերազանց մեծությունը մեզանում, որ հավատացիներ Իր կարող զորության հաջողության պես» (Եփես. 1.19):

Ինչի՞ն է հետամուտ Աստված: Աստված հետամուտ է իմ սրտին: Նա ցանկանում է, որ իմ սիրտը հոգով իմանա և տեսնի Իր շնորհքի, սիրո և քաղցրության գերազանց հարստությունը և մեծությունը և փուլ առ փուլ խորապես ՏԵՄՆԻ Իր բնավորությունը և էությունը: Իմ սիրտը չի կարող տեսնել առանց աստվածային հայտնության: Մենք չենք տեսնում այն ամենը, ինչ գիտենք: Մեզ շրջապատող ամեն ինչ չէ, որ մենք տեսնում ենք: Մենք ասում

ենք, որ ճանաչում ենք Աստծո մեծ սերը: Մենք բավարարարված ենք զգում, քանի որ Նա պատասխանում է մեր աղոթքներին՝ արտահայտելով Իր մեծ ողորմությունը և քաղցրությունը: Աստված ցանկանում է ավելի խոր թափանցել մեր սրտի մեջ և նոր բան հայտնել: Աստված հետամուտ է, որ մենք շարունակ նորովի տեսնենք Իր գերազանց քաղցրությունը, Իր սրտի մշտապես ավելացող քաղցրությունը, այլ ոչ թե պարզապես «իմանանք» Նրա սերը, շնորհքը, քաղցրությունը, ողորմությունը կամ զորությունը: Սա ես արդեն գիտեմ: Ոչ թե պարզապես զգանք Նրա սիրո և քաղցրության «ներկայությունը»: Սա ես արդեն ամեն օր վերապրում եմ: Աստված ցանկանում է, որ իմ սրտում տեսնեմ և վերապրեմ Իր սիրառատ բնավորության գերազանց մեծությունը: Հենց սա պետք է ճանաչեմ ավելի ու ավելի խորությամբ: Աստիճանաբար աճող այս հայտնությունը տրվում է Հոր հետ սրտի հաղորդության ժամանակ: **Աստված հետամուտ է ինձ հետ սրտի հաղորդության, Նա փափագում է սրտի այս միությունը**: Իմ թաքնված ողբերգությունն այն է, որ ես ապրում եմ իմ կյանքը՝ հավատալով, որ ճանաչում եմ Նրան բավականաչափ և բավականաչափ ճանաչում եմ Նրա մեծ սերը և ողորմությունը: Սովորե՛ք լինել մենակ Աստծո հետ: Սովորե՛ք լինել անկեղծ Նրա հետ:

Աստծո բնավորությունը և էությունը տեսնելը Նրա սրտից փոխանցվում է իմ սրտին հաղորդության ժամանակ: Սրտի հաղորդությունը պատրաստում է ինձ այս հայտնության համար: Սա այն է, ինչին Աստված հետամուտ է. «Որ նոր եկող դարերում հավիտյան ցույց տա Իր շնորհքի գերազանց մեծությունը, Քրիստոս Հիսուսի մեզ վրա ցույց տված քաղցրությունով» (Եփես. 2.7): Նրա շնորհքի և քաղցրության գերազանց մեծությունը տեսնելը կապված է սեփական մեղքերի և հին էության, այսինքն՝ իմ իսկական մարդկային էության չափազանց մեղավորությունը տեսնելու հետ: Աստծո գերազանց սերը և քաղցրությունը տեսնելը և մեղքերի չափազանց մեղավորությունը տեսնելը անջատ չեն, դրանք նույն մետաղադրամի երկու կողմերն են: Փորձառությունը մեկն է:

Մնայուն հաղորդություն. հայտնություններ իմ մեղքերի չափազանց մեղավորության մասին:

Հոր հետ հաղորդության ժամանակ Սուրբ Հոգին բերում է երկու հանդիմանություն իմ սրտի մեջ իմ մեղքերի վերաբերյալ: Սրանք շարունակական, ամբողջ կյանքի ընթացքում տրվող աստվածային հայտնություններ են: Առաջինը բացահայտում է հենց իմ մեղքերը, և այս բացահայտումն այժմ տեղ է գտնում իմ սրտում: Դրա համար ժամանակ է պահանջվում. հին մարդը պայքարում է դրա դեմ:

Բայց այս բացահայտումը բերում է մեղքերն իրականում տեսնելու կարողություն, որը պակասում էր ինձ: Երկրորդը հայտնում է իմ սրտին իմ մեղքերի և էության չափազանց մեղավորությունը և չարությունը, որ գոյություն ունեն իմ սրտում: Այս հայտնությունը ցույց է տալիս իմ անարժանության (ոչ թե անարժեքության) իրողությունը և իմ էության հոգևոր աննշանությունը և դատարկությունը: Սա տեսնելով՝ ես առաջնորդվում եմ աղաչելու (ոչ թե պահանջելու) ողորմություն և առավել խոր վերականգնում: Շատ հավատացյալներ նույնիսկ տեղյակ չեն Հոգու այս աստվածային հանդիմանությունից և հայտնությունից, փոխարենը նրանք հաճախ հետամուտ են Հոգու պարզևներին և կոչումներին, որոնք, նրանց կարծիքով, պակասում են եկեղեցում:

Սա Աստծո ներքին աշխատանքն է Սուրբ Հոգու միջոցով: Ուշադրություն դարձրեք այս խոսքին. «...Որ մեղքն ավելի ևս մեղավոր լինի պատվիրանի ձեռքով» (Հռոմ. 7.13): Մնայուն հաղորդությունն իմ սրտի մեջ բերում է մեղքի առավել խոր հասկացողություն և առավել խոր ապաշխարություն: Հայտնության միջոցով ես տեսնում եմ իմ ներսի իսկական չար էությունը. այն չափազանց մեղավոր և չար է: Այս ուղին, որ տանում է Հոր հետ մնայուն հաղորդության, դանդաղ է և երկար և ներառում է Աստծուն սպասելը: Բայց սա անհրաժեշտ է սրբացման և Աստծուն մեծարանքով երկրպագելու համար:

Այս ուղին անցնելիս հայտնության միջոցով ես կտեսնեմ իմ չափազանց անարժանությունը և Աստծո չափազանց քաղցրությունը: Իմ մեղավորության աճող խորությունը, հայտնվելով իմ սրտին, բերում է համապատասխանաբար աճող գոհունակություն և մեծարանք իմ հանդեպ Աստծո հայտնված գերազանց Սիրո և քաղցրության նկատմամբ, որոնք ցուցադրվեցին Գողգոթայի խաչին: Որքան շատ եմ տեսնում իմ հանդեպ Նրա սիրո և քաղցրության աճող խորությունը, այնքան ավելի խորն եմ տեսնում իմ չափազանց մեղավորությունը, հետևաբար և իմ չափազանց անարժանությունը: Որքան շատ եմ տեսնում իմ չափազանց մեղավորությունը, այնքան ավելի խորությամբ եմ տեսնում Աստծո չափազանց սերն ու քաղցրությունը իմ հանդեպ: Գողգոթան ցույց է տալիս իմ անձին իմ իսկական արժեքը Աստծո՝ իմ Փրկչի համար: Իմ սիրտը մտնում է նոր և առավել խոր երկրպագության մեջ, այն է՝ երկրպագել Հորը հոգով և ճշմարտությամբ:

Մտորումներ. սպուգել ինքս ինձ

Արդյո՞ք ես հայտնի եմ Աստծուն որպես մեկը, ով իսկապես փնտրում է թողություն իր ամենօրյա մեղքերի համար: Կարո՞ղ է

Աստված հայտարարել, որ ես քաղցած և ծարավ եմ ներման և մեղքերից մաքրման: Կարո՞ղ եք ասել, որ օր օրի փնտրում եք Աստծո շնորհքը որպես մի բան, որը կենսականորեն կարևոր է ձեզ համար: Հրաժարվել եք մեղքից և թողել եք աշխարհը՝ այս ներումը ստանալու համար: Երբ մեղք եք գործում, անկեղծորեն աղաչում եք Աստծուն, որ տա ձեզ այն օրհնությունը, որը պատրաստել է ձեզ համար: Իսկապես փնտրում եք այն որպես մի բան, որի համար պատրաստ եք ամեն ինչ վնաս համարելու: Արդյո՞ք արժե հետամուտ լինել սրբվելուն և ներվելուն: Միայն նա, ով փնտրում է, ձեռք կբերի այս ամենը: Իսկապես այսպես եք փնտրում:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ Աստծո հետ

1. Հոր հետ հաղորդության կյանքն առնչվում է երկու ոլորտների: Որո՞նք են դրանք:
2. «Մնայուն հաղորդակցության մեջ ես կտեսնեմ իմ չափազանց անարժանությունը և Աստծո չափազանց քաղցրությունը»: Ո՞րն է այս երկու ոլորտների նշանակությունը:
3. Ինչպե՞ս են այս երկու ոլորտները կապված Քրիստոսի մեջ մնալու հետ: Պատմե՛ք Աստծուն, թե ինչ եք զգում սրա վերաբերյալ, և խնդրե՛ք, որ Նա հայտնություն տա ձեզ:

Մնայուն հաղորդություն. մեծարանք և երկրպագություն
Չափազանց մեղավորության վերաբերյալ աճող հայտնությունները՝ զուգակցված Աստծո չափազանց քաղցրության և ողորմության մասին աճող հայտնությունների հետ, իմ ներսում աստիճանաբար վերածվում են մեծարանքի և երկրպագության իմ անձնական ներքին աղոթքի սենյակում:

Սրտի այս հաղորդության ժամանակ Հոգին սովորեցնում է, որ ոչ թե իմ սերը, այլ ազապե սերը կարող է առաջ բերել իսկական երկրպագություն՝ հոգով և ճշմարտությամբ: Սա նոր խոնարհեցնող փորձառություն է Աստծո հետ: Ես սովորում եմ ազապե սիրով ապրելու համար անձնատուր լինել Աստծուն և ապրել խաչի վրա կենդանի զոհաբերության կյանքով: Խաչի վրա այս զոհաբերությունը բխում է հայտնության միջոցով իմ մարդկային սրտի աճող աննշանությունը և դատարկությունը տեսնելուց: Հոգով և ճշմարտությամբ մեծարանքն ու երկրպագությունը բխում են Հոր սիրտը և իմ սիրտը հոգով և ճշմարտությամբ ավելի ու ավել-

լի տեսնելուց: Այս հաղորդությունն առաջացնում է երկու սրտերի միություն՝ հոգով և ճշմարտությամբ:

«Բայց ժամանակ կգա, և հիմա է, որ ճշմարիտ երկրպագողները հոգով և ճշմարտությունով կերկրպագեն Հորը, որովհետև Հայրն էլ այսպես է ուզում Իր երկրպագողներին: Աստված Հոգի է, և Նրան երկրպագողները պետք է հոգով և ճշմարտությունով երկրպագեն» (Հովհ. 4.23, 24): Ուշադրություն դարձրեք. «կերկրպագեն»- ը վերածվում է «պետք է երկրպագեն»- ի, և օգտագործվում է «Հայր», ոչ թե «Աստված» բառը: Մեծարանքը և երկրպագությունը «պարտադիր» են և կապված են Հոր հետ մեր սրտի միության հետ:

Այս երկու մեծ ճշմարտությունները՝ իմ չափազանց մեղավորությունը և Աստծո չափազանց քաղցրությունը և ողորմությունը, ավելի ու ավելի խորությամբ տեսնելն առաջացնում է իրական մեծարանք և երկրպագություն Քրիստոսում նոր մարդու մեջ: Դուք կգտնեք այս երկրպագությունը ձեր անձնական ներքին աղոթքի սենյակում՝ փակ դռան հետևում: Մեծարանքի և երկրպագության մեջ ես զգում եմ, որ իմ անձը գտել է իր տունը՝ իր հավիտենական բավարարությունը: «Անհնար թվացող երազանքն» իրականանում է: Հայրը դեռևս փնտրում է ճշմարիտ երկրպագուների, կարծագանքեք դրան: Ոչ թե իմ երգերը, ոչ թե իմ հայտարարությունները, այլ իմ կյանքը, որ ապրում եմ Քրիստոսի մեջ, պետք է դառնա հոգով և ճշմարտությամբ երկրպագություն:

Ես պետք է մնամ Քրիստոսի մեջ. ապրելու այլ ճանապարհ չկա:

Գլուխ 8. Հասկանալ Քրիստոսի մեջ մնալու նշանակությունը և անհրաժեշտությունը

Այս գլուխն անդրադառնում է չորս հիմնական թեմաների՝ հասկանալ Քրիստոսի մեջ մնալու նշանակությունը և անհրաժեշտությունը, Քրիստոսի մեջ մնալը հավատքով է. բաներ, որ մեր սիրտը լավ չի հասկանում Քրիստոսի մեջ մնալու վերաբերյալ, և հոգևոր աղքատություն: Մենք կքննարկենք այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ որո՞նք են Քրիստոսի մեջ մնալու պայմանները, ո՞րն է այս մնալուն փոխհարաբերության էությունը, ինչի՞ն պետք է հավատամ, որպեսզի մնամ Քրիստոսի մեջ, արդյո՞ք փնտրում եմ

Աստծուն, որպեսզի Նրանից իմանամ իմ կարիքները, կարող եք օգնել ինձ սրանում, ինչ է հոգևոր աղքատությունը, ես գիտեմ, որ Քրիստոսի կարիքն ունեմ, բայց արդյո՞ք իսկապես հասկանում եմ, թե որքան մեծ է Քրիստոսի լիության իմ կարիքը:

Քրիստոսի մեջ մնալու կյանքն ունի պայմաններ, որ սահմանված են հենց Աստծուց

«**Եթե** կենաք Ինձանում, և Իմ խոսքերը՝ ձեզանում»: Սա Աստծո պայմաններից մեկն է: Հավատացյալի կյանքում Հոգու ներկայությունը չի վերացնում այս պայմանները: Ահա ևս մի քանի պայման: «**Եթե** կենաք Ինձանում, և Իմ խոսքերը ձեզանում կենան, ինչ որ էլ կամենաք, կխնդրեք, և կլինի ձեզ»: «Կացե՛ք Ինձանում, և Ես՝ ձեզանում»: «Նրանում մեղք չկա: Ամեն, ով որ Նրանում մնում է, չի մեղանշում» (Ա Հովհ. 3.5, 6), «**Եթե** մեկն Ինձ սիրում է, Իմ խոսքը կպահի, և Իմ Հայրը կսիրի նրան, և Նրա մոտ կգանք և բնակություն կանենք Նրա մոտ» (Հովհ. 14.23): «**Եթե** Իմ պատվիրանները պահեք, Իմ սիրո մեջ կկենաք... և ձեր ուրախությունը լցված լինի: Դուք իմ բարեկամներն եք, **եթե** անեք, ինչ որ Ես պատվիրում եմ ձեզ» (Հովհ. 15.10, 11, 14): Ինչո՞ւ անվերապահ սիրո Աստված պայմաններ դրեց Իր օրհնությունների համար: Պայմանները մեզ պատասխանատու են դարձնում այն բանի համար, ինչ պետք է անենք, որպեսզի համապատասխան լինենք ավելի բարձրի համար: Աստծո պայմանները պատասխանատվություն են դնում մեզ վրա, թե ինչպես պետք է ապրենք մեր կյանքը: Մենք պետք է ճանաչենք և ընդունենք այս ճշմարտությունը: Աստված չի ուղարկում Իր Հոգին, որպեսզի Իր վրա վերցնի մեր անտեսված պարտականությունները, շատերն ապրում են այսպես, և օրհնությունները չեն հասնում նրանց: Աստված մեզ զորացնում է կատարելու պայմանները, երբ հավատքով պատասխանատվություն ենք ստանձնում:

Ես պատրաստում եմ իմ սիրտը, որպեսզի ստանձնեմ որոշակի պատասխանատվություն: Աստված մատակարարում է զորություն՝ հնազանդվելու և կատարելու դա: Իմ պատասխանատվությունն է կամովին գնալ և ստանալ զորությունը ամեն օր և ամեն անգամ, ինչպես անապատում ամեն օր ստանում էին մանանան: Սուրբ Հոգին է «աշխատանքը» կատարողը: Իմ պատասխանատվությունն է մերժել «Ես»-ը և սեփական ջանքերը և թույլ տալ, որ Հոգին անի այդ ամենը:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ Աստծո հետ

1. Ինչո՞ւ է Աստված պայմաններ սահմանում մեր կյանքի համար:
2. Ինչի՞ց է կախված Աստծո սիրո մեջ մնալը: Բացատրե՛ք:
3. Մեր պարտականություններից մեկը «ես»- ը և նրա ջանքերը մերժելն է: Ի՞նչ եք կարծում: Ինչպե՞ս եք վերաբերվում եսապաշտ կյանքը մերժելուն և ուրանալուն:

Հասկանալ Քրիստոսի մեջ մնալու նշանակությունը և անհրաժեշտությունը

1. *Առանց որթի ճյուղը ոչինչ չի կարող անել:* Մնայուն կյանքի մասին սովորեցնելիս Հիսուսն ասաց. «...առանց Ինձ ոչինչ չեք կարող անել» (Հովհ. 15.5): **Սա վերաբերում է այն կյանքին, որը բացարձակ կախվածության մեջ է Աստծուց ամեն ինչում և մշտապես:** Ես ոչ թե մասամբ, այլ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱԲ Քրիստոսի կարիքն ունեմ ամեն ինչում: Ես «ինձնից ոչնչի» կարիք չունեմ, և սա այն թեման է, որ մենք պատրաստ չենք քննարկելու: Մեր հիմնական խնդիրը սա է. մենք իրականում չենք հավատում «ինձնից ոչինչ» ճշմարտությանը, մենք ուզում ենք անել մեր լավագույնը Աստծո համար: Մենք շարունակում ենք ապրել այնպես, կարծես ինքնապավինումը և ինքնավստահությունն ընդունելի են: Ես շարունակում եմ ապավինել իմ բարությանը և իմ ուժերին, հետևաբար իմ ինքնապավինումը և ինքնավստահությունը իշխում են ինձ: Գուցե մենք գիտենք, որ ինքնավստահությունը սխալ է, բայց չենք համարում այն չարիք և մեղք, մենք չենք լուծում դրա հարցերը այնպես, ինչպես հարկն է: Մենք չենք գիտակցում դրա վտանգը: Ինքնավստահությունն անհավատարմություն է, դավաճանություն իմ հանդեպ Աստծո սիրուն: Հիսուսն ասաց, որ «ես»- ը պետք է ուրանալ: Ես գիտեմ, որ երկար ճանապարհ ունեմ անցնելու իմ ինքնավստահությունը և ինքնապավինումը հաղթահարելու համար, սակայն կա մի քայլ, որ պետք է անել Աստծուն վստահել սովորելիս, և այդ քայլը շատերն անտեսում են: Ինձ անհրաժեշտ է, որ իմ սիրտը տեսնի եսապաշտ կյանքի չափազանց մեղավորությունն իմ մեջ: Եսապաշտ կյանքն ապավինում է ինքնավստահությանը: Ես պատշաճ կերպով պետք է լուծեմ սրա հարցերը: Ապրել ինքնավստահությամբ, թեկուզ երբեմն, նշանակում է, որ ես գաղափար չունեմ իմ հոգևոր աղքատության և դատարկության մասին: Ես Հայր Աստծո հետ սրտից սիրտ հաղորդության կարիք ունեմ, որպեսզի կարողանամ

ստանալ Նրա հայտնությունը և հանդիմանությունը իմ մասին, իմ էության մասին: Սրտի այս անձնական հաղորդությամբ Աստծո հանդեպ իմ վստահությունը կդառնա լիարժեք և կհաղթի խավարի ուժերին, որոնք գործում են իմ եսապաշտ կյանքում: Աստծուն վստահելը և իմ մասին Նրա խոստումներին հավատալը պահանջում են իմ իսկական անձի առավել խոր բացահայտում և ամենօրյա ճիշտ վերաբերմունք եսապաշտ կյանքի նկատմամբ, որը ծնում է ինքնավստահություն և ինքնապավինում: Աստծո հետ մեր հաղորդությունը, եթե անձնական չէ, չի նպաստի իմ իսկական անձի կամ էության բացահայտմանը, և իմ հաղորդությունը կմնա մակերեսային: Մնալ Քրիստոսի մեջ նշանակում է մնալ միայն Նրանում և ո՛չ երբեք ինքս իմ մեջ: Քրիստոսի մեջ մնալը և Աստծո ներկայության համար Նրան սպասելը պահանջում են սրտից սիրտ հաղորդություն Աստծո հետ, որի ժամանակ ես սովորում եմ առավել խորությամբ ճանաչել ինձ և Աստծուն:

Սիրելի Քրիստոսի աշակերտ, Աստծո հետ մտորե՛ք այս հարցերի շուրջ: Ինչո՞ւ ես կարիք չունեմ, որ ինձնից ինչ- որ բան ծառայի Աստծուն: Ես Հոգով լցված հավատացյալ եմ, ինչո՞ւ պետք է ուրանամ իմ անձը: Հոգևոր աղքատությունը անձնուրացման էությունն է: Ինչ է հոգևոր աղքատությունը: Համաձայն Աստծո՝ իմ մարդկային էության մեջ չկա ոչ մի աստվածային բարիք: Իմ ներսում չկա որևէ ճշմարիտ կամ մաքուր հոգևոր հասկացողություն կամ իմաստություն: Ինքս չեմ կարող որևէ մեկին աստվածային բարիք անել: Այն ամենը, ինչ ասում եմ կամ անում, մարմնից է կամ «ես»-ից, այն լի է թաքնված և գաղտնի եսասիրությամբ և հպարտությամբ: Սա է պատճառը, որ իմ էությունը հոգևորապես լիովին անօգուտ է: Մարդիկ իրականում չեն տեսնում եսասիրության և հպարտության չարությունը, որն ապրում է իրենց մեջ: Իմ կյանքը լի է չափազանց մեղավոր մեղքերով: Իմ մեջ ոչ մի բարի բան չկա, սա հոգևոր աղքատություն է և դատարկություն: Իմ մեջ ոչ մի բարի բան չկա՝ բացի նրանից, ինչ Աստված դնում է: Մեր առաջին քայլը Աստծո այս ճշմարտություններին հավատալն է, ոչ թե պարզապես դրանք ընդունելը: Սա հայտնության գիտություն է, որ Հոգին ձևավորում է մեր մեջ, երբ պատրաստ ենք և հանձնվում ենք Նրա կողմից «ես»-ի բացահայտմանը: «...Ինձանում (այսինքն՝ իմ մարմնում) մի բարի բան չի բնակվում» (Հռոմ. 7.18): «Որովհետև մարմնի խորհուրդը մահ է, և հոգու խորհուրդը՝ կյանք և խաղաղություն: Որովհետև մարմնի խորհուրդը Աստծո դեմ թշնամություն է, որովհետև Աստծո օրենքին չի հնազանդվում...» (Հռոմ. 8.6, 7): Ինձ ոչինչ պետք չէ

ինձնից, իմ էությունից, որովհետև դա թշնամություն է Աստծո դեմ:

Քանի դեռ ես ընդունելի և հանդուրժելի եմ համարում ինքնավստահությունը, անկարող եմ ընդունելու Հոգու հանդիմանությունը ինքնավստահության մեղքի համար: Աստծուն հավատալու և վստահելու մասին քարոզներ լսելը ոչինչ չի տա, որովհետև ես չեմ անդրադառնում իրական խնդրին: «Ես»- ը Քրիստոսի մահացու թշնամին է, ես այդպես էլ պետք է հավատամ: Ինքնավստահությունը կործանում է Քրիստոսի մեջ բնակությունը: Արդյո՞ք իմ սիրտը տեսնում է իմ էության՝ ինքնավստահության, եսապաշտ կյանքի չափազանց մեղավորությունը: Սիրելի աշակերտ, դուք պետք է հանդիպեք Աստծուն դեմ առ դեմ, սրտից սիրտ: Ես Աստծո անձնական հայտնության կարիքն ունեմ, իմ սիրտը պետք է տեսնի և ընդունի այն համոզմունքը, որ «առանց Ինձ ոչինչ չէք կարող անել»:

2. Առանց ճյուղի որթը նույնպես ոչինչ չի կարող անել

Որթը առանց ճյուղերի չի կարող պտուղ բերել: Որթը ճյուղերի կարիքն ունի: Առանց Իր աշակերտների Հիսուսը չի կարող Իր օրհնությունը տալ աշխարհին: Հիսուսը մեծապես ունի ձեր և իմ կարիքը: Ես կարիք ունեմ մնալու Նրա մեջ նաև Նրա համար: Ուրիշների համար օրհնություն լինելը սկիզբ է առնում միմիայն Քրիստոսի մեջ մնալուց: Քրիստոսի մեջ մնալու պտուղը ուրիշների հանդեպ ազապե սերն է, ինչպես տեսնում ենք Հովհաննեսի 15- ում: Ես պետք է տեսնեմ, թե որքանով է իմ եսասիրությունը խանգարում, որ ազապե սերն ապրի իմ մեջ: Աստծո օրհնությունները, որ ես առաջարկում եմ, պետք է փաթեթավորվեն Աստծո անվերապահ, անշահախնդիր և անձնվեր ազապե սիրով: Պտուղ բերելը, այսինքն՝ ուրիշներին սիրով և խոնարհությամբ ծառայելը, պետք է լինի իմ կյանքի նպատակը: Ես պետք է թույլ տամ այս փաթեթավորումը, բայց ինչպե՞ս: Ես պետք է ուրանամ իմ անձը (եսասիրությունը և հպարտությունը) հավատքով և այն զորությամբ, որ Աստված տալիս է անձն ուրանալու համար: Սա Սուրբ Հոգու զորությամբ հավատալու և հոչակելու ամենօրյա աշխատանք է: Գիտե՞ք, թե ինչպես անեք դա:

Քրիստոսի մեջ մնալը հավատքով է

Ինչի՞ն պետք է հստակորեն հավատամ, որպեսզի մնամ Քրիստոսի մեջ: Առաջին հերթին պետք է հավատամ, որ Հիսուսը ճշմարիտ Որթն է: Իմանալը, հավանություն տալը և համաձայնելը հավատալը չեն: Մնալը իմ աշխատանքը չէ, այլ միմիայն Նրա: Ես միայն որոշում եմ, համաձայնում և հանձնվում Աստծուն: «Այն օրը

գինու այգի կլինի. նրա համար երգեք: Ես՝ Տերս եմ նրա պահապանը, ամեն վայրկյան ոռոգում եմ նրան, որպեսզի նրան ոչ ոք չվնասի, գիշեր և ցերեկ ես նրան պահպանում եմ» (Ես. 27.2, 3): Ո՞վ է «պահպանողը»: Ո՞վ է ամեն վայրկյան «ոռոգողը»: Ո՞վ է գիշեր ու ցերեկ «պահպանողը»: **Հիսուսն իմ մեջ ամուր պահում է ինձ, սնում է ինձ և ամեն վայրկյան պատասխանատու է իմ աճի և պտղաբերության համար:** Վստահե՛ք Նրան, որ շարունակեք մնալ Նրա մեջ, և երբ վայր ընկնեք, խոստովանե՛ք և ապաշխարե՛ք, որպեսզի վերադառնաք Նրա մոտ:

Ես գործադրում եմ իմ հավատքը՝ ամեն օր սրտանց հավատալով և հնարավորինս հաճախ ինքս ինձ ասելով. «Ես Քրիստոսի ճյուղն եմ, ես Նրա մեջ եմ»: Աստծո խոսքը ունի Աստծո գործությունը: Աղոթելով և հավատալով խոսե՛ք և բարձրաձայն հոչակե՛ք սա ինքներդ ձեզ: Սա հավատքի այն գործողությունն է, որ պետք է անեք առանց տրամաբանական հիմնավորման: Հրաժարվե՛ք տրամաբանական բացատրություններից, որովհետև դրանք բխում են մարմնից: Անտարբեր մի՛ եղեք սրանում, ձեր կյանքը խաղաքարտին է, հրաժարվե՛ք ճշմարտությանը հավատալու և ճշմարտությունը պնդելու վերաբերյալ տրամաբանական բացատրություններից: Դա կվերացնի ամեն դժվարություն և կասկած: «Քանզի սրտով հավատում ենք արդարանալու համար և բերանով դավանում ենք փրկվելու համար» (Հռոմ. 10.9, 10): Վստահե՛ք և հավատացե՛ք ձեր սրտում, որ Հիսուսը Իր անմեղ և սուրբ կյանքով մոտ է ձեզ և բնակվում է ձեր մեջ: Ես մնում եմ Նրա անմեղ կյանքի մեջ, իսկ Նրա անմեղ կյանքը մնում է իմ մեջ: Հավատալը և վստահելը բերում են այն գիտակցումը, որ Հիսուսը պահում է ինձ, և իմ սիրտը հանգստանում է խաղաղությամբ և ուրախությամբ, նույնիսկ երբ շատ զբաղված է:

Շատ հավատացյալներ ասում են. «Ես չունեմ զորություն մշտապես կամ երկար ժամանակ Հիսուսի մեջ մնալու համար: Վաղ թե ուշ ես ձախողվում եմ: Մշտական բնակությունը պահանջում է շատ ժամանակ և ուշադրություն, որ ես չունեմ»: Նույնիսկ երբ սաստիկ զբաղված ենք այլ բաներով, սիրտը մասնակցում է մնալու գործընթացին: Հավատքով մնալը նման չէ ապրանքի մի քանի տարվա երաշխիքին, որի ընթացքում այն խնդիր չի ունենա: **Մնալը ամենօրյա գործընթաց է**, ինչպես անապատում մանանա հավաքելը, որ կատարվում էր ամեն օր: «...և ժողովուրդը վեր կենա և օրվա պետք եղածը նույն օրը ժողովի...» (Ելից 16.4): Մենք ամենօրյա շնորհքի կարիք ունենք, մենք պետք է «հավաքենք» այն ամեն օր: Միայն «այսօրն» է իմը, «վաղն» Աստ-

ծունն է: Մանանան կամ շնորհքը՝ որպես իմ կերակուր և իմ գորություն, տրվում է միայն օրեցօր: Մենք պետք է գնանք և ստանանք այն ամեն օր: **Մնալը գործընթաց է, որ տեղի է ունենում վայրկյան առ վայրկյան:** Վաղվա կամ ապագայի համար իմ միակ ապահովությունը ներկայում գործելու իմ հավատարմությունն է:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ Աստծո հետ

1. «Առանց Ինձ ոչինչ չեք կարող անել» (Հովի. 15.5): Ինչպես եք վերաբերվում այս ճշմարտությանը: Ձեր կյանքում ինչին է սա վերաբերում:
2. Ինչպես եք վերաբերվում «Աստծուց բացարձակ կախվածություն ամեն ինչում և ընդմիշտ» պնդմանը: Արդյո՞ք սա հնարավոր է: Ինչն է սա հնարավոր դարձնում: Ո՞րն է սա հնարավոր դարձնելու ճանապարհը:
3. Գործադրել հավատքը նշանակում է ամեն օր հավատալ: Համաձայն եք այս պնդմանը: Բացատրե՛ք:

Մնալ Քրիստոսի մեջ. բաներ, որ մեր սիրտը լավ չի հասկանում:

Ես շատ քիչ եմ հասկանում, թե որքան մեծ է Քրիստոսի լիության իմ կարիքը: Ես Նրա լիության կարիքն ունեմ որպես ճյուղ, որպեսզի կարողանամ պտուղ բերել Թագավորության համար: Առանց ճյուղի որթը նույնպես չի կարող ոչինչ անել: Կան մնալու աստիճաններ, և դրանք ուղղակիորեն կապված են մեր հասկացողության հետ: Մեր հասկացողությունն ազդում է մեր հավատքի սպասելիքների վրա:

Սիրելի՛ Քրիստոսի աշակերտ, տվե՛ք ձեզ այս հարցերը: Արդյո՞ք ես ապրում եմ՝ հավատալով, որ բավականաչափ ճանաչում եմ Հիսուս Քրիստոսին: Արդյո՞ք ես ապրում եմ՝ հավատալով, որ բավականաչափ հասկանում եմ, թե ինչ է փրկությունը: Մենք գիտենք, որ Հիսուսի կարիքն ունենք, բայց արդյո՞ք մեր սրտում տեսնում ենք, որ Նրա լիության կարիքն ունենք: Ես պետք է դիմեմ Սուրբ Հոգուն, որպեսզի Նրանից բացահայտեմ այս ճշմարտությունը: Ես գիտեմ, որ ամեն օր Հիսուսի կարիքն ունեմ, և հավատում եմ, որ Նրա բոլոր օրհնությունների և խոստումների կարիքն ունեմ, բայց

դա չի նշանակում, որ ես համոզված եմ, որ իսկապես Նրա լիության կարիքն ունեմ: Այս առումով մենք երկու խոշոր սխալ ենք թույլ տալիս: Առաջին՝ ես ապրում եմ այնպես, կարծես բավականաչափ ունեմ Հիսուսին, և գերիշխում է իմ ինքնավստահությունը: Երկրորդ՝ ես ապրում եմ այնպես, կարծես Նրա լիությունն ազատորեն հասանելի չէ ինձ ամեն ինչում: Կարիքները, որ սովորաբար տեսնում եմ և ձգտում լրացնելու, մեծ մասամբ վերաբերում են մարդկային երկրային կարիքներին: ԱՐԴՅՈՒՔ ՓՆՏՐՈՒՄ ԵՄ ԱՍՏԾՈՒՆ, ՈՐՊԵՍՁԻ ՆՐԱՆԻՑ ԻՄԱՆԱՄ ԻՄ ԿԱՐԻՔՆԵՐԸ: Փնտրում եմ Նրա երեսը կամ Նրա ներկայությունը Նրա հետ հաղորդության ժամանակ: Սպասում եմ Աստծուն այս հայտնության համար: Երբեք բավական չէ իմանալ, որ Քրիստոսի կարիքն ունեմ շատ բաներում: Իմ սիրտը պետք է ՏԵՄԼԻ ամեն բանում Նրա լիության իմ կարիքը: Տեսնելու համար ես պետք է մտորեմ Նրա ներկայության մեջ և սպասեմ Նրան, որպեսզի Նա հայտնի ինձ Իրեն և ինքս ինձ իմ ներքին աղոթքի սենյակում: Մենք չունենք համբերություն, ես չգիտեմ, թե ինչպես մտնեմ Նրա ներկայության մեջ և այնտեղ նվիրվեմ Նրան: Ես լցնում եմ իմ երկրպագության ժամանակը Աստծուն երգեր երգելով, որն անհրաժեշտ է, բայց երբեք բավարար չէ: Իմ սիրտը մեկ պետք է լինի Աստծո սրտի հետ: Ես համաձայն եմ այս ամենին, բայց ճանապարհը պարզ չէ ինձ համար: Իմ երկրպագության փորձառությունը պետք է ներառի մտորում, հաղորդություն, կոտրվածություն և խոնարհություն, ինչպես նաև Աստծուն սպասելու պատրաստակամություն և Նրա ներկայության գիտակցում:

Ես մենակ պետք է լինեմ Աստծո հետ, որպեսզի ճանաչեմ ինձ և իմ կարիքները Նրա տեսանկյունից: Ինքնաբացահայտման այս ոլորտի հայտնությունները միշտ առանձնահատուկ են և անձնական: Այս «անձնական և առանձնահատուկ» տեսանկյունից է, որ ե փախչում եմ: Ես չեմ տեսնում, որ չեմ ցանկանում ճանաչել իմ ներսի մարդուն: Ես չեմ տեսնում, որ չունեմ համբերություն Աստծո համար: Ես պետք է սովորեմ աղոթել մտորելով և մտորեմ Քրիստոսի հետ, ոչ թե պարզապես աղոթեմ Նրան: Ես կարիք ունեմ մենակ մնալու Աստծո հետ և փնտրելու Նրա ներկայությունը: Սրտի ճշմարիտ հաղորդությունը, եթե ներառում է անձնական և առանձնահատուկ սրտակցություն, կարող է բերել հայտնություններ իմ ներսի ծածուկ մարդու մասին:

Ես շատ քիչ եմ հասկանում Քրիստոսի լիության իմ կարիքը: Ինչ կարող եմ անել այս կապակցությամբ: Ես պետք է զատեմ ինձ «ես»- ի և աշխարհիկության ազդեցությունից: Այս երկուսը սերտո-

րեն կապված են: Դուք ասում եք. «Ես գիտեմ այդ ամենը»: Դուք պետք է ձգտեք մենակ լինելու Աստծո հետ, լռելու Նրա ներկայության մեջ, շարունակելու հավատալ և վստահել Նրան, որպեսզի զատեք ձեզ «ես»- ի իշխանությունից: Ես Աստծո Ամենակարող Ձորության կարիքն ունեմ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ, որպեսզի կարողանամ անել դա: Սա ոգեշնչվածության կամ ինքնակարգապահության հարց չէ: Ես չեմ կարող պարտադրել կամ վարժեցնել ինձ, որպեսզի անեմ սա: Եթե ես պարտադրեմ ինձ, կստանամ միայն մարդկային արդյունքներ, որոնք տրվում են իմ կրոնական մարմնի միջոցով: Ինքս ինձ զատելու ուժը տրվում է ամեն օր, և ես պետք է «հավաքեմ» այն ամեն օր, ամեն օրվա համար: Ես պետք է բորբոքեմ այդ ցանկությունն ամեն օր: Դա մեկօրյա կամ մեկամսյա իրադարձություն չէ, ես պետք է «հավաքեմ» այն ամեն օր՝ վայրկյան առ վայրկյան, ըստ անհրաժեշտության: Հոգևոր հասկացողությունը գալիս է Աստծո ճշմարտությանը սրտանց հանձնվելուց: Այսօրվա զորությունը հնարավոր չէ պահել ապագայի համար, սա սատանայի խաբեությունն է: Դուք կարիք ունեք գնալու Աստծո մոտ ամեն օր, որովհետև դուք Նրա լիության կարիքն ունեք ամեն օր: Քրիստոսի մեջ մնալը պասիվ կյանք չէ, այն ներգրավում է ամեն բան: **Քրիստոսի մեջ մնալը պահանջում է ձեր ամենը՝ որպես կենդանի զոհ:**

Քրիստոսն ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ մնում է իմ մեջ, բայց արդյո՞ք ես թույլ եմ տալիս, որ Նա ամբողջությամբ իշխի և գործի իմ ծածուկ կյանքում: Եթե ոչ, ես չունեմ կյանք, գուցե ես մասնակցում եմ բազմաթիվ հոգևոր հավաքույթների, բայց իմ կյանքում չի ապրում ճշմարտությունը: Ես մշտապես դեմ առ դեմ պետք է կանգնեմ Քրիստոսին իմ ներսի սենյակում՝ դուռը փակ, հաղորդակցվեմ իմ ներսի ծածուկ կյանքի վերաբերյալ և, դա անելով, Աստծո ներկայությամբ առերեսվեմ ինքս ինձ ճշմարտապես: Ես չեմ կարող անել սա հավաքույթներում: **Գլխավոր խնդիրը սա է. ես Աստծո ներկայության մեջ չեմ փնտրում և չեմ էլ տեսնում իմ իսկական կարիքները, ուստի Աստված անկարող է հասնել ինձ, Նրա սիրտն անկարող է դիպչել իմ սրտին:** Ես ձևավորում և սահմանում եմ հավատքի սպասելիքներ Աստծուց՝ միաժամանակ չունենալով Նրա ներքին հայտնությունները իմ և Իր մասին: Այս հայտնությունները գալիս են միայն Նրա ներկայության մեջ լինելով, ոչ թե մարդկանցից:

Ես նաև կարիք ունեմ ստանալու Աստծո ամենակարող զորությունը կամ լիությունը ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ, որպեսզի զատվեմ

աշխարհիկությունից և պայքարեմ դրա դեմ: Աշխարհիկությունը պարզապես անբարեպաշտ կամ աշխարհիկ մտածելակերպ չէ: Այն ներկայացնում է լիակատար խավար և չափազանց չար մեղավորություն: Սա չտեսնելու պատճառն այն է, որ Աստծո հետ իմ սրտի հաղորդությունը մակերեսային է, և ես խնդիր չեմ տեսնում դրանում: Ես չեմ տեսնում իմ հոգևոր աղքատությունը և դատարկությունը և բավարարված եմ զգում իմ ցածր հոգևոր մակարդակով: «...Չգիտե՞ք, որ աշխարհիս սերը թշնամություն է Աստծո դեմ» (Հակ. 4.4): Շատերը հրաժարվում են այս ճշմարտության մեջ «թշնամություն» բառին հավատալուց:

Թույլ տվեք **կենտրոնանալ**. Ինչն է, որ կարիք ունեմ հասկանալու ավելի ու ավելի: Այս բաները՝ Քրիստոսի լիության իմ մեծ կարիքը, իմ սաստիկ հոգևոր աղքատությունը և դատարկությունը և իմ մեղավորության խորությունը: Շատ ու շատ ոլորտներում ես մնում եմ ինքս իմ մեջ Քրիստոսի փոխարեն և հաճախ քողարկում եմ դա հոգևոր միջոցառումներով և ծառայություններով: Ես չեմ ուրանում եսապաշտ կյանքն ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ամեն օր և ամեն իրավիճակում: **Ճանաչելը** սկսվում է ճշմարտությանը հավատալով: **Տեսնելը** սկսվում է հավատացող սրտին տրված հայտնությունով, և սա բերում է անհրաժեշտ իրականությունը: Հայտնությամբ տեսնելը հանգեցնում է սրտի արծազանքին, իսկ սիրտը պետք է մնա միայն Քրիստոսի մեջ՝ Աստծո հետ միության և հաղորդության մեջ:

Քրիստոսի մեջ մնալը ենթադրում է իրական անձի դրսևորում, և դա կախված է այն հայտնությունից, որ կստանա ձեր ներսի մարդը Քրիստոսի մեջ մնալով: **Հավատացե՛ք ձեր հոգևոր աղքատությանը, և դուք կստանաք անհրաժեշտ հասկացողություն:** Այն կառաջնորդի ձեզ խաչի վրա Խաչյալ Քրիստոսի հետ հաղորդության: Այժմ ապաշխարության ընդհատված գործընթացը կրկին առաջընթաց կունենա: Խաչյալ Քրիստոսի մեջ մնալը պետք է նախորդի Հարություն առած Քրիստոսի մեջ մնալուն՝ Աստծո փառքի համար:

Ինչո՞ւ է իմ հոգևոր աղքատությունն իմ աչքերին և ականջներին տարօրինակ «բան» թվում: Սրա համար կա երկու խոշոր պատճառ: (1) Ես ընդհատել եմ մեղքերի անձնական ապաշխարության գործընթացը: Ապաշխարությունը պարզապես մտքի փոփոխություն չէ որոշակի բնագավառում, այն սրտի փոփոխության մի մասն է: Ճշմարիտ ապաշխարությունը շարունակական է և ամբողջ կյանքի համար է: Աստծո հայտնությունները, որ բերում

է Սուրբ Հոգին, մեկանգամյա իրադարձություն չեն՝ առանձին և իրարից անջատ: Մեր կարիքներն Աստծո աչքում առանձին և անջատ չեն, Նրա համար դրանք իրադարձություններ չեն, դրանք կյանքի մաս են, առանձին իրադարձություններ չեն (որ պահանջում են հատուկ ուղղորդում կամ լրացում), այլ կյանքի անփոփոխ բաղկացուցիչ մաս, որը պահանջում է Նրա լիությունը: Աստված հետամուտ է՝ հայտնելու իմ մեջ եղած մշտապես չափն անցնող մեղավորությունը, որը տեսանելի է դառնում իմ որոշակի մեղքերի միջոցով: Սրանք նույնպես իսկապես չափազանց մեղավոր են և չար: Այժմ իմ ներսում կարող է ձևավորվել աստվածային տրտմություն, որը շատ ավելի խորն է, քան մեղքի համար տրտմությունը, որ երբեմն զգում եմ իմ սրտում: Իմ թերի խոստովանությունը և ապաշխարությունը, այլ ոլորտներում իմ խոստովանության բացակայությունը, իմ ծածուկ ինքնապավիհությունը և ինքնավստահությունը դանդաղեցրել կամ նույնիսկ ընդհատել են ապաշխարության գործընթացը: (2) Անմիջական հանդիմանությունը և հայտնությունը սովորական չեն իմ կյանքում: Հոգու հայտնությունները չեն հասնում իմ սրտին: Ես լրջորեն անտեսում եմ իմ պատասխանատվությունը Աստծո և իմ հոգևոր կյանքի համար: Փոխարենը ես կենտրոնանում եմ իմ զգացմունքների վրա և լսում դրանց: Աստծո հետ իմ սրտի հաղորդությունը գրեթե բացակայում է: Հետևաբար ես չեմ տեսնում իմ մասին անհրաժեշտ ճշմարտությունները:

Հոգուն տրվող Աստծո հանդիմանություններն ու հայտնությունները նախևառաջ ուղղված են նրան, որ ես տեսնեմ, որ իմ մեջ հոգևոր որևէ բարի բան չկա (հոգևոր աղքատություն), ինչպես նաև իմ սրտում տեսնեմ իմ հոգևոր աննշանությունն ու դատարկությունը: Սա կոտրվածության ժամանակ է, որն առաջանում է իմ ներսում չերևացող ճշմարտությունը տեսնելուց: Իմ հոգևոր դատարկությունը և աննշանությունը դառնում են իմ փրկությունը և իմ փառքը: Սա ուղենիշ է մյուս հանդիմանությունների ու հայտնությունների համար, որոնք կարող են ուրախացնել սիրտը: Ես պետք է բնակվեմ Խաչյալ Քրիստոսի, այնուհետև՝ Հարյալ Քրիստոսի հետ: Դրանք նույն մետաղադրամի երկու կողմերն են: Հաջորդ գլխում կանդադարանամ Խաչյալ Քրիստոսի մեջ մնալուն:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ Աստծո հետ

Ես կրկին տալիս եմ ձեզ այս հարցերը: Աղոթում եմ և հույս ունեմ, որ դուք կտեսնեք նոր ուղի՝ հետևելու համար:

1. Արդյո՞ք ես ապրում եմ՝ հավատալով, որ բավականաչափ ճանաչում եմ Հիսուս Քրիստոսին: Ի՞նչ եք կարծում:
2. Արդյո՞ք ես ապրում եմ՝ հավատալով, որ բավականաչափ հասկանում եմ, թե ինչ է փրկությունը: Ի՞նչ եք զգում:
3. Ես գիտեմ, որ Հիսուսի կարիքն ունեմ, բայց արդյո՞ք տեսնում եմ իմ սրտում, որ Նրա լիության կարիքն ունեմ ամեն օր ամեն բանում:

Մաս 3. Ապրել խաչյալ կյանքով

Երրորդ մասը բաղկացած է 6 գլխից: Իններորդ գլխում խոսվում է խաչյալ Քրիստոսի մեջ ապրելու մասին, տասներորդ գլուխն անդրադառնում է նրան, թե որքան անհնար է այս կյանքը մարդկանց համար, և որքան հնարավոր է այն Աստծո համար, տասնմեկերորդ գլուխը կյանքը լիովին հանձնելու և Աստծուն ամբողջապես նվիրաբերվելու մասին է, տասներկուերորդ գլուխը նվիրված է Հիսուսի վարդապետությանը «Ինձնից ոչինչ» ճշմարտության վերաբերյալ՝ կապված խաչյալ կյանքով ապրելու հետ, տասներեքերորդ գլուխը Սուրբ Հոգու աշխատանքի մասին է, որը տանում է մեզ դեպի խաչը, և տասնչորսերորդ գլուխը խոնարհությունը որպես կյանք ապրելու մասին է, որը Քրիստոսը բերում է մեզ:

Երրորդ մասում մենք կքննարկենք այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ինչպես է ձևավորվում խաչյալ Քրիստոսի հետ հաղորդությունը, երբ և որտեղ է այն տեղի ունենում, ինչպես ենք ձեռք բերում Քրիստոսի հանգիստը և զորությունը, ինչպես եմ կիրառում Նրա խաչը իմ կյանքում, իմ էության, ինքնավստահության և ջանքերի մեջ, երբ է դա անհնար ինձ համար, երբ է դա հնարավոր ինձ համար, *ինչ է նշանակում լիովին հանձնվել Աստծուն, և ինչ է դա եթադրում, արդյո՞ք լիովին հանձնվելը հարապու է, ինչ է նշանակում անմնացորդ նվիրաբերվել Աստծուն, ինչպես է դա գործում, ի՞նչ է «Ինձնից ոչինչ» պնդման հոգևոր նշանակությունը և ինչո՞ւ «Ինձնից ոչինչ», ի՞նչ ճանապարհներով է Սուրբ Հոգին առաջնորդում մեզ դեպի խաչը, ի՞նչ է խոնարհությունը՝ ըստ Քրիստոսի, ի՞նչ է ճշմարիտ խոնարհության մեջ ապրելու Աստծո ճանապարհը, ինչի՞ց է սկիզբ առնում խոնարհությունը:*

Գլուխ 9. Ապրել խաչյալ Քրիստոսի մեջ

Այս գլուխն անդրադառնում է չորս հիմնական թեմաների՝ Քրիստոսի հետ խաչվելու նշանակությունը, խաչը և Քրիստոսի հետ ամենօրյա միությունը, անձնագոհության հոգին և հարցեր Քրիստոսի մեջ ապրելու շուրջ մտորելու համար:

Նախորդ գլխից վերանայենք, թե ինչ է նշանակում մնալ Քրիստոսի մեջ: Սա շարունակական, մտերիմ հաղորդություն է Աստծո հետ՝ հիմնված սիրո և հնազանդության, իմ սրտի և Աստծո սրտի

միջև սիրո միության վրա: Ինչպէս է ձևավորվում Քրիստոսի հետ այս հաղորդակցությունը կամ հաղորդությունը: Երբ և որտեղ է այն տեղի ունենում:

Խաչված Քրիստոսի հետ

«Մկրտությունով Նրա հետ թաղվեցինք մահի մեջ... որովհետև եթե Նրա մահի նմանությունով Նրա հետ տնկվեցինք, ապա Նրա հարությանն էլ նման կլինենք» (Հռոմ. 6. 4, 5): «...ես Քրիստոսի հետ խաչված մ: Եվ կենդանի եմ, ոչ թե այլևս ես, այլ Քրիստոսն է կենդանի ինձանում...» (Գաղ. 2.19, 20), «...դու ի բնե վայրի ձիթենուց կտրվեցիր և բնության դեմ բարի ձիթենու վրա պատվաստվեցիր...» (Հռոմ. 11.24): «Որ ճանաչեմ Նրան և Նրա հարության զորությունը և Նրա չարչարանքի մասնակից լինելը, Նրա մահվանը կերպարանակից լինելով. որպեսզի մեռելների հարությանը հասնեմ» (Փիլիպ. 3.10,11): Խաչված Քրիստոսի հետ, թաղված Նրա հետ, միացած կամ տնկված Նրա հետ Նրա մահվան մեջ, պատվաստված, Նրա չարչարանքին մասնակից, Նրա մահվանը կերպարանակից. Ինչ են սրանք նշանակում, հատկապես, երբ խոսքը վերաբերում է Քրիստոսի մեջ մնալուն:

Ինչ է այս ամենը նշանակում

«Դու ի բնե վայրի ձիթենուց կտրվեցիր և բնության դեմ բարի ձիթենու վրա պատվաստվեցիր»: Խաչի վրա Քրիստոսը վիրավորվեց, Նրա սիրտը բաց էր՝ ընդունելու ինձ, Իր հետ ինձ մեկ դարձնելու: Վիրավոր Որթը և վիրավոր պատվաստը կտրվում են, որպեսզի համապատասխանեն (նմանվեն) իրար և այդպիսով միանան իրար: Պատվաստը կամ ճյուղը պետք է ամրացվի Որթին, որպեսզի ստանա Նրա կյանքը: Մենք պատվաստված ենք Խաչյալ Քրիստոսի՝ վիրավոր Քրիստոսի մեջ: Իմ հաղորդակցությունը Քրիստոսի հետ սկսվում է խաչի մոտ, դա Քրիստոսի և իմ միության վայրն է: Միության և հաղորդության *Վայրը* Հիսուսի խաչն է: Սրա համար ենք ասում խաչի հաղորդություն. Հիսուսը խաչվեց խաչին, և իմ էությունը՝ իմ հին մարդը, Նրա հետ խաչվեց նույն խաչին: «...Նրա մահի նմանությունով Նրա հետ տնկվեցինք» (Հռոմ. 6), «...ես Քրիստոսի հետ խաչված եմ» (Գաղ. 2.19), «...Նրա մահվանը կերպարանակից լինելով» (Փիլիպ. 3.10): Ես մահացած եմ Քրիստոսի մեջ, սա տեղի է ունեցել ավելի քան 2000 տարի առաջ: Այս փորձառությունը պետք է արդիական դարձնեմ իմ ներկա կյանքում:

Քրիստոսի մահվանը կերպարանակից լինել նշանակում է խաչվել Հիսուսի հետ և մահանալ Նրա հետ: Սա վերաբերում է եսապաշտ կյանքի (մարմնի) մահվանը խաչի վրա: Կա հաղորդություն Քրիստոսի չարչարանքների ու մահվան և իմ չարչարանքների ու մահվան միջև: Նրա փորձառությունը պետք է դառնա իմը: Առաջին՝ Հիսուսի բնավորությունը, զգացողությունը, ցանկությունը և վերաբերմունքը, որ արտահայտվեցին Նրա մեջ խաչն ընտրելիս և կրելիս, պետք է դառնան իմը: Ինչ է սա նշանակում: Սա նշանակում է ցանկանալ և հաստատապես ընտրել իմ եսապաշտ կյանքի մահը: Երկրորդ՝ խաչի վրա մահանալու Քրիստոսի փորձառությունը պետք է դառնա իմը. ոչ թե մահանալ մեղքի **համար, այլ մահանալ մեղքին:** Սա ենթադրում է մահվան կիրառում եսապաշտ կյանքում՝ ամեն օր ուրանալով և մերժելով մեղքը, և այս ամենը պետք է անել Աստծո հավատքով: Սա իմ չարչարանքն է, այսինքն՝ ընտրել խաչը՝ իմ ամենօրյա մեղքերը սպանելու և ամեն օր իմ մեղավոր էությունը խաչելու համար: Խաչի վրա Քրիստոսի չարչարանքի նպատակն էր անձը ուրանալու այս կյանքը ինձ համար հնարավոր դարձնելը: Նրա չարչարանքին մասնակից լինելը հաղորդակցություն է խաչի վրա Նրա և իմ չարչարանքի միջև: Իմ չարչարանքը «ես»-ը զոհելն է: Հոգին այս հաղորդակցությունը տալիս է փնտրող սրտին: Միայն խաչը կարող է հաղթել հին մարդուն՝ մարմնին: Ահա թե ինչու Հիսուսն ասում է. «Վերցրու խաչդ և եկ իմ հետևից»: Խաչը կամ չարչարանքը չի վերաբերում կյանքի վատ կամ դժվար հանգամանքներին, ինչը սովորական է երկրի վրա ապրող բոլոր մարդկանց համար: Եթե մենք տնկված ենք, միացած Նրա մահվան նմանությանը, նաև պետք է մասնակից լինենք Նրա հարության կյանքի նմանությանը: Խաչյալ Քրիստոսի հետ հաղորդակցությունը կներգրավի ինձ Հարյալ Քրիստոսի հետ հաղորդակցության մեջ:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ Աստծո հետ

1. Ինչ է նշանակում մասնակից լինել Նրա չարչարանքին:
2. Ինչ է նշանակում կերպարանակից լինել Քրիստոսի մահվանը: Ինչ է դա ներառում:

Ինչպե՞ս եմ ապրում Խաչյալ Քրիստոսի մեջ

Ինչ եմ ես անում: Պատասխանն ունի երկու կողմ՝ հավատալ և հոչակել: (1) **Հավատալ ամեն օր**, որ դուք՝ ձեր եսապաշտ կյան-

քով, մահացած եք Քրիստոսի մեջ: Այդ կյանքն իշխանություն չունի ձեզ վրա խաչի շնորհիվ: Թող հավատքը բարձրանա, և ցնծացեք. «Դուք մեռած եք Քրիստոսի հետ» (Հռոմ. 6.8), «Ես իմ անձը մեղքին մեռած եմ համարում» (Հռոմ. 6.11), «Եվ կենդանի եմ, ոչ թե այլևս ես, այլ Քրիստոսն է կենդանի ինձանում, և ինչ որ հիմա կենդանի եմ մարմնով, Աստծո Որդու հավատքով եմ կենդանի, որ ինձ սիրեց և Իր անձը ինձ համար մատնեց» (Գաղ. 2.20): (2) Ամեն օր հռչակե՛ք ինքնե՛րդ ձեզ և սատանային և խավարի բոլոր ուժերին՝ բարձրաձայն և հաստատապես ասելով. «Քրիստոսում ես մեռած եմ մեղքին»: Արե՛ք սա յուրաքանչյուր մեղքի համար, որից տեղյակ եք, և հստակ եղեք ձեր մեղքերի հարցում: Մեղքը երբեք չպետք է լինի անորոշ և ընդհանուր. դա անօգուտ է: Օրինակ՝ ասե՛ք. «Ես մեռած եմ բամբասանքին և նրա զորությանը»: Խոստովանե՛ք և ապաշխարե՛ք, երբ բամբասում եք: Սակայն երբեք մի՛ մոռացեք հավատալ և հռչակել, հատկապես բարձրաձայն և այնքան հաճախ, որքան հիշում եք, կամ էլ այն ժամանակ, երբ տեսնում եք, որ բամբասանքը մոտենում է ձեզ. «Ես Քրիստոսի մեջ մեռած եմ բամբասանքի համար, այն չունի իշխանություն ինձ վրա»: Նույնիսկ երբ շատ լավ չեք հասկանում դա, միևնույնն է, այդպես արեք: Սա ձեր ամենօրյա մանանան է, հավաքե՛ք այն ամեն օր: Այսօրվա հաղթանակի ուժը բավական չէ վաղվա համար: Ամեն օր մնացե՛ք Խաչյալ Քրիստոսի մեջ:

«Ես իմ անձը մեղքին մեռած եմ համարում» (Հռոմ. 6.11): ՀԱՎԱՏԱՑԵՔ և բարձրաձայն ՀՌԶԱԿԵՔ ձեր ազատագրումը ամեն անգամ, երբ տեսնում եք, որ որևէ մեղք մոտենում է ձեզ: ՈՒՐԱՑԵՔ մարմինը ամեն վայրկյան, երբ անհրաժեշտ է: Եղե՛ք իմաստուն և օգտագործե՛ք վերոնշյալ խոսքերը ազատագրման և հաղթանակի համար: **Աստծո Խոսքը ունի Աստծո զորությունը**, հավատացե՛ք դրան ձեր ամբողջ սրտով: Դուք չեք մատակարարում որևէ զորություն: Տարածված սխալ և թշվառություն է սա. իրականում մենք չենք վարվում այսպես ամեն օր, երբ անհրաժեշտ է: Մենք մտածում ենք, որ շաբաթը մեկ անգամը կամ ամիսը մեկ անգամը բավական է: Սա մարմնի կործանարար տրամաբանությունն է, մերժե՛ք և ուրացե՛ք մարմնի տրամաբանական բացատրությունները:

Սիրելի՛ հավատացյալ, ՀԱՎԱՏԱՑԵՔ, որ դուք *ստացել եք* ձեր նոր անձը, ձեր նոր էությունը Հիսուսից, որն *խկապես* կենդանի է Աստծուն: Սա ձեր նոր էությունն է: Այս հավատքը դարձրե՛ք ամենօրյա գիտակցական ընթացք՝ խաչը կրելու ընթացք՝ ամեն օր

ուրանալով հպարտությունը և բնական անձնապաշտ սերը: Ահա թե ինչպես նոր էությունը, անշահախնդիր, անվերապահ սերը և աստվածային խոնարհությունը կկարողանան բնակվել մեր մեջ՝ ուրիշներին ճշմարիտ խոնարհությամբ ծառայելու նպատակով:

Քրիստոսի մեջ ես արդեն ստացել եմ իմ նոր անձը, իմ նորոգված էությունը, իմ ինքնությունը: Օրինակ՝ ես կենդանի եմ ԱՆՁՆՎԵՐ՝ ազապե սիրո համար: Եթե ուրանամ «ես»-ը, եթե մերժեմ չսիրելու և հոգ չտանելու սովորությունը, ազապե սերն ապրում է իմ գործողություններում և իմ վարքում: Սակայն եթե ես չտեսնեմ կամ չընդունեմ, որ չսիրելու և հոգ չտանելու ցանկացած գործողություն մեղք է, ես կենդանի չեմ լինի Աստծուն, կենդանի չեմ լինի իմ նորոգված էությանը: Ես պետք է անցկացնեմ իմ օրը՝ գիտակցաբար հոչակելով Աստծո այս ճշմարտությունը և մնալով Քրիստոսի հետ հարատև հաղորդակցության մեջ, այլապես ես կերևակայեմ այդ ամենը: Իսկապես կենդանի եմ Աստծուն: Սուրբ Հոգու զորությունը և ներկայությունը անհրաժեշտ են եսապաշտ կյանքն ուրանալու և ուրիշների հետ ազապե սիրով ապրելու համար:

Ուզում եմ կրկին շեշտել սա: Հիսուսի անձնազոհության հոգին պետք է դառնա իմը, Հիսուս Քրիստոսի անձնազոհ խոնարհությունը պետք է դառնա իմը: Հիսուսի բնավորությունը, զգացմունքները, ցանկությունը և վերաբերմունքը, որ արտահայտվեցին Նրա մեջ խաչն ընտրելիս և կրելիս, պետք է լինեն իմը, պետք է դառնան իմը: Իհարկե վրա մահվան միջոցով ես դառնում եմ կենդանի՝ Աստծուն, կենդանի՝ Նրա խոնարհությանը: Ինչ մասնակցություն ուներ անձնազոհության այս հոգին Քրիստոսի առօրյա կյանքում: Նրա առօրյա կյանքը մշտական անձնուրացության, սեփական կամքը մշտապես մերժելու, աշխարհը մշտապես ուրանալու, շահախնդրությունն ու ինքնահաճեցումը մշտապես ուրանալու կյանք էր: **Մնալ Խաչյալ Քրիստոսի մեջ նշանակում է ապրել Նրա անձնազոհության հոգով:** Իհարկե այս հոգին հնարավոր դարձրեց, որ Հիսուսը մահանա խաչին ինձ համար: Իհարկե հոգին անձնուրացման հոգին է: Հիսուսն ամեն օր երկրի վրա ապրեց անձնուրացման այս հոգով: Ես նույնպես պետք է ապրեմ այս հոգով: Ես պետք է մնամ Խաչյալ Քրիստոսի մեջ: Ազապե սիրով ապրելն ամեն օր բխում է անձնազոհության հոգուց: Ես կմիանամ Հիսուսին Նրա չարչարանքի մեջ: Անձնվեր և ուրիշներին պատկանող, անձնազոհ խոնարհության և անվերապահ սիրո կյանքը մշտապես սկիզբ է առնում իմ էության մեջ մահվան կիրառումից: Մարդկային սերը երբեք հնարավոր չէ սրբացնել, այն լիովին պետք է փոխարինվի ազապե սիրով: Մարդկային սերը չի կարող

փոխարինել ազապե սիրուն:

Քրիստոսի մեջ մնալը վարձատրման համակարգ չէ, թեև այն բերում է բազում օրհնություններ Աստծուց: Խաչյալ Քրիստոսի մեջ մնալն առաջարկում է ինձ նոր կյանք, որը փոխարինում է իմ կյանքին: Սա այն է, ինչ Քրիստոսի մեջ մնալը բերում է՝ փրկություն ինքս ինձնից: Փոխարինումն իրական, ամենօրյա անհրաժեշտություն է ինձ համար:

Մտորումներ Աստծո հետ

1. Ինչի՞ն է պետք հավատալ ամեն օր, և ի՞նչ պետք է հռչակել ամեն օր: Հայտնե՞ք Աստծուն, թե ինչ եք մտածում այս հարցի շուրջ:
2. Ի՞նչ է ձեզ համար նշանակում գիտակցաբար ընթանալ՝ կրելով խաչը:
3. Ի՞նչ հասկացաք այս պնդումից՝ «ամեն օր ազապե սիրով ապրելը սկիզբ է առնում աննազոհության հոգուց»:

Ի՞նչ պետք է անեմ

Ես մշտապես պետք է մնամ Խաչյալ Քրիստոսի մեջ՝ վստահաբար հավատալով: Հիսուսի մահը իմ մահն է, ամբողջությամբ իմն է: **Ես մտնում եմ՝ ՀԱՎԱՏԱԼՈՎ** (Հռոմ. 6.2, 11, Կող. 3.3): Ես պետք է անձնատուր լինեմ Աստծուն՝ անմնացորդ հանձնվելով Հիսուսի խաչին: Ես պետք է ցանկանամ և փնտրեմ առավել սերտ, առավել խոր հաղորդակցություն Խաչյալ Քրիստոսի հետ: Հիսուսի հետ հարատև հաղորդակցությունը Նրա մահվանը, այն հոգուն կերպարանակից լինելու միջոցով է, որով Հիսուսը մահացավ:

Սիրելի Հիսուսի հետևորդ, խնդրե՞ք Սուրբ Հոգուն, որ ընդլայնի ձեր հասկացողությունը և բերի սրտի համոզմունք, որն անհրաժեշտ է Քրիստոսի մեջ մնալու համար: Մենակ մնացե՞ք Աստծո հետ, լռե՞ք Նրա առջև, սպասե՞ք Նրա ներկայությանը և մտորե՞ք Նրա հետ: Ձեր ամբողջ կյանքը և այդ կյանքի ամեն վայրկյանը պետք է անցկացնե՞ք Քրիստոսի մեջ մնալով, Նրա սրտի (ձեր տան) մեջ մնալով, որպեսզի այնտեղ իրականացնեք ձեր հավատքի ամենօրյա աշխատանքը և վայելեք անխախտ հաղորդություն Նրա հետ: Ահա թե ինչ է Քրիստոսն առաջարկում ձեզ, եթե ձեր հավատքն ընդունի սա:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ Աստծո հետ

Ես խստորեն խորհուրդ եմ տալիս անդրադառնալ այս հարցերին Տիրոջ առջև մտորելիս: Ժամանակ հատկացրեք սրան.

1. Արդյո՞ք Քրիստոսի մեջ մնալու ձեր հասկացողությունը ենթադրում է Աստծուց բացարձակ կախվածություն ամեն ինչում: Արդյո՞ք ամեն ինչում կախվածությունը հնարավոր է ձեր կյանքում:
2. Արդյո՞ք բացարձակ անձնվիրությունը հնարավոր է հավատացյալի համար:
3. Ի՞նչ է ձեզ համար նշանակում սպասել Տիրոջը: Ի՞նչ է դա ենթադրում:
4. Ինչո՞ւ ՄԻԱՅՆ և ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ Հիսուսի կարիքն ունենալ և երբեք «ես»- ի կարիքը չունենալ: Ինչպե՞ս եք հաղթահարում ձեր դժվարություններն այս ոլորտում:
5. Ինչպե՞ս եք համոզվում, որ Հիսուսի մեջ ձեր մնալը կենդանի է և ակտիվ ձեր կյանքում: Եղե՞ք հստակ, ոչ թե չափազանց ընդհանուր: Օրինակ՝ եթե ձեր պատասխանը «աղոթքն» է, այն չափազանց ընդհանուր է: Ձեր աղոթքի մեջ հստակորեն և ազնվորեն ի՞նչ կասեք ձեր կյանքի մասին:
6. Հիսուսի մեջ մնալ ամեն վայրկյան: Ի՞նչ է սա նշանակում ձեզ համար: Արդյո՞ք այս ճանապարհը կամ մոտեցումը գործում է ձեզ համար: Եթե ոչ, ինչո՞ւ: Ի՞նչ կանեք:
7. Ո՞րն է Հիսուսի հետ այս հարատև միության նպատակը:
8. Ի՞նչ է նշանակում մնալ Քրիստոսի մեջ՝ համաձայն այս գրքի գլուխների:
9. Քրիստոսի մեջ մնալը կյանք է: Ձեր կարծիքով ի՞նչ է սա նշանակում:
10. Դուք պետք է տեսնեք, որ ՄԻԱՅՆ և ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ Հիսուսի կարիքն ունեք ամեն ինչում և ամեն վայրկյան: Ի՞նչ է ինձ անհրաժեշտ այս կարիքն ավելի լավ հասկանալու և տեսնելու համար: Ձեր կարծիքով այս «կարիքը» ինչի՞ն է վերաբերում ձեր կյանքում:
11. Ո՞րն է Քրիստոսի մեջ մնալ սովորելու ճանապարհը:
12. Քրիստոսի մեջ մնալու համար ես պետք է պատրաստ լինեմ հանձնելու ամեն ինչ մշտապես, միայն և ամբողջովին Հիսուսին: Ինչո՞ւ: Ինչպե՞ս է հանձնելը կապված աշակերտության հետ:

Գլուխ 10. Անհնար՝ մարդկանց համար, հնարավոր՝ Աստծո համար

Այս գլուխն անդրադառնում է հետևյալ թեմաներին՝ մարդկանց համար անհնարին լինելու իրադրությունը, մարդու համար անհնար է ընդունելի ձևով ապրել և ծառայել Աստծուն, Աստված կարող է, և Աստված գործում է մարդու մեջ:

Իրադրությունը

«...ես Քրիստոսի հետ խաչված եմ: Եվ կենդանի եմ, ոչ թե այլևս ես, այլ Քրիստոսն է կենդանի ինձանում, և ինչ որ հիմա կենդանի եմ մարմնով, Աստծո Որդու հավատքով եմ կենդանի, որ ինձ սիրեց և Իր անձը ինձ համար մատնեց» (Գաղ. 2.19, 20):

Աստված՝ ի դեմս Քրիստոսի, խաչին գամեց մեր մեղավոր մարմնի նմանությունը: **Մեր մարմինը՝ մեր մեղքի էությունը, Հիսուսի հետ խաչվեց:** Աստծո համար հնարավոր այլ լուծում չկար. անհրաժեշտ էր մարմնի խաչելություն: Մարմինն ամբողջովին անբուժելի է: Դարձի գալիս ծնկելով խաչի մոտ՝ ես ընդունեցի Հիսուսի հետ միության դիրքը Նրա մահվան մեջ և մահվան մատնեցի իմ մարմինը, իմ եսապաշտ կյանքը: Հիմա **Քրիստոսի մեջ ես մահացած եմ իմ եսապաշտ կյանքին և դրա զորությամբ:** Դարձի գալու այդ վճռական պահից հավատացյալին վիճակված է շարունակելու ապրել՝ ամեն օր համարելով, որ իր եսապաշտ կյանքը գամված է խաչին: Այս ճշմարտությունը ամեն օր գիտակցաբար և մշտապես պետք է վերապրենք մեր կյանքում՝ անհրաժեշտության դեպքում ամեն պահի ուրանալով եսապաշտ կյանքը: Փրկությունը կախված է ոչ միայն այն վստահությունից, որ ունենք Քրիստոսի հանդեպ՝ մեր մեղքը հեռացնելու համար, այլև այն վստահությունից, որ Նա կազատի մեզ մեր «ես»-ից՝ մեր մարմնից: **Դուք չեք կարող ստանալ Քրիստոսի հանգիստն ու զորությունը՝ առանց կիրառելու Նրա խաչը ձեր կյանքում, ձեր էության մեջ՝ ձեր ինքնավստահության և սեփական ջանքերի մեջ: Մենք չենք կարող ընդունել Քրիստոսին՝ առանց ընդունելու Նրա խաչը մեր ամենօրա կյանքում:** Շատերը չեն սովորել ապրել այս ճշմարտությամբ: Նրանք չեն տալիս իրենց ամբողջ կյանքը Հիսուսին, նրանք լիովին անձնատուր չեն լինում, նրանք հավատում են, որ Աստված կարող է սրբացնել և ընդունել եսապաշտ կյանքը կամ մարմինը: Նրանք ապրում են մարմնով և աղթում Աստծուն, որ օգնի իրենց: Նրանք չեն տեսնում մարմնի չափազանց մեղավորությունը, որ իրենց ներսում է: **Նրանք չեն**

տեսնում, որ երբ եսապաշտ կյանքը գոյություն ունի ինչ- որ չափով, նոր կյանքը՝ Քրիստոսի կյանքը, չի կարող գոյություն ունենալ: Եսապաշտ կյանքը թույլ չի տա, որ նրանք տեսնեն այս ճշմարտությունը:

Մենք պետք է ընդունենք Քրիստոսին՝ որպես մեր ամբողջ կյանքի, դա հնարավոր է միայն այն ժամանակ, երբ ամեն օր, ամեն վայրկյան Սուրբ Հոգու զորությամբ ուրանանք եսապաշտ կյանքը: «Ես խաչվել եմ Քրիստոսի հետ, և այլևս ես չեմ ապրում, այլ Քրիստոսն է ապրում իմ մեջ: Այն կյանքը, որ հիմա ապրում եմ մարմնում, ապրում եմ Աստծո Որդու հավատքով, որ սիրեց ինձ և Իր անձը տվեց ինձ համար»:

Աստծո Խոսքում մեզ ասվում է «հանել հին մարդը» և «հագնել նոր մարդուն» (Եփես. 4.21- 24): Մենք ունենք նոր էություն, որովհետև Քրիստոսը բնակվում է մեր մեջ: **Մեր ողբերգությունն այն է, որ մենք փորձում ենք ապրել նոր կյանքը մեր ջանքերով, հին մարդու զորությամբ և իմաստությամբ:** Մենք չենք տեսնում հին մարդու էությունը: Հիսուսին լիովին հանձնվելը հեռացնում է այս կուրությունը: Մենք ապրում ենք հին էության կրոնական կերպարանքով՝ նոր էությամբ, նոր արարչությամբ հավատքով ապրելու փոխարեն: Մենք թույլ ենք տալիս, որ մարմինն ապրի՝ այն խաչին պահելու փոխարեն: Մենք պետք է տեսնենք, որ երբ եսապաշտ կյանքը գոյություն ունի ինչ- որ չափով, նոր կյանքը՝ Քրիստոսի կյանքը, չի կարող գոյություն ունենալ: Հիսուսին կերպարանակից լինելը հնարավոր չէ հին մարդու համար, այն միայն նոր մարդու համար է: Սիրելի Քրիստոսի աշակերտ, ձեր պատասխանատվությունն է թույլ տալ, որ Հոգին հանի ձեր հին էությունը և հագցնի նորը:

Սիրելի աշակերտ, ձեր ուժերով չեք կարող ազատվել ձեր մարմնի ցանկություններից և հակումներից: Դուք չեք կարող ապրել սուրբ կյանքով ձեր վճռականության ուժով: Վստահե՛ք Աստծուն, որ Նա անի դա ձեզ համար: Ուշադրություն դարձրե՛ք, որ Աստծուն վստահել նշանակում է չվստահել ինքդ քեզ: «Ես»- ին չվստահել նշանակում է կրել խաչը՝ խաչի վրա մահանալու համար: Մենք պետք է հավատանք և հանձնվենք Աստծո ամենակարողությանը: Մարդը չի կարող իր ուժերով փրկվել և հետևել Քրիստոսին՝ սուրբ կյանք վարելով:

Հոգևոր կյանքում ամեն ծախողում պայմանավորված է մեր գաղտնի ինքնափառաբանմամբ և ինքներս մեզ, մեր ջանքերին գաղտնի ապավինմամբ: Մենք պետք է սովորենք «Ինձնից ոչինչ չեմ կարող անել» պնդման նշանակությունը Հիսուսից և ապրենք այդ կյանքով:

ՄՏՈՐՈՒՄ Աստծո հետ

1. «Դուք չեք կարող ստանալ Քրիստոսի հանգիստը և զորությունը առանց կիրառելու Նրա խաչը ձեր կյանքում՝ ձեր էություն, ինքնավստահության և ջանքերի մեջ»: Ինչպե՞ս է այս ճշմարտությունը վերաբերում ձեր կյանքին:
2. «Մենք պետք է տեսնենք, որ երբ եսապաշտ կյանքը գոյություն ունի ինչ- որ չափով, նոր կյանքը՝ Քրիստոսի կյանքը, չի կարող գոյություն ունենալ»: Ի՞նչ է սա նշանակում ձեր կյանքի համար հիմա:

Մարդու համար անհնար է ընդունելի կերպով ապրել և ծառայել Աստծուն

Անհնար է, որ մարդն իր ջանքերով փրկվի և հետևի Քրիստոսին սուրբ, սրբացված կյանքով: Մարդու մարմինը՝ եսապաշտ կյանքը, պետք է հեռացնել ճանապարհից, որովհետև այն թշնամություն է Աստծո դեմ և միայն ծախողման է հանգեցնում: Շատերը հավատում են, որ Աստված կարող է սրբացնել, բարելավել և ընդունել մարմինը: Նրանք ապրում են մարմնով և աղոթում են, որ Աստված օգնի իրենց: Եսապաշտ կյանքը չի կարող բարելավվել, այն պետք է խաչվի: Սրբության կյանքն անհնար է մարդկանց համար, բայց Աստծո համար հնարավոր է: Մենք պետք է հավատանք և հանձնվենք Աստծո ամենակարողությանը:

«Այն բաները, որ կարելի չեն մարդկանց մոտ, կարելի են Աստծո մոտ» (Ղուկ. 18.27):

Այս տեքստը պարունակում է երկու միտք՝ կապված փրկության հետ. (1) անհնար է, որ մարդն իր ջանքերով փրկվի և հետևի Քրիստոսին սուրբ, սրբացված կյանքով, և (2) այն, ինչ անհնար է մարդկանց համար, հնարավոր է Աստծո համար: Այս մտքերը սովորեցնում են երկու հրաշալի դասեր մեր հոգևոր կյանքի մասին: Դրանք ներկայացնում են հոգևոր կյանքի որոշակի փուլեր: Հաճախ երկար ժամանակ է պահանջվում առաջին դասը սովորելու համար: Դա սա է. հոգևոր կյանքում մարդը չի կարող որևէ բան անել, փրկությունը և սրբությունն անհնար են մարդու համար: Վաղ թե ուշ հավատացյալը սովորում է սա, սակայն դեռևս չի սովորում երկրորդ դասը. այն, ինչ անհնար է եղել իր համար, հնարավոր է Աստծո համար: Օրինյալ է այն մարդը, որ սովորում է երկու դասն էլ:

Մարդը չի կարող

Առաջին փուլում մարդը փորձում է անել առավելագույնը իր հոգևոր կյանքը բարելավելու համար և ձախողվում է: Նա փորձում է ավելի լավ գործել և կրկին ձախողվում է, փորձում է էլ ավելին անել և դարձյալ ձախողվում է: Նա նույնիսկ չի սովորում այն դասը, որ անհնար է՝ մարդն ապրի հոգևոր կյանքով այնպես, ինչպես հարկն է, և ծառայի Աստծուն Նրա ճանապարհներով: Պետրոսը երեք տարի անցկացրեց Քրիստոսի հետ և այդպես էլ չսովորեց, որ դա *անհնար է*, մինչև որ երեք անգամ ուրացավ Տիրոջը և դառնագին լաց եղավ: Այն ժամանակ նա հասկացավ:

Մի պահ նայենք այն մարդուն, որը սովորում է այս դասը: Հոգևոր կյանքի սկզբում երիտասարդ նորադարձը գաղափար չունի այս ճշմարտությունից: Նա դարձի է եկել, նրա սրտում Տիրոջ ուրախությունն է, նա սկսում է վազել ասպարեզը և կովել հոգևոր պատերազմում: Նա համոզված է, որ կարող է հաղթել, որովհետև անկեղծ է և ազնիվ և հավատում է, որ Աստված կօգնի իրեն: Սակայն շուտով և ինչ- որ կերպ նա ձախողվում է և մեղանչում այնտեղ, որտեղ չէր սպասում, և մեղքը տիրում է նրան: Նա հուսահատվում է, բայց մտածում է. «Եսբավականաչափ ուշադիր չէի, ես բավականաչափ վճռական չէի իմ որոշումներում»: Նա կրկին խոստանում է և աղոթում, որ Աստված օգնի իրեն, ու դարձյալ ձախողվում է: Նա մտածում է. «Միթե ես վերստին ծնված մարդ չեմ: Միթե Աստծո կյանքն իմ մեջ չէ»: Նա մտածում է. «Այո, և ես ունեմ Քրիստոսին, որը կօգնի ինձ, ես կարող եմ ապրել սուրբ կյանքով»: Սիրելի Քրիստոսի աշակերտ, նկատեցի՞ք, թե ինչն էր սխալ այս վերջին արձագանքի մեջ. «Ես ունեմ Քրիստոսին, որը կօգնի ինձ, ես կարող եմ ապրել սուրբ կյանքով»:

Ավելի ուշ նրա մտքերն այլ ուղղություն են ստանում: Նա սկսում է հասկանալ, որ Աստծուն նվիրվելու և հանձնվելու այսպիսի հոգևոր կյանքն անհնար է, բայց չի ընդունում դա: Շատ քրիստոնյաներ հանգում են այս եզրակացությանը՝ «Ես չեմ կարող», և մտածում են, որ Աստված երբեք չի ակնկալել, որ իրենք անեն այն, ինչ չեն կարող անել: Եթե նրանց ասում եք, որ Աստված իսկապես սա է ակնկալում, դա նրանց առեղծված է թվում: Բավականին շատ քրիստոնյաներ ապրում են խղճուկ կյանքով, անհաջողության և մեղքի կյանքով՝ հանգստի և հաղթանակի կյանքի փոխարեն, որովհետև նրանք հասկացել են, որ «չեն կարող, դա անհնար է»: Սակայն նրանք լիովին չեն հասկանում և ունենալով տպավորությ-

յուն, որ «չեն կարող»՝ տեղ են տալիս հուսահատությանը: Նրանք անում են իրենց լավագույնը, բայց երբեք չեն ակնկալում, որ շատ հեռու կգնան: Մարմնի կյանքը կամ եսապաշտ կյանքը շարունակվում է: Սիրելի հավատացյալ, սա ծանոթ է ձեզ:

Բայց Աստված Իր զավակներին առաջնորդում է դեպի հաջորդ փուլ: Այս փուլում մարդը սկսում է լիովին հավատալ, որ «անհնար է», սակայն միաժամանակ շարունակում է ասել. «Ես պետք է անեմ դա և կանեմ. մարդու համար անհնար է, սակայն ես պետք է անեմ դա»: Երբ այս նորոգված ցանկությունը և կամքը սկսում են ամբողջ ուժով դրսևորվել, կրկին հաջորդում է ձախողումը: Նա աղոթում է փափագով և ուժգնորեն և սկսում է աղաղակել Աստծուն. «Տեր, ինչ է սա նշանակում: Ինչպե՞ս պետք է ազատվեմ մեղքի իշխանությունից»: Սա վերստին ծնված մարդու վիճակն է Հռոմեացիների 7- րդ գլխում: Այնտեղ մենք տեսնում ենք քրիստոնյա մարդուն, որը հնարավորինս փորձում է ապրել սուրբ կյանքով: Աստծո օրենքը հայտնվել է նրան՝ դիպչելով նրա սրտի խոր ցանկություններին, և հիմա նա ասում է. «Ես հավանում եմ Աստծո օրենքը ներսի մարդով: Բարին կամենալը կա իմ մեջ: Իմ սիրտը սիրում է Աստծո օրենքը, և իմ կամքն ընտրել է օրենքը»: Կարո՞ղ է այսպիսի մարդը, որ սրտով հավանում է Աստծո օրենքը, ձախողվել:

Կարո՞ղ է ձախողվել այն մարդը, որ սրտով հավանում է Աստծո օրենքը և կամովին որոշել է անել այն, ինչ ճիշտ է: Այո՛: Դա այն է, ինչ մեզ սովորեցնում է Հռոմեացիների 7- րդ գլուխը: Անհրաժեշտ է ավելին: Ես ներսի մարդով պետք է հավանեմ Աստծո օրենքը և կամենամ այն, ինչ Աստված է կամենում, ավելին՝ **ինձ անհրաժեշտ է աստվածային ամենակարողություն՝ Ինքը Քրիստոսն Իր լիությամբ, որպեսզի գործի դա ինձանում:** Եվ դա այն է, ինչ Պողոս առաքյալը սովորեցնում է Փիլիպեցիների 2.13- ում. «Քանզի Աստված է, որ ներգործում է ձեզանում կամենալն էլ, անելն էլ Իր հաճության պես»: Ուշադրություն դարձրեք հակադրությանը: Հռոմեացիների 7- րդ գլխում վերստին ծնված մարդն ասում է. «Կամենալը կա ինձ մոտ, բայց բարին անելը չեմ գտնում: Ես կամենում եմ, բայց չեմ կարողանում անել»: Բայց Փիլիպեցիների 2- րդ գլխում տեսնում ենք մի մարդու, որն ավելի հեռու է գնացել, նա հասկանում է, որ երբ Աստված գործադրի նորոգված կամքը, կտա զորություն՝ իրականացնելու այն, ինչ այդ կամքը ցանկանում է: Եկե՛ք ընդունենք սա որ-

պես հոգևոր կյանքի առաջին մեծ դաս. «**Ինձ համար անհնար է, իմ Աստված. վերջ մարմնին, եսապաշտ կյանքին և նրա բոլոր ուժերին ու «ես»- ին, և թող իմ փառքը լինի անօգնական, հոգևորապես ոչինչ և հոգևորապես դատարկ լինելը**»: Այս դասը տրվում է պատրաստված և Աստծուն աղաղակող սրտին Հոգու հայտնության և հանդիմանության միջոցով:

Փառք Աստծուն աստվածային ուսուցման համար, որը մեզ դարձնում է անօգնական: Ձեր անօգնականությունը ինքնաբացահայտելիս և սուրբ կյանքով ապրելու, խոնարհությամբ ագապե սիրով սիրելու և ծառայելու համար Աստծուն լիովին հանձնվելու մասին կրկին մտածելիս մի՞թե չեք հասել ձեր անձի վախճանին: Մի՞թե չեք զգացել, որ կարող էիք տեսնել, թե ինչպես է հնարավոր ամեն վայրկյան ապրել Աստծուն լիովին հանձնված կյանքով ձեր սեղանի շուրջը, ձեր տանը, ձեր աշխատանքի մեջ, փորձությունների և գայթակղությունների մեջ: Աղոթում եմ, որ հիմա՛ սովորեք այս դասը: Եթե զգացել եք, որ չեք կարող անել դա, որ չեք կարող ապրել սուրբ կյանքով և ապրել առանց մեղանչելու, դուք ճիշտ ճանապարհին եք, շարժվեք այդ ուղղությամբ: Ընդունեք այդ դիրքը և պահպանեք այն Աստծո առջև: «Իմ սրտի ցանկությունը և բերկրանքը, ո՛վ Տեր, բացարձակ անձնատուր լինելն է, բայց ես չեմ կարող անել դա: Ինձ համար անհնար է ապրել սիրո, սրբության և խոնարհության այդ կյանքով: Դավեր է իմ ուժերից»: Ծնկի՛ իջեք և սովորեք, որ երբ բացարձակ անօգնական լինեք, Աստված կգա՝ գործելու ձեր մեջ ոչ միայն կամենալը, այլև անելը:

ՄՏՈՐՈՒՄ Աստծո հետ

1. «Ինձ համար անհնար է, իմ Աստված, վերջ մարմնին և նրա բոլոր ուժերին, «ես»- ին, և թող իմ փառքը լինի անօգնական լինելը»: Աստծո հետ խոսեք, թե ինչ է այս պնդումը նշանակում ձեզ համար, և խնդրեք, որ այս ճշմարտությունն ավելի խոր մխրճվի ձեր սրտի մեջ: Ուշադիր եղեք Նրա Հոգու արձագանքին հաջորդ մի քանի օրերին և սպասեք դրան:
2. «Իմ սրտի ցանկությունը և բերկրանքը, ո՛վ Տեր, բացարձակ անձնատուր լինելն է, բայց ես չեմ կարող անել դա: Ինձ համար անհնար է ապրել սիրո և խոնարհության այդ կյանքով:

Դա վեր է իմ ուժերից»: Նախկինում այսպիսի զգացողություն ունեցել եք: Հիմա զգում եք: Խոնարհվեք և խնդրեք, որ Աստծո Լույսը փայլի և լուսավորի ձեր ճանապարհը: Երբ Նա պատրաստի ձեր սիրտը, Նրա հայտնությունը և հանդիմանությունը շուտով կհասնեն ձեզ:

Աստված կարող է

Ահա երկրորդ դասը. «Այն բաները, որ *անհնար են մարդու համար, հնարավոր են Աստծո համար*»:

Շատ հավատացյալներ սովորել են այս դասը՝ «մարդկանց համար անհնար է», այնուհետև տրվել են անօգնականությանը և հուսահատությանը և ապրել թշվառ քրիստոնեական կյանքով՝ առանց ուրախության, ուժի կամ հաղթանակի: Ինչո՞ւ: Որովհետև նրանք չեն խոնարհվել, որպեսզի սովորեն մյուս դասը՝ **Աստծո համար ամեն բան հնարավոր է**: Ձեր հոգևոր կյանքը պետք է լինի ապացույց, որ Աստված գործում է անհնարին բաներ. ձեր հոգևոր կյանքը պետք է լինի անհնարիությունների շարք, որոնք հնարավոր և իրական են դառնում Աստծո ամենակարող զորությամբ: Դա այն է, ինչին քրիստոնյան պետք է հավատա: Նա ունի ամենակարող Աստված, որին երկրպագում է, և նա պետք է հասկանա, որ իրեն անհրաժեշտ է ոչ թե մի փոքր Աստծո զորությունից, այլ Աստծո ամբողջ ամենակարողությունը, որն իրեն ճիշտ դիրքում կպահի և հնարավորություն կտա ապրելու որպես հոգևոր և ոչ թե մարմնավոր մարդ: Նա ինքը չունի անհրաժեշտ զորություն Աստծո առջև ճիշտ ապրելու համար: Լիովին հոգևոր լինելը Աստծո ամենակարող զորության աշխատանքն է: Նայեք Քրիստոս Հիսուսի ծննդին: Դա աստվածային զորության հրաշք էր, և Մարիամին ասվեց. «Աստծո համար անհնարին ոչինչ չկա»: Դա Աստծո ամենակարողությունն էր: Նայեք Քրիստոսի հարությանը: Մենք սովորում ենք, որ Իր կարող զորության գերազանց մեծության համեմատ է, որ Աստված հարություն տվեց Քրիստոսին մեռելներից: Ամեն ծառ պետք է աճի այն արմատի վրա, որից ծլարձակում է: Քրիստոնեությունը սկիզբ է առել Աստծո ամենակարողությունից, և յուրաքանչյուրը պետք է աճի այդ ամենակարող զորության մեջ: Աստծո ամենակարողությունը, հետևաբար և **Նրա կյանքն ու եսապաշտ կյանքը միասին չեն կարող գոյություն ունենալ**: Սրբության, խոնարհության և անձնատուր եղած սիրո առավել բարձր հոգևոր կյանքի բոլոր հնարավորությունները սկիզբ են առնում Քրիստոսի՝ **Աստծո ամբողջ կամքը մեր մեջ գործադրելու** զորության նորո-

վի ընկալումից: Ուզում եմ հրավիրել ձեզ այժմ գալ և երկրպագել ամենակարող Աստծուն: Նա ոչ միայն հնարավորությունների, այլև անհնարիությունների Աստված է:

ՄՏՈՐՈՒՄ Աստծո հետ

1. Ձեր սիրտը սովորել է երկրպագել ամենակարող Աստծուն:
2. Ձեր սիրտը սովորել է սերտ առնչություն ունենալ ամենակարող Աստծո հետ:
3. Այնքան սերտ, որ դուք գիտեք, որ ամենակարողությունը՝ Ինքը Քրիստոսը, գործում է ձեր մեջ: Արտաքին տեսքից արդյո՞ք երևում են դրա նշանները:

Պողոս առաքյալն ասաց. «Ես տկարությունով և վախով և շատ դողով եղա ձեզ մոտ... և իմ քարոզչությունը ... եղավ Հոգու և զորության ապացուցությամբ»: Եկեք ամբողջովին, անմնացորդ հանձնվե՛նք Աստծո ամենակարողությանը և լիովին անձնատուր լինե՛նք Նրա խաչին ու սովորե՛նք, թե ինչ երանություն է ամեն ժամ և ամեն վայրկյան բնակվել ամենակարող Աստծո հետ: Սուրբ Հոգին այս ուսուցումը բերում է խաչյալ սրտի մեջ, որտեղ ինքնապավիհությունը և ինքնավստահությունը մշտապես մերժվում և ժխտվում են Քրիստոսի զորությամբ:

Երբևէ Աստվածաշնչում ուսումնասիրել եք Աստծո ամենակարողությունը: Դուք գիտեք, որ Աստծո ամենակարողությունն էր, որ ստեղծեց աշխարհը և մարդուն: Բայց ուսումնասիրել եք Աստծո ամենակարողությունը փրկագնման գործի մեջ: Նայե՛ք Աբրահամին: Երբ Աստված կանչեց նրան, որ լինի այն ժողովրդի հայրը, որից Քրիստոսը ծնվելու էր, ասաց. «Ես եմ ամենակարող Աստվածը, Իմ առջև վարվիր և կատարյալ եղիր»: Աստված սովորեցնում էր Աբրահամին վստահել Իրեն՝ որպես Ամենակարողի: Ուսուցումը ներառում էր գնալը այն երկիր, որն անձանոթ էր Աբրահամին. նա՝ որպես ուխտավոր, պետք է պահեր իր հավատքը հազարավոր քանանացիների մեջ: Նրա հավատքն ասում էր. «Սա իմ երկիրն է»: Նրա հավատքը ծերության մեջ քսանհինգ տարի սպասեց որդու՝ հակառակ բոլոր հույսերի, նրա հավատքն սկանատես եղավ Մորիա լեռան վրա Իսահակի հարություն առնելուն, երբ պատրաստվում էր զոհելու նրան: Աբրահամը հավա-

տաց Աստծուն: Նա զորացավ հավատքում՝ Աստծուն փառք տալով, որովհետև իր մտքում համոզված էր, որ Նա, որ խոստացավ, կարող է անել: **Մենք պետք է հանձնվենք Աստծո ամենակարողությանը, մեր հոգևոր կյանքը կախված է դրանից:** Սակայն Աստծուն հանձնվելու ճանապարհն անցնում է մեր եսապաշտ կյանքը Նրա խաչին հանձնելու միջով:

Մեր հոգևոր կյանքի տկարության պատճառն այն է, որ ցանկանում ենք գործել մասամբ և թույլ տալ, որ Աստված օգնի մեզ: **Դա հնարավոր չէ, Աստված չի կարող ընդունել այն, ինչ մարմնավոր է:** Մենք ամբողջովին անօգնական պետք է դառնանք հոգևոր կյանքի և օգնության հարցում և թույլ տանք, որ միայն Աստված գործի, և Աստված կգործի փառավոր կերպով: Երբ մեր էությանը փորձում ենք օգնել Աստծուն մեր հոգևոր կյանքում, Աստված հետ է քաշվում: **Մեր օգնությունը լի է եսասիրությամբ, հպարտությամբ և եսակենտրոնությամբ: Սա է, որ պետք է խաչված պահենք՝** հավատալով Աստծո ամենակարողությանը, եթե իսկապես ուզում ենք լինել Աստծո աշակերտը: Մովսեսը, երբ Իսրայելին հանեց Եգիպտոսից, Հետուն, երբ նրանց բերեց Քանանի երկիր, և Հին Կտակարանի Աստծո բոլոր ծառաները հույս էին դնում անհնարին բաներ անելու Աստծո ամենակարողության վրա: Այս նույն Աստվածն է, որ ապրում է այսօր, և այս Աստված Իր յուրաքանչյուր զավակի Աստվածն է: Սակայն մենք ցանկանում ենք, որ Աստված մի փոքր օգնի մեզ, մինչ մենք անում ենք մեր լավագույնը՝ փոխանակ հասկանալու, թե ինչ է Աստված ուզում, և ասելու. «Ես ոչինչ չեմ կարող անել: Աստված պետք է և կանի ամենը»: Դուք ասե՛լ եք. «Երկրպագության մեջ, աշխատանքում, ուրիշներին սիրով և խոնարհությամբ ծառայելու մեջ, սրբացման մեջ, Աստծուն հնազանդվելու մեջ **ես ինձնից ոչինչ չեմ կարող անել**, ուստի իմ գործն է երկրպագել ամենակարող Աստծուն և **հավատալ, որ Նա կգործի իմ մեջ ամեն վայրկյան**»: Օ՛, թող Աստված սովորեցնի սա մեզ: Օ՛, թող Աստված Իր շնորհքով ցույց տա, թե ինչ Աստված ունենք և ինչ Աստծո ենք վստահել մեր անձը՝ ամենակարող Աստծո: Նա կամենում է Իր ամբողջ ամենակարողությամբ դնել Իրեն Իր յուրաքանչյուր զավակի տրամադրության տակ: Արդյո՞ք չպետք է ընդունենք Հիսուսի դասը և ասենք. «Ամեն. այն բաները, որ անհնար են մարդկանց համար, հնարավոր են Աստծո համար»:

Հիշե՛ք Պետրոսին, նրա ինքնավստահությունը, նրա զորութեամբ

յունը, կամակորությունը և այն, թե ինչպես նա ուրացավ իր Տիրոջը: Զգո՞ւմ եք սա. «Ա՛հ, եսապաշտ կյանքն է, մարմնավոր կյանքն է, որ իշխում է իմ մեջ»: Դուք հավատացե՞լ եք, որ կա ազատագրում դրանից: Հավատացե՞լ եք, որ Ամենակարող Աստված այնքան ունակ է հայտնելու Քրիստոսին ձեր սրտում, Սուրբ Հոգին այնքան պատրաստ է իշխելու ձեր մեջ, որ եսապաշտ կյանքը չի ունենա զորություն կամ իշխանություն ձեզ վրա: Միացրե՞լ եք այս երկուսը և զղջման արտասուքով ու խորին խոնարհությամբ աղաղակել. «Ո՛վ Աստված, մարդու համար անհնար է, մարդը չի կարող անել սա, բայց, փառք Քո անվանը, Քեզ համար հնարավոր է»: Հավատքով պահանջե՞լ եք ազատագրում ինքնավստահությունից և սեփական ուժերից: «Ես»- ից այս ազատագրմանը պետք է հավատալ և պետք է պահանջել այն ամեն օր, երբ մեղք կամ կարիք է ի հայտ գալիս. սա մեկանգամյա գործողություն չէ: Արե՞ք սա հիմա՝ հավատքով պահանջելով ազատագրում ինքնավստահությունից և սեփական ուժերից: Նորովի ամբողջովին հանձնվե՞ք անսահման սիրո Աստծո ձեռքերի մեջ. որքան անսահման է Նրա սերը, այնքան անսահման է Նրա զորությունը՝ դա անելու համար:

Աստված գործում է մարդու մեջ

Կրկին, մենք մոտենում ենք եսապաշտ կյանքը խաչին լիովին հանձնելու հարցին, որի նպատակը ոչ թե պարզապես Աստծո կամքը կատարելն է, այլ **որ Աստված անի ամենը**: Ես զգում եմ, որ սա մեծ կարիք է եկեղեցում: Ահա թե ինչն է պատճառը, որ Սուրբ Հոգին չի կարող լցնել մեզ, և մենք չենք կարող ապրել որպես մարդիկ, որոնք ամբողջովին առանձնացված են Սուրբ Հոգու համար: Ահա թե ինչու հնարավոր չէ նվաճել մարմինը կամ եսապաշտ կյանքը: Տե՛ր Աստված, տո՛ր մեզ հասկացողություն Քո ճանապարհների մասին:

Մենք երբեք չենք հասկացել, թե ինչ է նշանակում լիովին հանձնվել Աստծուն, ինչպես Հիսուսը հանձնվեց: Շատերն ազնվորեն ասում են. «Ամեն, ես ընդունում եմ եսապաշտ կյանքը Աստծուն լիովին հանձնելու ուղերձը», սակայն մտածում են. «Արդյո՞ք դա երբևէ կլինի իմ կյանքում: Կարո՞ղ եմ հույս դնել Աստծո վրա, որ կդարձնի ինձ մեկը, ով ապրում է Աստծուն լիովին հանձնված կյանքով»: Ահա Աստծո պատասխանը ձեզ. «Այն բաները, որ կարելի չեն մարդկանց համար, կարելի են Աստծո համար»: **Հավատացե՞ք**, որ երբ Նա պատասխանատվություն ստանձնի ձեզ համար Քրիստոսի մեջ, Նրա համար հնարավոր կլինի դարձնել

ձեզ լիովին անձնատուր եղած մարդ: Աստված ընդունակ է պահպանելու դա: Նա ընդունակ է թույլ տալու, որ ամեն առավոտ վեր կենաք անկողնուց այս երանելի մտքով. **«Ես Աստծո հսկողության տակ եմ: Իմ Աստված անձամբ և Իր ամենակարող զորությամբ հաջողում է իմ կյանքում»:**

Ոմանք հոգնել են սրբացման և սրբության մասին մտածելուց: Դուք աղոթում եք, փափագում և աղաղակում դրա համար, սակայն դա այնքան հեռու է թվում: Դուք ցանկանում եք Հիսուսի սրբությունը, սերը և խոնարհությունը, սակայն գիտակցում եք, թե որքան հեռու են դրանք: Սիրելի՛ Քրիստոսի աշակերտ, սրբացումն այն է, ինչ Աստված պատվիրում է, այն իրական է և գործուն. «Այն բաները, որ կարելի չեն մարդկանց համար, կարելի են Աստծո համար»: **Աստված կարող է սրբացնել ձեզ և Իր ամենակարող ու սրբացնող զորությամբ պահել ձեզ ամեն վայրկյան:** Օ՛հ, երանի՛ կարողանայինք մի քայլ ավելի մոտենալ մեր Աստծուն: Երանի՛ Աստծո լույսը փայլեր, և մենք կարողանայինք ավելի լավ ճանաչել մեր Աստծուն: Քրիստոսի կյանքը մեր մեջ նշանակում է ապրել Քրիստոսի նման՝ ընդունելով Նրան՝ որպես մեր Փրկչի մեր իսկ մեղքերից, և որպես մերկյանքի և զորության: **Քրիստոսը մեր կյանքն է: Նրա կյանքն իմ մեջ անում է ամեն բան:** Դա ձեր մեջ կարող է հայտնել Աստված, որ Երկնքում է: Եկեք հիշենք Պողոսի աղոթքը. «Որ Իր փառքի հարստության պես տա ձեզ, որ զորությամբ հաստատվեք Իր Հոգու ձեռքով ներսի մարդում»: Չեք տեսնում, որ Ամենակարող Աստված է, որ գործում է Իր ամենակարողությամբ Իր հավատացյալ զավակների սրտում, որպեսզի Քրիստոսը դառնա ներքնակ Փրկիչ: Դուք փորձել եք ըմբռնել սա և հավատալ սրան, սակայն չի հաջողվել: Պատճառն այն է, որ ձեզ չեն հավատացրել, որ «այն բաները, որ կարելի չեն մարդկանց համար, կարելի են Աստծո համար»: Սիրելի՛ հավատացյալ, լսո՛ւմ եք հիմա Աստծո ձայնը ձեր սրտում:

Լինել Քրիստոսի մեջ կամ ունենալ Քրիստոսին մեր մեջ նշանակում է, որ Քրիստոսն ապրում է Իր կյանքը մեր մեջ ամեն օր՝ ամեն վայրկյան: «Մենք գիտենք, որ մահից դեպի կյանք փոխվեցինք, որովհետև եղբայրներին սիրում ենք, բայց ով որ չի սիրում եղբորը, մնում է մահի մեջ» (Ա Հովհ. 3.14): Քրիստոսը պատվիրում է մեզ. «Դուք պետք է սիրեք այնպես, ինչպես Ես ձեզ սիրեցի»: Մենք պետք է ունենանք սիրո ներհոսք բոլորովին նոր ձևով. **մեր սիրտը պետք է լցվի կյանքով վերևից՝ հա-**

վիտենական սիրո Աղբյուրից: Միայն դատարկված սիրտը կարող է լցվել: Եթե ագապե սերը պետք է հոսի մեզնից ամբողջ օրը, ուրեմն մեզ համար բնական պետք է լինի սիրել մեր մերձավորներին այնպես, ինչպես գառան համար բնական է հեզ լինելը: Մինչև չհասկանամ, որ որքան մարդն ատի ինձ և չարախոսի ինձնից, որքան անցանկալի և անհրապույր լինի նա, այնքան ավելի շատ պետք է սիրեմ նրան, մինչև չհասկանամ, որ որքան շատ լինեն արգելքները, ատելությունն ու ապերախտությունը, այնքան ավելի շատ սիրո զորությունը կկարողանա հաղթել իմ մեջ, մինչև չհասնեմ այն վիճակին, որ հասկանամ դա, չեմ ասի. «Մարդկանց համար անկարելի է»: Բայց եթե հիմա ունեք այսպիսի զգացողություն. «Այս ուղերձը խոսեց ինձ հետ մի սիրո մասին, որը բոլորովին վեր է իմ ուժերից. դա բացարձակապես անհնար է», ուրեմն մենք կարող ենք գալ Աստծո մոտ և ասել. «Քեզ համար և Քեզ հետ հնարավոր է»:

Արդյո՞ք աղաղակում ենք Աստծուն ավելի մեծ արթնության համար: Օ՛հ, եթե միայն Աստված արթնացներ Իր հավատացյալ ժողովրդին: **Մենք կարիք ունենք հայտնաբերելու և տեսնելու Աստծուց մեր էության հոգևոր դատարկությունը և աննշանությունը:** Մենք կարիք ունենք հայտնաբերելու և տեսնելու ագապե սիրով սիրելու, ագապե սիրով ծառայելու և ագապե սիրով օգնելու մեր անկարողությունը: Մենք՝ հենց Աստծո հավատացյալ ժողովուրդը, Աստծո կարիքն ունենք: Հազարավոր սրտեր փափագում են սրբության և սրբացման. այս փափագը Աստծո զորության նախանշանն է:

Աստված ներգործում է կամենալը, այնուհետև ներգործում է անելը: Սրբության և սրբացման փափագը վկայություն և ապացույց է այն բանի, որ Աստված ներգործել է *կամենալը*: Օ՛հ, **եկե՛ք հավատքով հավատանք, որ ամենակարող Աստված կաշխատի անել** Իր ժողովրդի մեջ ավելին, քան կարող ենք խնդրել: Պողոսն ասաց. «**Բայց Նրան, որ կարող է առատությամբ անել ամեն բաներից ավելի, քան որ խնդրում ենք և իմանում... Նրան փառք լինի**»: Թող մեր սրտերն ասեն դա: Փառք Աստծուն՝ Ամենակարողին, ով կարող է անել ավելին, քան համարձակվում ենք խնդրել կամ մտածել:

«Այն բաները, որ կարելի չեն մարդկանց համար, կարելի են Աստծո համար»: Մեր շուրջը մեղքի և վշտի աշխարհ է, և սատանան այնտեղ է: Բայց հիշե՛ք, Քրիստոսը գահին է, Քրիստոսն

ավելի ուժեղ է, **Քրիստոսը հաղթել է, և Քրիստոսը կհաղթի**: Բայց սպասե՛ք Աստծուն: Այն բաները, որ *անհնար են մարդկանց համար*, բարձրացնում են մեզ վեր և դառնում *հնարավոր Աստծո համար*: Միացե՛ք Աստծուն: **Պաշտե՛ք և վստահե՛ք Նրան՝ որպես Ամենակարողի** ոչ միայն ձեր կյանքի, այլև բոլոր այն հոգիների համար, որ վստահվել են ձեզ: Երբեք մի աղոթեք՝ առանց պաշտելու Նրա ամենակարողությունը: Ասե՛ք. «*Հզոր Աստված, ես հոչակում եմ Քո ամենակարողությունը*»: Ձեր աղոթքի պատասխանը կգա, և ինչպես Աբրահամը, դուք կգորանաք հավատքում՝ փառք տալով Աստծուն, որովհետև դուք համարում եք, որ Նա, ով խոստացել է, կարող է կատարել:

Սիրելի՛ Քրիստոսի աշակերտ, պատրմատ ենք հրաժարվելու ամեն վատ սովորությունից, ինքնագովեստից, կամակորությունից, հպարտությունից և եսասիրությունից, աշխարհի բոլոր ոգիներից և մեր կյանքն ամբողջովին հանձնելու Հիսուսին և Նրա խաչին ու բացառապես նվիրվելու Աստծո բացառիկ գործածությանը: **Մենք չենք կարող անհնազանդությունից անցնել հնազանդության**: Անհրաժեշտ է հետադարձ, շրջադարձ, որոշում կամ ճգնաժամ: Այնուամենայնիվ, դրան հնարավոր է հասնել միայն սխալը հստակ հասկանալով և այն ամոթով ու տրտմությամբ խոստովանելով: Մեր եսապաշտ կյանքը՝ հին մարդը, անհուտրեն և լիովին չար է: Մեզ խիստ անհրաժեշտ են Հոգու հայտնությունը և հանդիմանությունը մեր եսապաշտ կյանքի կամ մարմնի մասին. «...Ինձանում (այսինքն՝ իմ մարմնում) մի բարի բան չի բնակվում...» (Հռոմ. 7.18), «Որովհետև մարմինը ցանկանում է հոգուն հակառակ, և հոգին՝ մարմնին հակառակ, և սրանք իրար հակառակ են...» (Գաղ. 5.17), «Որովհետև մարմնի խորհուրդը Աստծո դեմ թշնամություն է, որովհետև Աստծո օրենքին չի հնազանդվում և չի էլ կարող» (Հռոմ. 8.7):

Հիմարություն է, երբ շարունակում եմ հավատալ, որ ես՝ իմ էությունը, կարող եմ օգնել Աստծուն, և ապրում եմ մարմնով՝ իմ ժառանգած մարդկային էությամբ, ապրում ինքս ինձ համար: Աստծո ճշմարտությունը հոչակում է. «Եվ կենդանի եմ, ոչ թե այլևս ես, այլ Քրիստոսն է կենդանի ինձանում», «ՈՉ թե ես, այլ Աստծո շնորհքը, որ ինձ հետ է»: Չկա ուրիշ ճանապարհ դեպի ճշմարիտ կյանք՝ բացի այն ճանապարհից, որով անցավ մեր Տերը մեզնից առաջ՝ մահվան ճանապարհը: Առանց սրա հնարավոր չէ իսկապես մնալ Քրիստոսի մեջ: Սա է աշակերտության ուղին:

ՄՏՈՐԵՔ Աստծո հետ

Ժամանակ հատկացրեք և խորհրդածե՛ք Աստծո հետ: Մտորե՛ք և խոսե՛ք Աստծո հետ այս ճշմարտությունների մասին և բաց եղե՛ք Նրա ներդրման և Լույսի համար: Չարժի ապրել չքննված կյանքով:

Մարդու համար անհնար է սիրով և սրբությամբ ապրել հոգևոր կյանքը: Նախևառաջ ես պետք է սովորեմ սա: Սա միայն հնարավոր է Աստծո՝ Ամենակարողի հետ: Սա երկրորդ դասն է: Հիսուսը շարունակում է հռչակել. «Առանց Ինձ ոչինչ չեք կարող»: Հոգևոր կյանքում բոլոր անհաջողությունները պայմանավորված են մեր գաղտնի ինքնափառաբանմամբ և ինքներս մեր և սեփական ջանքերի նկատմամբ գաղտնի վստահությամբ: Մենք պետք է տեսնենք, որ երբ եսապաշտ կյանքը գոյություն ունի ինչ-որ չափով, նոր կյանքը՝ Քրիստոսի կյանքը, չի կարող գոյություն ունենալ: Մենք պետք է սովորենք «Ինձնից ոչինչ չեմ կարող անել» պնդման նշանակությունը և ապրենք այդ կյանքով:

Գլուխ 11. Լիովին հանձնվել Աստծուն

Այս գլուխն անդրադառնում է հինգ հիմնական թեմաների Աստծուն լիովին հանձնվելու մասին՝ Աստծուն լիովին հանձնվելու նշանակությունը և հնարավորությունը, վստահել և հավաքալ Աստծուն դրա համար, անձնագոհության կյանք, ամբողջական նվիրաբերում Աստծուն, աշակերտություն և նվիրաբերում Աստծուն: Մենք կքննարկենք այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ինչ է նշանակում լիովին հանձնվել Աստծուն, և ինչ է դա ենթադրում, ինչպե՞ս է այն կապված այն կյանքի հետ, որ Քրիստոսի մեջ է, միթե պետք է հանձնել ամեն բան, մասնավորապես իմ կյանքին վերաբերող ինչն է, որ պետք է հանձնեմ Աստծուն, արդյո՞ք լիովին հանձնվելը մնայուն է, ինչ է ամբողջական նվիրաբերումն Աստծուն, ինչպե՞ս է դա գործում, ինչպե՞ս են Աստծուն հանձնվելը և նվիրաբերվելը կապված աշակերտության հետ:

Ի՞նչ է նշանակում լիովին հանձնվել Աստծուն

Դա բացարձակապես, ամբողջովին և անմնացորդ հանձնվելն է Աստծուն՝ ապրելու միայն, միշտ և ամբողջությամբ Քրիստոսի մեջ և Քրիստոսի համար՝ հնազանդվելով միայն Նրա կամքին: Շատ հավատացյալներ գիտեն այս խոսքերի և արտահայտութ-

յունների իմաստը, բայց ո՛չ դրանց հոգևոր նշանակությունը: Շատերն ապրում են՝ հավատալով, որ անհնար է նման ձևով հանձնվել Աստծուն:

Սուրբ գիրքը մեզ սովորեցնում է, որ քրիստոնյաների համար կա կյանքի երկու պայման: Մեկը ընթացքն է Հոգու համաձայն, մյուսը ընթացքն է եսապաշտ կյանքի՝ «մարմնի» համաձայն: Այս երկու ուժերն անհաշտ հակամարտության մեջ են: Շատ քրիստոնյաներ իրենց առօրյա կյանքն ապրում են ոչ թե Հոգու, այլ եսապաշտ կյանքի համաձայն: Պողոս առաքյալը հարցնում է. «Այդքան անմի՞տ եք. հոգով սկսեցիք, և հիմա մարմնով եք վերջանում» (Գաղ. 3.3). Գաղատացիների կյանքն ու ծառայությունը դրսևորվում էին արտաքին մարմնավոր գործողություններով: Նրանք չէին հասկանում, որ երբ եսապաշտ կյանքին թույլ է տրվում ազդել իրենց կենսակերպի վրա, հետևանքը լինում է բացահայտ մեղքը: Պողոսը որպես եսապաշտ կյանքի գործեր նշում է ոչ միայն ծանր մեղքերը, ինչպիսիք են շնությունը, սպանությունը, հարբեցողությունը, այլև առօրյա կյանքի առավել սովորական մեղքերը, ինչպիսիք են բարկությունը, վիճաբանությունը, գժտությունը, անհամբերությունը, կոպտությունը, բամբասանքը: Սովորական մեղքերը պակաս մեղավոր կամ պակաս չար չեն, որքան ծանր մեղքերը: Պողոսը տալիս է այս հորդորը. «...Հոգով գնացեք և մարմնի ցանկությունը չեք կապարհի: Եթե Հոգով ենք ապրում, Հոգով վարվենք» (Գաղ. 5.16, 25): Հոգուն պետք է պատվել ոչ միայն որպես նոր կյանքի հեղինակի, այլև որպես մեր ամենօրյա ընթացքի առաջնորդի և հենց կյանքի: Հակառակ դեպքում մենք, ինչպես Պողոսն է անվանում, «մարմնավոր» քրիստոնյաներ ենք:

Ինչն է, որ պետք է հանձնեմ Քրիստոսին. իմ եսապաշտ կյանքը, սեփական կամքը: Քրիստոնյաների մեծամասնությունը լիարժեք հասկացողություն չունի այս հարցի վերաբերյալ: Նրանք շատ քիչ գիտեն դրա մասին և իրենց սրտում չեն տեսել մարմնավոր էության չափազանց մեղավորությունը և անբարեպաշտությունը: Նրանք անգիտակցաբար տրվում են այդ էությանը: Մարմինը կամ եսապաշտ կյանքը չի կարող բարելավվել կամ սրբացվել: «...Մարմնի խորհուրդը Աստծո դեմ թշնամություն է, որովհետև Աստծո օրենքին չի հնազանդվում և չի էլ կարող» (Հռոմ. 8.7): Թ՛ող Աստված տա մեզ հասկացողություն շնորհքի Իր խորհուրդների մասին: Երբ «մարմինը» խաչին է, Հոգին սրտում վերահսկում է կյանքը:

Մենք այնքան լավ չենք հասկանում այս հոգևոր կյանքը,

մենք սխալ ենք փնտրում այն: Մինչդեռ սա բառացիորեն այն է, ինչ Աստված խոստացել է և կիրականացնի նրանց մեջ, ովքեր անվերապահորեն կհանձնվեն Իրեն այս նպատակի համար: Մենք պետք է ձգտենք մտերմաբար ճանաչելու և անձնապես ու սրտանց վերապրելու Աստծուն: Աստծո հետ սրտի փորձառության կամ սրտի հաղորդության այս կարիքը շատերի համար ցանկալի, բայց գործնականում խորհրդավոր և անճանաչելի է թվում: Եկեք փնտրենք Աստծո հետ սրտի հաղորդակցություն Իր ներկայության մեջ և սովորենք կառչել Նրա զորությունից՝ միաժամանակ մերժելով մեր զորությունը և կամակորությունը:

Լիովին հանձնվելը ենթադրում է հաճնվել Հիսուսի խաչին, և սա մեզ առաջնորդում է ապրելու միայն, միշտ և ամբողջությամբ Քրիստոսի մեջ և Քրիստոսի համար՝ հնազանդվելով միայն Նրա կամքին: Եթե լիովին չենք հանձնվում Հոգու առաջնորդությանը, մենք ապրում ենք՝ անտեղյակ լինելով, որ եսապաշտ կյանքի իշխանության տակ ենք: Այս եսապաշտ կյանքը դրսևորվում է բազում տարբեր ձևերով: Այն արտահայտվում է կյանքի զբաղվածությամբ, տաքարյուն բնավորությամբ կամ բարկությամբ, որն անսպասելիորեն բարձրանում է մեր մեջ, սիրո պակասով, որի համար հաճախ մեղադրում ենք ուրիշներին, ուտելու և խմելու հաճույքով, մեր կամքը և պատիվը փնտրելով, մեր իմաստության և ուժի նկատմամբ վստահությամբ, աշխարհի այն հաճույքներով, որոնց համար երբեմն ամաչում ենք Աստծո առջև: Այս ամենը կյանք է «մարմնի համաձայն»: Միթե սա չէ մեր թույլ աղոթքի կյանքի, իրավիճակի մեջ որևէ փոփոխություն բերելու մեր անզորության պատճառը: Ես ապրում եմ Հոգով, ես վերստին ծնվել եմ, բայց չեմ վարվում Հոգու համաձայն. եսապաշտ կյանքն իշխում է ինձ: Մարմնավոր կյանքը չի կարող աղոթել հոգով և զորությամբ: **Միայն աղոթքում ես կարող եմ հաղթահարել իմ դեմ ուղղված խավարի թագավորության հարձակումները:** Ներսի սենյակը այն վայրն է, որտեղ ձեռք է բերվում վճռական հաղթանակ: Ներսի սենյակում ես սովորում եմ հանձնվել Աստծուն:

Նախևառաջ ես պետք է սովորեմ, թե ինչպես մնամ Քրիստոսի մեջ պարզ հավատքով: Հավատացե՛ք Քրիստոսին, վստահե՛ք Նրան և մերժե՛ք աշխարհը, մերժե՛ք ձեր եսապաշտ կյանքը: Ապրե՛ք Նրա ներկայության մեջ, հավատացե՛ք Նրան, ուրախացե՛ք Նրա սիրով և հանգստացե՛ք Նրանում, հանգստացե՛ք այդ վստահության մեջ: Ընդունե՛ք, որ ճիշտ փոխհարաբերությունը Տեր Հիսուսի հետ հնարավոր է պահպանել միայն Քրիստոսի մեջ մնալով: Եսապաշտ կյանքը զոհաբերելու և Աստծուն նվիրաբեր-

վելու զորությունը տալիս է միայն Աստծո շնորհքը: Միայն Հիսուսը կարող է ճնշել մարմինը և սատանային: Դադարեք հավատալուց, որ ինքներդ կարող եք դա անել:

Աստվածաշունչը խոսում է «հավատքի բարի պատերազմի» մասին, դա այն պատերազմն է, որ սկսվում և շարունակվում է հավատքով: Մենք պետք է ունենանք ճիշտ պատկերացում հավատքի մասին և հաստատ կանգնենք մեր հավատքում: Հիսուս Քրիստոսը հավիտյան հավատքի զորագլուխն է և կատարողը: Երբ մտնում ենք Նրա հետ ճիշտ փոխհարաբերության մեջ՝ լիովին հանձնվելով և ապավինելով Նրան, կարող ենք վստահ լինել այն օգնության և զորության համար, որ Նա տալիս է: Ո՞րն է Աստծո հետ իմ ճիշտ փոխհարաբերությունը: Դա բացարձակ կախվածությունն է Աստծուց և հետևաբար բացարձակ անձնատուր լինելը Նրան: Առանց սրա մեզ համար չկա աստվածային զորություն: Ինքնաապավինումը ներկայացնում է մարմնավոր կյանքը:

Հավատացեք Աստծուն և վստահեք Նրան ամեն ինչում և ամեն օր: Մենք մշտապես չենք վարվում այսպես և զարմանում ենք, թե ինչու ենք թույլ, ինչու են մեր աղոթքներն անարդյունավետ, նույնիսկ երբ աղոթում ենք Աստծո կամքի համաձայն: Մի պայքարեք ձեր ուժերով և իմաստությամբ, դրանք ձեր թշնամիներն են, ուրացեք և մերժեք դրանք: Նետվեք Տեր Հիսուսի ոտքերի մոտ և սպասեք Նրան, բայց սպասեք հաստատ վստահությամբ, որ Նա ձեզ հետ է և գործում է ձեր մեջ: Երբեք, երբեք մի՛ քայլեք երևույթով՝ նույնիսկ մեկ վայկյան: Մի հիմնվեք ձեր զգացմունքների վրա, որովհետև դրանք անհուսալի են, ապավինեք միայն Աստծուն: Նա է ձեր միակ կյանքը, և սա փաստ է: Վստահեք Աստծուն, Նա չի թողել ձեզ, թող հավատքը լցնի ձեր սիրտը:

Երբ գնաք ձեր աղոթքի ներքին սենյակ, որքան էլ սառը և ավար լինի ձեր սիրտը, մի՛ փորձեք սեփական կարողությամբ ստիպել ձեզ ունենալ ճիշտ վերաբերմունք: Խոնարհվեք Աստծո առջև և ասեք Նրան, որ դուք տխուր եք, որ ձեր միակ հույսը Նա է: Վստահեք Նրան մանկական վստահությամբ, որպեսզի Նա ողորմի ձեզ, և համբերությամբ սպասեք Նրան: Այսպիսի վստահությամբ դուք ճիշտ փոխհարաբերության մեջ եք Նրա հետ. բացարձակապես կախված եք Նրանից և հանձնված եք Նրան: **Դուք չունեք ոչինչ, Նա ունի ամեն ինչ:** Հիսուս Քրիստոսի անձնազոհ սիրո նկատմամբ հավատքը միակ միջոցն է աղոթքում Աստծո հետ հաղորդակցության մեջ մտնելու համար: Սա ամեն ինչի սկիզբն է: Ձեզնից կպահանջվի անկեղծ հավատարմություն և ամբողջ սրտով զգոնության ուժերի լիարժեք գործադրում՝

նվազագույն անհավատությունը, անտարբերությունը կամ հավատորացությունը հայտնաբերելու համար: Ամեն ինչից վեր ձեզնից կպահանջվի հանձնվել անձնագրի կյանքին: Աստված իսկապես ցանկանում է տեսնել սա մեր մեջ, և Նա կգործի դա մեզ համար և մեր մեջ: Մեր աչքերը մշտապես պետք է նայեն Տեր Հիսուսին:

Սիրելի Քրիստոսի աշակերտ, հանձնվեք Հիսուսին, այս անգամ լիովին և հիմնովին: Հանձնվեք Նրա ձեռքերի մեջ: Միայն հավատացեք, որ Նա պատրաստ է ընդունելու և օգնելու ձեզ: Աստված ձեզ ասում է. «Ինչպես մաքրեցի քեզ քո բոլոր մեղքերից, այնպես էլ կազատեմ քեզ եսապաշտ կյանքից: Միայն հավատա՛մ և վստահի՛ր Ինձ և մի՛ փնտրիր հաղթանակ սեփական ուժերով: Խոնարհվի՛ր Իմ առջև և ամեն բան սպասի՛ր Ինձնից: Թող քո անձը լռի Իմ առջև, և Ես կսովորեցնեմ քեզ, թե ինչպես ապրես հոգևոր կյանքով: Մնա՛ Իմ ներկայության մեջ»:

Ինչ է նշանակում լինել Հիսուս Քրիստոսի մեջ: Ինչ է նշանակում մնալ Նրա մեջ: «Ես նոր արարած եմ, նոր էակ Քրիստոս Հիսուսում. հներն անցան, ահա, ամեն բան նոր եղավ»: Սա բառացիորեն ճշմարիտ է այն մարդու համար, որն ամբողջ սրտով հավատում է Աստծուն: Մեր ամբողջ փոխհարաբերությունը Տեր Հիսուսի հետ նոր բան պետք է լինի: Ես պետք է **հավատամ Նրա անսահման սիրուն**, որն իրականում փափագում է ունենալ սրտի հաղորդություն ինձ հետ ամեն օր և պահել ինձ Նրա ընկերակցության վայելքի մեջ: Ես պետք է **հավատամ, որ Նրա ազապե սերն ապրում է իմ մեջ**, և տամ իմ անձը՝ ծառայելու ուրիշներին Նրա խոնարհությամբ: **Ես պետք է հավատամ Նրա սիրո աստվածային զորությանը**, որը հաղթել է մեղքին և իսկապես կպահի ինձ մեղանչելուց: **Ես պետք է հավատամ Նրան՝ որպես մեծ բարեխոսի**, որն ինձ և Իր մարմնի յուրաքանչյուր անդամի կհաղորդի ուրախություն և զորություն՝ Աստծո հետ ծածուկ աղոթքում հաղորդություն ունենալու համար: Այսպես իմ աղոթքի կյանքը լիովին կդրվի Քրիստոսի և Նրա սիրո հսկողության տակ: **Առ Աստված հավատքը պետք է տիրի մեզ:** Հավատքն իր ուժը կգտնի Քրիստոսի սիրո անփոփոխ հավատարմության, այլ ոչ թե այն մտքի մեջ, թե ինչ եմ անելու կամ ինչ եմ անում Աստծո ծառայության մեջ:

Սիրելի հավատացյալ, հավատալով ձեր Աստծո քնքուշ սիրո մեծ հավատարմությանը, համարձակվեք լիովին հանձնվել և նետվել խաչի մոտ՝ Նրա ոտքերի մոտ: Միայն հավատացեք ամբողջ սրտով, որ կա ազատագրում մեղքից և եսապաշտ կյանքի գերությունից (Ա Հովհ. 1.9): **Նրա արյան և շնորհքի մեջ կա**

լիակատար ազատագրում ամեն անիրավությունից, աղոթքի կյանքում ամեն թերացումից և եսապաշտ կյանքի բոլոր դրսևորումներից: Փառք Նրա անվանը հավիտյան: Գուցե ձեր մտքում այս հարցն է. «Ինչպե՞ս կարող է դրսևորվել այս ազատագրման փորձառությունը»: Փրկությունը չի շնորհվում մեզ մաս առ մաս, ժամանակ առ ժամանակ: Այն շնորհվում է մեզ որպես Աստծո լիություն, որպես առատ շնորհք, որ պահպանվում է Տեր Հիսուսի մեջ, որպեսզի ամեն օր վայելենք այն Նրա հետ նոր հաղորդակցության մեջ: Այս ճշմարտությունը հասկանալը չափազանց կարևոր է, և այն պետք է ամրապնդվի մեր մտքում: Ոչինչ չի կարող պահպանել ձեզ անհոգությունից կամ մեղանչումից կամ հնարավոր դարձնել, որ ապրեք Հոգով կամ սիրեք անվերապահ ազապե սիրով կամ էլ ունենաք հզոր աղոթք՝ բացի **Աստծո շնորհքի ամենօրյա աշխատանքից, որը վերապրում եք մեր Տեր Հիսուսի հետ սերտ հաղորդակցության և սրտի հաղորդության մեջ:**

Հիսուսի հետ այս մտերիմ սիրառատ միությունը, Նրա հետ անձնական և անդադար փոխհարաբերությունը և Խաչյալ Քրիստոսի մեջ լիովին մտալը զորավոր կերպով կդրսևորվեն մեր կյանքում, մեր աղոթքի կյանքում, հատկապես ազապե սիրով ուրիշներին ծառայելու մեր կյանքում:

Պատրաստ եք լիովին հանձնվելու Աստծո ձեռքերի մեջ

Իմ մեջ, իմ էության մեջ որևէ բարի բան չկա՝ բացի նրանից, ինչ Աստված գործում է: Այն փաստը, որ Աստծո հանդեպ այնքան շատ անհավատարմություն կա, ապացուցում է, որ մենք դեռևս տեսնում ենք բարիք Աստծուց դուրս և վազում այդ ուղղությամբ: Օ՛, Տեր, տո՛ր մեզ հասկացողություն Քո և ինքներս մեր մասին: Աստված կյանք է և սեր և օրհնություն և զորություն և անսահման գեղեցկություն, և Աստված հաճույք է ստանում յուրաքանչյուր զավակի հետ հաղորդակցվելուց: Բայց մեկ բան խանգարում է Աստծուն՝ Նրան լիովին չհանձնվելը: Այժմ Նա գալիս և, որպես Աստված, պահանջում է դա: Նա ակնկալում է դա ձեզնից, Աստված ձեզնից պահանջում է լիովին հանձնվել Իրեն: Ի՞նչ եք դուք ասում:

Ձեր գրպանում կա գրիչ, և այդ գրիչը բացարձակապես հանձնված է գրելու աշխատանքին: Այդ գրիչը լիովին պետք է հանձնվի ձեր ձեռքին, եթե պատրաստվում եք պատշաճ գործածելու այն: Եթե մեկ ուրիշը մասամբ բռնի այն, դուք չեք կարողանա պատշաճ կերպով գրել: Հիմա դուք ակնկալում եք, որ ձեր նոր աստվածային էությամբ, որը ստացել եք վերստին ծննդի միջոցով, Աստված կարող է Իր գործն անել ամեն օր և ամեն ժամ, եթե

լիովին չեք տրվել Նրան: Չի կարող:

Ինչևէ, Աստված չի խնդրում, որ լիովին հանձնվեք Իրեն ձեր ուժերով կամ ձեր կամքի ուժով. Աստված կամենում է ներգործել դա ձեր մեջ: Միթե չենք կարդում. «Աստված է, որ ներգործում է ձեզանում կամենալն էլ, անելն էլ Իր հաճության պես» (Փիլիպ. 2.13): Դա այն է, ինչ պետք է փնտրենք. **մենք պետք է երեսնիվայր ընկնենք Աստծո առջև, մինչև որ մեր սրտերը սովորեն հավատալ, որ հավիտենական Աստված Ինքը կգա, որպեսզի շտկի այն, ինչ սխալ է, բայց առանց մեզ, առանց մեր օգնության և ջանքերի:** Սա այն է, ինչին գիտակցաբար հրաժարվում ենք հավատալուց. մենք դեռևս հավատում ենք մեր օգնությանը, մեր ջանքերին, մենք դեռևս տեսնում ենք, որ բարիք է դուրս գալիս մեր մարմնավոր էությունից՝ հին մարդուց: Հետևաբար մեր հանձնվելը երբեք լիակատար չէ, լիակատար չէ նաև առ Աստված մեր հավատքը: Եթե թույլ տանք, Աստված կգա հաղթելու չարին և մեղքին և գործելու այն, ինչ հաճելի է Իր օրհնյալ աչքում: Ներբնակ Քրիստոսն Ինքը կներգործի դա ձեր մեջ, բայց Նա սպասում է մեր համաձայնությանը և դեպի խաչը գնալու մեր պատրաստակամությանը: Դուք սովորում եք չհավատալ ձեր հին մարդուն և հրաժարվել ձեր հին էությունից: Դուք սովորում եք խաչի դերը կամ գործառույթը այս հարցում:

Այսպիսին է քրիստոնյաներից շատերի վիճակը: Շատերն ասում են. «Իմ ցանկությունը բավականաչափ ուժեղ չէ, ես պատրաստ չեմ այն ամենին, որ կարող է տեղի ունենալ, ես բավականաչափ համարձակ չեմ զգում, որպեսզի ասեմ, որ կարող եմ հաղթել ամեն ինչին»: Սիրելի՛ հավատացյալ, աղոթում եմ, որ **սովորեք ճանաչել և վստահել ձեր Աստծուն հիմա. դուք չեք հաղթում, Քրիստոսն է հաղթում:** Քրիստոս Հիսուսը, որ երկրի վրա ապրեց լիակատար անձնվեր կյանքով, տիրում է ձեզ. Նա ապրում է ձեր սրտում Իր Սուրբ Հոգով: Դուք չափազանց խանգարել եք Նրան: **Հավատացե՛ք, որ Աստված սկսել է լիակատար հանձնվելու աշխատանքը ձեր մեջ, և դուք սովորում եք չվստահել ինքներդ ձեզ և սկսում եք տեսնել եսապաշտ կյանքի լիակատար չարությունը:** Աստծո հետ առանձին շատ մնացեք: Աստված ընդունել է, որ դուք հանձնվել եք Իրեն, Նա պարտավորված է զգում հոգ տանել դրա համար և պահել դա: Կհավատամք դրան: Լիովին հանձնված լինելու կյանքն ունի դժվարություններ: Ես չեմ ժխտում դա: Այո՛, դրանք ավելի, քան դժվարություններ են. սա մի կյանք է, որ բացարձակապես անհնար է մարդկանց համար: Բայց սա մի կյանք է, որի համար մենք նախասահմանված ենք,

և Աստծո շնորհքով, Աստծո զորությամբ, մեր մեջ բնակվող Սուրբ Հոգու զորությամբ այն հնարավոր է մեզ համար, փախք Աստծուն: **Եկեք հավատանք, որ Աստված կպահպանի այն:**

Սիրելի Հիսուսի աշակերտ, խոնարհվեք Աստծո առջև և ընդունեք, որ տրտմեցրել եք Սուրբ Հոգուն ձեր կամակորությամբ, ինքնահաճեցմամբ, ինքնափառաբանմամբ, ինքնավստահությամբ և սեփական ջանքերով: Խոնարհաբար ծնկի՛ իջեք Նրա առջև այս խոստովանության ընթացքում և խնդրեք, որ Նա կոտորի ձեր սիրտը և ձեզ փոշիացնի Իր առջև: Այնուհետև խոնարհությամբ պարզապես ընդունեք Աստծո ուսմունքն այն մասին, որ ձեր մարմնում «որևէ բարի բան չի բնակվում»: Հավատացեք, որ ոչինչ չի օգնի ձեզ՝ բացի մեկ այլ Կյանքից, որ պետք է տեղ գտնի ձեր մեջ: **Սա է հանձնվելը. դուք մեկընդմիշտ պետք է ուրանաք եսապաշտ կյանքը: «Ես»- ի ուրացումը ամեն օր և ամեն վայրկյան պետք է լինի ձեր կյանքի զորությունը: Այնուհետև Քրիստոսը կգա և կտիրի ձեզ, և Նրա կյանքը կապրի ձեր մեջ:**

Չհանձնված կյանքը չի կարող նվիրաբերվել Աստծուն

Ամբողջական նվիրաբերում Աստծուն

Երբ հավատացյալն ապրում է Տիրոջը լիովին հանձնված կյանքով, նոր և առավել խոր հասկացողություն է ստանում դրա նշանակության մասին: Նա հասկանում է, որ հանձնվելը ենթադրում է ոչ այլ ինչ, քան լիովին և անմնացորդ նվիրաբերում՝ ապրելու միայն, միշտ և ամբողջովին Քրիստոս Հիսուսի համար: Ինչպես Հին Կտակարանի տաճարը նվիրաբերվեց Աստծո ծառայությանը և միայն Նրան, և բոլորը գիտեին, որ այն գոյություն ուներ միայն այդ նպատակի համար, այդպես անմնացորդ պետք է լինի մեր նվիրումը Նրան: Նվիրաբերումը սրտի գործառույթ է: Աստված շարունակ հիշեցնում էր Իսրայելին, որ փրկագնել է նրան Իր սեփականությունը լինելու համար: Տեսնե՞ք, թե ինչ է սա ենթադրում:

Նախևառաջ գոյություն ունի անձնական կապվածություն Հիսուսի հետ՝ արտահայտված Նրա հետ անձնական փոխազդեցությամբ և հաղորդակցությամբ ծածուկում, ոչ թե եկեղեցական հավաքույթներին և ծառայություններին: Մենք ամբողջությամբ մեր սիրտը նվիրաբերում ենք Հիսուսին: Սա կարևոր բնագավառներից մեկն է, որտեղ ձախողվում ենք, մենք ժամանակ չենք հատկացնում դրա կարևորությունը հասկանալու համար: **Քրիս-**

տոսը լինելու է, պետք է լինի մեր սրտի սիրելին, ցանկությունը և ուրախությունը: Նախևառաջ մենք նվիրաբերվում ենք Նրան, այնուհետև՝ Նրա ծառայությանը: Սա երկրորդ կարևոր բնագավառն է, որտեղ ձախողվում ենք հիմնականում այն պատճառով, որ չենք լսում, թե ինչ է Հոգին ասում այս կապակցությամբ: Երբ Նրան իմ նվիրաբերումը երկրորդական է, և Նրան իմ ծառայությունը՝ առաջնային, իմ նվիրաբերումը թերի է և կբերի միայն մարդկային, ոչ թե երկնային բարիք: Երանի տեսնենք այս ճշմարտությունը սրտով:

Մենք պետք է նվիրաբերվենք Հիսուսին՝ որպես մեր Ընկերոջ և Թագավորի, որպես մեր Փրկչի և Աստծո: «Ով Իմ պատվիրաններն ունի և նրանց պահում է, նա է Ինձ սիրողը, և Ինձ սիրողն Իմ Հորից կսիրվի, և Ես կսիրեմ նրան և Ինձ կհայտնեմ նրան» (Հովհ. 14.21): «Դուք Իմ բարեկամներն եք, եթե անեք, ինչ որ Ես պատվիրում եմ ձեզ» (Հովհ. 15.14): **Լիակատար նվիրաբերման կյանքը բխում է սիրո կյանքից:** Նա Ինքը պետք է լինի իմ ամբողջ կյանքի կենտրոնը:

Նվիրաբերումը լիակատար դարձնելու համար *նաև պետք է լինի բաժանում մեղքից և աշխարհից:* «Պիղծ բաների մի՛ դիպեք»: Մեղքի, ցանկացած մեղքի նկատմամբ պատշաճ արձագանքը պետք է ներառի (1) խոստովանություն և ապաշխարություն, (2) ատել ու դատապարտել յուրաքանչյուր մեղք, որից ես տեղյակ եմ, և դատապարտել եսապաշտ կյանքը կամ մարմինը: Ես չեմ կարող աճել Աստծուն սիրելու մեջ, եթե չեմ ապաշխարում Նրա հանդեպ իմ անհավատարիմ սիրո համար (երբ սեր եմ ցուցաբերել ինքս իմ, աշխարհի նկատմամբ): «Եթե մեկը իր անձը մաքրի այդպիսիներից, նա պատվական անոթ կլինի՝ սրբված և իր Տիրոջն օգտակար՝ ամեն բարի գործերի համար պատրաստված» (Բ Տիմ. 2.21), և «...մեր անձերը սրբենք հոգու և մարմնի ամեն պղծությունից, սրբությունը կատարենք Աստծո ահով» (Բ Կորնթ. 7.1): Մի՛ հարցրեք, թե աշխարհից որքան մաս կարող եք պահել և չկորչել: Քրիստոնյան կամովին պետք է հրաժարվի նույնիսկ նրանից, ինչ օրինավոր է, որպեսզի կարողանա լիովին ապրել իր Աստծո համար: «Հետևաբար, եթե կերակուրն իմ եղբորը զգայթակղեցնում է, ես հավիտյան միս չեմ ուտի, որ իմ եղբորը չզգայթակղեցնեմ» (Ա Կորնթ. 8.13): «Ամեն բան օրինավոր է ինձ, բայց ամեն բան օգուտ չէ. ամեն բան օրինավոր է ինձ, բայց ամեն բան շինություն չի տալիս» (Ա Կորնթ. 10.23): «Կամ ի՞նչ համաձայնություն ունի Աստծո տաճարը կուռքերի հետ. որովհետև դուք կենդանի Աստծո տաճարն եք, ինչպես Աստված ասաց... «Նրա համար նրանց մի-

ջից դժուրս գնացեք և բաժանվե՛ք,- ասում է Տերը,- և պիղծ բաների մի դիպեք: Եվ Ես կընդունեմ ձեզ, և Ես ձեզ հայր կլինեմ, և դուք Ինձ որդիներ և աղջիկներ կլինեք,- ասում է Ամենակարող Տերը»» (Բ Կորնթ. 6.16- 18):

Ժուժկալությունը նույնիսկ օրինավոր բաներից հաճախ էական է Տեր Հիսուսին լիովին հետևելու համար: Ապրե՛ք որպես մեկը, ով իսկապես առանձնացված է Աստծո համար և փափագում է ապրել Նրա սրբությամբ: Նա, ով հրաժարվում է ամեն ինչից, ով ամեն բան վնաս է համարում հանուն Հիսուսի, նույնիսկ այս կյանքում կստանա հարյուրապատիկը: «...Ճշմարիտ ասում եմ ձեզ, թե ոչ ոք չկա, որ թողել է տուն կամ ծնողներ կամ եղբայրներ կամ կին կամ որդիներ Աստծո արքայության համար, որ բազմապատիկ չառնի այս ժամանակում և այն գալու աշխարհում հավիտենական կյանքը» (Ղուկ. 18.29, 30): «Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ. եթե ցորենի հատը հողի մեջ չընկնի և մեռնի, ինքը մենակ կմնա, բայց եթե մեռնի, շատ պտուղ կբերի: Իր անձը սիրողը կկորցնի նրան, և իր անձն ատողը այս աշխարհում, հավիտենական կյանքի մեջ կպահի նրան» (Հովհ. 12.24, 25): «Եվ հենց ամեն բաներ էլ վնաս եմ համարում իմ Տեր Հիսուս Քրիստոսի գերազանց գիտության համար, որի պատճառով ամեն բանից զրկվեցի և աղբ եմ համարում, որ Քրիստոսին շահեմ» (Փիլիպ. 3.8):

Լիակատար նվիրաբերման նպատակն է դարձնել մեզ պիտանի և համապատասխան Աստծո և Նրա ծառայության համար: Նվազագույն կասկած չունենաք, թե արդյոք Աստված ձեր կարիքն ունի և կդարձնի ձեզ մեծ օրհնություն: Միայն թե անվերապահորեն հանձվե՛ք Նա ձեռքերի մեջ: Ներկայացրե՛ք ձեզ Նրան, որպեսզի Նա կարողանա լցնել ձեզ Իր օրհնությամբ, Իր սիրով, Իր Հոգով, և դուք լինե՛ք օրհնություն:

Շնորհք է անհրաժեշտ ամբողջական նվիրաբերման կյանքով ապրելու համար: «Բայց Աստված կարող է ամեն շնորհքներն ավելացնել ձեզանում, որ ամեն բանի մեջ ամեն ժամանակ ամեն բավականություն ունենալով ամեն բարի գործի համար ավելանաք» (Բ Կորնթ. 9.8): Նվիրաբերումը հավատքի աշխատանք է՝ հավատքի փառավոր կյանքի մի մասը: Թող ձեր հավատքը հոչակի. «Ոչ թե ես, այլ Աստծո շնորհքը, որ իմ մեջ է, կանի դա»: «Աստված է, որ ներգործում է ձեզանում կամենալն էլ, անելն էլ Իր հաճության պես» (Փիլիպ. 2.13): Ես ապրում եմ միայն հավատքով Նրա հանդեպ, ով ներգործում է իմ մեջ կամենալն էլ, անելն էլ: «...ես Քրիստոսի հետ խաչված եմ: Եվ կենդանի եմ, ոչ թե այլևս ես, այլ Քրիս-

տոսն է կենդանի ինձանում, և ինչ որ հիմա կենդանի եմ մարմնով, Աստծո Որդու հավատքով եմ կենդանի, որ ինձ սիրեց և Իր անձը ինձ համար մատնեց» (Գաղ. 2.19, 20):

Ամբողջական նվիրաբերումը ներառում է իմ սիրտը, իմ կյանքը և իմ ունեցվածքն ԱՄԲՈՂԶՈՒԹՅԱՄԲ Հիսուսին՝ իմ Տիրոջը նվիրաբերելը: Արդյո՞ք ձգտում եմ սրան: Եթե ես Հիսուսի հետևորդ եմ, ինչի՞ եմ ձգտում կյանքում: Ինչպե՞ս եմ ձգտում: «Արդ այսպես էլ ձեզնից ամեն մեկը, որ իր բոլոր ինչքից չհրաժարվի, չի կարող Ինձ աշակերտ լինել» (Ղուկ. 14.33): «Եվ հենց ամեն բաներ էլ վնաս եմ համրում իմ Տեր Հիսուս Քրիստոսի գերազանց գիտության համար» (Փիլիպ. 3.8): Լսել էք այն կոչը, որ նվիրաբերեք ձեր անձը՝ լինելու Հիսուսի աշակերտը և ապրելու ինչպես Հիսուսի աշակերտը:

Լիակատար նվիրաբերումը նպատակ ունի, որ մեզ համապատասխան դարձնի Աստծո բնակության և օգտակար՝ Նրա ծառայության համար: «Եթե մեկը իր անձը մաքրի այդպիսիներից, նա պատվական անոթ կլինի՝ սրբված և իր Տիրոջն օգտակար՝ ամեն բարի գործերի համար պատրաստված» (Բ Տիմ. 2.21):

Աշակերտություն և նվիրաբերում

Եկեք ավելի մոտենանք Աստծո սրտին, որպեսզի կարողանանք լսել Նրա սրտի փափագը. «Եղի՛ր Իմ աշակերտը» և «Գնա՛... աշակերտներ պատրաստիր»: Աստվածաշնչում աշակերտությունն ընդգծվում է երկու ոլորտում՝ կապված Մեծ հանձնարարականի հետ և սրբության հետ: «...Գնացե՛ք ամբողջ աշխարհը, ավետարանը քարոզե՛ք...» (Մարկ. 16.15), «Ուրեմն գնացե՛ք, բոլոր ազգերը աշակերտե՛ք...» (Մատթ. 28.19): Աշակերտությունն ընդգրկված է Մեծ Հանձնարարականի մեջ: Արդյո՞ք ես լսել եմ աշակերտ լինելու կոչը: Լսել եմ սա Աստծո սրտից: Միայն ճշմարիտ աշակերտը, որ լիովին նվիրված է Տիրոջը, կարող է աշակերտ «պատրաստել»: «Արդ այսպես էլ ձեզնից ամեն մեկը, որ իր բոլոր ինչքից չհրաժարվի, չի կարող Ինձ աշակերտ լինել» (Ղուկ. 14.33): Մենք չափազանց զբաղված ենք մեր ծառայությունները կառուցելով և Աստծուն ու մարդկանց ապացուցելով, թե ինչի ենք ընդունակ:

Ինչ է նվիրաբերումը: Աստվածաշնչյան տեսանկյունից նվիրաբերված նշանակում է հատկացված, նվիրված, պատկանող և բացառիկ կերպով գործածվող: Աստված ցանկանում է իմ նվիրվածությունը և իմ սրտի բացառիկ գործածումը: Ես կանչված եմ ապրելու այն կյանքով, որ Քրիստոսն ապրեց: Համոզված եմ սրանում: Արդյո՞ք իմ կյանքն ապացուցում է սա: **Ինչն է, որ պետք է հասկանամ: Ես կանչված եմ լիովին պատկանելու Աստծուն**

և ապրելու Հիսուսի պես: Ինչ է նշանակում լիովին: Ես ինձ չեմ պտկանում. Քրիստոսը գնել է ինձ Իր արյունով, ես Նրանն եմ, ես չունեմ իրավունք որևէ ձևով գործածելու իմ կյանքը:

Սիրելի աշակերտ, ինչ է սա նշանակում ձեզ համար: Ես չունեմ իրավունք անդելու կամ պաշտպանելու. ես ինձ չեմ պատկանում, իմ կյանքն իմը չէ:

Մեր ողբերգությունը և թշվառությունը հետևանք են Աստծո հետ հազվադեպ մենակ մնալու, աղոթքում Աստծո ներկայության մեջ չլինելու, Աստծո հանդեպ մեր անհավատարիմ սիրո հարցում անտարբեր լինելու, մեր ամենօրյա մեղքերը չխոստովանելու և չապաշխարելու, մեր մեղքերը և մեր եսապաշտ կյանքը չդատապարտելու և մեր փոխհարաբերություններում ազապես սիրով չապրելու: Ես չեմ կարող աճել Աստծուն սիրելու մեջ, եթե չեմ ապաշխարում իմ մեղքերից, որոնք Նրա հանդեպ իմ անհավատարիմ սիրո ապացույցն են: Թերի նվիրաբերումը հանգեցնում է թերի աշակերտության:

Ինչո՞ւ է Աստված ցանկանում, որ իմ ամբողջ կյանքը նվիրաբերեմ Իրեն: **Ո՞րն է Նրա նպատակը: Որպեսզի ունենա ինձ՝ միայն Իր բացառիկ գործածության համար, որպեսզի լցնի ինձ միայն Իր կյանքով՝ Իր սիրով, Իր խոնարհությամբ և Իր սրբությամբ:** Որպես Նրա աշակերտ կամ հետևորդ՝ ես լիովին և հիմնովին և հավիտյան պատկանում եմ Նրան, ոչ թե ինձ: Արդյո՞ք համարում եմ, որ, որպես Աստծո հանդեպ իմ սիրո արտահայտություն, լիովին պատկանում եմ Նրան՝ ամբողջովին նվիրվելով Նրա բացառիկ գործածությանը: Արդյո՞ք համոզված եմ, որ այս բացառիկ պատկանելությունը իմ խիստ կարիքն է: Եթե ոչ, ես չգիտեմ, թե որքանով է խաչը կրելն առնչվում ինձ հետ: Ես պետք է լինեմ Աստծո ներկայության մեջ և մտորեմ Նրա հետ, թե ինչ է նշանակում լիովին նմանվել Հիսուսին:

Հիսուսին լիովին հանձնվելը և ամբողջովին նվիրաբերվելը հանգեցնում են Նրան կերպարանակից լինելուն: «...առաջուց էլ սահմանեց Իր Որդու պատկերին կերպարանակից լինելու...» (Հռոմ. 8.29), «...Ես ձեզ օրինակ տվեցի, որ ինչպես Ես ձեզ արի, դուք էլ անեք» (Հովհ. 13.15): Հետևաբար մնացե՞ք Քրիստոսի մեջ: Ես երկու համոզմունքի կարիք ունեմ. (1) հստակ հասկացողություն, որ ես իսկապես կանչված եմ կերպարանակից լինելու Հիսուսին, և (2) հաստատ վստահություն, որ դա հնարավոր է ինձ համար:

ԱՍՏՎԱԾ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է, ՈՐ ԵՍ ԼԻՆԵՄ ԱՇԱԿԵՐՏ, ՈՉ ԹԵ ՊԱՐԶԱՊԵՍ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ: ՆԱ ՑԱՆԿԱՆՈՒՄ Է, ՈՐ ԵՍ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ ՊԱՏՐԱՍԵՄ:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ Աստծո հետ

1. Ի՞նչ է նշանակում կանչված լինել լիովին ապրելու Հիսուսի պես: Պատմե՛ք դա Աստծուն:
2. Ձեզ համար ի՞նչ է նշանակում *«տրվել խաչին, հրաժարվել ամեն ինչից, ուրանալ «ես»-ը և կրել Խաչը»*:
3. Ի՞նչ է նշանակում տալ սիրտը Հիսուսին:
4. Աղոթե՛մ եք, որ Հոգին հանդիմանի ձեզ այն մեղքերի համար, որոնք ներկայացնում են ձեր անհավատարիմ սերը Հիսուսի հանդեպ: Եթե անում եք այս աղոթքը, պատմե՛ք Աստծուն, թե ինչ զգացողություն է դա առաջացնում: Հարցրե՛ք Աստծուն, թե ինչի կարիք ունեք այս բնագավառում:
5. Կա՞մ սերտ փոխհարաբերություն Քրիստոսի մեջ մնալու և հնազանդության խոստում տալու միջև:
6. Ինչպե՞ս կբացատրեք հետևյալ պնդումը Նրան, ով ցանկանում է լինել Հիսուսի աշակերտը: «Լիարժեք նվիրաբերումը նպատակ ունի դարձնելու մեզ պիտանի և համապատասխան Աստծո սուրբ բնակության և Նրա ծառայության համար»:
7. «Ես կանչված եմ լիովին պատկանելու Աստծուն և լիովին ապրելու Հիսուսի նման»: Ի՞նչ նկատի ունեք լիովին ասելով: Ի՞նչ է նշանակում գործնականում պատկանել Աստծուն:

Գլուխ 12. Ինձնից ոչինչ

Այս գլուխն անդրադառնում է հինգ հիմնական թեմաների՝ «ինձնից ոչինչ» պնդման նշանակությունը, ինչո՞ւ ինձնից ոչինչ, հուսահատվել ինքս ինձ սեփական ջանքերից ազատելուց, լիակատար կախվածություն Աստծուց, և Աստված կհաստատի մեզ Քրիստոսի մեջ:

Հիսուան ասաց. «Ես ինձնից չեմ կարող ոչինչ անել...» (Հովհ. 5.30):

Հին կտակարանում իսրայելցիները համարում էին, որ կարող են պահել Աստծո ուխտը: Իրենց ուժերով և իմաստությամբ, «ես»- ի ուժով նրանք պատրաստ էին կատարելու ամբողջ աշխատանքը և ապրելու Աստծուն ծառայելու կյանքով: Նրանք այնքան էլ չէին զգում իրենց մեղավորությունը կամ Աստծո սրբությունը: Կատարյալ ինքնավստահությամբ նրանք համարում էին, որ կարող են պահել Աստծո ուխտը: Նրանց լիակատար ծախողման արմատը սեփական ջանքերով գործելու ոգին էր, «ես»- ին գերի լինելու ոգին (տես գլուխ 6): «Ես»- ի ոգին ներկա է բոլոր մարդկանց մեջ, այդ թվում՝ հավատացյալների: Ինքնավստահության և ինքնապավիհության այս ոգին մարմնի կյանքն է, այն գալիս է անմիջապես սատանայից, որպեսզի խանգարի Աստծուն և Նրա աշխատանքին, որ կատարվում է մեր մեջ: Ամեն մարդ ծնվում է այս ոգով: Այն ներկայացնում է մի բան, որ արմատապես սխալ է մարդու, ինչպես նաև հավատացյալի մեջ, մի բան, որի չարությունից շատ քրիստոնյաներ անտեղյակ են, մի բան, որը կարող է փոխվել միայն Քրիստոսի՝ մեր Փրկչի միջոցով:

Հին կտակարանում իսրայելցիները մտածում էին, որ կարևորը Աստծո պատվիրանները լսելն է և իմանալը, և իրենք հաստատ և բնականաբար կհնազանդվեն և կհետևեն այդ պատվիրաններին: Շատերս այդպես ենք ապրում: Ինչպես իսրայելցիները, շատերս չգիտենք, որ միայն **աստվածային ներկայությունը և սուրբ վախը, մեզ խոնարհեցնելով, կարող են հաղթել մեղքի և մարմնի իշխանությանը:** Աստծո անմիջական ներկայությունը և զորությունը, մեզ խոնարհեցնելով, կարող են տալ հնազանդվելու զորություն: Հոգևոր կյանքում բոլոր ծախողումները պայմանավորված են մեր գաղտնի ինքնափառաբանմամբ և ինքներս մեր, սեփական ջանքերի նկատմամբ գաղտնի վստահությամբ: Մենք պետք է սովորենք Քրիստոսի «Ես Ինձնից ոչինչ չեմ կարող անել» խոսքերի նշանակությունը և ապրենք այդ կյանքով:

Ինչո՞ւ ինձնից ոչինչ

Ես կրկին տալիս եմ սիրտ քննող այս հարցը. պատրաստ ենք հրաժարվելու ամեն չար սովորությունից, մեր հպարտությունից և ինքնագովասանքից, ինքնակամությունից, աշխարհի ոգուց և մեր կյանքը լիովին հանձնելու Հիսուսին և նվիրաբերվելու Աստծո բացառիկ գործածությանը: Գուցե մենք ցանկանում ենք դա, բայց արդյո՞ք պատրաստ ենք: *Գուցե պատրաստվե՞լ եմք, բայց արդյո՞ք պատրաստ ենք գործողության: Եթե ոչ, ապա ոչինչ իրական չէ, այլ միայն երևակայություն է:* Քրիստոսը շատ խոսեց անձ-

նուրացման մասին: «**Ես**»- ը (մարմինը) սիրո և անհնազանդության բացակայության արմատն է: Մեր Տերն Իր աշակերտներին կանչեց ուրանալու իրենց անձը և վերցնելու խաչը, թողնելու բոլորին, ատելու և կորցնելու սեփական կյանքը, խոնարհվելու և դառնալու բոլորի ծառա: Ինչո՞ւ: Որովհետև «**Ես**»- ը՝ ներառյալ կամակորությունը, ինքնավստահությունը, ինքնահաճեցումը, շահասիրությունը, բոլոր մեղքերի աղբյուրն է: Երբ կամակորությանը թույլ է տրվում հաստատել իրեն և պարտադրել իրենը, և մենք թույլ ենք տալիս, որ նրա ցանկությունն իրականանա, մենք մեղավոր ենք Աստծո պատվիրանին չհնազանդվելու համար: Մենք Հոգու հայտնության կարիքն ունենք, որպեսզի այս ճշմարտության գիտությունը մտնի մեր սիրտ:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ Աստծո հետ

1. Ինչպե՞ս են ինքնավստահությունը և ինքնապավինումը ներկայացնում մարմնի կյանքը:
2. Ինչո՞ւ մեր Տերը Իր աշակերտներին կոչ արեց ուրանալու իրենց անձը, վերցնելու խաչը, թողնելու բոլորին, ատելու և կորցնելու սեփական կյանքը, խոնարհվելու և դառնալու բոլորի ծառա:
3. Ի՞նչ կանեինք, եթե մեր կամակորությանը թույլ տրվեր հաստատել իրեն և պարտադրել իրենը:

Մենք չենք կարող անհնազանդությունից անցնել հնազանդության: Անհրաժեշտ է հետադարձ, շրջադարձ, որոշում կամ ճգնաժամ: Այդուհանդերձ, հնազանդության կարելի է հասնել միայն սխալը հստակ հասկանալով և այն ամոթով ու տրտմությամբ խոստովանելով: **Մեր եսապաշտ կյանքը՝ հիմ մարդը, անհուսորեն և լիովին չար է**: Մեզ խիստ անհրաժեշտ են Հոգու հայտնությունը և հանդիմանությունը մեր եսապաշտ կյանքի կամ մարմնի մասին: Ուշադրություն դարձրեք. «...ինձանում (այսինքն՝ իմ մարմնում) մի բարի բան չի բնակվում. ...» (Հռոմ. 7.18), «Որովհետև մարմինը ցանկանում է հոգուն հակառակ, և հոգին՝ մարմնին հակառակ, և սրանք իրար հակառակ են...» (Գաղ. 5.17), «Որովհետև մարմնի խորհուրդը Աստծո դեմ թշնամություն է, որովհետև Աստծո օրենքին չի հնազանդվում և չի էլ կարող» (Հռոմ. 8.7): Հիմարություն է շարունակել ապրել մարմնով, իմ ժառանգած մարդկային էությանմբ և ապրել ինքս ինձ համար: Սա իմ մեղքն է, սա իմ մեղավոր և չար վարքագիծն է: Ապրել Աստծո համար Քրիստոսի մեջ իմ երանությունն է: Ուրանալ, ատել, թող-

նել, կորցնել եսապաշտ կյանքը. սա է հավատքի կյանքի գաղտնիքը: Աստծո ճշմարտությունը հոչակում է. «Եվ կենդանի եմ, ոչ թե այլևս ես, այլ Քրիստոսն է կենդանի ինձանում» (Գաղ. 2.20), «ՈՉ թե ես, այլ Աստծո շնորհքը, որ ինձ հետ է»: Չկա ուրիշ ճանապարհ դեպի ճշմարիտ կյանք, դեպի նոր էությանը կյանք՝ բացի այն ճանապարհից, որով անցավ մեր Տերը մեզնից առաջ՝ մահվան ճանապարհը: Առանց դրա հնարավոր չէ իսկապես մնալ Քրիստոսի մեջ: Սա է Քրիստոսի աշակերտի ճանապարհը:

Քրիստոնեական կյանքի սկզբում հավատացյալը լցվում է իր ներման համար ուրախությամբ, նա մղում է զգում ապրելու Քրիստոսի համար և գործադրելու իր լավագույն ջանքերը: Նա վստահ է, որ Աստծո օգնությամբ կկարողանա ապրել Աստծո համար: Այս մտադրությունն այնքան փառահեղ է, որ նրան հաճույք և ուրախություն է պատճառում, և նա չի կասկածում, որ դա սխալ է: Նա դեռևս անտեղյակ է Աստծո դեմ մարմնի սոսկալի թշնամությունից: Նա չգիտի, որ իր եսապաշտ կյանքը լիովին կիրաժարվի Աստծոօրենքին ենթարկվելուց: Նա դեռևս չգիտի, որ բացի մահից՝ ոչինչ բավարար կամ բավական չի լինի այս չար մարմնի հարցը լուծելու համար, եթե Աստծո կյանքը զորությամբ պետք է ապրի իր մեջ: Հիսուսը սիրով ցույց է տալիս Նրան Իր խաչը և ասում, որ այն ոչ միայն Իր մահվան վայրն է նրա մեղքերի և նրա ներման համար, այլև այն վայրը, որտեղ նա առավել խորությամբ կվերապրի խաչը, կմահանա «ես»- ին, որպեսզի վերապրի նոր կյանքը: Հիսուսը նրան հարցնում է, թե արդյոք իսկապես պատրաստ է խմելու Իր բաժակից, այսինքն՝ խաչվելու և մահանալու Իր հետ: Նա սովորեցնում է նրան, որ Իրենում ակամայից նա արդեն խաչված և մահացած է: Նա նրան հայտնում է, որ դարձի գալիս նա դարձավ Իր մահվանը մասնակից: Հիսուսը ստիպում է նրան առերեսվել կյանքի մեծագույն որոշմանը. հայտնել լիարժեք համաձայնություն, գիտակցված պատրաստակամություն՝ մահանալու Քրիստոսի հետ և ամեն օր ապրելու խաչյալ կյանքով՝ նոր կյանքով, Աստծո փառքի համար:

Հիսուսի այս պահանջը չափազանց լուրջ է: Շատ հավատացյալներ փախչում են սրանից: Նրանք իրականում չեն հասկանում: Նրանք այնպես են սովորել թույլ հոգևոր կյանքին՝ մշտապես սայթաքելով, որ իրականում որևէ ցանկություն չունեն ազատագրման: Այնպիսի բաներ, ինչպիսիք են սրբությունը, Հիսուսին լիովին կերպարանակից լինելը, Աստծո սիրո հետ անխախտ հաղորդակցությունը, գոլորշու պես անհետանում են

նրանց կյանքից՝ առանց նրանց վրա որևէ ազդեցություն թողնելու: Լիակատար անձնատուր լինելու և Աստծուն պարզապես վստահելու կյանքում մեր մեծագույն թշնամին «ես»- ն է: Մեր կյանքի դառը փորձառություններն ապացուցում են սա: «Ես»- ը հրաժարվում է Քրիստոսի մեջ մնալուց, հրաժարվում է իր կամքը թողնելուց և խանգարում է Աստծո աշխատանքին: «Ես»- ի այս կյանքը՝ իր բոլոր ցանկություններով և գործունեությամբ, պետք է փոխարինվի Քրիստոսի կյանքով: Հիսուսի խաչն այն տեղն է, որտեղ միանում ենք Հիսուսին, դառնում մեկ Նրա հետ Նրա մահվամբ և, հետևաբար, մեկ Նրա հետ Նրա հարության կյանքով: Քրիստոսի հետ այս միությունը բերում է ազատագրում երկու բանից՝ մեղքերից և «ես»- ից: Մենք պետք է հավատանք երկուսին էլ և ընդունենք երկուսն էլ Քրիստոսից: Ես երկուսի կարիքն էլ ունեմ, որպեսզի կենդանի լինեմ Աստծուն, ապրեմ նոր կյանքը Նրա հարության զորությամբ:

Հիսուսը գալիս է տալու այս հարցը. «Պատրամստ ես «ես»- դ մահվան մատնելու»: Հիսուսը շարունակում է. «Դու ինքդ՝ ծնված Աստծուց, արդեն Իմ մեջ ես. մահացած՝ մեղքին և կենդանի՝ Աստծուն: Բայց հիմա պատրամստ ես այս մահվան զորությամբ քո անդամները սպանելու, «ես»- դ լիովին մատնելու խաչին՝ մահանալու, մնալու այնտեղ, մինչև որ այն լիովին կործանվի»: Պատրամստ ես ասելու քո հին մարդուն՝ քո ժառանգած մարդկային էությանը, որ նա այլևս խոսք չունի ասելու, որ նրան թույլ չի տրվի ունենալ որևէ միտք, նույնիսկ բնական մտքեր: Պատրամստ ես ասելու, որ քո հին մարդուն թույլ չի տրվի ունենալ որևէ զգացմունք՝ նույնիսկ գոհացուցիչ, որևէ ցանկություն կամ աշխատանք՝ նույնիսկ ճիշտ: Պատրամստ ես և հոժար:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ Աստծո հետ

1. Մենք չենք կարող անհնազանդությունից անցնել հնազանդության: Ինչո՞ւ: Ի՞նչ է անհրաժեշտ:
2. Լիովին հանձնվելու և Աստծուն պարզ սրտով վստահելու կյանքում ո՞րն է մեր մեծագույն թշնամին: Ինչո՞ւ:
3. Հոժարակամ եք ասելու, որ ձեր հին մարդուն չի թույլատրվի ունենալ որևէ զգացմունք՝ նույնիսկ գոհացուցիչ, որևէ ցանկություն կամ աշխատանք՝ նույնիսկ ճիշտ: Հայտնե՞ք ձեր պատասխանն Աստծուն: Ի՞նչ եք զգում: Թ՞ույլ տվեք, որ Աստված ճանաչի ձեզ:

Մահ «ես»- ին: Արդյո՞ք սա այն է, ինչ Աստված պահանջում է:

Այո՛: Սա մի աշխատանք չէ, որ հավատացյալը կարող է անել զուտ այն պատճառով, որ ցանկանում է: Ո՛չ, նվիրաբերման գոհասեղան տանող ճանապարհին անցնում է միայն մահվան միջով: Երբ հանձնվում ենք, մեր էության բոլոր ուժերը, յուրաքանչյուր տաղանդը, պարզևը, ունեցվածքը պետք է բաժանվեն մեղքի և «ես»- ի իշխանությունից և դրվեն գոհասեղանին, որպեսզի այրվեն Աստծո սուրբ կրակով: «Ես»- ը սպանելը կամ «ես»- ին մահանալը կարող է արձակել Աստծո հրաշալի ուժերը մեր մեջ, որպեսզի լիովին հանձնենք մեր տաղանդները՝ սրբացվելու և գործածվելու համար: Երբ Քրիստոսի կյանքին թույլ տրվի լիովին տիրել մեզ, «ես»- ը մահվան դատավճռով Հոգու միջոցով ամբողջովին կարող է պահվել խաչին՝ նույնիսկ մեկ վայրկյան չունենալով իշխանություն կամ վերահսկողություն մեզ վրա: Հիսուս Քրիստոսը դառնում է մեր երկրորդ «ես»- ը: Բայց «ես»- **ը սպանելը մեկանգամյա փորձառություն չէ, այն կյանք է, որին պետք է հնազանդվեմ և որով պետք է ապրեմ օրեցօր, վայրկյան առ վայրկյան:**

Սիրելի՛ հավատացյալ, իսկապես և լիովին մնացե՛ք Խաչյալ Քրիստոսի մեջ և իսկապես պատրաստվե՛ք հավիտյան հետևում թողնելու «ես»- ին: Պատրաստ և հոժար եղե՛ք թույլ չտալու, որ «ես»- ը (բամբասանք, նախանձ, կախարդություն, ատելություն, քննադատություն և դատապարտություն, անտարբեր և սիրուց զուրկ վերաբերմունք և դրսևորումներ, կոպտություն, բիրտ խոսքեր, անընդունելի, եսասիրական արարքներ և այլն) նույնիսկ մեկ վայրկյան որևէ ասելիք ունենա ձեր ներսի կյանքում: Հիսուսը պատրաստ է հսկողություն ստանձնելու ձեր նկատմամբ, դառնալու ձեր կյանքը ձեր մեջ՝ ներշնչելով ձեր մտքերը, զգացմունքները և գործողություններն ամեն բանում, հատկապես ձեր փոխհարաբերություններում: Նա կլինի ձեր կյանքը հազարավոր բաներում, որոնք կազմում են ձեր կյանքը: Սա անելու համար Նա ընդամենը մեկ բան է խնդրում՝ թողնել «ես»- ը և նրա կյանքը: Հնազանդվելով «չմեղանչելու» հրամանին՝ մնացե՛ք Քրիստոսի մեջ և Նրա կյանքի մեջ, և Քրիստոսը կլինի ձեր կյանքը՝ փոխարինելով մարմնի կյանքին: Նրա սուրբ ներկայության գորությունը կվռնդի մեղքի հին կյանքին, բայց ես պետք է հավատամ սրան ամբողջ սրտով: Հավատացե՛ք և գիտակցե՛ք, որ թեև «ես»- ը մահացած չէ, **դուք իսկապես մահացած եք «ես»- ին:** «Ես»- ը դեռևս ուժեղ է և կենդանի, բայց չունի իշխանություն ձեզ վրա: Քրիստոսն ազատել է ձեզ այդ իշխանությունից: Հավատացե՛ք և նորոգե՛ք ձեր հավատն ամեն օր, դուք և ձեր նոր էությունը, ձեր նոր մարդը իսկապես մահացած

եք մեղքին և կենդանի եք Աստծուն: **Հավատացե՛ք, որ ձեր մահը Քրիստոսի մեջ լիովին ազատել է ձեզ «ես»- ի վերահսկողությունից:** Այն չունի իշխանություն ձեզ վրա՝ բացառությամբ այն դեպքերի, երբ համաձայնեք հանձնվել նրա իշխանությանը ձեր տգիտությամբ կամ անզգուշությամբ կամ անհավատությամբ:

Եկե՛ք և հավատքով ընդունե՛ք ձեր փառահեղ դիրքը և կյանքը, որ ունեք Քրիստոսի մեջ: Դրե՛ք ձեր ոտքը ձեր և Աստծո թշնամու՝ մարմնի պարանոցին: Քաջացե՛ք, միայն հավատացե՛ք և վստահե՛ք: **Վստահե՛ք Խաչյալ Քրիստոսին, որ ձեր «ես»- ը պահի խաչին և փոխարենը ձեր մեջ լցնի Իր օրհնյալ հարության կյանքը:** Այժմ դուք պատրաստ եք մնալու Հարուցյալ Քրիստոսի մեջ: Այս հավատքով մնացե՛ք Քրիստոսի մեջ և ոչ թե «ես»- ի:

Այս հավատքով կառչե՛ք Քրիստոսից, հանձնվե՛ք Նրան, Նրա խաչին ամեն օր, վստահե՛ք Նրան և ապավինե՛ք Նրան, հուսացե՛ք Նրան: Ահա հավատքի ձեր ամենօրյա աշխատանքը. ամեն օր նորոգե՛ք ձեր նվիրաբերումը խաչին: Հանձնվել Հիսուսին նշանակում է հանձնվել Նրա խաչին: Ամեն օր ընդունե՛ք ձեր կյանքի դիրքը և հավատացե՛ք դրան. **Քրիստոսի մեջ՝ խաչի վրա Նրա հետ միության մեջ, դուք դարձել եք հաղթող:** Երբեք մի՛ թերագնահատեք ձեր թշնամուն՝ ձեր «ես»- ին, նա չափազանց ուժեղ է և խորամանկ, ամեն օր սուրբ վախով նայե՛ք նրան, որովհետև նա մշտապես պայքարում է, որ ազատվի խաչից: Նա մշտապես ձգտում է հիմարացնելու ձեզ, որ մի փոքր ազատություն տաք իրեն՝ Քրիստոսին ծառայելու համար: Նա պատրաստ է խաբելու ձեզ, որ հիմա պատրաստ և հոժար է ծառայելու Քրիստոսին: Մերժե՛ք այս մտքերը, փախե՛ք այս խաբերա մտքերից և թաքնվե՛ք Քրիստոսի մեջ, միայն Նրա մեջ եք դուք ապահով: Մնացե՛ք Քրիստոսի մեջ այսպես, Նա խոստացել է մնալ ձեր մեջ: Երբ մնաք, Նա կսովորեցնի ձեզ լինել խոնարի և ուշադիր: Նա կսովորեցնի ձեզ լինել երջանիկ և վստահող: Բերե՛ք Քրիստոսին ձեր կյանքի ամեն հետաքրքրությունը, ամեն պարզևր, ձեր էության զորությունը, ձեր բոլոր անդադար մտքերը, կամքը և զգացմունքները, այն ամենը, ինչը կազմում է ձեր կյանքը: Վստահե՛ք Նրան, որ գրավի այն տեղը, որ մի ժամանակ հեշտությամբ և բնական կերպով զբաղեցնում էր «ես»- ը: Քրիստոսը կտիրի ձեզ և կփոխարինի ձեր եսապաշտ կյանքին, Նա կապրի ձեր մեջ: Սա պետք է լինի մեր ամենօրյա փորձառությունը, եթե ոչ, կանհետանա ինչպես գոլորշի: Սա մեր ամենօրյա կարիքն է:

Քրիստոնյա հավատացյալի համար վտանգավոր է Քրիստոսի օգնությամբ եսապաշտ կյանքի (մարմնի) ուժով սրբացում և սրբություն փնտրելը: **Միայն Աստված է սուրբ: Մենք պետք է**

փնտրենք սրբություն միայն Քրիստոսի մեջ և ընդունենք դա Նրանից միայն հավատքով: Սրբության ձգտելու երկու ճանապարհ կա: Մեկը մարմնավոր ճանապարհն է, որում գործադրում ենք մեր լավագույն ջանքերն ու որոշումները՝ աղոթելով և վստահելով Քրիստոսին, որ օգնի մեզ այդ գործում: Երկրորդը հոգևոր ճանապարհն է, որում **մեր միակ աշխատանքը Քրիստոսին ամեն օր ընդունելն է ինչպես մահացածներ:** Հասկացե՛ք, որ դուք ոչինչ չեք կարող անել, և ամեն քայլափոխի թնյլ տվեք, որ Քրիստոսն ապրի և գործի ձեր մեջ առանց ձեր օգնության: Ձեր օգնությունը Հիսուսի խաչի վրա է:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ Աստծո հետ

1. «Նվիրաբերման գոհասեղան տանող ճանապարհը միայն մահվան միջոցով է»: Ինչ է սա նշանակում:
2. Ինչպե՞ս կարող եք պատրաստ լինել մնալու Հարուցյալ Քրիստոսի մեջ:
3. Ինչպե՞ս եք դառնում հաղթող Քրիստոսի մեջ:

Հուսահատվել գործերով կամ սեփական ջանքերով ինքնամաքրվելուց

Հուսահատվել մարմինը կամ շնչավոր մարդը, նրա մեղավոր ցանկությունները և հակումները սրբելուց, մաքրելուց կամ զտելուց: **Մարմինը հնարավոր չէ վերացնել կամ սրբել, այն գամված պետք է մնա խաչին:** Սա միակ լուծումն է, որ Աստված գտավ դրա համար: Հուսահատվել սրբություն գործադրելուց, երբ վճռում եք անելու լավագույնը, որ դուք կարող եք, և առաջարկելու ձեր ամբողջ ուժը: Հուսահատվել Աստծո շնորհքին վստահելուց, որպեսզի այն օգնի ձեզ ձեր ջանքերում և որոշումներում: Ավելի լավ է որոշե՛ք վստահել միայն Քրիստոսին, միայն Նրան, որ ներգործի ձեր մեջ կամենալն էլ, անելն էլ Իր զորությամբ՝ Իր սուրբ, բարի հաճության պես:

Այն շնորհքը, որ ներում է, նաև սրբացնում է: Շնորհքը ներկայացնում է Հիսուսին: Մենք պետք է իմանանք, որ **միշտ և միայն շնորհքն է, որ անում է ամբողջ աշխատանքը մեր սրբացման և պտղաբերության համար:** Այն չի պահանջում մեր ջանքերը, մեր աշխատանքը: Եթե ես չհավատամ սրան, չեմ հանձնվի շնորհքին, որպեսզի այն անի ամենը, ինչ կարող է: Քրիստոնեական

կյանքի ոչ միայն սկիզբը, այլև շարունակությունը շնորհքի աշխատանքն է: Շատ քրիստոնյաներ չեն տեսնում այս ճշմարտությունը: Եթե նայենք մեր շուրջը գոյություն ունեցող քրիստոնեական կյանքի սովորական չափանիշներին, չենք գտնի անկեղծություն կամ իրական նվիրում Աստծուն և Նրա ծառայությանը: Փոխարենը կհայտնաբերենք, որ քրիստոնեական կյանքում գերիշխող սկզբունքը սա է՝ ինչպես ստանալ լավագույնը երկու աշխարհներից: Մենք ուզում ենք անմեղորեն հնարավորինս վայելել ներկա կյանքը: «Ես»- ին հաճեցնելը համարվում է օրինավոր, և «ես»- ին չհաճեցնելու քրիստոսանման կյանքը քիչ տեղ ունի մեր մեջ, անգամ եկեղեցիներում:

Եսապաշտ կյանքը գրեթե անհնար է դարձնում աստվածային առաջնորդություն ստանալը: Մենք հաշվետու և պատասխանատու ենք «ես»- ի խելացի, աննկատ գործերի համար, հատկապես մեր ամենասուրբ ժամերին: «Ես»- ը թունավորում է մեր շարժառիթները: Այն փտեցնում է մեր բարի պտուղները, մեր պտղաբերությունը: Այն գայթակղիչ գովեստներ է շնչում մեր ականջին: Քանի դեռ թույլ ենք տալիս եսապաշտ կյանքի մտքերը, անձնական առավելության մտքերը, մարդկանցից փառք ստանալու գաղափարները, ինքնափառաբանման գաղտնի ցանկությունները, պարզապես անհնար է հայտնաբերել Աստծո նպատակը մեր կյանքի համար: Դուռը հաստատ և վճռականորեն պետք է փակվի այս ամենի դեմ, եթե ցանկանում ենք լսել Հիսուսի մեղմ, ցածր ձայնը, որն առաջնորդում է մեզ:

Լիովին կախված լինել Աստծուց

Շատ քրիստոնյաներ չեն տեսնում Աստծո հետ իրենց ճշմարիտ հարաբերությունը, այն է՝ ամեն ինչում Նրանից բացարձակ կախվածությունը: Նրանց հասանելի չէ Աստծո ամենակարող ներկայությունը և զորությունը, որ մշտապես շրջապատում են մեզ: Նրանց համար իրական չէ այն, որ Աստված ամեն վայրկյան գործում է մեր մեջ, և դա վեր է նրանց հասկացողությունից: Շատերիս սրտերը չեն կարող հասնել Աստծո անսահման Սիրո իրողությանը, որը մեզ մեկ է դարձնում Նրա հետ և բնակվում է մեր մեջ: Երբ մտածում ենք, որ ընդունել ենք այն ճշմարտությունը, որ Նա սիրում է բնակվել մեր մեջ և ներգործել մեր մեջ այն ամենը, ինչ պետք է արվի, դա մեզ համար ընդամենը անցողիկ միտք է: Մեզ համար խորթ է այն գիտությունը, թե ինչպիսին է իրականում ԱՍՏՎԱԾ՝ ամենագոր և ամենակարող: **Իր ամենագորությամբ Նա այն իրական կյանքն է, որով Նրա ժողովուրդն ապրում է:**

Մենք ապրում, շարժվում և գոյություն ունենք *ոչ միայն Նրանով, այլև Նրա ամենագորությանը*: Այս կյանքը տալու նպատակով էր, որ Որդին դարձավ մարդ, և Սուրբ Հոգին ուղարկվեց մեր սրտերի մեջ, որպեսզի Քրիստոսը սիրով և զորությամբ հրաշալի, ամենախիրական և ամենագործնական կերպով բնակվի մեր մեջ:

Քրիստոսի կյանքի ամենախոր գաղտնիքը այս երկրի վրա Հորից Նրա կախված լինելն էր: Տասներկու և ավելի անգամներ Հիսուսը գործածում է *ոչ թե* և *ոչինչ* Իրենից արտահայտությունները: *Ոչ թե* Իմ կամքը: *Ոչ թե* Իմ խոսքերը: *Ոչ թե* Իմ պատիվը: *Ոչ թե* Իմ փառքը: Ես Ինձնից *ոչինչ* չեմ կարող անել: Ես Ինձնից չեմ խոսում: Ես չեկա Ինձնից: Ես *ոչինչ* չեմ անում Ինձնից: Մի պահ մտածեք, թե ինչ է սա նշանակում: «Որովհետև ինչպես որ Հայրն Իր Անձում կյանք ունի, այնպես էլ Որդուն տվեց, որ Իր Անձում կյանք ունենա» (Հովհ. 5.26): «Որ ամենքը պատվեն Որդուն, ինչպես որ պատվում են Հորը...» (23-րդ խոսք): Մինչդեռ այս Որդին, որ Իր մեջ կյանք ունի, ինչպես Հայրն ունի, անմիջապես ավելացնում է. «Ես Ինձնից չեմ կարող *ոչինչ* անել» (30-րդ խոսք): Մենք կմտածեինք, որ Նրանում այս կյանքով Քրիստոսը կունենար անկախ գործելու իշխանություն, ինչպես Հայրն ունի: Բայց ո՛չ: «Որդին Իրենից *ոչինչ* չի կարող անել, այլ այն, ինչ տեսնում է Հորն անելիս»: **Այս աստվածային կյանքի գլխավոր նշանը, որ Հիսուսն ուներ Իր մեջ երկրի վրա, անդադար կախված լինելն էր Հորից՝ ամեն վայրկյան ստանալով Նրանից այն, ինչ պետք է խոսեր կամ աներ:**

Երբ ուշադիր ուսումնասիրում ենք Քրիստոսի կյանքը այս ճշմարտության լույսի ներքո, հարկադրված ենք ասել. «*Հիսուսը թույլ տվեց, որ Աստված անի ամենը Իրենում*»: Հոր հետ Քրիստոսի փոխհարաբերության ամենախոր արմատը, Նրա այդքան բարեհաճ լինելու և Հորը փառավորելու գաղտնիքն այն էր, որ Նա թույլ տվեց, որ Հայրն աներ ամենը Իր մեջ: Նա միայն ընդունեց և դրսևորեց այն, ինչ Աստված դրել էր Իր մեջ: Նրա վերաբերմունքն արտահայտվում էր այն բանում, որ Նա ուներ բաց ականջ, ծառայի հոգի, մանկական ապավինություն, որը սպասում էր Աստծուն ամեն ինչի համար: Սա է այն կյանքը, որ Հիսուսը բերում է մեզ:

Կյանքը, որ Հիսուսն ապրեց Հոր մեջ, այն կյանքն է, որ Նա փոխանցում է մեզ: Հիսուսն ասաց. «...Ես եմ հարությունը և կյանքը. Ինձ հավատացողը թեև մեռնի էլ, կապրի: Եվ ամենը, ով որ կենդանի է և Ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի. հավատում ես սրան» (Հովհ. 11.25, 26): Մենք պետք է մնանք

Նրանում, և Նա՝ մեր մեջ, *ինչպես* որ Նա Հոր մեջ է, և Հայրը՝ Նրանում: Մենք տեսնում ենք, որ Քրիստոսի՝ Հոր մեջ մնալու գաղտնիքը այս անդադար ինքնամերժումն ու անձնագրիությունն են. «Ես Ինձնից չեմ կարող ոչինչ անել»: Հիսուսի կյանքը Հորից լիովին և բացարձակապես կախված լինելու և Հորը սպասելու կյանք էր: Սա պետք է լինի նաև մեր հոգևոր կյանքի ամենաընդգծված հատկանիշը: Եկեք ձգտենք պահպանելու այս վերաբերմունքը. մահանալ «ես»- ին, որպեսզի մեր հոգում ունենանք Աստվածային սիրո ծնունդ: Եկեք ընկղմվենք խոնարհության, հեզության, համբերատարության և Աստծուն հնազանդության մեջ: Սա այն կյանքն է, որ Քրիստոսը բերում է մեր նոր մարդու, նոր էության մեջ:

Սիրելի Քրիստոսի աշակերտ, եկեք ամեն օր Քրիստոսի խոսքերը դարձնենք մերը. «Ես Ինձնից չեմ կարող ոչինչ անել»: Եկեք վեր նայենք և տեսնենք անսահման Աստծուն, որ սպասում է, որպեսզի անի ամենը, հենց որ պատրաստ լինենք տալու Նրան ամենը և ստանալու Նրանից ամենը: Եկեք ծնկի իջնենք և խոնարհվենք երկրպագության մեջ և սպասենք Սուրբ Հոգուն, որ ամեն օր մեր մեջ ներգործի Քրիստոսի միտքը: Չհիասթափվենք, եթե անմիջապես չենք սովորում դասը: **Սիրո Աստված պատրաստ է անելու ամեն բան այն հավատացյալի մեջ, որը հոժար է լինելու ոչինչ: Սա էր Քրիստոսի ամբողջ կյանքը.** Ես Ինձնից ոչինչ չեմ կարող անել: **Նա է իմ կյանքը, Նա կգործի դա իմ մեջ, եթե միայն հավատամ և ընդունեմ:** Մտորեք սրա շուրջ, մինչև որ հայտնվի Քրիստոսի հեզության և խոնարհության գեղեցկությունը: Հավատացե՛ք, սա է այն կյանքը և բնավորությունը, որ կարիք ունեք ստանալու Քրիստոսից: Առաջարկե՛ք Աստծուն ձեր դատարկությունը՝ որպես ձեր սրտի միակ ցանկություն: Հուսացե՛ք, որ Աստված կընդունի, երբ հանձնեք ձեր անձը, և կպատասխանի դրան Իր շնորհքով: Նա հանձնվելու և դատարկվելու գործողությունները կվերածի սովորության, իսկ սովորությունը՝ բնավորության: Չկա ոչինչ, որ ձեզ ավելի կմոտեցնի Աստծուն, ոչինչ, որ ձեզ ավելի կմիավորի Քրիստոսի հետ, ոչինչ, որ կպատրաստի ձեզ ձեր մեջ գործող Աստծո մնայուն ներկայությանը և զորությանը՝ բացի «ես»- ին մահանալուց: Դա արտահայտվում է մեկ պարզ խոսքով՝ *ինձնից ոչինչ:*

ԱՍՏՎԱԾ ԳՈՐԾՈՒԽ Է ԱՄԵՆԸ: Ուխտի կնիքը հաստատ է. «Ես՝ Տերս, խոսել եմ ԵՎ ԿԱՆԵՄ ԴԱ»:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ Աստծո հետ

1. Սրբացումը և պտղաբերությունը չեն պահանջում մեր ջանքերը. սա մեր աշխատանքը չէ: Ինչո՞ւ:
2. Աստծո ամենագորության շնորհիվ է, որ մենք ապրում ենք, շարժվում ենք և կանք: Բացատրե՛ք սա և խնդրե՛ք Աստծո արձագանքը կամ ներդրումը:
3. Պատրմատ եք ամենը տալու Աստծուն և ամենը ստանալու Նրանից: Խոսե՛ք Աստծո հետ:

Աստված կհաստատի մեզ Քրիստոսի մեջ

«Բայց մեզ ձեզ հետ Քրիստոսում հաստատողը... Աստված է» (Բ Կորնթ. 1.21): «Տերը կկատարի ինձ տեղ...» (Սաղմ. 138.8): Մենք պետք է ամուր բռնվենք մեր վստահությունից, որովհետև «...Նա, որ ձեզանում սկսեց այս բարի գործը, կկատարի էլ մինչև Հիսուս Քրիստոսի օրը» (Փիլիպ. 1.6):

Շատ քրիստոնյաներ տխրում են կամ վշտանում իրենց հոգևոր կյանքի անկայունության համար: Նրանց հավատքը և խաղաղությունը արագորեն ցնցվում են և կորչում: Հավատքը և դիրքը վերականգնելու բոլոր ջանքերը նրանց անպտուղ են թվում: Նրանց լուրջ խոստումները, նրանց զգոնությունը և աղոթքը շատ քիչ բան են անում նրանց խաղաղությունը վերականգնելու համար: Մենք չենք հասկանում, որ հենց մեր ջանքերն են մեր ձախողման պատճառը, որովհետև միայն Աստված կարող է հաստատել մեզ Քրիստոս Հիսուսում: Մենք պետք է դադարենք ինքներս մեր դեմ պայքարելուց և կռվելուց՝ Քրիստոսի հետ կապ հաստատելու և այն ավելի ուժեղ դարձնելու համար. մենք պետք է թույլ տանք, որ Աստված անի դա: Եթե մենք չհանձնվենք Աստծուն, մեր ջանքերը կհանձնվեն մարմնին, և մենք կկենտրոնանանք շատ աղոթքաժողովների մասնակցելու վրա, որպեսզի վերականգնենք մեր խաղաղությունը և հաղորդակցումն Աստծո հետ: Սա պտուղ չի բերի: Մեր սիրտն ուղիղ չէ Աստծո հետ, երբ մեր ջանքերն են կառավարում մեր կյանքը: Մեզ անհրաժեշտ են պարզ հավատք և վստահություն, որ Քրիստոսի մեջ հաստատվելը, որը կատարվում է օրեցօր, ամբողջովին Աստծո աշխատանքն է: Աստված հաճույքով է կատարում այս աշխատանքը՝ անկախ նրանից՝ մենք տկար ենք և անհավատարիմ, թե ոչ, մեզ միայն անհրաժեշտ է վստահել Նրան դրա համար և մերժել մեր ինքնավստահությունն ու «ես»-ը: Մենք կարիք ունենք հավատա-

լու Աստծուն և Նրա ճանապարհներին, սա նշանակում է չվստահել մեր եսապաշտ կյանքին, որը պատկանում է խաչին: Սա մեր լրջագույն խնդիրն է, միայն թե հասկանանք. մենք ապրում ենք՝ հույս ունենալով, որ «ես»-ը կարող է կատարելագործվել և ընդունելի դառնալ: Երբեք:

Մշակը մշտապես հոգ է տանում ճյուղի համար (Հովհ. 15.1, 2), որպեսզի այն ավելի ամրանա, և Որթի հետ նրա միությունն ավելի կատարյալ դառնա: Նա հետևում է մեր ամեն դժվարությանը, խոչընդոտին և վտանգին: Նա տրամադրում է ամեն անհրաժեշտ օգնություն: Սա է մեր հավատքի անձնատուր լինելը, սա է խաղաղությունը և հանգիստը: **Ինչ որ անում ենք, միայն դրսևորումն է նրա, ինչ Աստված անում է մեր մեջ**: Քրիստոսի մեջ հաստատելը Նրա աշխատանքն է. Նա իրականացնում է դա՝ մղելով մեզ դիտելու, սպասելու և աշխատելու: Բայց Նա կարող է անել սա իշխանությամբ միայն այն ժամանակ, երբ դադարենք մեր գործերով Նրան ընդհատելուց: Աշխարհի տարափի, մեզ շտապեցնող զբաղվածության մեջ, շրջապատված մեղքի և աշխարհիկության աննկատ և մշտական գայթակղություններով, առօրյա հոգսերի, անհանգստությունների և փորձությունների մեջ, որոնք հեշտորեն տանում են մեզ ձախողման, Աստված շարունակում է հաստատել մեզ Քրիստոսի մեջ: Շարունակեք մնալ միայն Քրիստոսի մեջ: Ամեն բան իրականանում և ձեռք է բերվում հավատքով. ինձնից ոչինչ:

Լսենք, թե ինչ է սովորեցնում մեզ Աստծո Խոսքը. «...Եհովան քեզ Իր համար սուրբ ժողովուրդ կհաստատի» (Բ Օրին. 28.9), «Ո՛վ Տեր՝ մեր հայրերի ... Աստված ... նրանց սիրտը հաստատիր Քեզ վրա» (Ա Մնաց. 29.18), «Որ ձեր սրտերը հաստատվեն անարատ սրբությունով Աստծո և մեր Հոր առաջ...» (Ա Թես. 3.13), «Բայց Նրան, որ կարող է ձեզ հաստատ պահել... փառք հավիտյանս» (Հռոմ. 16.25, 27). «Բայց Տերը հավատարիմ է, որ կհաստատի ձեզ և կպահի այն չարից» (Բ Թես. 3.3), «Եվ ամեն շնորհքի Աստվածը, որ մեզ կանչեց Իր հավիտենական փառքի մեջ Քրիստոս Հիսուսով, ձեզ, որ մի քիչ չարչարվում եք, կատարյալ անի, հաստատի, զորացնի, հիմնի» (Ա Պետր. 5.10): **Կարո՞ղ եք այս խոսքերն ուղղել ձեր կյանքին՝** անկախ նրանից, թե որքան թույլ է եղել ձեր հոգևոր կյանքը, որքան անհաջող է եղել ձեր բնավորությունը, կամ որքան անբարենպաստ կարող են թվալ ձեր հանգամանքները: Եկեք ժամանակ հատկացնենք մանկական ուսանելիությամբ լսելու այս խոսքերը որպես Աստծո ճշմարտություն: Հավատացե՛ք դրանց, և վստահությունը կգա: Ես կհաս-

տատվեմ Քրիստոսի մեջ: Վստահե՛ք Աստծուն, որ Նա կանի այն, ինչ խոստացել է:

Հավանաբար դուք ասում եք, որ կան ժամանակներ, երբ անում եք սա ամբողջ սրտով, բայց, չգիտես ինչու, դա երկար չի տևում: Դուք մոռանում եք ամեն առավոտ ձեր հոգևոր կյանքի բոլոր կարիքներն ու հոգսերը հանձնել Հոր խնամքին, որպեսզի Նա պատասխանատվություն ստանձնի դրանց համար: Դուք շարունակում եք անհանգիստ, ծանրաբեռնված և անօգնական զգալ: Հնարավոր է, որ Հոր հոգատարությանը չեք հանձնել հիշելու այս հարցը: Ձեր հիշողությունը նույնպես պետք է սրբացվի, որպեսզի հիշեք, որ նորոգեք ձեր լիարժեք անձնատուր լինելն Աստծուն: Աստված արդեն ապահովել է հրաշալի լուծում հիշողության համար. դա Սուրբ Հոգին է: Հիսուսն ասաց. «...Նա ... կհիշեցնի ձեզ ամեն ինչ, որ ձեզ ասացի» (Հովհ. 14.26): «Բայց մեզ ձեզ հետ Քրիստոսում հաստատողը և մեզ օժողը Աստված է, որ մեզ կնքեց էլ և Հոգու գրավը մեր սրտերի մեջ տվեց» (Բ Կորնթ. 1.21, 22): Հենց այս հաստատման համար է տրվել Սուրբ Հիշեցումը: Սուրբ Հոգին ձեզ կարողություն կտա հիշելու Աստծո երանելի խոստումները, հավատքի ձեր շարունակական գործերը, ձեր մշտական անձնատուր լինելը: Սուրբ Հոգին նոր մարդու հիշողությունն է: Ապրե՛ք նոր մարդու՝ նոր էության մեջ:

Ուրացե՛ք ձեր մարմինը և ապավինե՛ք Աստծուն, որ կկատարի Իր աշխատանքը ամեն օր և ամեն վայրկյան:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ Աստծո հետ

1. «Ինչ որ մենք անում ենք, միայն դրսևորումն է նրա, ինչ Աստված անում է մեր մեջ»: Ո՞րն է այս պնդման նշանակությունը:
2. «Բայց մեզ ձեզ հետ Քրիստոսում հաստատողը և մեզ օժողը Աստված է, որ մեզ կնքեց էլ և Հոգու գրավը մեր սրտերի մեջ տվեց» (Բ Կորնթ. 1.21, 22): Ի՞նչ է այս խոսքն ասում ձեզ հիմա:

Գլուխ 13. Հոգին և խաչը

Այս գլուխն անդրադառնում է երեք հիմնական թեմաների՝ Հոգին մշտապես առաջնորդում է մեզ դեպի խաչը, հավատացե՛ք և վստահե՛ք Սուրբ Հոգուն, և խաչն ու Քրիստոսի մեջ ապրելը:

Սուրբ Հոգին մշտապես առաջնորդում է մեզ դեպի խաչը

Այսպես էր Հիսուսի կյանքում: Հոգին սովորեցրեց և կարողություն տվեց Նրան առանց որևէ արատի Իրեն ներկայացնելու Աստծուն: Երբ Քրիստոսը կրեց խաչը, Հորից ստացավ Հոգին, որպեսզի կարողանար հեղել այն: Երբ երեք հազարը խոնարհվեցին Խաչյալ Քրիստոսի առջև, ստացան Սուրբ Հոգու խոստումը: Երբ աշակերտներն ուրախացան խաչի հաղորդության փորձառությամբ, նորից առան Սուրբ Հոգուն: Հոգու և խաչի միությունն անհնար է քանդել. նրանք անքակտելիորեն իրար են պատկանում: Մենք սա տեսնում ենք հատկապես Պողոսի թղթերում. «...աչքերի առաջ նկարագրվեց Հիսուս Քրիստոսը՝ խաչված ձեր մեջ... օրենքի գործերից ընդունեցիք Հոգին, թե՛ հավատքի լսելուց» (Գաղ. 3.1, 2): «Քրիստոսը գնեց մեզ օրենքի անեծքից... որ մենք Սուրբ Հոգու խոստմունքն ընդունենք հավատքով» (Գաղ. 3.13, 14): «Աստված ուղարկեց Իր Որդին... որ օրենքի տակ լինողներին փրկի... և... իր Որդու Հոգին ուղարկեց ձեր սրտերի մեջ...» (Գաղ. 4.4- 6): «Բայց նրանք, որ Քրիստոսին են, իրենց մարմինը խաչ հանեցին... Եթե Հոգով ենք ապրում, Հոգով վարվենք» (Գաղ. 5.24, 25): «Այսպես էլ... դուք Քրիստոսի մարմնով մեռաք օրենքին... որպեսզի հոգու նորոգությունով ծառայենք... » (Հռոմ. 7.4- 6): «Որովհետև կյանքի հոգու օրենքը Հիսուս Քրիստոսում ազատեց ինձ մեղքի և մահի օրենքից: Որովհետև... Աստված... մեղքին դատապարտեց այն մարմնում, որ օրենքի արդարությունը կատարվի մեզանում, որ մարմնավորապես չենք վարվում, այլ հոգևորապես» (Հռոմ. 8.2- 4):

Հոգին ու խաչն անբաժանելի են ամեն ինչում և մշտապես: *Ինչպիսի՞ հիմնարկություն է աղոթել Հոգու լիության համար, եթե նախևառաջ մեզ չենք դնում խաչի լիակատար իշխանության ներքո: Քրիստոսն Իր անձը լիովին մատնեց խաչին: Նույնն արեցին աշակերտները: Նույնը խաչը պահանջում է մեզնից. մեր ամբողջ կյանքը պետք է պատկանի խաչին:*

Ինչնու չկան ավելի շատ տղամարդիկ և կանայք, որոնք սրտի ուրախությամբ կարող են վկայել, որ Աստծո Հոգին տիրել է իրենց և տվել է նոր զորություն Իրեն վկայելու համար: Ի՞նչն է խանգարում: Հայրը երկրային հորից ավելի է կամենում հաց տալ իր զա-

վակին, սակայն բարձրանում է այս աղաղակը. «Մի՞թե Հոգուն կարելի է խանգարել»: Շատերն ընդունում են, որ արգելքն անկասկած այն է, որ եկեղեցին չափազանց շատ է աշխարհի իշխանության ներքո: Մենք շատ քիչ ենք հասկանում Քրիստոսի խաչի՝ սիրտ թափանցող զորությունը: Հոգին չունի անոթներ, որոնց մեջ կարող է հեղել Իր լիությունը:

Սիրելի Քրիստոսի աշակերտ, ես ձեզ ուրախության ուղերձ եմ բերում: Հոգին, որ ձեր մեջ է, նույնիսկ եթե սահմանափակ չափով է գործում, պատրաստ է սովորեցնելու և առաջնորդելու ձեզ դեպի խաչը: Նա ձեզ կսովորեցնի, թե ինչ է կամենում անել Խաչյալ Քրիստոսը ձեզ համար և ձեր մեջ: Նա ցանկանում է, որ սպասեք Տիրոջը, որպեսզի կարողանա հայտնել ձեզ հոգևոր գաղտնիքներ: Հոգին ցանկանում է օգնել, որ տեսնեք, թե ինչպես են աղոթքի ներքին սենյակի անտեսումը և մակերեսային հաղորդությունը խանգարել Քրիստոսի հետ ձեր հաղորդակցությանը: Նրան դուք եք սահմանափակել, սահմանափակել եք խաչի վերաբերյալ սրտի գիտություն բերելու և ձեր ներսում Հոգու հզոր գործողություններ իրականացնելու մեջ: Հոգին ձեզ կսովորեցնի, թե ինչ է նշանակում «ես»-ը ուրանալով վերցնել խաչը, կորցնել կյանքը և հետևել Իրեն: Սպասում եք այս ամենը Սուրբ Հոգուց: Արդյո՞ք ձեր սպասելիքները սահմանափակում են ձեր հավատքը:

Մտորումներ Աստծո հետ

1. Ինչ է Հոգին փորձում ցույց տալ ինձ, որը խանգարում է Աստծո հետ իմ հաղորդակցությանը:
2. Ինչպես է աղոթքի անտեսումն ազդում Աստծո հետ իմ կյանքի վրա:

Հավատացե՛ք

Թեև դուք կարող եք անտեղյակ լինել և չունենալ հոգևոր հասկացողություն և հաղորդություն խաչի հետ, Աստված կարող է և կամենում է ձեզ սովորեցնել և հայտնել հոգևոր կյանքի գաղտնիքը: Աստված կգերազանցի ձեր բոլոր սպասելիքները: Գնացե՛ք Նրա մոտ դադարկված սրտով և սկսե՛ք սկզբից: Հավատարիմ եղեք աղոթքի և հաղորդության ներքին սենյակում: Գոհացե՛ք Հորից, որ կարող եք ապավինել Նրան, որ հանդիպի ձեզ այնտեղ: Գոհացե՛ք Հորից, որ տվել է ձեզ Սուրբ Հոգուն: Հավատացե՛ք և համոզված եղեք, որ դուք դեռևս չգիտեք ամեն բան «մարմնի»

և «աշխարհի» և խաչի մասին. Քրիստոսի Հոգին, որ ձեր մեջ է, կհայտնի դա ձեզ: Հավատացե՛ք սրան, վստահե՛ք Աստծուն սրա համար: Հավատացե՛ք, որ այս օրհնությունն անձամբ ձեզ համար է: **Հավատացե՛ք: Քրիստոսն ամբողջովին ձերն է: Նա փափագում է ամբողջովին տիրել ձեզ: Նա կարող է և կտիրի ձեզ Սուրբ Հոգու միջոցով:** Հարկ չկա, որ դուք որևէ աշխատանք կատարեք, որպեսզի համապատասխանեք դրան: Աստծո շնորհքը կկատարի սա ձեր ներսում, միայն թե հանձնվեք: Սակայն սա ժամանակ կպահանջի, Աստված «Գուգլ» ծառայություն չէ, և ժամանակ է անհրաժեշտ: Օ՛, եղե՛ք մենակ Աստծո հետ և տվե՛ք Նրան ժամանակ ձեր ներսի սենյակում ամեն օր: Նա կիրականացնի Իր խոստումը ձեր մեջ: «Ով որ Իմ պատվիրաններն ունի և նրանց պահում է, նա է Ինձ սիրողը, և Ինձ սիրողն Իմ Հորից կսիրվի, և Ես կսիրեմ նրան և Ինձ կհայտնեմ նրան» (Հովհ. 14.21):

Հավատացե՛ք և աղոթե՛ք, որ Աստված զորացնի ձեզ Իր Հոգով, որպեսզի Քրիստոսը հավատքով բնակվի ձեր սրտերում (Եփես. 3.16): Հաստատական եղեք և շարունակե՛ք աղոթել: Հոգին կհայտնի և կփառավորի Քրիստոսին և Նրա սերը: Քրիստոսը ձեր կյանքն է, և Սուրբ Հոգու զորությունը ձերն է: *Հոգին կանաջնորդի ձեզ մասնակից լինելու Հիսուսի խաչի մահվանը:*

Խաչը

Խաչը և մարմինը երկու մահացու թշնամիներ են: Խաչը ցանկանում է դատապարտել և մահվան մատնել «մարմինը»: «Մարմինը» ցանկանում է մի կողմ նետել և հաղթել խաչին: **Խաչը Սուրբ Հոգու լեցունության անփոխարինելի նախապատրաստումն է, սրտանց հավատացե՛ք սրան, անհավատությունը հեռու կպահի սա ձեզնից:** Շատերը փնտրում են Հոգու լեցունությունը, սակայն չեն ձգտում ապրելու խաչի միջոցով: Այս տգիտությունը կարող է մահացու լինել: **Հանձնված և անձնատուր եղած սրտին է տրվում Հոգու այն հայտնությունը, որ մեր ամբողջ էությունը դատապարտված է մահվան:** Հոգին բերում է սրտի հասկացողություն: Մենք պետք է մահանանք խաչի միջոցով, որպեսզի նոր կյանքը Քրիստոսի մեջ կենդանանա և տիրի մեր մեջ: Մենք պետք է ձեռք բերենք խոր հասկացողություն մեր էության մեղանչած վիճակի և Աստծո դեմ նրա թշնամության մասին: Այս հայտնության միջոցով մենք դառնում ենք հոժարական և ցանկանում ենք լիովին ազատվել դրանից: Մարմնից ազատագրումն արդեն տրվել է այն

փրկագնամամբ, որ Քրիստոսը բերում է մեզ, բայց այդ ազատագրումը հավատքով պետք է ընդունել և ապրել:

Փրկությունը բերում է ազատագրում թե՛ մեղքից, թե՛ մարմնից: Մենք պետք է հավատանք Աստծո փրկության լիությանը, հավատանք ազատագրմանը և՛ մեղքից, և՛ մարմնից: **Հավատալը հանգեցնում է փափագի:** Երբ հավատացյալը փափագում է ազատագրվել մարմնից, սովորում է սիրել խաչը որպես մարմնի՝ իր թշնամու իշխանությունից ազատագրողի: «Մեր հին մարդը խաչված է» Քրիստոսի հետ, և մեր միակ հույսը հավատքով սա ընդունելն է և սրանից ամուր կառչելը: «*Բայց նրանք, որ Քրիստոսին են, իրենց մարմինը խաչ հանեցին...*» (Գաղ. 5.24): **Ամեն օր հավատացեք և համարեք**, որ «մարմինը», որ ձեր մեջ է, Աստծո թշնամին է, Քրիստոսի թշնամին և ձեր հոգու փրկության թշնամին: Գամված լինելով խաչին՝ ինքներդ ձեզ մարմնին մահացած համարեք և որպես մահացածի՛ վերաբերվեք:

Ազատագրումը մարմնից ինչ- որ բան չէ, որ կարող ենք ըմբռնել մեր հասկացողությամբ կամ իրականացնել մեր ուժով: *Դա մի բան է, որ Տեր Հիսուսն Ինքը կտա մեզ, եթե պատրաստ լինենք օր օրի մնալու Նրա խաչի հաղորդության մեջ և Նրանից ստանալու ամենը:* Սա մի բան է, որ Սուրբ Հոգին կսովորեցնի և կփոխանցի մեզ որպես փորձառություն: Սա մի բան է, որ պետք է ընդունել Քրիստոսից և Նրա մեջ: Խաչյալ Քրիստոսի մեջ մնալու կյանքը (տե՛ս գլուխ 9) Քրիստոսի կյանքն է ձեր մեջ առանց «ես»-ի: Այն կտա հաղթանակ խաչի զորությամբ այն ամենի նկատմամբ, ինչը մարմնից է կամ եսապաշտ կյանքից:

«Մարմինը» և «աշխարհը» «այս աշխարհի աստծո» դրսևորումներն են, որին ծառայում են երկուսն էլ: Երբ խաչը գործ է ունենում «մարմնի հետ»՝ որպես անիծված թշնամու, մենք անմիջապես բացահայտում ենք, թե որոնք են աշխարհի բնույթը և զորությունը: «...արեցին Ինձ էլ և Իմ Հորն էլ» (Հովհ. 15.24): Սրա ապացույցն այն է, որ նրանք խաչեցին Քրիստոսին: Բայց Քրիստոսը խաչի վրա հաղթանակ տարավ և ազատեց մեզ «աշխարհի» իշխանությունից: Այժմ մենք կարող ենք ասել. «*Սակայն ինձ քավ լիցի պարծենալ, բայց միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով, որ Նրանով աշխարհն ինձ համար խաչված է, և ես էլ՝ աշխարհին*» (Գաղ. 6.14), «...բոլոր աշխարհը չարության մեջ է կենում» (Ա Հովհ. 5.19), և «*Եվ ո՛վ է, որ հաղթում է աշխարհին, եթե ոչ նա, որ հավատում է, թե Հիսուսն Աստծո Որդին է: Սա է, որ եկավ ջրով և արյունով՝ Հիսուս Քրիստոսը...Եվ Հոգին է վկայողը, որովհետև Հոգին է ճշմարտությունը*» (Ա Հովհ. 5.5, 6):

Կամակորությունը պետք է մահանա և պահվի Քրիստոսի խաչին: Հասկանալը և համաձայնելը բավական չեն: Անհրաժեշտ է հավատալ ամբողջ սրտով: Մարմինն արժանի է միայն մահվան: Ես որոշում եմ և բացում ի անձը Հոգու ներքին ուսուցումների և հայտնությունների համար: Ես պետք է զգամ, որ իմ եսապաշտ կյանքը դատապարտված է մահվան, և այս դատավճռի գիտակցմամբ իմ մարմինը, իմ մեղավոր էությունը շարունակ պետք է մատնեմ մահվան: «Վերցրու քո խաչը և եկ իմ հետևից» (տես [Մատթ. 16.24](#), [Մարկ. 8.34](#), [10.21](#), [Ղուկ. 9.23](#)): «Ով որ իր անձը գտնում է, կկորցնի նրան» ([Մատթ. 10.39](#)): Պողոսն ասում է. «Ես Քրիստոսի հետ խաչված եմ», «Սակայն ինձ քավ լիցի պարծենալ, բայց միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով, որ Նրանով աշխարհն ինձ համար խաչված է, և ես էլ՝ աշխարհին» (Գաղ. 2.19, [6.14](#)): Պողոսը ցանկանում էր, որ յուրաքանչյուր հավատացյալ ապրի այնպես, որ ապացուցի, որ խաչված է Քրիստոսի հետ: Նա մեզ ասում է, որ «Մեր հին մարդը Նրա հետ խաչվեց» ([Հռոմ. 6.6](#)), «Բայց նրանք, որ Քրիստոսին են, իրենց մարմինը խաչ հանեցին...» (Գաղ. 5.24): Երբ հավատքով ընդունում ենք Խաչյալ Քրիստոսին, մարմինը հանձնում ենք մահվան դատավճռին, որը լիովին իրագործվեց Գողգոթայում: Պողոսն ասաց. «...Նրա մահի նմանությունով Նրա հետ տնկվեցինք...» ([Հռոմ. 6.5](#)), հետևաբար մենք պետք է համարենք, որ մահացած ենք մեղքին և մարմնին Քրիստոս Հիսուսում: Չպետք է թույլ տալ, որ կամակորությունն ապրի, նույնիսկ մեկ վայրկյան: Ես կարիք ունեմ և պետք է ընդունեմ սա Քրիստոսից Նրա հետ միության մեջ, հետևաբար **ես կարիք ունեմ մտնելու սրտի հաղորդության մեջ իմ Խաչյալ Տիրոջ հետ**: Սպասելով Տիրոջը և Նրա ներկայությանը՝ ես պատրաստ եմ մշտապես ապրելու խաչի հաղորդության, խաչյալ և կենդանի Տեր Հիսուսի հետ հաղորդության մեջ:

Շատերը հուսացած են իրենց փրկությանը խաչի փրկագնամամբ, բայց քիչ պատկերացում ունեն խաչի հաղորդության մասին: Նրանք չգիտեն, թե ինչ է նշանակում ամեն օր ձգտել Խաչյալ Տիրոջ հետ սրտի հաղորդության: Խաչի այս հաղորդության տեսիլքը իր հոգևոր զորությունը պետք է գործադրի մեզ վրա: Արդյո՞ք ձեր սրտում որևէ ձգողություն եք զգում սրա հանդեպ: Մենք պետք է ձգտենք ընդունելու Հոգուն այս ներքին աշխատանքի համար, որպեսզի *ճանաչենք և նմանվենք փառավորված Քրիստոսին Նրա խաչի հաղորդության մեջ*: Մենք **պետք է ձգտենք, որ Հոգին փոխանցի մեզ Խաչյալ Քրիստոսի կյանքը**,

որպեսզի իսկապես կարողանանք ասել. «...Ես Քրիստոսի հետ խաչված եմ: Եվ կենդանի եմ, ոչ թե այլևս ես, այլ Քրիստոսն է կենդանի ինձանում...» (Գաղ. 2.19, 20), որպեսզի կարողանանք ապրել անվերապահ, անշահախնդիր ազապե սիրով և Քրիստոսի խոնարհությամբ՝ ծառայելով ուրիշներին և հոգ տանելով նրանց համար:

Քրիստոսն այն ամենով, որ էր, մեզ համար էր և ցանկանում է, որ այդ ամենը լինի մեր մեջ: Խաչի հոգին Նրա երանությունն ու փառքն էր: Հոգու միջոցով առավել ևս մեզ համար այսպես պետք է լինի: «Ինչպես ես ձեզ սիրեցի, այնպես էլ դուք սիրեք», «Ձեր ամեն մեկը թող այն մտածի, որ էլ Քրիստոս Հիսուսում էր» (Փիլիպ. 2.5), «...մենք Քրիստոսի միտքն ունենք» (Ա Կորնթ. 2.16): «...Իմից կառնի և կպարտի ձեզ» (Հովհ. 16.15), «Նա ինձ կփառավորի...» (Հովհ. 16.14): Սուրբ Հոգին դրեց այս վերաբերմունքը մեր մեջ Քրիստոսում և նաև կշարունակի Իր սերը և սրբությունը ներգործել մեր մեջ:

Մտորում Աստծո հետ

1. Ինչպես եք ամեն օր հավատում հոգևոր ճշմարտություններին:
2. Ո՞րն է այն մարդու նշանը, որ ապրում է Խաչյալ Քրիստոսի կյանքով: Բացատրեք: Մտորեք դրա շուրջ:

Գլուխ 14. Խոնարհություն և մահանալ «ես»- ին

Այս գլուխը կանդրադառնա հետևյալ թեմաներին՝ խոնարհություն, եսապաշտ կյանք և խոնարհություն, ո՞վ է անելու այս աշխատանքը, ինչպես ենք հասնում դրան:

«Իրեն խոնարհեցրեց և հնազանդ եղավ մինչև մահ և այն էլ խաչի մահ» (Փիլիպ. 2.8):

Խոնարհություն

Ամենակարող Աստված հավերժ կենդանի, հավերժ ներկա և հավերժ գործող Աստված է, որ պահում է ամեն բան Իր զորության խոսքով (Եբր. 1.3): Աստծով է ամեն բան (Եբր. 2.10), հետևաբար արարածի հարաբերությունն Աստծո հետ անդադար, բացարձակ, լիովին կախվածությունն է միմիայն Նրանից: **Խոնար-**

հույությունը Աստծուց լիարժեք կախվածության վայրն է: Ուստի այս խոնարհության կորուստը կամ հպարտությունը ամեն մեղքի և չարիքի արմատն է: Ոչինչ չի կարող լինել մեզ համար փրկություն՝ բացի կորցրած խոնարհության վերականգնումից՝ Աստծո հետ մարդու սկզբնական և միակ ճշմարիտ հարաբերությունից: Հիսուսը եկավ, որ խոնարհությունը վերադարձնի երկիր, մեզ մասնակից դարձնի խոնարհությանը Իր կյանքով՝ մեր մեջ Իր կյանքով:

Մարդու բարձրագույն առաքինությունը, հավատացյալի առաջին պարտականությունը և յուրաքանչյուր առաքինության արմատը լիարժեք կախվածությունն է Աստծուց՝ խոնարհությունը: Այժմ և ամբողջ հավիտենություն մարդն ամեն ինչի՝ իր կյանքի կարևորագույն խնամքի, իր բարձրագույն առաքինության և իր միակ երջանկության համար պարտական է իր Արարիչ Աստծուն: **Մարդու փառքն է ներկայացնել իրեն որպես դատարկ անոթի, որում Աստված կարող է բնակվել և դրսևորել Իր զորությունը, Իր բարությունը, Իր սերը և Իր խոնարհությունը:** Խոնարհությունը միակ անհրաժեշտությունն է, որ թույլ է տալիս, որ Սուրբ Աստծո կյանքը բնակվի հավատացյալի մեջ և լուսավորի նրա միջոցով: Մեր սրբության միակ անսխալական քննությունը կլինի խոնարհությունն Աստծո և մարդկանց առջև:

Այստեղ՝ երկրի վրա, Հիսուսը «խոնարհեցրեց Իրեն և հնազանդվեց մինչև մահ», Նրա խոնարհությունը, որ տարավ Նրան դեպի խաչը, դարձավ մեր փրկությունը: *Այժմ փրկությունը, որ Նա փոխանցում է, ոչ այլ ինչ է, եթե ոչ Նրա կյանքի և մահվան, Նրա բնավորության և հոգու, Նրա խոնարհության փոխանցում:* Միայն թե կարողանայինք տեսնել սա մեր սրտով: Տե՛ր, օգնիր մեզ տեսնելու մեր հպարտությունը և տեսնելու այն որպես մեղավոր և չար: Հետևաբար Քրիստոսի աշակերտի կյանքը պետք է կրի իր հպարտությունից և եսասիրությունից, մեղքից ու եսապաշտ կյանքից ազատագրման և նոր մարդու՝ նոր արարչության կյանքում իր լիարժեք մասնակցության կնիքը: Սա Աստծուց բացարձակ կախվածության վերականգնումն է մեր մեջ Աստծո և մարդկանց հետ մեր հարաբերություններում ամբողջական խոնարհությամբ: Առանց **միմիայն Աստծուց** այս բացարձակ կախվածության չի կարող լինել իսկական բնակություն Աստծո ներկայության մեջ կամ Նրա օրհնությունների և Հոգու զորության վերապրում, առանց սրա չկա մնայուն հավատք կամ սեր կամ ուրախություն կամ զորություն: *Չկա անվերապահ, անձնափուր սեր առանց խոնարհության:*

Խոնարհությունն ինչ- որ բան չէ, որ բերում ենք Աստծուն կամ զարգացնում ենք: **Խոնարհությունն առաջանում է լիարժեք հոգևոր աննշանության և դատարկության զգացումից, որ սիրտը վերապրում է:** Այս խոնարհությունն ինչ- որ բան չէ, որ առաջանում է ինքնիրեն, այն պետք է դառնա որոշակի ցանկության և աղոթքի, հավատքի ու գործունեության առարկա: Եկեք ուսումնասիրենք Քրիստոսի բնավորությունը, մինչև մեր հոգիները լցվեն Նրա սիրով և հեզության հիացմունքով:

ՄՏՈՐՈՒՄ Աստծո հետ

1. Ո՞րն է Աստծո հետ մարդու իսկական հարաբերությունը: Բացատրե՛ք:
2. Ո՞րն է մարդու փառքը:
3. Ի՞նչ է փոխանցում Քրիստոսի փրկությունը:
4. Ինչի՞ց է առաջանում խոնարհությունը: Բացատրե՛ք:

Մահ եսապաշտ կյանքին և խոնարհություն

Խոնարհությունն այն ծաղիկն է, որի կարարյալ պտուղն է մահը «ես»- ին: Հիսուսը խոնարհեցրեց Իրեն մինչև խաչի մահ և բացեց ճանապարհ, որով պետք է անցնենք նաև մենք: Խոնարհությունը պետք է առաջնորդի մեզ մահանալու «ես»- ին՝ մարմնին: Սա է ապացույցը այն բանի, թե ինչպես ենք լիովին հանձնվել Աստծուն: Այսպես ենք գտնում ուղին, որ տանում է դեպի կյանք Աստծո մեջ՝ նոր էության կյանք: Խոնարհությունն այս նոր էության կյանքի շունչն է և ուրախությունը: **Ճշմարիտ խոնարհությունը Քրիստոսն է, որ բնակվում է իմ մեջ: Նրա կյանքի զորությունը կարելի է ճանաչել միայն այն ժամանակ, երբ Խաչյալ Քրիստոսի Հոգին՝ խոնարհության Հոգին, բնակվի և գործի անձի մեջ:**

Խոնարհությունն առաջնորդում է դեպի կարարյալ մահ: Խոնարհությունն նշանակում է «ես»- ից կամ եսապաշտ կյանքից հրաժարում և Աստծո առջև կատարյալ հոգևոր աննշանության ընդունում: Հիսուսը խոնարհեցրեց Իրեն և հնազանդ եղավ մինչև մահ: Սա Աստծո կամքին Իր կամքը հնազանդեցնելու Նրա մեծագույն և կատարյալ ապացույցն էր: Մահվամբ Նա հրաժարվեց Իր եսապաշտ կյանքից՝ բաժակը խմելու նրա բնական դժկամությամբ կամ վարանմամբ. Նա հրաժարվեց այն կյանքից, որը միութե-

յան մեջ էր մեր մարդկային էության հետ, Նա մահացավ «ես»- ին և մեղքին, որ փորձում էր Նրան: Սա անելով, որպես մարդ, Նա մտավ Աստծո կատարյալ կյանքի մեջ: Եթե չլինեին Նրա անսահման խոնարհությունը, Իրեն ոչինչ համարելը, Աստծո կամքն անելը և դրա համար չարչարվելը, Հիսուսը երբեք չէր մահանա խաչին:

Ինչպես կարող եմ մահանալ «ես»- ին, եսապաշտ կյանքին:
«Ես»- ին մահանալը ձեր աշխատանքը չէ, այն Աստծո աշխատանքն է: Քրիստոսի մեջ դուք մեռած եք մեղքին և մեղքի էությանը, այն կյանքը, որ ձեր մեջ է, անցել է Քրիստոսի մեջ մահվան հարության միջով: Գուցե դուք համոզված եք, որ իսկապես մահացած եք մեղքին, սակայն միայն հավատքով կարելի է ընդունել սա: **Բայց այս մահվան գործության լիարժեք դրսևորումը ձեր բնավորության մեջ և վարքում կախված է նրանից, թե ինչ չափով է Սուրբ Հոգին փոխանցում ձեզ Քրիստոսի մահվան գործությունը, և սա կախված է ձեր կամքից ու համաձայնությունից:** Այստեղ է անհրաժեշտ ուսուցումը. եթե ցանկանում եք մտնել Քրիստոսի հետ լիարժեք հաղորդակցության մեջ՝ Նրա մահվամբ, և վերապրել լիակատար ազատագրում «ես»- ից, ***խոնարհվեք և ձեր ինքնավստահությունն ու սեփական ջանքերը հանձնեք խաչի մահվան:*** Սեփական ջանքերը ներկայացնում են մեղքի էությունը, մարմինը, դրանք պետք է ուրանալ, չպետք է թույլ տալ, որ կյանք ունենան, դրանք պետք է մերժել ամեն անգամ, երբ գործի են դրվում: Դրանք լիովին մեղավոր և չար են, լի հպարտությամբ և եսասիրությամբ, և սա այն է, ինչ մարդիկ չեն ընդունում իրենց էության վերաբերյալ: Դուք ոչինչ չեք կարող անել ձեզ հոգևոր դարձնելու կամ ձեր եսապաշտ կյանքը բարելավելու համար: Ձեր «ես»- ը լիովին և հիմնովին դատարկ է և ոչինչ է ձեզ հոգևորապես օգնելու հարցում: Եթե հավատաք ձեր հոգևոր դատարկության և աննշանության մասին այս ճշմարտությանը, թույլ կտաք, որ Հոգին ձեր կյանքում գործադրի Քրիստոսի մահվան գործությունը: Այստեղ ենք մենք ձախողվում: Սա է ձեր միակ պարտականությունը: Ներկայացնեք Աստծուն ձեր ծայրահեղ անօգնականությամբ, սրտանց համաձայնեք, որ դուք լիովին անօգնական եք ձեր ջանքերով ձեր մարմինը սպանելու կամ ձեզ կենդանացնելու գործում, և ընկղմվեք ձեր աննշանության մեջ: Հանձնվեք Աստծուն վստահությամբ և համբերությամբ, հեզության հոգով: Հանձնվել Աստծուն նշանակում է հանձնվել Նրա խաչին: Խոնարհության ուղին է, որ տանում է դեպի կատարյալ մահ, Քրիստոսի մեջ մահացած լինելու լիարժեք և կատարյալ փորձառություն:

Միայն այս մահն է հանգեցնում կապարյալ խոնարհության: Խոնարհվեք մինչև մահ: «Ես»- ի մահվան մեջ է խոնարհությունը կատարյալ դառնում: Համոզվեք, որ մահացած եք «ես»-ին (չկան սեփական ջանքեր, չկա ինքնապավինում), ինչն ավելի շատ շնորհքի իրական փորձառության և նվիրման մեջ ճշմարիտ առաջխաղացման արմատն է: Հիսուսին իրապես և ավելի ու ավելի կերպարանակից լինելու համար մահացած պետք է լինենք «ես»- ին: Մեր բնավորությունը և սովորությունները պետք է վկայեն դա Աստծո և մարդկանց առջև: «Աստծո Գառը» երկու բան է նշանակում՝ հեզություն և մահ: Եկեք ձգտենք ընդունելու Նրան երկու կերպարանքում էլ: Նրա մեջ դրանք անբաժանելի են. մեր մեջ նույնպես անբաժանելի պետք է լինեն:

Ո՛վ է անելու այս աշխատանքը: Ինչպե՞ս ենք հասնում դրան:

Ի՞նչ անհուսալի առաջադրանք, եթե մենք ստիպված լինե՞ինք կապարել այն: Մեր էությունը երբեք չի կարող հաղթել ինքն իրեն, նույնիսկ շնորհքի միջոցով: «Ես»- ը երբեք չի կարող հանել «ես»-ին, նույնիսկ հավատացյալի կյանքում: Փառք Աստծուն: Աշխատանքն արվել է, ավարտվել է և կատարվել է հավիտյան: **Հիսուսի մահը մեկընդմիջտ մեր մահն է եսապաշտ կյանքին:** Քրիստոսի մահն ազատում է ինձ իմ մեղքերից, նաև իմ եսապաշտ կյանքից: Աստված տվել է մեզ Սուրբ Հոգուն, որպեսզի զորությամբ հաղորդակցվի մեզ հետ և Քրիստոսի մահվան և կյանքի զորությունը դարձնի մերը: Խոնարհության որոնումներում և կիրառության մեջ հավատացյալը հետևում է Հիսուսին, սովորում է վեր նայել, պահանջել և ընդունել Հիսուսի Հոգու իսկական լիությունը: Հոգին հայտնում է Քրիստոսին և Նրա լիությունը մեր մեջ: **Հոգին կարող է ամեն օր պահպանել Քրիստոսի մահը «ես»- ին և մեղքին:** Այս աստվածային կյանքն ապրում է իր լիարժեք զորությամբ և խոնարհությունը դարձնում մեր կյանքի ամենուր թափանցող հոգին: **Համբերության, հեզության, խոնարհության և Աստծուն հնազանդության մեջ ընկղմվելու ձեր սրտի այս հակվածությունը ներառում է հրաժարում այն ամենից, որ եք և ունեք ձեր հին էությունից:** Քրիստոսը համբերության, հեզության, խոնարհության և ազապես սիրո այս առաքինությունների մեջ է: Երբ դրանք առկա են, Աստված Իր թագավորության մեջ է, Իր տաճարում: Թող սա լինի այն Քրիստոսը, որին հետևում եք:

Սիրելի՛ Քրիստոսի աշակերտ, այս «ամեն ինչից հրաժարվելը» ձեր համաձայնությունն ու պատրաստակամությունն է պահանջում՝ ոչ թե մեկ անգամ, այլ շուրջօրյա: Դուք թողնում եք ամենը,

ինչ ունեք, որպեսզի հետևեք Քրիստոսին, և սա ներկայացնում է Նրան հանձնվելու և Նրա հանդեպ հավատքի ձեր բարձրագույն գործողությունը: Այս «ամենը թողնելը» պետք է լինի ամեն բանում և ամբողջ օրը, բայց մենք խորամուխ չենք լինում այս ճշմարտության մեջ: Ամեն բան թողնելու զորությունը միայն կարող է գալ Աստծուց, դա Նրա շնորհքի աշխատանքն է հանձնված սրտում: Հոգին սպասում է մեր համաձայնությանը և պատրաստակամությանը՝ կիրառելու Քրիստոսի մահը մեր «ես»- ի և մեր մեղքերի համար: Հավատացյալ, հավատքով պնդեք, որ Հիսուսի մահը և կյանքը ձերն են: Մահացեք Նրա մահվամբ, որպեսզի մտնեք հանգստի մեջ «ես»- ից և «ես»- ի գործերից, մտնեք Աստծո հանգստի մեջ: Քրիստոսով, որն Իր Հոգին հանձնեց Հոր ձեռքերի մեջ, խոնարհվեք և ամեն օր ընկղմվեք Աստծուց այդ կատարյալ, անօգնական կախվածության մեջ: Աստված կբարձրացնի և կվեհացնի ձեզ: Ամեն առավոտ ընկղմվեք հոգևոր խոր դատարկության և աննշանության մեջ՝ Հիսուսի գերեզմանի մեջ, և ամեն օր Հիսուսի կյանքը կդրսևորվի ձեր մեջ: Թ՛ր՛ղ հոժարակամ, սիրառատ, հանգիստ, երջանիկ խոնարհությունը լինի նշան, որ դուք իսկապես պահանջել եք ձեր անդրանկության իրավունքը՝ Քրիստոսի մահվան մեջ մկրտությունը: «...մեկ պատարագով հավիտյան կատարեց սրբվողներին»:

Այն անձը, որ մտնում է Քրիստոսի խոնարհության մեջ, Նրանում կգտնի զորություն՝ իր Եսապաշտ կյանքը մահացած տեսնելու և համարելու: Նրանից նա սովորել և ընդունել է քայլել հեզությամբ և խոնարհությամբ՝ սիրով համբերելով միմյանց: Մահին մատնված կյանքը, ինչպիսին Քրիստոսի կյանքն էր, երևում է հեզության և խոնարհության մեջ:

ՄՏՈՐՈՒՄ Աստծո հետ

1. Ո՞րն է ապացույցն այն բանի, թե որքան լիարժեք եք հանձնվել Աստծուն:
2. «Ձեր «ես»- ը լիովին և հիմնովին դատարկ է և ոչինչ՝ ձեզ հոգևորապես օգնելու համար»: Հավատում եք այս պնդմանը: Ինչո՞ւ:
3. Ի՞նչ է նշանակում խոնարհություն:
4. «Հիսուսի մահը մեկընդմիջտ մեր մահն է Եսապաշտ կյանքին»: Հավատում եք սրան: Ինչպե՞ս եք ապրում դա:
5. Ինչպե՞ս եք մտնում Քրիստոսի խոնարհության մեջ:

Մաս 4. Սրբությունը կյանք է

Չորրորդ մասը բաղկացած է չորս գլխից: Տասնհինգերորդ գլուխը սուրբ լինելու Աստծո կոչի մասին է, տասնվեցերորդ գլուխը նվիրված է Քրիստոսի բնակությանը մեր ներսում՝ որպես մեր սրբության, տասնյոթերորդ գլուխը նվիրված է սրբության ճանապարհին՝ մեղքից և աշխարհիկությունից բաժանմանը, և հնազանդությանը, և տասնութերորդ գլուխը ցույց է տալիս, որ աշակերտի կյանքի փառքը հիմնականում ներառում է խոնարհություն և սրբություն:

Մենք կդիտարկենք այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ինչն է մեզ սուրբ դարձնում մեր առօրյա կյանքում, ի՞նչ է մեղքի խոստովանության և սրբության կապը, ինչպե՞ս է «ես»- ի ուրացումը կապված սրբության հետ, ի՞նչ է սրբության էությունը և զորությունը, ի՞նչ է մարդու դերը սրբության մեջ և Աստծո դերը սրբության մեջ, որքան՞ով է սրբությունը իմ ընտրությունը և իմ պատասխանատվությունը, ի՞նչ է սրբության և ուրիշներին ազապե սիրով սիրելու կապը, ինչպե՞ս է սրտի խոնարհությունը կապված սրբության հետ, որպես սրբություն տանող ուղի՝ բաժանումը ինչ է ենթադրում, ի՞նչ է բաժանման և ուրիշներին ազապե սիրով սիրելու կապը, ի՞նչն է կարևորություն կամ փառք տալիս աշակերտի կյանքին, ի՞նչ է Աստծո շնորհքի և խոնարհության կապը, ի՞նչ է ենթադրում Հիսուսին կերպարանակից լինելը:

Գլուխ 15. Աստծո կոչը. «Սուրբ եղեք»

Այս գլուխն անդրադառնում է երեք թեմայի՝ ինչն է սրբություն, սրբության էությունը և սրբություն և սրբվել:

«Այլ ձեզ կանչող Սուրբի պես դուք էլ սուրբ եղեք ձեր բոլոր վարքերում, որովհետև գրված է. «Սուրբ եղեք, որ ես սուրբ եմ»» (Ա Պետր. 1.15, 16):

Ինչն է սրբություն

Սրբության Իր կոչում Աստված մեզ հայտնում է Իր մտքերն ու կամքը մեր վերաբերյալ, և ցույց է տալիս այն կյանքը, որի մեջ հրավիրում է մեզ: Երբ Պողոսը գրում է. «...խաղաղության Աստվա-

ծը ձեզ սուրբ անի բոլորովին», նաև ավելացնում է. «Հավատարիմ է Նա, որ կանչեց ձեզ, որ կանի էլ» (Ա Թես. 5.24): Կոչի նպատակը հստակ նշված է այստեղ. «Ինչպես որ ընտրեց մեզ Նրանով... որ մենք սուրբ և անարատ լինենք Նրա առաջ սիրով» (Եփես. 1.4), «...որ Աստված սկզբից ընտրեց ձեզ փրկության համար...սրբության... մեջ» (Բ Թես. 2.12): Կոչն այն նպատակի բացահայտումն է, որ Հայրը հավիտենից դրել էր Իր սրտում, որ մենք սուրբ լինենք: Աստված Իր կոչին ավելացնում է՝ «որ կանի էլ»: **Քրիստոսը ձեր սրբացումն է, «որ կանի էլ»: Այսպիսով՝ Քրիստոսի կյանքը ձեր մեջ ձեր սրբությունն է ձեր առօրյա կյանքում:** Դուք ընդունում եք Աստծո՝ սրբության կոչը: Արդյո՞ք դուք և Աստված համաձայնության եք եկել այս կոչի հարցում: Դժբախտաբար մեր հասարակությունը սրբությունը դիտում է որպես զուտ բարոյականություն:

Կան բազմաթիվ պատճառներ, որ շատ քրիստոնյաներ իրականում չեն տեսնում սրբության իրենց կարիքը: Դրանք են մեղանշման վերաբերյալ հոգևոր հասկացողության բացակայությունը, մեղքի վերաբերյալ բավարար իմացության բացակայությունը և մարդու էության չար մեղավորության մասին անտեղյակությունը. մեղքի վերաբերյալ իմացությունը չի համարվում անհրաժեշտություն, և դրա վատ հետևանքները չեն երևում, հոգևոր կյանքում հնազանդության տեղը հստակ չէ, Տիրոջ առջև ինքնազննման և սիրտը քննելու անհրաժեշտությունը վերացել է և դարձել անծանոթ, փրկության հասկացողությունն անբավարար է, հետևաբար և թերի, և վերջապես, բայց ոչ պակաս կարևոր, չկա պատշաճ պատկերացում Տիրոջ երկյուղի մասին:

Սրբության վերաբերյալ հատկապես ինչ պետք է սովորեն և ճանաչեն: Ես դեռևս մեծ մեղավոր եմ: Որպես հավատացյալ Քրիստոսի մեջ՝ իմ մեղքերը դեռևս նույնքան սոսկալի, չար և լիովին մեղավոր են, ինչպես նախկինում, և նույնիսկ ավելի: *Մենք հաճախ զգում ենք, որ այս ամենը ճշմարիտ է, բայց մեր սրտում չենք զգում կամ տեսնում դրանք, մենք զգում ենք, որ մեր սրտերին քող կա գցված: Մենք փորձում ենք տեսնել այդ ամենը և չենք կարողանում:*

Ես կարիք ունեմ իմանալու իմ մեղքերի և իմ էության չափազանց մեղավորության մասին, որ ժառանգել եմ Ադամից: Ես կարիք ունեմ անձնատուր լինելու քննող Հոգուն և իմ սրտի վիճակի համար հանձնվելու Նրա հանդիմանությանը և հայտնությանը: *Աստված ներում է, եթե խոստովանում ենք, և Նրա կամքն է, որ աստվածային փրկումությանը ողորմանք և վշտանանք մեր մեղքերի համար (տես գլուխներ 1- 3): Մենք պետք է հանձնվենք Հի-*

սուս Քրիստոսի խաչին: **Միայն Հիսուսի խաչին հանձնված սիրտը կարող է նվիրաբերվել սրբությանը:** Հետևաբար եսապաշտ կյանքը կամ մարմինը պետք է ուրանալ և սպանել, որպեսզի նոր կյանքը՝ Քրիստոս սուրբ կյանքը, ազատ և լիարժեք իշխանություն ունենա մեզ վրա: Աստված կանչել է մեզ սրբության կյանքի, չմեղանչելու կյանքի, հնազանդության կյանքի մեջ, որը մեզնից պահանջում է Քրիստոսի մեջ մնալ: **Եթե չենք հավատում, որ մեղքը և մեղավոր էությունը լիովին և հիմնովին չար են և անիրավ և մեր մահացու թշնամիներն են, ուրեմն մենք չենք գիտակցում, որ «ես»- ի ուրացումը պետք է լինի ամբողջական, լիարժեք և բացարձակ:** Մենք չենք աղոթի ողորմության համար և չենք ունենա սրբվելու, սուրբ կյանքով ապրելու իրական ցանկություն. չի լինի Աստծուն իրապես հնազանդվելու ձգտում:

Սրբության տանող ուղիղ ճանապարհը՝ մեզ համար Աստծո նշանակած ուղին, սպասում է մեզ: Ահա թե ինչ է այդ ուղին մեզ ցույց տալիս. «Որ դուք գնաք ինչպես արժանի է Տիրոջը՝ ամեն բանի մեջ հաճո լինելով Նրան...» (Կող. 1.10), և «Փորձեք, թե ինչ է հաճո Տիրոջը» (Եփես. 5.10): Լսենք մեզ ուղղված Աստծո ձայնը. «Դողացե՛ք և մի՛ մեղանչե՛ք. խոսե՛ք ձեր սրտերի հետ ձեր անկողիններում և լուռ կացե՛ք» (Սաղմ. 4.4): Արդյո՞ք իմ սիրտը լսում է Աստծո այս խոսքերը: Հոգին սպասում է, որ ցույց տա ինձ այն մեղքերի ամոթը և չարությունը, որ գիտակցաբար գործում եմ: «... Եթե մեկը կամենում է Իմ հետևից գալ, թող իր անձն ուրանա և իր խաչն առնի և Իմ հետևից գա» (Մատթ. 16.24): Ինչո՞ւ է Աստված ցանկանում, որ ուրանամ իմ անձը կամ «ես»- ը: Այն չափազանց մեղավոր է, չար (Հռոմ. 8.7, 7.18):

ՄՏՈՐՈՒՄ Աստծո հետ

1. Ո՞րն է մեղքի խոստովանության և սրբության կապը:
2. Ինչպե՞ս է «ես»- ի ուրացումը կապված սրբության հետ:

Սրբության էությունը

Երբ լսում ենք այս կոչը, այն ցույց է տալիս սրբության էությունը: «Ինչպես Նա է սուրբ, այնպես էլ դուք եղե՛ք սուրբ»: **Լինել սուրբ նշանակում է լինել Աստծո նման, ունենալ Աստծո նման բնավորություն, կամք, հատկանիշներ, այլ ոչ թե բարելավված մարդկային էություն:** Լինել Քրիստոսի նման նշանակում

է լինել Աստծո նման, լինել Քրիստոսի նման նշանակում է լինել սուրբ, ինչպես Աստված է սուրբ: Կոչը նաև հայտնում է սրբության գորությունը: Սրբությունն ինչ- որ բան չէ, որ անում ենք կամ ձեռ բերում: Սրբությունը Աստվածային կյանքի հաղորդումն է, Աստվածային էության ներշնչումը, հետևաբար մեզ վրա հանգչող Աստվածային Ներկայության գորությունը: Աստված է սուրբ ապրելակերպի գորությունը, հետևաբար սուրբ լինելու մեր գորությունը Աստծո կոչի մեջ է: Նա կանչում է մեզ Իր մոտ, որպեսզի մեզ սրբացնի՝ մեզ տիրելով: Նա ոչ միայն ասում է՝ «Ես սուրբ եմ», այլև՝ «Ես եմ Տերը, որ սրբում եմ»: Քանի որ սրբության կոչը գալիս է Ամենակարող Ջորության և Սիրո Աստծուց, մենք կարող ենք ունենալ վստահություն, որ կարող ենք սուրբ լինել կյանքում: Կոչը նաև հայտնում է *սրբության չափանիշը*: «*Ինչպես Նա է սուրբ, այնպես էլ՝ դուք*»: Քրիստոսն ապրեց երկրի վրա անմեղ կյանքով: Այն փրկությունը, որ Քրիստոսը բերում է, փրկություն է մեղանշումից: Չկա սրբության մեկ չափանիշ Աստծո համար և մեկ այլ չափանիշ՝ մարդու համար: Տեր Հիսուսն ասաց և ղչ պակաս ակնկալում է. «Արդ դուք կատարյալ եղեք, ինչպես ձեր Հայրը, որ երկնքում է, կատարյալ է»: Երբ Աստված կանչում է մեզ սրբության, կանչում է Իր մոտ և Իր կյանքի մեջ, որն է՝ Քրիստոսը մեզ նում՝ փառքի հույսը: Սրբությունը մարդկային չէ, այլ բացառապես և բացարձակապես աստվածային:

Կոչը նույնպես ցույց է տալիս մեզ սրբության տանող ճանապարհը: Եկեք լսենք Աստծուն, **որովհետև կոչը աստվածային գորությամբ գործում է այն, ինչ առաջարկում է:** Նա կանչում է մեզ դեպի Քրիստոսը՝ տեսնելու և հիանալու Նրա Սուրբ կյանքով, ցանկանալու և ընդունելու այն ամենը, ինչ մեզ համար է Նրանում: Նա մեզ կանչում է դեպի Սրբության Հոգու բնակարանը և ուսուցումը: Նա կոչ է անում անձնատուր լինելու, որպեսզի համոզի և ներշնչի մեր մեջ այն, ինչ մերն է Քրիստոսի մեջ՝ մերքի նկատմամբ հաղթանակի կյանքը: Հավատացյալ, լսեք Աստծուն, որ կանչում է ձեզ սրբության: Եկեք և սովորեք Քրիստոսից, թե ինչ է Նրա սրբությունը, և ինչ է ու ինչ պետք է լինի ձեր սրբությունը: Այո, լռեք և լսեք: Աստված կանչում է ձեզ սրբության, կանչում է Իր մոտ: Թող ձեր հոգին պատասխանի. «Ահա ես, Տեր: Խոսի՛ր, Տեր, ցույց տուր Քեզ, Տեր: Ահա ես»: Երբ ականջ դնեք, Գողգոթայից ձայն կլսեք, մեղմ ձայնն ավելի ուժգին կհնչի. «Սուրբ եղեք, ինչպես Ես եմ սուրբ: Սուրբ եղեք, որովհետև Ես սուրբ եմ»: _

Աստծո՞ զավակ, երբևէ գիտակցե՞լ եք, որ մեր Հայրը կանչում է մեզ Իր մոտ, որպեսզի սուրբ լինենք, ինչպես Ինքն է սուրբ: Միթե

չպետք է խոստովանենք, որ մեզ համար երջանկությունն ավելին է եղել, քան սրբությունը, որ ազատագրումներն ու բժշկություններն ավելին են եղել, քան սրբացումը: Չափազանց ուշ չէ սխալն ուղղելու համար: Այժմ եկեք միանանք և լսենք այն ձայնը, որ կոչ է անում մոտենալու և հայտնաբերելու ու իմանալու, թե ինչ է սրբությունը, կամ, ավելի շուտ, պարզելու, **հայտնաբերելու և ապրելու Իրեն՝ Քրիստոսին՝ որպես մեր սրբության**: Հաճախակի մենակ մնացեք Աստծո հետ: Երբ սրտի խոր լռությամբ անձնատուր լինենք՝ Սուրբ Ձայնը լսելու, այն մեր ներսում կարթնացնի նոր ցանկություն և ուժեղ հավատք, որ Աստված կիրականացնի Իր կոչումը և նպատակը մեզ համար: «**Հավատարիմ է Նա, որ կանչեց ձեզ, որ կանի էլ**»:

ՄՏՈՐՈՒՄ Աստծո հետ

1. Ո՞րն է սրբության էությունը:
2. Ո՞րն է սրբության զորությունը:
3. Ի՞նչ է սրբությունը:
4. Լսել եք Աստծո ձայնը, որ կոչ է անում ձեզ. «Սուրբ եղեք, ինչպես Ես եմ սուրբ: Սուրբ եղեք, որովհետև Ես սուրբ եմ»: Ինչպե՞ս եք վերաբերվում սրան: Հավատո՞ւմ եք, որ սա հասնելի է ձեզ:

Սրբություն և սրբվել

«Արդ այսպիսի խոստումներ ունենալով, սիրելիներ, մեր անձերը սրբենք հոգու և մարմնի ամեն պղծությունից, սրբությունը կատարենք Աստծո ահով» (Բ Կորնթ. 7.1):

Մեղքից սրբվելը միշտ պետք է պատրաստի ճանապարհ, որը տանում է դեպի սրբություն:

Պողոս առաքյալը խոսում է երկակի՝ մարմնի և հոգու պղծության մասին, որից պետք է մաքրվենք: «Մեր անձերը սրբենք» արտահայտությունը ցույց է տալիս մեր պատասխանատվությունն այս հարցում, այն վերաբերում է սրբվելու գործում մասնակից լինելու մեր պատրաստակամությանը: Այս երկուսի՝ մարմնի և հոգու կապն այնքան սերտ է, որ յուրաքանչյուր մեղքի մեջ երկու պղծությունն էլ կա: **Մարմնի ամեն պղծության աղբյուրը կամայականությունն է**

և ինքնահաճեցումը, իսկ հոգու ամեն պղծության արմատը շահասիրությունն է: Ինչ վերաբերում է Աստծուն, դա արտահայտվում է կռապաշտությամբ, որը կարող է դրսևորվել ուրիշ աստվածների պաշտելով, աշխարհն Աստծուց ավելի շատ սիրելով կամ ոչ թե Նրա, այլ մեր կամքը կատարելով: Ինչ վերաբերում է մեր մերձավորներին, դա արտահայտվում է նախանձով, ատելությամբ և սիրո պակասով, ուրիշներին չընդունելով, խստորեն դատելով կամ սառն արհամարհանքով: Ինչ վերաբերում է մեզ, դա արտահայտվում է հպարտությամբ, փառասիրությամբ կամ նախանձով, ինքնակենտրոնացմամբ, այնպիսի բնավորությամբ, որը «ես»-ը դարձնում է կենտրոն, որի շուրջը պետք է պտտվեն բոլորը, և որով պետք է դատվեն բոլորը:

Միայն մեկ ճանապարհ կա մեղքը սրբելու համար՝ խոստովանություն և ապաշխարություն Աստծո առջև: Սիրելի՛ հավատացյալ, ձեր սրտի խորքից հանեք ամեն անմաքրություն, բերեք այն Աստծո լույսի մեջ, խոստովանեք, ապաշխարեք և նետեք այն Նրա ոտքերի մոտ. Նա հեռացնում է դա և մաքրում է ձեզ Իր արյունով: Հավատքով, Քրիստոսի զորությամբ՝ որպես ձեր զորության, անձնատուր եղեք կատարյալ դարձնելու սրբությունը, որին կանչված եք: Ինչպես ձեր Հայրը երկնքում կատարյալ է, հանձնվեք Նրան որպես փոքրիկ երեխա՝ կատարյալ լինելու նաև ձեր առօրյա դասերում և առօրյա կյանքում: Հավատացեք, որ ձեր անձնատուր լինելն ընդունված է, ձեր հսկողությունը հանձնված է Աստծուն: Փանք տվեք Նրան, որ կարող է անել ամեն բանից ավելի, քան կարող եք խնդրել կամ մտածել: «Սուրբ եղեք, ինչպես Ես եմ սուրբ»:

Աստծո բնակությունն է մեր մեջ սրբացնում մեզ: Այն տալիս է մեզ ոչ միայն շարժառիթ, այլև քաջություն և ուժ՝ սրբությունը կատարյալ դարձնելու համար: **Ինչպե՞ս: Նրան անձնատուր լինելով, որպեսզի Նա տիրի մեզ** կատարելապես, լիովին և բացառապես: **Մենք պետք է հավատանք**, որ մեր երկնային Հայրը, Քրիստոսի կյանքը դնելով մեր ներսում, Քրիստոսին ձևավորելով մեր մեջ և Քրիստոսին բնակեցնելով մեր մեջ, ավարտին կհասցնի սրբությունը: Այս ամենին հավատալը կհայտնի մեզ սրբությանը հասնելու գաղտնիքը: «Արդ այսպիսի խոստումներ ունենալով, սիրելիներ», այսինքն՝ իմանալով և հավատալով դրանց, ապրելով դրանցով, հավատքով պահանջելով և ձեռք բերելով դրանք, եկեք «սրբությունը կատարենք» (կատարյալ դարձնենք):

Այս հավատքը սրբության ներքին կյանքի աճի զորության գաղտնիքն է: Բայց կան արգելքներ, որոնք սահմանափակում և

կանխում են այս աճը: Դրանց նկատմամբ պետք է ուշադիր լինել, և դրանք պետք է հեռացնել: «Արդ այսպիսի խոստումներ ունենալով, սիրելիներ, մեր անձերը սրբենք հոգու և մարմնի ամեն պղծությունից, սրբությունը կատարենք Աստծո ահով»: **Ամեն պղծություն՝ արտաքին թե ներքին, վարքում թե հակումներում, ֆիզիկական թե հոգևոր կյանքում, պետք է խոստովանվի և մաքրվի, հանձնվի խաչին և հեռացվի:** Հետևում եք այս ճշմարտությանը գործողության մեջ: Ամբողջ օրն ապրում եք Հիսուսի խաչին հանձնված: Սրբվել արյունով, սրբվել խոսքով, ուրանալ եսապաշտ կյանքը, խաչել մարմինը. մենք պետք է սրբվենք և սրբացվենք և մահանանք մեղքին: **Տիրոջ երկյուղով ամեն մեղք պետք է կտրվի և դուրս նետվի. ամեն կասկածելի կամ պիղծ բան պետք է հեռացվի. շունչը, մարմինը և հոգին պետք է պահպանվեն ամբողջական և անբիծ:** Այսպես ամեն պղծությունից սրբվելով կատարյալ կդարձնենք սրբությունը. սրբության Հոգին կլցնի Աստծո տաճարը Իր սուրբ ներկայությամբ և զորությամբ:

ՄՏՈՐՈՒՄ Աստծո հետ

1. Ինչպես է պղծությունը դրսևորվում Աստծո և մարդկանց հետ հարաբերություններում:
2. Ինչպես է պղծությունը դրսևորվում մեր բնավորության և մտածելակերպի մեջ:
3. Ինչն է մեզ սուրբ դարձնում: Բացատրե՛ք:

Աղոթք. «Տեր, ինչպես կարող ենք ճանաչել Քո սրբությունը, մինչև չհայտնես մեզ: Աղոթում ենք, որ ցույց տաս, թե որքան Սուրբ ես Դու, որն է Քո սրբությունը, որպեսզի մենք էլ իմանանք, թե ինչպես պետք է լինենք սուրբ, որքան սուրբ պետք է լինենք: Տեր, թող մեր կյանքը լինի այնպիսին, ինչպիսին Դու կարող ես դարձնել այն: Սուրբ Հայր, ծնկի եմ իջնում Քո առջև խոնարհ երկրպագությամբ և լուռությամբ: Այժմ թող Քո ծայնը հնչի իմ սրտի խորքում՝ կոչ անելով. «Սուրբ եղեք, ինչպես ես եմ սուրբ»: Հատկապես աղոթում եմ, որ իմ Աստված, որ զորությամբ կատարյալ դարձնես «ես»- ից բաժանումը: Թող Քո ներկայությունն իմ Տեր Հիսուսի բնակությանը լինի այն զորությունը, որ «ես»- ին վտարում է գահից: Ես նողկանքով շրջվել եմ դրանից, որ իմ Հայր, հայտնի՜ր Քո Որդուն ամբողջությամբ իմ մեջ: Միայն Նրա գահակալությունն իմ սրտում կարող է պահպանել ինձ որպես Քո սեփականություն, քանի որ Նա է զբաղեցնում իմ «ես»- ի տեղը:

Տէր, տո՛ր ինձ շնորհք իմ առերևույթ կյանքում, որպեսզի սպասեմ Աստվածային իմաստության, որ կարողանամ վկայել Քո փառքի և այն ամենի մասին, ինչի կարիքը մարդիկ ունեն: Տէր, թո՛ղ ճանաչեմ Քեզ համար ամեն բանից լիովին հրաժարվելու երանությունը, այն բաժանումը, որը չի պահում ոչինչ՝ Քոնը և միմիայն Քոնը լինելու համար»:

Գլուխ 16. Սրբությունը և Քրիստոսի ներբնակությունը

Այս գլուխն անդրադառնում է հետևյալ թեմաներին՝ մարդու դերը սրբության մեջ, Աստծո դերը սրբության մեջ, Քրիստոսի լիութունից ստանալը և Աստծո ներկայությունը, որ սրբացնում է:

Սրբությունն արտահայտում է Աստծո բուն էությունը

Սրբությունը հենց Աստծո կատարելությունն է: Սրբությունը միայն Նրանն է. «Տիրոջ պես սուրբ չկա...» (Ա Թագ. 2.2): «Տերն է թագավոր. ժողովուրդները թո՛ղ շփոթվեն. Նա նստում է քերովբենների վրա, թո՛ղ երկիրը շարժվի: Տերը մեծ է Սիոնում, և Նա բարձր է ամեն ժողովուրդների վրա: Թո՛ղ օրհնեն Քո մեծ և ահավոր անունը, որ սուրբ է» (Սաղմ. 99.1- 3): «...տեսա Տիրոջը՝ բարձր և վերացած աթոռի վրա նստած... Սերովբենները կանգնած էին Նրանից վերև... Եվ մեկը կանչում էր մյուսին և ասում. «Սո՛րբ, Սո՛րբ, Սո՛րբ է Ձորաց Տերը. բոլոր երկիրը լիքն է Նրա փառքով»» (Ես. 6.1-3): Այսպիսով՝ մեր սրբությունը ընկղմվում է Նրա անշոշափելի, բայց մեզ անձնապես հասանելի սրբության մեջ: «...Աստված սկզբից ընտրեց ձեզ փրկության համար Հոգու սրբության և ճշմարիտ հավատքի մեջ» (Բ Թես. 2.12):

Փրկությունը պարունակում է սրբություն: Աստված պատվիրում է. «Սո՛րբ եղեք, որ Ես սուրբ եմ» (Ա Պետր. 1.15, 16): «Եվ դուք Նրանից եք Հիսուս Քրիստոսում, որ Աստծուց մեզ համար եղավ... սրբություն (անգլերենում՝ սրբացում)...» (Ա Կորնթ. 1.30): **Հիսուսը մեր սրբացումն է:** Աստված ընտրել և կանչել է մեզ ոչ միայն փրկության, այլև սրբացման և սրբության: Սա պետք է լինի քրիստոնեական կյանքի նպատակը, հատկապես Հիսուս Քրիստոսի աշակերտի համար: Աստծո՝ սրբության ծրագիրն ունի առանձին մաս մարդու համար և առանձին մաս՝ Աստծո համար: Մեր մասը ներառում է ամենօրյա մեղքերից սրբվելը և Հիսուսին կերպարանակից լինելը:

Մարդու դերը սրբության մեջ

Ամենօրյա մեղքերից սրբվելը տանում է սրբության: «...մեր անձերը սրբենք հոգու և մարմնի ամեն պղծությունից, սրբությունը կատարենք Աստծո ահով» (Բ Կորնթ. 7.1), «Եվ իմ կանոնները պահեք ու արեք նրանց. ես եմ Եհովան, որ ձեզ սրբում եմ» (Ղևտ. 20.8): «Սրբել» և «պահել» բառերն ուղղված են մեզ: Աստծո կանոնները պահելը և սրբվելու համար Նրա մոտ գնալը իմ ընտրությունն են և իմ պատասխանատվությունը: Սրբվելը բերում է մաքրություն: Մաքրությունը հանգեցնում է սրբության: **Աստծո սրբությունը բորբոքվում է կրակով և նախանձախնդրությամբ ամեն մեղքի դեմ, իմ բոլոր չխոստովանած և չապաշխարած մեղքերի դեմ** (տե՛ս գլուխ 1): «Եթե մեկն իր անձը մաքրի այդպիսիներից, նա պատվական անոթ կլինի՝ սրբված և իր Տիրոջն օգտակար՝ ամեն բարի գործերի համար պատրաստված» (Բ Տիմ. 2.21): Ուշադրություն դարձրեք. «օգտակար՝ ամեն բարի գործերի համար պատրաստված» արտահայտությունը գրված է սրբվելուց և առանձնացվելուց հետո: Մեղքն այլևս իշխանություն չունի իմ կյանքի վրա, աշխարհն այլևս իշխանություն չունի ինձ վրա: «Նույնպես էլ դուք ձեր անձերը մեղքին մեռած համարեք և Աստծուն՝ կենդանի՝ մեր Տեր Քրիստոս Հիսուսի ձեռքով» (Հռոմ. 6.11): «...Քրիստոսի հետ մեռաք այս աշխարհի սկզբունքներից...» (Կող. 2.20) (այս թեմային անդրադարձանք նախորդ գլխում): Մենք պետք է սրբենք մեր անձերը մարմնի և հոգու բոլոր աղտոտումներից՝ խոստովանելով դրանք: Սրբվելու գործում մեր դերն է մեղքերն Աստծուն հանձնելը և դրանք Հիսուսի արյունով սրբելը: **Առանց խոստովանության չենք կարող մաքրվել մեղքից**: Շատ քրիստոնյաներ համոզված չեն այս ճշմարտության մեջ: Մեր դերն է նաև չմեղանչելը. մեռած մեղքին, մեռած աշխարհին՝ «սրբությունը կատարենք Աստծո ահով» (Բ Կորնթ. 7.1): Չմեղանչելու կյանքը տրված է նոր մարդուն, նոր էությանը, որ ընդունում ենք Քրիստոսի մեջ՝ դարձի գալու ժամանակ: Երբ ճշմարտապես ընդունում ենք այդ կյանքը, ճշմարտապես հաճեցնում ենք Աստծուն:

Կերպարանակից լինել Հիսուսին: **Սա ներառում է բաժանում աշխարհի ոգուց և ճշմարիտ հնազանդություն**: Քրիստոսի մեջ մենք մեռած ենք աշխարհին և նրա իշխանությանը: «Արդ եթե Քրիստոսի հետ մեռաք այս աշխարհի սկզբունքներից, էլ ինչո՞ւ եք այս աշխարհի մեջ կենդանիների պես այսպիսի կանոններով կապվում» (Կող. 2.20): **Հիսուսին կերպարանակից լինելը տեղի է ունենում հավատքով նոր մարդուն կամ նոր էությանը ամեն օր յուրացնելու միջոցով**: Սա պետք է անենք ամեն վայրկ-

յան և ամեն օր: Շատերն ընդունում են Հիսուսին կերպարանակից լինելը, բայց գործի չեն դնում այն ամբողջ օրը՝ վայրկյան առ վայրկյան: Սա ապացուցում է, որ նրանք չեն հասկանում Քրիստոսին կերպարանակից լինելու անհրաժեշտությունը: Շնորհքի աստվածային զորությունը պետք է յուրացվի ամեն օր Քրիստոսին կերպարանակից լինելու համար: Զորությունը չի կարող պահվել ապագա գործածության համար. այն չի տրվում մեկ անգամ և ընդմիջտ: Հիսուսին կերպարանակից լինելը կախված է սրբացումից կամ բաժանումից՝ մեղքից, աշխարհից և մարմնից բաժանումից: «...Ես եմ Եհովան՝ ձեր Աստվածը, որ որոշեցի ձեզ ազգերից: Եվ դուք սուրբ պիտի լինեք Ինձ համար, որովհետև ես՝ Եհովաս, սուրբ եմ և ձեզ որոշեցի ազգերից, որ Իմը լինեք» (Ղևտ. 20. 24, 26): «Քրիստոսն էլ սիրեց եկեղեցուն և Իր անձը մատնեց Նրա համար, որ Նրան սրբացնի՝ մաքրելով...» (Եփես. 5.25, 26) (բաժանման թեման կուսումնասիրենք հաջորդ գլխում):

ՄՏՈՐՈՒՄ Աստծո հետ

1. Ինչպե՞ս է սրբությունն իմ ընտրությունը և պատասխանատվությունը:
2. Ինչպե՞ս ենք սրբում մեր անձերը:
3. Ի՞նչ է նշանակում կերպարանակից լինել Հիսուսին: Ի՞նչ է դա ենթադրում:

Աստծո դերը սրբության մեջ

Այն կենտրոնանում է Քրիստոսի հետ հավատացյալի հոգևոր միության վրա: Աստծո Խոսքը վկայակոչում է հավատացյալին՝ որպես «Հիսուս Քրիստոսում սրբվածի» (Ա Կորնթ. 1.2), և «սուրբերի Քրիստոս Հիսուսում» (Փիլիպ. 1.1): Խոսքը հոչակում է, որ «Հիսուսն է մեր (սրբացումը և) սրբությունը» (Ա Կորնթ. 1.30): Ի՞նչ է սա նշանակում գործնականում: Ինչպե՞ս է սա գործում: Քրիստոսի սրբությունը դառնում է մերը Նրա հետ միությանը, հավատքով և ամեն օր դրանով ապրելով: Սովորաբար մենք այս ճշմարտությունը հասկանում և ապրում ենք աստիճանաբար: Մենք խոսեցինք Քրիստոսի հետ միության մասին նախորդ գլուխներում: Այստեղ այն կսփացնենք սրբության հետ: Նախևառաջ պետք է լինի սուրբ կյանքով ապրելու իրական ցանկություն: Քրիստոսի մեջ մնալը բերում է այս ցանկությունը: Եթե դուք իս-

կապես հոժարական լինեք (ուրանալու կամայականությունը) և պատրաստ լինեք գին վճարելու (սպանելու եսապաշտ կյանքը), Հոգին կպատրաստի ձեզ դրա համար:

Ակտիվորեն և ամեն օր հավատացե՛ք, որ Քրիստոսն Ինքը ձեր սրբությունն է, որ Քրիստոսի մեջ դուք ստանում եք Նրա լիությանից: «Եվ Նրա լիությունից մենք ամենքս առանք շնորհք շնորհքի տեղ» (Հովհ. 1.16): Այս սուրբ կյանքը նոր էության մեջ է, որ ունենք Քրիստոսի մեջ, **մենք այն ստանում ենք Քրիստոսի հետ միության միջոցով խաչի վրա Նրա մահվամբ**: Որպեսզի ստանամ այն, ինչ պատրաստված է ինձ համար Նրա լիության մեջ, ինձ անհրաժեշտ է հավատք՝ խաչի վրա իմ միությունն ընդունելու համար: Մենք խորապես պետք է համոզվենք, որ Քրիստոսն է ամբողջովին և միայն մեր սրբությունը (ինչպես որ Նա է մեր արդարացումը), և որ Նա իրապես և զորավոր կերպով կգործի մեր մեջ այն, ինչ հաճելի է Աստծուն, երբ հնազանդվենք և մնանք Նրա մեջ: **Մեր գործն է հավատալ**: Քրիստոսն իրապես և զորավոր կերպով կներգործի սրբությունը մեր մեջ, եթե միայն չսահմանափակենք Նրան սուրբ լինելու մեր ջանքերով: Սեփական ջանքերով գործելու ոգին մարմնի ոգին է, որ լիովին չար է: **Սուրբ Հոգին մեզ է հաղորդում Հիսուսի սուրբ կյանքը՝ կիրառելով մահը մեր հին էության մեջ**: Քրիստոսը բերում է սրբություն իմ կյանքի մեջ Իր խաչի վրա միության միջոցով: Սակայն այն ընդունելը և նրանով ապրելը երկու տարբեր բաներ են: Ես Աստծո շնորհքի կարիքն ունեմ երկուսի համար էլ. իմ կարիքը չափազանց մեծ է:

Ստանալ Քրիստոսի լիությունից

Ինչն է, որ կարիք ունեմ ստանալու Նրա լիությունից: «...և դուք սիրով արմատ գցած և հաստատված լինեք (անգլերենում՝ նաև ունենաք զորություն): Որ ամեն սուրբերի հետ իմանաք, թե ինչ է լայնությունը և երկայնությունը և բարձրությունը և խորությունը: Որ ճանաչեք Քրիստոսի սերը, որ ամեն գիտությունից գերազանց է, և որ Աստծո ամեն լիությունով լցվեք» (Եփես. 3.17-19): Ուշադրություն դարձրեք, որ սկզբում ասվում է, որ սիրով արմատ գցած և հաստատված լինեք, այնուհետև՝ ստանաք զորություն: Դրանից հետո գրված է, որ հասկանաք ազապես սիրո խորությունը: Ո՞րն է ազապես սիրո խորությունը ճանաչելու արդյունքը. «որ Աստծո ամեն լիությունով լցվեք»: Լիությունը պետք է ներառի սրբություն, որովհետև Աստված ասում է, որ առանց սրբության ոչ ոք չի կարող տեսնել Իրեն: Ահա մի կար-

ևոր կետ. մեզ ասվում է հասկանալ միայն ՍԻՐՈ (ո՛չ զորության կամ իմաստության կամ որևէ այլ բանի) երկարությունը, լայնությունը, բարձրությունը և խորությունը: Ինչո՞ւ Աստված ընտրեց միայն Սերը: Հնարավոր է, որ Նրա լիության վերաբերյալ հիմնական կամ գլխավոր բանը ազապե սերն է, և մնացած ամեն բան բխում է դրանից: Ես այդպես եմ կարծում, որովհետև «Եթե մարդկանց և հրեշտակների լեզուներով խոսեմ, բայց սեր չունեմ, ես եղա ձայն հանող պղինձ (նյարդայնացնող շեղում) կամ հնչող ծնծղա: Եվ եթե մարգարեություն ունենամ և գիտենամ ամեն խորհուրդները և ամեն գիտությունը և եթե ամեն հավատքն ունենամ՝ մինչև սարերն էլ տեղափոխելու, բայց սեր չունեմ, ոչինչ եմ» (Ա Կորնթ. 13.1, 2):

Այսպիսով՝ ո՞րն է ազապե սիրո և սրբության կապը: **Սրբությունն առաջանում է իմ մեջ ապրող ազապե սիրուց:** Եթե կա ազապե սեր, կա ճշմարիտ սրբություն: Եթե չկա ազապե սեր, չկա ճշմարիտ սրբություն: Սուրբ կյանքն անկեղծորեն ցանկանալու և կամենալու կարողությունն առաջանում է Աստծո սիրո լիությունն ավելի ու ավելի շատ հասկանալուց, և սա առնչություն պետք է ունենա իմ երկրային կյանքի հետ: Արդյո՞ք տեսնում եմ սա որպես իրական կարիք իմ սրտում և կյանքում: Որքան համոզված եմ իմ կարիքի հարցում: Որովհետև սա կորոշի, թե որքան կընդունեմ նրանից, ինչ լիովին տրված է ինձ Քրիստոսի լիության մեջ: Ճշմարիտ ընդունումը հանգեցնում է Աստծուն ճշմարիտ հաճեցնելու՝ ճշմարիտ սիրով և սրբությամբ ապրելու:

Ես պետք է հավատամ, հետևաբար և խորապես համոզվեմ, որ Քրիստոսն է ամբողջովին և միայն իմ սրբությունը և ոչ թե ես կամ իմ հոգևոր էությունը: Քրիստոսն իրապես և հզոր կերպով կգործի իմ մեջ այն, ինչ հաճելի է Աստծուն՝ սրբություն և սեր: Այս հավատքով և միմիայն հավատալով ես պետք է իմանամ, որ ունեմ բավականաչափ զորություն սրբության համար (որ գալիս է Քրիստոսի հարատև Սիրուց), և իմ գործն է ամեն օր հավատքով խնդրել և ընդունել Նրանից այս սրբության զորությունը: Սրան հավատալը հեշտ չէ, որովհետև դա նշանակում է չհավատալ «ես»- ին: Ես պետք է ստանամ սիրո և հնազանդության զորություն ամեն վայրկյան և ամեն օր: «...Ես Քրիստոսի հետ խաչված եմ: Եվ կենդանի եմ, ոչ թե այլևս ես, այլ Քրիստոսն է կենդանի ինձանում, և ինչ որ հիմա կենդանի եմ մարմնով, Աստծո Որդու հավատքով եմ կենդանի...» (Գաղ. 2.19, 20): «Ամեն բան կարող եմ ինձ զորացնող Քրիստոսով» (Փիլիպ. 4.13): Պատրաստ եք այս խոսքերը՝ «Քրիստոսն է ապրում իմ մեջ» և «Ամեն բան կարող եմ

Նրանով», կիրառելու սրբության մեջ: Այլևս ես չեմ ապրում, այլ Քրիստոսի սրբությունն է ապրում իմ մեջ, բայց սա կատարվում է ամեն օր եսապաշտ կյանքի նկատմամբ մահ կիրառելով: Եկեք վախենանք սեփական մտքերից և խաչենք սեփական իմաստությունը: Եկեք հրաժարվենք մեզնից, որպեսզի զորությամբ ընդունենք Քրիստոսին՝ որպես մեր սրբության, որպես մեր սիրո:

ՄՏՈՐՈՒՄ Աստծո հետ

1. Ունե՞ք իրական ցանկություն սրբության համար: Հայտնե՞ք այն Աստծուն:
2. Ո՞րն է Աստծո դերը սրբության մեջ: Ի՞նչ եք կարծում:
3. Ո՞րն է ազապե սիրո խորությունը ճանաչելու արդյունքը:
4. Ո՞րն է ազապե սիրո և սրբության կապը: Բացատրե՞ք:

Ավելի շատ հայտնություններ սրբության մասին

Մենք կքննարկենք երեք խոշոր հայտնություններ Աստծո մասին: 1) Աստված ասում է. «Ես սուրբ եմ», 2) «Սուրբ եղեք», և 3) «Դուք սուրբ եք Քրիստոսում»:

1) Հայտնություն Աստծո մասին - «Ես սուրբ եմ»: Ինչպես քննարկեցինք վերևում, սրբությունն արտահայտում է Աստծո բուն էությունը՝ Նրա կատարելությունը: Սրբությունը միայն Նրանն է. «Տիրոջ պես սուրբ չկա»: Եթե կա սուրբ Աստված, կա սրբություն: Եթե կա ճշմարիտ սրբություն, կա Աստված: Եթե ես պետք է իմանամ, թե ինչ է նշանակում «Սուրբ», Աստված պետք է հայտնի իրեն, որովհետև միայն Աստված է սուրբ: Ես ինքս չեմ կարող իմանալ, թե ինչ է ճշմարիտ սրբությունը: Եթե հետամուտ լինեմ դրան, Աստծո հայտնությունը ցույց կտա իմ էության խոր անսրբությունը: Ես չեմ կարող հասկանալ Աստծո սրբությունը, մինչև առաջին հերթին չհասկանամ իմ հին էության (եսապաշտ կյանքի) չափազանց չար մեղավորությունը: «...մեղքն **ավելի ևս մեղավոր լինի** պատվիրանքի ձեռքով» (Հռոմ. 7.13): Սկզբնական իմացությունը մեղավորության մասին պետք է աճի և զարգանա և դառնա չափազանց մեղավոր ինձ համար: Ես կարիք ունեմ և հայտնության միջոցով պետք է հասկանամ իմ «ես»- ի չափազանց մեղավորությունը և ընդունեմ, որ այն իրական է և գոյություն ունի իմ եսապաշտ կյանքում: Ես կարիք ունեմ փնտրելու այս

հայտնությունը և հանդիմանությունը Հոգուց: Եթե սա ընդունվի և տեսանելի լինի ոչ թե այն մարդու սրտում, որը ապաշխարություն է վերապրում (վերստին ծնվում), այլ հավատացյալի, որը փնտրում է սրբություն, ապա նրա արձագանքը նման կլինի Եսայիի արձագանքին. «Եվ ես ասացի. «Վայ ինձ, որովհետև կորած եմ, որովհետև ես պիղծ շրթունքով մարդ եմ, և ես պիղծ շրթունքով ժողովրդի մեջ եմ բնակվում, և իմ աչքերը տեսան Ջորաց Տեր (Սուրբ) Թագավորին» (Ես. 6.5):

Հանդիմանության ներքո ես պետք է խոստովանեմ, թե ինչ է իմ սիրտը բացահայտել: Խոստովանեմ, թե որքան անհամապատասխան եմ Աստծո հայտնությունների համար, որքան անհամապատասխան եմ Նրա Սուրբ հաղորդակցության համար: Ես ունեմ հուսահատ կարիք, և ես պետք է հետամուտ լինեմ դրա բավարարմանը: Փնտրեք սուրբ հաղորդակցություն Աստծո մաշող կրակով սրբվելու և խաչի վրա ամեն օր մահանալու կյանքի միջոցով, որը հասանելի է դառնում Քրիստոսի հետ միության շնորհիվ: Աստծո ավելի խոր հայտնությունները սրբության կյանքի մասին կապված են այս ճշմարտության հետ: Ես չեմ կարող հասկանալ Աստծո սրբությունը, մինչև առաջին հերթին չհասկանամ իմ էության (եսապաշտ կյանքի) չափազանց չար մեղավորությունը: Սա այն քայլն է, որից խուսափում ենք: Սրբությունը բարոյական կատարելագործում չէ, որ ավելացնում եմ իմ կյանքին: Դա Աստծո կյանքն է, որով պետք է ապրեմ:

2) Պատվիրան. «Սուրբ եղեք, որ Ես սուրբ եմ»: Եթե իմ կյանքում տեսնում եմ սրբության կարիքը, այս պատվիրանը պետք է զբաղեցնի առաջին տեղը իմ սրտում և կյանքում: Արդյո՞ք իմ կյանքում տեսնում եմ սրբության, այլ ոչ թե բարոյական կատարելագործման կարիք: Արդյո՞ք այս կարիքը դիպչում է իմ սրտին և իմ մտքին: Համաձայն Աստծո՝ սուրբ կյանքով ապրելու ճանապարհն ունի երկու պահանջ. (1) մենք կարիք ունենք տեսնելու մեր հոգևոր աղքատությունը և այն, որ սրբության հասնելու մեր փորձերը կեղտոտ լաթեր են, (2) մենք պետք է վերջ տանք մեր իմաստությանը և բարությանը սուրբ կյանքով ապրելու հարցում: Հիշեք, որ սրբությունն Աստծո ազապե սիրո՝ անվերապահ, անձնատուր սիրո կյանքի արտահայտումն է, որն ապրում է մեր մեջ՝ ոչ միայն ուրիշներին վկայելու, այլև նրանց ծառայելու, աստվածային խոնարհությամբ անձնատուր լինելու համար: Սիրելի՛ Քրիստոսի աշակերտ, սա է այն կոչումը, որ դուք ստացել եք. Աշակերտներ պատրաստեք:

Եկեք մոտենանք Աստծուն, և թող Սուրբ Հոգին ցույց տա, թե

մարդկային գիտությունից կամ զորությունից որքան բարձր է այն սրբությունը, որ Աստված պահանջում է մեզնից. դա մի կյանք է, որ Աստված պատրաստեց մեզ համար Քրիստոսի մեջ: Աստված մեզնից խելամիտ արձագանք է սպասում: Երբ մեր սրտերն անջատվեն «ես»-ից և չունենան վստահություն մարմնի նկատմամբ, Աստված ցույց կտա այն սրբությունը, որին Նա կանչում է մեզ, և կշնորհի այն մեզ: Սրբությունը նոր էությունն է՝ Քրիստոսն իմ մեջ:

3) «Դուք սուրբ եք Քրիստոսում»: Խոսքը հռչակում է, որ «Հիսուսն է մեր սրբացումը և սրբությունը» (Ա Կորնթ. 1.30): Քրիստոսն Ինքն է ձեր սրբությունը: Քրիստոսի սրբությունը դառնում է մերը հավատքով՝ Նրա հետ միությանբ: Ես օրեցօր հավատքի կարիք ունեմ, որպեսզի ընդունեմ իմ միությունը խաչի վրա: Նվիրաբերեք ձեր անձը, որպեսզի լինեք Աստծո մեջ: Մնացե՛ք Քրիստոսի մեջ: Աստծո պատկերով և նմանությամբ լինելն առաջին հերթին վերաբերում է սրբությանը: Որովհետև Աստված սուրբ է, այն վայրը, որտեղ Նա բնակվում է, նույնպես սուրբ է (դառնում): **Աստծո բնակությունը կամ ներկայությունը սրբացնում է**, ինչպես վառվող մորենին: Մենք պետք է նվիրաբերենք մեր անձերը Նրա լիարժեք ներբնակության համար, առանձնահատուկ կերպով հանձնվենք և լիովին ներկայանանք որպես Աստծո բնակարան: **Աստված պետք է տիրի ինձ ամբողջությամբ, այլապես սրբություն չի կարող լինել**: Իմ իրական խնդիրը «պետք է» և «ամբողջությամբ» բառերն են, դրանք չեն մտնում իմ սրտի մեջ, որովհետև ես դեռևս բարիք եմ տեսնում իմ եսապաշտ կյանքի մեջ, ուստի դեռևս տեղ եմ տալիս եսապաշտ կյանքին, որպեսզի այն գոյատևի և ուղղորդի ինձ: Եսապաշտ կյանքը լի է եսասիրությամբ և հպարտությամբ, որոնք մենք չենք տեսնում, բայց Աստված տեսնում է: «Այլ ձեզ կանչող Սուրբի պես դուք էլ սուրբ եղեք ձեր քուրք վարքերում, որովհետև գրված է. «Սուրբ եղեք, որ ես սուրբ եմ»» (Ա Պետր. 1.15, 16): «Որովհետև այսպես է ասում Բարձրը և Բարձրյալը, հավիտենականության մեջ բնակվողը, որի անունը Սուրբ է. «Ես բնակվում եմ բարձրում և սուրբ տեղը, բայց լինում եմ կոտրած և խոնարհ հոգի ունեցողի հետ...»» (Ես. 57.15): Եսասիրությունը, հպարտությունը և եսակենտրոնացումն ավելանում են մեր էության մեջ և ցույց են տալիս իրական հոգևոր աղքատությունը: Հոգևոր աղքատությունը և աննշանությունը կացարան են գտնում կոտրած և խոնարհ սրտում (տե՛ս 12-րդ և 14-րդ գլուխներ): Գործնականում «ոչ թե ես, այլ Քրիստոսն է ապրում իմ մեջ» ճշմարտության փորձառությունը կախված է նրանից, թե որ էությունն է տիրում ինձ ամեն վայրկյան՝ հի՛ն, թե՛ նոր:

Աստծո ձայնը դեռ արձագանքում է և կշարունակի արձագանքել մինչև ժամանակների վախճանը՝ «Սուրբ եղեք, որովհետև ես սուրբ եմ», և Նա խոստանում է. «...և դուք սուրբ լինեք, որովհետև ես սուրբ եմ: ...Ես՝ Եհովաս, որ ձեզ սրբում եմ, սուրբ եմ» (Ղևտ. 11.45, 21.8):

Աստծո ներկայությունը սրբացնում է

«Եվ Ինձ համար մի սրբարան շինեն, որ իրենց մեջ բնակվեն» (Ելից 25.8): «...խորանը Իմ փառքով սուրբ կլինի: Եվ Իսրայելի որդիների մեջ կբնակվեմ և նրանց Աստված կլինեմ» (Ելից 29.43, 45): Քանի որ Աստված սուրբ է, այն տունը, որտեղ Նա բնակվում է, նույնպես սուրբ է: Որտեղ Նա բնակվում է, պետք է լինի սրբություն, **Նրա բնակությունը սրբացնում է:**

Միայն Աստծո՝ մեր մեջ բնակվող ներկայությունն է մեզ սրբացնում: Որքան մոտ է ներկայությունը, այնքան մեծ է սրբության աստիճանը: Ներկայությանը մոտ լինելը կախված է նրանից, թե որքան հեռու է մարմինը մեր կյանքից: Մարմինը պետք է մնա խաչին, սա կատարվում է ամեն վայրկյան, ոչ թե մեկընդմիջտ: Ամեն անմաքրություն պետք է հեռացվի մեր կյանքից, և սա պետք է կատարվի ամեն վայրկյան՝ ըստ անհրաժեշտության: Մենք չենք հանձնվում այս սրբման գործընթացին, որ պետք է տեղի ունենա ամեն վայրկյան, որովհետև չենք ճանաչում և չենք ասում մեր մեղքերը, մեր մարմինը: Որքան շատ է Աստծո ներկայությունը, այնքան շատ է ճշմարիտ սրբությունը. կատարյալ բնակությունը կբերի կատարյալ սրբություն: Մենք ունենք միայն այնքան սրբություն, որքան Աստծուն ունենք: **Քայց Նրան իսկապես և լիովին ունենալու համար պետք է Նրան ունենանք որպես Մշտական բնակչի:** Մենք մշտապես կգտնենք Նրան այն նոր էության մեջ, որ ունենք Քրիստոսի մեջ: **Աստծո բնակությունը մեր մեջ Հոգով պետք է լինի մեր սրտի գիտակցական ուժգին փափագը:** Երբ այս գիտակցական փափագը և հավատքը առկա են, սիրտը հնազանդվում է այս պատվիրանին. «Եվ Ինձ համար մի սրբարան շինեն, որ իրենց մեջ բնակվեն»: Հին մարդը՝ մարմինը, պետք է ուրանալ ամեն օր, ամեն վայրկյան և փոխարենը պետք է թույլ տալ, որ ապրի և իշխի նոր մարդը՝ ստեղծված Քրիստոս Հիսուսում: Նոր մարդը Աստծո բնակարանն է: Հոգու միջոցով է սիրտը պատրաստվում Աստծո ներբնակության համար, և այս ներբնակությունը պետք է ակտիվ լինի և պահպանվի: Սա մեր աշխատանքը չէ: Մեր ջանքերը հեռու են պահում Հոգուն: Ուստի կան Աստծո ներկայությանը մոտ լինե-

լու տարբեր աստիճաններ: *Նրա ներբնակության չափը կամ, ավելի ճիշտ, այն չափը, որով Նա հայտնում է ներբնակ Քրիստոսին, որոշվում է սրբության չափով:*

Որպես հավատացյալ՝ ձեր կոչումն է լինել Աստծո Սուրբ Տաճար: Հանձնվեք Նրա լիակատար բնակությանը: *Փնտրեք սրբություն Աստծո մեջ, ոչ թե այն բանում, թե ով եք դուք կամ ինչ եք անում:* Փնտրեք այն ո՛չ որպես պարզև Աստծուց, փնտրեք այն հենց Աստծո, Նրա ներբնակ ներկայության մեջ: Երկրպագեք Նրան սրբության գեղեցկության մեջ. «Ես բնակվում եմ բարձրում և սուրբ տեղը, բայց լինում եմ կոտրած և խոնարհ հոգի ունեցողի հետ»: Խոնարհության կյանքը երկրպագության կյանք է, **խոնարհությունը սրբության գեղեցկությունն է:** Եկեք սրտի իսկական նվիրումով լիովին հանձնվենք Աստծուն, որպեսզի լինենք Բարձրյալի բնակարան, Նրա սրբության կացարան: Եկեք լինենք Նրա բացառիկ անոթը: Աստծո փառքով լցված տունը, Աստծո ամբողջ լիությամբ լցված սիրտը Աստծո խոստումն է մեզ: Դա մեր բաժինն է:

Աղոթք

Եկեք հավատքով պահանջենք, ընդունենք և ամուր բռնենք օրհնությունը: «Քրիստոս, Աստծո Սուրբ, աղոթում եմ, որ Հոր Անունով գաս և լիովին տիրես իմ սրտին և կյանքին: Հայր, ես խնդրում եմ այն, ինչի մասին խոսեց Քրիստոսը. «Նրա մոտ կգանք և բնակություն կանենք նրա մոտ, և Ինձ կհայտնեմ նրան»: Տե՛ր, շնորհի՛ր ինձ Քրիստոսի այս բնակությունը իմ սրտում հավատքով: Սրա համար աղաչում եմ, որ օժտես ինձ զորանալ Քո Հոգու զորությամբ ներսի մարդու մեջ: Ատված, թող ու աստվածային զորության հոգին զորավոր կերպով գործի իմ մեջ՝ նորոգելով իմ միտքը և կամքը և ցանկությունները, որպեսզի իմ սիրտը լիովին պատրաստվի և ներկայացվի որես տաճար, որպես տուն Հիսուսի համար: Թող Երանելի Հոգին զորացնի իմ հավատքը՝ ընդունելու Քրիստոսին և Նրա ներբնակ ներկայությունը որպես իմ սրբացում և սրբություն:

ՄՏՈՐՈՒՄ Աստծո հետ

1. «Եկեք հանձնենք մեր անձերը, որպեսզի զորությամբ Քրիստոսին ընդունենք որպես մեր սրբություն, որպես մեր սեր»:

Ինչ է այս պնդումը նշանակում:

2. «Ես չեմ կարող հասկանալ Աստծո սրբությունը, մինչև առաջին հերթին չհասկանամ իմ էության չափազանց չար մեղավորությունը»: Ինչո՞ւ: Հայտնե՞ք Աստծուն, թե ինչ եք մտածում:
3. «Համաձայն Աստծո՝ սուրբ կյանքով ապրելու ճանապարհն ունի երկու պահանջ»: Որո՞նք են դրանք:
4. Արդյո՞ք սրտի խոնարհությունը կապված է սրբության հետ: Բացատրե՞ք:
5. Արդյո՞ք սրբությունը ձեր անձի գիտակցական ուժգին փափազն է: Հայտնե՞ք դա Աստծուն:

Գլուխ 17. Սրբություն. բաժանում և հնազանդություն

«...Ես եմ Եհովան՝ ձեր Աստվածը, որ որոշեցի ձեզ ազգերից: Եվ դուք սուրբ պիտի լինեք Ինձ համար, որովհետև ես՝ Եհովաս, սուրբ եմ և ձեզ որոշեցի ազգերից, որ Իմը լինեք» (Ղևտ. 20.24, 26):

Բաժանում

Ո՞րն է այս սրբությունը, որ ես պետք է ունենամ: Քրիստոսն իմ սրբացումն է. Քրիստոսի կյանքն իմ մեջ իմ սրբությունն է: «Որ Իր առաջ փառավոր կանգնեցնի եկեղեցին, որ չունենա մի արատ կամ խորշոմություն կամ ուրիշ բաներ, որ սուրբ և անարատ լինի» (Եփես. 5.27): Քրիստոսի մեջ դուք սրբված եք. դուք սուրբ եք: Քրիստոսի մեջ դուք դեռ պիտի սրբվեք. Քրիստոսի փառքը պետք է թափանցի ձեր առօրյա կյանք:

Սրբացումը կամ զատումը Աստծո կողմից բացառիկ գործածության համար գերբնական աշխատանք է, շնորհքի աշխատանք. «Եվ Ինքը՝ խաղաղության Աստվածը, ձեզ սուրբ անի բոլորովին...» (Ա Թես. 5.23): Սա զուտ բարոյական բարեփոխում չէ: Սրբացումը նաև չպետք է շփոթել բարոյական մշակույթի կամ կարգապահության ներգործությունների հետ: Բարոյականությունը չի կարող փոխել մարդու էությունը և չի կարող կյանք հաղորդել: Մարդիկ իրենք իրենց սուրբ չեն դարձնում, և նրանց սրբությունը և աճը շնորհքի մեջ պայմանավորված չեն նրանց հոգևոր վիճակով կամ նպա-

տակի ուժով կամ զգոնությամբ և աշխատասիրությամբ, թեև այս ամենն անհրաժեշտ է: Աստծո բնակությունն է մեր մեջ սրբացնում մեզ: Դա տալիս է մեզ ոչ միայն շարժառիթ, այլև քաջություն և ուժ՝ սրբությունը կատարելու: Ինչպե՞ս: Մեր անձերը հանձնելով Նրան, որպեսզի Նա տիրի մեզ կատարելապես, լիովին և բացառապես: *Ինչ չափով եմ թույլ տալիս, որ սա տեղի ունենա իմ մեջ:* Սիրելի Քրիստոսի աշակերտ, մտորե՞ք այս հարցի շուրջ: Մենք Սուրբ Հոգու լույսի կարիքն ունենք մեր աստվածային ինքնաբացահայտման համար:

Բաժանումը սրբություն չէ, բայց սրբության փանող ճանապարհն է: Թեև առանց բաժանման չի կարող լինել սրբություն, սակայն կարող է լինել բաժանում, որը չի փանում սրբության: Թեև սուրբ լինելու գաղափարը միշտ ենթադրում է բաժանում, սրբությունն ինքնին անսահմանորեն ավելի բարձր է, ինչպես տեսանք նախորդ գլխում: Շատ կարևոր է լավ հասկանալ սա, որովհետև Աստծո համար առանձնացված լինելը, Նրան հանձնվելը սուրբ լինելու համար, Նրա ծառայությանը նվիրվելը կամ նվիրաբերվելը հաճախ շատերը վկայակոչում են որպես սրբություն: Սա ընդամենը սկիզբն է: **Սրբությունն ինքնին շատ ավելին է. սրբությունն այն չէ, թե ով եմ ես, կամ ինչ եմ ես անում, կամ ինչ եմ ես տալիս, այլ թե Ով է Աստված, և ինչ է Նա տալիս և անում իմ մեջ:** *Ինձ սրբացնում է այն, որ Աստված տիրում է ինձ, իրականում Աստծո ներկայությունն ու փառքն են, որ ինչ-որ մեկին սուրբ են դարձնում:*

Բաժանումը միայն այն անոթի առանձնացումն է և տիրապետումը, որը պետք է մաքրվի և գործածվի: Բաժանումը անոթը լցնելն է այն թանկարժեք պարունակությամբ, որը տալիս է նրան իր իրական արժեքը: Սրբությունը Աստվածային հեղումն է, առանց որի բաժանումը մեզ դատարկ է թողնում: Բաժանումն էական է սրբության համար: «Ես ձեզ բաժանեցի մյուս ազգերից, և դուք սուրբ պիտի լինեք»: Մինչև շրջապատից չընտրեմ և չառանձնացնեմ անոթ և անհրաժեշտության դեպքում չմաքրեմ այն, չեմ կարող լցնել կամ գործածել այն: Այն պետք է լինի իմ ձեռքերի մեջ, ես պետք է լիովին և բացառապես տիրապետեմ դրան տվյալ պահին, այլապես դրա մեջ չեմ լցնի ցանկալի թանկարժեք պարունակությունը:

Բաժանումը ներառում է հրաժարում մեղքից և աշխարհիկությունից: Բաժանման հոգին դրսևորվում է այն ամենի ուրացման մեջ, ինչը կարող է խանգարել Աստծո ձեռքերի մեջ մեր լիակատար հանձնվելուն՝ մեզ սրբացնելու նպատակով: Մենք պետք է

իմանանք բաժանման անհրաժեշտությունը: Այն Աստծո կամայական պահանջը չէ: Ինչ- որ բան բաժանել նշանակում է զատել այն հատուկ գործածության կամ նպատակի համար, որպեսզի այն համակ զորությամբ կատարի իրեն ընտրողի կամքը և դրանով իսկ իրականացնի իր նախասահմանությունը: Աստված ցանկանում է, որ լիովին Իրենը լինենք, որպեսզի կարողանա լիովին տալ Իրեն: Մենք պետք է իմանանք բաժանման նպատակը: Դա այն է, որ Նա դարձնի մեզ սուրբ, ինչպիսին Ինքն է: Աստված բաժանում է մեզ այն ամենից, ինչը չի առաջնորդում մեզ դեպի Իր սրբությունը և հաղորդակցությունը: Մենք նաև պետք է իմանանք բաժանման զորությունը: «Ես բաժանել եմ ձեզ ազգերից, որ Իմը լինեք»: «Իմը լինելու» հետ է կապված ազապե սիրո կարող զորության գործադրումը՝ այդ Ամենակարող Սերը հասկանալու և ձեռք բերելու համար: **Աստվածային Սերը կատարում է մեղքից բաժանելու աշխատանքը:**

Աստվածային Սերն է, որ պատվիրում է. «Դ՛ուրս եկեք և բաժանվեք»: **Այս սերը մարդուն մղում է գործողության:** Այս սերն է, որ փայլում է խոստումների վրա՝ «Ձեր Աստվածը կլինեմ», այն առաջացնում է ցանկություն և ուժեղացնում է հավատքը: Սուրբ Հոգու՝ Սրբության Հոգու զորությամբ այս սերը կնքում է բաժանումը ներքնակ Քրիստոսի ներկայությամբ: **Աստծո անվերապահ, անձնազոհ սերն է իրականում ամեն մեղքից, աշխարհիկությունից և մարմնից բաժանման զորությունը:** Ազապե սիրո բաժանող զորությունն է, որ պետք է ճանաչենք:

ՄՏՈՐՈՒՄ Աստծո հետ

1. «Սրբությունը Աստվածային հեղումն է, առանց որի բաժանումը մեզ դատարկ է թողնում»: Ի՞նչ է սա նշանակում:
2. Ի՞նչ է բաժանումը ենթադրում:
3. Ո՞րն է բաժանման և ազապե սիրո կապը:

Իսկական բաժանումը կատարվում է Աստծո սիրո ներքնակ ներկայության գիտակցությամբ, որը մեզ դարձնում և պահում է Իրենը: Սա բաժանում է աշխարհից և նրա ոգուց, ինքներս մեզնից և մեր կամքից: Աստծո սրբությունը կմտնի մեր մեջ և կտիրի մեզ միայն այն ժամանակ, երբ այս բաժանումն ընդունենք, արժ-

ևորենք և պահպանենք: Երբ փնտրենք այս բաժանումը և ապրենք դրանով, կհասկանանք, որ Աստծո սեփականությունը լինելը, Նրանը լինելը շատ ավելին է, քան Նրանը համարվելը կամ Նրանը ճանաչվելը: **Դա նշանակում է ավելին, քան այն, որ Աստված լցնում է մեր էությունը:** Սուրբ Հոգու զորությամբ և ներբնակությամբ Նա լցնում է մեր հույզերը և մեր կամքը Իր կյանքով և սրբությամբ: **Նա բաժանում է մեզ Իր համար և սրբացնում է մեզ Իր բնակարանը լինելու համար:** Նա Ինքն է գալիս, որ անձամբ տիրի մեր սրտին Քրիստոսի ներբնակությամբ: Այժմ մենք իսկապես բաժանված ենք և բաժանված ենք պահվում մեր ներսում Աստծո ներկայությամբ: Մենք չենք կարող ունենալ երկու տեր՝ ներբնակ Քրիստոսը և մարմինը: Թույլտվություն կարող է ունենալ միայն մեկը: «Ո՛վ իմ Աստված, զորությամբ կատարյալ դարձրու բաժանումը իմ մարմնից, իմ «ես»- ից»:

Բաժանումը սկսվում է սիրով և ավարտվում է սիրով: Բաժանման հոգին անձնագոհության, Աստծո սիրուն հանձնվելու հոգին է. իսկապես բաժանվածը կլինի ամենասիրառատ և սիրաշահ մեկը, ով կնվիրվի Աստծուն և մարդկանց խոնարհությամբ ծառայությանը:

Աղոթք

«Ո՛վ իմ Աստված, որ զատել ես ինձ Քեզ համար, աղաչում եմ, Քո կարող զորությամբ այս Աստվածային զատումը ճշմարտություն դարձրու ինձ համար իմ կյանքում: Թո՛ղ իմ Աստծո այս բաժանումն իրական լինի իմ հոգու խորքում և մարդկանց հետ իմ բոլոր փոխազդեցություններում: Հատկապես աղոթում եմ, ո՛վ իմ Աստված, որ զորությամբ կատարյալ դարձնես բաժանումը «ես»-ից: Թո՛ղ իմ Տեր Հիսուսի ներբնակ ներկայությունը լինի այն զորությունը, որ «ես»- ին վտարում է գահից: Իմ Հայր, հայտնի՛ր Քո Որդուն ամբողջությամբ իմ մեջ: Նրա գահակալությունն է իմ սրտում, որ կարող է պահել ինձ որպես Քոնը, քանի որ Քրիստոսն է զբաղեցնում «ես»- ի տեղը: Ամեն»:

ՄՏՈՐՈՒՄ Աստծո հետ

1. «Բաժանումը սկսվում է սիրով և ավարտվում է սիրով»: Ինչ է սա նշանակում: Համաձայն եք դրան:
2. Ինչպե՞ս է Աստծո սիրո ներբնակ ներկայությունը կապված

բաժանման հետ: Հայտներ Աստծուն, թե ինչպես է կատարվում այս բաժանումը ձեր կյանքում:

Հնազանդություն

«Եվ հիմա եթե իրավ իմ ձայնին լսեք և իմ ուխտը պահեք, այն ժամանակ դուք ինձ համար սեփական ժողովուրդ կլինեք ամեն ազգերից, որովհետև իմն է բոլոր երկիրը: Եվ դուք ինձ համար քահանաների թագավորություն և սուրբ ազգ կլինեք...» (Ելից 19.5, 6): Այստեղ Աստված խոսում է սրբության մասին՝ որպես փրկագնման իր նպատակի. «Ինձ համար սուրբ ազգ կլինեք»: Աստված միացնում է երկուսը՝ մեջտեղում դնելով հնազանդությունը. **«Եթե իրավ իմ ձայնին լսեք, այն ժամանակ դուք ինձ համար սեփական ժողովուրդ կլինեք, սուրբ ազգ կլինեք, քահանաների թագավորություն»:** Աստծո կամքը Նրա սրբության արտահայտումն է. **երբ հնազանդվում և կատարում ենք Նրա կամքը, կապ ենք հաստատում Նրա սրբության հետ:** Աստծո կամքը կատարելով՝ Աստծո ձայնը մոտեցնում ենք մեզ: Փրկագնման և սրբության կապը հնազանդությունն է: **Հնազանդությունը սրբության տանող ուղին է, որովհետև այն Աստծո սուրբ կամքին միանալու միջոցն է:**

Հնազանդությունը ոչ թե Աստծո կամքը գիտենալն է, ոչ թե այն հավանելը կամ ընդունելն է, ոչ թե այն կատարելու կամք ունենալն է, այլ այն կատարելն է: Գիտելիքը և հավանությունը պետք է հանգեցնեն գործողության. Աստծո կամքը պետք է կատարվի: «Եթե իրավ հնազանդվեք իմ ձայնին, ինձ համար սուրբ ազգ կլինեք»: Այստեղ Աստված չի խնդրում իր ժողովրդից ոչ հավատք, ոչ երկրպագություն և ոչ էլ առ Աստված հավատքի դավանություն՝ կապված սրբության հետ: Նա **հնազանդություն է խնդրում:** Աստծո կամքը պետք է կատարվի երկրի վրա, ինչպես որ երկնքում է:

Մարդու աշխատանքի մեջ է դրսևորվում նրա ով լինելը: Ես կարող եմ իմանալ, թե ինչն է լավ, սակայն չհավանեմ դա: Ես կարող եմ հավանել, սակայն չկամենալ անել դա: Ինչ- որ առումով ես կարող եմ կամենալ անել դա, սակայն կարող եմ չունենալ եռանդ կամ անձնագրհոություն կամ ուժ՝ դա անելու համար: Մտածելն ավելի հեշտ է, քան կամենալը, իսկ կամենալն ավելի հեշտ է, քան կատարելը: Միայն գործողությունն է ապացուցում, թե արդյոք իմ հետաքրքրության առարկան լիովին հափշտակել է ինձ: **Աստված ցանկանում է, որ իր կամքը կատարվի: Հնազանդությունը**

միայն սա է: Միայն գործողության մեջ է երևում, թե արդյոք սիրտն իր ամբողջ ուժով և կամքով հանձնվել է Աստծո կամքին: Միայն գործողության մեջ ենք տեսնում, թե արդյոք ապրում ենք Աստծո կամքով և արդյոք պատրաստ ենք ցանկացած զոհաբերության՝ այն կատարելու և մերը դարձնելու համար: Աստված չունի ուրիշ ճանապարհ՝ մեզ սուրբ դարձնելու համար: **«Եվ իմ կանոնները պահե՛ք ու կատարե՛ք դրանք.** Ես եմ Եհովան, որ ձեզ սրբում եմ»:

Հնազանդությունը կամ Աստծո կամքը կատարելը անորոշ և ընդհանուր չէ: Այն մշտապես որոշակի է: Անհնազանդությունը թույլատրելի չէ, այն պահանջում է Աստծո վերաբերմունքը: **Աստծո կամքը չկատարելը միշտ մեղք է, որ պահանջում է խոստովանություն և ապաշխարություն:** Ահա մեզ համար Աստծո կամքի մի կարճ ցանկ. «...Սպանություն մի՛ արա: Շնություն մի՛ արա: Գողություն մի՛ արա: Քո դրացու դեմ սուտ վկայություն մի՛ արա...» (Ելից 20.12- 17), «...հագե՛ք ... ողորմասիրտ գթածություն, քաղցրություն, խոնարհություն, հեզություն, երկայնմտություն. իրար համբերելով և իրար ներելով, եթե մեկը մյուսի դեմ տրտունջ ունենա, ինչպես Քրիստոսն էլ ձեզ ներեց, այնպես էլ դուք» (Կող. 3.12, 13), «Սերը երկայնամիտ է՝ քաղցր է. սերը չի նախանձում, չի գոռոզանում, չի հպարտանում: Չի լրբանում, իրենը չի որոնում, չի գրգռվում, չարը չի մտածում...» (Ա Կորնթ. 13.4, 5): **Հնազանդությունը, այսինքն՝ կատարելը, անհրաժեշտ է սրբության համար:**

Հնազանդությունը սրբություն չէ: Սրբությունը շատ ավելի բարձր է, այն մի բան է, որ Աստծուց է տրվում մեզ, կամ, ավելի ճիշտ, մի բան, որ Աստծուց է մեր մեջ: **Հնազանդությունն անբաժանելի է սրբությունից. այն չի կարող գոյություն ունենալ առանց սրբության:** Սիրելի՛ հավատացյալ, երբեք, ոչ մի վայրկյան մի՛ մոռացեք հնազանդ լինել Աստծուն: Սկսե՛ք անմիջապես անել այն, ինչ այս պահին ճիշտ է թվում: Անմիջապես հրաժարե՛ք այն ամենից, ինչ ձեր խղճմտանքն ասում է, որ պետք է ուրանաք՝ ըստ Աստծո կամքի: Ոչ միայն աղոթե՛ք լույսի և զորության համար, այլև գործե՛ք. արե՛ք այն, ինչ Աստված ասում է. «Ով որ կատարի Աստծո կամքը, նա է իմ եղբայրը», - ասում է Հիսուսը: Հոր կամքը կատարելը Աստծո յուրաքանչյուր զավակի կերակուրն է, ուժը և նշանը: Տեսնում եք այս ճշմարտությունը: Դառնալ քրիստոնյա նշանակում է հնազանդվել Աստծուն: Փրկությունը և հավատքը տանում են հնազանդության, որովհետև միայն դրա միջոցով է անցնում Աստծո Սիրո հաղորակչության և Նմանության ճանապարհը:

Բոլորս զգացել ենք արգելքներ Աստծո օրհնությունների հա-

մար: Կատարյալ խաղաղության և հավատքի հանգստության համար մեր աղոթքներում և ջանքերում գուցե երբեմն հոգևոր վնասներ ենք կրել: Հոգևոր կյանքում վերապրած մնայուն ուրախությունից և ուժգնացող զորությունից հետո երբևէ ունենում ենք այնպիսի զգացողություն, որ ինչ- որ գաղտնի բան խանգարում է մեր օրհնություններին կամ պատճառ դառնում, որ արագորեն կորցնենք այն, ինչ ձեռք ենք բերել: Պատճառը հավանաբար սխալ տպավորությունը կամ սխալ պատկերացումն է Աստծո ամբողջ կամքին հնազանդվելու բացարձակ անհրաժեշտության մասին: **Աստծո կամքին հնազանդվելը բերում է Աստծո ձայնը մեր մեջ: Հնազանդությունը տանում է Աստծո մոտ և դեպի Նրա Սրբությունը:** Հնազանդության մեջ են ձևավորվում մեր կամքը և մեր բնավորությունը: Հնազանդ ներսի մարդուն Աստված հագցնում է և զարդարում սրբության գեղեցկությամբ:

Երբ քրիստոնյան բացահայտում է, որ հնազանդությունն Աստծո կամքին եղել է իր կյանքի բացակայող օղակը, անհաջողության և խավարի պատճառը, Հոգին նրան ցույց է տալիս, որ միակ ելքը հանձնվելու գործողությունն է, որով նա նպաստակուղղված ընտրում է հնազանդությունը: Նորովի հանձնվելու այս գործողությունը ենթադրում է հանձնվել խաչին՝ խաչին մատնելով անհնազանդության արմատը՝ մարմինը: Նորոգված հնազանդությունը Սուրբ Հոգու զորությամբ դառնում է նրա կյանքի օրենքը՝ ամբողջական, սրտանց հնազանդություն: Դադարեք հնազանդությանը որպես գործընթացի նայելուց, նայեք դրան որպես որոշման, որ պետք է կայացնեք հիմա և, որ ավելի կարևոր է, ամեն վայրկյան: Սրտի այս նոր հնազանդությունը Քրիստոսի մեջ նոր մարդու՝ նոր էության մեջ է: Այն Նոր ուխտի պարզևն է:

Այն, ինչ օրենքը չկարողացավ անել մարմնի տկար լինելու պատճառով, Աստված արեց Իր Որդու և Հոգու պարզևնի միջոցով: **Սուրբ Հոգին է հնազանդության և հանձնվելու զորությունը, ոչ թե կամակորությունը կամ ինքնակարգապահությունը:** *Սրբության Հոգին, բերելով հնազանդության զորություն, պատրաստում է մեր սրտերը Բարձրյալի բնակարան լինելու համար:* **Հոգու այս զորությունը պետք է յուրացվի ամեն վայրկյան՝ հավատքով կիրառելով մահը եսապաշտ կյանքի նկատմամբ:** Շատերը հրաժարվում են հենց այս ճշմարտությունից՝ ամեն վայրկյան մահը կիրառելուց: Նրանք ցանկանում են անել դա տարին մեկ անգամ, բայց ոչ ամեն օր, նրանք հանձնվում են ոչ թե խաչին, այլ իրենք իրենց:

Այս հավատքով եկեք հանձնվե՛ք խաչին, որտեղ հնազանդության կյանքը հնարավոր է՝ կյանքի կոչելով խոստումը. «Եթե իրավ հնազանդվեք Իմ ձայնին, Ինձ համար կլինեք սուրբ ազգ»:

Միայն ներբնակ ներկայությունն է մեզ սրբում: Որպեսզի իսկապես և լիովին ունենանք Աստծուն, պետք է ունենանք Նրան՝ որպես բնակչի, ներսում բնակվողի: Աստծո այս անձնական ներբնակությունը Հոգով պետք է լինի իմ սրտի ուժգին գիտակցական փափագը: Անձնատուր եղեք Նրա անձնական լիակատար ներբնակությանը, որպեսզի անձնապես լսեք Նրա ձայնը: Սրբությունը Նրա անձնական ներբնակ ներկայությունն է, մեր հաստատուն անձնական հաղորդակցությունը պահպանում է այն: Երբ հասկանանք այս անձնական մասնիկը և կառչենք դրանից, հնազանդությունը հնարավոր կդառնա և կտանի դեպի սրբություն: Ուշադրություն դարձրեք Աստծո խոսքերին. «Եթե հնազանդվեք Իմ ձայնին և պահեք Իմ ուխտը»: Ձայնն ավելին է, քան օրենքը կամ գիրքը. այն մշտապես վերաբերում է կենդանի անձին և Նրա հետ հաղորդակցությանը: Սա է ավետարանի հնազանդության գաղտնիքը՝ լսել ձայնին և հետևել Հիսուսի առաջնորդությանը՝ որպես անձնական ընկերոջ, կենդանի հաղորդակցվող Փրկչի: Հնազանդությունը կապ ունի Ձայնը լսելու հետ: Մի՛ կարծեք, որ գիտեք Աստծո կամքը: Աղոթեք և սպասեք Հոգու ներքին ուսուցմանը: **Հնազանդությունը Աստծուն հաճեցնելու բանալին է**: Այն սկսվում է Աստծո Հոգով առաջնորդվելուց, երբ թույլ եք տալիս, որ Հոգին հայտնի Հոր Ներկայությունը և Կամքը և Սերը: Սա է, որ մեր մեջ կներգործի այն անձնական հարաբերությունը և անձնական հաղորդակցությունը, որոնք կմղեն մեզ անելու ամեն բան ինչպես Տիրոջը՝ հաճելի լինելով Նրան:

Այսպիսի հնազանդությունը, որ բխում է Հոր հետ խոր անձնական հաղորդությունից, սրբության ուղին է: Դրա յուրաքանչյուր գործողությունը կապող օղակ է կենդանի Աստծո հետ՝ խաչյալ Քրիստոսի հետ կենդանի հաղորդակցության համար: Հնազանդության յուրաքանչյուր գործողություն ենթադրում է ամբողջ էությանմբ անձնապես հանձնվել Աստծո կամքին, որպեսզի Աստված Ինքը տիրի մեր էությանը: Քանի որ մարդու նախապատրաստումն աստիճանական է, սրբության հայտնությունն ու փոխանցումը պետք է լինեն աստիճանական, ինչպես որ մարդը պատրաստ է ընդունելու: Աստծո սրբացնող աշխատանքը յուրաքանչյուրիս հետ ժամանակ է պահանջում: Ժամանակը, որ այն պահանջում է և փնտրում, հնազանդության կյանքն է ամեն օր, ամեն ժամ և ամեն

վայրկյան: Այն ամենը, ինչ հատկացվում է կամակորոթյանը, ինքնավստահությանը, սեփական ջանքերին, կորած է: Բայց երբ սիրտը ձգտում է օր օրի ականջ դնելու և հնազանդվելու Ձայնին, Սուրբ Աստված Ինքը հսկում է Իր խոսքերը՝ դրանք կատարելու համար: Աստված բնակվում է խոնարհ սրտում:

Եթե երբևէ շփոթություն եք զգացել սրբության հարցում, պարզապես կրկին հանձնվեք Աստծո կամքը կատարելու կոչին և գնացեք ու կատարեք այն: Մեր գործն է հնազանդվել, Աստծո գործն է սրբացնել:

ՄՏՈՐՈՒՄ Աստծո հետ

1. Ինչպե՞ս է Աստծո կամքը կատարելը կապված սրբության հետ:
2. Արդյո՞ք Աստծուն հնազանդությունն անփոխարինելի է սրբության համար: Ի՞նչ եք մտածում:
3. Եթե շփոթված եք զգում սրբության հարցում, հայտնե՞ք դա Աստծուն: Դուք Նրա կարիքն ունե՞ք:

Գլուխ 18. Խոնարհություն և սրբություն. աշակերտի փառքը

Մտորե՞ք այս հայտնության շուրջ: Մարդու հիմնական հոգսը՝ նրա կյանքի բարձրագույն առաքի՞նությունը, նրա միակ երջանկությունը այժմ և հավիտյան իրեն որպես դատարկ անոթ ներկայացնելն է, որում Սուրբ Աստված կարող է բնակվել և դրսևորել Իր սիրո զորությունն ու բարությունը: Հիսուսի աշակերտի փառքը դատարկ լինելն է Աստծո բնակության համար: Այն կյանքը, որ Աստված շնորհում է, փոխանցվում է ոչ թե մեկընդմիջտ, այլ շարունակ և ամեն վայրկյան՝ Իր կարող Սուրբ Հոգու անդադար գործունեությամբ: Ինչպե՞ս ավելի վաղ տեսանք, խոնարհությունը Աստծուց լիովին կախվածության վայրն է: Կրկին մտորե՞ք այս հայտնության շուրջ: Խոնարհությունն ինչ-որ բան չէ, որ բերում ենք Աստծուն: Այն պարզապես *լիակափար հոգևոր աննշանության զգացում է, որն առաջանում է այն ժամանակ, երբ տեսնում ենք, որ իսկապես Աստված ամենն է, և դրանով ճանապարհ ենք հարթում, որ Աստված լինի ամենը:*

Ես համոզված եմ, որ կան շատ քրիստոնյաներ, որոնք կխոստովանեն, որ իրենց փորձառությունը սրանում շատ նման է եղել իմ փորձառությանը, որ մենք երկար ժամանակ ճանաչել ենք Տիրոջը՝ առանց գիտակցելու, որ սրբի հեզությունն ու խոնարհությունը պետք է լինեն աշակերտի փարբերակիչ հատկանիշները, որոնք բնորոշ էին նաև Տիրոջը: Եկեք հավատանք, որ երբ կոտրվենք՝ զգալով մեր հպարտությունը և այն հեռացնելու մեր անկարողությունը, Հիսուս Քրիստոսն Ինքը կգա, որ փոխանցի այս շնորհքը որպես մեր ներսում Իր հրաշալի կյանքի մաս:

Կյանքը, որ Հիսուսը փոխանցում է մեզ, Իր խոնարհությունն է, որը սրբության և երանության էությունն է: Խոնարհությունը Քրիստոսի կյանքն է, որն ակտիվորեն ապրում է մեր մեջ: Խոնարհությունը ճանաչում է մեղքը և գիտի մարմնի կամ եսապաշտ կյանքի չափազանց մեղավորությունը և չարությունը: Այն «ես»- ի փոխարինումն է Աստծո գահակալությամբ (տես 14-րդ գլուխ): Որտեղ Աստված ամենն է, «ես»-ը ոչինչ է:

Մեղք, շնորհք և խոնարհություն

«...մեղավորները ... որոնց առաջինը ես եմ» (Ա Տիմ. 1.15): Եթե այս իրողությունը զգանք սրտում, այն կունի հավիտյան: **Մենք փրկագնված մեղավորներ ենք, որոնք մշտապես շնորհքի հուսահատ կարիքի մեջ են:** Երբ Աստծո զավակն ապրում է Նրա սիրո լիարժեք լույսի մեջ, զգում է, որ մեղքը իր միակ իրավունքն է և իրավունքը հաստատող փաստաթուղթը այն ամենի նկատմամբ, որ Աստծո շնորհքը խոստացել է անել: Դուք ընդունել եք այս ճշմարտությունը: Մեղքի թաքնված զորությունը մշտապես պատրաստ է ի հայտ գալու. այն միայն ճնշված է պահվում ներքնակ Քրիստոսի ներկայությամբ և զորությամբ: Կյանքի Հոգու օրենքը Քրիստոս Հիսուսում ապահովում է մշտական հաղթանակ, որ տրվում է Հոգուց, երբ Նա սպանում է մարմնի գործերը (Հռոմ 8.2): **Լինել անտարբեր մեր գործած մեղքերի նկատմամբ նշանակում է լինել անընկալունակ Սուրբ Հոգու հանդեպ:** Իմ մեղքերի նկատմամբ անտարբերությունը հարձակում է սատանայից, և այն ստիպում է ինձ մոռանալ, որ ես դեռևս մեղավոր եմ: Երբ անտարբեր եմ մեղքի նկատմամբ, անտարբեր եմ նաև մեղքի հանդեպ Հիսուսի հաղթանակը յուրացնելու նկատմամբ: Եթե մենք անտարբեր չենք մեր մեղքերի նկատմամբ և փնտրում ենք խոստովանություն և ապաշխարություն, Հիսուսի կյանքը խաչի միջոցով մեզ փոխանցում է մեղքից և մարմնից ազատ ապ-

րելակերպ: Որպես Քրիստոսի աշակերտ՝ ես հավատքով և անկեղծ սրտով պետք է յուրացնեմ Քրիստոսի հաղթանակը իմ մեղքերի նկատմամբ. այլապես սրբության մեջ ապրելն անհնարին կդառնա ինձ համար:

Հիսուսի կյանքը փոխանցում է մեզ Նրա խոնարհության կյանքը՝ սրբության և սիրո բուն էությունը: Այս խոնարհությունը գոյություն ունի միայն Աստծո շնորհքով: Այս շնորհքն էր, որ չափազանց առատ էր Քրիստոս Հիսուսում հավատքի և սիրո հետ միասին: «...ուր որ ավելի եղավ մեղքը, այնտեղ ավելի ևս շատացավ շնորհքը» (Հռոմ. 5.20): Տեսնում եք շնորհքի և խոնարհության ու սրբության կապը: Որքան շատ է շնորհքի վերապրումը, այնքան ուժգին է մեղավոր լինելու գիտակցումը: Ոչ թե մեղքը, այլ Աստծո շնորհքն է մարդուն ցույց տալիս և մշտապես հիշեցնում, թե ինչպիսի մեղսագործ է ինքը, և պահում է նրան իսկապես խոնարհ: Ոչ թե մեղքը, այլ հայտնված շնորհքն է, որ իսկապես կստիպի, որ ինձ մեղավոր ճանաչեմ, և իմ ամենախոր խոնարհության (ինքնանվաստացման) վայրը կդարձնի այն տեղը, որտեղից երբեք չեմ հեռանա: Արդյո՞ք ամեն օր փոխազդեցության մեջ եք Աստծո շնորհքի հետ: Շնորհքը զուտ աստվածաբանական ուսմունք չէ, այն անձնական փորձառություն է, որ կարիք ունեք ունենալու Աստծո հետ ամեն անգամ, երբ մեղանշում եք:

Ինքնադատապարտումը և ինքնամեղադրանքը չեն բերում խոնարհություն: Նույնիսկ ամենախոր ինքնանողկանքը երբեք չի կարող ազատել մեզ «ես»- ից: Մեղքերը դատապարտող Աստծո օրենքի հայտնությունը, որ տեսնում ենք մեր սրտում, և դրանից մեզ ազատող Նրա շնորհքն են մեզ խոնարհեցնում: «Ես»- ի համար տեղ չի ունենա այն սիրտը, որ իր հոգևոր դատարկությամբ և աննշանությամբ սպասում է, վստահում է, երկրպագում է և լցված է Աստծո ներկայությամբ: Միայն այն մարդը, որ ապրում է այնտեղ, կարող է լինել ճշմարիտ աշակերտ և ծառայել ուրիշներին Հիսուսի անձնազոհ սիրով և խոնարհությամբ: Միայն այսպես կարող է խոստումն իրականանալ: «Եվ մարդու ամբարտավանությունը պիտի խոնարհվի... և միայն Տերը բարձր կլինի այն օրը» (Ես. 2.17): Եթե մարմնի՝ հին մարդու չափազանց մեղավորությունը և չարությունը զգացվի և ընդունվի սրտում, իրական կլինի նաև ճշմարիտ խոնարհությունը: Եսապաշտ կյանքի չափազանց մեղավորության և մեղքի չարության գիտությունը ինքնաբերաբար չի տրվում հավատացյալին: Այն պետք է դառնա Աստծո հետ լուրջ և խոր մտորման և Նրա առջև բարեխոսելու առարկա: Հավատացյալը պատրաստ չէ Հոգու այս հայտնությանը: Հավա-

տացյալի սիրտը պետք է պատրաստվի տեսնելու Աստծո ողորմության և շնորհքի իր ուժգին կարիքը, իր էության մեղավորության և իր մեղքի չարության խորությունը Ճշմարտության Հոգու լույսի ներքո: Նա պետք է տեսնի, որ դեռ ունի և միշտ կունենա հույս, և դա իր փրկագնող Աստծո ողորմությունն ու շնորհքն է: «Տեսնելու» այս կարողությունը նրա վիրավոր սիրտը, կտրված հոգին առաջնորդում է դեպի Հոր սրտի հետ հաղորդություն: Երկու սրտերի այս հաղորդությունը մղում է մեզ նորովի պաշտելու և երկրպագելու Հորը: **Ընդունելի երկրպագությունն** այն է, երբ գիտենք, որ չունենք ոչինչ՝ բացի նրանից, ինչ ստանում ենք, և ծնկի ենք իջնում խորին խոնարհությամբ, որպեսզի սպասենք Աստծուն այդ ամենի համար: **Քրիստոսի հարության կյանքով ամեն օր ապրել կարող է միայն այն սիրտը, որը խորամուխ է եղել իր հոգևոր դատարկության ու աննշանության մեջ:** Աստծո թագավորությունը աստվածային խոնարհ սրտի համար է:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ Աստծո հետ

1. Հիսուսի աշակերտի փառքը դատարկ լինելն է: Ինչպե՞ս է սա Նրա փառքը:
2. Ո՞րն է մեղքի նկատմամբ անտարբեր լինելու հետևանքը:
3. Ո՞րն է Աստծո շնորհքի և խոնարհության կապը:
4. Ի՞նչն է մեզ խոնարհեցնում:
5. Ի՞նչն է հանգեցնելու այն բանին, որ տեղ չունենանք «ես»-ի համար: Ի՞նչ եք մտածում:

Հավատալը և խոնարհությունը

«Ինչպե՞ս կարող եք դուք հավատալ, որ իրարից եք փառք առնում, և այն փառքը, որ միայն Աստծուց է, չեք որոնում» (Հովի. 5.44):

Շատ քրիստոնյաներ Աստծո Խոսքում տեսնում են կատարյալ խաղաղության և հանգստի, հորդահոս սիրո և ուրախության, մնայուն հաղորդության և պտղաբերության երանելի խոստումներ, սակայն զգում են, որ ինչ- որ բան խանգարում է այս խոստումներն իսկապես ստանալուն: Այս զգացմունքները գալիս են ժամանակ առ ժամանակ, բայց գոլորշու պես արագ անհետանում են: Ի՞նչը կարող է պատճառ լինել. ոչինչ՝ բացի հպարտությունից՝

խոնարհության բացակայությունից:

Այն, ինչը խանգարում է հավատքին, կարող է խանգարել նաև, որ օրհնությունը դառնա մերը: Վերոհիշյալ խոսքում (Հովհ. 5.44) Հիսուսը մեզ հայտնում է, որ իրականում հպարտությունն է, որ հավատքն անհնարին է դարձնում. «Ինչպե՞ս կարող եք դուք հավատալ, որ իրարից եք փառք առնում»: Հավատքը և խոնարհությունը նույն արմատն ունեն: Ինչ է հավատքը: Միթե այն աննշանության և անօգնականության մասին խոստովանությունը չէ, միթե հանձնվելը և սպասելը չէ, մինչև որ Աստված գործի: Միթե հավատքն ինքնին ամենախոնարհեցնող բանը չէ. այն, որ ընդունում ենք մեզ՝ որպես լիարժեք կախյալների, որոնք կարող են պահանջել, ստանալ կամ չանել ոչինչ՝ բացի նրանից, ինչ Աստծո շնորհքը կարող է տալ: **Խոնարհությունը այն հատկանիշն է, որ պատրաստում է սիրտը՝ վստահությամբ ապրելու համար:** Հպարտության յուրաքանչյուր գործողություն, նույնիսկ ամենագաղտնի, ներշնչում է շահասիրություն, կամակորություն, ինքնավստահություն կամ ինքնամեծարում և ամրապնդում է «ես»-ը: «ես»-ը երբեք չի կարող մտնել Թագավորություն կամ տիրել Թագավորության բաներին, որովհետև հրաժարվում է թույլ տալուց, որ Աստված լինի այն, ինչ կա և պետք է լինի, այսինքն՝ ամենը ամենում:

Խոնարհությունն է մարդու անձը դարձնում աննշան Աստծո առջև: Խոնարհությունն է, որ հեռացնում է հավատքի յուրաքանչյուր արգելքը: Խոնարհությունն է ստիպում մարդուն վախենալ Աստծուն անարգելուց՝ Նրան լիովին չվստահելով: **Խոնարհությունը թույլ չի տալիս, որ չխոստովանած մեղքերը և անտեսված ապաշխարությունը շարունակվեն և կուտակվեն:** Միթե այստեղ չենք տեսնում սրբությանը հետամուտ լինելու մեր անհաջողության պատճառը: Միթե չենք տեսնում այն, ինչը, առանց գիտակցելու, մեր նվիրաբերումն ու հավատքը դարձրեց այսքան մակերեսային և կարճատև: Մենք գաղափար չունեինք, թե ինչ աստիճանի էին հպարտությունը (այդ թվում՝ ամենօրյա խոստովանության և ապաշխարության բացակայությունը) և «ես»-ը գաղտնի գործում մեր մեջ, և ինչպես միայն Աստված Իր ներխուժող և կարող գործությամբ կարող էր հեռացնել դրանք: Հպարտությունը չափազանց մեղավոր և չար է, մենք հակված ենք անտեսելու այս ճշմարտությունը: Մենք չենք հասկացել, որ ոչինչ՝ բացի նոր և աստվածային էությունից, որ լիովին գրավում է հին մարդու տեղը, չէր կարող իսկապես խոնարհեցնել մեզ, դարձնել հոգևոր: Մենք չենք իմացել, որ բացարձակ, անդադար, ամբողջական խո-

նարհությունը պետք է լինի յուրաքանչյուր աղոթքի և Աստծուն ամեն անգամ մոտենալու, ինչպես նաև մարդկանց հետ ամեն անգամ հարաբերվելու արմատական վերաբերմունքը: Մենք չենք կարող շարունակել մեր հոգևոր կյանքը՝ առանց հետամուտ լինելու սրտի ամբողջական խոնարհության և հեզության, ինչպես չենք կարող տեսնել առանց աչքերի կամ ապրել առանց շնչառության: Որպես հավատացյալներ՝ մենք չենք կարող մոտենալ Աստծուն կամ բնակվել Նրա սիրո մեջ առանց սրտի ամբողջական խոնարհության և հեզության: Հիսուսը խոնարհեցրեց Իրեն մինչև մահ և բացեց ճանապարհ, որով պետք է անցնենք նաև մենք: Ճշմարիտ խոնարհությունն առաջնորդում է մեզ մահանալու «ես»- ին: Իմ եսապաշտ կյանքը պետք է պահվի խաչին իմ հոժարությամբ և իմ հավատքով, և սա կախված է իմ որոշումից, իմ հասձայնությունից, այլապես ճշմարիտ խոնարհության մասին խոսք լինել չի կարող: Առանց ճշմարիտ խոնարհության ճշմարիտ հավատքը մնում է անհասանելի պատկերացում, անհնարին երազանք հավատացյալի համար:

ՄՏՈՐՈՒՄ Աստծո հետ

1. Ինչն է անհնարին դարձնում հավատքը: Ինչպե՞ս:
2. Ո՞րն է «ես»- ի մահվան և խոնարհության կապը:

Ինչպե՞ս է խոնարհությունը կատարյալ դառնում

Մենք պետք է ապացուցենք, թե որքանով ենք հանձնվել խաչին, խոնարհությանը և Աստծուն:

«Ես»- ի մահվամբ է, որ խոնարհությունը կատարյալ է դառնում: Համոզվե՞ք, որ ավելի շատ շնորհքի, նվիրման մեջ իսկական առաջխաղացման, Հիսուսին ավելի ու ավելի կերպարանակից լինելու իրական փորձառության հիմքում պետք է լինի «ես»- ին մահացած լինելը, որն արտահայտվում է Աստծո և մարդկանց առջև մեր վերաբերմունքով և սովորություններով: «Ես»- ին մահացած լինելը չունի մահվան ավելի հաստատ նշան, քան խոնարհությունը, որը խաչի վրա է պահում հպարտությունը ամեն վայրկյան և ամեն օր: Խոնարհությունն իր համբավը չի ստեղծում, այլ ինքն իրեն ունայնացնում է և ծառայի կերպարանք ընդունում: **«Աստծո Գառը» երկու բան է նշանակում՝ հեզություն և մահ: Մենք երկուսի կարիքն էլ ունենք: Եկե՛ք փնտրենք Նրան երկու կեր-**

պարանքում էլ: Նրա մեջ դրանք անբաժանելի են. անբաժանելի պետք է լինեն նաև մեր մեջ: «Ինչպէս կարող եք հավատալ, երբ փառքն իրարից եք առնում»: Եղբայր և քոյր, ոչինչ չի կարող բուժել ձեզ հպարտությունից՝ մարդկանցից փառք ստանալու ցանկությունից, կամ այն զգացողությունից, ցավից և բարկությունից, որ ունենում եք, երբ այն չի տրվում: Միակ դեղամիջոցն այն է, որ նվիրվեք և փնտրեք միայն այն փառքը, որը Աստուծոց է: **Աստծո փառքը փնտրելը նշանակում է փնտրել «ես»- ի մահը:** Եղեք սրտի անձնական հաղորդության մեջ Հոր հետ և միշտ մնացեք Խաչյալ Քրիստոսի մեջ, և Ամենափառահեղ Աստծո փառքը կդառնա ամենը ձեր սրտի համար: Դուք կազատվեք մարդկանց և «ես»- ի փառքից ու գոհ և ուրախ կլինեք հոգևորապես ոչինչ լինելուց: Այս աննշանությունից կզորանաք հավատքով՝ Աստծուն փառք տալով: Դուք կհայտնաբերեք, որ որքան խորն եք մխրճվում Աստծո առջև խոնարհության մեջ, այնքան ավելի եք ապրում խաչյալ կյանքով՝ հպարտությունը պահելով խաչին և ուրանալով ձեր մարմինը ամեն օր և ամեն վայրկյան: Եթե ամեն վայրկյան չեք ուրանում ձեր մարմինը, փրկության մասին ձեր հասկացողությունն անբավարար է, հետևաբար և թերի: Մենք՝ որպես Քրիստոսի աշակերտներ, հուսահատորեն հայտնության աստվածային լույսի կարիքն ունենք մեր սրտերում: Մենք կարիք ունենք, որ Աստված ավելի շատ լինի մեր մեջ:

Ծառայություն. Հիսուսի կյանքը

« ...բայց Ես ձեր մեջ ծառայողի պես եմ» (Դուկ. 22.27):

Լսենք այն խոսքերը, որոնցով մեր Տերը հայտնում է Իր հարաբերությունը Հոր հետ, և տեսնենք, թե ինչպես է Նա մշտապես գործածում *«ոչ թե»* և *«ոչինչ»* Իրենից և նման այլ արտահայտություններ:

1. «...Որդին Իրենից չի կարող *ոչինչ* անել» (Հովհ. 5.19):
2. «Ես Ինձնից չեմ կարող *ոչինչ* անել... Իմ դատաստանն արդար է. որովհետև Իմ կամքը չեմ որոնում» (Հովհ. 5.30):
3. «Ես մարդկանցից փառք չեմ առնում» (Հովհ. 5.41):
4. «...Ես իջա երկնքից, որ *ոչ թե* Իմ կամքն անեմ...» (Հովհ. 6.38):
5. «...Իմ վարդապետությունն իմը չէ...» (Հովհ. 7.16):

6. «...Ես Իմ անձից չեմ եկել...» (Հովհ. 7.28):
7. «...Եվ Իմ անձից ոչինչ չեմ անում...» (Հովհ. 8.28):
8. «...ոչ թե Իմ անձից եկա, այլ Նա ուղարկեց Ինձ» (Հովհ. 8.42):
9. «Ես Իմ փառքը չեմ որոնում» (Հովհ. 8.50):
10. «...Այն բանը, որ Ես խոսում եմ ձեզ հետ, Իմ անձից չեմ խոսում...» (Հովհ. 14.10):
11. «...այն խոսքը, որ լսում եք, Իմը չէ...» (Հովհ. 14.24):

Այս խոսքերը մեզ հայտնում են Քրիստոսի կյանքի և գործի ամենախոր արմատները: Քրիստոսը «ոչինչ» եղավ, որպեսզի Աստված կարողանար լինել ամեն ինչ: Նա ամբողջովին հրաժարվեց Իր կամքից և Իր ուժերից, որպեսզի Հայրը գործեր Իր մեջ: Իր ամբողջ զորությունից, Իր ամբողջ կամքից, Իր ամբողջ փառքից, Իր ամբողջ առաքելությունից (Իր բոլոր գործերով և վարդապետությամբ)՝ այս ամենից Հիսուսն ասաց. «Ես չեմ: Ես ոչինչ եմ: Ես տվել եմ Իմ անձը Հորը, որ գործի, Ես ոչինչ եմ, Հայրն է ամենը»: Քրիստոսը խոնարհվեց Աստծո առջև, և դա հնարավոր դարձրեց, որ Նա խոնարհվեր մարդկանց առջև և դառնար բոլորի Ծառա:

Մենք դառնում ենք Քրիստոսի հետ բաժնեկիցներ, որպեսզի հասնենք սրտի այս դիրքին՝ խոնարհությանը: Միայն թե մեր սրտերն ընդունեն այս ճշմարտությունը: Աս է ճշմարիտ անձնուրացությունը, որին կանչում է մեր Փրկիչը, որպեսզի ընդունենք, որ «ես»- ի մեջ բարի ոչինչ չկա: «Իմ մեջ բարի ոչինչ չկա» ճշմարտության հայտնությունն է, որ պետք է փնտրեմ, ինչպես նաև պետք է տեսնեմ դրա առկայությունն իմ սրտում՝ որպես հավատացյալի: Ես պետք է լինեմ դատարկ անոթ, որն Աստված պետք է լցնի, իմ էությանը չպետք է թույլ տամ լինել կամ անել որևէ բան: **Ահա թե ինչու ամեն ինչից վեր և առավել պետք է կերպարանակից լինենք Քրիստոսին. ինքներս մեզնից ոչինչ չլինենք և չանենք, որպեսզի Աստված լինի ամենը:** Ծառայի կյանքն առաջանում է դատարկության և աննշանության այս կյանքից: Որպես Քրիստոսի աշակերտներ՝ մենք հուսահատորեն հայտնության աստվածային լույսի կարիքն ունենք մեր սրտերում:

Ծառայությունը խոնարհություն է: Խոնարհ ծառայության կյանքն է, որ Հիսուսը եկավ հայտնելու և փոխանցելու. կյանք

Աստծո համար, որ ստանում ենք մեղքին և «Ես»- ին մահանալու միջոցով: Ներքնակ Քրիստոսն է, որ կապրի մեր մեջ խոնարհության և հեզության այս կյանքով: Մենք չենք կարող ինքներս մեզ վարժեցնել խոնարհ լինելու, դա անհնար է: Աստծո զավակը ոչինչ է՝ բացի անոթ, կապուղի լինելուց, որի միջոցով կենդանի Աստված կարող է դրսևորել Իր իմաստության, զորության և սիրո հարստությունները: Ամեն առաքինության և **ընդունելի երկրպագության** արմատն այն գիտությունն է, որ չունենք ոչինչ՝ բացի նրանից, ինչ ստանում ենք, հետևաբար և ծնկի ենք իջնում խոնարհությամբ՝ սպասելով Աստծուն այդ ամենի համար: Քրիստոսը երբեք ոչ մի վայրկյան չմտածեց Իր պատիվը որոնելու կամ Իր զորությունը հաստատելու մասին՝ Իրեն արդարացնելու նպատակով: Նրա հոգին խոնարհ ծառայության կյանքի հոգի էր՝ հանձնված Աստծուն Իր մեջ գործելու համար: Խոնարհությունն այն կյանքի էությունն է, որ Քրիստոսի մեջ է. «Ես եկել եմ, որ ծառայեմ, ոչ թե Ինձ ծառայեն»:

ՄՏՈՐՈՒՄ Աստծո հետ

1. Ինչո՞ւ մենք մասնակից եղանք Քրիստոսին: Ի՞նչ է Աստված փորձում անել մեզ համար:
2. Մենք տեսնում ենք սա Քրիստոսի կյանքում. «Քրիստոսը ոչինչ էր, որպեսզի Աստված լիներ ամեն ինչ»: Ի՞նչ է սա նշանակում:
3. Ինչո՞ւմ պետք է կերպարանակից լինենք Քրիստոսին:
4. Հիսուսը միշտ գործածում է *ոչ մի, ոչինչ* Իրենից և նման արտահայտություններ: Արդյո՞ք ա է այն ծառայությունը, որ Նա վկայակոչում է:

Մաս 5. Առանձին ժամանակ Աստծո հետ. Աստծուն սպասելը՝ որպես կենսակերպ

Հինգերորդ մասը բաղկացած է 5 գլխից: Տասնիններորդ գլուխը վերաբերում է այն ժամանակին, որ անցկացնում ենք Աստծո հետ, այդ թվում՝ առավոտյան աղոթք- հաղորդակցությանը, Աստծուն նվիրված ժամանակին և Աստծուն նվիրված կյանքին: Քսաներորդ գլուխն անդրադառնում է Աստծուն սպասելուն, և թե ինչպես է այն կապված ամենօրյա փրկության հետ: Քսանմեկերորդ գլուխն Աստծուն սպասելու կյանքի մասին է: Քսանեկուերորդ գլուխն Աստծուն սպասելու վերաբերյալ մտորումների և դիտարկումների մասին է: Քսաներեքերորդ գլուխն անդրադառնում է Աստծուն սպասելուն և այն բանին, թե ինչպես է Աստված կատարում Իր աշխատանքը:

Այս մասն անդրադառնում է այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝ որո՞նք են այն քայլերը, որ անհրաժեշտ են առավոտյան աղոթքում և Աստծո հետ հաղորդակցության ժամանակ, ինչ է Աստծուն նվիրված կյանքը, ինչպե՞ս եմ հանդարտվում Աստծո առջև, ո՞րն է Աստծուն սպասելու նպատակը, ինչո՞ւ է լռությունն անհրաժեշտ, և ո՞րն է դրա նպատակը Աստծուն սպասելիս, ինչո՞ւ է Աստծուն սպասելը պարտադիր, ո՞րն է Աստծուն սպասելու և եսապաշտ կյանքն ուրանալու կապը, ո՞րն է մտքի հավատքի և սրտի հավատքի տարբերությունը, ինչո՞ւ հենց սիրտը պետք է սպասի Աստծո ներկայությանը, ժամանակ հատկացնո՞ւմ եք Աստծո սիրտը լսելու համար, ինչ է Աստված ցանկանում տեսնել իմ մեջ Իրեն սպասելիս:

Գլուխ 19. Առանձին ժամանակ Աստծո հետ

Աստծո հետ մեր ժամանակը պետք է լինի կանոնավոր և նպատակային, ոչ թե անկանոն կամ պատահական: Աստծո հետ այս նպատակային ժամանակը պետք է ներառի այնպիսի բաներ, ինչպիսիք են առավոտյան աղոթքը, Աստվածաշնչի ընթերցանությունը և հոգևոր հաղորդակցությունը, Աստծուն նվիրված ժամանակը, Աստծուն նվիրված կյանքը, Աստծուն սպասելը և հաղորդությունը, Աստծո առջև լռելը, Աստծուն նվիրված ժամանակի ընթացքում գործ-

նական խնդիրները լուծելը և դժվարությունները հաղթահարելը: Այս տարբեր, բայց կանոնավոր ժամանակներն Աստծո հետ մեր կյանքում իրականացնում են տարբեր նպատակներ: Աստված գործում է այս ամենում՝ անկախ նրանից, թե որքան կարճատև են դրանք:

Առավոտյան աղոթք, Աստվածաշնչի ընթերցանություն և հոգևոր հաղորդակցություն

Սա 10-րոպեանոց դասընթաց չէ, որ պետք է ավելացնեք ձեր կյանքին: Սա Քրիստոսի մեջ կյանքի մաս է: Նախքան ձեր աղոթքը սկսելը հանդարտվեք Աստծո առջև, բայց մի՛ շտապեք այս կարևոր քայլն անելիս: Շատ քրիստոնյաների համար առավոտյան աղոթքը և հաղորդակցությունը Աստծո ներկայությունը փնտրելու, Նրա բարության և հոգատարության համար Նրան փառաբանելու և երկրպագելու, ամեն բանում Նրանից առաջնորդվելու և ուղղորդվելու, այդ օրն իրենց և իրենց սիրելիներին չարից պաշտպանելու համար իրենց սիրտը Նրան տալու ժամանակ է: Սա այն ժամանակն է, երբ շատերը խոստանում են Աստծուն կատարել Նրա կամքը:

Գործնական քայլեր. սրտի լուրջամբ փնտրեք Աստծո ներկայությունը, որովհետև այն մոտեցնում է ձեզ Նրա սիրտը: Թող սա դառնա առավոտյան հաղորդակցության ձեր ցանկությունը. դուք ցանկանում եք, որ Նրա սիրտը միանա ձեր սրտին: Ասեք Նրան, թե որքան շատ եք սիրում Իրեն, և խնդրեք, որ Նա խորացնի Իր սիրո ձեր վերապրումը և էլ ավելի լցնի ձեզ Իր խաղաղությամբ և խոնարհությամբ, որպեսզի ծառայեք ուրիշներին Իր սիրով: Սա Աստծո հետ մենակ լինելու և Նրան ձեր կյանքի մեջ հրավիրելու ժամանակ է. այդուհանդերձ, արթուն եղեք Աստծո հետ, Նա նույնպես ցանկանում է հաղորդություն ունենալ ձեզ հետ, որովհետև Նա սպասել է ձեզ: Կրկին լռեք և հանդարտվեք և լսեք Նրա սիրտը: Նրա սիրտն ուզում է, որ դուք հաղորդության մեջ մտնեք Իր հետ: Սպասեք անձնական հայտնությունների: Թող Հոգին առաջնորդի ձեզ, բայց Նրանից ակնկալություն մի՛ ունեցեք: Մի՛ մտահոգվեք, երբ սպասելու ժամանակը երկարի, դուք կարող եք վստահ լինել, որ Նա գիտի, թե ինչ է անում, և գիտի, թե երբ եք դուք պատրաստ ընդունելու Իրենից:

Աստվածաշնչում չկա հաստատված կանոն առավոտյան աղոթք- հաղորդակցության համար: Սակայն մենք էականորեն դրա կարիքն ունենք: Շատերն անտարբեր են և տարբեր պատճառներով անտեսում են առավոտյան աղոթքը և Աստծուն ըստ արժանվույն չեն գնահատում: Անտեսման ձեր պատճառ(ներ)

ը կարող է(են) օրինավոր լինել ձեզ համար, բայց դուք վնաս եք հասցնում ձեր հոգևոր կյանքին, որից դժվար է ապաքինվել: Անտարբերությունը և աղոթքի ու Աստծո հետ հաղորդակցության անտեսումը դուռ են բացում մեր կյանքում դիվային ազդեցությունների համար:

Աստվածաշնչի առավոտյան ընթերցանության և հայեցողական աղոթքի ժամանակ: Շատերը Աստծո հետ իրենց առավոտյան հաղորդակցության մեջ ցանկանում են նաև ներառել Աստվածաշնչի կարճ ընթերցանություն և մի փոքր սերտողություն: Եթե ձեր նպատակն է առանձին ժամանակ անցկացնել Աստծո խոսքի մեջ և այսպես փնտրել Նրա ներկայությունը, խորհուրդ կտամ հետևել այս չորս քայլերին: Այս քայլերը հրահանգներ կամ ընթացակարգեր չեն, որոնց պետք է հետևել, այլ կենսակերպ, որով պետք է ապրել: Քայլերը դարձրե՞ք ճկուն ձեր կյանքի համար: Ինչևէ, խուսափե՞ք անկանոն ընթերցանությունից և սերտողությունից: Սա Աստվածաշնչի սերտողության ժամ չէ, երբ շեշտը դրվում է սովորելու և հասկանալու վրա, այլ առավոտյան *աղոթքի և հաղորդակցության ժամ, որին ավելացվում է նաև խոսքի ընթերցումը՝ որպես Աստծո ներկայությունը փնտրելու միջոց*: **Հիշե՛ք, դուք փնտրում եք Աստծո ներկայությունը և Նրա ձայնը այդ օրվա համար:** Նաև, և որ առավել կարևոր է, դուք ցանկանում եք տալ ձեր սիրտը Նրան, ցանկանում եք, *որ ձեր սիրտը միանա Նրա սրտին: Սիրելի՛ Քրիստոսի աշակերտ, դուք տեղյակ եք, որ Աստված ձեր կարիքն ունի:* Նա սպասում է ձեր սրտի հաղորդությանը Իր հետ, Նա ցանկանում է, որ երկու սրտերը՝ ձերը և Իրենը, դիպչեն, գրկախառնվեն և հաղորդություն ունենան միմյանց հետ: Աստված ցանկանում է Իր սիրտը հեղել ձեր մեջ: Կցանկանայի առաջարկել այս չորս քայլերը Աստվածաշնչի ընթերցանության և աղոթքի միջոցով Նրա ներկայությունը փնտրելու համար:

1. Ծրագրե՛ք, ընտրե՛ք և կարդացե՛ք աստվածաշնչյան որևէ հատված ինքներդ ձեզ համար, այնուհետև մի քանի րոպե հատկացրե՛ք դրա շուրջ խորհելու համար: Սպասե՛ք Սուրբ Հոգուն, որ լուսավորի ձեզ: Հոգս մի՛ արեք ժամանակի համար: Հիշե՛ք, որ հարցը ոչ թե ժամանակն է, այլ սիրտը:

2. Մի քանի րոպե մտածե՛ք և մտորե՛ք Աստծո հետ, թե ինչ է այդ հատվածը նշանակում, և ինչ էր Աստված նախատեսել, բայց կանգ մի՛ առեք դրա վրա: Աստված ցանկանում է ձեզ հետ շարժվել ձեր մտքից դեպի ձեր սիրտը: Դուք կարող եք անձնապես հանդիպել Աստծո սրտին միայն ձեր սրտում: Փնտրե՛ք Հոգու լույսը, որով հետև միայն այս աստվածային լույսն է ձեր սրտին հայտնում այդ

հատվածի հոգևոր նշանակությունը: Աստված կպարզևի ձեզ այս աստվածային լույսի գիտակցումը, սպասե՛ք դրան: Հոգևոր նշանակությունը համարե՛ք ձեզ համար էական կարիք: Աստված է որոշում սպասելու ժամանակի տևողությունը, Նա ծածուկ կերպով աշխատում է ձեր մեջ սպասելու ընթացքում: Աստված կարող է ստուգել ձեր սրտի անկեղծությունը: Շատերը չեն փնտրում կամ չեն սպասում Սուրբ Հոգու աստվածային լույսին: Նրանք նվիրված չեն Աստծուն, այլ ձգտում են աղոթքին և հաղորդակցությանը՝ որպես առավել հոգևոր դառնալու միջոցի: Դուք Աստծո ներկայության կամ Նրա ներկայության գիտակցման կարիքն ունեք առավուտյան: Սովորե՛ք համբերատար լինել Աստծո հետ:

3. Հոգու լույսի ներքո մտորե՛ք Աստծո հետ, թե ինչպես կարելի է ընթերցանության հատվածը կիրառել ձեր կյանքում: Շատերն ամենևին չեն անում սա, նրանք հակված չեն դա անելու: Բոսքի կիրառումը կյանքում հրավեր չէ մտավոր վերլուծության համար: Դուք կարող եք շարունակել Բոսքի շուրջ մտորումն ավելի ուշ, դա բնական է, պարզապես բաց եղեք Աստծո համար, որպեսզի Նա որոշի, թե ինչպես շարունակի Իր աշխատանքը: Բացե՛ք ձեր սիրտը և վստահե՛ք Աստծուն այն ամենը, ինչ այդ առավուտ կա ձեր սրտում: Նա ցանկանում է, որ հստակ և անկեղծ լինեք Իր հետ, մի՛ հեռացեք առանց ապավինելու և վստահելու Նրա սրտին: Երբ անհրաժեշտ լինի, հետագայում կարող եք շարունակել ձեր գաղտնիքները վստահել Նրան: Հիշե՛ք, դուք ձգտում եք միանալու Նրա սրտին, և սա չի կարող լինել ընդհանուր և անորոշ: Կյանքի գործնական ուղեցույցները ստանում եք Նրա ներկայությունից, Նրա սրտից, և դրանք կլինեն խիստ անձնական և որոշակի և ուղղված կլինեն ձեր սրտին: Այս հայտնություններն ինքնաբերաբար չեն գալիս, Հոգին պատրաստում է մեզ դրանց համար: Սա ժամանակ է պահանջում, որովհետև Աստծուն սպասելը սրտի գործն է, իսկ մենք չենք կարող շտապեցնել մեր սրտին: Սա ոչ թե մեր, այլ Աստծո աշխատանքն է: Ինքներդ ձեզ մի՛ առաջնորդեք, սովորե՛ք չառաջնորդել Աստծուն: Դուք սովորում եք, թե ինչպես ապրեք ձեր կյանքը. դուք Աստծո անձնական ներկայության և լույսի կարիքն ունեք:

4. Աղոթքով զննե՛ք Աստծո հայտնությունները և մտածե՛ք, թե ինչ դասեր կարող եք քաղել: Մտորելուց հետո աղոթե՛ք և հարցրե՛ք Աստծուն, թե ինչ փոփոխություններ են անհրաժեշտ ձեր վարքագծում: Շատերը չեն փնտրում այս փոփոխությունները, նրանք գոհ են իրենց հոգևոր վիճակից: Փնտրե՛ք Աստծո հայտնությունները և հանդիմանությունները ձեր կյանքի համար: Աստված արձագանքում է Իր ձևով և Իր ժամանակին: Աստված չի փոխում

մեր վարքագիծը կամ վարվելակերպը՝ առանց մեր սիրտը փոխելու: Ահա թե ինչու Աստծուն սպասելը պահանջում է համբերություն և քաջություն՝ նպատակին հասնելու համար: Աստված սպասում է մեր որոշմանը և պատրաստակամությանը Իր փոփոխությունները կատարելու համար, Նա չի իշխում մեր ազատ կամքին: Այս վերջին քայլում հնարավոր է, որ անհրաժեշտ լինի նոր և առավել խոր անձնվիրում: Փոփոխությունը Աստծո աստվածային անմիջական աշխատանքն է ձեր կյանքում: Բացի ձեր հավատքից՝ ձեր համաձայնությունն ու պատրաստակամությունն են, որ շարժում են Աստծո ձեռքը, որպեսզի մտնեք Նրա հետ անձնվեր կյանքի մեջ:

Աստծուն նվիրված ժամանակ

Աստծուն նվիրված ժամանակի նպատակը կախված է այն նշանակությունից, որ տալիս ենք «նվիրում» կամ «նվիրված» բառին: Եվ այսպես, **ինչ է նշանակում «նվիրված»:** «Նվիրված» ընդհանուր առմամբ նշանակում է «հատկացված, ընծայված»: Աստվածաշնչում «նվիրված» նշանակում է «ջերմորեն կապված և խանդակաթ սիրով լցված», օրինակ՝ «...իրար հանդեպ գթած եղեք (անգլերենում՝ իրար նվիրված եղեք...)» (Հռոմ. 12.10) և «միշտ հետևում էին (անգլերենում՝ նվիրված էին) առաքյալների վարդապետությանը և հաղորդությանը և հացի կտրելուն և աղոթքներին: Եվ բոլոր հավատացյալներն իրար հետ մեկտեղ էին, և ամեն բան հասարակաց ունեին...» (Գործք 2.42, 44): Հաճախ մենք ընծայումը կարևոր ենք համարում եկեղեցու համար: **Բայց ո՞րն է ընծայման նախադրյալը: Նվիրումը, նվրվածությունը՝ «ջերմ կապվածությունը և խանդակաթ սերը»:** Հետևաբար Աստծո հետ առանձին ժամանակը ենթադրում է շատ ավելին, քան Աստծուն ընծայված կամ հատկացված ժամանակն է: **Աստծուն նվիրված առանձին ժամանակը Աստծո հետ սրտի հաղորդության ժամանակ է,** երբ իմ խանդակաթ սերն ու կապվածությունն են արտահայտում Նրա հանդեպ՝ մտնելով Նրա ներկայության մեջ: Սրտի հաղորդության ժամանակ Աստված էլ ավելի է տալիս Իրեն և իմ սիրտը դարձնում է Իր տունը: Սրտի այս միությունը հնարավոր է զգալ, և մենք կարող ենք գիտակցել դա: Իմ հոգևոր կյանքը՝ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ և դրա յուրաքանչյուր մասնիկը, Աստծուց է: Եթե կա սրտի հաղորդություն, այն սրտում հաստատում է Աստծուց լիովին կախված լինելու փոխհարաբերություն:

Իմ հոգևոր կյանքի առաջին և գլխավոր կարիքը իմ ամբողջ կյանքն Աստծուց ստանալն է. այդ կյանքն ամբողջովին և բացարձակապես կախված է Աստծուց: Աստծո հետ *անկանոն հա-*

դորդությունը կամ խաթարված հաղորդակցությունը Նրանից լիովին կախված լինելու հարցում անհավաստության, Աստծուն չճանաչելու և մեր էությունը չճանաչելու հետևանք է: Աստված է, որ ամեն բան գործում է իմ մեջ: Ես ոչինչ չունեմ ներդնելու իմ էությունից կամ գոյությունից, որովհետև այն լի է եսասիրությամբ և հպարտությամբ: Ես կարիք ունեմ Աստծուն ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ամեն վայրկյան, որպեսզի Նա տա ինձ հոգևոր կյանք ամեն բանում և մշտապես: Հետևաբար Աստծուն նվիրված ժամանակի նպատակը Աստծո հետ սրտի հաղորդության մեջ մտնելն է: Սա ենթադրում է սպասել Աստծուն, որպեսզի Նա հայտնի Իրեն և թափանցի իմ մեջ:

Իմ սիրտը կարող է զորանալ միայն Աստծո հետ սրտի անմիջական կենդանի հաղորդության ժամանակ: Հարցն այն չէ, թե ինչ պետք է անել: Ժամանակ հատկացրեք հանդիպելու Աստծուն, դուք կարիք ունեք փնտրելու Նրա սուրբ ներկայության գիտակցումը: Շատ եկեղեցիներ մոռացել են այս ճշմարտությունը: Հանդարտվեք Աստծո առջև (Նա «Գուգլ» ծառայությունն չէ): Թող Նա գրավի առաջին և գլխավոր՝ պատվավոր տեղը ձեր կյանքում: Սա մտքի համաձայնությունն է, այլ անկեղծ սրտի արձագանք Աստծուն: Լուռ ծնկի իջեք Նրա առջև խոնարհ սրտով՝ լցված հավատքով և երկրպագությամբ: Աստծուն պատվելը սկսվում է այստեղից՝ իմ սրտից, դա ժամանակի հարց չէ:

Ձեր սիրտը նվիրման վայրն է: Խոսեք սա ձեր սրտում. «Աստված այստեղ է: Աստված մոտ է: Աստված սեր է, Նա փափագում է քայլել ինձ հետ և նվիրել Իրեն»: Երկրպագեք Աստծուն մեծարանքով: Մեր մշակույթում վաղուց մոռացվել է մեծարանքի նշանակությունը: Ժամանակ հատկացրեք, մինչև որ իմանաք, որ Աստված շատ մոտ է: Աստծո ներկայության գիտակցումը լցված է սիրով, որ հասնում է ձեր սրտին: Թող Աստծո սերը պարուրի ձեզ, և խոնարհվեք: Ընկեք Նրա առջև խոնարհությամբ, համբերությամբ և անձնատուր եղեք: Նրա բարության և ողորմության չափազանց մեծությունն այժմ հայտնվում է ձեր սրտին ավելի մեծ չափով: Ժամանակ հատկացրեք շատ ցածրանալու Աստծո առջև: Լռեք Նրա առջև և թոյլ տվեք, որ Նա օրհնի ձեզ: Դադարեք Նրան ասելուց, թե ինչպես օրհնի ձեզ: Սիրելի՛ Քրիստոսի աշակերտ, լռեք Աստծո առջև, Նա փնտրում է մեր սիրտ անկեղծ արձագանքը. «Զերմ կապվածություն և խանդակաթ սեր»: Աստծուն նվիրված ժամանակը դրա համար է: Նայեք Նրա երեսին վստահությամբ, մինչև որ Նրա սերն իսկապես շողա ձեր սրտում: Ուրախացրեք Նրա սիրտը՝ ասելով, որ իսկապես սիրում եք Իրեն: Հենվեք Քրիստո-

սի վրա, որպեսզի ավելացնի ձեր մեջ Իր Հոգու ներհոսքը: Մինչ սպասում եք Նրա ներկայությանը, հիշեք, որ Հոգին ձեր մեջ է, որպեսզի հայտնի ձեզ Աստծո բաները: Մենք երբեք բավականաչափ չենք ճանաչում այն Աստծուն, որին, կարծում ենք, թե ճանաչում ենք:

Մտորեք ձեր հիասքանչ փրկության շուրջ: Աստծուն սպասելը կենսակերպ է, որով ապրում եմ, և որում Քրիստոսը հայտնում է Իրեն որպես իմ լիարժեք փրկություն: Երբ ավելի ու ավելի զգաք Նրա ներկայությունը, կհասկանաք, թե որքան անհրաժեշտ է *ձեր ամենը հանձնելը, որպեսզի ստանաք Նրա ամենը*: Երբ սպասում եք Աստծո առջև, թող դա լինի խոր, հանգիստ հավատքով, որ երկնային կյանքի բոլոր օրհնությունները և զորությունները ձեր շուրջն են և ձեր մեջ: Պարզապես հանձնվեք կատարյալ վստահության հավատքով, որ Աստծո ամբողջ նպատակը կիրականանա ձեր մեջ:

«Ո՛վ իմ անձ, մենակ լուռ մտի՛կ տուր Աստծուն, որովհետև Նրանից է իմ հույսը: Հիրավի, որ Նա է իմ վեմը, իմ փրկությունը...» (Սաղմ. 62.5,6):

Աստծուն նվիրված կյանք

Աստծուն նվիրված ժամանակները ձևավորում են Աստծուն նվիրված կյանք: Աստծուն նվիրված կյանքի բուն էությունը Աստծո ներկայությունն է և Աստծո ներկայության ու զորության վերափոխող ազդեցության վերապրումը մերրտում: Հոգին ցանկանում է սովորեցնել ձեզ փնտրել Աստծո ներկայությունը: Հետաքար Տիրոջ հետ մեր լուռության ժամանակի նպատակը Նրա ներկայության մեջ մտնելն է և այնտեղից ավելի ուժեղ ու բարելավված դուրս գալը: Աստծուն նվիրված կյանքը լի է Աստծո երկրպագությամբ և մեծարանքով: Այն *գործնականում* տնկում է մեզ կենդանի ջրերի մոտ, այն Աստծո խոնարհությամբ անձնատուր եղած սրտից «կենդանի ջրերով» ուրիշներին ծառայելու կյանք է:

Աստծուն նվիրված կյանքը Աստծո հետ ջանասիրաբար և հետևողականորեն ժամանակ անցկացնելու սուրբ սովորություն է. մենք ապրում ենք Նրա կյանքը՝ միաժամանակ խաչված պահելով մարմինը, որպեսզի Նրա Սիրով ու Նրա խոնարհությամբ հոգ տանենք ու ծառայենք ուրիշներին: Հոգևոր այս սովորությունը պահանջում է հետևողականություն, նվիրում և ընծայում, այն ձևավորվում է Հոգու միջոցով հանձնված և որոնող սրտում: Այն միմիայն Քրիստոսի և Նրա խաչի մեջ մնալու կյանքի արդյունքն է:

Սպասել Աստծուն և հաղորդություն

«Դադարե՛ք և ճանաչե՛ք, որ Ես եմ Աստված» (Սաղմ. 46.10): Աստված ցանկանում է հայտնել Իրեն իմ սրտին շատ ավելի խոր մակարդակներում, հայտնել Իր ամենազորությունը, ամենագիտությունը և մշտական ներկայությունը: Նա ցանկանում է հայտնել Իր բնավորությունը իմ սրտին շատ ավելի խոր մակարդակներում, հայտնել Իր բարությունը, քաղցրությունը, խոնարհությունը, սերը և ողորմությունը: Այս գիտությունը, որ հայտնությունը բերում է, պետք է մտնի սիրտ, մեր սիրտը պետք է հավատա դրան: Համոզումը կատարվում է մտքում: Համոզմունքը, որ հայտնությունը պարունակում է, գործում է սրտու:

Սիրտն է, որ պետք է «իմանա» այս աճող, խոր հայտնությունները: Դրանք կարող ենք վերապրել որպես անձական հայտնություն միայն Նրա ներկայության մեջ: Սպասումը և հաղորդությունը կբերեն Նրա ներկայությունը, իսկ Նրա ներկայությունը հենց Ինքն է անձամբ: Միայն մեր սիրտը կարող է անձնապես վերապրել Աստծուն: Շատերս չենք կամենում սպասել Աստծուն, դա ցույց է տալիս Աստծո հանդեպ թույլ փափագը, որովհետև դեռևս աշխարհիկության ձգտում ունենք: Մենք խաբված ենք՝ մտածելով, թե ամեն բան գիտենք Աստծո սիրո, ողորմության, բարության և քաղցրության մասին: Մենք իրականում պետք է «սիրով արմատ գցած և հաստատված լինենք... որ Աստծո ամեն լիությունով լցվենք» (Եփես. 3.17- 19): Սա ձևավորվում է այն ժամանակ, երբ Հոր հետ սրտի հաղորդությունը դառնում է մեր կյանքը:

Աստված ցանկանում է ավելի ու ավելի խորությամբ հայտնել Իրեն մեզ և մեր միջոցով ուրիշներին:

Որքանով եմ հավատում, որ իմ հոգևոր կյանքն ամբողջովին կախված է Աստծուց: Պատասխանը կախված է իմ էության մասին ճշմարտությունն իմանալուց և դրա համար Աստծո դեղամիջոցը՝ խաչը, գործածելուց (Գաղ. 2.20):

Լռել Աստծո առջև

Աստծուն նվիրված ժամանակի նկատմամբ ճիշտ մոտեցում գտնելն անհրաժեշտ է մեր հոգևոր կյանքի պտղաբերության համար: Առաջին՝ մենք պետք է հանդարտվենք Աստծո առջև, լռեցնենք մեր մտքերը և սրտերը: Սա հեշտացնում է Սուրբ Հոգու լուսավորումը և լուսաբանումը ստանալը: Սրտում ինքս ինձ լռեցնելը իմ աշխատանքը չէ: Աստված նախապատրաստում է մեզ, եթե փնտրում ենք այն: Եթե հետամուտ չենք սրան, մեր միտքը զբաղ-

ված կլինի այնպիսի բաներով, ինչպիսիք են աշխատանքը, դպրոցը, ընտանիքը, և մենք կշարունակենք ինչ- որ գործողություններ կատարել՝ փորձելով գոհացնել Աստծուն Նրա հետ առանձին ժամանակ անցկացնելիս: Որովհետև մենք զգում ենք, որ ինչ- որ բան պետք է անենք:

Քրիստոսի առջև լռելը կամ հանդարտվելը ներքնակ Քրիստոսի հոգևոր աշխատանքն է, որը կատարվում է այն դեպքում, եթե իմ սիրտը հանձնված է Նրա խաչին. սա իմ աշխատանքը չէ: Հանդարտվելը այն ժամանակն է, երբ ներքուստ մի կողմ դնելով մարդկանց, իրադարձությունները և իրերը՝ խնդրում եմ և հավատում, որ Աստված կգործի: Դա ենթադրում է հանգստացնել իմ սիրտը և լռեցնել ինձ Աստծո առջև: Ես կարիք ունեմ սպասելու Աստծուն, որովհետև Նա փոխում է իմ սիրտը: Սա կարգապահության կամ ժամանակն ու առաջնահերթությունները համատեղելու հարց չէ: Սա Հիսուսի անունով իշխանություն վերցնելն է հին մարդու զորության նկատմամբ, ուրանալն ու մերժելն է նրա կյանքը և հանձնվելն է նոր մարդուն: Նորովի հանձնվեք Քրիստոսին և Նրա խաչին, որպեսզի հանդարտվեք Աստծո առջև: Հավատացե՛ք, որ Նա անում է այդ աշխատանքը, հավատքով հոչակե՛ք սրտի այն հանդարտությունը, որ Քրիստոսն առաջացնում է ձեր մեջ: Դուք կունենաք հանդարտության գիտակցում: Երբեմն գուցե հարկ լինի սպասել դրան, պարզապես ուշադիր եղե՛ք Հոգու նկատմամբ: Ձեր օրը չի պատկանում ձեզ, այն պատկանում է Նրան: Դուք սովորում եք հանդարտեցնել ձեր կյանքը, ոչ թե աղոթքին կամ հաղորդակցությանը հատկացված ժամանակը:

Կյանքը հանդարտեցնել սովորելը խորապես հոգևոր, ինչպես նաև պահանջկոտ աշխատանք է: Դուք կանցնեք փուլերով: Եթե կարողանաք ամեն օր մեկ ժամ կամ ավելի նվիրել իսկական հոգևոր կյանքին, ձեր կյանքն այդ օրը կհարստանա, և ձեր սիրտը լուսավոր և մաքուր կլինի: Եթե ամեն օր ապրեք այսպիսի հոգևոր կյանքով, ձեր սիրտը կկարողանա ավելի շատ լինել Աստծո տիրապետության ներքո, ձեր հոգին ավելի ու ավելի կգորանա, ձեր վիճակը շարունակ կբարելավվի, դուք ավելի ընդունակ կդառնաք քայլելու այն ճանապարհով, որով Սուրբ Հոգին առաջնորդում է, և Աստված առատորեն կօրհնի ձեզ:

Հանդարտվելու գործընթացը ենթադրում է նվաճել մարմինը, ոչ թե այստեղ և այնտեղ, այլ ամեն օր, և մահ կիրառել նրա նկատմամբ, իսկ սա այն է, ինչ սովոր չենք անելու: Հնարավոր է՝ մենք բացահայտենք, որ շատ քիչ ցանկություն ունենք հոգևոր կյանքի կամ Աստծո հետ մտերմության համար: Սա աստվածա-

յին բացահայտում է, որ տանում է մեզ դեպի խաչը՝ սովորեցնելով անձնատուր լինել նոր կյանքին: Ձեր հոգևոր կյանքի նպատակը Սուրբ Հոգու ներկայությունը գիտակցաբար ձեռք բերելն է: Սա ենթադրում է ոչ թե հետևել կանոնների կամ անցնել կրոնական արարողակարգերի միջով, այլ իսկապես ներդաշնակությամբ գործել նոր մարդու, Աստծո կյանքի հետ: Սա մեղք գործելը մերժելն է, մեղքին հաղթելն է և ուրիշներին անձնագոհ Քրիստոսի խոնարհությամբ սիրելն ու ծառայելն է:

Նախքան Աստծո հետ առանձին ժամանակ անցկացնելը մենք գիտակցաբար պետք է թողնենք այն ամենը, ինչը կարող է խանգարել մեզ, հեռու լինենք մարդկանցից, բջջային հեռախոսներից, իրադարձություններից և այն ամենից, ինչը կարող է հեռացնել մեր սիրտն Աստծուց: Որպես կանոն՝ մեր սրտերն առավել խաղաղ են առավոտյան, նախքան գործ ենք ունենում անթիվ փոքր բաների հետ, որոնք ի հայտ են գալիս մեր առօրյայում և աշխատանքի մեջ: Մենք կարող ենք աղոթել Աստծուն այդ ժամանակ՝ պատմելով Նրան մեր բոլոր դժվարությունները և թերացումները, մենք կարող ենք ուշադիր կարդալ Աստծո Խոսքը՝ խորհելով և փնտրելով Նրա կամքը և գործելու ճանապարհը: Որքան հանդարտեցնենք մեր անձերն Աստծո առջև այս կերպ, այնքան ավելի հավանական է, որ կվերապրենք Սուրբ Հոգու աշխատանքը և լուսավորումը: Մեր հոգևոր վիճակը կբարելավվի Հոգու միջոցով:

Խորհել Աստծո Խոսքի շուրջ Աստծո հետ առանձին ժամանակ անցկացնելիս

Շատ մարդիկ կարդում են Աստծո խոսքերը Նրա հետ առանձին ժամանակ անցկացնելիս, բայց իրականում հաշվի չեն առնում դրանք. նրանք պարզապես անցնում են դրանց միջով և բավարարվում դրանց մակերեսային նշանակությունը հասկանալով: Նրանք չեն ստանում ճշմարիտ հասկացողություն Աստծո կամքի կամ պահանջների մասին: Նրանց քննարկումները տվյալ հատվածի վերաբերյալ ցույց են տալիս այս թերությունը: **Մենք աղոթքով պետք է կարդանք և խորհենք Խոսքի շուրջ կրկին ու կրկին՝ փափագելով ձեռք բերել լուսավորում և լուսաբանում Սուրբ Հոգուց:** Հոգին առաջնորդում է մեզ հարցեր տալու և մտածելու և բացահայտելու պատասխանները: Միայն այս կերպ ենք հասկանում Աստծո Խոսքի ճշմարտությունները, և թե ինչ են դրանք իրականում մեզ հայտնում: Անհնար է հասնել այս նպատակին՝ առանց խնդրելու և սպասելու, որ Հոգու լույսը գործի մեր սրտում: Մենք ավելի լավ պետք է հասկանանք և փնտրենք Սուրբ

Հոգու առավել խոր ներկայությունը մեր սրտում, երբ կարդում և ուսումնասիրում ենք Խոսքը:

Աստծո Խոսքի սերտողությունը հիմնականում ներառում է ճշմարտությունը փնտրելը, հարցեր տալը, Աստծո խոսքերի մեջ Նրա մտադրությունները փնտրելը, Խոսքի մեջ Աստծո կամքը հասկանալու վրա կենտրոնանալը և Աստծո Խոսքից հասկացողություն փնտրելը և ավելի շատ ճշմարտություններ ձեռք բերելը: Լավ հարցը հանգեցնում է լավ պատասխանների: Թ՛ո՛ւյլ տվեք Հոգուն սովորեցնել ձեզ, թե ինչպես հարցեր տաք: Սա Սուրբ Հոգու աշխատանքն է մտքում և սրտում: Պետք է ձգտել, որ Սուրբ Հոգին բնակվի երկուսի մեջ էլ՝ առանց տեղ տալու վախին: Շատ եկեղեցիներ չեն սովորեցնում այս մոտեցումը Աստծո Խոսքի սերտողության նկատմամբ:

Մենք պետք է կարդանք և ուսումնասիրենք Խոսքը Սուրբ Հոգու հետ: Կարդալիս պետք է դիտարկենք Աստծո նպատակը, երբ ասում ենք, թե ինչի մասին է տվյալ հատվածը, պարզենք, թե որն է Աստծո կամքը, ինչ կարող է կատարել այն մեր մեջ, ինչպես է արտահայտվում մեր ապստամբ կամ անկատար լինելը, ինչպես կիրառենք ճշմարտությունը այս խնդիրները լուծելու համար: Ահա թե ինչու ենք մենք սկսում Հոգու հետ: Մենք պետք է փնտրենք և խորհենք այսպես Հոգու հետ: Երբ այսպես վարվենք և լինենք Աստծո ներկայության մեջ, նախքան դա գիտակցելը կունենանք Հոգու լույսը և լուսավորումը, որոնք թույլ կտան մեզ հասկանալ, թե ինչ են իրականում ասում Աստծո խոսքերը, և որոնք են Աստծո նպատակը և մտադրությունները: Դրանից հետո, երբ վարվենք Աստծո Խոսքի պահանջների համեմատ, կկարողանանք աստիճանաբար հասկանալ ճշմարտությունը և թափանցել դրա իրողության մեջ մեր սրտում, ուր էլ Աստված առաջնորդում է մեզ:

Օրինակ՝ Տեր Հիսուսն ասում է. «...**Ճշմարիտ ասում եմ ձեզ. եթե դարձի չգաք և չլինեք երեխաների նման, չեք մտնի երկնքի արքայությունը**» (Մատթ. 18.3): Բոլորս կարող ենք հասկանալ այս պնդման մակերեսային նշանակությունը, այսինքն՝ Աստված ցանկանում է, որ լինենք այնքան մաքուր և ազնիվ, որքան փոքր երեխաները: Միայն Աստծո պահանջների համաձայն ազնիվ մարդիկ դառնալով կարող ենք առաջնորդվել Աստծուց դեպի Նրա արքայություն: Բայց կան հարցեր, որոնք **պետք է տանք Սուրբ Հոգուն և որոնց շուրջ առավել խորությամբ պետք է մտորենք Հոգու հետ:** Այդ հարցերից են՝ ռ՛րն է ազնիվ մարդ լինելու կարևորությունը, ինչն է Աստված սիրում ազնիվ մարդկանց, անազնվության և խաբեության ինչ դրսևորումներ ունենք, և ինչ-

պէս պետք է սովորենք լինել ազնիվ:

Օրինակ, երբ Աստծո Հոգով խորհենք, թե խաբեության ինչ դրսևորումներ ունենք, Նրանից կբացահայտենք այսպիսի բաներ. երբ հարաբերվում ենք այլ մարդկանց հետ, հաճախ չենք կարողանում դադարել ստելուց կամ խաբելուց՝ մեր շահերը, հեղինակությունը և կարգավիճակը պաշտպանելու համար: Մեկ այլ օրինակ. երբ հանձնվում ենք Աստծո ծառայությանը, կարող ենք աղոթքում ասել, որ ցանկանում ենք սիրել և գոհացնել Աստծուն, բայց երբ մեր երեխան հիվանդանում է, կամ ընտանիքի անդամը կորցնում է աշխատանքը, սկսում ենք անընդհատ բողոքել Աստծուն և հիասթափվում ենք ու ցանկանում հրաժարվել Տիրոջ համար գործելուց: Մենք կարող ենք տեսնել, որ մեր նվիրումն Աստծո ծառայությանը անկատար է և թույլ է տալիս, որ գործարքներ կնքենք Աստծո հետ: Մենք ծառայում ենք եկեղեցուն կամ Աստծուն, որպեսզի օգուտ քաղենք Աստծուց, այլ ոչ թե գոհացնենք Նրան: Սրանք խաբեության մեր դրսևորումներից մի քանի օրինակներ են:

Այս դրսևորումներից Հոգու օգնությամբ կարող ենք տեսնել, որ մենք իրականում ազնիվ չենք: Երբ Հոգու հայտնությունների միջոցով հստակորեն տեսնում ենք մեր թերություններն ու արատները, Նրանից մեր ներսում ստանում ենք ծարավ ճշմարտության համար և ձգտում ենք ավելի շատ կիրառելու Աստծո խոսքերը մեր կյանքում, որպեսզի կարողանանք աստիճանաբար ազնիվ դառնալ: Սա է այն արդյունքը, որին հասնում ենք Աստծո հետ Նրա ներկայության մեջ Նրա խոսքերի շուրջ խորհրդածելով:

Գործնական խնդիրներ և դժվարություններ Աստծո հետ առանձին ժամանակ անցկացնելիս

Մեր հոգևոր կյանքում աստվածային արդյունքների հասնելու համար պետք է կրենք պատասխանատվություն Աստծո Խոսքը «ուտելու» և «խմելու» համար, պետք է սովորենք կապել դա մեր իրական վիճակի հետ և փնտրել ճշմարտությունը:

Երբ ուտում և խմում եք Աստծո Խոսքը, պետք է գնահատեք ձեր իրական վիճակը Խոսքի համաձայն: Այսինքն՝ երբ Խոսքից բացահայտում եք ձեր թերությունները կյանքում և փորձառության մեջ, հոգևորապես ունակ պետք է լինեք գտնելու ճանապարհ՝ շրջվելու ձեր սխալ շարժառիթներից և մղումներից: Եթե մշտապես սրտանց որոնեք այս բաները և թափեք ձեր սիրտը Աստծո առջև, որպեսզի Նա ձեզ ունակ դարձնի դրանց հասնելու, կգտնեք ճանապարհ, որով պետք է գնաք: Դուք դատարկություն չեք զգա և կկարողանաք պահպանել հոգևորապես առողջ վիճակ: Միայն այդ ժամանակ կլինեք մեկը, ով իր կյան-

քում հավատքով բեռ կրի: Դուք իրավասու կլինեք ընդունելու Աստծո Խոսքի լուսավորումը և շարժվելու Աստծո Հոգով:

Օրինակ, եթե հայտնաբերում ենք, որ այլ հավատացյալների հետ շփվելիս կամ մեր պարտականությունների շրջանակներում ինչ-որ մեկի հետ համագործակցելիս մշտապես ցուցաբերում ենք մեծամտություն (զգում ենք նախանձ կամ խանդ, կառչում ենք մեր կարծիքից, ստիպում, որ մյուսները լսեն մեզ, և գուցե նույնիսկ դասախոսություններ կարդում և ճնշում ուրիշներին), հանգամանալից պետք է մտածենք այս խնդրի մասին, երբ առանձին ժամանակ ենք անցկացնում Աստծո հետ: Ինչո՞ւ ենք մշտապես այսպիսի այլասերվածություն ցուցաբերում և կարծես երբեք չենք կարողանում փոխվել: Ինչո՞ւ չենք կարողանում ազատվել մեղքի կապանքներից և դադարել մեղանշելուց: Եվ հաճախ չենք կարողանում չստել և չխաբել մեր դեմքը և կարգավիճակը պահպանելու համար. ինչո՞ւ է այսպես: Ինչո՞ւ է այսքան դժվար ազնիվ լինել: Տեր Հիսուսը ներել է մեր մեղքերը, ինչո՞ւ ենք շարունակ մեղանշում ամբարտավանության այս մեղքով: Աստծո հետ մտորելիս տվեք այս և ավելի շատ հարցեր ինքներդ ձեզ և Աստծուն: Սպասե՛ք Աստծո ներկայությանը և հանգիստ մնացեք Նրա առջև: Ձեր հոգևոր պատասխանատվությունն է տալ այս հարցերը Աստծուն: **Հոգին կուղղորդի և կառաջնորդի ձեզ, երբ բախվեք Նրա հետ այս հարցերին հետամուտ լինելու պատասխանատվությանը**: Եթե չառերեսվեք ինքնաբացահայտման ձեր պատասխանատվությանը, Հոգին չի անի դա ձեզ համար, դուք անհնազանդ եք Աստծուն՝ Նրա հետ ձեր մեղավոր արարքների բացահայտմանը հետամուտ չլինելով: Ես պետք է ընտրեմ դեմառդեմ կանգնել իմ մեղքերին և ճանաչել դրանք Աստծո առջև ու սպասել Նրա ներկայությանը: Եթե չեմ անում սա Հոգու միջոցով անձնատուր լինելով, ես անհնազանդ եմ Աստծուն: Դուք Նրա սրտի հետ հաղորդության գործընթացի մեջ եք: Տգիտությունը և անտարբերությունը Աստծուց չեն:

Գլուխ 20. Սպասել Աստծուն և ամենօրյա փրկություն

Այս գլխում կանդրադառնանք հետևյալ թեմաներին՝ ինչ է իրականում նշանակում սպասել Աստծուն, ի՞նչ է փրկության, Աստծուց կախված լինելու և Աստծուն սպասելու կապը, սպասել Աստծուն և պահել Նրա ճանապարհները և սպասել Աստծուն սրտով:

Ինչ է իրականում նշանակում սպասել Աստծուն

Աստծուն սպասելը և Աստծուց սպասելը նույնը չեն: Մենք Աստծուց սպասում ենք աղոթքի պատասխաններ և բազմաթիվ այլ բաներ, օրինակ՝ կերակուր, ազատագրում, բժշկություն, ուղղորդում, իմաստություն, զորություն, Աստծո կամքի ճանաչում, հաջողություն և այլն: Սակայն Աստծուն սպասելը պարզապես ինչոր բաների կամ օրհնությունների սպասելը չէ, որոնց կարիքն ունենք: Աստված հոգում է մեր ամենօրյա կարիքները, և մենք վստահում ենք Նրան: Աստծուն վստահելը ենթադրում է սպասելը: **Այդուհանդերձ, Աստծուն սպասելը (Նրա բարեհաճությանը սպասելը) ունի առավել բարձր նպատակ, և դա Նրա ներկայությունը և Նրա կյանքը ընդունելն է որպես մեր ամենօրյա հաց, ամենօրյա կյանք, որով պետք է ապրել:** Կյանքի հացը միայն մեր երկրային կյանքի կերակուրի, կարիքների կամ օրհնությունների համար չէ, այդ Հացը հենց մեր կյանքն է: **Առանց Հացի չկա կյանք:** Մենք Աստծո ներկայությունը գիտակցելու կարիք ունենք: Նրա ներկայությունը բերում է Նրա գոյությունը: Աստված տալիս է Իրեն, Իր գոյությունը մեզ կյանքի Հացով: Մեր առաջին նպատակը մշտապես պետք է լինի լուռ և հանգիստ լինելը և Նրան, Նրա ներկայությանը և Նրա կյանքին սպասելը: Այս սպասումը կրերի մեզ Նրա գիտակցությունը և Նրա խորհուրդը: Նրա կամքի խորհուրդը բաժանված չէ Նրա մտքից, դա Նրա էության և Նրա ներկայության անբաժանելի մասն է: *Նրա ներկայությունը, Նրա զորությունը, Նրա խորհուրդը և Նրա միտքը, սրանք բոլորը մեկ են:* Մենք պետք է սպասենք Աստծո ներկայությանը և ունենանք այդ ներկայության գիտակցումը: Եկեք ժամանակ հատկացնենք և ձևավորենք *Աստծո ներկայությանը սպասելու սովորություն:*

Փրկություն, Աստծուց բացարձակ կախվածություն և Աստծուն սպասում

«Հիրավի, որ իմ անձը լուռումունջ սպասում է Աստծուն, Նրանից է իմ փրկությունը» (Սաղմ. 62.1):

«Քո փրկությանն եմ սպասում, Եհովա» (Ծննդ. 49.18):

Մենք ավելի ու ավելի շատ ունենք Աստծո կարիքը: Սա բազմաթիվ հավատացյալների աղաղակն է: Մենք պետք է զարգացնենք Նրա ներկայության առավել խոր զգացում, փնտրենք

առավել անմիջական կապ Նրա հետ և հանգստանանք՝ լիովին ապավինելով Նրան՝ որպես մեր միակ կյանքի: Մենք պետք է սովորենք գործնականում և փորձառությամբ երանությամբ սպասել միմիայն Աստծուն, որովհետև միայն Նրա կյանքն է մեր կյանքը:

Փրկությունը, ազատագրումը և բժշկությունը իսկապես գալիս են Աստծուց, և չնայած մեր աղոթքների անհրաժեշտությանը՝ այս ամենն ամբողջովին Նրա աշխատանքն է, ինչպիսին արարչագործությունն էր: Հետևաբար մեր առաջին և բարձրագույն պարտականությունն է սպասել Նրան, որպեսզի Նա անի այն աշխատանքը, որը հաճելի է Իրեն: Այնուհետև Աստծուն սպասելը դառնում է փրկության լիությունը վերապրելու միակ միջոցը: Իսկապես, դա միակ միջոցն է ճանաչելու Աստծուն՝ որպես մեր փրկության՝ իր ամբողջ լիությամբ: Բոլոր դժվարությունները, որոնց բախվում ենք, և որոնք հետ են պահում մեզ լիարժեք փրկությունից, ունեն մեկ պատճառ՝ Աստծուն սպասելու ոչ լիարժեք, հետևաբար և անկատար գիտությունը և սովորությունը: Այն ամենը, ինչի կարիքը եկեղեցին ունի աշխարհում Աստծո կարող զորության դրսևորման համար, ***վերադառնալն է դեպի մեր իսկական տեղը՝ Աստծուց՝ կյանքի և օրհնությունների մեր միակ աղբյուրից, բացարձակ և անդադար կախված լինելու վայրը***: Շատ եկեղեցիներում մենք անտեսել և մոռացել ենք կատարել սա և փոխարենը հիմա կենտրոնանում ենք հիմնականում Աստծո արքայության համար ինչ-որ բաներ անելու վրա: Մեր հոգևոր կյանքը լի է սեփական ջանքերով, ինքնաապավինությամբ և ինքնահաճեցմամբ: Աստված, տո՛ր մեզ հասկացողություն: Աստված, մղի՛ր մեզ ապաշխարության:

Մարդու իսկական դիրքը՝ լիարժեք կախվածություն Աստծուց

Աստված՝ որպես Արարիչ, ձևավորեց մարդուն, որպեսզի լինի անոթ, որի միջոցով կկարողանար ցուցադրել Իր զորությունը, սերը և բարությունը: Մարդը ինքն իր մեջ չպետք է ունենար կյանքի կամ զորության կամ երջանկության աղբյուր: Հավիտենական և միակ կենդանի Աստված պետք է լիներ այն ամենը Տվողը և Հաղորդողը, ինչի կարիքը մարդն ուներ իր կյանքի յուրաքանչյուր վայրկյանին: Մարդու փառքը և երանությունը անկախ կամ իրենից կախված չպետք է լինեին, այլ պետք է կախված լինեին Աստծուց՝ ամբողջ կյանքի և սիրո և անսահման հարստության Աստծուց: Մարդը պետք է ունենար Աստծո լիությունից ամեն վայրկյան ստանալու ուրախությունը: Նրա՝ որպես չմեղանչած արարածի

երանությունն էր բացարձակ կախվածությունն Աստծուց:

Երբ մարդը մեղանչեց Աստծո դեմ, էլ ավելի բացարձակ կախվածություն ձեռք բերեց Նրանից: Նրա համար իր ընկած վիճակից վերականգնվելու հույս չկար. դա հնարավոր էր միայն Աստծով, Նրա զորությամբ և ողորմությամբ: Աստված էր միայն, որ սկսեց փրկության գործը, և Նա շարունակում է այն ամեն վայրկյան յուրաքանչյուր հավատացյալի մեջ: Նույնիսկ վերածնված մարդու մեջ բարության ոչ մի զորություն չկա, որովհետև նրա էությունը լիովին մեղավոր է, հպարտ, եսասեր և եսակենտրոն: Շատերը մերժում են մարդու էության մասին այս ճշմարտությունը: Աստվածաշնչյան այս ճշմարտությունը կորսվել է: **Մարդն ունի և կարող է ունենալ միայն այն, ինչ ամեն վայրկյան ստանում է Աստծուց:** Հետևաբար Աստծուն սպասելը պարտադիր է: Այն պետք է լինի շարունակական և անխափան, ինչպես օդը շնչելը, որ պահպանում է մարդու բնական կյանքը:

Սա է մարդու իսկական դիրքը. բացարձակ և անդադար կախվածություն Աստծուց ամեն ինչում: Եթե չբռնենք մեր մարդկային էությունն այնպիսին, ինչպիսին այն իրականում է՝ դրա հոգևոր աղքատությունը և դատարկությունը և աննշանությունը և լիակատար անօգնականությունը, չենք ունենա Աստծուց բացարձակ և անդադար կախվածության կարիք, չենք գիտակցի Աստծուն շարունակ սպասելու անհրաժեշտությունը: Հավատացյալը հավատքով պետք է հանձնվի այս ճշմարտությանը և սկսի Սուրբ Հոգով տեսնել, որ ամեն վայրկյան պետք է ստանա այն, ինչ Աստված ամեն վայրկյան գործում է իր համար: Նա պետք է համաձայնի «ես»- ն ուրանալ սովորելու այս աշխատանքին: Նա հոժարությամբ պետք է ընդունի, որ Աստված գործում է ամեն բան, և որ իր ջանքն ու օգնությունը կխանգարեն Աստծո աշխատանքին: Եթե նա ընդունի սա, Աստծուն սպասելը կդառնա նրա ամենապայծառ հույսն ու ուրախությունը: Նրա հասկացողությունը կաճի Աստծո սիրո մեջ: **Աստված հաճույք է ստանում, երբ Իր սիրով Իր էությունը և Իր կյանքը փոխանցում է Իր զավակին լիովին** և չի հոգնում նրա կյանքը և ուժերը վերահսկելուց, և Նա անում է դա ամեն վայրկյան: Աստված անդադար տալիս է և գործում. Նրա զավակն անդադար սպասում է և ընդունում: Սա է այն երանելի կյանքը, որ կյանքի Հացը բերում է: Սա է Աստծուն ԱՄԵՆԸ լինելու փառքը վերագրելը. սա այն վերապրումն է, որ **Նա ԱՄԵՆ է մեզ ամար:** Թող Աստված սովորեցնի մեզ Իրեն սպասելու երանությունը:

Աստծո փառավոր փրկությունը

Եկեք մտածենք Աստծո փառավոր փրկության մասին, այժմ Նա նպատակ ունի գործելու և կատարյալ դարձնելու այն մեր մեջ Իր Հոգով: Եկեք մտորենք, մինչև որոշ չափով գիտակցենք, որ այս փառահեղ փրկության մեջ ամեն գործողություն՝ կապված **արդարության, սրբացման և սրբության հետ, պետք է լինի Աստծո աշխատանքը, որ ամեն վայրկյան իրականանում է մեր մեջ:** Աստված չի կարող պարզել Իր շնորհքը, բարությունը կամ զորությունը որպես որևէ արտաքին բան, ինչպես երկնքից անձրևը: Ո՛չ: Նա կարող է միայն տալ դրանք, և մենք կարող ենք միայն վայելել դրանք, երբ Նա անմիջականորեն և անդադար գործի դրանք մեր մեջ: **Հետևաբար միակ պատճառը, որ Նա չի գործում մեր սրբացումն առավել արդյունավետ և շարունակաբար, այն է, որ մենք թույլ չենք տալիս Նրան:** Մենք խանգարում ենք Նրան մեր անտարբերությամբ կամ մեր ջանքերով, այնպես որ Նա չի կարողանում անել այն, ինչ պետք է անի: Անձնատուր լինելը, հնազանդությունը, ցանկությունը և վստահությունը Աստծուն սպասելու, Նրա փրկությանը սպասելու բաղկացուցիչ մասն են: Այս ամենին միանում են մեր ուժերով աստվածային բարիք գործելու մեր լիակատար անօգնականության խոր զգացումը և կատարյալ վստահությունը, որ մեր Աստված կգործի ամենը Իր աստվածային զորությամբ:

Մենք պետք է մտորենք այն փրկության շուրջ, որ Աստված ցանկանում է գործել մեր մեջ, մինչև որ ճանաչենք դրանում պարունակվող ճշմարտությունները: **Փրկությունը փրկություն է մեղանշումից և մարմնի իշխանությունից.** սա Աստծո անձնագրի ազապե սիրո կյանքն է, որ հարատևում է Աստծո շնորհքով և խոնարհությամբ՝ ուրիշներին անշահախնդրորեն ծառայելու համար: Սա է փրկության նպատակը: Մեր սիրտը աստվածային ուժգնացող գործողության տեսարան է: Մենք կարող ենք շատ քիչ բան անել սրբացման և սրբության այս աշխատանքի ուղղությամբ, որովհետև **Աստված է, որ գործում է մեր մեջ կամենալն էլ, անելն էլ** (Փիլիպ. 2.13): Աստված միայն խնդրում է, որ անձնատուր լինենք, համաձայնենք և սպասենք Իրեն, և Ինքը կանի ամենը: **Սա է այն հայտնությունը, որի կարիքն ունենք. Նա կանի ամենը:** Եկեք մտորենք և լռենք Նրա ներկայության մեջ, մինչև որ Հոգով տեսնենք, թե որքան ճիշտ և երանելի է, որ Աստված է ամենն անում: Այլապես մենք կշարունակենք գործել թաքնված մարմնից, որը եսասեր է, եսակենտրոն և հպարտ: Մեր աշխատանքը կտա երկրային, ոչ երկնային արդյունքներ: Եթե հավատանք, որ Աստված կանի ամենը, մեր սիրտն

ինքնին կսխրովի խոնարհության մեջ և կասի. «Ես սպասել եմ Քո փրկությանը, ո՛վ Տեր»: Մեր աղոթքը և մեր արձագանքը կլինեն. «Իմ անձը իրավ Աստծուն է սպասում»: **Չի կարող լինել որևէ բարիք՝ բացի նրանից, ինչ Աստված գործում է. ոչինչ «ես»- ից, սեփական ջանքերից, կամքից և ինքնապավինությունից:** Եկեք սպասենք Աստծուն՝ սրտանց հավատալով Նրա աշխատանքին, և այդ հավատքով աղոթենք, որ Նրա կարող զորությունը գա: **Բացարձակ կախվածություն Աստծուց. սա է մարդու դիրքը և նրա իմաստության միակ աղբյուրը:** Թող մեր սրտի աչքերը բացվեն՝ տեսնելու Աստծուն, որ գործում է մեր և ուրիշների մեջ, և տեսնելու, թե որքան երանելի է երկրպագել և պարզապես սպասել Նրա փրկությանը, **որպեսզի Նրա կյանքը և Նրա աշխատանքը փոխարինեն իմ կյանքին և իմ աշխատանքին:**

Աստված կավարտի Իր աշխատանքը

Մեր աղոթքները և հաղորդությունը Աստծո հետ մեր հարաբերության հիմնական արտահայտությունն են: Հիմնականում դրանց մեջ պետք է փնտրենք և սպասենք Աստծուն: Սա մտավոր վարժություն կամ երևակայություն չէ: Աստծուն փնտրելը և սպասելը խոր հոգևոր աշխատանք է և ինքնիրեն չի կատարվում զուտ այն պատճառով, որ ունենք ցանկություն դրա համար: Սա ներառում է ամբողջ կյանքը: **Եկեք սկսենք սպասել Աստծուն՝ դադարեցնելով մեր գործունեությունը և լռելով Աստծո առջև, ծնկի իջնելով և ձգվելով տեսնելու Աստծուն Իր ամենակարող գործունեության մեջ:** Սիրտը պետք է սովորի անել սա. անհրաժեշտ է հանձնվել խաչին: Սիրտը պետք է հանձնվի Աստծուն ոչ թե պարզապես խոսքերով, այլ Նրա ներկայությունը գիտակցելով և **հավատալով, որ միայն Նա է ունակ և միշտ պատրաստ գործելու ամեն բարիք:** Եկեք անձնատուր լինենք Աստծուն այն համոզվածությամբ, որ Նա գործում և գործելու է մեր մեջ, և պահպանենք խոնարհություն և հանդարտություն: Շարունակենք հանձնված մնալ Նրան և Նրա խաչին, մինչև որ Սուրբ Հոգին բորբոքի մեր հավատքը, որ Աստված կավարտի Իր աշխատանքը: Այնուհետև սա իսկապես կդառնա մեր սրտի զորությունն ու ուրախությունը: Կյանքը կդառնա մեկ երանելի ուժգին աղաղակ. **«Սպասեցի Քո փրկությանը, ո՛վ Տեր», «Իմ անձը միայն Աստծուն է սպասում»:**

Սիրելի Քրիստոսի աշակերտ, եկեք դիտարկենք սա. միակ նպատակը, որի համար Աստված մարդուն կյանք տվեց, այն էր, որ նրա մեջ կարողանար հաստատել և ցուցադրել Իր կյանքը,

Իր իմաստությունը, զորությունը և բարությունը: Ինչպես: Ամեն վայրկյան լինելով նրա կյանքը և երջանկությունը և նրա վրա հեղելով Իր կյանքը, Իր բարության և զորության հարստությունը այն չափով, ինչ չափով նա կարող է ընդունել: Աստծո դերը և էությունը կյանքի մատակարար և մարդու ամեն կարոտություն լրացնող լինելն է: Մարդու դերը և էությունը ոչ այլ ինչ են, քան սպասել Աստծուն և ստանալ Նրանից այն, ինչ միայն Նա կարող է տալ, ինչ Նա տալիս է հաճույքով՝ Իր կյանքը՝ կյանքի Հացը:

Եթե մենք ուզում ենք հասկանալ, թե ինչ է նշանակում սպասել Աստծուն, սովորել սպասել և վերապրել դրա երանությունը, պետք է սկսենք հենց սկզբից: Պետք է փնտրենք և տեսնենք այն կանչի խոր ողջամտությունը, որ գալիս է մեզ Աստծուց: Մենք պետք է պատրաստվենք դրան Սուրբ Հոգով, որը սպասում է մեր համաձայնությանը՝ Իր աշխատանքը սկսելու համար: Աստծուն սպասելը ևս մեկ բան չէ, որ պետք է անենք, այն կամայական հրաման չէ: Հայտնության միջոցով մենք կտեսնենք, որ դա Քրիստոսի կյանքով ապրելու անհրաժեշտ մասն է, անհրաժեշտ մեր մեղքի էության, մեր հոգևոր աղքատության և անօգնականության պատճառով:

Աստված է, որ տալիս է ամենը: Թող այս հավատքը խորապես մխրճվի մեր սրտում, թող միշտ **հավատանք սրան:** Թեև լիովին չենք հասկանում, թե ինչ է նշանակում սպասել Աստծուն, և չենք կարողացել զարգացնել այս սովորությունը, եկեք հավատանք: **Հավատալն օգնում է, որ ճշմարտությունը մտնի մեր սիրտ:** Եկեք անմիջապես վճռենք, որ սա կլինի մեր կյանքի և երկրպագության կարևորագույն առանձնահատկությունը՝ շարունակ, խոնարհությամբ և ճշմարտությամբ սպասել Աստծուն: Եկեք հանգստանանք՝ համոզված լինելով, որ Նա, ով ստեղծեց մեզ Իր համար, որպեսզի տա Իրեն և լինի մեր մեջ, երբեք չի հիասթափեցնի մեզ: Նրան սպասելիս կգտնենք հանգստություն, ուրախություն, ուժ և ամեն կարիքի բավարարում:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ Աստծո հետ

1. Ո՞րն է Աստծուն սպասելու նպատակը:
2. Ինչո՞ւ է Աստծուն սպասելը պարտադիր:
3. Ո՞րն է Աստծուն սպասելու և եսապաշտ կյանքն ուրանալու կապը:

Սպասել Աստծուն և պահել Նրա ճանապարհները

«Սպասիր Տիրոջը և պահիր Նրա ճանապարհը, և Նա կբարձրացնի քեզ, որ երկիրը ժառանգես...» (Սաղմ. 37.34):

Սիրելի Քրիստոսի աշակերտ, խոստացել եք լիովին հնազանդվել Աստծուն, լիովին հնազանդվել Նրա ամբողջ կամքին: Սա է Նրա հետ հաղորդության բոլոր օրհնություններին լիովին հասնելու գաղտնիքը:

Մեր անհաջողությունը, մեր անպատրաստակամությունը, անզգուշությունը և անհավատարմությունը պայմանավորված են միայն մեկ բանով. մենք ձգտել ենք հաղթելու և հնազանդվելու սեփական ուժերով, սեփական ջանքերով: *Եկեք և ծնկի իջեք Աստծո առջև, սպասեք Նրան և հաստատակամ եղեք՝ ուրանալով ձեր եսապաշտ կյանքը, մինչև սովորեք, որ Նա է Աստված, որ Նա է միայն բարի և ոչ երբեք դուր:* Այս ճշմարտությունն անհետացել է եկեղեցում, բայց սա է հոգևոր կյանքի գաղտնիքը: Նույնիսկ վերածնված մարդը բարի չէ, նրա էությունը բարի չէ: Միայն Աստված կարող է գործել որևէ բարիք: **Մարդու բարությունը լի է եսասիրությամբ և հպարտությամբ, և դա է պատճառը, որ Հիսուսն ասաց, որ «ես»-ը պետք է ուրանալ:** Հավատացեք, որ ձեր մեջ և այն ամենում, ինչ ձեր էությունը կարող է անել, չկա ճշմարիտ զորություն բարության համար. «Ինձանում (այսինքն՝ իմ մարմնում) մի բարի բան չի բնակվում...» (Հռոմ. 7.18), «Որովհետև մարմինը ցանկանում է հոգուն հակառակ, և հոգին՝ մարմնին հակառակ, և սրանք իրար հակառակ են...» (Գաղ. 5.17), «Որովհետև մարմնի խորհուրդը Աստծո դեմ թշնամություն է, որովհետև Աստծո օրենքին չի հնազանդվում և չի էլ կարող» (Հռոմ. 8.7): **Գոհացեք, որ Աստուծուց ամեն վայրկյան ընդունում եք Նրա կարող շնորհքի և կյանքի ներգործությունը ձեր մեջ:** Հիսուսը շարունակում է ասել. «Կացեք ինձանում: Առանց Ինձ ոչինչ չեք կարող անել» (Հովհ. 15): Շարունակեք հավատալ, որ Աստված հայտնում է Իր ներկայությունը, և Նրան սպասելը կնորոգի ձեր ուժը՝ վազելու Նրա ճանապարհներով և չհոգնելու, քայլելու Նրա ուղիներով և ուժասպառ չլինելու:

Հանդարտվեք, սիրով և որախությամբ համաձայնեք լինել ձեր երանելի Հոր ձեռքերում: Աստծուն սպասելը կարող է առաջնորդել Հոր հետ սրտի հաղորդության: **Հանգստացեք ձեր հավատքում և հանդարտվեք Նրա ներկայության մեջ, ինչը գալիս է Նրան սպասելուց:** Հավատքով և վստահաբար հանգստացեք Նրա բարության և հավատարմության մեջ, հանգստացեք այն համոզվածությամբ, որ Աստված իրականացնում է Իր աշխատանքը ձեր

մեջ: «Բայց մեզ ձեզ հետ Քրիստոսում հաստատողը և մեզ օժողը Աստված է» (Բ Կորնթ. 1.21): «Տերը կկատարի ինձ տեղ...» (Սաղմ. 138.8): Մենք պետք է կառչենք մեր վստահությունից, որովհետև «...Նա, որ ձեզանում սկսեց այս բարի գործը, կկատարի էլ մինչև Հիսուս Քրիստոսի օրը» (Փիլիպ. 1.6): **Հանգիստ եղեք Աստծո առջև: Աստծո առջև հոգու հանդարտությամբ, Նրա հեղ սրբի հաղորդությամբ խորամոլի եղեք ձեր իսկ հոգևոր անօգնականության և աղքատության մեջ և սպասեք Նրան, որ հայրնի Իրեն:** Խորին խոնարհությամբ վախեցեք թույլ տալուց, որ ձեր մտքերը և կամքը կամ հենց ձեր ուժերը գործեն որևէ բան, եթե Աստված չի ներգործում կամենալը և անելը: Հեզությամբ գոհունանկ եղեք, որ լինեք ոչինչ, մինչև որ Աստված տա Իր լույսը, և լիովին հրաժարվեք ձեր կամքից և միայն ցանկացեք լինել անոթ, որի մեջ Նրա սրբությունը կարող է շարժվել և բնավորություն ձևավորել: Սրտի այս վերաբերմունքը միանգամից չի դրսևորվում: Այն ձևավորվում է աստիճանաբար, երբ ձեր սիրտը պահպանում է Աստծուց բացարձակ կախվածության իր դիրքը և միշտ ասում է. «Հիրավի իմ անձը սպասում է Աստծուն, Նրանից է իմ փրկությունը: Նա է իմ միակ ժայռը և իմ փրկությունը»:

Հոգու հայտնությունների և հանդիմանությունների միջոցով է, որ Աստված հայտնում է Իրեն մեր մեջ որպես մեր կյանք և գորություն, ինչը հնարավորություն կտա մեզ կատարյալ համբերությամբ ամեն բան թողնելու Նրա ձեռքերի մեջ: Աստված Ինքը նոր երգ կդնի ձեր շուրթերին:

Սպասել սրտով

«Քաջացեք, և ձեր սրտերը թող զորանան, դուք ամենքդ, որ Տիրոջն եք հույս դրել» (Սաղմ. 31.24): «Թող անարատությունն ու ուղղությունը պահեն ինձ, որովհետև Քեզ եմ սպասում» (Սաղմ. 25.21):

Այստեղից քաղում ենք այս դասը. **Աստծուն պետք է սպասենք սրտով:** Հարցը ժամանակը կամ զբաղվածությունը չէ: Եթե մոտենում ենք Աստծուն, դա պետք է լինի ճշմարիտ սրտով: **«Ձեր սրտերը թող զորանան»:** **Մեր սպասելու ամբողջ ընթացքը կախված է սրտի դրությունից և վիճակից:** Ինչպես մարդու սիրտն է, այնպես էլ ինքն է Աստծո առջև: Մենք Աստծուն սպասելու համար Նրա սուրբ ներկայության մեջ ավելի առաջ կամ ավելի խոր չենք կարող գնալ, քան այնքան, որքան մեր սիրտը պատրաստ է դրան Սուրբ Հոգու միջոցով: Աստծո հետ մեր հարաբերության մեջ պետք է լինի ազնվություն, անկեղծութ-

յուն: Աստծո առջև պետք է լինի կատարալ ուղղամտություն կամ պարզասրտություն: Մենք ամբողջ սրտով և նպատակաուղղված պետք է հանձնվենք Նրա կամքին: Աստծուն սպասելիս սկսում ենք բացահայտել, թե որքան շատ ունենք ազնվության պակաս:

«Քաջացեք, և ձեր սրտերը թող զորանան, դուք ամենքդ, որ ՏԻՐՈՋՆ եք հույս դրել» (Սաղմ. 31.24): Ճշմարտությունն այնքան պարզ է թվում, որ շատերը հարցնում են. «Մի՞թե բոլորը չեն ընդունում սա»: Ինչո՞ւ ենք հատուկ պնդում սա: Որովհետև շատ քրիստոնյաներ չեն զգում, թե ինչ մեծ տարբերություն կա մտքի հավատքի և սրտի հավատքի միջև, և մտքի հավատքը շատ ավելի ջանասիրաբար են զարգացնում, քան սրտի հավատքը: Նրանք չգիտեն, թե որքան ահռելիորեն մեծ է սիրտը մտքից: Սա մեր հոգևոր կյանքի սաստիկ տկարության հիմնական պատճառներից է: *Միայն սա հասկանալու դեպքում Աստծուն սպասելը կրերի լիարժեք օրինություն: Ո՛վ Տեր, տո՛ւր մեզ հասկացողություն:*

Իմ միտքը ծայրահեղ անզոր է իմ ներսում հոգևոր կյանք ստեղծելու կամ պահպանելու համար. սիրտը պետք է սպասի Աստծուն, որպեսզի Նա ներգործի հոգևոր կյանքը իմ մեջ: Միտքը կամ բանականությունը կարող է ասել, թե ինչ է ասում Աստծո Խոսքը, բայց ոչինչ չի կարող անել հոգին կյանքի Հացով կերակրելու համար. սա կարող է անել միայն սիրտը Աստծո հանդեպ հավատքով և վստահությամբ: *Երբ քրիստոնյան ուսումնասիրում կամ լսում է Աստծո Խոսքը, պետք է թողնի իր մտքերը, չվստահի դրանց և արթնացնի իր սիրտը Աստծո առջև բաց լինելու համար և փնտրի կենդանի հաղորդակցություն Նրա հետ: Սա է Աստծուն սպասելու երանությունը. ես խոստովանում եմ իմ բոլոր մտքերի և ջանքերի անզորությունը իմ սիրտը կյանքի Հացով կերակրելու գործում և հանդարտվելով սիրտս խոնարհում եմ Նրա առջև սուրբ լուծյամբ և վստահում եմ Նրան, որպեսզի նորոգի և զորացնի Իր կյանքը և աշխատանքը իմ մեջ:* Սա պետք է լինի Աստծուն սպասելու մեր հեռանկարը:

Հիշեք տարբերությունը մտքով իմանալու և սրտով հավատալու միջև: Զգուշացեք ձեր հասկացողությանը՝ իր հստակ համոզիչ մտքերով, ապավինելու գայթակղությունից: Այդ մտքերը միայն օգնում են ձեզ իմանալու, թե ինչ պետք է ստանա սիրտը Աստծուց հավատքի միջոցով. իրենք իրենցով դրանք միայն պատկերներ են և սովերներ: Բայց ահա սոսկալի վտանգը. մենք ապավինում ենք մեր հասկացողությանը և աստվածային բաներ վստահում նրան: *Մարդիկ պարկերացնում են, որ եթե իրենց միտքը զբաղված է ճշմարտությամբ, հոգևոր կյանքն ինքնաբերաբար*

կզորանա: Այսպես չի կարող լինել: Մտքի հասկացողությունը գործ ունի աստվածային բաներին վերաբերող գաղափարների և պատկերների հետ, որոնք անհրաժեշտ են ճշմարտությունը գիտենալու համար, բայց այս ճանապարհով չենք կարող դիպչել սրտի իրական կյանքին: Դա է պատճառը, որ մենք ունենք այս պատվիրանը. «Տիրոջն ապավինիր *քո ամբողջ սրտով*, և քո հասկացողությանը մի՛ վստահիր»: **Սրտով է մարդը հավատում և կապ հաստատում Աստծո հետ:** Սրտում է Աստված դնում Իր Հոգին, որը ներկայացնում է մեր մեջ գործող Աստծո ներկայությունը և զորությունը: Ամրապնդեք այս մեծ վստահությունը, որ թեև չեք կարող տեսնել ձեր սիրտը, Աստված գործում է այնտեղ Իր Սուրբ Հոգով: Թող սիրտը երբեմն սպասի կատարյալ լուծյամբ և հանգստյամբ, նրա թաքնված խորքերում է Աստված գործելու: Համոզվեք սրանում և պարզապես սպասեք Նրան:

«Թո՛ղ անարատությունն ու ուղղությունը պահեն ինձ, որովհետև Քեզ եմ սպասում» (Սաղմ. 25.21): **Աստծո առջև սպասելը, Աստծուց սպասելը և Աստծուն սպասելը Աստծո պայմաններն են Իր ներկայությունը դրսևորելու համար:**

«Իմ անձ, միայն սպասիր Աստծուն»:

ՄՏՈՐՈՒՄ Աստծո հետ

1. Մեր անհաջողությունը, մեր անպատրաստակամությունը, մեր անզգուշությունը և անհավատարմությունը պայմանավորված են մեկ բանով: Ո՞րն է դա:
2. Մարդու բարության մեջ ի՞նչն է սխալ: Բացատրե՛ք:
3. Կարողացե՛լ եք վերապրել հոգու հանգստություն Աստծո առջև Նրա հետ սրտի հաղորդության ժամանակ: Հայտնե՛ք ձեր մտքերն ու զգացմունքներն Աստծուն:
4. Ո՞րն է մտքի հավատքի և սրտի հավատքի տարբերությունը:
5. Պատրաստ եք խոստովանելու ձեր բոլոր մտքերի և ջանքերի անզորությունը կյանքի Հացով ձեր սիրտը կերակրելու գործում:
6. Այժմ խորամուխ կլինե՞ք ձեր անօգնականության և հոգևոր աղքատության մեջ և ձեր սրտով կսպասե՞ք Աստծուն, որ հայտնի Իրեն:

Գլուխ 21. Ապրել՝ Աստծու սպասելով

Այս գլխում կանդրադառնանք հետևյալ թեմաներին՝ Աստծուն սպասելու մոռացված սովորությունը, Աստված Ինքն է գործում, երբ սպասում ենք Իրեն, սպասել Նրա սուրբ ներկայությանը, սիրտը սովորում է, Աստծուն սպասելու գործնական կողմերը, հայտնություններ Նրա ներկայությունից, սրբություն և սպասել Աստծուն:

Մոռացված սովորություն

Հոգևոր կյանքով ապրելու մեր առաջին նպատակը միշտ պետք է լինի Աստծո ներկայությանը հոգու լոռությամբ և հանդարտությամբ սպասելը, որովհետև սա կբերի Աստծո միտքն ու խորհուրդը: Մենք մոռացել ենք Աստծուն սպասելու մեր իսկական կարիքը, Աստծուն սպասելը դարձրել ենք մեր կյանքում երկրային օրհնություններ ստանալու նպատակ: Աստծուն սպասելը և Աստծուց սպասելը նույնը չեն:

Մենք Աստծուց սպասում ենք բազմաթիվ բաներ, ինչպիսիք են կերակուրը, ազատագրումը, բժշկությունը, ուղղորդումը, իմաստությունը, զորությունը, Աստծո կամքի գիտությունը, մեր աղոթքների պատասխանը, հաջողությունը և շատ ու շատ այլ բաներ: Աստված խոստացել է Իր կամքը հայտնի դարձնել մեզ Իր Հոգով, որը Ուղեցույցն է ճշմարտության մեջ: **Մեր դիրքն է սպասել Նրա խորհրդին՝ որպես մեր մտքերի և գործողությունների միակ ուղեցույցի:** Այսպիսով՝ Աստծուց սպասելը պարզապես սպասելն է այն բաներին, որոնք խնդրել ենք: Աստծուն սպասելը Նրա ներկայությանը սպասելն է: Նրա ներկայությունը Նրա էությունն է, Նրա կյանքը: Սիրտը պետք է սպասի Աստծո ներկայությանը: Սիրտն է, որ կապ է հաստատում Աստծո հետ: Աստծուն սպասելիս խնդիրը, որին բախվում ենք, ոչ թե ժամանակն է, որ անհրաժեշտ է սպասելու համար, այլ սրտի հասանելիությունը և պատրաստակամությունը: Սպասել Աստծուն նշանակում է սպասել Նրա ներկայությանը: Նրա ներկայությունը մեր մեջ կբերի ոչ միայն Նրա խորհուրդը և օրհնությունները, այլև Նրա լիությունը և Նրա էությունը: Մենք մոռացել ենք, թե որքան անհրաժեշտ և կարևոր է Աստծուն սպասելը: Մեր առջև ծառայած մեծ վտանգն այն է, որ մեր վստահությունը հիմնված է այն բանի վրա, որ ունենք Աստվածաշունչ, Աստծո առաջնորդության անցյալի փորձառություն, առողջ ուսմունք և Աստծո կամքը կատարելու ազնիվ ցանկություն: Մենք շտապում ենք ամեն ինչում և չենք գիտակցում դրա հոգևոր վտանգը: Մենք չենք գիտակցում, որ ամեն

քայլափոխի պետք է և կարող ենք ունենալ երկնային առաջնորդություն Նրա ներկայությունից, հենց Նրանից: Սա է այն կարիքը, որը չենք գիտակցում: **Հոգևոր կյանքով ապրելու մեր առաջին գործը պետք է լինի լռել, հանդարտվել և սպասել Նրա ներկայությանը. սա կբերի Աստծո միտքը և խորհուրդը:** Աստված միշտ գործում է Իր կամքի խորհրդի համաձայն: Նրա կամքի խորհուրդն առանձնացված չէ Նրա մտքից, դա Նրա գոյության և Նրա ներկայության անբաժանելի մասն է: Նրա ներկայությունը կյանք է: Եկեք ժամանակ հատկացնենք և ձևավորենք *Նրա ներկայությանը սպասելու սովորություն: Նրա ներկայությունը կհենուացնի մեր մեղավոր եսապաշտ կյանքը:*

Սիրելի Հիսուսի աշակերտ, մտեք Աստծո հետ սրտի հաղորդության մեջ, ժամանակ հատկացրեք և լուծյալ խոնարհվեք Նրա առջև: Լուռ ծնկի իջեք Նրա առջև խոնարհ հավատքով, մեծարանքով և երկրպագությամբ: Ժամանակ հատկացրեք և լռեք ու հանդարտվեք, *մինչև որ իմանաք, որ Աստված շատ մոտ է:* **Թող Նա լսի ձեր սիրտը: Սպասեք, մինչև լսեք Նրա սիրտը:** Ժամանակ հատկացրեք խոնարհվելու Աստծո առջև: Լռեք և թոյլ տվեք, որ Նա օրհնի ձեզ Իր ներկայությամբ: «Քաջացեք, և ձեր սրտերը թող գորանան, դուք ամենքդ, որ ՏԻՐՈՋՆ եք հույս դրել» (Սաղմ. 31.24): «Մեր անձը մտիկ է տալիս Տիրոջը. Նա է մեր օգնությունն ու պահապանը» (Սաղմ. 33.18): «Եվ դրա համար Տերը սպասելու է, որ ձեզ ողորմի, և դրա համար բարձրանալու է, որ ձեզ գթա, որովհետև Տերը իրավունքի Աստված է. երանի այն ամենին, որ սպասում են Նրան» (Ես. 30.18):

Մենք պետք է սովորենք սպասել Տիրոջը ավելի, քան առավոտվան սպասողները (Սաղմ. 130.5, 6): Երբ սկսում ենք սպասել Աստծուն, Նրա լույսը կարող է բավական լինել մեր ներսի խավարը բացահայտելու և մեղքի պատճառով մեզ խոնարհեցնելու համար: Պարզապես խոնարհվեք, նույնիսկ հիմա, լուծյալ մեջ Աստծո առջև *և սպասեք Նրան, որ լուսավորի ձեր ներսը:* Աստված լույս է և հիմա լուսավորում է ձեր սիրտը: Ձեզ զբաղեցրել են ձեր մտքերի և ծառայության ջանքերի թույլ լույսերը: Դուք երբեք չեք բացել ձեր սրտի փեղկերը՝ Նրա լույսը ներս թողնելու համար: Անհավատությունը պահել է այն: *Խոնարհվեք հավատքով. Աստված լուսավորում է ձեր սիրտը: Աստծո սերն անդադար փայլում է մեզ վրա: Լուռ և համբերատար սպասեք Նրա ներկայությանը:*

Ոմանք կհարցնեն. «Արդյո՞ք սպասելը հիմնականում ժամանակ է ենթադրում»: Ո՛չ: «...եթե բերանովդ Հիսուսին Տեր դավանես և սրտումդ հավատաս, թե Աստված հարություն տվեց Նրան մեռել-

ներից, կապրես: Քանզի սրտով հավատում ենք...» (Հռոմ. 10.9,10): **Սիրտն է կապ հաստատում Աստծո հետ:** Սիրտը պետք է սպասի Աստծո ներկայությանը և Նրա հետ սրտի հաղորդությանը: Միտքը չի կարող հասնել սրտի իրական կյանքին: Մենք չենք սպասում, որ «Գուգլ» ծառայությունը պատասխանի մեզ: Այո, սպասելը ժամանակ է պահանջում, բայց այն պահանջում է նաև լռել Աստծո առջև՝ հավատալով, վստահելով և ապավինելով Նրան: **Մենք պետք է սովորենք լիովին հանձնվել Աստծուն սպասելու ընթացքին:** Աստված կստուգի մեր անկեղծությունը: Սպասելը պարզև կամ կարգապահություն չէ, այլ սրտի վերաբերմունք, որը պետք է ձևավորել, և որը կախված է ամեն օր «ես»- ն ուրանալուց: Սա է Քրիստոսի մեջ մնալու կյանքը: Մենք սովորում ենք ապրել այն կյանքով, որը տրվել է մեզ Քրիստոսի մեջ:

Բոլոր դժվարությունները, որ ունենք լիարժեք փրկության փորձառության մեջ, ունեն մեկ պատճառ՝ Աստծուն սպասելու թերի գիտություն և գործելակերպ: **Մարդու փառքը և երանությունը միմիայն լիովին պետք է կախված լինեն Աստծուց:** Շատերը բաց են թողնում այս ճշմարտությունը, և դա պակասում է նրանց կյանքում: *Մարդը պետք է ուրախանա ամեն ակնթարթ Աստծո լիությունից իր կյանքը ստանալու համար:* Սա նրա երանությունն է: Աստծո կարող զորության դրսևորումը աշխարհում տեսնելու համար Եկեղեցին կարիք ունի վերադառնալու իր իսկական տեղը՝ խաչի վրա: **Խաչը Աստծուց բացարձակ և անդադար կախված լինելու վայրն է,** «ես»- ը մշտապես ուրանալու վայրը: Հետևաբար Նրա խաչը կրելը և ամեն բանի համար Աստծուն սպասելը պետք է սկիզբ առնեն եսապաշտ կյանքի գերեզմանից: Երկուսը չեն կարող բաժանվել իրարից: «...Դու ես իմ փրկության Աստվածը. Քեզ եմ հույս դրել ամեն օր» (Սաղմ. 25.5):

Մենք կարիք ունենք, որ մեր անօգնականության խոր զգացումը ներգործի մեր մեջ այն, ինչ աստվածային բարիք է (սա բացատրվել է 12- 14- ռդ գլուխներում): Հիշեք այս ուսմունքները. «...ինձանում (այսինքն՝ իմ մարմնում) մի բարի բան չի բնակվում...» (Հռոմ. 7.18), «Որովհետև մարմինը ցանկանում է հոգուն հակառակ, և հոգին՝ մարմնին հակառակ, և սրանք իրար հակառակ են...» (Գաղ. 5.17), «Որովհետև մարմնի խորհուրդը Աստծո դեմ թշնամություն է, որովհետև Աստծո օրենքին չի հնազանդվում և չի էլ կարող» (Հռոմ. 8.7): Եկեք ապրենք կատարյալ վստահությամբ, որ Աստված կգործի ամենը Իր աստվածային զորությամբ. «Բայց մեզ ձեզ հետ Քրիստոսում հաստատողը և մեզ օժողը Աստված է» (Բ Կորնթ. 1.21) և «Տերը կկատարի ինձ տեղ»

(Սաղմ. 138.8): Մենք պետք է կառչենք մեր վստահությունից, որովհետև «...Նա, որ ձեզանում սկսեց այս բարի գործը, կկատարի էլ մինչև Հիսուս Քրիստոսի օրը» (Փիլիպ. 1.6): **Մեր առջև ծառայած հիմնական խնդիրը սա է. բանի դեռ չգիտենք և չենք սովորել, որ Աստծո հետ մեր հարաբերությունը հոգևոր աղքատության և լիարժեք անօգնականության հարաբերություն է, մենք չենք զգում, որ Աստծուց բացարձակ և անդադար կախման մեջ լինելու կարիք ունենք, որ Նրան շարունակ սպասելու թանկագին երանության կարիքն ունենք:** Ես պետք է սկսեմ տեսնել սա Հոգու հայտնությամբ և պետք է համաձայնեմ ամեն վայրկյան Սուրբ Հոգուց ընդունելու այն, ինչ Աստված ամեն վայրկյան գործում է: Եթե այսպես վարվեմ, Աստծուն սպասելը կդառնա իմ ամենապայծառ հույսն ու ուրախությունը: Աստծո գործերը տեսնելը և ընդունելը բերում են Տիրոջ ուրախությունը:

Ինչ է Աստված տալիս ինձ ամեն վայրկյան: Հիմնականում Իր սերը, խաղաղությունը, խոնարհությունը, արդարությունը և սրբությունը: Մենք կարող ենք վայելել այս ամենը միայն այն ժամանակ, երբ կրենք անձնուրացության խաչը, երբ Նա գործի մեր մեջ անմիջականորեն և անդադար՝ *վայրկյան առ վայրկյան*: Սիրելի Քրիստոսի աշակերտ, հավատո՞ւմ եք սրան ձեր սրտով: Նա չի տալիս մեզ որևէ արտաքին բան, ինչպիսին անձրևն է. **Նա Իր կյանքն է փոխանցում մեզ**: Միակ պատճառը, որ Նա առավել արդյունավետ և շարունակաբար չի գործում մեր սրբացումը, այն է, որ մենք թույլ չենք տալիս Նրան: Մենք խանգարում ենք Նրան կան մեր անտարբերությամբ, կան մեր ջանքերով (գլուխ 6): Աստծուն սպասելը, Նրա փրկությանը սպասելը ներառում են անձնատուր լինելը Նրա խաչին, հնազանդությունը, ցանկությունը և վստահությունը:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ Աստծո հետ

1. Ինչո՞ւ Աստծո ներկայությանը պետք է սպասի սիրտը:
2. Տալի՞ս եք Աստծուն ժամանակ, որպեսզի լսի ձեր սիրտը:
3. Տալի՞ս եք ինքներդ ձեզ ժամանակ, որպեսզի լսեք Աստծո սիրտը:
4. «Խաչը կրելը և Աստծուն ամեն բանի համար սպասելը պետք է սկիզբ առնեն եսապաշտ կյանքի գերեզմանից»: Ինչ է սա նշանակում:

Աստված Ինքն է գործում, երբ սպասում ենք Իրեն

Երբ ընդունում ենք Աստծո կամքը և հավատում ենք դրան, այն ունի զորություն իրականանալու: Քրիստոսի ներկայությունն իրական աշխատանք է կատարում անձնատուր եղած, հանձնված սրտում: Ուշադրություն դարձրեք այդ ճշմարտությանը հետևյալ խոսքերում. «...որ ամեն բան հաջողում է Իր կամքի խորհուրդների պես» (Եփես. 1.11), «...Աստված նույնն է, որ ամենը ամենքի մեջ ներգործում է» (Ա Կորնթ. 12.6), «Որի համար էլ աշխատում եմ՝ ճիգ թափելով Նրա ներգործության չափով, որ ինձանում ներգործում է զորությունով» (Կող. 1.29), «Եվ խաղաղության Աստվածը ... հաստատի ձեզ ամեն բարի գործի մեջ Նրա կամքն անելու և գործի ձեզանում, ինչ որ հաճո է Նրա առջև Հիսուս Քրիստոսի ձեռքով, որին լինի փառք հավիտյանս հավիտենից: Ամեն» (Եբր. 13.20, 21), «**Քանզի Աստված է, որ ներգործում է ձեզանում կամենալն էլ, անելն էլ Իր հաճության պես**» (Փիլիպ. 2.13): Որպեսզի Աստված կատարի Իր աշխատանքը, մենք պետք է անձնատուր լինենք Նրան, մի բան, որ շատ արտասովոր է մեր էության համար, սակայն շատ էական է Հոգու մեջ մեր կյանքի համար: Մենք Հոգու հանդիմանության կարիքն ունենք: Որպեսզի վերապրենք Աստծո աշխատանքը մեր մեջ, պետք է իսկապես հավատանք և հնազանդվենք:

Սպասել Նրա սուրբ ներկայությանը

«Քաջացեք, և ձեր սրտերը թող զորանան, դուք ամենքը, որ ՏԻՐՈՋՆ եք հույս դրել» (Սաղմ. 31.24): «Մեր անձը մտիկ է տալիս ՏԻՐՈՋԸ. Նա է մեր օգնությունն ու պահապանը: Որովհետև Նրանով է ուրախանում մեր սիրտը. որ մենք Նրա սուրբ անունին ենք հուսացած: Տեր, Քո ողորմությունը լինի մեզ վրա, ինչպես որ սպասում ենք Քեզ» (Սաղմ. 33.20- 22): «Եվ դրա համար ՏԵՐԸ սպասելու է, որ ձեզ ողորմի, և դրա համար բարձրանալու է, որ ձեզ գթա, որովհետև Տերը իրավունքի Աստված է. երանի այն ամենին, որ սպասում են Նրան» (Ես. 30.18): «Տիպց տուր ինձ, ո՛վ Տեր, Քո ճանապարհները, սովորեցրո՛ւ ինձ Քո գնալու ճանապարհները: Առաջնորդի՛ր ինձ Քո ճշմարտությունում և սովորեցրո՛ւ ինձ, թե Դու ես իմ փրկության Աստվածը. Քեզ եմ հույս դրել ամեն օր» (Սաղմ. 25.4, 5): «Ո՛վ իմ անձ, մենակ լուռ մտիկ տուր Աստծուն, որովհետև Նրանից է իմ հույսը: Հիրավի, որ Նա է իմ վեճը, իմ փրկությունը...» (Սաղմ. 62.5,6): «Բայց ՏԻՐՈՋՆ ապավինողները կնորոգվեն ուժով, թևերով վեր կալանան արծիվների պես, կվազեն և չեն վաս-

տակի, կգնան և չեն հոգնի» (Ես. 40.31): «Եվ դու քո Աստծոն դարձիր, ողորմություն և իրավունք պահիր և քո Աստծոն հուսա միշտ» (Օվս. 12.7): «Հիրավի որ իմ անձը լուռ ու մունջ սպասում է Աստծուն, Նրանից է իմ փրկությունը» (Սաղմ. 62.1): Եթե իմ փրկությունը և դրա ամենօրյա շարունակական աշխատանքը կախված են միայն Աստծուց, այդ դեպքում Աստծուն սպասելը դառնում է այդ փրկության լիությունը վերապրելու միակ միջոցը: Սիրելի Քրիստոսի աշակերտ, ինչ եք մտածում սրա մասին:

Սիրտը պետք է սպասի Աստծուն՝ Նրա սուրբ ներկայությունը և մտերմությունը ստանալու համար: Միտքը գործ ունի աստվածային բաներին վերաբերող գաղափարների և պատկերների հետ, բայց չի կարող դիպչել սրտին: Սա փոստային ծառայություն չէ, այլ հոգևոր կյանքի անձնական փոխանցում հենց Աստծուց: Ինչ է Աստված ակնկալում սպասելու այս ժամանակից: Նա ցանկանում է տալ Իրեն ավելի ու ավելի մեծ չափով, *որպեսզի լինի իմ կյանքը և իմ փրկությունը (Գաղ.1.4, 2.20):* Տալ Իրեն ինձ ավելի ու ավելի: «Եվ սա աղոթք եմ անում, որ ձեր սերն էլ ավելի և ավելի հարստանա գիտությունով և ամեն հասկացողությունով» (Փիլիպ. 1.9): «...դուք սիրով արմատ գցած և հաստատված լինեք: Որ ամեն սուրբերի հետ իմանաք, թե ինչ է լայնությունը և երկայնությունը և բարձրությունը և խորությունը. որ ճանաչեք Քրիստոսի սերը, որ ամեն գիտությունից գերազանց է, և որ Աստծո ամեն լիությունով լցվեք» (Եփես. 3.17- 19): Ինչին է հետամուտ Աստված: Որ Իր սուրբ ներկայությունը դնի իմ մեջ և Իրեն ու Իր անձնագոհ, ազապե սերն ավելի ու ավելի ներդնի իմ մեջ, որ ավելի ու ավելի հայտնի Իրեն, Իր ողորմությունը, շնորհքը, սերը և բարությունը:

Խորհե՛ք Տիրոջ հետ

Սիրելի հավատացյալ, խոնարհվե՛ք և հոգու հանգստության ու լուռության մեջ մտորե՛ք Աստծո ողորմության և շնորհքի շուրջ: Որքան խոնարհվե՛ք, այնքան ավելի շատ կզգաք, որ բացի Նրա ողորմությունից՝ ոչնչի չեք կարող հուսալ (սա Հոգու հանգիստ աշխատանքն է): Որքան ավելի խոնարհվե՛ք, այնքան ավելի կմոտենա Աստված և ձեր սրտին կտա քաջություն՝ վստահելու Իրեն: Աստված կսովորեցնի հոգու լուռ հանգստության մեջ ուրանալ ձեր անձը և ավելի ու ավելի ուժգնորեն հուսալ միմիայն Նրա ողորմությանը: Երբ սրտով մտորում եք Նրա ներկայության մեջ, ձեր սիրտը հաղորդություն է ունենում Նրա սրտի հետ: Երբ իմ սրտի ծածուկ աղոթքի սենյակում սպասում եմ Նրան, Նա հայտնում է Իրեն և Իր անձը տալիս է ինձ: Երբ սպասում եք Աստծուն, Նրան

Ժամանակ եք տալիս մոտենալու ձեզ Իր ճանապարհներով և աստվածային զորությամբ: Սա շատ ավելին է, քան ձեր կարիքների բավարարումը փնտրելը: Սպասելը հեռացնում է ձեր աչքերը և մտքերը, ձեր կարիքներն ու ցանկությունները և զբաղեցնում է ձեզ Աստծով և տալիս է Նրա աստվածային և անձնական ներկայության գիտակցումը: Խոնարհվեք Նրա սրբության առջև խոր ակնածանքով և խոնարհությամբ: «ՏԻՐՈՋ աչքը նրանց վրա է, ովքեր վախենում են Նրանից, նրանց վրա, ովքեր հուսացած են Նրա ողորմությանը»:

Կրկին, ինչի ենք մենք սպասում: Մենք սպասում ենք Սուրբ Հոգու ներկայության և մտերմության զգացողությանը կամ գիտակցությանը: Կրկին, ինչ է Աստված ցանկանում անել մեր մեջ: Աստված ցանկանում է ծածկել և լցնել մեզ Իրենով: Աստված փափագում է հայտնել Իրեն, լցնել մեզ Իրենով: Եթե սպասելիս որևէ թերություն կամ մեղք արգելք է առաջացնում, առաջին հերթին խոստովանեք դա Աստծուն և մերժեք ինքնադատապարտությունը: Եթե ինքնադատապարտություն եք զգում (խոստովանությունից հետո), դա սատանայից է: Մերժեք դա: Երբ անպատրաստակամության, անզգուշության, անհավատարմության հիշողություններ են արթնանում՝ բերելով ինքնադատապարտություն, հուսացեք Աստծո ամենակարող զորությանը և հավատացեք: Սպասեք Նրանից, Նա ցանկանում է հայտնել ձեր անհաջողության պատճառը: Սպասելը կնախապատրաստի ձեզ՝ տեսնելու պատճառը ձեր ներսում:

Մեր անհաջողությունը պայմանավորված է միայն մեկ բանով. մենք ձգտել ենք հաղթելու և հնազանդվելու մեր ուժերով: Աստված փնտրում է ավելի խոր բան՝ ներքին համոզմունք:

Սիրտը սովորում է

Սիրտը սովորում է հավատալով և վերապրելով Աստծո ճշմարտությունները: Սպասելիս մենք առավել խորությամբ ենք սովորում Աստծո հետևյալ ճշմարտությունները.

1. «Դադարեք և ճանաչեք, որ Ես եմ Աստված...» (Սաղմ. 46.10): **Աստված հայտնում է Իր Աստվածությունը** իմ սրտին, *երբ ես լուռ եմ, հանգիստ և սպասում եմ Իրեն:* Երբ այս անձնական հայտնությունը բացակայում է, ես ապավինում եմ ուրիշներին սրտի այս «իմացության» համար: Բայց, Քրիստոսի սիրելի աշակերտ, այս «իմացության» համար սիրտը կարիք ունի Աստծո անմիջական Ներկայության: «Սրտի այս իմացությունը» ձեռք ենք բերում այն ժամանակ, երբ սպասելիս Աստված հայտնում է Իրեն՝ բացելով Իր սիրտը:

2. «(Աղոթում եմ, որ)... դուք սիրով արմատ գցած և հաստատված լինեք: Որ ամեն սուրբերի հետ իմանաք, թե ինչ է լայնությունը և երկայնությունը և բարձրությունը և խորությունը, որ ճանաչեք Քրիստոսի սերը, որ ամեն գիտությունից գերազանց է, և որ Աստծո ամեն լիությունով լցվեք» (Եփես. 3.17- 19): Ես ճանաչում եմ Աստծո սերը: **Աստծո ազապե սիրո լայնության, երկարության, բարձրության և խորության մասին շատ քիչ գիտենք:** Աստծո լիությունով լցված լինել նշանակում է ավելի ու ավելի շատ ունենալ Աստծո սիրո լայնությունը, երկարությունը, բարձրությունը և խորությունը: Առանց ազապե սիրո զորությունը Աստծուց չէ: Աստծո ամբողջ լիությունով լցված լինելը կախված է նրանից, թե ինչ չափով է սիրտը ճանաչում այս անձնագրի ազապե սերը, և այս ճանաչողությունը ձեռք ենք բերում Աստծո անձնական ներկայությանը սպասելիս:

3. «Եվ սա աղոթք եմ անում, որ ձեր սերն էլ ավելի և ավելի հարստանա գիտությունով և ամեն հասկացողությունով» (Փիլիպ. 1.9): **Գիտությունը և ամեն հասկացողությունը պետք է կապված լինեն անձնագրի ազապե սիրով ապրելու հետ:** Մենք ձեռք ենք բերում այս ճշմարտությունները սպասելու ժամանակ... Աստված տալիս է Իր հայտնությունը և Իրեն հայտնում է մեր սրտում Իր ազապե սիրո կյանքով ապրելով: Հայտնությունը և Ներկայությունը մեկ են, դրանք առանձին գոյություն չունեն:

Անհաջողությունները, որ ունենում ենք սպասելիս, մեծ մասամբ պայմանավորված են անցյալի անհավատարմության և հիասթափության մեր մեղքի զգացումով: Մենք հայտնաբերում ենք, որ անհամբեր ենք Աստծո հետ և արդարացի չենք ինքներս մեզ հետ: Եվ սա հիմնականում պայմանավորված է մեկ բանով. մենք ուզում ենք հաղթել մեղքին և հնազանդվել Աստծուն սեփական ուժերով, անցյալի փորձառության մեր իմաստությամբ: Մենք հաճախ այնքան գոհ ենք մակերեսային համոզմունքներից և ցնծություններից:

Աստծուն սպասելու գործնական կողմերը

Երբ Աստծուն սպասելիս աղոթում եք և մտորում, ժամանակ առ ժամանակ լռեք: Հոգու միջոցով ձևավորեք Աստծո առջև լուռ լինելու սովորություն: Հոգին կաշխատի ձեր մեջ, որպեսզի դատարկվեք. սա մեծ հոգևոր օգուտ է: Համբերությամբ պահպանեք հոգու ակնածալից լռություն և այդ լռության մեջ անձնատնոր եղեք Աստծուն: Հնարավոր է, որ լինեն բաներ, որ Աստված կցանկանա սովորեցնել ձեզ կամ գործել ձեր մեջ: Նրան սպասելը կդառնա

աղոթքի կյանքի ամենաերանելի մասը: Երբ սկսում ենք սպասել Աստծուն, մեր սիրտը հիմնականում ուղղվում է այն օրհնությունների վրա, որոնց սպասում ենք: Աստված մեղմորեն գործածում է մեր կարիքներն ու ցանկությունները որպես օգնություն, որպեսզի կրթի մեզ ավելի բարձր բանի համար: Մենք փնտրում ենք պարզևներ կամ օրհնություններ, Նա՛ Տվողը, փափագում է տալ Իրեն և հագեցնել մեր սիրտը Իր բարությանմբ: Աստծո ներկայությունը բերում է մեր մեջ Աստծո կյանքը:

Սիրելի Հիսուսի աշակերտ, պարզապես լուռ խոնարհվեք Աստծո առջև և հիշեք ու գիտակցեք, թե ով է Նա, որքան մոտ է Նա, որքան հաստատ Նա կարող է օգնել և կօգնի: Սրտի այս ներքին գիտակցումը ժամանակ է պահանջում, Հոգին պետք է ներգործի այն մեր մեջ, երբ անձնատուր լինենք: Եղեք համբերատար և խիզախ: **Պարզապես հանդարտվեք Աստծո առջև և թո՛ւյլ տվեք, որ Նրա Սուրբ Հոգին արթնացնի և բորբոքի ձեր սրտում բացարձակ կախվածության և վստահությամբ սպասումի մանկական վերաբերմունք:** Ցանկանալը բավական չէ, մարմինն ուրանալու պատրաստակամությունը պետք է դառնա կյանք իմ ներսում: Մտեք Աստծո հետ հաղորդության մեջ՝ որպես Կենդանի Էակի, որպես Կենդանի Աստծո, որ տեսնում է ձեզ և պարզապես փափագում է լցնել ձեզ Իր կյանքով, փրկությամբ: Նրա ներկայությանը սպասելը ինչ-որ բան չէ, որ պետք է անել հոգևոր կյանքում, այլ մի բան, որով պետք է ապրել: Սպասեք Աստծուն, մինչև որ իմանաք, որ հանդիպել եք Նրան. այն ժամանակ աղոթքն էապես կտարբերվի, դուք կաղոթեք Աստծո սրտով: Ամեն կարիքի, ամեն անհաջողության մեջ և ամեն անգամ, երբ Աստծո շնորհքի կարիքն ունեք, խոստովանեք՝ ասելով. «Ես շատ քիչ եմ սպասել Աստծուն, այլապես ճիշտ ժամանակին Նա տված կլիներ ինձ այն ամենը, ինչի կարիքն ունեի»: Ապրեք և շարունակեք հոջակել. «Իմ անձը միայն Աստծուն է սպասում»:

Եկեք և հանդարտորեն խոնարհվեք Աստծո առջև: Լռեք Նրա առջև: Մերժեք ձեր կամքը և դրա հոգևոր առաջարկները: Կարևոր է, որ հավատաք և հավատքով կառչեք այն համոզմունքից, որ Աստված իրականացնում է Իր աշխատանքը: Սա հաճախ արտահայտվում է շատ քրիստոնյաների աղոթքներում, բայց ոչ նրանց կյանքում: Ո՞րն է այն աշխատանքը, որ Աստված լուռ իրականացնում է մեր մեջ: Խոնարհությամբ և հեզությամբ տեսեք և ընդունեք ձեր հոգևոր աղքատությունը, երբ Աստված հայտնում է դա հաղորդության ժամանակ: Երբ Հոգին բացահայտում է ձեր հոգևոր աղքատությունն ու դատարկությունը, Նրա ներկայության

մեջ առավել խորասուզվեք ձեր անօգնականության, աննշանության և աղքատության մեջ: Խոնարհությամբ վախեցե՛ք սեփական կամքից կամ ուժերից, սպասե՛ք Նրան, որ հայտնի Իրեն և Իր առատությունը: Օր օրի դուք պետք է սպասեք, որ Սուրբ Հոգին ձևավորի սա, բայց դրա համար անհրաժեշտ են ձեր ամենօյա պատրաստակամությունը և համաձայնությունը: Սրտի այս վերաբերմունքն անմիջապես չի դրսևորվում, այն ձևավորվում է աստիճանաբար, մինչ մենք շարունակ հավատալով և կրկնելով ասում ենք. «Հիրավի իմ անձը սպասում է Աստծուն, Նրանից է իմ փրկությունը, միայն Նա է իմ ժայռը և իմ փրկությունը»: Որքան ձեր ամենօրյա հաղորդությունը խորանում է, այնքան ավելանում են Աստծո հպումն ու հայտնությունը ձեր անձնական հոգևոր կյանքում: Բարի գալուստ դեպի աստվածային ինքնաբացահայտում, որ կատարվում է հենց Աստծո միջոցով:

Հայտնություններ Նրա ներկայությունից

Որքան խորն է Աստծուց լիարժեք և անդադար կախում ունենալու անհրաժեշտության համոզմունքը, այնքան խորն է մեր հոգևոր անօգնականության մեջ առավել խոնարհությամբ խորամուխ լինելու անհրաժեշտության համոզմունքը: Մենք խորապես անօգնական, դատարկ և հոգևորապես աղքատ ենք սուրբ կյանքով ապրելու և ուրիշներին ագապե սիրով սիրելու համար: Այս խորությունն անչափելի է: Ես կարիք ունեմ մտնելու և մնալու այս անօգնականության մեջ («ոչ թե ես, այլ Քրիստոսն է կենդանի իմ մեջ». Գաղ. 2.20):

Որքան խորն է այն համոզմունքը, որ Աստված պետք է անի ամենը և կկատարի Իր բոլոր խոստումները (կենդանի հավատք), այնքան ավելի խորն է այն համոզմունքը, որ կյանքում կարևոր է տալ Աստծուն պատվի և զորության Իր տեղը (ուրանալ «ես»-ը. Մատթ. 16.24): Դուք գիտակցում եք այս էական կարիքը ձեր ներսում: **Ես քաջատեղյակ պետք է լինեմ Աստծո ամենակարողությանը և մնամ այդ գիտակցության մեջ:** Հաճախ մենք հոշակում ենք Աստծո ամենակարողությունը մեր կարիքները լրացնելու համար, բայց չենք մնում դրանում: Հիշե՛ք, հայտնությունները և համոզմունքները տրվում են այն սրտին, որն անձնատուր է եղել և հանձնվել է խաչին և սրտի հաղորդության մեջ է Տիրոջ հետ:

Սիրելի՛ Քրիստոսի աշակերտ, սպասե՛ք Աստծուն, մինչև որ սովորեք սրտով, որ Նա է Աստված, որ միայն Նա է բարի, և միայն Նա կարող է որևէ բարիք անել (և ո՛չ երբեք դուք կամ «ես»-ը): Նրա ներկայությունն այս ճշմարտությունն ավելի ու

ավելի իրական կդարձնի ձեր մեջ: Նրա ներկայությունը Նա է, Նրա կյանքը, Նրա գոյությունը: Աստծուն սրտով կվերապրեք միայն այն ժամանակ, երբ դատարված սրտով (հոգևոր դատարկությամբ և աննշանությամբ) հավատաք դրան: Նրա ներկայությունը վերապրելը հենց Նրան վերապրելն է: Սպասեք Աստծո այս անձնական հայտնությանը: Հանդարտ և լրիւ եղեք Աստծո առջև, Հոգին կառաջնորդի ձեր սիրտը փուլ առ փուլ՝ սրտով հավատալու և տեսնելու այն, ինչ կա ձեր մեջ, և այն ամենում, ինչ ձեր էությունը կարող է անել, չկա զորություն ճշմարիտ սուրբ կյանքի համար, որ Աստված պահանջում է: Գոհ եղեք, որ ամեն վայրկյան Աստծուց ստանում եք Նրա կարող շնորհքի և կյանքի ներգործությունները: Դուք չեք կարող օգնել այս աստվածային աշխատանքին, դուք կարող եք միայն սպասել Աստծուն, որ Նա գործի այն ձեր մեջ: Շարունակեք սպասել և շարունակեք պահպանել Նրա ներկայության գիտակցումը: Ինչևէ, երբեմն այդ գիտակցությունը մեզնից հեռացվում է որպես մեզ կրթելու մաս, մի՛ հիասթափվեք: Մի՛ սպափինեք զգացմունքներին կամ մի՛ սպասեք դրանց: Նրա ներկայությունն արտաքուստ շարունակական չէ, սպասելու ընթացքում կլինեն թվացյալ անգործության ժամանակներ և ժամանակաշրջաններ: Մի՛ հանձնվեք, մնացեք աղոթքում, Աստծո ներքին աշխատանքը շարունակվում է: Համոզված եղեք, որ Աստծուն սպասելը կնորոգի ձեր կյանքի ուժերը, որպեսզի վազեք Նրա ճանապարհներով և չհոգնեք, քայլեք Նրա ուղիներով և երբեք չթուլանաք: Այսինքն՝ ծառայեք ուրիշներին Աստծո սիրո անվերապահ, անշահախնդիր, անձնատուր ազապե սիրով՝ ճշմարիտ խոնարհությամբ և ներգրավվածությամբ:

Աստծո առջև սպասելը, Աստծուց սպասելը և Աստծուն սպասելը Աստծո պայմաններն են՝ Իր ներկայությունը ցուցաբերելու համար: Նրա ներկայությունը սեր է, հետևաբար՝ զորություն: Մինչ սպասում ենք Աստծուն, Նա հայտնում է Իրեն մեր մեջ որպես մեր միակ կյանք և զորություն, որպես ուրիշներին աստվածային խոնարհությամբ, աստվածային սիրով ծառայելու կյանք և զորություն: Նրա ներկայությունը հնարավորություն կտա մեզ կատարյալ համբերությամբ ամեն բան թողնելու Նրա ձեռքերի մեջ:

Աստված Ինքը նոր երգ կդնի մեր բերանում:

Սրբություն և սպասել Աստծուն

«Հենց Քո դատաստանների ճանապարհին սպասել ենք Քեզ, ո՛վ Տեր որովհետև երբ Քո դատաստանները հասնում են երկրին, աշխարհի բնակիչները արդարություն են սովորում» (Ես.

26.8, 9): «...Տերը իրավունքի Աստված է. երանի այն ամենին, որ սպասում են Նրան» (Ես. 30.18): Եթե ազնիվ լինենք սրբության համար մեր փափագում, ամբողջովին Տիրոջը լինելու մեր աղոթքներում, Նրա սուրբ ներկայությունը կարթնացնի մեզ և կբացահայտի մեր ծածուկ մեղքերը և մեր էության չար մեղավորությունը: Եթե ստանանք և ընդունենք Հոգու հայտնության այս գիտությունը, այն շատ կցածրացնի մեզ՝ տալով դառը հայտնություն և համոզմունք մեր էության չարության մասին, Աստծո օրենքին նրա հակառակության և սիրո օրենքը չկատարելու նրա անգորության մասին: Մենք կկոտրվենք, և Իր մեծ ողորմությամբ Աստված մեր սրտում Իր դատաստանը կգործադրի մեր մեղքի նկատմամբ: Նա կստիպի մեր սրտին զգալ իր չարությունը, ինչպես նաև զգալ Իր սերը: Մենք վերապրում ենք կոտրվածություն, բայց ոչ դատապարտություն Նրա ներկայության մեջ, և Նա ստիպում է մեզ զգալ Իր սիրող ներկայությունը և բարությունը, որ շրջապատում են մեզ: Նա մտցնում է ձեզ Հոր հետ սրտի հաղորդության մեջ, որի ժամանակ այս կոտրվածության մեջ ձեր սրտում հանդիպում և գրկախառնվում են ձեր չափազանց մեղավորությունը և Հոր չափազանց ողորմությունն ու բարությունը: Աստված շնորհառատ կլինի ձեր հանդեպ: Նրան սպասելիս սկզբում կարող են բացահայտվել միայն մեղքն ու խավարը: Այս հայտնությունը և հանդիմանությունը Սուրբ Հոգու ներքին աշխատանքն են: Մի հուսահատվեք, եթե հայտնվեն չհաղթված մեղքերի խավարը և չար մտքերը՝ Աստծո երեսը ձեզից ծածկելու համար: Հնազանդվեք և ենթարկվեք մեղքի դատաստանին: **Դատաստանը ճանապարհ է պատրաստում և ի հայտ է բերում Հոր հրաշալի ողորմությունն ու սերը:** Աստծուն սպասելը երբեք չի կարող զուր լինել: **Միայն այն հավատացյալը, որ Աստծուց բացահայտում է իր չափազանց մեղավորությունը, կբացահայտի ճշմարիտ սրբությունը:** «Հենց Քո դատաստանների ճանապարհին սպասել ենք Քեզ, ո՛վ Տեր որովհետև երբ որ Քո դատաստանները հասնում են երկրին, աշխարհի բնակիչները արդարություն են սովորում»:

Աստծուն սպասելը հոգևոր ինքնահաճեցման համար չէ: Դրա նպատակն է թույլ տալ Աստծուն և Նրա սրբությանը, Քրիստոսին և այն սիրուն, որ մահացավ Գողգոթայում, Հոգուն և այն կրակին, որ այրում է, տիրել մեզ և լինել մեր կյանքը: Այս նպատակը կարթնացնի մեր զգացմունքները՝ հիշեցնելով, որ մենք սպասում ենք Աստծուն, որպեսզի Նա մեր սրտերին սովորեցնի Իր ճանա-

պարհները: Եկեք գիտակցենք, որ անտեղյակ ենք Աստծո ճանապարհներին, և աղոթքի ու սրտի հաղորդության մեջ հանդարտ սպասենք Նրա առջև: Եկեք սպասենք, մինչև խոր, հանգիստ վստահությամբ լցվի մեր սիրտը, և մենք ուրախանանք՝ ասելով. «Նա սովորեցնում է հեզահոգիներին Իր ճանապարհը»: Թող ձեր սպասումն ուղեկցվի ամբողջ օրը վեր նայող հայացքով, որն ասում է. «Քրիստոսն է իմ կյանքը: **Նա է** իմ սրբությունը»:

Այո, սա է այն միակ բանը, որի կարիքն ունենք՝ սպասել Աստծուն: Մեր հաղորդությունը և Աստծուն սպասելը կդառնային մեր մեծագույն ուրախությունը, եթե միայն ավելի շատ տեսնեինք Աստծուն Իր անձնագրի սիրով, եթե միայն հավատայինք, որ Նա սպասում է, որ ողորմի մեզ (Ես. 30.18): **Մենք պետք է հավատանք, որ Նա ցանկանում է և սպասում է, որ լինի մեր ամբողջ կյանքը և գործի ամենը մեր մեջ:** Մենք մտածում ենք, թե մենք ենք գործում՝ անտեղյակ, որ հպարտությունը կործանում է հավատքը: Մենք պետք է լինենք խաչին, որպեսզի թույլ տանք, որ Նա լինի ամենը: Եթե իսկապես հավատանք սրան և թույլ տանք Նրան, Աստծուն սպասելը կլինի մեր սրտի բնական և ինքնաբերական արձագանքը Նրա մեծ սիրառատ սրտին: Այն մեր մեջ կբերի ճշմարիտ սրբություն, ճշմարիտ սեր, ճշմարիտ խոնարհություն, հետևաբար և ճշմարիտ զորություն:

Այս շարունակական սպասումն իրավ անհրաժեշտություն է: Ովքեր բավարարվում են թույլ քրիստոնեական կյանքով, ովքեր սովոր են հպարտությանը և եսասիրությանը, բավարարվում են արտաքին սրբությամբ, նրանց համար սա շքեղություն է թվում, որն էական չէ լավ քրիստոնյա լինելու համար: Չի կարող լինել Աստծո հետ անխախտ հաղորդակցում, Քրիստոսի մեջ լիարժեք բնակություն, սուրբ կյանք, մեղքի նկատմամբ հաղթանակ և սիրով ու խոնարհությամբ ծառայելու պատրաստականություն առանց մշտապես Տիրոջը սպասելու: Աստված, որ կոչ է անում սպասելու Իրեն և ցույց է տալիս մեր հոգևոր աղքատությունը, տեսնում է մեր թույլ ջանքերը և ներգործում է մեր մեջ: Աստծո Հոգին է ձեր մեջ սկսել սպասելու աշխատանքը: Նա ձեզ կարողություն կտա շարունակ սպասելու: Աստված պետք է գործի, Աստված կգործի շարունակ: Նա մշտապես գործում է, բայց մեր անհավատությունը, մեր ջանքերը և մեր ինքնահաճեցումը խանգարում են դա վերապրելուն:

Սիրելի հավատացյալ, խորամոլությամբ եղեք ձեր սրտի մեջ և խորհեք Տիրոջ հետ և Աստծուն սպասելիս մի՛ սահմանափակեք Նրան ձեր մտքերով, թե ինչ ակնկալեք: Ձեր աչքերն ուղղեք այս

մեկ ճշմարտությանը: Իր էությանմբ Աստված՝ կյանք և սրբություն Պարգևողը, չի կարող անել ուրիշ ոչինչ, քան ամեն վայրկյան գործել Իր զավակի մեջ: **Հավատացե՛ք և շարունակ հռչակե՛ք այս ճշմարտությունը և այս խոստումը**, այս հավատը պակասում է շատերի մեջ: Ժամանակ հատկացրեք մտորելու համար, մինչև որ ձեր էությունը լցվի այն տեսիլքով, որ ձեր Աստված շարունակ, առանց մեկ վայրկյան դադարի գործում է ձեր մեջ: Այնուհետև ձեր սպասումն ինքնըստինքյան կշարունակվի: «Ո՛վ իմ անձ, մենակ լուռ մտիկ տուր Աստծուն, որովհետև Նրանից է իմ հույսը: Հիրավի որ Նա է իմ վեմը, իմ փրկությունը...» (Սաղմ. 62.5, 6): Թող այն ամենը, ինչ ձեր մեջ է, բարձրանա և երգի. «Հիրավի որ իմ անձը լուռ ու մունջ սպասում է Աստծուն...», «Քեզ եմ հույս դրել ամեն օր» (Սաղմ. 62.1, Սաղմ. 25.5):

Աղոթք. «Ո՛վ Աստված, սովորեցրո՛ւ ինձ, ամեն ինչից վեր, որ ամբողջ օրը և ամեն վայրկյան Դու իմ շուրջն ես և իմ ներսում՝ կատարելով Քո սիրո աշխատանքը: Տո՛ւյց տուր, որ Դու միայն խնդրում ես, որ սպասեմ Քեզ, հաղորդություն ունենամ Քեզ հետ: Սովորեցրո՛ւ ասել, որ «Քեզ եմ սպասում ամեն օր», ամեն»:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ Աստծո հետ

1. Երբ ապավինում ենք Աստծուն, ինչի՞ ենք սպասում: Ի՞նչ կկատարվի մեր մեջ:
2. Ո՞րն է լռության անհրաժեշտությունը և նպատակը Աստծուն սպասելիս:
3. Որքան խորն է մեր համոզվածությունը Աստծուց լիարժեք և անդադար կախում ունենալու անհրաժեշտության մեջ, այնքան խորն է դառնում մեր համոզվածությունը մեկ այլ անհրաժեշտության մեջ: Ո՞րն է այդ անհրաժեշտությունը:
4. Եթե անկեղծ լինենք Աստծուն լիովին անձնատուր լինելու մեր աղոթքներում և սրբության համար մեր փափագում, Նրա ներկայությունը կբացահայտի մեզ որոշ թաքնված բաներ: Որո՞նք են դրանք:
5. «Աստված ցանկանում և սպասում է, որ լինի մեր ամբողջ կյանքը և գործի ամենը մեր մեջ»: Կարողանո՞ւ եք կապ հաստատել այս ճշմարտության հետ:
6. Ի՞նչն է ամենից շատ ազդել ձեզ վրա այս՝ «Ապրել՝ Աստծուն սպասելով» գլխում:

Գլուխ 22. Մտորումներ և դիտարկումներ Աստծուն սպասելու վերաբերյալ

Այս գլուխն անդրադառնում է Աստծուն սպասելու գաղափարի առավել խոր հասկացողությանը և դիտարկում է Աստծուն սպասելը որպես Աստծո սիրտն առավել խորությամբ փնտրելու միջոց:

Ավելի լավ հասկանալ Աստծուն սպասելու գաղափարը

«Եվ դու քո Աստծուն դարձիր, ողորմություն և իրավունք պահիր և քո Աստծուն հուսա՛ միշտ» (Օվս. 12.7): Մենք մշտապես պետք է ընդունենք Աստծո՝ սպասելու կոչը և հնազանդվենք դրան: Արդեն տեսանք, որ Աստծուն սպասելը պարզապես ժամանակի հարց չէ, այն ենթադրում է սրտով լիարժեք և բացարձակ կախում ունենալ Աստծուց: Մեր սպասելը պետք է ուղեկցվի «ամեն օր» (անգլերենում՝ ամբողջ օրը) վեր նայելով (Սաղմ. 25.4, 5). «Եվ դրա համար Տերը սպասելու է, որ ձեզ ողորմի, և դրա համար բարձրանալու է, որ ձեզ գթա, որովհետև Տերը իրավունքի Աստված է. **երանի՛ այն ամենին, որ սպասում են Նրան**» (Ես. 30.18):

Աստծուն հավատալ նշանակում է հավատալ, որ Նա է կյանքի, իմաստության և բարության միակ աղբյուրը և ոչ երբեք մարդը՝ որևէ իմաստով: Իմ սիրտը պետք է ճանաչի այս ճշմարտությունը և ենթարկվի դրան: Աստված սպասում է, որ լինի մեր կյանքը և գործի ամենը մեր մեջ: Մեծ մասամբ մենք սահմանափակում ենք Աստծուն մեր մարդկային էությանը, բայց մեր էությունը չի կարող ընդունել այս ճշմարտությունը, այն ոչ թե մեր ընկերն է, այլ մեր մահացու թշնամին: **Նոր կտակարանում Աստծո խոստումները փոխակերպվում են Աստծո կամքի, որպեսզի Աստված կարարի այն Քրիստոսի մեջ իրական կենդանի գործությամբ:** «...(Աստված) ամեն բան հաջողում է Իր կամքի խորհուրդների պես» (Եփես. 1.11): «...Աստված նույնն է, որ ամենը ամենքի մեջ ներգործում է» (Ա Կորնթ. 12.6): Մենք Հոգու կարիքն ունենք սա հասկանալու և թույլ տալու համար. **Աստված սպասում է, որ լինի մեր կյանքը և ամբողջովին դրսևորի Իրեն մեր մեջ:** Մեր էությունը, մեր մարմինը թույլ չեն տա սա և կհակառակվեն. սա հնարավոր է հոգևորապես զանազանել: Հետևյալ խոսքերը նույնպես սովորեցնում են նույն ճշմարտությունը. «Որի համար էլ աշխատում եմ՝ ճիգ թափելով Նրա ներգործության չափով, որ ինձանում ներգործում է գործությունով» (Կող. 1.29), «Եվ խաղաղության Աստվածը... հաստատի ձեզ ամեն բարի գործի մեջ Նրա կամքն անելու և գործի ձեզանում, ինչ որ հաճո է Նրա առաջ Հիսուս Քրիստոսի

ձեռքով, որին լինի փառք հավիտյանս հավիտենից: Ամեն» (Եբր. 13.20, 21), «Քանզի Աստված է, որ ներգործում է ձեզանում կամենալն էլ, անելն էլ Իր հաճության պես» (Փիլիպ. 2.13):

ԱՍՏԾՈ ՇՆՈՐՀՔԸ ԳՈՐԾՈՒՄ Է ՄԵՐ ՄԵՋ ԱՅՆ ԱՄԵՆԸ, ԻՆՉ ԱՍՏՎԱԾ ԽՆԴՐՈՒՄ Է ՄԵՋՆԻՑ: Այնքան բնական է ապավինել ինքներս մեզ՝ անելու այն, ինչ Աստված խնդրում է. մենք հաճախ չենք նկատում սա: Մենք հայտնաբերում ենք, որ մեր էությանն ընդունելի է մեզ, նրա վատ գործերը ներելի ենք համարում և հավատում ենք, որ մեր մեղավոր էությունը ընդունելի է նաև Աստծուն: Սա փրկության ավետարանի լիովին սխալ պատկերացում է: Մենք չենք տեսել և չենք սովորել համարել, որ ինքնապավինությունը, ինքնավստահությունը և ինքնահաճեցումը անհնազանդություն են, հետևաբար և մեղք: **Համաձայն Աստծո՝ ամեն մեղք չարիք է:** Մեր ջանքերը և մեր ինքնապավինությունը շարունակվում են, որովհետև մենք չենք ապաշխարում այս մեղքերից: Մենք չգիտենք, չենք էլ հասկանում, որ **Աստծո զորությունը կգործի մեր մեջ միայն այնտեղ, որտեղ Սուրբ Հոգու լույսը ցույց կտա մեր անհնազանդությունն Աստծուն:** Հակառակ դեպքում մենք կգործենք մեր, ոչ թե Աստծո զորությամբ: Ինքնավստահությունը և մարդկային իմաստությունը լայնորեն տարածված են քրիստոնյաների շրջանում և շատ եկեղեցիներում: Նրանք մեղքը ներելի են համարում, նրանք սովոր չեն սպասելու Աստծուն: Նրանք չեն փնտրում հայտնություններ և հանդիմանություններ Աստծուց: Նրանք միայն սպասում են Աստծուն, երբ ցանկանում են հստակ պատասխան երկրային որոշակի կարիքի համար: Ինքնահաճեցումը, ինքնավստահությունը և ինքնապավինությունը նրանց կրոնն է:

Եթե մենք պետք է փնտրենք Աստծո ներկայությունը, մեզ անհրաժեշտ է զարգացնել հեզ և մանկական վստահություն Աստծո հանդեպ: Մանկական խոնարհ սիրտը, որը հավատում է, որ Հայրը ցույց կտա իրեն այն, ինչ ցանկանում է անել իր միջոցով, ստանում է շնորհք՝ հավատալու, որ Աստված Ինքը կանի այն, ինչ խոստանում է: Սպասելու ընթացքում մենք սովորում ենք, որ Սուրբ Հոգով Աստծո կամքն իմանալը Աստծով զորանալու և այն կատարելու գաղտնիքն է: Աստծո ներկայությունը, որին սպասում ենք, կտա զորություն՝ կատարելու Նրա կամքը: Հնազանդվելու շարժառիթը և զորությունը սկիզբ են առնում Հոր զոհաբերող սիրո հետ մեր անձնական սերտ փոխհարաբերությունից: Աստված կտա անհրաժեշտ աստվածային զորությունը՝ կատարելու այն, ինչ Նա ցանկանում է և ցույց տալիս: Սա Նա անում է Իր Հոգով:

Սուրբ Հոգու համար ամենամեծ խոջընդոտը սա է. ես չեմ հրաժարվել իմ արատավոր հասկացողությունից: Մինչ մտածում եմ, որ ճանաչում եմ Աստծո գործությունը և վստահում եմ այդ գործությանը, ես կարող եմ խանգարել Նրան՝ չտալով ժամանակ կամ չհանձնելով իմ սիրտը, որպեսզի իմ մեջ ձևավորվի Աստծո ներկայությանը սպասելու սովորություն:

«Իմ որդյակներ, որ ձեզ կրկին ծնում եմ ցավով, մինչև որ Քրիստոսը կերպարանվի ձեզանում...», «Որ ամեն սուրբերի հետ իմանաք, թե ինչ է (Քրիստոսի սիրո) լայնությունը և երկայնությունը և բարձրությունը և խորությունը, որ ճանաչեք Քրիստոսի սերը, որ ամեն գիտությունից գերազանց է, և որ Աստծո ամեն լիությունով լցվեք» (Գաղ. 4.19, Եփես. 3.18,19): Սա է Աստծո խոստումը և ակնկալությունը՝ **Քրիստոսը ձևավորվի ձեր մեջ, որ դուք լցվեք Աստծո ամեն լիությունով:** Սա այն է, ինչ Աստծո ժողովուրդը շատ քիչ է հասկանում և շատ քիչ է փնտրում, որովհետև չի հավատում, որ հնարավոր է: Թեև այս մարդիկ հավատում են, որ կարող են բարելավել իրենց գիտելիքը և հասկացողությունը, նրանք բավարարվում են իրենց հոգևոր վիճակով: Նրանք հավատում են, որ գիտեն և հասկանում են բավականաչափ, սակայն սրտում չունեն Աստծուն ավելի փնտրելու փափագ: Նրանց համար իրենց «բավականաչափը» «բավարար» է: Աստված դեռ սպասում է, որ ներգործի Իր կյանքը շատերի մեջ:

Աստծուն սպասելը բերում է Նրա ներկայությունը և Նրա կյանքը մեզ և մեր մեջ, որպեսզի լցվենք Աստծո ամեն լիությունով, և այդ լիությունը՝ որպես կյանք, ապրի մեր մեջ: Միայն Նրա լիությունը՝ մեր մեջ Իր կյանքն ապրող Քրիստոսն է հնարավոր դարձնում, որ Աստծո սիրո կյանքն ապրի մեր մեջ և մեր միջև: Չի կարող լինել Աստծո հետ անխափան հաղորդակցություն, Քրիստոսի մեջ լիարժեք բնակություն, մեղքի նկատմամբ հաղթանակ և խոնարհությամբ ծառայելու պատրաստակամություն՝ առանց մշտապես սպասելու ՏԻՐՈՋԸ:

Սպասել Աստծուն. Աստծո սիրուն առավել խոր փնտրելու ժամանակ

«Տեր, ականջ դիր իմ խոսքերին և մի՛տքդ առ իմ աղաղակը: Միտքդ դիր իմ աղաղակի ձայնին, ո՛վ իմ Թագավոր և իմ Աստված, որովհետև դեպի Քեզ եմ աղաչում: Տեր, առավոտից լսիր իմ ձայնը, առավոտից պատրաստ կլինեմ Քեզ համար ու կսպասեմ» (Սաղմ. 5.1- 3):

Շատ քրիստոնյաներ չեն մտորում և չեն սպասում Աստծուն՝ որպես իրենց կյանքի ամենօրյա աղբյուրի, որովհետև չեն ընդունում իրենց կարիքն Աստծո տեսանկյունից և բավարարվում են իրենց երկրային կյանքի և կարիքների համար օրինություններ կամ պատասխաններ փնտրելով:

Եկեք տեսնենք Դավթի սրտի արձագանքը. «Իմ սիրտն ասում է Քեզ Քո խոսքը, թե՛ խնդրե՛ք Իմ երեսը. ահա, Տէր, ես էլ խնդրում եմ Քո երեսը» (Սաղմ. 27.8), «Ո՛վ Աստված, Դու ես իմ Աստվածը. առավոտից Քեզ եմ ման գալիս. հոգիս ծարավ է Քեզ համար...» (Սաղմ. 63.1, 2), «...Տէր, առավոտից լսիր Իմ ձայնը...» (Սաղմ. 5.1- 3): «Տո՛ւյց տուր ինձ, ո՛վ Տէր, Քո ճանապարհները, սովորեցրո՛ւ ինձ Քո գնալու ճանապարհները: Առաջնորդի՛ր ինձ Քո ճշմարտությունում և սովորեցրո՛ւ ինձ, թե Դու ես իմ փրկության Աստվածը. Քեզ եմ հույս դրել ամեն օր» (Սաղմ. 25.4,5): Այստեղ Աստծո երեսը վերաբերում է Աստծո ներկայությանը: Ինչպես տեսնում ենք, Դավիթը փնտրում է և փափագում է Աստծո ներկայությունը, և մենք լսում ենք նրա սիրտը այս մտորումներում: **Մեր սիրտը կարիք ունի հավելու Աստծո սրտին:** «Ուղարկի՛ր Քո լույսը և Քո ճշմարտությունը. նրանք առաջնորդեն ինձ և տանեն ինձ դեպի Քո սուրբ սարը և դեպի Քո բնակարանները» (Սաղմ. 43.3): Սիրելի՛ Քրիստոսի աշակերտ, թո՛ւյլ տվե՛ք հարցնել. **արդյո՞ք մեր սրտերը փնտրում և փափագում են Աստծո ներկայությունը: Արդյո՞ք ունենք փափագ՝ գնալու Աստծո սուրբ սարը:** «...Քեզ եմ հույս դրել ամեն օր» (Սաղմ. 25.5): **Աստծուն սպասելը ընտրությունն է:** **Արդյո՞ք ճանաչում եմ այս կարիքը: Արդյո՞ք տեսնում եմ դա որպես անհրաժեշտություն:** «...Տէր, Քո ողորմությունը լինի մեզ վրա, ինչպես որ սպասում ենք քեզ» (Սաղմ. 33.18- 22):

Աստված շարունակում է ասել. «Փնտրե՛ք Իմ երեսը»: Ինչ է Աստված ցանկանում, որ կատարվի իմ մեջ Իրեն սպասելիս: Սիրելի՛ Քրիստոսի աշակերտ, այդ հարցը դեռ չե՞ք տվել: Պատասխանը կախված է նրանից, թե ինչպես եմ հասկանում այս երկու բաները՝ իմ փոխհարաբերությունն Աստծո հետ և իմ մարդկային էությունը: «...որովհետև առանց Ինձ չեք կարող ոչինչ անել» (Հովհ. 15.5): Իմ փոխհարաբերությունն Աստծո հետ Նրանից ամեն ինչում բացարձակ կախում ունենալն է: Ինչո՞ւ: **Որպեսզի ստանամ Կյանք՝ ամեն օր ապրելու համար. Քրիստոսն է իմ կյանքը:** Իսկապէս հավատում եմ, որ կախվածություն պետք է լինի ամեն ինչում և ամեն օր: **Մենք չգիտենք, որ լիարժեք կախում ունենալն է բերում շարունակական Կյանք:** «...Քո Աստծուն հուսա՛ միշտ»

(Օվս. 12.7): «Իմ որդյակներ, որ ձեզ կրկին ծնում եմ ցավով, մինչև որ Քրիստոսը կերպարանվի ձեզանում», «Որ ամեն սուրբերի հետ իմանաք, թե ինչ է (Քրիստոսի սիրո) լայնությունը և երկայնությունը և բարձրությունը և խորությունը, որ ճանաչեք Քրիստոսի սերը, որ ամեն գիտությունից գերազանց է, և որ Աստծո ամեն լիությունով լցվեք», «Եվ կատարյալ մարդ լինենք Քրիստոսի կատարյալ հասակի չափով» (Գաղ. 4.19, Եփես. 3.18,19, 4.13): **Աստծո սերն ունենալը և դրանով ապրելը բերում են հասունություն, լցնում Աստծո ամեն լիությունով:** Բացահայտել էք այս ճշմարտությունը:

Սպասելով Աստծուն և Նրա ներկայությանը և իմ սրտում մտնելով Նրա ներկայության մեջ՝ ես անցնում եմ կյանքը՝ անվերապահ, անշահախնդիր, ազապե Սերը ստանալու դռնով՝ ուրիշներին Նրա խոնարհությամբ սիրելու համար: Այստեղ է, որ մնում եմ Քրիստոսի մեջ և ուրանում «ես»-ը: **Ես պետք է ձգտեմ ապրելու Աստծո լիության մեջ: Բայց պետք է տեսնեմ այս կարիքը իմ սրտում:** Շատերը համարում են, որ իրենց հետ ամեն բան կարգին է: Աստված է իմաստության և բարության միակ աղբյուրը, և ո՛չ երբեք ես: Իմ սիրտը պետք է ճանաչի այս ճշմարտությունը: Աստված սպասում է, սպասում է, որ ընդունեմ Իրեն՝ որպես իմ կյանքի, և որ Ինքը գործի ամենը իմ մեջ: Աստծուն սպասելը, ամեն բանում Նրանից բացարձակ կախում ունենալով, բերում է Նրա ներկայությունը: «Իմ անձը միայն Աստծուն է սպասում». սա պետք է նշանակի ավելին, քան իմ երկրային կարիքները լրացված տեսնելը: **Կյանքի Հացը իմ կյանքն է, ոչ թե պարզապես իմ կերակուրը կյանքի համար:** Աստված կարի Իր կյանքը իմ մեջ, և ինձնից ոչինչ չափտի լինի: Նա իմ ամենն է: Նրա կյանքը իմ ամենն է: Սպասեք Նրա ներկայությանը, հանդարտվեք և լռեք Նրա առջև: **Նրա ներկայությունը Նրա կյանքն է, ընդունեք դա հավատքով և ամեն օր հավատացեք դրան:** Երբ սպասում ենք Աստծուն, մեզ տրվում է Նրա ներկայության՝ անսխալ ներկայության գիտակցումը, ոչ թե զգացողությունը:

Ես լիովին կախված եմ Աստծուց, որպեսզի ստանամ Նրա ամբողջ լիությունը, որի կարիքն ունեմ ամեն օր, ամեն վայրկյան: **Փնտրեք Աստծո սիրտը և միացեք Նրան ձեր սրտով:** Փնտրեք Նրա ներկայությունը: Փնտրեք և մտեք Նրա հաղորդության մեջ: Աստված մշտապես ասում է ինձ. «Ես փափագում եմ քեզ, Ես պատկանում եմ քեզ»: Աստված փափագում է տալ Իրեն ինձ, հագեցնել իմ սիրտը Իր սրտով, Իր բարությամբ: Եկեք չբավարարվենք ուսմունքներով և երգերով, այլ մտնենք Խաչյալ Քրիստոսի հետ միության մեջ:

Մենք քննարկում ենք այս հարցը. «Ինչ է Աստված ցանկանում, որ կատարվի մեր մեջ Իրեն սպասելիս»: Հարցը կախված է նրանից, թե ինչպես են հասկանում իմ փոխհարաբերությունն Աստծո հետ և իմ մարդկային էությունը: Այժմ նայենք հարցի երկրորդ մասին. «Որովհետև գիտեմ, որ ինձանում (այսինքն՝ իմ մարմնում) մի բարի բան չի բնակվում. քանզի կամենալը կա իմ մոտ, բայց բարին անելը չեմ գտնում (բացակայում է զորությունը)» (Հռոմ. 7.18): Առանց Աստծո իմ մեջ չկա բարության գորություն: Այս հայտնության գիտությունը տրվում է իմ սրտին որպես «իրականություն» (ոչ պարզապես գիտություն) Նրա ներկայությունից Նրան սպասելու ժամանակ: Եթե այն չտրվի կամ ես չտեսնեմ, որ «ինձանում մի բարի բան չի բնակվում», Աստծուն մշտապես սպասելը և Նրան մշտապես վստահելը չեն արմատանա իմ սրտում և կմնան մակերեսային և անպտուղ: Իմ սիրտը այս հայտնության թիրախն է. «ինձանում մի բարի բան չի բնակվում»: Եթե այս ճշմարտությունը բացակայում է իմ սրտում, Աստված չի կարող լինել իմ ԱՄԵՆԸ և իմ ամեն ինչը: «...Դու ես իմ փրկության Աստվածը. Քեզ եմ հույս դրել ամեն օր (անզերեցնում՝ ամբողջ օրը)» (Սաղմ. 25.5): Աստծո ներկայության մեջ մտնելը և Քրիստոսի մեջ մնալը փոփոխության իմ զորությունն են: Աստված առաջնորդում է ինձ «ես»- ի հատուկենտ ուրացումից դեպի «ես»- ի ամենօրյա և ամբողջօրյա ուրացում: Սպասե՛ք Աստծուն շարունակ, Նրանից է իմ ամենօրյա կյանքը, ընդունե՛ք այն ամեն օր, փնտրե՛ք Նրա ներկայությունը և գիտակցությունը, փնտրե՛ք Նրա սիրտը, ձեր սիրտը Նրա բնակարանն է, Նա սպասում է ձեզ այնտեղ:

«Եվ դրա համար Տերը սպասելու է, որ ձեզ ողորմի, և դրա համար բարձրանալու է, որ ձեզ գթա, որովհետև Տերը իրավունքի Աստված է. երանի՛ այն ամենին, որ սպասում են Նրան» (Ես. 30.18):

Մեր առջև ծառայած հիմնական խնդիրը սա է. մենք ուզում ենք շարունակել հավատալ, որ մեր էության մեջ բարի բան կա: Մենք չենք ցանկանում տեսնել մեր հոգևոր դատարկությունը, մեր իրական հոգևոր աղքատությունը և լիակատար անօգնականությունը: Մեզ պակասում է Աստծո հետ դեմառդեմ հաղորդությունը: Մենք վախենում ենք մեր հոգևոր մերկությունը տեսնելուց: Ուստի թաքնվում ենք Աստծուց և ինքներս մեզնից: Աստծո ներկայությունը, որ իմ սիրտը վերապրում է, կարող է հեռացնել իմ անապահովությունը, իմ գաղտնի վախն ու մեղքի զգացումը:

ՄՏՈՐՈՒՄ Աստծո հետ

1. «Սպասելով Աստծուն և Նրա ներկայությանը և իմ սրտում մտնելով Նրա ներկայության մեջ՝ ես անցնում եմ ԿՅԱՆՔԸ՝ անվերապահ, անշահախնդիր, ազապե ՍԵՐԸ ստանալու դռնով, որպեսզի սիրեմ ուրիշներին այնպես, ինչպես Քրիստոսը պահանջեց»: Ի՞նչ է սա նշանակում:
2. «Ես պետք է ձգտեմ ապրելու Աստծո լիության մեջ»: Կարծում եմ՝ դուք հասկանում եք, թե ինչ է սա նշանակում: Բայց տեսնո՞ւմ եք այս կարիքը ձեր մեջ:
3. «Ի՞նչ է Աստված ցանկանում, որ կատարվի իմ մեջ Իրեն սպասելիս»: Ո՞րն է այս հարցի պատասխանը:

Գլուխ 23. Սպասել Աստծուն. Աստված է անում ամբողջ աշխատանքը

Այս գլուխն անդրադառնում է հետևյալ թեմաներին՝ Հայրը, որ ինձանում բնակվում է, անում է աշխատանքը, էլ ավելի սպասել Աստծուց, ինչպես ճանաչել Աստծուն և ինչպես սպասել Աստծուն:

Հիսուսն ասաց. «Իմ Հայրը մինչև հիմա գործում է, և ես էլ գործում եմ» (Հովհ. 5.17):

«Չե՞ս հավատում, որ ես Հոր մեջ եմ, և Հայրն Ինձանում է. այն բանը, որ ես խոսում եմ ձեզ հետ, Իմ անձից չեմ խոսում, բայց **Հայրը, որ Ինձանում բնակված է, Նա է գործում այդ գործերը**» (Հովհ. 14.10):

Հիսուսն ասաց. «...**Ես եմ հարությունը և կյանքը**. Ինձ հավատացողը թեև մեռնի էլ, կապրի: Եվ ամեն, ով որ կենդանի է և Ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի. հավատո՞ւմ ես սրան» (Հովհ. 11.25, 26):

Հայրը, որ Ինձանում բնակվում է, անում է աշխատանքը

Շատ քրիստոնյաներ բաց են թողնում հետևյալ ճշմարտությունը. **Հիսուս Քրիստոսը դարձավ մարդ, որպեսզի մեզ ցույց տա, թե որն է իսկական մարդը: Նա դարձավ մարդ, որպեսզի մեզ ցույց տա, թե ինչպես է Աստված մտադիր ապրելու և գործելու մարդու մեջ, Նա դարձավ մարդ, որպեսզի մեզ ցույց տա, թե ինչպես կարող ենք գտնել նպատակ մեր կյանքում և անել մեր գործը Աստծո մեջ:**

Քրիստոսը չեկավ աշխարհ, որպեսզի գործի Հոր փոխարեն: Քրիստոսի աշխատանքը Հոր գործի պտուղն էր՝ երկրային արտա-
ցույթն էր: Քրիստոսը պարզապես չէր տեսնում և կրկնօրինակում
այն, ինչ Հայրը կամենում էր կամ անում, Նա հոչակեց. «Հայրը, որ
Ինձանում բնակված է, Նա է գործում այդ գործերը»: **Քրիստոսն
անում էր Իր բոլոր գործերը Հոր զորությամբ, որ ապրում և գոր-
ծում էր Իր մեջ**, մենք պետք է տեսնենք այս ճշմարտությունը:
Ուշադրություն դարձրեք Նրա հզոր հայտարարություններին հետև-
յալ խոսքերում. «Հիսուսը պատասխանեց և ասաց նրանց. «Ճշմար-
իտ, ճշմարիտ ասում եմ ձեզ, թե Որդին Իրենից չի կարող ոչինչ
անել, թե որ չտեսնի Հորն անելիս, որովհետև ինչ որ Նա անում է,
հենց Որդին էլ այն բանը Նրա նման է անում» (Հովհ. 5.19), և «Ես
Ինձանից չեմ կարող ոչինչ անել...» (Հովհ. 5.30): Նույն ճշմարտությ-
ունը վերաբերում է թե՛ Նրան, թե՛ մեզ. «...Որովհետև առանց Ինձ
չեք կարող ոչինչ անել» (Հովհ. 15.5), և «Հայրը, որ Ինձանում բնակ-
ված է, Նա է գործում այդ գործերը» (Հովհ. 14.10):

Մտորում Աստծո հետ

1. Մտորե՛ք հետևյալ ճշմարտության շուրջ, մինչև որ այն համա-
կի ձեր սիրտը: Հիսուս Քրիստոսը դարձավ մարդ, որպեսզի
մեզ ցույց տա, թե որն է իսկական մարդը, որն է Աստծո և
մարդու իսկական փոխհարաբերությունը, և որն է Աստծուն
ծառայելու և Նրա գործն անելու իսկական ճանապարհը:
2. Նկատե՛լ եք այս ճշմարտությունը. «Քրիստոսն արեց Իր բոլոր
գործերը Հոր զորությամբ, որ ապրում և գործում էր Իր մեջ»:

Սիրելի՛ Քրիստոսի աշակերտ, երբ դառնում ենք նոր արարած-
ներ Քրիստոսի մեջ (Բ Կորնթ. 5.17), կյանքը, որ ստանում ենք,
հենց այն է, որ կար և կա Քրիստոսի մեջ: Միայն երկրի վրա Նրա
կյանքն ուսումնասիրելու միջոցով է, որ իմանում ենք, թե ինչպես
պետք է ապրենք: «Ինչպես Ինձ ուղարկեց կենդանի Հայրը, և ես
կենդանի եմ Հոր համար, այնպես էլ նա, որ Ինձ ուտում է, կենդա-
նի կլինի Ինձ համար» (Հովհ. 6.58):

Քրիստոսը նվաստացում չհամարեց Իրենից ոչինչ չանելը, այ-
սինքն՝ Հորից մշտապես և բացարձակապես կախված լինելը: Նա
համարեց դա Իր մեծագույն փառքը, ոորովհետև Նրա բոլոր գոր-
ծերը Ամենափառավոր Աստծո գործերն էին Իր մեջ. մենք կարիք
ունենք, որ մեր սրտերը հասկանան այս ճշմարտությունը: **Աստ-
ծուն սպասելը, Նրա առջև կատարյալ անօգնականությամբ
խոնարհվելը և թույլ տալը, որ Նա գործի ամենը մեր մեջ, մեր**

իսկական վեհությունն է և բարձրագույն հոգևոր գործունեության գաղտնիքը: Սա այն է, ինչ մեզ ցուցադրեց Քրիստոսի կյանքը: Միայն սա է Քրիստոսի ճշմարիտ կյանքը՝ Աստծո յուրաքանչյուր զավակի ճշմարիտ կյանքը: Երբ հասկանանք և պահպանենք այս կյանքը, որը մշտապես և լիովին կախման մեջ է Աստծուց, գործելու համար զորությունը կավելանա: Հոգու մեջ կձևավորվի ճիշտ վերաբերմունք, որով Աստված կկարողանա գործել մեր մեջ, քանի որ «Բարի է Տերը Իրեն հուսացողներին...» (Ողբ 3.25): Եթե արհամարհենք և անտեսենք բացարձակ կախում ունենալու վերաբերյալ այս ճշմարտությունները, չենք կատարի որևէ ճշմարիտ գործ Աստծո համար, այլ կունենանք միայն երկրային գործեր՝ երկրային կամ մարդկային արդյունքներով:

Կան քրիստոնեական գործունեության բազում տեսակներ, որոնք այնքան քիչ իրական երկնային արդյունքներ ունեն: Աստված գործում է մեր մեջ, բայց Նա չի կարող լիովին գործել մեր մեջ, եթե չապրենք Նրանից բացարձակ կախման մեջ: Արթնությունը, որի համար շատերն աղոթում են, պետք է սկսվի սրանով. վերադարձ դեպի մեր իսկական տեղը Աստծո առջև: **Ինչպես Քրիստոսը, մենք լիովին պետք է ապավինենք և շարունակ սպասենք Աստծուն, որ գործի մեր մեջ, և թույլ չտանք մեզնից ոչինչ:**

Սիրելի Քրիստոսի աշակերտ, ե՛կ սովորենք մեր Տեր Հիսուսից Աստծո համար ճշմարտապես գործելու գաղտնիքը. «ինչ որ Նա անում է, հենց Որդին էլ այն բանը Նրա նման է անում», «Հայրը, որ Ինձանում բնակված է, Նա է գործում այդ գործերը»: **Սա է Հայրության էությունը. այն, որ Հայր Աստված ամենն է, տալիս է ամենը և գործում է ամենը:** Հիսուսը շարունակ կախված էր Հորից և ամեն վայրկյան ստանում էր Իր աշխատանքի համար անհրաժեշտ ամբողջ զորությունը: «Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ, թե Որդին Իրենից չի կարող ոչինչ անել, թե որ չտեսնի Հորն անելիս, որովհետև ինչ որ Նա անում է, հենց Որդին էլ այն բանը Նրա նման է անում» (Հովհ. 5.19), «Ես Ինձնից չեմ կարող ոչինչ անել...» (Հովհ. 5.30), և «Հայրը, որ Ինձանում բնակված է, Նա է գործում այդ գործերը» (Հովհ.14.10): Նույն ճշմարտությունը վերաբերում է թե՛ Նրան, թե՛ մեզ: Նա մեզ ասում է. «...որովհետև առանց Ինձ չեք կարող ոչինչ անել» (Հովհ. 15.5): Եկե՛ք ըմբռնենք այս մեծ ճշմարտությունը, որ «...Աստված նույնն է, որ ամենը ամենքի մեջ ներգործում է» (Ա Կորնթ. 12.6), մեր հիմնական կարիքը սպասելն է և վստահելը Նրա ներգործությանը, խոնարհությամբ և տկարությամբ սպասելը: Մենք պետք է սովորենք, որ Աստված կարող է գործել մեր մեջ միայն այն ժամանակ, երբ բնակվի մեր մեջ: «Հայրը, որ Ինձանում բնակված է, Նա է գործում այդ գործերը»:

Հավատալով և հոշակելով ձևավորե՞ք սուրբ գիտակցություն (կամ զգացում), որ Աստված մշտապես մոտ է և ներկա, որ դուք Նրա տաճարն եք, և Նա բնակվում է ձեր մեջ: «Կացե՛ք Ինձանում, և Ես՝ ձեզանում... նա, որ Ինձանում մնում է, և Ես՝ նրանում, նա շատ պտուղ է բերում, որովհետև առանց Ինձ չեք կարող ոչինչ անել...» (Հովհ. 15.4- 6): Ներկայացրե՛ք ձեր անձը Նրան, որպեսզի Նա գործի ձեր մեջ Իր ամբողջ հաճությունը: Հավատացե՛ք Նրա ներգործությանը, նույնիսկ երբ չեք զգում դա: Դուք կարող եք գործել տկարությամբ, վախով և դողով: Բայց կիմանաք, որ գործությունն Աստծունն է, ոչ թե ձերը: Երբ ավելի լավ ճանաչեք ձեզ և Աստծուն, բավարարված կլինեք նրանով, որ Նրա զորությունը միշտ կատարյալ է դառնում ձեր տկարության մեջ (Բ Կորնթ. 12.9):

Ներբնակ և մշտապես բնակվող Աստված է, որ գործում է մեր մեջ: **Թ՛ոյլ տվե՛ք Աստծուն ապրել ձեր մեջ՝ ամեն օր ուրանալով «Ես»-ը, և Նա կհաստատի ձեր բարի գործերը:** Շատ աղոթեք շնորհքի համար. «Հայրը, որ Ինձանում բնակված է, Նա է անում այդ գործերը»:

Մտորումներ Աստծո հետ

1. Ո՞րն է բարձրագույն հոգևոր գործունեության գաղտնիքը, որ նշվեց վերևում:
2. Որո՞նք են այն մի քանի պատճառները, որ Աստված չի կարող լիովին գործել մեր մեջ: Ո՞րն է հիմնական պատճառը:
3. Արդյո՞ք ձեզ համար հնարավոր է բացարձակ կախված լինել Հիսուս Քրիստոսից:

Սպասել Աստծուն. է՛լ ավելի Աստծուց

«Ո՛վ իմ անձ, մենակ լուռ մտիկ տուր Աստծուն, որովհետև Նրանից է իմ հույսը» (Սաղմ. 62.5):

Սիրելի՛ Քրիստոսի աշակերտ, սովորե՛լ եք ապրել ձեր կյանքը՝ հավատալով, որ Աստված իսկապես ձեզ հետ է ամեն վայրկյան և ամեն իրավիճակում: Շատ քրիստոնյաներ մշտապես դժգոհում են՝ ասելով. «Իմ հանգամանքները բաժանում են ինձ Աստծուց: Իմ փորձությունները, գայթակղությունները, բնավորությունը, խառնվածքը, ընկերները, թշնամիները, ցանկացած բան կարող է կանգնել Իմ Աստծո և իմ միջև»: **Մի՞թե Աստված չի կարող տիրել ինձ: Ինչո՞ւ եմ հաճախ դժգոհում, որ հանգամանքները բաժանում են ինձ Աստծուց: Կա միայն մեկ պատասխան. «Ես չեմ ճանաչում իմ Աստծուն»:**

Արդյո՞ր մենք ճանաչում ենք Աստծուն: «Ձեզ համար Աստված կլինեն» խոստումին ավելանում է հաջորդ խոստումը. «...Եվ **պիտի գիտենաք, որ Ես եմ Եհովան՝ ձեր Աստվածը**» (Ելից 6.7): Իմ սիրտը պետք է իմանա սա, **իմանա Աստծո կենդանի, անմիջական ներկայությունից**, ոչ թե մարդկանց ուսուցումից, իմ մտքից կամ իմ պատկերացումից: Իմ Աստված կարող է այնքան մոտ լինել, որ իմ կյանքի բոլոր օրերն ու տարիները կարողանամ ապրել որպես հաղթող Նրա միջոցով, որ սիրեց ինձ: Մի՞թե սա այն չէ, ինչի կարիքն ունենք:

Նորից եմ հարցնում. **ինչո՞ւ շատ քրիստոնյաներ չեն ճանաչում իրենց Աստծուն: Որովհետև նրանք ընդունում են ցանկացած բան՝ բացի Աստծուց՝ Աստծուն ճանաչելու համար.** ծառայողներ, քարոզչություն, գրքեր, աղոթքներ, ծառայություն և ջանքեր: **Մենք կարիք ունենք, որ Աստված անձամբ հայտնի Իրեն Սուրբ Հոգու միջոցով:** Փոխանակ սպասելու և անհրաժեշտության դեպքում երկար սպասելու, որ Աստված հայտնի Իրեն՝ մենք ընդունում ենք մարդկային էության ցանկացած ճիգ: Մեր ստացած ոչ մի ուսմունք և գործադրած ոչ մի ջանք չեն կարող դնել մեզ Աստծո լույսի և երանելի ներկայության մեջ: Այնուամենայնիվ, դա հասանելի է, դա հնարավոր է, եթե Աստված հայտնի Իրեն: Սա է միակ բանը, որ անհրաժեշտ է և պարտադիր: Արդյո՞ր ամեն օր ձեր սրտում ասում եք. «Ես էլ ավելի եմ ցանկանում Աստծուն: Ես Աստծուն եմ ցանկանում»:

Ներքին կյանքում, մեր ամենօրյա աղոթքներում, մեր հաղորդակցության ժամանակ, մեր եկեղեցիներում, մեր աղոթաթաժողովներում ամեն բան պետք է պտտվի այս կետի շուրջը. առաջին տեղում միշտ պետք է լինի Աստված: Մենք համաձայն ենք այս ճշմարտությանը, բայց չգիտենք, որ դա պետք է նշանակի եսապաշտ կյանքի բացակայություն, որը հաճախ թաքնված է: **Եթե ես տամ Աստծուն առաջին տեղը, Նա կտիրի ինձ:** Իմ սիրտը կաղաղակի. «Իմ անձը ծարավ է Աստծուն...» (Սաղմ. 42.2): Քրիստոսը եկավ, որ մատնանշի, ցույց տա մեզ ճանապարհը, մոտեցնի մեզ Աստծուն (Ա Պետր. 3.18):

Կա տարբերություն ճանապարհի և նպատակակետի միջև: Ես կարող եմ ճանապարհորդել շատ գեղեցիկ բնատեսարանով և շատ հաճելի ընկերախմբի հետ: Բայց եթե ես ունեմ տուն, ուր ցանկանում եմ հասնել, ինձ շրջապատող ամբողջ տեսարանը, ընկերախումբը և ամբողջ հրճվանքը չեն կարող բավարարել ինձ: Ես ուզում եմ հասնել նպատակին, ուզում եմ հասնել իմ տուն: **Աստված պետք է լինի մեր հոգու բնակարանը:** Քրիստոսը եկավ աշխարհ, որ հետ բերի մեզ Աստծո մոտ, և եթե չընդունենք Քրիստոսին և չուրանանք եսապաշտ կյանքը, ինչպես նախատեսել է Աստ-

ված, մեր հավատքը կմասնատվի: Քրիստոսը ցանկանում է հետ բերել մեզ դեպի Աստծո փառքը և ցանկանում է, որ ցնձանք Իր արդարությանը, Իր սրբությանը, Իր իշխանությանը, Իր ներկայությանը, Իր սիրով և Իր զորությանը: «Ուստի և բուրբուրվին կարող է փրկել նրանց, որ Նրանով մոտենում են Աստծուն...» (Եբր. 7.25):

Ինչպես ճանաչել Աստծուն: Որպեսզի բոլոր հանգամանքներից վեր ճանաչեմ Աստծուն, որն ամեն օր լցնում է իմ սիրտն ու կյանքը, ինձ մեկ բան է անհրաժեշտ. ես պետք է սպասեմ Նրան: «Ո՛վ իմ անձ, մենակ լուռ մտիկ տուր Աստծուն...» (Սաղմ. 62.5): Ինչ է անձի լռությունն Աստծո առջև: Սա այն է, երբ անձը գիտակցում է իր փոքրությունը և դատարկությունը՝ իր տգիտությունը, իր նախապաշարմունքները և վտանգները կրքից, այն ամենից, ինչը բխում է մեղավոր մարդկային էությունից: Սա այն է, երբ անձն աղաղակում է. «Ես ցանկանում եմ, որ հավիտենական Աստված գա և տիրի ինձ այնպես, որ ամեն վայրկյան կարողանա գործել ամենը ամենում իմ մեջ»: Օ՛, որքան պետք է լռենք Աստծո առջև և սպասենք Նրան:

Հարգանքով հարցնում եմ. ինչի համար է Աստված: Որպեսզի լինի ամբողջ արարչության լույսը և կյանքը, ամբողջ գոյության աղբյուրը և զորությունը: Ամեն տարի Աստված հազցնում է ծառերը սաղարթով և պտուղներով: Ամեն օր և ամեն ժամ Աստված պահպանում է ամբողջ բնության կյանքը: Աստված ստեղծել է մեզ, որ լինենք դատարկ անոթներ, որոնցում կկարողանա դրսևորել Իր գեղեցկությունը, Իր կամքը, Իր սերը և Իր Որդու պատկերը: Աստված ցանկանում է գործել մեր մեջ Իր կարող Հոգով՝ առանց մեկ վայրկյան դադարի: Քրիստոսն է իմ կյանքը, վերցրեք այն, ինչ տրվել է ձեզ:

Աստված ստեղծել է արևը, որ ապահովի ձեզ լույսով: Լույսը գալիս է առանց ձեր խնդրելու: Միթե Աստված չի կամենում կամ չի կարող թույլ տալ, որ Իր լույսը և Իր ներկայությունն այնպես շողան ձեր միջոցով, որ կարողանաք ամբողջ օրը քայլել Աստծո հետ, որն ավելի մոտ է ձեզ, քան որևէ բան բնության մեջ: Փառք Աստծուն, Նա կարող է: Ինչո՞ւ Նա չի անում դա: Ինչո՞ւ է այդքան քիչ չափով անում: Կա միայն մեկ պատասխան. դուք թույլ չեք տալիս Նրան: Դուք այնքան զբաղված և լցված եք այլ բաներով՝ հոգևոր բաներով, քարոզչությամբ և աղոթքով, սերտողությամբ և աշխատանքով, այնքան զբաղված եք ձեր հավատքով, որ Աստծուն ժամանակ չեք տալիս Իրեն անձամբ հայտնելու, ձեր սիրտ մտնելու և ձեզ տիրելու համար: **Սովորեք ասել հավատալով՝ «Իմ անձ, միայն սպասիր Աստծուն», և արեք դա:** Քրիստոսը բերեց, ապրեց և ցուցադրեց Հորից բացարձակ կախված լինելու այս կյանքը: Հոր ներկայությունը Նրա վրա էր, Նրա մեջ էր և Նրա շուրջն էր: Սա է այն կյանքը, որ Քրիս-

տոսը ցանկանում է տեսնել մեր մեջ: Քրիստոսի կյանքի գաղտնիքը սա է. Աստծո ներկայության գիտակցումը: Դա այն է, ինչ Աստված ցանկանում է ձեզ և ինձ համար: Եկեք լռենք և սպասենք Աստծուն: Նա կհայտնի Իրեն և Իր ներկայությունը: Փնտրեք Նրան:

Մտորումներ Աստծո հետ

1. Ինչո՞ւ Աստծուն ավելի շատ պետք է ճանաչեմ:
2. Աստծուն ավելի շատ ճանաչելու համար պետք է լինեն անմիջականորեն Նրա ներկայության մեջ: Ինչպե՞ս եք անելու սա՝ հիմնվելով այս գլխի ուսուցման վրա:

Ինչպե՞ս սպասել Աստծուն

Նախևառաջ աղոթքում ավելի շատ ժամանակ հատկացրեք Աստծո առջև լուռ մնալուն՝ առանց որևէ խոսք ասելու: Դուք փնտրում եք Աստծո ուշադրությունը և ուզում եք տեղեկանալ, որ գրավել եք Նրա ուշադրությունը: Դուք հավանաբար գիտեք այդ ամենը: **Բայց ձեր սիրտը լի պետք է լինի այն սուրբ գիտակցմամբ, որ հավիտենական, ամենակարող Աստված իսկապես շատ մոտ է ձեզ:** Սուրբ Հոգին դա իրազեկ է դարձնում ձեր սրտին: Սիրառատ Աստված փափագում է, որ դուք լինեք Իրենը, Նա սպասում է ձեզ: Հանդարտվեք Աստծո առջև, սպասեք և ասեք. «Ո՛վ Աստված, տիրի՛ր ինձ: Հայտնի՛ր Քեզ ոչ թե իմ մտքերում կամ պատկերացումներում, այլ իմ սրտում՝ Հոգու այն վեհ և ճնշող գիտակցությամբ, որ Աստված փայլում է ինձ վրա: Տա՛ր իմ սիրտը կախվածության և խոնարհության վայր»:

Աղոթքը կարող է իսկապես Աստծուն սպասելու ժամանակ լինել, բայց շատ աղոթքներում բացակայում է Աստծուն սպասելը: Շատ աղոթքներ արվում են առանց Աստծո ներկայությունը ստանալու: Աստծուն սպասելը լավագույն սկիզբն է աղոթքի համար: **Երբ ծնկի ենք իջնում՝ խոնարհաբար և լուռ ճանաչելով Աստծո փառքը, և սպասում ենք Նրան, առաջնորդվում ենք Աստծո մտերմության և ներկայության մեջ:** Ես դեմ առ դեմ հանդիպում եմ Աստծուն և կապ եմ հաստատում Նրա անձնագրի սիրո հետ ու գիտեմ, որ իմ Աստված կօրհնի ինձ: Եկեք երբեք չվախենանք Աստծո առջև հանդարտ մնալուց, այնուհետև այդ հանդարտությունը կտանենք մեր աշխատանքի կամ եկեղեցական ծառայության մեջ: Թո՛ղ մեր հովիվները հայտնի լինեն սրանով. «Այս մարդը ցանկանում է մոտեցնել մեզ Աստծուն»: Շատ քրիստոնյաներ

զարմանում են, թե ինչու են ձախողվում: Բայց նայեք նրանց կյանքին. ուշադրություն դարձրեք, թե ինչ հեշտությամբ են նրանք ժամեր շարունակ մասնակցում մարմնավոր զրույցների՝ չմտածելով, որ այս ամենը կարող է պատճառ դառնալ հոգու զորության նվազման և ժամերով Աստծո անմիջական ներկայությունից դուրս լինելու: Սա է մեծ դժվարությունը. մենք չենք կամենում կատարել այն զոհը, որ անհրաժեշտ է Աստծուն մշտապես սպասելու կյանքի համար: Մենք չենք տեսնում մեր հոգևոր աղքատությունը և դատարկությունը և սիրում ենք մեր նյութապաշտ ու անհատապաշտ կյանքը: **Այն կյանքը, որը հանձնված չէ Աստծուն և Նրա Խաչին, չի կարող սպասել Աստծուն, չի կարող նվիրաբերվել Աստծուն և Նրա ծառայությանը:**

Սիրելի Քրիստոսի աշակերտ, մի՛ համարեք, որ Աստծուն սպասելը չափազանց բարդ է կամ չափազանց դժվար: Ձեզ և ինձ համար չափազանց դժվար է, բայց մեր Աստված հնարավոր կդարձնի այն: Սա միայն շնորհքի աշխատանքն է: Եկեք մեր տներում լուռությամբ խոնարհվենք: **Եկեք մեր աղոթքի սենյակներում լուռությամբ սպասենք և ուխտ անենք, որ մեր ամբողջ սրտով կփնտրենք և կսպասենք, որ Աստծո ներկայությունն իջնի մեզ վրա:** Եթե ցանկանում եք ավելի շատ հավատք, ավելի շատ շնորհք, ավելի շատ զորություն և ավելի շատ պողպատություն, ավելի շատ պետք է ունենաք Աստծուն: Մենք խաբվել ենք մեզ շրջապատող քրիստոնեական մշակույթով: Միայն Աստված է այն ճշմարտությունը, որի կարիքն ունենք կյանքի համար: **Թող սա լինի մեր սրտի աղաղակը՝ էլ ավելի շատ Աստծուց, էլ ավելի շատ Աստծուց, էլ ավելի շատ Աստծուց:**

Մտորումներ Աստծո հետ

1. Եթե մտածում եք Աստծո ներկայությանը կանոնավոր սպասելու համար Աստծո հետ ուխտ կնքելու մասին, հայտնեք ձեր զգացմունքներն ու մտքերն Աստծուն: Մտապահեք այն տպավորությունները, որ Հոգին կձևավորի ձեր մեջ, և թող դրանք առաջնորդեն ձեր որոշումները:
2. Հաղորդություն ունեցեք Աստծո հետ և թո՛ւյլ տվեք, որ Նա իմանա ձեր սրտի աղաղակը Իր ներկայության համար: Թո՛ղ Նա առաջնորդի ձեր սիրտը Իր հետ հաղորդության ժամանակ: Գուցե անհրաժեշտ է, որ Նա նախապատրաստի ձեզ դրա համար: Հիշեք, որ սա ինքնաբերաբար տեղի չի ունենում, բայց տեղի է ունենում:

Մաս 6. Աղոթքի կյանք

Վեցերորդ մասը ներառում է 3 գլուխ: Քսանչորսերորդ գլուխը աղոթքի բացակայության կամ աղոթքն անտեսելու մասին է, քսանհինգերորդ գլուխը անդրադառնում է աղոթքին՝ որպես կյանքի, և քսանվեցերորդ գլուխը քահանայական բարեխոսության մասին է:

Վերջին մասն անդրադառնում է այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝ ի՞նչ է աղոթքի անտեսման մեղքի պատճառը և արմատը, ինչպե՞ս կարող ենք վերևից զորություն հագնել, ինչպե՞ս կարող է աղոթքի կյանքն աճել ձեր առօրյա կյանքում, ինչպե՞ս է աղոթքի կյանքը ղեկավարում ձեր կյանքը, ինչպե՞ս է հոգևոր առատության կյանքը կապված խաչի հաղորդության հետ, ինչպե՞ս է Քրիստոսի մեջ մնալը կապված աղոթքի կյանք կերտելու հետ, ի՞նչ է համառ աղոթքը, և ի՞նչ է այն ներառում, որո՞նք են Աստծո պայմանները, որոնք որոշում են մարդու աղոթքի կյանքի արդյունավետությունը, ի՞նչ է քահանայական բարեխոսությունը, ինչպե՞ս են քահանայությունը և բարեխոսությունը կապված անհատի կյանքում, քահանայության ի՞նչ աշխատանք և ընթացք պետք է ներառի բարեխոսությունը:

Գլուխ 24. Աղոթքն անտեսելու կյանք

Այս գլուխն անդրադառնում է հետևյալ թեմաներին՝ աղոթքն անտեսելու մեղքը և դրա պատճառները, խաչի և աղոթքի մարտահրավերը և տեսիլքը, աղոթքի կյանք:

Եթե դիտարկենք մեր համայնքի հոգևոր թույլ վիճակը, պետք է ընդունենք, որ **մեր անհավատությունը և մեղքերն են մեր համայնքում կյանքեր վերափոխելու հոգևոր զորության բացակայության պատճառը**, և սա անմիջականորեն վշտացնում է Աստծո Սուրբ Հոգուն: **Խոստովանությունը միակ ճանապարհն է դեպի ապաշխարություն և վերականգնում:** Մենք չենք տեսնում փոխված սրտեր, մենք տեսնում ենք հոգևոր կյանքեր, որոնք զբաղված են հավաքություններով, միջոցառումներով և ծառայություններով: Հոգևոր կյանքը բնորոշվում է իր գործողություններով, իր «բարի գործերով»: Ինչը կարող է պատճառ լինել, որ մեր եկեղեցու համայնքի կյանքն այսքան չհավասարակշռված ու թույլ լինի: Աղոթքն անտեսելու մեղքը կամ աղոթքի կյանքի բացակա-

յությունը այս խնդրի խոր արմատներից է: Խնդրի մեջ չարիքը չի երևում: Աղոթքն անտեսելը մեղք է՝ ըստ Աստծո: Երկրպագությունը և աղոթքի կյանքը հոգևոր կյանքի զարկերակն են: Դրանք հզոր միջոցներ են երկնքի օրհնությունը և զորությունը մարդկանց բերելու և սրտեր փոխելու համար:

Աղոթքի կյանք հաստատելու համար նոր սկիզբ է անհրաժեշտ: Նոր աղոթքի կյանքի համար միակ զորությունը մեր երանելի Տիրոջ հետ բոլորովին նոր հարաբերության մեջ է: Մենք մոռացել ենք հավատալ Աստծուն՝ որպես Մեկին, ով փրկում է մեզ մեր ամենօրյա մեղքերից: Սրտի փոփոխությունն այլևս նպատակ չէ, մարդիկ չեն փնտրում դա: Մենք այլևս չենք ճանաչում մեր մեղքերը, և Աստծո կարիքը մեր ամենօրյա կյանքում հավասարվել է մեր երկրային կյանքի համար օրհնություններ ստանալու անհրաժեշտությանը: Հոգևոր եսասիրությունն առատորեն տարածվում է և մտնում բազմաթիվ աղոթքաժողովներ: **Աստված է, որ կարող է փրկել մեզ աղոթքն անտեսելու մեղքից:** Մեր հավատքը և սրտերը պետք է հանձնվեն Հիսուսի խաչին բացարձակապես ապավինելու կյանքին, որպեսզի Աստծո հետ առավել սերտ հաղորդության և մտերմության կյանքը հասանելի դառնա: Այդ ժամանակ Աստծո սիրո և հաղորդակցության կյանքը աղոթքը կդարձնի մեր կյանքի բնական արտահայտությունը: Մենք կարիք ունենք տեսնելու, որ հոգևոր կյանքում և աշխատանքում ամեն բան կախված է աղոթքից, և որ Աստված Ինքն է նրանց օգնականը, ովքեր սպասում են Իրեն: Շնորհքի այս աշխատանքը մեր միակ հույսն է:

Սիրելի՛ Քրիստոսի աշակերտ, մենք հանդիմանության կարիք ունենք աղոթքն անտեսելու մեղքի համար, մենք կարիք ունենք խոստովանելու, որ անօգնական ենք մեր ջանքերով ինքներս մեզ հաղթելու, և կարիք ունենք տեսնելու և հավատալու, թե Քրիստոսն ինչ կարող է անել նրանց համար, ովքեր, հրաժարվելով իրենց ջանքերից, վստահում են Աստծուն:

Աղոթքն անտեսելու մեղքը

Անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր անհատ խոստովանի աղոթքն անտեսելու իր մեղքը: Խոստովանությունը խիստ անձնական պետք է լինի, հակառակ դեպքում նրա խղճմանանքը չի անի իր գործը, և փշրված սիրտը չի զգա իր թշվառությունը:

Որքան շատ մարդիկ կան, որ ընդամենը հինգ րոպե են հատկացնում աղոթքին: Շատերն ասում են, որ ժամանակ չունեն, և բացակայում է սրտի ցանկությունը աղոթքի համար. նրանք *չգիտեն, թե ինչպես* կես ժամ անցկացնեն Աստծո հետ: Այնպես չէ, որ

նրանք բացարձակապես չեն աղոթում, նրանք աղոթում են ամեն օր: Բայց չունեն ուրախություն աղոթքում որպես Աստծո հետ հաղորդության արտահայտություն: **Արդյո՞ք Աստված ամեն ինչ է մեզ համար:** Եթե մեր ընկերը գալիս է մեզ այցելության, մենք ունենք ժամանակ, մենք պատրաստ ենք զոհողության, որպեսզի *ժամանակ շահենք*: Ինչո՞ւ: Նրա հետ զրույցը և ընկերակցությունը վայելելու համար: Այո՛, մենք ունենք ժամանակ այն ամենի համար, ինչն իրականում հետաքրքրում է մեզ, բայց չունենք ժամանակ՝ Աստծո հետ ընկերակցելու և հաղորդություն ունենալու համար: Մենք ժամանակ ենք գտնում այն մարդու համար, որը կարող է օգտակար լինել մեզ, բայց անցնում են օրեր, ամիսներ, և չկա ժամանակ՝ մեկ ժամ Աստծո հետ անցկացնելու և Նրան վայելելու համար, որի ընթացքում հաղորդակից ենք դարձնում Նրան մեր կյանքին: Ո՛վ Աստված, ողորմած եղի՛ր մեր հանդեպ և ների՛ր աղոթքն անտեսելու մեր սոսկալի մեղքը: Ես պետք է փնտրեմ Սուրբ Հոգու հանդիմանությունը այս խոստովանության համար:

Աղոթքն անտեսելը ոչ լիարժեք հոգևոր կյանքի պատճառն է: Սա գլխավոր ապացույցն է այն բանի, որ մեր կյանքը դեռևս «մարմնի» իշխանության տակ է: Եկեղեցու ջերմեռանդ աշխատանքում, քարոզչության մեջ մեր նվիրվածության և մարդկանց հետ մեր խոսակցության մեջ մեզ պակասում է անդադար աղոթքը, որ բերում է խոստացված զորությունը վերևից: Չաղոթելու մեղքն է դառնում հզոր հոգևոր կյանքի բացակայության պատճառ: **Անփոխարինելի են** ոչ թե քարոզները, հովվական այցելությունները, եկեղեցու աշխատանքը, այլ **աղոթքում Աստծո հետ հաղորդակցությունը, մինչև որ զորություն հազնենք վերևից**: Աղոթքի կյանքն անփոխարինելի անհրաժեշտություն է, և սա այն համոզմունքն է, որին պետք է ձգտենք:

Աղոթք. «Աստված, օգնի՛ր մեզ տեսնելու և ճանաչելու աղոթքն անտեսելու մեղքը: Աստված, օգնի՛ր մեզ արմատախիլ անելու դա: Աստված, ազատի՛ր մեզ դրանից Քրիստոս Հիսուսի արյամբ և զորությամբ: Տե՛ր, թող աղոթքն անտեսելու բեռն այնքան ծանր լինի մեր սրտում, որ չհանգստանանք, մինչև որ այն չհեռացվի մեզնից Հիսուսի անունով և զորությամբ»: Աստված հնարավոր կդարձնի սա մեզ համար: Մենք խորաթափանց հայտնության և հանդիմանության կարիք ունենք այն մասին, թե որքան քիչ ժամանակ ենք անցկացնում Աստծո հետ: Սա ճշմարիտ հոգևոր կյանքի բացակայությունն է և մարմինը չուրանալը: Մենք պետք է փնտրենք այս հանդիմանությունը, այն ինքնաբերաբար չի գալիս:

Աղոթքն անտեսելու պատճառը: Ուրեմն ի՞նչն է աղոթքի բացակայության պատճառը: Մի՞թե անհավատությունն է: Անշուշտ,

բայց իրն է անհավատության պատճառը: Երբ աշակերտները հարցրին Տեր Հիսուսին՝ «Մենք ինչի՞նչ կարողացանք հանել նրան», Նա պատասխանեց. «Ձեր թերահավատության համար»: Այնուհետև շարունակեց. «Բայց այս ցեղը դուրս չի գա, եթե ոչ աղոթքով և ծոմով» (Մատթ. 17.19- 21): Ծոմապահությունը ներկայացնում է անձնուրաց կյանքը, այսինքն՝ աշխարհը թողնելը. աղոթքը ներկայացնում է երկնքից կառչելու կյանքը: Աղոթքն անտեսելու սկզբնաղբյուրը այն կյանքն է, որն ապրում ենք մարմնի և ոչթե Հոգու համաձայն: Մենք ցանկանում ենք աղոթել Հոգով և միաժամանակ վարվել մարմնով, իսկ սա անհնար է: Եկեք լիովին գիտակցենք, թե որն է այս չարիքի արմատը:

Սուրբ գիրքը սովորեցնում է, որ քրիստոնյաների համար հնարավոր է միայն երկու վիճակ: Մեկը՝ Հոգու, մյուսը՝ «մարմնի համաձայն վարվելն է»: Այս երկու ուժերը մահացու հակամարտության մեջ են: Թեև շատ քրիստոնյաներ վերստին ծնված են Հոգու միջոցով, ստացել են Աստծո կյանքը և հաճախում են եկեղեցի, նրանց սովորական առօրյա կյանքն ընթանում է ոչ թե Հոգու, այլ «մարմնի» համաձայն: Նրանք չեն հասկանում, որ երբ «մարմնին» թույլ է տրվում ներգործել իրենց կյանքի և Աստծո ծառայության վրա, շուտով դա հանգեցնում է բացահայտ մեղքի: «...Հոգով գնացեք և մարմնի ցանկությունը չեք կատարի... Եթե Հոգով ենք ապրում, Հոգով վարվենք» (Գաղ. 5,16, 25):

Քրիստոնյաների մեծամասնությունը շատ քիչ հասկացողություն ունի այս հարցի վերաբերյալ: Նրանք չունեն իրական գիտելիք իրենց մարմնավոր էության խոր մեղավորության և անաստվածության մասին, որին անգիտակցաբար անձնատուր են լինում. «...Աստված... մեղքին դատապարտեց այն մարմնում» (Հռոմ. 8.3) Քրիստոսի խաչին: «Բայց նրանք, որ Քրիստոսին են, իրենց մարմինը խաչ հանեցին կրքերով և ցանկություններով միասին» (Գաղ. 5.24): Մարմինը չի կարող բարելավվել կամ սրբացվել. «Որովհետև մարմնի խորհուրդը Աստծո դեմ թշնամություն է, որովհետև Աստծո օրենքին չի հնազանդվում և չի էլ կարող» (Հռոմ. 8.7): Չկա որևէ միջոց «մարմնի» հարցերը լուծելու՝ բացի նրանից, որ օգտագործեց Քրիստոսը՝ այն գամելով խաչին: «...մեր հին մարդը Նրա հետ խաչվեց... » (Հռոմ. 6.6), ուստի մենք նույնպես հավատքով խաչում ենք այն և ամեն օր վերաբերվում նրան որպես անիծված բանի, որն իր օրինական տեղը գտնում է խաչի վրա: Այնքան տխուր է, որ շատ քրիստոնյաներ հազվադեպ են անկեղծորեն մտածում կամ խոսում «մարմնի» խոր և անչափելի մեղավորության մասին: Նրանք չեն գնում Սուրբ Հոգու մոտ և չեն փնտրում Աստծո հանդի-

մանություններն ու հայտնությունները:

Մենք չափազանց քիչ պատկերացում ունենք այս հոգևոր կյանքի մասին կամ քիչ ենք հետամուտ դրան, մինչդեռ սա բառացիորեն այն է, ինչ Աստված խոստացել է և կիրականացնի նրանց մեջ, ովքեր անվերապահորեն հանձնվում են Իրեն, Իր խաչին այս նպատակի համար: Այստեղ տեսնում ենք չարիքի խոր արմատը՝ աղոթքից զուրկ կյանքի պատճառը: «Մարմինը» կարող է բավականաչափ լավ աղոթքներ անել՝ իրեն համարելով հոգևոր և բավարարելով խղճմտանքը: Բայց «մարմինը» չունի ցանություն կամ ուժ այն աղոթքի համար, որը հետամուտ է Աստծո խոր ճանաչողությանը, որն ուրախանում է Նրա հետ հաղորդակցվելով և շարունակում է կառչել Նրա զորությունից: Այսպիսով՝ «մարմինը» պետք է ուրանալ և խաչել: Սիրելի Քրիստոսի աշակերտ, մի՛ փորձեք աղոթքն անտեսելու բացատրությունը գտնել հանգամանքների մեջ: Փնտրեք այն այնտեղ, որտեղ Աստծո Խոսքն է հոչակում՝ մարմնի մեջ՝ սուրբ Աստծո հանդեպ սրտի թաքնված հակակրանքի մեջ: Մեր սրտերը չեն ցանկանում մոտենալ Աստծուն: Եկեղեցի գնալը Աստծո մոտ գնալ չէ: Միայն մեր սրտերը կարող են մոտենալ Աստծուն:

Խաչի և աղոթքի մարտահրավերը և տեսիլքը

Խաչը, աղոթքը և մարմինը մահացու թշնամիներ են: Խաչի ցանկությունն է դատապարտել և մահվան մատնել մարմինը: Մարմնի ցանկությունն է մի կողմ նետել խաչը և աղոթքները և հաղթել խաչին: **Մենք պետք է ձգտենք հասկանալու և ընդունելու այն ճշմարտությունը, որ մեր ամբողջ էությունը դատապարտված է մահվան հենց Աստծո կողմից:** Մեր էությունը պետք է մահանա խաչի միջոցով, որպեսզի Քրիստոսի մեջ նոր կյանքը գա և իշխի մեր մեջ: Մենք պետք է պատրաստ լինենք ձեռք բերելու հասկացողություն մեր էության մեղանչած և չար վիճակի և Աստծո դեմ նրա թշնամության մասին, որպեսզի պատրաստ լինենք և անհանգստանանք դրանից ազատվելու համար: Որպեսզի «մեր հին մարդը խաչվի» Քրիստոսի հետ, հավատքով պետք է ընդունենք սա մեր սրտում և ամուր կառչենք սրանից: «Նրանք, որ Քրիստոսին են, իրենց մարմինը խաչ հանեցին»: Սիրելի Քրիստոսի աշակերտ, պատրաստ եղեք հոչակելու, որ ամեն օր ձեր մարմինը համարելու եք ձեր թշնամին, Աստծո թշնամին և ձեր փրկության թշնամին և վերաբերվելու եք նրան՝ որպես խաչին գամվածի:

Մարմնի կյանքը դրսևորվում է բազում ձևերով: Այն արտահայտվում է հոգու շտապողականությամբ կամ բարկությամբ, որ անսպասելիորեն բարձրանում է ձեր մեջ, սիրո բացակայությամբ,

որի համար հաճախ մեղադրում եք ինքներդ ձեզ, ուտելու և խմելու հաճույքի մեջ, որի համար ձեր խղճմտանքը երբեմն կշտամբում և հանդիմանում է ձեզ, ձեր կամքը և պատիվը փնտրելու մեջ, ձեր իմաստության և զորության նկատմամբ վստահության մեջ, աշխարհի հաճույքների մեջ, որոնց համար երբեմն ամաչում եք Աստծո առջև: Այս ամենը կյանք է «մարմնի համեմատ»: Մարմնավոր կյանքը չի կարող աղոթել հոգով և զորությամբ: Մարմնավոր կյանքը ցավալիորեն աղոթքի ամոթալի անտեսման պատճառն է: Ինչպես է սատանան խանգարում աղոթքին: Նա զայթակղում է մեզ, որ հետաձգենք կամ կրճատենք աղոթքը թափառող մտքերի և տարբեր շեղումների, ինչպես նաև անհավատության, անտարբերության և անհուսության միջոցով: Սպառազինության բոլոր մասերն անվանելուց հետո Պողոսն ավելացնում է. «...ամեն աղոթքով և աղաչանքով... Հոգով...» (Եփես. 6.18): Փրկության սաղավարտը, հավատքի վահանը և Հոգու սուրը, որ Աստծո Խոսքն է, առանց աղոթքի չունեն մեծ զորություն՝ ձեր մեջ ներգործելու համար: Ամեն բան կախված է աղոթքից: Աստված, սովորեցրու մեզ հավատալ այս ճշմարտությանը և կառչել դրանից:

Աղոթքը պարզապես Աստծուն մոտենալը չէ Նրանից ինչ-որ բան խնդրելու համար: *Այն ամենից վեր Աստծո հետք հաղորդակցությունն է և Նրա սրբության ու սիրո իշխանության ներքո լինելը, մինչև որ Նա տիրանա մեզ և մեր ամբողջ էությունը կնքի Քրիստոսի խոնարհությամբ:* Սա է ճշմարիտ երկրպագության գաղտնիքը: Մեր երկրպագությունն այլևս չի պարունակում սրտի խոնարհություն, մենք մտածում ենք, որ Հոգին անմիջապես կտա մեզ երկրպագություն, որովհետև մենք հավատացյալներ ենք աստվածային իրավունքներով և արտոնություններով: Մենք երկրպագում ենք մեր երկրպագությանը: Եթե խաչի տեսիլքը բացակայում է, աղոթքի մեր տեսիլքը թերի է:

ՄՏՈՐՈՒՄ Աստծո հետ

1. Ինչպես կարող ենք զորություն հագնել վերևից:
2. Բացատրենք աղոթքն անտեսելու պատճառը:
3. Ո՞րն է աղոթքն անտեսելու չարիքի արմատը:
4. Ձեր կարծիքով ո՞րն է աղոթքի՝ Աստծո տեսիլքը:
Բացատրենք:

Սիրելի՛ Քրիստոսի աշակերտ, տեղյակ եղեք, որ հնարավոր է՝

մենք սկսենք աղոթքն անտեսելու դեմ այս պայքարը՝ ապավինելով Քրիստոսին, այնուհետև ճանապարհներ փնտրենք Աստծուն օգնելու և մեր օգնությունը պահպանելու համար, այն դեպքում, երբ հենց դրա դեմ պետք է պայքարենք: Զգուշացե՛ք, սա կավարտվի հիասթափությամբ: Աղոթքն անտեսելու դեմ պայքարում ես չեմ կարող օգնել Աստծուն իմ ջանքերով: Ես կծախողվեմ: Ինքնապավինությունը և սեփական ջանքերը, նույնիսկ Աստծուն օգնելու մտադրությամբ, պատկանում են խաչին, որովհետև դրանք մարմնի կյանքի դրսևորումներ են: Զգուշացե՛ք, մարմինը հոգևոր հանդերձ է հագնում: Պետք է ուրանալ մարմինը ամեն ինչում: Աղոթքի անտեսումը չպետք է դիտվի իբրև միակ մեղք, որի դեմ պետք է պայքարենք: Ո՛չ, **աղոթքի բացակայությունը պետք է ընդունվի որպես մարմնի կյանքի մաս, որը սերտորեն կապված է մյուս մեղքերի հետ, որոնք նույն աղբյուրից են:** Մենք մոռանում ենք, որ ամբողջ մարմինն իր բոլոր կապվածություններով՝ դրսևորված մարմնում կամ շնչում, պետք է համարվի խաչված և մահին մատնված: Մենք ապրում ենք չհավատալով այս ճշմարտությանը, չտեսնելով մեր մարմնի չափազանց մեղավորությունը և բավարարված մեր ջանքերով, որոնք բխում են մեր մարմնավոր կյանքից: Մենք չպետք է բավարարվենք թույլ կյանքով, մենք պետք է առենք մարմնի կյանքը և դրա դրսևորումները: Ահա թե ինչու Քրիստոսը մահացավ. Նա մահացավ մեր մեղքերի համար, ինչպես նաև մարմնի զորությունը կործանելու համար: Եթե ես չտեսնեմ մարմնի կյանքի չարությունը, անկեղծորեն չեմ փնտրի առատության կյանքը: Մենք ամբողջովին պետք է հանձնվենք խաչին, որպեսզի **Հոգին կարողանա լիովին տիրանալ մեզ, որպեսզի լիակատար վերափոխում տեղի ունենա մեր հոգևոր էության մեջ:** Աղոթքի անտեսումը մարմնի կյանքն է, դա եսապաշտ կյանքն է: **Աղոթքի անտեսումը մարմնի հետ պետք է գամվի խաչին և պահվի այնտեղ հավատքով՝ Աստծո ամեն օր:** Իմ ջանքերը և պայքարը աղոթքի անտեսման դեմ անօգուտ են, անհրաժեշտ է լիակատար վերափոխում կամ կյանքի փոխարինում:

Հաստատական և հավատքով աղոթք նշանակում է հզոր և լիառատ կյանք: **Լիառատ կյանքը ոչ այլ ինչ է, քան լիակատար Հիսուս, որ լիակատար ձևով տիրում է մեր ամբողջ էությանը Սուրբ Հոգու զորությամբ:** Նա ոչ թե զուտ Մեկն է, ով մահացավ մեզ համար, որպեսզի քավի մեր մեղքերը, այլ Մեկը, ով Իր հետ հանեց մեզ խաչին, որպեսզի մահանանք Իր հետ, և ով հիմա մեր մեջ ներգործում է Իր խաչի և մահվան զորությունը: Դուք ունեք իսկական հաղորդակցություն Քրիստոսի հետ, երբ կարողանում եք ասել. «Ես խաչվել եմ Քրիստոսի հետ. Նա՛ խաչյալը, ապրում է իմ

մեջ»։ Նրա զգացմունքները, վերաբերմունքը, խոնարհությունը, հե-
զությունը և հնազանդությունը՝ նույնիսկ մինչև խաչի մահ, այն
ամենն են, ինչ Նա ակնարկեց, երբ Սուրբ Հոգու մասին ասաց. «...
Իմից կանոնի և կայսրսի ձեզ» (Հովհ. 16.15)։ Քրիստոսն ասաց սա
ոչ թե որպես հրահանգ, այլ որպես անկեղծ մասնակցություն այն
նույն կյանքին, որն Իր մեջ էր։ Ցանկանում եք, որ Սուրբ Հոգին լի-
վին տիրի ձեզ, **որպեսզի ձեր մեջ բնակեցնի Խաչյալ Քրիստո-
սին**։ Ուրեմն հասկացե՛ք, որ այս նպատակի համար Նա տրվեց, և
Նա անկասկած կիրազործի դա բոլոր նրանց մեջ, ովքեր ամեն օր
հանձնվում են Իրեն և Իր խաչին։ Մենք պետք է ապավինենք Աստ-
ծո այս խոստումին՝ ընդունելով, որ այն բավական չէ. «Եվ ինչ է Նրա
զորության գերազանց մեծությունը մեզանում, որ հավատացինք, Իր
կարող զորության հաջողության պես, որ Քրիստոսում գործադրեց՝
Նրան մեռելների միջից հարուցանելով...» (Եփես. 1.19, 20)։ Արագ
մի՛ կարդացեք այս խոսքերը։ Վերադարձե՛ք և մտորե՛ք դրանց
շուրջ, այստեղ մեծ դաս կա։ Որքան էլ անզոր և տկար զգաք, **Աստ-
ծո ամենակարողությունը գործում է ձեր մեջ, և եթե միայն հավա-
տաք, առօրյա կյանքում այն ձեզ բաժնեկից կդարձնի Իր Որդու
հարության զորությանը**։ Մի՛ ապրեք ձեր մարդկային երևակայությ-
յամբ, թե ինչ է հնարավոր։ Ապրե՛ք խոսքով, Տեր Հիսուսի սիրով և
անսահման հավատարմությամբ։ **Միշտ ապրե՛ք Հիսուսի սիրով**, մի՛
կենտրոնացե՛ք օրհնություններ ստանալու վրա։ **Կենտրոնացե՛ք Նրա
կյանքի վրա, որ տրվել է ձեր մեջ գործելու համար**։ Թեև հավատ-
քը դանդաղընթաց է, և շատերը սայթաքում են, միշտ հավատացե՛ք
և գոհացե՛ք Նրանից ոչ միայն օրհնությունների, այլև այն խոստում-
ների համար, որոնց վրա հավատքը կարող է հենվել։ Սա կտանի ձեզ
զորությունից զորություն, դուք կաճեք այն երանելի համոզվածությ-
յամբ, որ **Աստված Ինքը կկատարի Իր գործը ձեր մեջ, Քրիստոսի
կյանքը ձեր մեջ է՝ ապրելու համար, այն փոխարինում է մարմնի
կյանքին և դառնում ձեր լիարժեք կյանքը**։

Աղոթքի կյանք

Մեր կյանքը մեծ ազդեցություն ունի մեր աղոթքի վրա, ինչպես
որ մեր աղոթքն ազդեցություն ունի մեր կյանքի վրա։ Մարդու ամ-
բողջ կյանքը շարունակական աղոթք է՝ ուղղված կարիքների բա-
վարարմանը և մարդուն երջանկացնելուն։ Այս բնական աղոթքը
և ցանկությունը կարող են այնքան ուժեղ լինել քրիստոնյայի մեջ,
որ նրա շուրթերից դուրս եկող աղոթքի խոսքերը կարող են չլսվել։
Աստված երբեմն չի կարողանում լսել մեր շուրթերի աղոթքը,
որովհետև աշխարհի համար մեր սրտի ցանկությունները շատ
ավելի ուժգին և բարձր են աղաղակում Նրան։

Կյանքը մեծ ազդեցություն է թողնում աղոթքի վրա: Աշխարհիկ կյանքը՝ շահասեր կյանքը, անզոր է դարձնում աղոթքը, իսկ աղոթքի պատասխանը՝ անհնարին: Բայց աղոթքը նաև կարող է մեծ ազդեցություն թողնել կյանքի վրա: Եթե ես մնամ Քրիստոսի մեջ և ամբողջովին անձնատուր լինեմ Աստծուն աղոթքում, աղոթքը կարող է հաղթել մարմնի կյանքին և մեղքին: Քրիստոսի խաչի միջոցով մեր ամբողջ կյանքը կարող է դրվել աղոթքի վերահսկողության ներքո: Աղոթքը կարող է փոխել և նորոգել մեր ամբողջ կյանքը, որովհետև Քրիստոսի մեջ բնակվող մարդու աղոթքը կանչում է և ընդունում Տեր Հիսուսին և Սուրբ Հոգուն՝ կյանքը սրբելու և սրբացնելու համար:

Շատերը մտածում են, որ չնայած իրենց թերի հոգևոր կյանքին՝ պետք է ավելի շատ աղոթեն: Նրանք չեն հասկանում, որ աղոթքի կյանքը կարող է աճել միայն զորացած հոգևոր կյանքին համաձայն: Աղոթքը և կյանքը անքակտելիորեն կապված են: Ինչն է ավելի ուժեղ ազդեցություն ունենում ձեզ վրա՝ հինգ կամ տասը րոպե աղոթքը, թե՛ աշխարհի ցանկությունների մեջ անցկացրած ամբողջ օրը: Ինչ եք կարծում: Թող ձեզ չզարմացնի այն, որ ձեր աղոթքները չեն պատասխանվում: **Սա է պատճառը, որ ձեր կյանքը և ձեր աղոթքը հակասության մեջ են. ձեր սիրտն ավելի նվիրված է ապրելուն, քան աղոթքին: Սիրելի՛ Քրիստոսի աշակերտ, սովորե՛ք այս կարևոր դասը. ձեր աղոթքը պետք է ղեկավարի ձեր ամբողջ կյանքը, հետևաբար ավելի լիարժեքորեն մնացե՛ք Քրիստոսի մեջ:** Այն, ինչ ես խնդրում եմ Աստծուց աղոթքում, չի որոշվում տասը րոպեում: Ես պետք է սովորեմ ասել. «Ես աղոթել եմ ամբողջ սրտով»: *Այն, ինչ ցանկանում եմ Աստծուց, իրականում պետք է լցնի իմ սիրտը ամբողջ օրը.* այս դեպքում ճանապարհը բաց է որոշակի պատասխանի համար: Եկեք ուշադիր լինենք հաշվի առնելու ոչ միայն ժամանակը, որ անցկացնում ենք Աստծո հետ աղոթքում, այլև **խաչի զորությունը, որով մեր աղոթքը ներգործում է մեր ամբողջ կյանքի վրա:** Նկատի՛ առեք և ընդունե՛ք Պետրոսի տեսանկյունը: «*Իսկ մենք աղոթքին և խոսքի պաշտամունքին հետևենք*» (Գործք 6.4):

Պարտադիր է, որ մենք անմիջապես պատրաստ լինենք ընդունելու և հնազանդվելու այն ամենին, ինչը տեսնում ենք, որ համաձայն է Խոսքին կամ Աստծո կամքին: Որտեղ բացակայում է ընդունելու և հնազանդվելու այս վերաբերմունքը, գիտելիքը ծառայում է միայն նրան, որ սիրտը պակաս ընդունակ դառնա առավել լիարժեք կյանք ստանալու համար:

ՄՏՈՐՈՒՄ Աստծո հետ

1. «...*Իմից կառնի և կպատմի ձեզ*» (Հովհ. 16.15): Ինչին է վերաբերում այս խոսքը: Կարող եք կիրառել այն ձեր աղոթքի կյանքում: Բացատրե՛ք:
2. Ինչպե՞ս կարող է աղոթքի կյանքն աճել:
3. Ինչպե՞ս կարող է աղոթքի կյանքը ղեկավարել ձեր կյանքը: Ի՞նչ եք մտածում:

Մարտահրավերը

Սիրելի Հիսուս Քրիստոսի աշակերտ, Քրիստոսը՝ մեր Գլուխը, ամենացածր տեղն ընտրեց խաչի վրա և, դա անելով, մեզ՝ Իր անդամների համար առանձնացրեց ամենացածր տեղը: Աստծո փառքի լույսը (Եբր. 1.3)՝ Քրիստոսը, դարձավ մարդկանցից մերժված (Ես. 53.3): Այդ ժամանակվանից միակ իրավունքը, որ ունենք, վերջինը, ամենափոքրը և ամենացածրը լինելն է (Մատթ. 20.16): **Երբ պնդում ենք ավելին, դեռ ճիշտ չենք հասկացել խաչը: Մենք փնտրում ենք ավելի բարձր կյանք, լիառատ կյանք և կգտնենք այն, եթե առավել խորամուխ լինենք Հիսուսի՝ մեր Տիրոջ հետ խաչի հաղորդության մեջ:** Աստված Խաչյալ Քրիստոսին տվել է ամենաբարձր տեղը (Հայտն. 5): Արդյո՞ք մենք նույնը չպետք է անենք: Մենք անում ենք դա, երբ ժամ առ ժամ, վայրկյան առ վայրկյան գործում ենք իբրև մեկը, որը խաչված է Նրա հետ (Գաղ. 2.19, 20): Ահա թե ինչպես ենք պատվում Խաչյալ Տիրոջը:

Մենք փափագում ենք լիակատար հաղթանակ: Մենք գտնում ենք սա, երբ առավել լիարժեքորեն ենք մտնում Նրա խաչի հաղորդության մեջ: Աստծո Գառը ձեռք բերեց Իր մեծագույն հաղթանակը՝ ձեռքերն ու ոտքերը խաչին գամված: Մենք բնակվում ենք Ամենակարողի շուրի տակ միայն այնքան ժամանակ, քանի դեռ բնակվում ենք խաչի շուրի տակ: Միայն այնտեղ ենք մենք պատսպարված (Սաղմ. 91.1): Խաչը պետք է լինի մեր տունը: **Երբ հասկանանք Քրիստոսի խաչը, կհասկանանք մեր խաչը: Մենք պետք է տեսնենք խաչը, շոշափենք և վերցնենք այն: Խաչը դառնում է իրական և ներքին միայն այն ժամանակ, երբ վերցնում ենք այն:** Այդ ժամանակ է, որ խաչը գործում է մեր մեջ, և մենք վերապրում ենք Նրա գործությունը, որը դրսևորվում է մեր մեջ, և կրում ենք այն ուրախությամբ: Մտորե՛ք այս ճշմարտության շուրջ և փնտրե՛ք Աստծո ներկայությունը և խնդրե՛ք այս ճշմարտության հասկացողությունը Նրա անմիջական ներկայության մեջ:

Ո՛վ էր լինելու Հիսուսը առանց Իր խաչի: Նրա խոցված ոտքերը տրորել են թշնամու գլուխը, և Նրա խոցված ձեռքերը հիմնովին ջախջախել են նրան (Մատթ. 12.29): **Ո՛վ ենք մենք առանց խաչի:** Սիրելի՛ աշակերտ, անտարբեր մի՛ անցեք խաչի կողքով, ամուր բռնե՛ք այն: Մի՞թե մտածում ենք, որ կարող ենք քայլել մեկ այլ ճանապարհով, քան նրանով, որ Հիսուսը քայլեց: Շատերն առաջընթաց չունեն, որովհետև չեն վերցնում խաչը:

ՄՏՈՐՈՒՄ Աստծո հետ

1. Ինչպե՞ս է հոգևոր առատության կյանքը կապված խաչի հաղորդության հետ:
2. «Խաչը դառնում է իրական և ներքին միայն այն ժամանակ, երբ վերցնում ենք այն: Այդ ժամանակ է, որ խաչը գործում է մեր մեջ, և մենք վերապրում ենք Նրա զորությունը, որ դրսևորվում է մեր մեջ»: Մտորե՛ք Աստծո հետ այս ճշմարտության շուրջ: Փնտրե՛ք Աստծո ներկայությունը և մտորե՛ք կրկին ու տեսե՛ք, թե ինչպես կարող եք կիրառել այս ներքին խաչը ձեր աղոթքի կյանքում:

Այն, ինչ իրականում անհրաժեշտ է մեզ, ավելի շատ քարոզները չեն, ավելի շատ աստվածաշնչյան սերտողությունների մասնակցելը չէ, այցելությունները չեն, եկեղեցական աշխատանքը չէ, այլ **աղոթքում Աստծո հետ հաղորդակցությունն է, մինչև որ զորություն հագնենք վերևից**, որովհետև աղոթքի անտեսման դեմ մեր ջանքերը և պայքարը անօգուտ են: **Տե՛ր Հիսուսի հետ մեր փոխհարաբերությունը մի նոր բան պետք է լինի:** Ես պետք է հավատամ Նրա անսահման սիրուն, ես պետք է հավատամ Նրա աստվածային զորությանը, ես պետք է հավատամ Նրան: **Փափագում եք իմանալ, թե ինչպես կարող եք վերապրել ազատագրում չափազանց քիչ աղոթելու մեղքից:** Ահա գաղտնիքը: Հավատացե՛ք Աստծո Որդուն, տվե՛ք Նրան ժամանակ և **հաղորդություն ունեցե՛ք Նրա հետ ձեր սրտի ներքին սենյակում, որպեսզի Նա հայտնի Իրեն** Իր հավերժ մտերմությամբ՝ որպես հավիտենական և ամենակարող Աստված, հավիտենական ազապե սեր, որ հսկում է ձեզ: Մենք ունենք Աստծո կարիքն ավելի շատ, անմիջականորեն և անձնապես:

Գլուխ 25. Աղոթքը՝ որպես կյանք

Այս գլուխն անդրադառնում է հետևյալ թեմաներին՝ աղոթքը և Քրիստոսի մեջ մնալը՝ Աստծո հրավերը, մենակ Աստծո հետ, համառ աղոթք և սպասում, նվիրում ծածուկ աղոթքում և ամենօրյա կյանքում, կյանք, որը կարող է աղոթել, Սուրբ Հոգին և աղոթքը և մտորումներ Աստծո հետ:

Աղոթքը և Քրիստոսի մեջ մնալը

Կա երկու մեծ ճշմարտությունն աղոթքի մասին: Առաջինն այն վստահությունն է, որ աղոթքը կպատասխանվի, եթե լինի Աստծո կամքի համաձայն. «...ինչ որ էլ կամենաք, կխնդրեք, և կլինի ձեզ»: Երկրորդը սա է. Քրիստոսը սովորեցրեց մեզ, որ պատասխանը կախված է որոշակի պայմաններից: Նա խոսեց հավատքի մասին, համառության մասին, Իր Անունով աղոթելու և Աստծո կամքով աղոթելու մասին: Բայց այս բոլոր պայմաններն ամփոփվեցին մեկ կենտրոնական պայմանում. «**Եթե** կենաք Ինձանում, և Իմ խոսքերը ձեզանում կենան, ինչ որ էլ կամենաք, կխնդրեք, և կլինի ձեզ» (Հովհ. 15.7): «Եթե կենաք Ինձանում» չի նշանակում, որ եթե քրիստոնյա լինեք: Վերոգրյալ խոսքից հստակ երևում է, որ **հավատքի ազդեցիկ աղոթք անելու զորությունը կախված է հոգևոր կյանքից**. «Եթե կենաք Ինձանում, և եթե Իմ խոսքերը ձեզանում կենան»: Նման խոստումները կարող են իրականություն դառնալ միայն այն մարդու համար, որը հանձնվել է ապրելու ամբողջովին Քրիստոսի մեջ և Քրիստոսի համար, ինչպես ճյուղը՝ որթում և որթի համար: Շատերը ուշադրություն չեն դարձնում աղոթքի այս պայմաններին, և նրանց աղոթքները ներգործություն չեն ունենում կյանքում:

Հոգու մեջ կյանքը Քրիստոսի մեջ մնալու կյանքն է: Այսպիսի կյանքը հասանելի է մեզ, որում աղոթքի զորությունը՝ թե՛ աղոթելու և թե՛ պատասխանը ստանալու, կարող է իրողություն դառնալ: Այս կյանքը կարելի է ապրել շատ ավելի մեծ չափով, քան մտածում ենք, թե հնարավոր է: Մենք շատ քիչ հասկացողություն և աղոտ պատկերացում ունենք «ուրիշների հետ աղոթելու» մասին, որը կարող է ներառել բարեխոսությունը, որը պարտադիր է Եկեղեցում և հոգևոր կյանքում: Ուրիշների համար աղոթելը և ուրիշների հետ աղոթելը անպայմանորեն նույնը չեն: Թեև բարեխոսություն նշանակում է աղոթել ուրիշների համար, բայց դրանք անպայմանորեն նույնը չեն: Բարեխոսությունը կոչում է, որ տրված է Քրիստոսի եկեղեցուն: **Բարեխոսության միջոցով է Աստված շարունակում Իր փրկարար աշխատանքը և ոչինչ չի կարող անել առանց դրա. միայն բարե-**

խոսության միջոցով կարող ենք կատարել մեր աշխատանքը, և ոչինչ չի գործում առանց դրա: Բարեխոսության մեջ մենք կանչված ենք ընդունելու Աստծո Հոգու լիությունը՝ ուրիշներին հոգևոր կյանք, ազատագրում և այլ օրհնություններ փոխանցելու զորությամբ: Հավատացյալն իր ներսում ունի Սուրբ Հոգուն: Բայց մենք պետք է ձգտենք ընդունելու այն աշխատանքը, որը «կյանքի» է կոչում այս փոխանցման նպատակը: Այս ձգտումը կախված է այն կյանքից, որն ապրում ենք Քրիստոսի մեջ: Եկեղեցու՝ իսկապես օրհնելու զորությունը հիմնված է **քահանայական բարեխոսության** վրա, որը կոչված է խնդրելու և ստանալու երկնային կյանք և օրհնություններ՝ մարդկանց փոխանցելու համար: Սա մեր վերին կոչումն է մեր համայնքում ծառայելու համար, բայց այս ծառայությունը պետք է բիսի մարդկանց հետ հաղորդակցության, միմյանց վստահելու կյանքից: Բարեխոսությունը կարող է ունենալ շատ թիրախներ՝ մեր համայնքը, մարդկանց այլ խմբեր, տարբեր տարիքային խմբեր կամ տարբեր ծառայություններ: Այս գլխում մեր թիրախը մեր համայնքն է:

Բարեխոսությունը աղոթքի միակ կոչը չէ մեր եկեղեցական համայնքում ծառայելու համար: Մեր համայնքի համար աղոթքը պետք է ներառի կարիքներ ունեցող հատուկ մարդկանց հետ աղոթելը, նախընտրելի է՝ նրանց ներկայությամբ: Մենք աղոթում ենք անհատների կամ առանձին ընտանիքների հետ, որոնք ունեն հատուկ կարիքներ, աղոթում ենք ոչ թե պարզապես նրանց կյանքի համար, այլ հաղորդակից լինելով նրանց կյանքին, աղոթում ենք վստահող սրտով՝ հաղորդակից լինելով միմյանց կյանքերին և սրտերին: Այս տեսանկյունը հաճախ մերժվում է շատ եկեղեցիներում մեծ մասամբ բամբասանքի և միմյանց չվստահելու պատճառով: Մենք պետք է հարձակվենք այս երկու դիվային ամրոցների վրա՝ որպես մեղքի, և հաղթենք Հոգու զորությամբ, և սա պետք է սկսել եկեղեցում: Մերժման մեկ այլ պատճառ է մեր մշակույթի ազդեցությունը մեզ վրա: Քանի որ մենք ապրում ենք անհատապաշտ հասարակությունում, հաղորդակցության այս հասկացողությունը հաճախ անտեսվում է, մենք չենք տեսնում, որ մարդկանց վստահելը, նրանց համար հոգ տանելը և նրանց ընդունելը ընդգրկված են Աստծո կանչի մեջ: Մենք բամբասանքը, մարդկանց չընդունելը կամ նրանց համար հոգ չտանելը դիտում ենք ոչ թե որպես մեղք, այլ որպես տկարություն, որն Աստված ներում է:

Մեր համայնքի համար բարեխոսությունը առանձին ծառայություն չէ՝ տրված որոշ մարդկանց, որոնք զգում են, որ կանչված են դրա համար, ինչպես տեսնում ենք շատ վայրերում: Բարեխոսությունը երբեք չպետք է առանձնացվի այն մարդկանց հետ հաղորդակցությունից,

որոնց համար աղոթում ենք: Աստվածաշնչյան հաղորդակցությունը չի կարելի առանձնացնել «սիրեք իրար, ինչպես ես ձեզ սիրեցի» պատվիրանից, և այս պատվիրանը պահանջում է համատեղ ապրել անձնատուր և անձնագրի կյանքով: Շատ վայրերում համայնքի համար բարեխոսությունը դարձել է հավաքույթ, որտեղ ցուցադրվում է ուժեղ հավատք, որտեղ գլխավորապես որոշ մարդիկ որոշակի ձևով երկար աղոթքներ են անում, բայց որտեղ չկա բարեխոսության մթնոլորտ, չկա աստվածաշնչյան հաղորդակցության կյանք: Բարեխոսությունն այն չէ, ինչ սովորում ենք՝ ուրիշներին ուսումնասիրելով, այն կյանք է, որ կառուցվում է Աստծո հետ անձնական հաղորդակցության և մարդկանց հետ ազապե սիրով ապրելու միջոցով: Ինչպես հաղորդակցությունը, այնպես էլ բարեխոսությունը պետք է ձևավորվի եկեղեցու կյանքում: Բարեխոսությունը պարզապես աղոթքի հավաքույթ չէ, այն եկեղեցում մարդկանց սրտերի հետ հաղորդակցության կյանք է: Դա եկեղեցական համայնքում մարդկանց հետ սիրով և հոգատարությամբ, անձնագրիությամբ ապրելու կյանք է, որը կառուցում ենք այն մարդկանց հետ, որոնց բաժնեկից ենք դարձնում մեր կյանքին: Թե՛ մեր համայնքի համար բարեխոսելը, թե՛ նրան ծառայելը պետք է բխեն Հիսուսի ազապե սիրուց, որը դրվեց մեր մեջ հենց այս նպատակի համար: Ուրիշներին սրտանց ծառայելով է, որ ինքներս ազատություն ենք վերապրում: «*Եթե կենաք Ինձանում, և եթե Իմ խոսքերը ձեզանում կենան...*»:

«*...ինչ որ էլ կամենաք, կխնդրեք, և կլինի ձեզ*», «*Ամեն ինչ, որ աղոթք անելով խնդրեք, հավատարացեք, թե կանոնեք...*»: աղոթքի այս մեծ խոստումները **եկեղեցուն տրված զորության** մի մասն են **նրա աշխատանքի, Քրիստոսի մեջ մնալու նրա կյանքի, խոնարհությամբ և սիրով ծառայելու հաղորդակցության համար**: Քրիստոսի մեջ մնալու և այս յուրահատուկ կյանքով ապրելու և ուրիշներին ծառայելու համար այս խոստումները պետք է ընդունվեն **բառացիորեն և որպես իրապես ճշմարիտ**: «*Եթե կենաք Ինձանում, և Իմ խոսքերը ձեզանում կենան...*», «*Այն օրն Իմ անունով կխնդրեք...*»: **աղոթքի այս կարևոր պայմանները համընդհանուր են և անփոփոխ: կյանքը, որ մնում է Քրիստոսի մեջ և լցված է Հոգով**, կյանք է՝ **լիովին հանձնված** խաչին, կյանք, որ տրված է ազապե սիրո հաղորդությամբ մարդկանց ծառայելու համար, կյանք, որ դարձել է ազատ և տրվել է որպես ճյուղ՝ որթի աշխատանքի համար, **և ի զորու է պահանջելու այս խոստումները և անելու ազդեցիկ աղոթք, որը շատ բան կարող է անել**: Տե՛ր, սովորեցրո՛ւ մեզ Քո ճանապարհները, սովորեցրո՛ւ մեզ աղոթել: Այլ երկրների, աշխարհում տիրող իրավիճակների և հանգամանքների համար բարեխոսելը նույնը չէ, ինչ մեր հա-

մայնքի, մեր ժողովրդի համար աղոթելը: Երկուսն էլ էական են բարեխոսողի համար: Բարեխոսությունը առանց Աստծո հետ առանձին կանոնավոր ժամանակ անցկացնելու մեր ժամանակների մեծագույն խաբեությունն է:

Մտորումներ Աստծո հետ

Ինչ է քահանայական բարեխոսությունը: Համաձայն եք վերոնշյալ բացատրությանը:

Ինչպե՞ս է Եկեղեցու՝ իրապես օրհնելու զորությունը հիմնված քահանայական բարեխոսության վրա:

Ինչպե՞ս է բարեխոսությունը կապված հոգևոր հաղորդակցության հետ:

Աստծո հրավերը

«Հիմա եկեք ու վիճաբանենք (անզերենում՝ կշռադատենք)...» (Ես. 1.18):

Սա այն հրավերն է, որ տիեզերքի Արարիչը՝ ձեր Փրկիչը, ուղարկում է ձեզ: Ականջ դնում եք Նրա կանչին: Երբ Նա, ով ստեղծեց աշխարհները, ով կերակրում է ճնճղուկներին, ով լրացնում է մարդու բոլոր կարիքները, ով այնպես արեց, որ «քանի դեռ մենք մեղավոր էինք, Քրիստոսը մահացավ մեր փոխարեն», կանչում է ձեզ՝ ունենալու անձնական ժամանակ Իր հետ. արդյո՞ք ընդունում եք Նրա հրավերը: Արդյո՞ք հաճախ ձեր գործողություններով ասում եք. «Տեր, ես չափազանց զբաղված եմ, ժամանակ չունեմ այսօր Քեզ հետ խոսելու»: Քանիսն են մտածում, որ իրենց օրվա ծրագիրը միանշանակ պետք է ստանան Աստծուց: Ահա Քրիստոսի խորհուրդը մեզ. «Բայց դու երբ որ աղոթք անես, մտի՛ր քո սենյակը և դուռդ փակած աղոթք արա դեպի քո Հայրը, որ ծածուկում է, և քո Հայրը, որ ծածուկ տեղը տեսնում է, հայտնապես կհատուցի քեզ» (Մատթ. 6.6): Աստված դեռևս ասում է Իր աշակերտներին. «Եկեք կշռադատենք միասին»:

Աստված կանչում է ձեզ և հրավիրում Իր հետ անձնական, առանձին ժամանակ անցկացնելու: Մեր կյանքը ցույց է տալիս, որ մենք շեշտադրում ենք ծառայությունը, ոչ թե Աստծո հետ առանձին ժամանակը: Մենք կրկնում ենք Մեծ հանձնարարականը՝ «Գնացեք ամբողջ աշխարհը»: Մենք հիշում ենք, թե ինչպես Հիսուսն «ապրեց ուրիշներին օրհնելու համար», և Նա ասաց. «...Ես ձեր մեջ ծառայողի պես եմ»: Մենք գիտակցում ենք, որ պետք է ընդօրինակենք Նրա կյանքի այս կողմը և հնազանդվենք Նրա մեծ պատվի-

րանին՝ ծառայելու մեր մերձավորին, որտեղ էլ լինենք: Մենք միմյանց սովորեցնում ենք, թե ինչպես ապրենք Աստծո համար, հատկապես Նրան ուղղված մեր ծառայության միջոցով: Եվ մենք առաջ ենք շարժվում և լսում, թե ինչպես է մեր սիրտը շնչում. «Չկա հոգևոր կյանք առանց ծառայության»: Ուստի մենք ճիշտ ենք համարում, որ մշտապես պետք է շեշտադրենք ծառայությունը: Դա սնում է մեր հոգևոր ինքնագնահատականը:

Սակայն մենք չպետք է մոռանանք, որ Հիսուսը հաճախ մենակություն էր փնտրում: Նա հաճախ առանձնանում էր սարերում՝ աղոթելու և մտորելու համար: Մենակության այս ժամերն անհրաժեշտ էին Հիսուսին աղոթելու համար, բայց այս ճշմարտությունը մենք չենք տեսնում: Մենք պետք է տեսնենք, որ դրանք կարևոր ժամեր էին Նրա կյանքում, որ դրանք այն ժամերն էին, որ Նրա գործն աստվածային էին դարձնում: Ծառայության համար մեր ուժը գալիս է նույն աղբյուրից, մենք պետք է ստանանք դա նույն ձևով և պետք է փնտրենք հանդիմանություն Հոգուց: Շատերը չգիտեն, որ Աստծո հանդիմանությունները պետք է փնտրել, դրանք չեն տրվում ինքնաբերաբար: Մինչև չունենանք հանգիստ ժամանակ, ժամանակ՝ հանդարտվելու Աստծո առջև և սպասելու Նրա ներկայությանը, Աստված չի կարող խոսել մեզ հետ: Աստված կարող է խոսել մեզ հետ, և Նա կարող է նոր զորությունով լցնել մեր կյանքը, եթե թույլ տանք Նրան: Եթե ոչ, մեր աշխատանքը շուտով կդառնա անզոր՝ բարիք գործելու համար՝ անկախ նրանից, թե որքան զբաղված կարող ենք լինել Աստծուն ծառայելով: Մեր բարի գործը ցույց կտա մարդկային, ոչ թե երկնային արդյունքներ: Երբ մենակ ենք լինում «ներքին սենկյակում և փակում ենք դուռը», **մենակ ենք Աստծո հետ հաղորդության սենյակում** և կարող ենք լսել Աստծո ձայնը: Աստված կարող է հայտնել մեզ Իր ներկայությունը և միտքը այնպես, ինչպես ուրիշ ոչ մի տեղ: Աստծո հետ մենակ լինելու այս ժամանակը **բացարձակ անհրաժեշտություն** է հոգևոր կյանքի համար:

Աստված չի սահմանափակում մեր ընկերակցությունն Իր հետ: Իր հետ լինելու Նրա հրավերը դեռ հնչում է: Մենք պետք է որոշենք, թե որքան ժամանակ ենք անցկացնելու Աստծո հետ, ինչպես նաև որոշենք այն փոխհարաբերությունը, որ կբերի օրհնություն այս ընկերակցության մեջ: Այս որոշումը մեր պատասխանատվությունն է: Փոխհարաբերությունը որոշում է արդյունքները: **Աստված կարող է թափանցել մեր մեջ ծառայության համար անհրաժեշտ աստվածային զորությամբ, Իր սիրով և Իր խնարհությամբ միայն այն ժամանակ, երբ Նրան ներկայացնենք Իր խաչին հանձնված և լիովին անձնատուր եղած կյանք**

և ամեն օր խաչված ապրելու կամք: Մեր Փրկչի պատվերն է յուրաքանչյուրիս. «Բայց դու երբ որ աղոթք անես, մտի՛ր քո սենյակը և դուռդ փակած աղոթք արա դեպի քո Հայրը, որ ծածուկում է, և քո Հայրը, որ ծածուկ տեղը տեսնում է, հայտնապես կհատուցի քեզ» (Մատթ. 6.6): Քրիստոսը շարունակում է հրավիրել յուրաքանչյուրիս. «Եկե՛ք Ինձ մոտ և մնացե՛ք Իմ մեջ»: Չկա աղոթքի կյանք առանց Քրիստոսի մեջ մնալու, առանց Նրա խաչի վրա մնալու: Աստծո ձայնը շարունակում է հնչել նրանց համար, ովքեր կլսեն. «Եկե՛ք կշռադատենք միասին: Ինչո՞ւ Ինձ հետ առանձին ժամանակ չեք անցկացնում»:

Սիրելի՛ Քրիստոսի աշակերտ, հանդիպե՛ք Տիրոջը ձեր ծածուկ աղոթքի սենյակում: Ներկայացրե՛ք Նրան ձեր կյանքը, բերե՛ք այն Նրա առջև: Մի՛ փորձեք որևէ մաս թաքցնել Նրա ամենատես աչքից: Փակե՛ք ձեր սրտի դուռը ամեն խանգարող ազդեցության համար և համառորեն մենակ մնացե՛ք Նրա հետ: Սպասե՛ք Նրան, մինչև տեսնե՛ք Նրան և կարողանաք առաջ ընթանալ կյանքի բախումների միջով՝ Նրա արդարությամբ և Նրա զորությամբ զինված:

Ծածուկ աղոթքը և անհաջողությունը հոգևոր կյանքում չեն կարող միասին գոյատևել: Սրանք իրար թշնամի են: Երբ մարդը շատ ժամանակ է անցկացնում Աստծո հետ իր աղոթքի սենյակում և ամեն օր մնում է Քրիստոսի մեջ, մեղքը դառնում է չափազանց մեղավոր նրա համար, և նրա մեջ ձևավորվում է մեծ ցանկություն՝ հաղթահարելու այն: Գայթակղությունները կորցնում են իրենց ուժը: Նրա համար **ապրել նշանակում է ազատվել մեղքից:** Մեղքը ճանաչելը, խոստովանությունը և ապաշխարությունը դառնում են իրական նրա կյանքում: Աստծո հետ կապ պահպանելը և Նրա հետ հաղորդություն ունենալը նրա հոգևոր կյանքի գաղտնիքն են, որ կարևոր նշանակություն ունեն, և աղոթքը այն անտեսանելի լարն է, որ ձգվում է Աստծո սրտից դեպի իր սիրտը: Ծածուկ աղոթքը հոգևոր կյանքի շնչառությունն է, Աստված մոռացվում է նրանց կյանքից, ովքեր չեն աղոթում: Իմացե՛ք, որ ծածուկ աղոթքով սկսվում է Աստվածաշնչի անձնական սերտոողությունը: Աղոթքը կյանքի շնչառությունն է, և Աստվածաշնչի անձնական սերտոողությունը դրա կերակուրն է: Աստվածաշնչի անձնական սերտոողությունը և Աստվածաշնչի ընդհանուր սերտոողությունը նույնը չեն: Նույնիսկ Աստվածաշնչի սերտոողության մեջ Աստված փնտրում է ձեր անձնական ներկայությունն Իր հետ: Աստված միշտ փնտրում է սրտից սիրտ հաղորդություն մեզ հետ մեր ծածուկ աղոթքի սենյակում:

Մտորում Աստծո հետ

Հիսուսը շատ ժամեր էր առանձին անցկացնում Աստծո հետ: Ո՞րն էր սրա կարևորությունը Հիսուսի երկրային կյանքում:

Ինչպե՞ս է ծածուկ աղոթքը դառնում հոգևոր կյանքի շնչառություն:

Մենակ Աստծո հետ

«Բայց դու, երբ որ աղոթք անես, մտի՛ր քո սենյակը և դուռդ փակած աղոթք արա դեպի քո Հայրը, որ ծածուկում է, և քո Հայրը, որ ծածուկ տեղը տեսնում է, հայտնապես կհատուցի քեզ» (Մատթ. 6.6):

Բարեխոսությունը պարզապես Աստծո կամքի համաձայն աղոթելը, այնուհետև հավատքով համառելը չէ: Հավատքը կծախողվի, եթե այն կյանքը, որը կարողանում է աղոթել, հոգևորապես շատ թույլ է: Առաջին բանը, որ Տերը սովորեցնում է Իր աշակերտներին, այն է, որ նրանք պետք է ունենան ծածուկ վայր աղոթքի համար. յուրաքանչյուրը պետք է ունենա առանձնացված վայր, որտեղ կարող է մենակ լինել իր Աստծո հետ: Ծածուկ վայրը կարևոր է. աշակերտը հանգիստ մտնում է Իր Տիրոջ ներկայության մեջ, որպեսզի մենակ լինի Նրա հետ՝ պատրաստ երկրպագելու Հորը: Այնտեղ Հիսուսը գալիս է, որ սովորեցնի մեզ աղոթել, աղոթել առանձին և աղոթել ուրիշների հետ (ոչ թե պարզապես ուրիշների համար): Երեք անգամ Հիսուսն օգտագործում է «Հայր» բառը. «Աղոթի՛ր քո Հորը», «Քո Հայրը կհատուցի քեզ», «Ձեր Հայրը գիտի, թե ինչ բաներ պետք են ձեզ»: **Առաջին բանը աղոթքի սենյակում սա է. ես պետք է հանդիպեմ իմ Հորը:** Այն լույսը, որ փայլում է աղոթքի սենյակում, պետք է լինի Հոր երեսի լույսը: Այն մթնոլորտը, որում ես պետք է շնչեմ և աղոթեմ, Հայր Աստծո սերն է, Աստծո անսահման հայրությունը: Այս կերպով ամեն միտք կամ խնդրանք, որ արտաբերում ենք, կլինի պարզ, մանկական վստահություն Հոր հանդեպ: Այսպես է մեր Տերը սովորեցնում մեզ աղոթել. Նա բերում է մեզ Հոր կենդանի ներկայության մեջ: Այն աղոթքը, որ անում ենք այնտեղ, պետք է շատ ազդեցիկ լինի: Եկեք այնտեղ լսենք, լսենք ուշադիր, թե Տերն ինչ ունի մեզ ասելու: Մենք կարիք չունենք գնալու մի աղոթքաժողովից մյուսը, մենք կարիք ունենք մտնելու աղոթքի ներքին սենյակ՝ Հոր հետ հանդիպելու համար: Ոչինչ չի փոխարինում Նրա անձնական ներկայությանը: _

«Աղոթք արա դեպի քո Հայրը, որ ծածուկում է»: Աստված

թաքցնում է Իրեն մարմնավոր աչքից: Քանի դեռ Աստծուն երկրպագելիս հիմնականում զբաղված ենք մեր մտքերով, գործերով և ծառայությամբ, մենք չենք հանդիպի Նրան, ով անտեսանելի է: Բայց Աստված հայտնում է Իրեն այն մարդուն, որը հեռու է պահում իրեն այն ամենից, ինչն աշխարհից է և մարդուց, և պատրաստվում է սպասելու միայն Աստծուն: Երբ հավատացյալը թողնի աշխարհը և աշխարհի կյանքը, հրաժարվի դրանցից և դուռը փակի դրանց առջև և հանձնվի Քրիստոսի առաջնորդությանը դեպի Աստծո ծածուկ ներկայություն, Հոր սիրո լույսը կծագի նրա վրա: Մենք պետք է մահանանք եսապաշտ կյանքին և աշխարհին, Քրիստոսը մեզ ցույց է տալիս ճանապարհը: Եթե այս մահը համարում եք ոչ պարտադիր, դուք ապրում եք՝ հպատակվելով ձեր մարմնին: Ներքին սենյակում է, որ մենք մենակ ենք Հոր հետ, որտեղ սովորում ենք ճիշտ աղոթել: Հայրը ծածուկում է. Հիսուսը սովորեցնում է մեզ, թե որտեղ է Հայրը սպասում մեզ, որտեղ կարելի է գտնել Նրան:

Սիրելի՛ Քրիստոսի աշակերտ, Հիսուսն ասում է, որ երբ պատրաստվում եք առանձին աղոթք անելու, ձեր առաջին միտքը պետք է լինի՝ Հայրը ծածուկում է, **Հայրը սպասում է ինձ այնտեղ:** Թեկուզ ձեր սիրտը սառը լինի և աղոթքից զուրկ, մտեք սիրող Հոր ներկայության մեջ: Ինչպես հայրը գթած է իր զավակների նկատմամբ, այնպես էլ Տերը գթած է ձեր նկատմամբ: Մի՛ մտածեք, թե որքան քիչ բան ունեք Աստծուն բերելու, մտածեք, թե որքան շատ է Նա ցանկանում տալ ձեզ: Պարզապես ներկայացեք Նրա առջև և նայեք Նրա երեսին, մտածեք Նրա սիրո՝ Նրա հիասքանչ, քնքուշ, սրտացավ սիրո մասին: Պարզապես պատմեք Նրան, թե որքան մեղսալի, սառը և խավար է ամենը. Հոր սիրող սիրտը ձեր սրտին կտա լույս և ջերմություն:

«Եվ քո Հայրը, որ ծածուկ տեղը տեսնում է, հայտնապես կհայտնի քեզ»: Այստեղ Հիսուսը մեզ հավաստիացնում է, որ ծածուկ աղոթքը չի կարող անպտուղ լինել. դրա օրհնությունը կհայտնվի մեր կյանքում: Ծածուկում և Աստծո հետ մենակ մնալով՝ մենք Աստծուն պետք է վստահենք մեր կյանքը մարդկանց առջև. Նա հայտնապես վարձահատույց կլինի մեզ: Մենք պետք է ապրենք՝ մնալով Քրիստոսի մեջ, ապրենք մեր ամենօրյա կյանքը մարդկանց հետ՝ վստահելով Աստծուն ամբողջ օրը և ամեն ինչում: Աստված կհետևի, որ աղոթքի պատասխանը դրսևորվի մեզ ուղղված Իր օրհնության մեջ: Մեր Տերը սովորեցնում է, որ ինչպես ծածուկում հանդիպում ենք Աստծո անսահման Հայրությանը և հավատարմությանը, այնպես էլ պետք է դրսևորենք հավատքի մանկական պարզություն, վստահություն, որ մեր աղոթքն իսկապես օրհնություն է բե-

րում: «Աստծուն մոտեցողը պետք է հավատա, որ *Նա վարձահատույց է լինում* Իրեն խնդրողներին»: Աղոթքի սենյակի օրհնությունը կախված չէ ուժգին կամ ջերմ զգացողությունից, որով աղոթում եմ, այլ Հոր սիրույց և զորությունից, որին վստահում եմ իմ կարիքները իմ սրտի ծածուկ սենյակում. ես վստահում եմ իմ կյանքը խաչին: Մեր Տերը միայն մեկ ցանկություն ունի. հիշեք, ձեր Հայրը ծածուկում է և տեսնում ու լսում է ծածուկում: Գնացեք ու մնացեք այնտեղ ձեր սրտով և դուրս եկեք այնտեղից վստահությամբ, որ Նա վարձահատույց կլինի ձեզ և կարողություն կտա կրելու անձնուրացման Իր խաչը: Մի՛ վստահեք ինքներդ ձեզ, մի՛ վստահեք ձեր աղոթքների: Վստահեք Նրան, ապավինեք Նրան. Հորն ուղղված աղոթքը չի կարող զուր լինել: Նա հայտնապես վարձահատույց կլինի ձեզ:

Մտորումներ Աստծո հետ

Ինչո՞ւ է «ծածուկ վայրը» էական հոգևոր կյանքի համար:

Հաստատական աղոթք և սպասում

«Մի առակ էլ սասց նրանց՝ նրա վրա, թե պետք է ամեն ժամանակ աղոթք անել և չձանձրանալ: ...Եվ Տերն ասաց. «Լսե՛ք, թե անիրավ դատավորն ի՛նչ է ասում: Բայց Աստված մի՞թե Իր ընտրյալների համար իրավունք չի անի, որ ցերեկ և գիշեր աղաղակում են դեպի Նա, թեև նրանց վրա երկայնամիտ էլ լինի: Ասում եմ ձեզ, թե շուտով իրավունք կանի նրանց համար...» (Ղուկ. 18.1- 8):

Մեր Տերը, որ այնքան սիրառատ է և փափագում է օրհնել, կստիպի մեզ սպասել՝ երբեմն ամիսներ կամ տարիներ, մինչև պատասխանը կգա: Սա հեշտ չէ հասկանալ: Շատերը մտածում են, որ պետք է դադարենք աղոթելուց, որովհետև Աստված ունի գաղտնի պատճառ՝ մեր խնդրանքի պատասխանը հետ պահելու համար: Պարտադիր չէ, որ այդպես լինի: Անհրաժեշտ է համառորեն վստահել Աստծուն, և Աստծո շնորհքը կբերի պատասխանը:

Միայն հավատքով ենք հաղթահարում դժվարությունը: Երբ հավատքը հիմնված է (1) Աստծո Խոսքի վրա, (2) Հիսուսի անվան վրա և (3) հանձնված է Հոգու առաջնորդությանը՝ աղոթքում փնտրելու միայն Աստծո կամքը և պատիվը, կարիք չկա հիասթափվելու պատասխանի ուշանալուց: Հավատքով լի աղոթքի զորությունն անդիմադրելի է. **իրական հավատքը երբեք չի կարող հիասթափվել:** Աստված է, որ իրական հավատք է կերտում

անձնատուր սրտում, երբ այդ սիրտը սովորում է դատարկվել և դառնալ հոգևորապես ոչինչ (ոչ թե անարժեք): Հավատքը ճշմարտությունն ընդունելը կամ հաստատելը չէ, և շատերը սխալվում են այս հարցում: Երբ մեր աղոթքի պատասխանն անմիջապես չի գալիս և ուշանում է, դա հնարավորություն է վստահելու և սպասելու Նրան: Սա մի ժամանակ է, երբ հանգիստ համբերությունը և ուրախ վստահությունը միացնում ենք մեր համառ աղոթքին: Մենք պետք է հասկանանք այս երկու խոսքերը, որ Հիսուսն ուղղում է մեզ. **«Նա նրանց վրա երկայնամիտ է: Նա շուտով իրավունք կանի նրանց համար»:** Մեր Տերը ներկայացնում է մեր Հայր Աստծո բնավորությունը և վարքը նրանց հանդեպ, որոնց **Նա թույլ է տալիս ցերեկ ու գիշեր աղաղակել Իրեն:**

Հիսուսն ասում է, որ *շուտով* իրավունք կանի նրանց: Օրինությունն ամբողջությամբ պատրաստ է. Աստված ոչ միայն պատրաստ է, այլև շատ է ցանկանում տալ նրանց այն, ինչ խնդրում են: Աստծո հավիտենական սերը վառվում է բուռն ցանկությամբ՝ լիովին հայտնվելու Իր զավակներին և բավարարելու նրանց կարիքները: Աստված չի ուշացնի մեկ վայրկյան ավելի, քան անհրաժեշտ է. Նա Իր զորությամբ ամեն բան կանի պատասխանը շտապեցնելու և արագացնելու համար: Բայց եթե սա ճշմարիտ է, և Նրա զորությունն անսահման է, ինչո՞ւ է պատասխանը հաճախ այսքան ուշանում: Ինչո՞ւ Աստծո ընտրվածներն այսքան հաճախ պետք է աղաղակեն ցերեկ ու գիշեր չարչարանքի ու կոնֆլիկտների մեջ: «Նա երկայնամիտ է նրանց վրա»: «Ահա մշակը երկայնամիտ եղած սպասում է երկրի պատվական պտղին, մինչև որ առաջին և վերջին անձրևն առնի»: Մշակն իսկապես փափագում է իր բերքին, բայց գիտի, որ այն պետք է ունենա արևի և անձրևի իր լիարժեք ժամանակը, ուստի և երկար է համբերում: Երեխան հաճախ ցանկանում է քաղել չհասած պտուղը. մշակը գիտի սպասել մինչև հարմար ժամանակը: Մենք պետք է հաստատակամ լինենք Աստծո հետ: **Քրիստոսը մեր մեջ մեր հաստատակամությունն է:**

Միայն զարգացման և հասունության ճանապարհին հավատացյալը կարող է հասնել իր աստվածային նախասահմանությանը: Ժամանակները և ժամանակաշրջանները Հոր ձեռքերում են: Միայն Նա գիտի այն ժամանակը, երբ մարդը կամ Եկեղեցին հասունանում է մինչև հավատքի այդ լիությունը: Հասունությունը ճիշտ ժամանակն է, երբ մարդը կամ Եկեղեցին կարող է լիովին ընդունել և պահել օրհնությունը: Ոչ թե աղոթքի հավաքությունները, այլ աղոթքի կյանքն է առաջացնում հասունություն: Ինչպես հայ-

րը, որ փափագում է, որ իր միակ զավակը դպրոցից տուն վերադառնա, սակայն համբերությամբ սպասում է, մինչև դասերն ավարտվեն, այդպես էլ Աստված է վերաբերվում իր զավակներին. Նա երկայնամիտ է և շուտով պատասխանում է:

Մտորումներ Աստծո հետ

Այժմ, երբ մոտենում եք գրքի ավարտին, ինչ է նշանակում «Քրիստոսը մեր մեջ մեր հաստատակամությունն է»:

Նվիրում ծածուկ աղոթքում և ամենօրյա կյանքում

Նվիրման օրենքը կարելի է գտնել Ղևտացիների 27.28- ում. «Բայց որևիցե նվեր, որ մեկը Եհովային է նվիրել բոլոր ունեցածից՝ մարդկանցից և անասուններից և իր կալվածքի արտից, չծախվի և չփրկվի. ամեն նվեր ամենասուրբ է Եհովային»: Սա լուսաբանվում է Աքարի պատմության մեջ: «Եվ քաղաքը և բոլոր նրանում եղածը Տիրոջ համար նզովված լինի... Բայց դուք զգուշանաք նզովվածից. միգուցե որ նզովք բերեք նզովվածից առնելով և, Իսրայելի բանակը նզովքի մեջ գցելով, նրանց փորձանքի հանդիպեցնեք» (Հեսու 6.17, 18): Այս պատմության մեջ պատիժը ցույց է տալիս նվիրման իրական նշանակությունը Աստծո աչքում: «Իսրայելը մեղք գործեց, և զանց արին Իմ ուխտը, որ պատվիրեցի նրանց, որովհետև վեր են առել նզովվածից և գողացել են և սուտ են խոսել ու նաև իրենց կարասիներում են դրել: Եվ Իսրայելի որդիները չեն կարող իրենց թշնամիների առաջին կանգնել. նրանք իրենց թշնամիների առաջ մեջք կդարձնեն, որովհետև նզովք են եղել. այլևս ձեզ հետ չեմ լինի, եթե դուք նզովվածը ձեր միջից բնաջինջ չանեք» (Հեսու 7.11, 12): **Նվիրումը ամբողջ սրտով և անվերադարձ բացառիկ օգտագործման և բացառիկ տիրապետման համար Աստծուն տալն է այն, ինչը հնարավոր չէ այլևս հետ վերցնել:** Անձը կամ իրը «ամենասուրբ է Տիրոջ համար»: Նվիրաբերումը և սրբացումը ունեն Աստծո կողմից բացառիկ գործածության և բացառիկ տիրապետման նույն իմաստը: Ես պատկանում եմ ոչ թե ինձ, այլ Աստծուն՝ բացարձակ կախման մեջ լինելով Նրանից. սա է փրկության նշանակությունը:

Աղոթքում կամ առօրյայում Աստծո հետ առանձին ժամանակ անցկացնելիս հավատացյալը կարող է օգտվել աջակցության տարբեր միջոցներից, որոնց հիմնական նպատակը պետք է լինի հավատացյալի անձնական, հոգևոր ակտիվությունն արթնացնելը՝ մղելով նրան ուսումնասիրելու և մտորելու, թե, ըստ իրեն, որն է Աստծուն, Նրա կամքին և Նրա փառքին լիովին հանձնված

կյանքի նշանակությունը: Չափից շատ ուսումնասիրությունը և մտորումները իմաստ չունեն: Սուրբ Հոգին սպասում է, որ գանք իր մոտ հատկապես այս բացահայտման համար: Հոգին արթնացնում է հավատացյալին՝ ուսումնասիրելու և բացահայտելու, թե ինչն է նա պարտադիր և հասանելի համարում, բացահայտելու, թե ինչ է նա մտածում անցյալում իր ձախողումների կամ ձեռքբերումների և դրանց պատճառների մասին, բացահայտելու, թե որն է անձնուրացման այն չափը, որ նա անհրաժեշտ է համարում նվիրման իր որոնումներում հաջողության հասնելու համար: Անհրաժեշտ է առանձին ժամանակ անցկացնել Աստծո հետ. սա կոչ և հրավեր է մեզ հենց Աստծուց:

Որպես հավատացյալներ՝ մենք հուսահատորեն պետք է փնտրենք Սուրբ Հոգուն, որպեսզի սթափվենք Նրա հարցերից և պարզվենք, թե արդյոք իրականում հասկանում ենք մեր օգտագործած հոգևոր բառերը, և բացահայտենք, թե արդյոք հավատում ենք մեր դավանած ճշմարտություններին: Ինչ է նշանակում հոգևոր լինել: Այնքան շատ մասնակի իրողություններ կան մեր ժառանգած, ավանդական աստվածաշնչյան համոզմունքների մեջ, այնքան շատ անհամապատասխանություն կա Աստծո հետ մեր առանձին ժամանակները հավատարիմ պահպանելու և Աստծուն նվիրված կյանքի միջև: Անհամապատասխանությունները պետք է բացահայտվեն Հոգու ներկայությամբ և առաջնորդությամբ: Մեր հնազանդությունը Հոգու առաջնորդությամբ չափազանց ընտրողական է: Սուրբ Հոգու հարցերը կարթնացնեն մեզ տեսնելու այն, ինչ Նա է տեսնում: Մենք կարիք ունենք տեսնելու մեզ մեր տգիտության մեջ, որը թույլ է տալիս, որ երկրային ուժերն իշխեն մեզ, մենք կարիք ունենք բացահայտելու աստվածային ուժերը, որոնք քնած են մեր մեջ: Հոգևոր տգիտությունը չեզոք կամ անվսաս չէ: Մենք կարիք ունենք անսալու Հոգու ձայնին, որպեսզի բացահայտենք մեր տգիտությունը, որպեսզի իմանանք, թե արդյոք ունենք ճիշտ ապրելակերպ՝ հավատք, որ Քրիստոսը բնակվում է սրտում: Մեր անհավատությամբ և անզորությամբ մենք կարող ենք ապավինել Սուրբ Հոգուն և հույս ունենալ, որ Քրիստոսի կյանքը կլինի մեր կյանքը: Մենք պետք է ապրենք Աստծո համար նույն հոգով, որով աղոթում ենք Նրան: Մեր կյանքը պետք է լինի այնքան սուրբ, որքան մեր աղոթքն է:

Մեր աղոթքները պետք է ապացուցեն իրենց իրական լինելը այն պտղով, որ բերում են մեր կյանքի սրբության մեջ: Աղոթքում նվիրումը անշուշտ կվարձատրվի Աստծո շնորհքով՝ Նրա և Նրա ծառայությանը ճշմարտապես նվիրված կյանքով ապրելու զորությամբ:

«Աղոթե՛ք ձեր Հորը, որ ծածուկում է, և ձեր Հայրը հայտնապես կհատուցի ձեզ»: Թող Ինքը Քրիստոսը՝ մեր օրհնյալ Ուսուցիչը, ուղղորդի մեր հարցերը և որոնումները, ուղղորդի մեզ պարզելու, թե արդյոք մեր նվիրումն այն է, ինչ Նա խնդրում է՝ լիովին անձնատուր լինել Աստծուն ծածուկում ամեն օր և լիովին նվիրվել Նրա փառքին ամբողջ օրը. կյանք, որ պետք է ապրել խաչի վրա ամբողջ օրը:

Աստված ցանկանում է, որ ճանաչենք Իր կամքը և Իր ճանապարհները, և խոստացել է հայտնել մեզ դրանք Իր Հոգով: Բայց Նա խնդրում է, որ բացարձակապես մերժենք մեր ճանապարհները:

Մտորում Աստծո հետ

Բացատրե՛ք, թե ինչ է նշանակում աստվածաշնչյան նվիրում Աստծուն:

Դիտարկե՛լ եք, թե ձեզ համար իրականում ինչ է նշանակում «Աստծուն, Նրա կամքին և Նրա փառքին լիովին հանձնված կյանքը»: Հայտնե՛ք սա Աստծուն: Քննե՛լ եք ձեզ աղոթքում այս նպատակով:

Կյանք, որ կարող է աղոթել

«Եթե կենար Ինձանում, և Իմ խոսքերը ձեզանում կենան, ինչ որ էլ կամենաք, կխնդրեք, և կլինի ձեզ» (Հովհ. 15.7):

«...շատ զորավոր է արդարի աղոթքը ներգործելով» (Հակ. 5.16):

«Սիրելիներ, եթե մեր սրտերը չմեղադրեն մեզ, համարձակություն ունենք առ Աստված: Եվ ինչ որ խնդրենք, կառնենք Նրանից, որովհետև Նրա պատվիրանները պահում ենք, և Նրա առաջ հաճո եղածներն անում ենք» (Ա Հովհ. 3.21, 22):

Մեր զորությունն աղոթքում ակնհայտորեն կախված է Աստծուց, նաև մեր հոգևոր կյանքից: Շատերը հավատում են միայն առաջին մասին և երբեք այս հարցում հաշվի չեն առնում իրենց առօրյա կյանքը: Մեր հոգևոր կյանքը պետք է լինի ուժեղ, մնա խաչի վրա և մերժի մեղքը և եսապաշտ կյանքը, որպեսզի ունենա աստվածային զորություն աղոթքի և բարեխոսության համար: Շատ քրիստոնյաներ Տիրոջ առջև ժամանակ անցկացնելու և իրենց կյանքը քննելու փոխարեն շտապում են աղոթքաժողովների և այլ եկեղեցական միջոցառումների: Մեր կոչումը աղոթքաժողովների գնալը չէ, այլ **ապրելն է այն կյանքով, որը կարող է հաղթել Աստծո հետ**: Բարեխոսները գրավում են այլ բարեխոսների, և սա բերում է

միաբանություն և հոգևոր ուժ: Բայց առավել մեծ ուժ և զորություն գալիս է նրանց հոգևոր կյանքից՝ Խաչյալ Քրիստոսի մեջ բնակվելուց և մարդկանց հետ Աստծո անշահախնդիր, անվերապահ ազապե սիրով ապրելուց (տե՛ս 7- րդ և 9- րդ գլուխներ): Որտեղ մեր կյանքն ուղիղ է, մենք կիմանանք, թե ինչպես աղոթենք, որ հաճեցնենք Աստծուն, և աղոթքը կապահովի պատասխանը: Աղոթքի զորության վերաբերյալ այս ճշմարտությունն այսօր հազվադեպ է քարոզվում շատ եկեղեցիներում: Վերոնշյալ մեջբերումները մատնացույց են անում սա: Մեր Տերն ասում է. **«Եթե կենաք Ինձանում, և Իմ խոսքերը կենան ձեզանում»**, կխնդրեք, և կտրվի ձեզ: Ըստ Հակոբոսի՝ *արդար* մարդու աղոթքն է, որ շատ օգտակար է: Հովհաննեսն ասում է, որ մենք ստանում ենք այն, ինչ խնդրում ենք, *որովհետև* հնազանդվում ենք և հաճեցնում Աստծուն: Սիրելի Քրիստոսի աշակերտ, ուշադրություն դարձրեք, որ ճիշտ և համառորեն աղոթելու զորության բացակայությունը, Աստծո հետ աղոթքի զորության բացակայությունը մատնացույց են անում ինչոր բան, որը պակասում է հոգևոր կյանքում: **Երբ սովորենք ապրել անձնուրաց կյանքով, որը հաճեցնում է Աստծուն, Աստված կտա այն, ինչ խնդրում ենք:** Եկեք սովորենք մեր Տեր Հիսուսից, թե որթի առակում որն է առողջ, եռանդուն կյանքը, որ կարող է խնդրել և ստանալ այն, ինչ կամենում է: Լսե՛ք Նրա ձայնը. «Եթե կենաք Ինձանում, և Իմ խոսքերը ձեզանում կենան, ինչ որ էլ կամենաք, կխնդրեք, և կլինի ձեզ»: Եվ կրկին առակի վերջում. «Ոչ թե դուք Ինձ ընտրեցիք, այլ Ես ընտրեցի ձեզ, և ձեզ դրեցի, որ դուք գնաք և պտուղ բերեք, և ձեր պտուղը մնա, որպեսզի *ինչ որ Իմ Հորից խնդրեք* Իմ անունով, *դա ձեզ»:*

Հիմա, համաձայն առակի, հրն է այն կյանքը, որով մարդը պետք է ապրի, որպեսզի պտուղ բերի, այնուհետև խնդրի և ստանա այն, ինչ կամենում է: Ինչը հնարավորություն կտա մեզ աղոթելու այնպես, ինչպես հարկն է, և ստանալու այն, ինչ խնդրում ենք: Պատասխանը մեկ խոսքում է. **դա ճյուղի կյանքն է, որ տալիս է զորություն աղոթքի համար:** Ճյուղի կյանքը Որթից է: Մենք Քրիստոսի՝ Կենդանի Որթի ճյուղերն ենք: Մենք պարզապես պետք է ապրենք ճյուղերի պես և բնակվենք Քրիստոսի մեջ: Քրիստոսը շարունակում է ասել. «Առանց Ինձ ոչինչ չեք կարող անել»։ սա նշանակում է բացարձակապես կախված լինել Աստծուց և անձնատուր լինել Նրան՝ բացառելով «ես»- ը: Որթը կենդանի որթատունկ է, արդյո՞ք ճյուղը (ես) նույնպես կենդանի ճյուղ է: Ճյուղը գոյություն ունի մեկ բանի համար՝ նվիրվել Աստծո բացառիկ գործածությանը և տիրապետմանը: Սա է ճյուղի կյանքը: Այդ ժամանակ մենք կխնդրենք այն, ինչ կամենում ենք, և կտրվի մեզ:

Բոլորս գիտենք, թե ինչ է ճյուղը, և որն է նրա առանձնահատկությունը: Դա այն որթի աճն է, որ սահմանված է պտուղ բերելու համար: Այն ունի գոյության միայն մեկ պատճառ. այն գոյություն ունի որթի կամքով և ցանկությամբ, որպեսզի նրա միջոցով որթը հասունացնի և տա իր պատվական պտուղը: Ինչպես որթը միայն և ամբողջովին գոյություն ունի խաղողի համար բուսահյութ արտադրելու նպատակով, այնպես էլ ճյուղը չունի այլ նպատակ և խնդիր՝ բացի նրանից, որ ստանա այդ բուսահյութը և տա խաղող: Նրա միակ աշխատանքը որթին ծառայելն է, որպեսզի որթը կարողանա կատարել իր աշխատանքը:

Հավատացյալը՝ Քրիստոսի ճյուղը, բառացիորեն և բացառապես պետք է ապրի միայն նրա համար, որ Քրիստոսը կարողանա իր միջոցով պտուղ բերել առօրյա կյանքում: Հետևաբար ճշմարիտ քրիստոնյան՝ որպես ճյուղ, պետք է տարված լինի Աստծո փառքի համար պտուղ բերելու գործով և նվիրվի դրան՝ պտուղ բերելով մյուսների համար: Հենց սրա համար է այն նախատեսված: Այսպիսիսներին են տրված առակի՝ անսահման աղոթքի խոստումները: **Միայն Որթի համար բացառապես գոյություն ունեցող ճյուղի կյանքը ի գորու կլինի ճիշտ աղոթելու:** Երբ բնակվենք Նրա մեջ, և Նրա խոսքերը բնակվեն մեր մեջ, երբ մեր սրտում և կյանքում պահենք Նրա խոսքերը, հնազանդվենք դրանց և ապրենք դրանցով, կունենանք ճիշտ աղոթելու շնորհք և հավատք՝ ստանալու այն, ինչ կկամենանք, որպեսզի ծառայենք ուրիշներին Նրա սիրով և խնամարհությամբ:

Մեր Տիրոջ անսահմանափակ խոստումները, որոնք ամփոփվում են «ինչ որ էլ խնդրեք» խոսքերում (Հովհ. 14.13, 14, 15.7, 16, 16.23, 24), միասին չափազանց մեծ են թվում՝ բառացիորեն ընդունելու համար: Պատճառն այն է, որ մենք բաժանում ենք դրանք Քրիստոսին բացարձակ անձնատուր լինելու և ամեն օր Նրան անսահմանորեն նվիրվելու կյանքից, որին էլ դրանք տրված են: **Միայն այն մարդը, որը նպատակ ունի Նրա միջոցով պտուղ բերելու և ամեն վայրկյան ապրելու միայն Նրա համար, կստանա Աստվածային ազատություն՝ պահանջելու Քրիստոսի խոստումներն իրենց ամբողջ լիությամբ, և Աստվածային իմաստություն ու խոնարհություն՝ դրանք ճիշտ գործածելու համար:** Այսպիսի մարդը կապրի և կաղոթի և կպահանջի Հոր խոստումները միայն Աստծո փառքի համար և մարդկանց փրկության նպատակով, ինչպես որ Քրիստոսն արեց: Նա կօգտագործի իր համարձակությունն աղոթքում՝ միայն բարեխոսության մեջ զորության և մարդկանց օրհնելու համար: Ճյուղի կյանքի անսահմանափակ նվիրումը պտղաբերությանը և Որթի կյանքի գանձերի անսահման

նափակ հասանելիությունն անբաժանելի են: **Ամբողջովին Քրիստոսի մեջ հարատևող կյանքն է, որ կարող է ազդեցիկ աղոթք անել Քրիստոսի անունով:** Սիրելի՛ Քրիստոսի աշակերտ, դուք ընդունում եք, որ լիովին և բացարձակապես բնակվում եք Քրիստոսի մեջ: Դուք փնտրում եք Աստծո ներկայությունը, ձգտում եք առանձնանալու Նրա հետ, որպեսզի Նա քննի ձեր սիրտը ձեզ համար և առաջնորդի ձեզ ապրելու միայն Քրիստոսի մեջ ձեր կյանքի բոլոր բնագավառներում: Եթե սա ձեր ցանկությունն է և փափագը, դուք կսովորեք, թե ինչ է Աստծուն սպասելը, կսովորեք, թե ինչ են ողորմությունն ու շնորհքը:

Սա է այն կյանքը, որն աղոթում է: Սա է այն կյանքը, որն անկեղծ նվիրվածությամբ ամենը տալիս է Աստծո համար և Աստծուն և կարող է պահանջել ամենը Աստծուց: Աստված միայն սպասում է, որ սրտերը աշխարհից լիովին դառնան դեպի Իրեն և բաց լինեն ընդունելու Իր կյանքի պարգևները: Այս կյանքը հնարավոր է, եթե ամեն օր մարմինը պահվի խաչին: Այն մարդը, որը կորցնում է ամենը, կգտնի ամենը. նա համարձակվում է խնդրել և վերցնել: Այն ճյուղը, որ միայն և իսկապես ապրում է Քրիստոսի՝ Երկնային Որթի մեջ, որ Քրիստոսի պես լիովին տրված է մարդկանց փրկության գործում պտուղ բերելուն, և Նրա Խոսքերը վերցրել և պահում է իր կյանքում, կարող է և կհամարձակվի խնդրել այն, ինչ կամենում է, և կլինի Նրան: Բայց քաջացեք և անձնագրի եղեք: Հիշեք, որ քրիստոնեական կյանքի նույնիսկ ավելի ցածր փուլերում յուրաքանչյուր նոր քայլ դեպի կատարյալ ճյուղի կյանքը և յուրաքանչյուր նվիրում՝ ապրելու ուրիշների համար բարեխոսության կյանքով, վերևից կստանա համապատասխան ազատություն՝ մոտենալու Աստծուն ավելի մեծ համարձակությամբ և ակնկալելու ավելի մեծ պատասխաններ: **Որքան շատ ենք աղոթում և որքան ավելի ենք գիտակցում զորությամբ աղոթելու մեր անկարողությունը, այնքան ավելի պետք է քաջալերվենք, որպեսզի առաջ ընթանանք դեպի աղոթքում զորության գաղտնիքը՝ Քրիստոսի մեջ լիովին մնալու և բացառապես Նրա տրամադրության տակ լինելու կյանքը:**

Մենք ունենք Հորը՝ որպես Մշակի, որը հետևում է Որթի մեջ մեր բնակությանը, մեր աճին և պտղաբերությանը: Քրիստոսի հետ մեր միությունը պահպանելը թողնված չէ մեր հավատքին կամ մեր հավատարմությանը: Աստված Ինքը կհետևի, որ ճյուղը լինի այն, ինչ պետք է լինի, կարողանա բերել հենց այն պտուղը, որ սահմանված է բերելու: Մշակը մաքրում է պտղաբեր ճյուղը, որ այն կարողանա ավելի շատ պտուղ բերել: Նետվեք Աստծո ձեռքերի մեջ, որպեսզի Նա անի ձեր մեջ այն, ինչ անհնար է մարդուն: Հուսացեք

Աստվածային սրբացմանը, որպեսզի ձեզնից կտրվեն և հեռացվեն ինքնավստահությունը, սեփական ջանքերը և ինքնահաճեցումը, որոնք եղել են ձեր անհաջողության պատճառը:

Մտորում Աստծո հետ

Դիտարկեք այս պնդումը. «Որտեղ մեր կյանքը ուղիղ է, մենք կիմանանք, թե ինչպես աղոթենք, որ հաճեցնենք Աստծուն, և աղոթքը կապահովի պատասխանը»: Ձեր կարծիքով ինչ է սա նշանակում: Կարո՞ղ եք կիրառել սա ձեր կյանքում: Խնդրե՞ք, որ Աստված միանա ձեզ այս հարցերում:

Սուրբ Հոգին և աղոթքը

Սուրբ Հոգին տրված է, որ առաջնորդի մեզ գտնելու Քրիստոսի մեջ մեր կյանքը, այդ կյանքի բերկրանքը և ուրախությունը: Շատերը սահմանափակում են Հոգու աշխատանքը Նրա պարզևնեղի դրսևորմամբ: Հոգին հաճախ վշտանում է մեր պատճառով, որովհետև մենք հաճախ աղոթքը անտեսելով և չհասկանալով թույլ չենք տալիս, որ Նա իրականացնի Իր սիրո աշխատանքը: Դրա պատճառը նաև ցածր կենսունակությունն է և լիակատար անզորությունը, որ հաճախ առկա են մեր մեջ, որովհետև մենք պատրաստ չենք թույլ տալու, որ Սուրբ Հոգին առաջնորդի մեզ Աստծո ճանապարհների մեջ: Մենք այնքան բավարարված ենք՝ հավատալով, որ մեր ճանապարհները ներկայացնում են Նրա ճանապարհները:

Սուրբ Հոգին «*աղոթքի Հոգին*» է, «*շնորհքի հոգին*» է (Ձաք. 12.10): Աղոթքի վերաբերյալ Պողոսն ասում է. «*Դուք ... որդեգրության հոգին առաք, որով աղաղակում ենք՝ Աբբա՛, Հայր*» (Հռոմ. 8.15): «...*Աստված Իր Որդու Հոգին ուղարկեց ձեր սրտերի մեջ, որ աղաղակում է՝ Աբբա՛, Հայր*» (Գաղ. 4.6): Վերջերս մտորե՞լ եք այս խոսքերի շուրջ՝ «Աբբա՛, Հայր»: Այդ Անունով մեր Փրկիչը մատուցեց Իր մեծագույն աղոթքը, այդ Անունով Նա լիովին հանձնեց և զոհեց Իր կյանքը և սերը: *Սուրբ Հոգին տրված է որոշակի նպատակով*. մեր քրիստոնեական կյանքի հենց սկզբից այն *մեզ պետք է սովորեցնի* մանկական վստահությամբ արտաբերել այդ Անունը՝ մեր կյանքը լիովին հանձնելով և զոհելով Նրան: Հոգին իրագործում է այն, ինչ սովորեցնում է:

Մի՞թե սա չի սովորեցնում մեզ փնտրել աղոթքի անտեսման խոր արմատը մեր տգիտության և մեր աստվածային ուսուցչի նկատմամբ անհնազանդության մեջ: Հայրը նշանակել է Նրան, որ սովորեցնի մեզ աղոթել, և Նրա Հոգին աղոթում է մեր միջոցով. «*Այս-*

պես էլ Հոգին օգնում է մեր տրտմանը, որովհետև թե ինչ բանի համար պիտի աղոթք անենք, ինչպես արժան է, չգիտենք, բայց ինքը՝ Հոգին, անբարբառ հառաչանքով բարեխոս է լինում: Եվ սրտերը քննող գիտի, թե ինչ է Հոգու խորհուրդը, որովհետև Աստուծուն վայելած կերպով սուրբերի համար բարեխոսում է» (Հռոմ. 8.26, 27): Միթե սրանից պարզ չի դառնում որ հավատացյալը չգիտի, թե ինչպես աղոթի: Աստված տվել է մեզ Իր Սուրբ Հոգին, որ աղոթի մեզ համար, և Հոգու գործողությունն ավելի խորն է, քան մեր միտքը կամ զգացողությունը, սակայն այն նկատվում և պատասխանվում է Աստծո կողմից:

Հետևաբար մեր առաջին գործը պետք է լինի գալ Աստծո ներկայության մեջ ոչ թե մեր անտեղյակ աղոթքներով, ոչ թե բազում խոսքերով ու մտքերով, այլ **վստահությամբ, որ Սուրբ Հոգու աստվածային աշխատանքն իրականանում է մեր ներսում:** Այս վստահությունը կբերի սուրբ հարգանք և հանգստություն, նաև հնարավորություն կտա մեզ ապավինելու Հոգուն, որպեսզի մեր ցանկությունները և սրտի կարիքները դնենք Աստծո առջև: Սա կարևոր դաս է աղոթքի վերաբերյալ. հետևեք նախևառաջ, որ հանձնվեք Սուրբ Հոգու առաջնորդությանը և, լիովին կախված լինելով Նրանից, հատկացնեք Նրան առաջին տեղը: Միայն Հոգու միջոցով ձեր աղոթքը կունենա արժեք, որը չէք կարող պատկերացնել, և Նրա միջոցով նաև կսովորեք բարձրաձայնել ձեր ցանկությունները Քրիստոսի Աստուծուն: Աստծո ճշմարտությանը հավատալը բերում է դրա իրականությունը մեր սրտում:

Մտորումներ Աստծո հետ

Բացատրեք Աստծուն այս պնդման նշանակությունը. «Սուրբ Հոգին ցանկանում է լիովին տիրել իմ կյանքին»: Աղոթեք, որ Աստված օգնի ձեզ հասկանալու սրա նշանակությունը ձեր անձնական կյանքում:

Գլուխ 26. Քահանայական բարեխոսություն

Այս գլուխն անդրադառնում է հետևյալ թեմաներին՝ թագավորական քահանայություն, հասկացողություն քահանայության բարեխոսության մասին, աղոթել Հոգով, բարեխոսությունը թագավորական քահանայությունն է գործողության մեջ և քահանայական բարեխոսության արդյունավետությունը:

«...Նրան, որ մեզ սիրեց և մեր մեղքերից լվաց մեզ Իր արյունով և մեզ թագավորներ և քահանաներ արավ Աստծո և Իր Հոր համար, Նրան փառք և զորություն հավիտյանս հավիտենից. ամեն» (Հայտն. 1.5, 6):

«Դուք էլ ... շինվեք հոգևոր տաճար, սուրբ քահանայություն, որ հոգևոր պատարագներ մատուցեք Աստծուն ընդունելի՝ Հիսուս Քրիստոսի ձեռքով» (Ա Պետր. 2.5):

«Բայց դուք ընտիր ազգ եք, թագավորական քահանայություն, սուրբ ազգ, սեփական ժողովուրդ, որ քարոզեք Նրա առաքինությունները, որ ձեզ խավարից կանչեց Իր զարմանալի լույսի մեջ» (Ա Պետր. 2.9):

Թագավորական քահանայություն

Ինչպես տեսնում ենք վերոնշյալ խոսքերում, որպես Քրիստոսի աշխատանքի պտուղ, բոլոր փրկագնվածները քահանաներ են, Քրիստոսի՝ մեր Քահանայապետի հետ Նրա օծության բաժնեկիցներ Հոգով: Հիսուսի մարմնի յուրաքանչյուր անդամ ունի քահանայության իրավունք: Բայց ոչ բոլորն են կիրառում այն. շատերը դեռևս լիովին անտեղյակ են դրանից: Մինչդեռ դա Աստծո զավակի բարձրագույն արտոնությունն է, Նրա հետ ամենասերտ մտերմության և Նրան նմանության նշանը. «որ միշտ կենդանի է, որ բարեխոսություն անի» (Եբր. 7.25):

Հավատացյալները «ընտիր ազգ են, թագավորական քահանայություն»: Քրիստոսը մեր Քահանայապետն է: Մենք՝ որպես հավատացյալներ, Աստծո քահանաներն ենք (Եբր. 8.1, Ա Պետր. 2.5): 1) Քրիստոսը մեր Բարեխոսն է. «...միշտ կենդանի է, որ նրանց համար բարեխոսություն անի» (Եբր. 7.25): 2) «...Հոգին... Աստծուն վայելած կերպով սուրբերի համար բարեխոսում է» (Հռոմ. 8.26, 27): Մենք թագավորական քահանայություն ենք, թագավորի և քահանայի մեջ գլխավորը իշխանությունն է, ազդեցությունը և օրհնությունը: Թագավորի մեջ այդ իշխանությունը գալիս է վերևից՝ իշխելու համար, քահանայի մեջ այդ իշխանությունը բարձրանում է վերև՝ հաղթելով Աստծո հետ: Մեր օրհնյալ Քահանա- Թագավորի՝ Հիսուս Քրիստոսի մեջ թագավորական իշխանությունը հիմնված է քահանայության վրա. «...որովհետև հավիտյան է կենում, քահանայություն ունի անանցանելի: Ուստի և բոլորովին կարող է փրկել... *որովհետև* միշտ կենդանի է, որ նրանց համար բարեխոսություն անի» (Եբր. 7.24, 25): Ես քահանայական

բարեխոս եմ Աստծո թագավորության համար:

Բարեխոսություն նշանակում է միջնորդություն երկու խմբերի միջև: Այն ենթադրում է բարեխոսել մեկ այլ խմբի համար և մի խումբը ներկայացնել մյուսին, ինչպես անում է փաստաբանը: Ես Թագավորի քահանա եմ, ոչ թե իմ եկեղեցու քահանա: Քրիստոսը հրավիրում է ինձ բաժնեկից լինելու Իր բարեխոսությանը: Որպես Աստծո քահանաներ և թագավորներ՝ բարեխոսության մեջ ենք գտնում և կիրառում բարձրագույն իշխանություն խավարի թագավորության դեմ: Բացահայտել եք այս ճշմարտությունը: Արդյո՞ք դուք բարեխոս եք ձեր Տիրոջ և Թագավորի համար: Դուք և եկեղեցու յուրաքանչյուր անդամ՝ որպես թագավորական քահանայություն, ունեք իշխանություն բարեխոսության մեջ, իշխանություն՝ հաղթելու և հաջողություն ունենալու Աստծո և մարդկանց հետ: Հավատում եք այս ճշմարտությանը:

ԱՂՈԹՔ. «Իմ օրհնյալ Քահանայապետ, ղվ եմ ես, որ հրավիրում ես բաժին ունենալու Քեզ հետ իշխող և հաղթող բարեխոսության զորության մեջ: Ինչո՞ւ, ղվ իմ Տեր, ես այսքան դանդաղ եմ հասկանում, հավատում և կիրառում այս հրաշալի արտոնությունը: Ո՞վ Տեր, տո՛ւր Քո շնորհքը, որ սա աստիճանաբար դառնա իմ կյանքի անդադար աշխատանքը, որ անդադար աղոթքով երկնքի օրհնությունը իջեցնեմ այն ամենի վրա, որ շրջապատում է ինձ»:

Քանի դեռ աղոթքին նայում ենք որպես հիմնականում մեր քրիստոնեական կյանքի պահպանման միջոցի, մենք լիովին չենք հասկանա քահանայական- թագավորական բարեխոսությունը: Հայրը սպասում է, որ լսի հավատքի ամեն աղոթք, որպեսզի տա մեզ այն, ինչ խնդրում ենք Հիսուսի անունով: Մենք այնքան ենք սովորել սահմանափակել մեր Աստծո հրաշալի սերը և մեծամեծ խոստումները, որ չենք կարող կարդալ մեր Տիրոջ ամենապարզ պնդումները՝ առանց դրանց վրա սահմաններ դնելու: Քրիստոսը մեր կյանքն է: Երկնքում Նա հավիտյան կենդանի է, որ աղոթի. Նրա կյանքը մեր մեջ հավերժ աղոթքի կյանք է: Սրան է, որ պետք է սովորենք հավատալ: Մեզ միայն անհրաժեշտ է հավատալ և վստահել Նրան սրա համար:

ԱՂՈԹՔ. «Օրհնյալ Տեր, ես գալիս եմ ընդունելու իմ այս կոչումը: Սրա համար ես ցանկանում եմ թողնել ամեն բան և հետևել Քեզ: Քո ձեռքերի մեջ եմ հավատքով հանձնում իմ ամբողջ էությունը: Ձևավորիր ինձ, կրթիր և ներշնչիր լինելու Քո աղոթքի բանակի անդամը, որը հսկում և պայքարում է աղոթքում: Տեր, նեշնչիր ինձ ապրելու որպես Քո իշխան, ունենալու զորություն և հաղթելու: Տիրիր իմ սրտին և իմ կամքին և լցրո՛ւ իմ սիրտը սրբացման, ինչպես նաև իմ քույրերի և եղբայրների հետ միանալու ցանկությանմբ, որոնց տվել ես ինձ, որպեսզի Քեզ փառք բերեմ: Վերցրո՛ւ

իմ միտքը և Քո իմաստությամբ սովորեցրո՞ւ, որ իմանամ, թե երբ աղոթքը կարող է օրհնություն բերել, և համապատասխան դարձրու ինձ դրան: Վերցրո՞ւ ինձ ամբողջությամբ և պատրաստի՛ր ինձ որպես քահանա, որ հավիտյան կանգնում է Աստծո առջև և օրհնում է Նրա անունը»:

Սիրելի Հիսուսի աշակերտ, թող Աստված բացի մեր աչքերը՝ տեսնելու, թե ինչ է բարեխոսության սուրբ ծառայությունը: Մենք՝ որպես Նրա թագավորական քահանայություն, առանձնացվել ենք այս ծառայության համար: Տեր Աստված պարզապես ցանկանում է Իր օրհնությունները բաժանել մեր միջոցով: Բարեխոսը ցանկանում է բարեխոսել մեր միջոցով: Բժիշկը ցանկանում է բժշկել մեր միջոցով: Հաղթողը ցանկանում է, որ Իր հաղթանակը դրսևորվի մեր միջոցով: **Աղոթե՛ք և խնդրե՛ք, որ Աստված տա ձեզ լայնարձակ և ուժեղ սիրտ՝ հավատալու, թե ինչ մեծ ազդեցություն կարող են թողնել ձեր աղոթքները, և հանդարտվե՛ք ու սպասե՛ք Աստծուն:** Թող բարեխոսության ձեր ծառայությունն իրականացնելու վախն անհետանա, երբ տեսնեք Հիսուսին աղոթելիս. Նրա աղոթքի կյանքը ձեր մեջ է: Դուք առանձնացված եք բարեխոսության այս ծառայության համար: Քրիստոսը հավիտյան կենդանի է, որ աղոթի, ապրում է ձեր մեջ, որ աղոթի, և երաշխավորում է ձեր աղոթքի կյանքը, եթե միայն մնաք Նրա մեջ: **Դուք կարող եք արձակել Աստծո ճշմարտությունը և զորությունը: Պարզապես ՀԱՎԱՏԱՑԵՔ:** Ձեր աղոթքների միջոցով մարդիկ կարող են արձագանքել Աստծուն: **Աստծո զորության նկատմամբ հավատքը ձեր հաղթանակն է:** «Զորացե՛ք Տիրոջով և Նրա զորության կարողությունով» (Եփես. 6.10): Դուք ձեր ուժերով չեք բարեխոսում:

Հիշե՛ք այս երկու ճշմարտությունները. (1) հաղթող բարեխոսության բարձրագույն կիրառումը և փառքն այն է, որ դրա միջոցով կարող ենք ձեռք բերել այն, ինչ Աստված չէր կարող տալ և չէր տա մինչ այդ, (2) հավատքի արդյունավետ աղոթքը կախված է *կյանքից*. «Եթե կենաք *հնձանում*, ինչ որ էլ կամենաք, կխնդրեք, և կլինի ձեզ»: Համաձայն այս խոսքի՝ հավատքի արդյունավետ աղոթքի զորությունը *կախված է կյանքից*. «Եթե կենաք *հնձանում*»: Սիրելի հավատացյալ, տեսնո՞ւմ եք Քրիստոսի մեջ մնալու կարևորությունը այս տեսանկյունից: Մնալը թույլ է տալիս, որ Քրիստոսի կյանքն իշխի և կարգավորի ձեր ամենօրյա կյանքը: Այլ խոսքերով՝ դուք պետք է ԼԻՆԵՔ Աստծո բնավորության արտացոլանքը (վարքագծով, վարվելակերպով, վերաբերմունքով) և պետք է ԱՆԵՔ Աստծո գործերը (բարի գործերով, ուրիշներին ծառայելով, ծառայությամբ)՝ ապրելով միայն համաձայն Աստծո կամքի և ոչ երբեք ձեր կամքի: Ո՞րն է Հիսուսի մեջ մնալու ձեր տեսակետը: Բարեխոսությունը սկիզբ է

առնում Քրիստոսի մեջ այս կերպ մնալուց: *Սակայն Քրիստոսի մեջ մնալը ձեր աշխատանքը չէ, այն Աստծո աշխատանքն է: Դուք ապահովում եք հոժարությունը, համաձայնությունը և հավատքը:*

Քարեխոսության մեջ է մեր Տերը և Թագավորը գահի վրա ստանում Իր բարձրագույն փառքը: Դրա միջոցով Նա շարունակում է Իր փրկարար աշխատանքը և առանց դրա ոչինչ չի կարող անել: Միայն բարեխոսության միջոցով մենք կարող ենք անել մեր աշխատանքը, և առանց դրա ոչինչ չի գործում:

Մտորում Աստծո հետ

1. Ի՞նչ է քահանայական բարեխոսությունը:
2. Ինչպե՞ս կարող եք արձակել Աստծո ճշմարտությունը և գորությունը ձեր բարեխոսության մեջ:

Հասկացողություն քահանայության և բարեխոսության մասին

Որպես հավատացյալներ՝ մենք քահանաներ ենք: Մենք չենք դառնում քահանաներ գործերով կամ վերապատրաստվելով: «Աստված մեզ քահանաներ արեց» (Հայտն. 1.6):

Քահանայության աշխատանքը

Քահանան ապրում է Աստծո հետ և Աստծո համար: Հին կտակարանում քահանայի՝ որպես Աստծո ծառայի գործն էր բնակվել Նրա տան մեջ, հոգ տանել Նրա տան ու Նրա պատվի համար, երկրպագել Նրան, քարոզել «...Նրա առաքիներությունները, որ ձեզ խավարից կանչեց Իր զարմանալի լույսի մեջ» (Ա Պետր. 2.9), «Այն ժամանակ Եհովան Ղևիի ցեղին ջոկեց... Եհովայի առաջ կանգնելու համար, որ Նրան ծառայություն անի և Նրա անունով օրհնի...» (Բ Օրին. 10.8) և մարդկանց հայտնի Նրա սերը և Նրա կամքը: Նոր կտակարանում բարեխոսը կամ քահանան մտնում է Աստծո ներկայության մեջ ամեն օր՝ Նրան երկրպագելու համար: Նա հոչակում է Աստծո առաքիներությունները մարդկանց: Ահա թե ինչպես եմ ես ծառայում Աստծուն: Սա է իմ բարձր կոչումը:

Քահանան ապրում է մարդկանց հետ և մարդկանց համար (Եբր. 5.1): «Եվ Ղևիի որդիները՝ քահանաները, մոտենան, որովհետև քո Եհովա Աստված նրանց ընտրեց Իրեն ծառայություն անելու և Եհովայի անունով օրհնելու համար» (Բ Օրին. 21.5), «Ղևիի համար Նա ասաց. «Քո դատաստանները սովորեցնում են Հակոբին և քո օրենքը՝ Իսրայելին: Քո առաջ խունկ կմատուցանեն, և քո սեղանի վրա՝

ողջակեզ»» (Բ Օրին. 33.10), «Որովհետև ամեն քահանայապետ մարդկանցից առնված *մարդկանց համար է դրվում աստվածակույս բաներում...*» (Եբր. 5.1): Հին կտակարանի այս հատվածներից մենք տեսնում ենք, որ քահանայի աշխատանքն է հայտնաբերել մարդկանց մեղքը և կարիքը, բերել դրանք Աստծո առջև, զոհ և խունկ մատուցել նրանց անունից, ձեռք բերել ներում և օրհնություն նրանց համար, այնուհետև դուրս գալ և օրհնել նրանց Աստծո անունով: Նոր կտակարանում մենք ժառանգում ենք այս աշխատանքը որպես Աստծո քահանա- բարեխոս:

Եկեղեցին կամ հավատացյալները ներկայացնում են թագավորական քահանայությունը: Սա սուրբ քահանայություն է՝ «...որ հոգևոր պատարագներ է մատուցում Աստծուն ընդունելի՝ Հիսուս Քրիստոսի ձեռքով» (Ա Պետր. 2.5): Քրիստոսը՝ մեր Քահանայապետը, «միշտ կենդանի է, որ նրանց համար բարեխոսություն անի» և «բոլորովին կարող է փրկել, որովհետև միշտ կենդանի է, որ նրանց համար բարեխոսություն անի» (Եբր. 7.25): Փրկության շարունակական, ամենօրյա կիրառությունը, այդ թվում՝ մեր աճող սրբացումը՝ ձեր և իմ մեջ, կախված է սրանից՝ «միշտ բարեխոսում է բոլորովին փրկելու համար»: Սիրելի Հիսուսի աշակերտ, այս ճշմարտությունը դեռ չի՞ թափանցել ձեր սիրտ: Այն նախատեսված է ազդեցություն թողնելու ձեր կյանքի վրա: **Քահանայությունը Հիսուսի մեջ ներառում է բարեխոսություն երկնքում:** Նա մեր Գլուխն է: Որպես Քրիստոսի աշխատանքի պտուղ՝ բոլոր հավատացյալները քահանաներ են, սուրբ քահանայություն: Սա յուրաքանչյուր հավատացյալի բարձրագույն կոչումն է: Ոչինչ տեղի չի ունենում առանց Քրիստոսի բարեխոսության, այդ թվում՝ փրկության օգուտների իրական, անձնական գործածությունը և սրբացումը, մեղքի և աշխարհի նկատմամբ յուրաքանչյուր հաղթանակը: Սրանք Քրիստոսի բարեխոսության և զորության իրական արդյունքներն են: Հավատացյալները Քրիստոսի հետ համատեղ բարեխոսներ են: Մենք ստանում ենք Հիսուսի էությունը և այն ամենը, ինչ Նա ունի: «Եվ ես այն փառքը, որ Ինձ տվեցիր, նրանց տվեցի...» (Հովհ. 17.22): Մենք Նրա կյանքի, Նրա արդարության և Նրա աշխատանքի բաժնեկիցներ ենք: «Քրիստոսը մեր կյանքն է», «Այլևս ոչ թե ես, այլ Քրիստոսն է ապրում իմ մեջ»:

Համարեղ բարեխոսները թագավորական քահանաներ են: Մենք միացած ենք Քրիստոսին: Այն, ինչ Նա աղոթում է, անցնում է մեր միջով, և ինչ մենք աղոթում ենք, անցնում է Նրա միջով: Նրա կյանքը երկնքում շարունակական աղոթքի կյանք է: Այն դառնում է շարունակական աղոթքի կյանք նաև մեր մեջ, եթե թույլ ենք տալիս՝ շարունակ խաչելով մեր մարմինը: **Այս կյանքի միությունը նաև աղոթքի միություն է: Նա ներգրավում է մեզ աղոթելու Իր հետ**

ներդաշնակորեն: Նա նաև ներշնչում է մեր աղոթքը մեր մեջ: Գուցե դուք վերապրել եք սա: Մենք բոլորս կարիք ունենք հավատալու սրան, հավատալու, որ սա իսկապես կատարվում է: Հետևաբար թագավորական քահանայության աշխատանքն է (1) իշխել վերևից եկող իշխանությամբ՝ որպես վսեմ թագավոր, (2) հաղթել Աստծո հետ՝ վեր բարձրացող իշխանությամբ՝ որպես Բարձրյալի քահանա:

Որպես Աստծո քահանաներ և լինելով Քրիստոսի մեջ՝ մեր աշխատանքը կատարում ենք բարեխոսության միջոցով, և այս աշխատանքը ուրիշների ազատագրումն ու փրկությունն է: Քրիստոսի՝ որպես Քահանայապետի բարեխոսական աղոթքի ծառայությունը այժմ նաև իմն է: Արդյո՞ք հասկանում եմ այս ճշմարտությունը: Մեր աշխատանքը՝ որպես համատեղ բարեխոսների, բացարձակ անհրաժեշտ է ուրիշների ազատագրման, փրկության և բժշկության համար: Քրիստոսը և Նրա Թագավորությունը իմ բարեխոսության կարիքն ունեն մեղքի և աշխարհի և սատանայի նկատմամբ յուրաքանչյուր հաղթանակի համար: «Արդ աղաչում եմ ամենից առաջ աղոթք անել, խնդրվածք, աղաչանք... որ կամենում է, որ ամեն մարդիկ փրկվեն...» (Ա Տիմ. 2.1- 4):

Մերձավորին սիրելու և փրկելու այս կոչը պատահական չէ կամ լրացում չէ իմ կյանքին: Ես՝ որպես ճյուղ, պտուղ պետք է բերեմ Որթի համար: Դա մի բան չէ, որ անում եմ, եթե ինձ հաճելի է, կամ եթե ցանկանում եմ անել: Դա մի բան չէ, որ անում եմ իմ, Աստծո կամ ուրիշների աչքին հոգևոր երևալու համար: «Սրանով փառավորվեց իմ Հայրը, որ չատ պտուղ բերեք և իմ աշակերտները լինեք» (Հովհ. 15.8): **Ես պետք է տիրանամ քահանայության և բարեխոսության իմ ժառանգությանը:** «Տերը ...երկայնամիտ է լինում մեզ վրա, որովհետև չի կամենում, որ կորչողներ լինեն, բայց որ ամենն ապաշխարության հասնեն» (Բ Պետր. 3. 9): Այս կոչն ընդունելը, հաստատելը կամ դրան համաձայնելն անօգուտ են: Իմ սիրտը կարիք ունի ոչ միայն իմանալու, այլև փնտրելու և ընդունելու այս անշահախնդիր ազապե սերը կորածների, հիվանդների, աղքատների և կորչողների համար:

Մեզ շրջապատող կարիքների ուսումնասիրությունը և դրանց պատճառած զգացմունքները թեև օգտակար են, բայց Հոգու հանդիմանություններ չեն: Ես պետք է ձգտեմ, որ Հոգու հանդիմանությունը և հայտնությունը դիպչեն իմ սրտին որոշակի կարիքների առնչությամբ: Բարեխոսությունը պահանջում է Աստծո սրտի վերափոխող հպումը իմ աղոթքի կյանքին: Ես կարիք ունեմ փնտրելու և ունենալու Աստծո սիրտը կորածների համար: Միայն ցանկանալը նոր սրտի նշան չէ, հին սրտի կյանքը պետք է փոխարինվի նոր սրտի կյանքով: Ես Աստծուն անձնատուր լինելու նոր փորձառութե-

յան կարիք ունեմ՝ հրաժարվելով այն ամենից, ինչն աշխարհից է և մարդուց, և սպասելով միմիայն Աստծուն և Նրա ներկայությանը: Զգուշացե՛ք, հին մարդը նույնպես կարող է աղոթել և բարեխոսել: Կարիքի ուսումնասիրությունները և իրազեկությունը բավական չեն: Կենդանի Աստծո Հոգին՝ սրբության Հոգին, նոր մարդը ճշմարիտ բարեխոսներն են մեր մեջ: Մարմինը շարունակ պետք է ուրանալ և պահել խաչին, այլապես Աստծո հանդիմանություններն ու հայտնությունները հազվադեպ կդառնան:

Սիրելի՛ Քրիստոսի աշակերտ, Աստված նշանակել է ինձ և ձեզ՝ որպես Իր քահանաներ Իրեն և մարդկանց ծառայելու համար: Արդյո՞ք այս ճշմարտությունը տեղ է գտել ձեր սրտում: Մեր կյանքը մեզ չի պատկանում:

Կա ևս մեկ ճշմարտություն, որ պետք է տեսնենք քահանայության և բարեխոսության վերաբերյալ: Մենք չենք առաջացնում կամ ծնում փրկություն, հաշտություն, բժշկություն, ազատագրում կամ հաղթանակ: Դա միայն Աստծո գործն է: Ես միայն հասանելի եմ դարձնում կամ բաժանում դրանք մարդկանց բարեխոսության միջոցով: Մեր կոչումն ու ծառայությունը Քրիստոսի գործը կրկնելը չէ, այլ այն հասանելի դարձնելը: Ծշմարտությունն իմանալը և կիրառելը մեզ համարձակ են դարձնում: Արարիչը պարզապես ցանկանում է Իր օրհնությունները բաժանել մեր միջոցով: Բարեխոսը ցանկանում է բարեխոսել մեր միջոցով: Բժիշկը ցանկանում է բժշկել մեր միջոցով: Հաղթողը ցանկանում է Իր հաղթանակը դրսևորել մեր միջոցով, թեև գործն արդեն կատարվել է ավելի քան 2000 տարի առաջ: Մենք պետք է խնդրենք, բարեխոսենք այս օրհնությունների արձակման և կիրառման համար: Աստված մեր կարիքն ունի դա անելու համար: Եթե ուզում եմ, որ Աստծո կամքը և կյանքը տիրեն ինձ, ես չպետք է կերակրեմ հին մարդուն, այլ պետք է մերժեմ, ուրանամ և սովի մատնեմ նրան: Աստված իմ բարեխոսական աղոթքների կարիքն ունի սիրելու, փրկելու, բժշկելու և ազատագրելու համար:

Քահանայության ընթացքը և ճանապարհը

Սրբությունը քահանայության ընթացքն ու կյանքն է: Սրբությունը Աստծո կատարելությունն է: «Տիրոջ պես սուրբ չկա...» (Ա Թագ. 2.2): «Այլ ձեզ կանչող Սուրբի պես դուք էլ սուրբ եղեք ձեր բոլոր վարքերում, որովհետև գրված է. «Սուրբ եղեք, որ Ես սուրբ եմ»» (Ա Պետր. 1.15, 16): «...մեր անձերը սրբենք... սրբությունը կատարենք Աստծո ահով» (Բ Կորնթ. 7.1): Աստված ցանկանում է, որ մարդիկ առանձնանան և հանձնվեն Իրեն՝ Իր բացառիկ նպատակի և գործածության համար՝ բաժանվելով ամեն անմաքուր բանից:

Ահարոնի բոլոր որդիները քահանաներ էին ի ծնե: Բայց դա բա-

վական չէր, անհրաժեշտ էր նվիրաբերում: Նույն կերպ Աստծո յուրաքանչյուր զավակ դառնում է քահանա, երբ ծնվում է Աստծո ընտանիքի մեջ: Բայց դա նույնպես բավական չէ: **Մենք պետք է ընդունենք և, որպես քահանա, մեր կյանքը նվիրաբերենք բարեխոսությանը:** Չհանձնված կյանքը չի կարող նվիրաբերվել: Հանձնվել Հիսուսին նշանակում է ամեն օր հանձնվել Նրա խաչին: **Աստծո հետ մեր քահանայական իշխանությունը կիրառելը կախված է մեր անձնական կյանքից կամ ընթացքից:** Խոստացել եք Աստծուն ապրել սուրբ կյանքով: Ձեր անցյալի վերքերը դեռ թափում են:

Մեզ անհրաժեշտ է իշխանություն Աստծո հետ մեր կոչումն իրականացնելու համար: Մենք պետք է ապացուցենք, որ սուրբ փնելու մեր խոստումն Աստծուն անկեղծ է, փարժեք և իրական: Ճշմարիտ քահանայական բարեխոսի նշանը անձնուրացությունն է՝ ամենը Նրան տալու համաձայնությամբ: Եթե ես ցանկանում եմ ապրել որպես Քրիստոսի ճշմարիտ աշակերտ, չեմ կարող չնվիրվել սուրբ քահանայության այս առանձնահատուկ կյանքին:

Արդյո՞ք սովորել եմ այս ճշմարտությունը: Բարեխոսության միջոցով Աստված շարունակում է Իր փրկարար աշխատանքը և ոչինչ չի կարող անել առանց դրա, և միայն բարեխոսության միջոցով է, որ մենք կարող ենք անել մեր աշխատանքը որպես քահանաներ, և առանց դրա ոչինչ չի գործում:

Պատրաստ եմ ընդունելու իմ կոչումը և իմ ժառանգությունը որպես Աստծո քահանայական բարեխոս: Բարեխոսությունն ունի երկու կողմ ինչպես մետաղադրամը: Մի կողմն այն է, որ ես բարեխոսում եմ այն մարդկանց համար, որոնք շատ հեռու են իմ համայնքից, որոնց չեմ կարող տեսնել և որոնց հետ չեմ կարող անձամբ փոխազդեցության մեջ մտնել, մինչև որ Տերը հնարավոր չդարձնի դա: Մյուս կողմն այն է, որ ես բարեխոսում եմ իմ համայնքի մարդկանց համար, որոնց սովորաբար տեսնում եմ և որոնց հետ փոխազդեցության մեջ եմ: Ես պետք է ապրեմ բարեխոսության այս կյանքով իմ համայնքում, ոչ թե ընտրյալ և հատուկ մարդկանց կողքին: Սիրտն է, որ բարեխոսում է, սիրտն է, որ ծառայում է ուրիշներին անձնագրի ազապե սիրով և խոնարհությամբ: Իմ սիրտը պատկանում է Հիսուսին, այո, բայց նաև այն մարդկանց, որոնց ծառայում եմ և որոնց համար բարեխոսում եմ: Իմ համայնքի համար բարեխոսությունը չպետք է առանձնացվի անվերապահ, անշահախնդիր, անձնագրի ազապե սիրով ծառայելուց, այլապես բարեխոսությունը կդառնա թույլ և անպտուղ: Հոգևոր հաղորդակցության նպատակը մարդկանց հաղորդակից դարձնելն է հենց Հիսուսի կյանքին, որը մեր մեջ է, այդ կյանքն ապրելով նրանց հետ մեր փոխհարաբերության մեջ: Այս հաղորդակցության մեջ մեր սիրտն է, որ պետք է ներկայացնենք և տանք, ոչ թե մեր բարեխոսությամբ:

յան խոսքերը: Հիսուսն ասաց. «Ես եկա, որ ծառայեմ, այլ ոչ թե որ Ինձ ծառայեն: Մնացե՛ք Իմ մեջ և շատ պտուղ բերե՛ք, որ ապացուցե՛ք, որ Իմ աշակերտներն ե՛ք: **Սիրե՛ք իրար, ինչպես ես ձեզ սիրեցի**»:

Մտորումներ Աստծո հետ

1. Ո՞րն է քահանայության աշխատանքը:
2. Բացատրե՛ք քահանայության ընթացքը և ճանապարհը:
3. Ձեր կարծիքով ինչպե՛ս է «Սիրե՛ք իրար, ինչպես ես (Հիսուսը) ձեզ սիրեցի» պատվիրանը կապված քահանայական բարեխոսության հետ:

Աղոթել Հոգով

Շատերի համար Հոգով աղոթելը միայն նշանակում է աղոթել լեզուներով: Հոգով աղոթելը ներառում է լեզուներով աղոթելը: Եկեղեցում «Հոգու մեջ» լինելու տարբեր արտահայտումներ կան, մի քանիսը դրսևորվում են «լեզուներով», որը ներառում է լեզուներով խոսելը, լեզուներով աղոթելը և լեզուներով երկրպագելը: «...աղոթք անեմ հոգով, աղոթք անեմ մտքով էլ...» (Ա Կորնթ. 14.15), «...սաղմոս ասեմ հոգով, սաղմոս ասեմ մտքով էլ» (Ա Կորնթ. 14.15): «Լեզուները» վերաբերում են «մարդկանց և հրեշտակների լեզուներին» (Ա Կորնթ.13.1), որոնցով մարդիկ «Աստծո հետ են խոսում» և «հոգով խորհուրդներ են խոսում» (Ա Կորնթ.14.2): «Լեզուների» արտահայտումները կարող են լինել բանավոր, անըմբռնելի կամ լուռ, բայց դա որոշողը Հոգին է, և Հոգին էլ համապատասխանաբար ուղղորդում է: Հոգով աղոթելը անձնական հոգևոր հաղորդակցում է հավատացյալի և Աստծո միջև: «Ապա եթե դու օրհնես հոգով, նա, որ տգետի տեղն է բռնում, ինչպե՛ս «ամեն» ասի քո օրհնությանը, քանի որ չգիտի, թե ի՞նչ ես ասում: Դու իրավ որ լավ ես գոհանում, բայց մյուսը չի շինվում» (Ա Կորնթ. 14.16,17)

Բարեխոսությունը հաճախ ներառում է լեզուներով աղոթքը: Սակայն ամեն «հոգով» կամ «լեզուներով» աղոթք չէ, որ բարեխոսություն է: «Այսպես էլ Հոգին օգնում է մեր տկարություններին, որովհետև թե ինչ բանի համար պիտի աղոթք անենք՝ ինչպես արժան է, չգիտենք. բայց Ինքը՝ Հոգին, անբարբառ հառաչանքով բարեխոս է լինում (մեզ համար): Եվ սրտերը քննողը գիտի, թե ինչ է Հոգու խորհուրդը, որովհետև Աստծուն վայելած կերպով սուրբերի համար բարեխոսում է» (Հռոմ. 8.26, 27):

Հոգու բարեխոսությունը կարող է ներառել հառաչանք, աղաղակ, տառապանք, մրմունջ կամ հոգոց: Հառաչանքը վերաբերում է անսպասելի խոր զգացմունքներին, ինչպիսին ունեցավ Հիսուսը Ղազարոսի մահվան ժամանակ. «...Մարիամը... Նրա ոտներն ընկավ և ասաց Նրան. «Տեր, եթե այստեղ լինեիր, իմ եղբայրը չէր մեռնի»: Հիսուսն էլ երբ որ նրան տեսավ, որ լաց էր լինում, և նրա հետ եկած հրեաներին էլ, որ լաց են լինում, Իր հոգով խոռվեց (հառաչեց) և հուզվեց»: Սուրբ Հոգին նաև բարեխոսության Հոգի է: Հոգին այն Բարեխոսն է, որ աղոթում է եկեղեցու քահանայական բարեխոսության մեջ:

Հոգին է, որ դուրս է բերում անըմբռնելի հնչյուններ՝ նման մրմունջի և հոգոցի, կամ առաջացնում ցավի, վշտի և տառապանքի զգացողություններ՝ ձայնով կամ անձայն: Երբ Հոգին ձեզ վրա է, թոյլ տվեք, որ այս արտահայտություններն ու զգացողությունները դրսևորվեն ձեր մեջ, Հոգին աղոթում է ձեր միջոցով: Հոգին է, որ մեր մեջ ներշնչում է քահանայական հոգին և Քրիստոսի բարեխոսության սիրտը՝ առաջացնելով խոր սեր հոգիների փրկության համար և բոցավառվող սեր Աստծո պատվի և փառքի համար:

«Լցվեք Հոգով»: Որքան ճշմարտապես լցվեմ Սրբության Հոգով, այնքան հեշտ կլինի նվիրվել քահանայական բարեխոսության կյանքին:

Բարեխոսության մեջ է, որ պետք է գտնենք և գործածենք երկնային զորությունը խավարի թագավորության դեմ: Բարեխոսության մեջ է, որ կանչված ենք ընդունելու զորություն՝ ուրիշներին հոգևոր օրհնություն փոխանցելու համար: Բարեխոսությունը հիմնականում կատարվում է այն ժամանակ, երբ մենակ ենք Աստծո հետ, որոշ բարեխոսություններ կատարվում են աղոթքաժողովներին: Բարեխոսությունը կյանքի նվիրում է և պահանջում է ժամանակ, ինչպես նաև սիրտ: Այն չպետք է սահմանափակվի աղոթքաժողովներով: Մենք սովորում ենք բարեխոսել ոչ թե հավաքություններում, այլ Տիրոջ անձնական ներկայության մեջ՝ Նրա հետ սրտի հաղորդության ժամանակ: Մենք կարիք ունենք իմանալու մեր կոչումը: Հոգով բարեխոսությունը բարեխոսություն է Սրբության Հոգով: Այն կարիք ունի կյանքի, որը հանձնված է խաչի սրբացման աշխատանքին: Օրհնությունները պետք է կանչվեն երկնքից անձնագոհ, համառ, հավատքով լի աղոթքի միջոցով: Լիովին անձնատուր լինելու աղոթքների պատասխանների միջոցով է Սուրբ Հոգին լիովին տիրում մեզ, որպեսզի կատարի բարեխոսության Իր աշխատանքը մեր միջոցով:

Բարեխոսության միջոցով Աստված շարունակում է Իր փրկարար աշխատանքը և առանց դրա ոչինչ չի կարող անել: Միայն բարեխոսության միջոցով մենք կարող ենք անել մեր աշխատանքը,

և առանց դրա ոչինչ չի գործում: Սիրելի՛ Քրիստոսի աշակերտ, ընդունե՛ք Աստծո սուրբ կոչումը՝ լինելու Իր բարեխոս- քահանան: Սիրե՛ք, աշխատե՛ք, աղոթե՛ք, հավատացե՛ք և կանգնե՛ք խրամատում՝ Աստծո և ձեր ժողովրդի առջև: Սրբացրե՛ք ձեզ, տվե՛ք ձեր անձը՝ ապրելու և մահանալու ձեր մերձավորների համար: Պատասխանե՛ք կանչին: Եղե՛ք Հիսուսի սիրտը:

Մտորումներ Աստծո հետ

1. Հայտնե՛ք Աստծուն, թե ինչ է այս պնդումը նշանակում ձեր կյանքի համար. «Սրբացրե՛ք ձեզ, տվե՛ք ձեր անձը՝ ապրելու և մահանալու ձեր մերձավորների համար»:
2. Ինչպե՛ս կարող եք լինել «Հիսուսի սիրտը»:

Քահանայական բարեխոսության արդյունավետությունը

Բարեխոսության արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն քահանայական բարեխոսի հավատքով, այլև նրա կյանքով: «Եթե կենաք Ինձանում, և Իմ խոսքերը ձեզանում կենան», «Այն օրը կխնդրեք Իմ Անունով...»: Աղոթքի այս երկու կարևոր պայմանները վերաբերում են բոլորին և անփոփոխ են: Քրիստոսի մեջ հարատևող և Սուրբ Հոգով լցված կյանքը՝ որպես ճյուղ, այն է՝ Որթի աշխատանքին լիովին հանձնված կյանքը, ի զորու է պահանջելու այս խոստումները և անելու արդյունավետ աղոթքներ, որոնք շատ բան կարող են անել: **Քրիստոսի մեջ մնալը ներառում է սիրտը և կյանքը Աստծուն և Նրա խաչին ապաշխարությամբ հանձնելը:** Մեր մեղքերը և դրանց հետևանքները խոչընդոտ են Աստծո, ինչպես նաև մեզ համար: Դրանք պետք է խոստովանել և սրբել: Մեր հնազանդությունը չունի երկնային զորություն, եթե մեր մեղքերը չենք հանձնում խաչին: Քրիստոսի հետ բարեխոսությունը խաչը կրելու ճանապարհորդություն է: Համառ աղոթքում է, որ սովորում ենք ուրանալ սեփական կամքը, որ քայլում ենք Սուրբ Հոգու հետ և դառնում Քրիստոսի խաչյալ կյանքի մասնակիցներ: Քահանայական կյանքը պահանջում է սրբության կյանք, աղոթքի կյանք և Աստծուն անձնատուր եղած սիրտ: Այն շատ, շատ ավելին է, քան աղոթքներ անելը և խավարի ուժերի դեմ պատերազմական աղոթքների մեջ ներգրավվելը, թեև դրանք չափազանց անհրաժեշտ են: Սուրբ Հոգին սովորեցնում է մեզ ապրել՝ ինչպես սիրենք, ինչպես աղոթենք և ինչպես ապրենք սուրբ կյանքով: Հավաքույթներում չէ, որ սովորում ենք ինչպես ապրել:

Բարեխոսության մեջ հաստատական լինելու կարիքն ավելի մեծ է, քան կարծում ենք: **Երբ աղաչում ենք Աստծուն անհայտ արգելքնե-**

ըը հեռացնելու համար, Աստված նվաճում է մեզ կոտրվածության և հնազանդության միջոցով: Համառ աղոթքի և Նրան սպասելու ժամանակ է, որ մենք լիովին կոտրվում և անօգնական ենք դառնում: Համառ աղոթքում մենք տեսնում ենք մեր աղոթքների ծայրահեղ մեղսալիությունը, որոնք արտաբերվում են ինքնապավինությանմբ և սեփական ջանքերով, մեր մեջ աստվածային ոչ մի բարի բան չկա, մենք իրական, բացարձակ հոգևոր աղքատության մեջ ենք: Առանց այս հայտնության և բացահայտման աղոթքներն անպտուղ են, դրանք պարունակում են մարդկային ուժ և զորություն: Կոտրվածության միջոցով (բայց ոչ հուսահատության) Աստված ձևավորում է մեր մեջ Իրեն լիովին հնազանդ լինելու վերաբերմունք, որպեսզի մեկ դառնանք Իր կամքի հետ (միություն): Այս ներքին աշխատանքին զուգընթաց ժամանակի ընթացքում հավատքը կառչում է Աստծուց, ֆիզիկական արգելքներն ինքնաբերաբար անհետանում են հոգևոր արգելքների հետ: Հաստատակամություն ցուցաբերելու և սպասելու ժամանակ մենք հայտնաբերում ենք սեփական տկարությունը, բացահայտում ենք, որ անձնատուր չենք Աստծո Հոգուն. անձնատուր չենք, որ Նա աղոթի մեր մեջ, անձնատուր չենք, որ գրավենք մեր տեղը Քրիստոս Հիսուսում, և անձնատուր չենք, որ մնանք Քրիստոսի մեջ, որը պետք է լինի մեր միակ խնդրանքը Հորը: Աղոթքում սպասելու ժամանակ մենք տեսնում ենք մեր կամքը, զորությունը և բարությունը որպես չարիք, սա բացահայտվում է և գամվում խաչին ավելի ու ավելի: «Ես»- ի ուրացումը շարունակվում է ուժգնացող չափերով: Ես հարություն եմ առնում կյանքի նորոգության մեջ, իմ ամբողջ կամքը կախված է Աստծուց և ուղղված է միմիայն Նրա փառքին: **Երբ Աստված նվաճում է ինձ, ես հաղթում եմ Աստծո հետ: Երբ Աստված հաղթում է ինձ, ես նվաճում եմ Աստծո հետ:**

Մտորումներ Աստծո հետ

1. Վերջին անգամ երբ եք լիովին հանձնվել Հիսուսին: Ինչո՞ւ եք դա արել:
2. Ինչպե՞ս է Քրիստոսի հետ բարեխոսությունը դառնում խաչը կրելու ճանապարհորդություն:

ԱՂՈԹՔ

«Իմ օրհնյալ Քահանայապետ, ընդունիր իմ նվիրաբերումը, իմ սիրտն այժմ արձագանքում է Քո ուղերձին: Ես հավատում եմ Քո սուրբերի քահանայությանը, և ես նույնպես քահանա եմ որ կարող եմ ներկայանալ Քո առջև, Հայր, իշխանությամբ և աղոթքով, որը շատ ազդեցիկ է, և օրհնություն իջեցնել կորչողների վրա, որոնք ապրում են իմ շուրջը: Ամեն»:

ԱՊՐԵԼ ՔՐԻՍՏՈՍԻ ՃՇՄԱՐԻՏ ԱՇՂԿԵՐՏԻ ԿՅԱՆՔՈՎ

Այս գիրքը աշակերտության կամ Քրիստոսի աշակերտի ծառայության մասին չէ: Այն Քրիստոսի ճշմարիտ աշակերտի կամ հետևորդի առօրյա կյանքով ապրելու մասին է:

Սույն ուսումնասիրությունը պարունակում է հրահանգներ, մտորումներ և դիտարկումներ և գրված է հայ համայնքի ավելի երիտասարդ սերնդի, ինչպես նաև նրանց համար, ովքեր ցանկանում են վերանայել և քննել իրենց հոգևոր փորձառությունը և դրա ողջամիտ պահպանումը: Թող մեր համայնքի անտեղյակության և տկարության զգացումը մղի մեզ ապավինելու Հոգուն, որ աղոթում է մեր մեջ, և զգալու Հոգու մեջ սուրբ կյանքով ապրելու կարիքը:

Քրիստոսի աշակերտ լինել նշանակում է ապրել ջերմեռանդ հոգևոր կյանքով, այնպիսի կյանքով, որը մշտապես պահանջում է սովորել Հոգուց, լինել բաժնեկից, սիրել ուրիշներին և մշտապես անձնատուր լինել Սուրբ Հոգու զորեղ սիրուն ու զորությանը: Տիրոջ ձայնը դեռևս հնչում է իր հետևորդների ականջներին. «Մնացե՛ք Ինձանում... Բոլոր ազգերը աշակերտեցե՛ք»: Ո՞ւմ համար է զանգը հնչում: